ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉՈՐԻՑ ՄԱՍԱՆՑ
ԱՇԽԱՐՀԻ

Ասիոյ. Եւրոպիոյ. Ափրիկեայ.
եւ Ամերիկեայ։

Ստորագրեալ զիւրաքանչիւր աշխարհաց որ է
նոցա՝ զդիրս, զբերս, զբարս, զվաճառակա-
նութիւն, զկառավարութիւն, զկրօնս, եւ այլն։

Աշխատասիրութ. ի Տն. Տն. Ստեփաննոսի Գիւ-
վէր Ագոնց Ամենապատուոյ Արքեպիսկոպոսի Սիւ-
նեաց. եւ Աբբայի միաբանութեան Տն. Մխի-
թարայ մեծի Աբբայի։

Արդեամբք Թօխաթեցի բարեպաշտօն Պա-
րոն Պաղտասարի Սապէլեան։

Յամի Տն 1805. ի Թուին ՌՄԾԴ։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
ԱՍԻԱ
ՀԱՏՈՐ. Դ.

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի Վանս սրբոյն Ղազարու։

ԱՇԽԱՐՀ· Ի·

ՀՆԴԿԱՍՏԱՆ·

Հնդկաց աշխարհ ևս կոչի. և յայլազգեաց Ինտիստան, կամ Ինտոստան. որ ընդհանրապէս և ընդհանրաբար առեալ՝ են երեք մեծամեծ աշխարհք: Նախ Հիւսիսային մասն տէրութեն մողոլաց. Երկրորդ Հարաւային մասն՝ որ առ աշխարհագիրս կոչի Ցամաք կղզի Հնդկաց որ յայսկոյս Գանգէսի, որ է 'ի հարաւակողմն նորա. և առ Հնդիկս միով անուամբ կոչեն Տաքան, կամ Տէքան: Եւ Երրորդ Ցամաք կղզին որ յայնկոյս Գանգէսի, որ յարևելից Գանգէսի:

Երկու առաջին մասունք երբեմն էին ընդ միով տէրութեամբ մողոլաց, յորժամ ծաղկեալ էր նոցա տէրութիւն մանաւանդ թէ կայսերութիւն. իսկ Երրորդ մասն միշտ արտաքոյ էր տէրութեան մողոլաց, տիրեալ 'ի զանազան թագաւորաց. վասն որոյ և զՀնդկաստան բաժանեալ իբր յերկուս մեծամեծ աշխարհս, Նախ ստորագրեսցուք զմասն կոչեցեալ Հին տէրութիւն մողոլաց. և երկրորդ զմասն որ արտաքոյ, կոչեցեալ Ցամաք կղզի յայնկոյս Գանգէսի:

Հին տէրութիւն Մողոլաց:

Ա. Աշխարհ:

Տէրապէս Հնդկաստան անուանի միայն տէրութեան մեծ մողոլաց, ունելով ընդ իւր և զցամաք կղզին որ յայսկոյս գանգէսի կամ զտաքան. Թէպէտ Հնդիկ ժողովուրդք 'ի խօսս՝ զամենայն զայն աշխարհս արևելեան մինչև զչինէացիս կոչեն Հնդկաստան: իսկ յետ տիրելոյ 'ի նմա ազգին մողոլաց զորմէ ստորև գրեսցուք, անուանի այս աշխարհ և Մողոլ, կամ Աշխարհ Մողոլաց, որ 'ի գիրս մեր կոչի Մողոլ:

Յաղագս այսր լայնածաւալ և բազմահարուստ աշխարհի, բազում մատեանք գտանին առ Եւրոպացիս հին և նոր. յորս զանազան է գտանել անխառն յառասպելեաց. առաւել ճշմարիտ և ստուգապատում են այն մատեսանք՝ զորս 'ի լոյս ընծայեցին անգղիացիք 'ի նարումն, գոլով առաւել տեղեկանք նոցին . [illegible] 'ի ծովեզերեայ կողմանս զբնակ երկիրս գաւառացն և տերութիւնք իւրեանց : Մեք սուղ ինչ [illegible] և ունիմք գրել զայսոր ծէ ք զայլ ծոց Հնդկաց . քան ըստ մեծ գաւառին յաղագս Հայոց 'ի ծովեզերեայ կողմանս որ . և զի յօտարական ազգաց միջի 'ի [illegible] ուոր ծոց՝ որք նախ առաջին սկսան առնել վաճառականութիւն ընդ այսմ ծի, եղեն 'ի մերոց ազգաց, ոմ գրեսցուք զնոսա : Մանաւանդ զի բազում ինչ 'ի գրելոցս 'ի ստուգագէտ ճանապարհորդաց ունիմք տեղեկացեալ 'ի վանկրօնից, բերոց, վաճառաց, 'ի մերոյ ծխոց ինչ, և այլոց իրաց :

Բ. Դիրք Մողոլաց :

Աշխարհն Մողոլաց՝ յարևմտից ունի իւր սահման զպարսս . յարևելից՝ զցամաքակղզին որ յայնկոյս գանգէսի, յորս են զանազան թագաւորութիւնք սատարոյ տէրութեան . որք են Աշամ, Աւա . ևն . 'ի հիւսիսոյ՝ զմեծ տէրութիւն ճենագլուխ թաթարաց . իսկ 'ի հարաւոյ՝ զծովն Հնդկային՝ որ ձևացուցանէ զընդարձակ ցամաքակղզին իւր յայսկոյս գանգէսի, որ 'ի նորուն զեղեալ զափամբքն իւր, ընդ ուրեք ծածկեալ, զանբաւ բազմութիւն նաւուց ընկալեալ յայնմ աշխարհածոցէ, յորս կայլին և յաղագս Հայոց : Ընդ մէջ այսր համատարած ծի՝ ձգեալ տարածին միաղօսի լերինք 'ի հիւսիսոյ ի հարաւ մինչև ցքոմորինեան հրուանդանն . որ է 'ի հարաւային եզրն ցամաքակղզւոյ նորա . և բաժանեն զծովեզերեայս Մալապարայ 'ի Գորոմանտէլոյ . միանգամայն և մանաւանդ իմն եղանակաւ են անջրպետ անդէն կարգեալ 'ի բնութենէ 'ի մէջ ամառնայնոյ և ձմեռնայնոյ, կամ 'ի մէջ պարզ աւուրց և անձրևայնոց :

Գ. Տարածութիւն, և Բնակիչք Մողոլաց :

Այս ընդարձակ գոլով յոյժ՝ ձգեալ տարածի երբեմն ընդ 30 աստիճանս ընդ երկայնութեան . և երբեմն ընդ 25 ընդ լայնութեան . ուստի տարածութիւն նորա գրեթէ հաւասարի կիսոյ մասին եւրոպիոյ :

Ըստ ընդարձակ տարածութեան իւրոյ նոյնպէս և բազում են բնակիչք նորա . քանզի 'ի բազում նշանաւոր բայց 'ի բազում մեծամեծ քաղաքաց և 'ի գիւղորէից՝ 'ի դաշտավայրան անդ առ հերկ բնակութիւն է մարդկան աստ և անդ ցրուեալ · որ է տեսանել բ̃մ ուրեք յագարակս, մինչ 'ի տրուն վենետակոյ ։ Եւ բ̃մ գտանին 'ի նմ̃ ջրջրք · յորս բնակչացն թիւ հասանէ ց200000, կմ̃ ցկէս միլիոն ։ Չեն իսկ բ̃մ ամք, յորմէ հետէ եղև սով 'ի պանկալա նահանգին, որ տևեաց մինչև ցհինգ և ցվեց ամիս · և յայնմ սովու գտաւ թիւ մեռելոցն իբրև վեց միլիոն · յորմէ 'ի միում ամսեան լինի թիւ մեռելոցն իբրև մի միլիոն ։

Է․ Գետք Մողոլաց ։

Երկու են գլխաւոր գետք այսր Տն · Ինդոս · յորմէ ըստ ոմանց եղանէ Հնդկաստանդ անուն ։ Այս գետ եղանէ 'ի հիւսիսային կողմանց սորին տէրութեան, 'ի լերանց անտի որք բաժանեն զնա 'ի Թաթարաց · և յինքն ընկալեալ զբազմութիւն գետոց, յարևելից կողմանէ զՕռվէք, կմ̃ զԿամու, զՊեհաւ, կմ̃ զՎեհա, զՍոռվէ, զՆամար, զՍոռդոփ, զՄէլոռ · իսկ յարևմտից զՊեհաւ, զՆիլապ, կմ̃ զՃնեպպէ, զՀէր, և զԼադա, և այլ բ̃մ գետս, որ միացեալ ընդ մէջ եապորայ, և բաքորայ, անուանի Սինդ կմ̃ Ինդոս, և ընթացեալ ը̃ հարաւ 'ի կողմն մանսուրա և դադդա քաղաքի, ը̃ վեց մեծամեծ դրունս մտանէ յովկիանոսն ։

Գանգէս · զոր նոյն կոչեն Կընկա ։ Է երկ̃ գետ Հնդկաց հռչակաւոր առ նմ̃, և առ նախնի պատմութիւնս · որ ը̃ վերադոյնդ նշանակելոյ' եղանէ 'ի դլխեդոյ, և հոսեալ ը̃ հարաւ մտանէ 'ի Հնդկաստան կմ̃ յՄողոլաց · և ընկալեալ անդէն յինքն զբազմութիւն վտակաց, որ յարևելից կուսէ զԲահտա, զՍեփերէ, ըզԲանու, զԿանդակ, զԱռնա, ևն · և յարևմտից' ըզԿանդի, զՃմնոդ, զԱստոս, զՃտմ, զՍոռեմ, զՍոլա ևն, և 'ի նահանգին պանկալա ը̃ բ̃մ մեծամեծ բերանս, յորս երեքն են առաւել երևելիք, մտանէ 'ի ծովն ։ Կռապաշտն Հնդիկք զայս գետ իբր սրբազան իմն ունին, և վն̃ ակամ նր̃ բ̃մ ծաղրական առասպելս պատմեն ։

Ը․ Օդ Մողոլաց ։

Աշխարհ Մողոլաց գոլով ը̃արձակ յոյժ ը̃ զանազան աստիճանս ձգեալ, օդ նորա չէ միօրինակ ամ̃ ուրեք ։ 'Ի հիւսիսային կողմանս բարեխառն է ջերմութիւն և ցրտութիւն․ այլ 'ի հարաւային կողմանս, զի 'ի տաքան մեծ ծն՝ կմ 'ի ցամաք կղզին որ յայսկոյս գանգէսի, և 'ի պանկալա, 'ի մալլա, 'ի քանարէշ. ևն, լինի տօթ անհնարին, մինչ ուրեք ուրեք․ թէպէտ և նա երկիր նր՝ գոլով է արևադարձին խեցգետնի, և մօտ 'ի հասարակածն, ոչ լինի բնաւ ցուրտ իբր յՀն մեր : 'ի հարաւային կողմանս նր չիք բնաւ ձմեռն, այլ են անդէն երեք եղանակք այլազանք 'ի մերոց եղանակաց, որք են անձրևային, քարեխառն, և ցամաք :

Յառաջնում եղանակի՝ որ սկսանի 'ի յունիս ամսոյն մինչև ցհոկտեմբեր, երեսք երկնի միշտ են մրգապատ, և յամ աւուր է ժամս ժամս անձրևէ սաստիկ․ յորում ծովն փոթորիք լինեալ կան հեղեղաջուրց․ և 'ի լերանց իջանեն մեծամեծ ուղխք և գետք, յայնժամ ունի թուլութիւն ամ անդամոց 'ի բնակիչս, և խոնաւութիւն անպայման, մինչ ուրեք ուրեք յորմս ամոց և 'ի կարասիս նց : Երկրդն տևէ 'ի նոյեմբերէ մինչև ցփետրվար, որ է իբրև գարուն նց, և քարեխառն է դայլ ծովս․ թէպէտ տօթ և ջերմութիւն այնր ծովի հաւասար է ամառնային ջերմութեան մերում աշխ․ յայնմ քարեխառն ծովի հասանին անդէն բզմ պտուղք և հունձք : Երրդն տևէ 'ի փետրվարէն մինչև ցյունիս, յորում ծովն ունի տօթ անհնարին և ոդեսպառ, և լինին սաստիկ որոտմունք և կայծակունք, այլ անձրևք սակաւք․ յայնմ ժամու աւ անհնարին տապոյ ջերմութեան գտանին և բղխք որք 'ի ջրալից տակառս նստեալ, այնպէս գործեն զգործ խորշակաց․ բայց այս տապ աւ փոքր մի մեղմանայ 'ի ծովային հողմոց, որք շնչեն 'ի հարաւոյ :

Այլևայլութիւն եղանակաց՝ զի գարնան և աշնան, եւս ըստ նց ցամաքայինն և անձրևայինն, մեծապէս երևին 'ի ծովուն․ զի 'ի դառնալն արեգական 'ի կէտս խոյին, ծովն մալապարայ՝ որ է յարևմտեան կողմն ցամաք կղզւոյն կմ տաքանոյ, հողմակոծեալ խռովի, և անհնարին ալիս յարուցանէ․ և 'ի նոյն հողմոց վարեալ գոլորշեաց ծովուն 'ի լերինս, որք անջրպետեն զմալապար 'ի գորոմանտելայ, և խտացեալ անդ, լուծանին 'ի մշտահոս անձրևս յայն կողմանս․ բայց աւ գորոմանտելաւ որ է յարևելեան կողմն, ամենևին խաղաղ է յայնժամ և անդորր : Իսկ յաշնան է հակառակն՝ հանդարտութիւն փոխի 'ի ծովն մալապարայ, և խռովութիւն 'ի ծովն գորոմանտելայ․

Յօդոյ երկրին պատճառաւն անդ մինդ 'ի հարաւային կողմանս գ՟ր 'ի պանկալա և յայլ ն՟նգս ինչ, պէսպէս ախտք մահաբերք · գ՟ր է ախտն կոչեցե՟լ 'ի նոցանէ Սարտի, որ պատահի յանմարսու՟է · Նախ բերէ դողումն, և ապա կարկամութ՟ ջլաց և անզգայութ՟ն, և փսխել և լուծումն որովայնի, որ և բզ՟մ անգամ 'ի միջոցս ի՟դ ժամուց սպանանէ · մի միայն դեղ ն՟ր է Բանգէհերն ։ Փորհարութ՟, որ պատճառի կ՟մ 'ի ցրտութ՟է և կ՟մ 'ի ջերմութ՟է · և 'ի պատահել ումեք մինդ ծերոց, ոչ երբէք փարատի · այլ յերկարաձգե՟լ հուսկ յետոյ մահու սպանանէ · ուստի այնպիսիք զա՟մ կեանս իւրեանց մեծաւ զգուշութ՟բ և սակաւակերութ՟բ պարտ են կեալ · ոչինչ ճաշակե՟լ բայց եթէ որիզ լոկ խարշե՟լ ։ Եւ եւս զանազան ախտակք փոխանակութ՟ առ սաստիկ թուլացուցանելոյ ջերմութ՟ և խոնաւութ՟ օդոյն զջիլս մարմնոյն ։

Զ· Բէէր Մողոլաց ։

Բարեբեր է այս աշխարհ և արգաւանդ · բերէ բոյս զարմանաւորս և աղնիւս, պտուղս ամենահամս գլխովին նորս և օտարս 'ի պտղոց զոր աստ առ մեզ ունիմք ։ Այլ գրէ և վարդան 'ի մեկն · ծն · ը · 17 · « Պտուղք աշխարհիս (ասէ) որիչ են 'ի պտղոյ մերոյ աշխարհիս, « համով, և հոտով և գունով, և իւղք և խունկք « յոլովագոյն ունին մասունս հրոյ ». յայս է թէ սակս ջերմութ՟ օդոյն ։ Մի յերևելի պտղոց ն՟ր, է Ամբա կոչեցե՟լ պտուղն ամենահամ · տերևք բուսոյ ն՟ր նման են ծառոյն լեմոնի · բերէ զպտուղս իբրև զողկոյզս խաղողոյ, յորում իւրաքանչիւր պտուղք մեծ են ք՟ զլեմոնս, տափակաձև ը՟ս նմանութ՟ նշոյ · որք 'ի միջին ունին և կորիզ ։ Նախ ք՟ զհասանիլ ն՟ր գոլով թթու, 'ի կեր առնուն 'ի կերակուրս փոխ լեմոնի · արկանեն նաև 'ի ջուր աղի 'ի լինել թթուշի · զոր կոչեն Ամփխաճառ ։ Գոյն ն՟ր մինչ տհաս են՝ է կանաչ · իսկ 'ի հասանելն՝ ոմանք 'ի վ՟ր նորին ոսկեգոյն հարկանին 'ի գոյն ծիրանի, ոմանք 'ի դեղին, և ոմանք յայլևայլ գոյն գեղեցիկ ։ Եւ որպէս գունովք նոյնպս և համովք գլխովին զանազանին · բերելով զհամ դեղձի խնձորոյ ծիրանոյ, եւն ։ Այլ մարմին պտղոյն կցեալ և սնդեալ կայ մնաւորեալ թելովք ը՟ կորիզն իւր · պատուականագոյնն դասանի 'ի մալդէ գիւղին պանկալայի, որ չունի ինչ այնպիսի մանրաթելս, այլ և դիւրին 'ի ճաշակել · Կեդեն կարծր է յոյժ, զոր չէ մարթ 'ի մարմնոյն զատանել. այլ միայն ը̅ մէջ հատանել ը̅ երկայն, այնպէս առնուն 'ի բերան :

Քաթալ. ծառ նր̅ լինի մեծ բայց մանր տերեւովք. այլ որ նորատունկ է, բերէ սա պտուղ ոչ յառաջին, այլ 'ի բազմն ամաց ծառոյն, սկսեալ 'ի ստորին և 'ի ներքին կողմանէ արմատոյն՝ մինչ ցգագաթն բնոյն. բայց միշտ ազնուագոյն են, որք լինին հուպ առ արմատն : Պտուղ սր՝ կի̅ մանդ արտաքին կեղեւոյն, է դեղնագոյն. ձեւ նր̅ սեխանման, այլ մեծ ք̅ զսեխ. ծայր նր̅ է խառորէլ, և 'ի վր̅ ունի փուշս մանունս : 'Ի մէջն ընդ այսր արտաքին սեխաձեւ կարծր կեղեւոյն՝ ծագէ 'ի ծագ ձգեալ կայ ձող կի̅ տասանցք. յորոյ վր̅ կարգաւ դասեալ կան պտուղքն մեծամեծք, որ 'ի նման հասաք նր̅, փափուկ և քնքուշ մաշկօք պատեալ. ունելով 'ի մէջն հիւթ սպիտակ կակուղ և քաղցր ք̅ զմեղր՝ որ է նոյն իսկ պտուղն, ունի և ոսկորիկ : Այս պտուղ բնութ̅ ջերմ է յոյժ. ուստի Հնդիկք յետ ճաշակելոյն՝ ըմպեն կաթն 'ի բարեխառնել : Կամեցեալ ուտել զայս պտուղ, հերձուն զնոսին ինչ միայն արտաքին սեխաձեւ կեղեւոյն, և ոչ զամ՛ կեղեւն. ք̅զի մէջոցք որ յարտաքին կեղեւոյ անտի մինչև ցբուն պտուղսն են, լցեալ կան հեղհեղուկ անպիտան ինչ նիւթովք, և յետ բառնալոյն զնոսին ինչ, օծանեն զձեռս իւղով և այնպէս մի առ մի հանեն զպտուղսն անտի. քանզի նիւթն այն ը̅ ձեռն մածանի սաստիկ, եթէ չիցէ իւղով օծեալ :

Կելա. բոյս սր̅ ելանէ իբրև ձող ինչ 'ի չափ երկուց գրկաց՝ առանց ոստոց ամենեւին. ներքին կողմն բնոյն՝ է կակուղ և քաղցր, զոր և ուտեն իսկ. բերէ տերեւս սակաւ 'ի վր̅ նորին բնոյ՝ ք̅զի ոստ̅ առացաք չունի բնաւ ոստս, որք մեծ են յոյժ, լայն և երկայն իբրև գրկաչափ. մինչև ոմանց զսոսա համարել տերեւս թզենւոյն՝ որովք սփածաւ նախահայրն, զորս ոմանք տեղւոյն 'ի գործ ածեն փոխ սկտեղ : Բերէ մի միայն ողկոյզ 'ի գագաթան. և 'ի վերայ նորին ողկուզոյ՝ կարգաւ շարայարեալ կան պտուղքն նման ը̅ ամի թարմ բակլայի հ̅դ̅ձ արտաքին պատենիւն, զոր 'ի բաց հանեալ, զմիջինն ոսկրոյն ուտեն, որ է սպիտակ և կակուղ, բայց ցամաք, և ունի կորիզս մանունս. այլ համ նր̅ քաղցր է և ոչ խորժելի : Նախ ք̅ զհասանելն 'ի վր̅ ծառոյն՝ հատանեն զողկոյզ նր̅, և 'ի ծայրս իւրաքանչիւր պտղոյ սակաւ ինչ կիր արկեալ թողուն այնպէս, որ 'ի մէ ում աւուր խոկ և խոկ տայ նմ̃ հաստատանանալ, և զգայն նր̃ փոխէ 'ի գեղջն : Բայց բոյս մի յետ միանգամ պտղաբերելոյ, յեկ̃րում ամի լինի անպտուղ․ յայնժամ կմ̃ զշառաւեղս նր̃, և կմ̃ զբուն նր̃ հատանէ անկեն սպլուր, որ նոյնպէս պտղաբերէ : Այնչափ յաճախեալ է այս պտուղ յայն Ծ 'ի կողմանս ինչ, մինչև փնկ կերակրոց ուտել բնակչաց • գտանի սա և 'ի պէյրութ շրջս պաղեստինոյ, այլ սակաւ :

Նարկիլ • բոյս և պտուղ առաւել զքանչելի քան զայլսն և առաւել օգտակար • ծառ մի և տերևք նման են ամենևին արմաւենւոյ • բայց միայն զի սա 'ի միում և եթ կանեթի բ̃զմ տերևս բուսուցանէ • ուստի խորաքանչիւր տերևք երևին ճառագայթաձևք մեծ և նորանշանք, զոր չէք տեսանել 'ի կողմանս յայսոսիկ : Եւ որ առաւել զքանչելին է, քանզի կանեթ տերևոյն մինչդեռ թարմ է, ոչ կարէ զայն չափ բազմութեան տերևոյն տանել, բնութեան խնամօք բուսուցանէ 'ի նոյն ծառոյն նեւթ ինչ իբրև երիզ, որ զայն կանեթ ը̃ բուն ծառոյն մածուցեալ միացուցանէ անդադոյն՝ մինչև ցհաստատել և ցկարծրանալ տերևոյն • ապա յորժամ չէք ևս վասն բեկմանն, նեւթն այն թառամեալ ինքնին փրթանի և կախի զծառոյն, զոր 'ի բ̃զմ պէտս 'ի գործ ածեն : Պտուղ նր̃ եղանէ 'ի վ̃ր բնոյն ը̃ տերևովք՝ ոպ̃ և արմաւենւոյն, և լինի մեծ իբրև զկիտրոն, այն է Աղամ խամլանի : Այլ ոպ̃ տերևն նոյնպս̃ և բազմատեսակ կերպ սորին պտղոյ է նոր և անսովոր • զի նախ արտաքուստ կանաչ մաշկ ինչ պատեալ կայ զնովաւ • զկնի այնր են թելք կարծր ը̃ զմ̃ուշ, խիտ առ խիտ, առ բ̃զմ իրս պիտանի • զոր նաև 'ի պէտս պարանոց նաւուց հիւսեալ 'ի կիր առնուն • ապա զկնի այնր է նոյն խոկ մերձին ենթրըլին կեղև պտղոյն նման ընկուզոյ, բայց կարծր սաստիկ • զոր հարկ է ուռամբ կմ̃ սղոց խ̃կ խորտակել, և ապա լինի ժամանել 'ի մարմին պտղոյն՝ որ է սպիտակ և կարծր իբրև պշագամեակ • այն է քէստանէ, և խ̃ղոյն • բնութ̃ ջերմ • այլ 'ի մէջն անդ մարմնոյ պտղոյն՝ է հիւթ ինչ սպիտակ քաղցր և բնութ̃ ցուրտ • ուստի և զերկոսեանն հանդերձեաց 'ի մ̃ բնութեն 'ի բարեխառնել :

Զկեղև այսր պտղոյ 'ի բ̃զմ պէտս 'ի կիր արկանեն ոչ միայն բնակիչք, այլ և յայլ Ծս • որ 'ի ձգել ըղծուխ, այն է թիւթիւն, որ կոչի յանուն նր̃ Նարկիլէ, նաև փնկ սկնակաց, անօթոց, և գրգալաց :

Այլ երբեմն յառաջ քան զհասանելն, 'ի բաց հատանեն 'ի կանթէ զպտուղն՝ յորմէ հիւթն զոր պտուղն յինքն ունէր ձգել, հոսի. ընդ որով եդեալ անօթս եւ ժողովեալ, թողուն առ ժամ մի մինչեւ ցթթուել նման Պօղայի, եւ ապա լինի ըմպելի կաթնագոյն քաղցր եւ զուարթացուցիչ. գտանին անդ եւ այլ պտուղք ինչ, որք ըստ այսմ 'ի հասանելն, հեղուն զհիւթս իւրեանց: Այս նարկիլ բուսանի անդէն առատ յոյժ, որպէս եւ յայլ տեղիս ինչ հնդկաց. եւ ոչ ապականի արագ, այլ տեւէ. ուստի է մի 'ի մեծամեծ վաճառացն հնդկաց. զոր եւ ուրեք ուրեք ուտեն փոխանակ հացի:

Անանաս. պտուղ ազնիւ եւ սակաւագիւտ, բոյս նորա փափուկ, որ լինի փոքր իբրեւ զբողկ. արձակէ տերեւս ցցեալս նման տերեւոց արմաւենւոյ արտաքոյ հողոյն. պտուղ նորա է նոյն իսկ անհարթ արմատ նորա, եւ բողկն եւ բանջարն. համ նորա քաղցր է միանգամայն եւ թթու, նման փորթուգալ պտղոյն. այլ ոչ կակուղ իբրեւ զնա. ունի թելս կամ ջիլս խիստ եւ կարծր. մինչեւ հերձանել եւ կլանելս: Առաւել պատուականն եղանէ 'ի տաքայ, որ է գաւառ ինչ 'ի պանկալս. առանց ինչ թելից մաքուր եւ դիւրածաշակ:

Ջամպու. նման է ձիթոյ՝ ըստ ձեւոյն եւ ըստ գունոյն. համ նորա քաղցր, բայց եւ վայրենի եւ անտառային. ուստի աղեալ լուծացեալ թողուն առ ժամ մի, առ 'ի առաւել ազնուացուցանել եւ ախորժելի գործել:

Կուլապ Ջամպու. պտուղ սակաւագիւտ նաեւ 'ի նմին տեղի. ըստ ձեւոյ եւ ըստ մեծութեան նման զղեարի, այն է Մուշմուլայ. գոյն նորա 'ի սկզբան է կանաչագոյն, իսկ 'ի հասանելն դեղին. միջն դատարկ. եւ կորիզք բազումք 'ի նմա, այլ արձակք եւ ոչ կցեալք ընդ մարմնոյն, որով նման է ամենեւին պտղոյն կոչեցեալ Տրապզոնի խուրմայ, համ նորա եւ հոտ՝ է իբրեւ զաւիշկ վարդի. յորմէ կոչեցաւ եւ Կուլապ. զի նոքա զվարդաջուրն յայս անուն կոչեն:

Սէֆրի ամպ. է ծառ պտղաբեր. որոյ պտուղ ունի նմանութիւն ընդ տանձաձեւ լեմոնի, որ գտանի առ մեզ. քաղցր է եւ հոտաւէտ յոյժ, բայց անտառային, ունի եւ կորիզ փոքր:

Պէլ. պտուղ ա[illegible] ծառոյս որոյ ձեւ նման է նռան, բայց բոլորակ եւ մեծ քան զնա. կեղեւ նորա կարծր է սաստիկ, մինչեւ սղոցաւ հարկ է հերձանել. համ նորա քաղցր, եւ գոյնն ծիրանի դեղին:

Ամպ.

Ամլա, կմ̃ Ամլիա, զոր արաբացիք կոչեն Թամրը հընտի, որ թարգմանի Արմաւ Հնդկաց: Ծառ սր̃ լինի մեծ. և պտուղն իբրև զՔէչի պօյնուզ, կմ̃ զփասուլ. նախ ք̃ զհասանիլն է թթու յոյժ, ուստի և 'ի կերակուրս 'ի գործ ածեն փոխ թթու նիւթոց. իսկ յետ հասանելոյ է թթու քաղցրախառն. զոր յանօթս եդե̃լ իբրև զչամիչ, առաքեն 'ի զանազան տեղիս. զոր և յամարային խառնե̃լ 'ի ջուր, ըմպեն 'ի զովացումն՝ ք̃զի է կակղացուցիչ և զովացուցիչ:

Բան. է բոյս ինչ անպտուղ, որ սպառելով ելանէ զխեչակաւ իբրև զբաղեղն, ոչ այնչափ ինչ բարձր. և է փափուկ յոյժ. ուստի և բզ̃մ դարմանաց կարօտի, զորոյ զտերևսն ևեթ 'ի գործ ածեն. համ նր̃ նման է այլոց համեմանց: Լինի անդ և պտուղ ինչ անուանե̃լ Սըփարի. որոյ ծառն ամենևին ուղիղ և նրբաձև բարձրանայ յերկրէ գեղեցիկ յոյժ. բերէ պտուղ նման ամենևին Հնդկային ընկուզոյ. զայս պտուղ 'ի մանր և 'ի նուրբ մասունս հատե̃լ, դնեն 'ի մէջ տերևոյ Բանին և պատեն: Շինեն անդ և կիր ինչ մաքուր մանաւանդ վս̃ այսր, յորմէ առե̃լ սակաւ ինչ և եդե̃լ 'ի վր̃ տերևոյն, առնուն ապա 'ի բերան միայն 'ի ծամքել և զհիւթ նր̃ ձգել: Ամ̃ Հնդիկք և ոմ̃ ազգք անդ բնակե̃լք, 'ի գործ ածեն զայս առհ̃րկ. որ̃ ասեն 'ի կիր առնուն զծխախոտ. Նովաւ մեծարեն և զհիւրս: Ուստի բզ̃մ մաքս եդեալ կայ 'ի բերելն յարտորէից 'ի ք̃ղս. համ սր̃ է ախորժելի. բայց առհ̃րկ կարմրացուցանէ զատամունս, և 'ի դոյն արեան ներկէ զթուք բերանոյն, որ զզուելական իմն թուի օտարականաց:

Այլ 'ի պտղոց աստի զոր մեք ունիմք, որ̃ տանձ, խնձոր, դեղձ, ծիրան, խաղող, ևն̃, չեք բնաւ 'ի հարաւային կողմանս, բայց եթէ ուրեք ուրեք սակաւ. այլ կմ̃ 'ի խորին հիւսիսային նահանգաց իւրեանց տան բերել. որ̃ 'ի Քէապօլ Նհ̃նգէն, որ 'ի հարաւային կողմանց հեռի է իբրև երից ամսոց ճանապարհաւ, և կմ̃ յԵ̃էն պարսից, պատե̃լ բամբակաւ և եդե̃լ 'ի տուփս, առ 'ի չվնասել յօդոյ, միայն 'ի պարգև մեծամեծ իշխանաց: 'Ի հարաւային կողմանս ինչ, որ̃ 'ի Պանկալա, լինի միայն ձեղլապոմ, և վարունկ, որ յա̃մ ամենևին բուսանի անդէն. լինի և ցորեան, բայց չէք սովորութիւն հասարակ ժողովրդեան ուտել հաց 'ի ցորենոյ:

Բաց յայլոց բազմատեսակ նոր պտղոց և բուսոց, զորս չէ մարթ աստէն յիշատակել մի ը̃ս միոջէ, լինի յտ̃ղին մողոլաց 'ի ծովեզերեայս գոնդանայ 'ի քուշ ջուռ, և մ̃նդ 'ի պանկալա հնդկին, մետաքս նուրբ և փափուկ ազնիւ յոյժ, ք̃ այլոց կողմանց հնդկաց, զոր մինչև ցեւրոպիա տանեն. և աստ մինչև յամին երիցս և չորիցս չերամաց գործել մետաքս, սակս առատ բուսանելոյ անդէն թթենեաց. քանզի առ պարարտութե̃ երկրին պանկալայի, որ ք̃ զամ̃ տ̃ղս մուղալաց արգաւանդ է և բերրի, և առ յորդուն անձրեւացն, վաղվաղակի և դիւրաւ բուսանին ծառք նր. զոր կամեցեալ բազմացուցանել, ոչ միայն զըն ձիւղս ծառոյն' այլև զբուն նորա 'ի բ̃մ միասունս կտրատեալ, արկանեն իբրև սերմն 'ի մ̃ր հերկեալ երկրի, որք ը̃ միջոցս երից ամսոյ բարձրացեալ, իսկ և իսկ արձակեն տերեւս։ Եղանէ ևս 'ի նմին հնդկի շաքար առատ և ազնիւ, զոր առաքեն 'ի զանազան կողմանս, թէպէտ չէ այնչափ սպիտակ։ 'Ի գուճրաթ նահանգին' եղանէ բամբակ առատ յոյժ և ազնիւ. իսկ 'ի պանկալա սակաւ, այլ նուրբ և առաւել պատուական վ̃ օդոյն և ջրոյն լաւուն։

Այլև որիզ բազմատեսակ և ազնիւ. 'ի պանկալա եղանէ որիզ հ̃րկ առատ յոյժ, ուր յամին երիցս սերմանեն և հնձեն. վ̃յ սովու ատեն և յայլ ամ̃ կողմանս հնդկաց, բայց 'ի փիլաչօռ կոչեցեալ երկիր ինչ մողոլաց, եղանէ սեւակ ինչ երկայնաձև որիզ, զորոյ զհամեմատն ոչ ուրեք է գտանել, զոր և 'ի պարգև առաքեն մեծամեծ իշխանաց և նահապետաց։ Կոճապղպեղն' այն է Ջէնձէֆիլ առատ եղանէ 'ի պանկալա։ Անդամանդ, այն է Ելմաս 'ի տաքան մեծի տ̃ղին 'ի կոլգօնտա և 'ի վիզափուռ, և այլուր ևս, որոյ նման չէք ուրեք գտանել։ Սէյլանակն' 'ի նմին տ̃ղի. որ եղանէ նաև 'ի սէյլան կղզի. և այլ ակունք բազմազանք 'ի գուճրաթ նահանգի։

Աշպանող փայտն, և Սանտալ փայտն հոտաւոր, որոյ կրկին է տեսակ. սպիտակ և կարմիր. սպիտակն որ առատ եղանէ 'ի նմին սաքան տ̃ղի, առաւել ազնիւ է սակս առաւելուն հոտոյն որ 'ի նմ̃. զոր և 'ի գործ ածեն 'ի դեղորայս, նաև 'ի ծխանելիս հ̃չ̃ բազմօրութե̃ այլոց։ Էօտ ազամձի. որ թէպէտ և այլուր լինի, ք̃ 'ի չեամ տ̃ղին, այլ ոչ հաւասարի ազնուութե̃ և պատուականութե̃ այնմ' որ եղանէ 'ի պանկալա։ Այս էօտ ազամձին, ոչ այլ ինչ է, բայց եթէ ծառ ինչ, զոր հատեալ թաղուն այնպէս ը̃ երկար ժ̃մկ, մինչև ցփտել առ հ̃րկ. բայց 'ի ծառն անդ գտանին և երակք ինչ խունկինք, որ ամենևին ան-

անփուտ մնան, և Նոքին խակ են հօտ աղանծի, զոր տալով ժողովեն սփռեն յԾ ամ՝ 'ի պէտս ծխանելեաց : Քրքում. այն է Զաֆրան որ 'ի քերմիր: Կապուտակ երանգ, կմ՝ լեղակ, այն է Լաջիվերդի. լինի 'ի յակբարապատ, և 'ի գուճրաթ: Պղպեղ. 'ի գօլին, պատուական ք զպղպեղ այլ ամ տեղեաց, եւ և ք զսամոթրայի կղզւոյն: Եւ այլ բերք անբաւք. զորոց և 'ի նախագրութիւնս Նահանգաց ունիմք ինչ ինչ յիշատակել:

Է. Վաճառք Մողոլաց:

Վաճառք սորին Ծի անբաւ են և անհամարձակ յետ յաճախելոյ վաճառականաց և Նաւարկութե յայն Ծ: Երևելի վաճառք նր են մետաքս, բամբակ, Նարկեղ ապատոյն, որից, անդամանդ՝ այն է Ելմաս, հօտ աղանծի, են, զորս յիշեցաք 'ի բերմանն անդ. որով զանխատ գանձս հաւաքեն Նոցին բնակիչք. ք զի յԾէն մուղալաց երանեն իրք նեւթականք, և արտաքուստ յամ Ծաց անդր հաւաքին ոսկի և արծաթ: Բայց 'ի բնական իրացն, երևելի վաճառք Նորա են բամբակի պատառք բազմաձևակք. յորս յաւէտ Նշանաւոր են բազմագոյն Նրբութեն Տիմի անուանեալ պատառք, և մենգ Մ'ալմալ կոչեցեալ բեհեզն կտաւի. այն է Թիւլպէնտ. առՆուագոյնն սր գործի 'ի պանկալա. ուստի սփռի յամ աշխ մինչև 'ի կոստանդնուպօլիս, Նաև յայլ կողմանս Ծի: Զի թէպէտ բամբակն առաւել առատ ելանէ 'ի գուճրաթ, ք 'ի պանկալա, սակայն 'ի գուճրաթայ բարձեալ տանին 'ի պանկալա. և անդ տան գործել վն Ճարտարութե գործողացն. որք թէպէտ են այր գունհիկք և անօթայք, բայց քաջավարժք յարուեստ մանելոյ, և ոստայնանկելոյ ոնց և ասղնագործութե, մինչև 'ի զարմացումն ածել զտեսողն՝ տաւէտարավէս 'ի Ծնուս ինչ. ուր ասեալ զառաւել Նուրբ և զազնիւ բամբակ, և ծակ բոլորակ ը երդունդն զարծեալ, զամ թելս մանելոյ անցուցանեն ը Նոյն ծակ հաւասար Նրբութբ. յորմէ գործեն այլ կտաւ պաճիճեալ, գեղեցիկ ք զկերպաս: Նոյնպէս վարժ են յոյժ և յաջողակ 'ի պատկանել զկտաւս պատառեալս, կմ զհերձեալս և զապականեալս 'ի ցեցոյ, պաճիճել Ճարտարութբ Նորոգելով մինչև չերևելոյ բնաւ տեղւոյ պատառման. Նաև ոմն 'ի գուճրաթայ տանին զբամբակ 'ի պանղա սակս քաղաքիմուս բազմութե՟ն արուեստաւորոյ, նոյնպէս և 'ի պանկալայէ զմետաքսն բարձե՟լ տանին 'ի գուճրադ․ ջըղի անդ առաւելապէս ծաղկեալ է արուեստ դիպակագործութե՟ն և մետաքսագործութե՟ն․ ուստի սփռին ը՟ համօրէն աշխա, մինչ 'ի տ՟րուելս օսմանցոց զանազան դիպակք և մետաքսեայ կերպասք․ որ՟ խաս ալաճայ, Աթլազ, Ճանֆէս, խութնի, և՟ն։ իսկ 'ի ծովեզերեայս գորոմանտէլայ 'ի մատրաս ջիզք, ճարտար են 'ի ներկել կտաւս տպելով, և 'ի ծաղկել գրչովք 'ի զանազան գոյնս, որք են Չիթք․ և խալէմքեարի նրբաթել, գլխաւոր և ազնիւ վաճառք քէշմիր 'հնդկին․ որ՟ և պէսպ՟ս քէմէրպէնտ կմ՟ ճառ գօտեք նր՟, զոր գործեն նաև 'ի լահօռ հնդ՟, յորմէ առնու երբեմն և զանուն։ Մեծամեծ և երևելի իշխանք մողոլաց տան գործել 'ի սոյն նիւթոյ զպատմուճան և զզգեստս իւրեանց միով հիւսուածով փորանկե՟լ, գործ սքանչելի։

Գործեն յաշխ՟ին մողոլաց բզ՟մ աշխատու՟բ և ճարտարու՟բ նաև իւղ վարդի վճիտ և յստակ ք՟ զայլ ամեղեայց․ ջըղէ գտանի անդէն վարդ, մինչ ուրէք ուրէք առատ յոյժ․ և զայն իւղ առեալ 'ի գործ ածեն իշխանք ն՟ց սակս ազնուութե՟ն հոտոյն․ մինչև հեղուլ և 'ի գլուխ երիվարին՝ 'ի հեծանելն իշխանին 'ի վ՟ր․ որոյ մի շիշն որ չէ ինչ մեծ, վաճառի մինչև ցերեքհարիւր ռուփի։ Գործեն և 'ի գուճրադ 'ի կողմանս սուրաթ քաղաքի սքանչելի իմն նիւթ որ չէ բնական այլուր․ զի 'ի վ՟ր բուսոյ սիսաւան՝ սփռեն 'ի գիշերի կմ՟ յերեկոյի բեհեզս կտաւս նրբաթելս, յորոյ վ՟ր իջե՟լ ցօղն առաւօտեան՝ թանայ զամ՟ բեհեզն, զոր ապա ճմլեալ յանօթ ինչ, հիւթն ելե՟լ անտի որ ոչ այլ ինչ էր, բայց եթէ նոյն իսկ ցօղ առաւօտեան, լինի թթու սաստիկ և ազնիւ համով քան զաւիշ լեմոնի․ զոր տանին 'ի զանազան կողմանս։ Եւ միանգամայն առեալ աշխ՟ն մողոլաց զամ՟ վաճառս առաքէ յիւրմէ յայլ և այլ կողմանս աշխ՟ի, և սակաւս ը՟ունի արտաքուստ 'ի սինէացւոց և 'ի մերոց աշխ՟աց։

Առաջին վաճառականք որք յօտար աշխ՟աց մտեալ ծաւալեցուցանեն զվաճառականութիւն յաշխ՟ին մողոլաց, բաց 'ի նախնիքն բանեանեաց և յարաբացեաց, զորս մինչտարս երկրին արժան է կոչել, ք՟ թէ օտար ազգս, են վաճառականք յազգէս հայոց, որք նախ 'ի պարսից աշխ՟էն ուրեք բազմութ՟ք ը՟ յանձն 'ի մօտակայ սահմանս Հնդկաց սկսան առնել երթեւեկս և առեւտուրս. և զառաջին բնակութիւն հաստատեցին ՚ի տըլլը Նէնգի, ՚ի համանուն մայրաքաղաքի նոցա, որ կոչի եւ Շահճանապատ. ուր գտանին և մինչև ցայժմ սակաւ ոմանք յազգէս մերմէ սերեալք ՚ի նախնեաց հայոց անտի: Այսպէս սակաւ առ սակաւ յառաջ գնալով, ստարածեցին զվաճառականութիւն իւրեանց մինչև ցպանկալա, ուր թուէ ՚ի ժամկէն յորում փորդուգալք նորոգ հասեալ էին յայն աշխարհ ընդ ծով՝ ելեալ ՚ի խնդիր նոր աշխարհաց:

Տեսեալ մերոց վաճառականաց որք ՚ի բնէ յաջողակ են յայս արուեստ զարգասութիւն երկրին պանկալայի, որ քան զայլ ամենայն աշխարհս մողոլաց առատաբեր է, և միանգամայն ծովեզերեայ՝ սկսան այնուհետև ՚ի նմին նէհնգի և յայլ ծովեզերեայ նէհնգս յաճախել, և նաւարկութեամբ առնել վաճառականութիւն ընդ այլ հեռաւոր աշխարհս. քանզի մողոլ կռապաշտք ըստ օրինաց իւրեանց ոչ կարեն նաւարկել ՚ի վերայ ծովու. և մողոլ մահմետականք չեն այնչափ անձնատուր յայն գործ: Եւ այսպէս զամենայն մեծամեծ վաճառս յինքեանս սեփականել, մեծաւ յաջողութեամբ և առատ շահեկանութեամբ փարթամացան յոյժ. յորս ՚ի վերջնումն ժամկի երևելի էր պետրոս ուսկանեան այրն համբաւեալ ընդ ամենայն աշխարհս յիւրումն ժամկի. և պետրոս յարութիւնեան:

Այլ ՚ի սկսել եւրոպացւոց ընդ կողմանս այսր համատարած աշխարհի, ըստ անյագ շահասիրութեան իւրեանց, գրեթէ զամենայն վաճառականութիւն երկրին ինքեանք գրաւեցին. յորմէ ոչ սակաւ վնաս եղև վաճառականաց ազգի մերոյ. որք յառաջն այնչափ հաստատեալ և զօրացեալ էին անդ, մինչև խառն ընդ բնիկ հնդիկս մարտ մղել ընդդէմ անգղիացւոց, ՚ի դիմել նոցա ՚ի վերայ ծովափնեայ աւելեայ պանկալայի որպէս ստորև լիագոյն ունիմք նշանակել:

Առ մողոլս կամ առ հնդիկս, ոչ գոյր յառաջագոյն այնչափ ինչ յաճախումն առնելոյ վաճառականութեան ընդ օտար աշխարհս, այլ առաւել յաշխարհի իւրեանց ներս. մինչզի ոչ, ասացաք, արգելեալ է նոցա նաւարկել ընդ ծով. բայց զկնի յաճախելոյ անդ հայոց և եւրոպացւոց վաճառականաց՝ պանեան կոչեցեալ ցեղք ինչ առ նոսա, որք թոյլ են յիւրս կրօնս՝ և են մեծատունք, ձեռնամուխ եղեն և ինքեանք ՚ի նոյն. զոր առնեն կամ ինքնին, և կամ ՚ի ձեռն այլոց: Իսկ օտարական ազգք մինչ յազգէս հայոց որք կան այժմ անդէն, թէպէտ սակաւ են յոյժ քան ՚ի նախնումն, առ հասարակ ՚ի նոյն գործ

զբա

շահավաճառութ պարապին, այլ և 'ի սկզբանն, յորժ ամս յար 'ի վէճս և 'ի դատս թարթափին մինչև նոցին իսկ անգղիացւոց խոստովանիլ, թէ մեծագին դատաստանարան՝ որ է 'ի կալկաթա մայրաքաղաք պանկալայի, գրաւմամբ հայոց շինեցաւ: Այլ յայժմ օտարական ազգաց միջի առաջինն են անդ 'ի շահավաճառութ անգղիացիք. որոց ունելով ը իւրեանց տրուէ զայլևայլ տեղիս 'ի զանազան կողմանս Հնդկաց, և սաստկապէս 'ի պանկալա, անարգել վարեն զվաճառուն իւրեանց. որով և 'ի սուղ ժամու հարստացեալ, գտանին մեծագանձ 'ի հայրենիս իւրեանց: Զկնի անգղիացւոց գաղղիացիք, որոց կալուածք սակաւ են, քան զանգղիացւոցն. ապա հոլանտացիք. և փորթուգալք, որք թէպէտ եղեն առաջին տիրապետողք երկրին, այլ յափշտակեցին 'ի նոցանէ անգղիացիք, գաղղիացիք, և հոլանտացիք: Իսկ հրէայք սակաւք գտանին անդէն:

Վաճառականք յորժամ կամին պատրաստել զվաճառս առ 'ի բառնալ 'ի նաւ, որ զկոռու, բազում ժամք յառաջ յանձնեն թէլլալաց, 'ի ժողովել կանխիկ առնել նոցա զդրամս, և նոքա երթեալ ժողովեն 'ի վաճառականաց, որ 'ի լեզու մողոլաց կամ հնդկաց կոչի Աղբանկ, որ առ նոսա նշանակէ զանգին որ հասանին բերք երկրին 'ի վաճառ. Նոյնպէս և թէլլալք յորժամ յանձնեն գիւղականաց և արուեստաւորաց պատրաստել զկտաւս, կանխաւ տան նոցա զգինն՝ նախ քան զկատարելն գործել. քանզի այս սովորութ է առ նոսա, զի մինչև են առեալ զդրամն, ոչ գործեն ինչ. ապա զվաճառսն զայնոսիկ ժողովեն 'ի մասնաւոր համբարանոցս վաճառաց, որ 'ի լեզու հնդկաց կոչի՝ Գոդի, և անտի բարձեալ 'ի նաւս, տանին յայլ և այլ կողմանս Եւ:

Առ զանազան ազգաց վաճառականս, զանազան են անդէն սահմանեալ և շահք դրամոց. առ վաճառականս ազգի մերոյ լինի՝ առ հարիւր, իսկ առ վաճառականս եւրոպացւոց՝ տասն. և առ ընկերութեն կամ քումբանիայն անգղիացւոց, որ տիրողն է 'ի պանկալա, ութն. թէպէտ և արտաքոյ այսր՝ ոմն վաճառականք աւելի ևս տան 'ի շահ:

Է. Բաժ. Մողոլաց:

Մողոլ մահմետական հնդիկք բազում իրօք նմանին բարուք, նաև ուրեք ուրեք զգեստուք՝ պարսից և տաճկաց · բայց միայն զի ոչ առաւել զեղխեն և խղամոլ, և զկնովին ընկղմեալ յանառակութիւս : Իսկ բուն կռապաշտ Հնդիկք՝ բնութեամբ հեզ են · մինչ թէ վատասիրտք, և անհնարին երկչոտք · որով եղեն և միշտ եղիցին որս սպառապատակաց ազգին՝ որք կամիցին տիրել նց · զի մեծապէս ատեան զանգթութի և զխոտորած, որք անանջատ են 'ի պտզմաց : Եւ ևս անմիաբանք են և երկպառակք 'ի միմեանց, ուստի հնոյ նորանոր խռովք և բաժանմունք յառնեն առ նս · և օտար ազգք դիւրաւ տիրեն նոցա : Այդ անուանի և քաջ Հէյտար ալի խանն, կմ Հէտէրնակէցն՝ ազգաւ Հնդիկ, ուսեալ զարհեստ պտզմի առ գաղղիացիս · որ ջանահնար լինէր վարել զմտ եւրոպացիս, մինչ զանգղիացիս, 'ի հայրենի Տէրն, սորայ անշքամ մի առ նս զաւն և նեղեալ սրտիւ : Անմիաբանութի և երկպառակութի մեր, է պատճառ ձերոյ երջանկութե և խնդութե, որք փայտակերտ են բնակարանք եկեալ 'ի հեռաւոր Տէ՝ զերկիրս մեր գրաւեցիք, զի թէ խորհրդակցէիք որք կան 'ի ներքս մեր, մի մի վէմս ձգելին 'ի ձեզ, բաւական էր 'ի հալածել զձեզ : Քանզի յերուսի անգղիացիք, այն և այլ ազգք եւրոպացւոց, տիրեցին նց առաւել հնարիւք, ք թէ քաջութե, զի նախ գրգռեցին զերկպառակութի և զմարտ 'ի մէջ նց · և ապա միաբանեալ ընդ միոյ կողման, յաղթէին և տիրէին միւսոյ կողման · և զկնի նախ զայն կողմն և զիշխանն՝ ընդ որում միաբանեցան, 'ի բաց հալածել, ինքեանք տիրէին Տէր երկոցունց :

Առ Հնդիկս յաճախեալ է յոյժ մինչ առ ծ ռայս գորութի · ջգլի բժիշկք բաց 'ի վարձուց իւրեանց՝ յորժամ անէարք նց առնն զնել ինչ, նախ առնուն միանգամ ինչ 'ի դրամոյն՝ իբրեւ 'ի վարձ աշխատանաց իւրեանց · և ապա զառկաւագին իբրեւ զկծանկագին գնեալ, զաւելին պահանջեն 'ի տէրանց իւրեանց · նաև 'ի գնել իրաց զմասն ինչ խորեն : Ծառայք առ և խաժամուժ ժողովուրդ առ Հնդիկս բիրտ են, ապութանձրամիտ, անհրահանգ և զուրկ ամենևին 'ի քաղաքավարութենէ և 'ի հանճարոյ · յորս չէ մարթ բնաւ վստահանալ զոյգս ինչ անթերի հաւատացեալ առ այլ ոք · Այլ հարկ է անդ զայսպիսիս սպասաւորս վճարել · այլ 'ի ննջել և 'ի խաղել և զօրանալ աշխոյժ են սթափ և հնարագէտ : 'Ի խոստմունս արագ են և առատ, նաև յոյժս, զորս բնաւ 'ի մտի կատարել, զի նախատինս համարին

ԵՐԵՎԱՆԻ

անձանց հրաժեշտ տալ. այլ 'ի կատարումն դժբօղք. յոյր սակս ոչ սակաւ նեղութի և վնաս կրեն օտարականք, որք անտեղեակ գոլով բարուց նց, խաբին դիւրապատրաստ խոստմամբք. որով բզմ անգամ բզմ կարեւոր գործառնութք նց 'ի գերի եղանեն: Ջերմք են և անառակք, գլխովին անձնատուրք 'ի պղծալից ցանկութիս մարմնոյ, զորէն անասնոց անբանից. ծոյլ, տարտամ և վեհերոտ:

Հնդիկ ամբոխք 'ի հարաւային կողմանս մերկ շրջին ունելով միայն պատեղ զմիջով կապերտ ինչ կտաւոյ իբրև զփածանելի. այլ մեծատունք միշտ ագանին պատմուճան կմ շապիկ պճղնաւոր միակուղէ 'ի նուրբ և յաղնիւ կտաւոյ. ուստի զարդք նց են ակունք և մարգարիտք, զորս կրեն 'ի մատանիս և 'ի գինտս և յայլ զարդս: 'Ի շրջիլն 'ի քղքի ըստ մեծի մասին բաց 'ի հնդիկ ռամկաց շրջին հովանոցօք, զոր 'ի գործ ածել սկսան այժմ և յեւրոպիս. իսկ մեծատունք և մեծամեծք նց շրջին պահաւորակօք. զոր նք կոչեն Բալանգի, որ է Թահտըրըվան, ունելով յառաջոյ քառասուն և յետուստ հետեւակ սպասաւորս. յորոց մին բարձեալ տանի հովանոց, այն է՝ Ալփագէ հովանի ունելով ոն փղոյ. քանզի երկոքին կողմանք պահաւորակին բաց են: 'Ի մատրաս քղք գորոմանդելայ, սովորութի է կրել և առատ ինչ հովանոցի, զոր և ոչ 'ի մեծատանց ոմըն անխտիր կարեն տանիլ բաց յանգղիացւոց, որ և է բոլորաձև տախտակ տափարակ ոսկեզօծ կմ ծաղկենկար, զոր ծառայք երկոքումբք ձեռամբք վերամբարձ ունելով տանին 'ի յետուստ 'ի վր գլխոյ տն իւրեանց. որ անհեթեթ իմն թուի օտար աչաց: Այլ քանզի և 'ի հայոց անդ բնակելոց՝ որ ոք կամէր՝ կրէր զայն, անգղիացիք զինի ղարիեղ, կամէին արգելուլ, այլ մերքն ցուցին նց զյետոկար հրովարտակին՝ շնորհեղ նց յընկերութէն անգղիացւոց 'ի ժամս ոսկանեան պետրոս աղային, որ գոլով մի 'ի խորհրդականաց ընկերութն որ անդ, առեղ էր 'ի նցէ հրովարտակաւ վն ազգիս հայոց բնակելոց 'ի մատրաս, ունել զնոյն ազատութի, զոր ունին անդ անգղիացիք:

Կերակուր մողոլաց է որիզ և քաղցրեղենք. այն է Բուէչէլ. զորոյ զզանազան տեսակս չինեն անդէն 'ի բերոց երկրի իւրեանց, ընտիրս և պատուականս: Իսկ միս ոչ ուտեն. վն զի արգելեալ է նց յօրինաց. այն զի և վնասակար ես է 'ի հարաւային կողմանս սակս տօթոյն սաստկութէ. ուստի օրէնք նց յայսմ մասին յարմարեալ է հանգամանաց օդոյն ։ Յամ առաւօտու քաղաքացիք ըմպեն դեղ փոքր խաշխաշի, որ կարի յաճախեալ է առ նս̃ ։

Գոյնք նց̃ են թուխ և սևագոյն, թէպէտ ոչ ըստ ազգաց ինչ ափրիկեցւոց սաստիկ սևաւք ։ առաւել սևագոյնք են բնակեալքն 'ի խորին հարաւային կողմանս ցամաքակղզւոյն, և 'ի կողմանս մատրասու զորս վարդան Արջասպնաներկս կոչէ ։ սակս յոլովագոյն լինելոյ 'ի նմ̃ սևաւ մաղձի ։ Իսկ բնակիչք հիւսիսային նահանգաց թէպէտ դիմօք սպիտակք են, այլ չունին կայտառութի և կարմրութի երեսաց ։ զմարմինս իւրեանց ստէպ ստէպ օծանեն իւղով մանաւանդ ռամիկք ։

Թ. Լեզու Մողոլաց ։

Ունին սք̃ մասնաւոր իմն լեզու օտար յայլոց լեզուաց ։ բայց յայն հասարակաց բարբառ գրեթէ և իւրաքանչիւր երևելի նահանգ ունի առըբերութի բզմ̃, մինչ 'ի կողմանս ինչ ։ Իսկ 'ի դատաստանի և 'ի դիւրս, 'ի գործ ածեն զլեզուն պարսից, որ 'ի յարգի է յոյժ առ նս̃ ։ այլ և հրովարտակք և նամակք արքունի գրեալ են 'ի լեզու պարսից ։ Գիտութի և ուսումն չիք բնաւ առ նս̃, և ոչ իսկ փոյթ տանին այնմ ։ ոչ աստմարական հաշիւք և ոչ բնական գիտութիք ։ զի բաց 'ի շահասիրութէ յորում աչալուրջ են և հնարագէտք, ոչ գիտեն այլ ինչ ։

Ժ. Կառավարութի Մողոլաց ։

Արժանեցեալ յայլում վայրի յիշատակել գէթ 'ի հաւանեցի, զհնդկական կառավարութի աշխարհին Հնդկաց, 'ի դէպ է զպատմութի աշխարհագրոց նր̃ 'ի վերայ ածելի համառօտել աստէն ։ Յորս Ը նախնի անուանապատմութեց, առաջինքն եղեն Բագգոս, Հերակլէս, Սեսոստրէս, Դարեհ, և Աղեքսանդր մակեդոնացին ։ Յետ մահու աղեքսանդրի, մի ոմն Սանդրակոտոս անուն ազգաւ հնդիկ, այր զօրաւոր, վանեալ զմակեդոնացիս, լինի տիրեաց Տին ։ Այլ չէ յայտ՝ թէ որչափ եկաց ժամս միապետութի հնդկաց հիմնեալ 'ի նմանէ ։

'Ի սկզբան Է դարուն, արաբացիք սփռեցան յՊն̃ հնդկաց, ոմն յահիջադոյն և յայլ կողմանս Տի ։ առին զկղզիս ինչ հնդկաց, բայց պատմագիրքն բաց 'ի սակղեաց ինչ Թողին ընդ իշխանութեամբ նոցին բնակչացն, շատացեալ խաղաղութեամբ տուր և առութիւս առնել 'ի նմա: Այլ յետ երից դարուց ազգք բարբարոսք Ղէնիճ Մահմետականք, եկեալք 'ի Խորասանայ ընդ զօրավարութեամբ Մահմուդ անուն ուրումն, յարձակեցան յԾն Հնդկաց 'ի հիւսիսոյ կողմանէ. և տապալակուռք հասին մինչև ցԳուճրատ, բարձեալ 'ի բազմագանձ Ծն անտի աւարս անբաւ: Յետ ոչ բազում ժմկաց յարեաւ հռչակաւոր Չինկիս խանն 'ի Թաթարաց. որ զկնի տիրելոյ մեծագոյն մասին ասիոյ, յամին Տեառն 1200 դարձոյց զդէմս իւր 'ի Հնդիկս. և եհաս մինչև ցԳանգէս, բայց փութով յետս դարձաւ անտի. ուստի զկնի սակաւուց տիրեցին նմա բազմանցեալք:

Արդ, ըստ ոմանց պատմագրաց՝ էին 'ի նախայիշատակեալ վաճառականաց արաբացւոց բնակելոց 'ի ծովեզերեայ կողմանս Ծին Հնդկաց. որք անդորր և ակարս գտեալ զիշխանս Հնդկաց և զժողովուրդ նց, ստացան պատերազմաւ բզմ մեծամեծ նահանգաց տիրեցին. և հիմնեցին անդէն մեծ և զօրաւոր ինքնակալութիւն. որում ետուն արքայանիստ քղք զԴելլի: Ընդ այն տէրութ. Թրքմանիկ էր Հնդկաստան. մանաւանդ զի բազմանցեալք գլխովին անձնատուր գոլով 'ի վաճառականութիւս, և 'ի մանկութենէ անտի՝ լինել, չէին պատերազմասէրք. որում զուգընթաց էին ծուլութիւնք և քնքշութիւնք և աւարառութիւնք և այլ ախտալից ոճիրք և անդթութիւնք, ուստի 'ի մեծի խաղաղութեան վայելէր յայնժամ Ծն Հնդկաց: Այլ ոչ երկարեաց այս խաղաղական տէրութիւն նց. զի յետ Թիմուր կմ Լանկթամուրն եկեալ 'ի Թաթարաց անտի 'ի ժդ դարու, անթիւ բազմութ. զօրաց յարձակեցաւ յԾն Հնդկաց, անձամբ ընդ իւրն նուաճեալ զհիւսիսային նահանգս նց. իսկ զհարաւայինս 'ի ձեռն զօրավարաց իւրոց: Եւ որպէս Թիմուր կամէր անդէն հաստատել զաթոռ ինքնակալութեան, այլ յանկարծակի իմս լուր ընկալեալ, սահակեցաւ զնալ տալ պատերազմ ընդդէմ պայազատս սուլտանին, զոր կալեալ էր 'ի բանտի: Եւ այսպէս տիրեաց համօրէն ասիոյ. սկսեալ 'ի Զմիւռնոյ մինչև ցԳանգէս. և մինչ խորհէր առնուլ և զԾն Չինաց, և զմնացեալ մասն ասիոյ, մեռաւ 'ի Թուրքաստան որպ և 'ի վերոյ անդր յիշատակեցաք: Եւ զկնի մահուն նր մեծամեծ պատերազմունք յարեան յորդիս և 'ի թոռունս նորա, և մեծագանձ աւարք նր բաժանեցան 'ի բզմ մասունս 'ի մէջ բազմապատիկ ժառանգաց նր:

'Ի թոռանց նորա մի ումն անուանեալ Բաբուր, որում յետ մահուն Լանկթամուրայ անկաւ Թուրքաստան որ և թագաւորէր 'ի Սամարղանդ 'ի մայրաքաղաքին Բուխարայ, եղև հիմնադիր Ինքնակալութեան Մեծին Մողոլի կամ Մողոլաց: Քանզի եօզպէկ Թաթարք մարտ ընդդէմ նորա յարուցին, ընկեցին զնա յաթոռոյ. յորմէ բռնադատեցաւ փախստական անկանել 'ի քաղաք անուն Քաբուլ Հնդկաց, որ է 'ի հարաւակողմն լերանց՝ որք անջրպետեն զՀնդկաստան կամ զՄողոլս 'ի Թաթարաստանէ: Իսկ Իշխանն Քաբուլայ գոլով բարեկամ արքայական տանն Մողոլաց, ընկալաւ զնա. և ձեռնտու եղև նմա, յինքն ժողովել զզօրս 'ի հպատակաց անտի իւրոց Մողոլաց: Այլ [illegible], և Թէ վասնզի մեծ է այս մարտնչել 'ի վերայ եօզպէկ Թաթարաց, որք աւերէին հանապազ Թուրքաստանցին, խորհուրդ ետ նմա դարձուցանել զզէնս իւր 'ի վերայ Հնդկաց, յուսացուցեալ զնա հիմնել անդէն նոր տէրութիւն փարթամ և ճարտարն ևս քան զԹուրքաստան: Ուստի և Բաբուր իջեալ 'ի լերանց անտի հզօր խուռն ժողովօք յարձակեցաւ 'ի Հնդկաստան. և չգտեալ անդէն զօրաւոր ընդդիմակս և արգելս ընթացից իւրոց 'ի սուղ ժամանակի էառ զԴէլլի մայրաքաղաք նոցա. այլ և զհամօրէն Հնդկաստան. որով յայնմ օրէ Հնդկաստան սկսաւ կոչել Մողոլ կամ Մողոլ, յանուն ազգին որ տիրեաց նմա:

Եւ այսպէս՝ Բաբուր որ յաշխարհի անդ իւրում ոչ կարաց պահել զտէրութիւն իւր, 'ի մէջ օտար ազգաց եղև հիմնադիր նորոյ թագաւորութեան, որ փարթամութեամբ և ճարտարութեամբ զանցանէ քան զամենայն թագաւորութիւնս Ծի: Սա հաստատեաց անդանօր այսպիսի օրէնս վասն նորոյ Ինքնակալութեան, և հաստատեաց հանգամանս քաղաքական կառավարութեան, ըստ եղանակի կառավարութեան պարսից և Թուրքաստանի, յորս յինքնագոյն թագաւորեաց: Կարգեաց նոր կուսակալութիւնս 'ի տեղիս տեղիս, որք 'ի լեզու Մողոլաց կոչին Սուպալիս, ք̄ նահանգ. իսկ կուսակալքն՝ Սուպայ Նապապ, կամ սոսկ Սուպայ. Իսկ յինքնագոյն Հնդիկք՝ Ռաճայ անուանէին զաւառս նահանգաց, որ և այժմ տէրքծին՝ որք են Հնդիկք և արտաքոյ սուպայութեանց, կոչին Ռաճայք:

Իշխանութիւն այս սուպայ նապապաց էր մեծ, զօրս և ատէպ փոփոխէր Թագաւորն ըստ հաճոյից իւրոց, զի մի զօրասցին ապստամբեսցին 'ի նմանէ. ուստի մի ումն կուսակալ նորա կոչեցեալ յայն պաշտօն, երբեմն

'ի տեղ-

'ի Դըլլէ մայրաքաղաքէն գնալ 'ի ժառանգութիւն իշխանութեան իւրոյ, դարձաւ և հայէր յետս ասելով. հայիմ տեսանել, թէ զամ յաջորդն իմ զկնի, յայտ արարեալ զսակաւատև իշխանութիւն իւր: Վ՟ն սորին պատճառի կարգեաց 'ի վ՟ր նց և լրտեսս, զի մի զզօրս հաւատացեալս նց առ 'ի նուաճել զհնդիկս, արտաքսեն յիւրեանց Թիկունս ընդդէմ Թգ՟րին: Բայց 'ի սուպանապապաց անուն, էին և այլ սարքին իշխանք, որք կոչէին սանկ նապապք, իբր քաղաքապետք կամեցեալք զաւառնոց: Յարմէ յայտ է թէ և կռովարութեն Տ՟ին հնդկաց առ նովին Ֆիկոք՝ էր գլխովին բացարձակ և ինքնիշխան, կախեալ զհօծայից Թգ՟րին:

Այս ամի ամի յանցանել անձրևայէն եղանակի, ելանէր 'ի գաւառ ինչ մեծ, ուր պարտապան էին գալ հաւաքիլ ամ՟ նապապք, և այլ գլխաւոր զօրապետք հ՟դձ անհամար զօրօք իւրեանց, երթալ ը՟ Թգ՟րին յայցելութե ամ՟ նահանգաց Տ՟ին, մեծահանդէս շքով, որում ը՟ պատմութեց՝ մինչ հանդէս Թագաւորական զուգահաւասար գտանէր: Զի անհամար բազմութի իշխանաւորացն առհասարակ 'ի զարդ ոսկւոյ և յակունս պատուականս զարդարեալ, ինքեանք և երիվարք նց. և որքայն 'ի միջի նոցա 'ի համակ ոսկի և յականակուռ գահ բազմեալ, բարձեալ վերամբարձ 'ի վ՟ր յաղթանդամ փղի, հ՟դձ բիւրաւոր սպառազէն զօրօք ընթանային 'ի յառաջ 'ի յետս. որոց առաջին և ետ սարսափեցուցանէր զժողովուրդն առհասարակ:

Այն այս պատուր ինքնակալ մողոլաց 'ի սկզբան անդ ոչ տիրեաց համօրէն Տ՟ին հնդկաց, բայց զկնի նր Աքպար, և յետ նր Ավրանկ զեպ ինքնակալն՝ 'ի ծայրն հասոյց զփառաւորութիւն մողոլաց, զի նուաճեաց Տ՟ն հնդկաց բաց 'ի փոքրիկ լեռնէ ինչ մալապարայ. ուստի անուն նր համբաւեալ է առ ամ՟ մողոլս, և իբրև բարերար և ձեռնասկող 'ի պատուէ է առ նս: Այլ զկնի մահու նր միահեծան տէրութե այն անկանգնելի կործանեցաւ. որոյ առաջին պատճառն եղև անստուգութի իրաւանց յաջորդութե. զի ինքնակալքն մողոլաց զոլով ամենևին ինքնիշխանք, կարող էին ընտրել 'ի յաջորդ իւրեանց՝ զոր և կամէին, ուստի հայէին 'ի միաձայնութե ազգականց. ուստի որք արտաքոյ մնային, մարտ 'ի վ՟ր միմեանց յարուցանէին: Իսկ նապապքն՝ զխառնակութին զայն առիթ դիպող գտեալ, ը՟ մեծի մասին 'ի բաց եղեն 'ի հնազանդութե Թգ՟րին, և եղեն ինքնագլուխ իշխանք.

խանք · յորոց բզմք 'ի նապապացն և 'ի հնդկին ռաճայից յարեցան առ ինքնագլուխ ազգն մարաթայից · ընդ նմին և նուաճեցուցին զհարկն զոր տային 'ի գանձն արքունի · և այսպէս միահեծան տէրութիւն որ գլխովին ինքնիշխան էր, և կարող էր հանապազ ռոճիկս բաշխել միլիոն մի զօրաց, ստիպեցաւ զիջանել 'ի հաճոյս և 'ի բռնութիւն իւրոց պաշտօնատարաց,

Յայս վիճակ գտաւ մեծ տէրութիւն մողոլաց՝ յորժամ 'ի 1738 յարձակեցաւ 'ի վ՟ր բռնակալն պարսից՝ Նատըր շահ, կ՟մ Թահմաս ղուլի խան, երեք հարիւր հազար պարսիկ զօրօք, ժամ և առիթ դիպող գտե՟լ զերկպառակութն ն՟ց : Քանզի Մէհմէտ կ՟մ մահմուտ շահ ինքնակալն մողոլաց հաւանեցաւ ը՟ փոխարքային իւրոյ և սպարապետին, տալ մարաթայից զդ՟ բաժինն համօրէն մտից թագաւորութեան իւրոյ, զոր պահանջէին 'ի նմանէ : Իսկ իմաստուն սուպա նապապն Հէյտարապատայ, որ էր միանգամայն և փոխարքայ 'ի մեծ ցամաք կղզին՝ տարքան կռուեցե՟լ, բազումս ը՟դէմ եկաց խնդրոյ թ՟գրին · բայց տեսեալ զի չէղեն լսելի բանք ն՟ր, այլ բանք փոխարքային, և սպարապետին, որք թշնամի էին ն՟մ, դժուարե՟լ յոյժ կոչեաց թղթով 'ի ծածուկ զԹահմաս գալ և առնուլ զծ՟ն Հնդկաց · մի առ մի առաջի եդե՟լ ն՟ր զվիճակ երկրին, և զերկպառակութն իշխանաց, և զվատապարտութն թ՟գրին :

Յայնմանէ զօրացե՟լ Թահմաս ղուլի խանին, գեղ ուղիղ չուեաց մինչև յմայրաքաղաքն մողոլաց Դէլլի · 60 հ՟զր պարսիկ զօրօք բաղխելով ը՟ մեծի հակառակ ն՟ց : Յորոց անհամար բազմութն զօրացն մողոլաց, որք ոպ՟ ասեն՝ էին 400000 ցանե՟լ ցրուեցան առանց ը՟երկար դիմամարտելոյ ն՟ց · ոպ՟ 'ի նախնումն՝ բիւրաւոր զօրքն պարսից 'ի փախուստ դարձան յերեսաց 50000 մակեդոնացւոց : Եւ Թահմաս ղուլի խանն յաղթանակաւ եմուտ 'ի Դէլլի յարքայանիստ մայրաքաղաքն մողոլաց՝ ուր նստէր Մէհմէտ շահն, որ պարտութն խոստովանեցաւ ն՟մ · և ստորագրեաց մեծ պայմանաց՝ զոր եդ 'ի վ՟ր ն՟ր Թահմաս : Եւ դարձաւ անտի լցե՟լ անբաւ մեծագանձ աւարօք · յորս յաւելեալ նշանաւոր էր արքայական գահն, թո՛ղ զայլ գանձս և զականս պատուականս :

Այս գահ հռչակաւոր 'ի համօրէն Ասի, էր սիրամարգ արուեստակերտ կազմե՟լ 'ի պատուականագոյնս, տարածե՟լ ածելով զփետուրս · պատուականագոյն ո՟ր համակ ոսկի մաքուր յեռեալ մեծամեծ և անգին ակամբք, նոյնպէս և սիրամարգին ողջոյն անգին գունաւորոյն սքանչելի ակամբք 'ի գոյն փետրոց բնական սիրամարգաց յարմարեալ . նաև 'ի կուրծս ունէր կարմիր յակինթ սքանչելի և անգին, զորմէ կախեալ կայր մարգարիտ մեծ հաստատ մեծութեան տանձի, որոյ նման ոչ գտանէր 'ի համօրէն Ճի։ Յայս գահ զարմանալեաց յորժամ՝ բազմէր ինքնակալն մուղալաց յաւուր ծննդոց իւրոց, ոչ ժուժկէին աչք հայել 'ի նա 'ի շողշողիւն ճառագայթից որք հատանէին 'ի նմէ ։ Գին այսր անհամեմատ և անգին գահի 'ի ժամս նորին գանձմասի հասու 10 քըրոր ռուփի . որ առնէ աւելի քան 325 միլիոն ոսկի ։ Իսկ մնացեալ աւարն զոր էառ նա ինքն գանձմամ՝ եհաս ցհարիւր յիսուն միլիոն ոսկի ։

Այս այնուհետև մահմուտ շահն անարգեցաւ յամեծամեծաց իշխն իւրոց, և նախարարքն թօթափեալ զլուծ նր, եղեն ինքնիշխան տէրք նահանգաց իւրեանց, հատին և զհարկս՝ զոր տային Թիքրին . և միապետական իշխանին մողոլաց՝ դարձաւ 'ի բազմապետութիւն . որով և քայքայեալ թուլեցաւ 'ի ներքոյ աւերակաց իւրոց ։ Յետ մահմուտ շահին նստաւ ահմէտ շահն, զոր գանձապետն արքունի օմրահ գազի ըլ տէհն անուանեալ ընկէց յաթոռոյ, և եդ 'ի բանտի, ուր բրեցան երկաքին աչք նր, և փոխ նր նստոյց զեազ ըլ տէհն, որ էր իշխան 'ի սերնդոց անտի լանկթամուրայ . զոր և անուանեաց ալըմ գիւէր, բայց և սա ոչ յերկար մնաց յիւրում իշխանութեան . զի նա ինքն անօրէնն գազի որոգայթ լարեալ նմ եւ խողխողեալ զնա 'ի 1759 . և 'ի տեղի նր նստոյց զշահ ջհանն . որ և սա էր 'ի սերնդոյն լանկթամուրայ ։

Ան նովին ժամօք մարաթայք ժղդք բնակեալք 'ի լերինս որ 'ի մէջ ադքանու և պանկալայի իջեալ 'ի նահանգն արքի, խորտակեցին զզօրս օմրահ գազիյին . հալածեցին զնա 'ի ձնադի դու ինչ . և առեալ զդէհլի զարքայանիստ քղք մուղալաց ընկեցին զշահ ջհանն . և փոխ նր նստուցին զջւան բուխտ, զանդրանիկն ալի գօհարայ . որ և սա էր 'ի սերնդոց անտի լանկթամուրայ . զոր նոյն գազին ընդ այլոց բազմաց 'ի կալանս էր եդեալ ։

'Ի մէջ խառնակութեանց այսոցիկ և բազմապետութեանց հնդկաց՝ [illegible] ոմն [illegible] ար[illegible] [illegible] տարաբնակացւոց, յափշտակեաց զմ երկիրն զոր մահմուտ կ՟մ մեհմետ շահն առեալ էր սպարսից, և զօրացեալ յոյժ: Սա յա՟ջն միանգամ յարձակեցաւ 'ի Հնդկաստան, և ըղ՟մ մարտ մղեաց ը՟ մարաթայս վ՟ն ընտրութ՟ն թ՟գւի մողոլաց 'ի Դէլլի: Այլ 'ի 1760 միւսանգամ եմուտ անդր, և բազում խորտակեաց զմարաթայս, հաստատեաց յաթոռ թագաւորութե՟ զՋահան բախտ՝ զոր մարաթայք կացուցեալ էին, եդեալ 'ի վ՟ր հարկս. այլև զմ՟ ոմն 'ի զօրապետաց իւրոց կացոյց նմ՟ պահապան: Յայնմ պահու իշխանն ալի գոհար փախուցեալ 'ի կալանաց, գնաց ապաստան եղև առ անգղիացիս, որք է՟ պաշտպանու՟ք իւրեանց առեալ, թ՟գր մողոլաց կացուցին զնա:

Բայց յետ այսչափ խռովութե՟ց՝ ոչ երբէք դարձաւ այն առաջին թ՟գրութ՟ն մողոլաց. այլ օրըստօրէ նուազեալ սակաւացաւ, մինչև ինքնակալութ՟ն նոցա այժմ փոխեալ է 'ի բազմապետութի. զի չէք այժմ անդանօր մի ոմն ինքնակալ հրամանատար ամ՟ցն, այլ իւրաքանչիւր նահանգ ունի իւր սուպահտար անկախ և ինքնագլուխ որք յառնեն միշտ 'ի վ՟ր միմեանց, և զօրութ՟ միմեանց քայքայեն. Թող զկողմանս զայնոսիկ՝ յորս տիրեն բնիկ հնդիկ իշխանք, որք կոչին ռաճայք, և զանազան թ՟գրք անկախք. նաև զկողմանսն զայնոսիկ՝ որք են ը՟ իշխանու՟ թ՟ եւրոպացւոց: Սակայն մեք ը՟ սովորական ընթացից մերոց ունիմք ստորագրել զն՟ս ո՟մ էր յառաջն:

ԺԶ. Մեծ Մողոլաց.

Նախնի մուսուք ինքնակալքն մողոլաց՝ ը՟ ժմ՟կս ժամանակս պէսպէս փոփոխութիւնս կրեցին, այլ միշտ անթիւ էին, և գրեթէ առաւել քան զմեծամեծ թ՟գրութե՟ց. յորոց տեղեկութ՟ն արժան է գիտել. զի ամ՟ երկիր մողոլաց Տ՟ին՝ յորս մարթ էր սերմանել, 'ի բաց առեալ զանապատս և զապառաժուտ լերինս, չափեալ նշանակեալ կային առ թ՟գրին. և յիւրաքանչիւր չափու առնոյր հարկս ինչ, զոր պարտ էին ռայա նուաստագոյնքն՝ և պաշտօնատարք կարգեալ ը՟ նոքօք՝ ժողովել և հասուցանել 'ի գանձ թ՟գրին: Այլ բաց յարքունի հարկաց, նոյն սուպահտարքն և պաշտօնատարք յաւելուին 'ի վ՟ր այլ ևս նոր հարկս և զի՟ անձանց. և այնպէս անհնարինս կեղեքէին զեղկելի ժղ՟ղն: Իսկ քանզի նահանգք կ՟մ սուպայութիւնք Տ՟ին մողոլաց ը՟ ժմ՟կս ժմ՟կս փոփոխեցան, նոյնպէս և

Եկամուտ Թգ՟րին հետզհետէ փոփոխեցան ։ Ի Ժամս աւրանկզեպայ ինքնակալին՝ ըստ ոմանց պատմագրաց սուպայութիւնք և եկամուտք նց՟ զոր տային Թգ՟րին, էր ըստ այսմ օրինակի զոր ունիս տեսանել յառաջիկայդ ։

Սուպայութիւնք .	Ռուփի ..
Տըլլի ,	38185940
Ակպարապատ , կամ Ակրա ,	35836250
Ագմէր ,	20385790
Մահապատ	14266970
Փանճապ	25816610
Աւուդ , կամ Օւտ	10072740
Մուլթան	6701340
Քապուլ	5032480
Քիշմիր	7184730
Գուձրատ	18995290
Պանկալա	16394880
Փաթնա , կամ Պահար	12723780
Օրիսսա	4463120
Սինտ	2869270
Պալակադ , կամ Տովլաթապատ	32342030
Մալվա	12621920
Պերարէճ , կամ Պերար	19188280
Գանտիշ	14019690
Պէտր	11653450
Հէյտարապատ	34792500
Վիճափուր	33697030
Որոց գումարն է ,	377,244,090

Որ առնէ ոսկի վենետիկեան . 85, 741, 293 ։

Այլ ըստ այլոց առ տէրութ՟ շէահ սէլիմ անուն ինքնակալին մողոլաց, որ եղև յաջորդ մեծին ակպարայ ՚ի 1610, տարեկան մուտք զանցանէր քան զ100 միլիոն ոսկի վենետիկեան . նմին իրի և Գիւթրիէ աշխարհագիր դնէ 600 միլիոն։ Սակայն բնիկ մողոլք և նոցին պատմութիւնք ցուցանեն՝ թէ ՚ի ծաղկեալ ժմ՟կի իւրեանց մուտք ինքնակալին՝ էին 900 միլիոն ռուփի . և ոսկի վենետիկեան 500 միլիոն ։ Եւ այս է ինչ ընդդէմ նախայիշատակելոյ չափու մտից, զոր ծըանակէին ոմանք . քանզի ըստ ՚ի վերոգրեալ սուպայութեանց՝ էին և այլ գաւառք և Ծ՟ք բազմք, որոց իշխանք էին բնիկ հնդիկք և կոչէին ռաճայք , ոչ ՚ի վեր անդր առաջայք . որք և հատուցանէին հարկս Թգ՟րին . զոր

որտուհեչյան եւ հաշուէն, զորս Թիւրեւս 'ի բաց հանեն նոյն պատմագիրք, գումար միոյն հասանէր 'ի նոյն չափ ռուփի 900 միլիոնից :

Արդարեւ մեծ են եւ լիր անպայման այսչափ բազմագումար հարք, սակայն չեն արտաքոյ ճշմարտութե. Քզի յայնժամ ոչ եւ այժմ առ թգւրն եւ առ մեծամեծ իշխանս միայն հաւաքի ծոխուն եւ գանձ ծին մուղալաց . իսկ ռամիկք եւ հերկ ժողովուրդք յետին աղքատութ տառապին : Քանզի ոչ ասացաք 'ի վերոյ, իւրաքանչիւր նաւապետք առ 'ի ժողովել զհարկս, զդուս նենգլին կմ իշխանուն իւրեանց 'ի վաճառ արկանեն ժողովրդեան . եւ որ առաւել տայ նաւապետին, առնու զմի գիւղ կմ զքղմ . եւ նա ժողովէ զնմ հարկս քն պայմանել չափուն, եւ տայ նաւապետին, եւ նաւապետն ինքնակալին : Ուստի ոչ լինին տր այնց գաւառաց . որք կոչին 'ի լեզու պարսից Ջիմինտար : 'Ի նախնի ժամս գոյր նաեւ այս օրէնք Թիւրքական . զի յորում երկրի եւ գիւղի լինէր գողութի, զջիմինտարն նոյն երկրին՝ պարտական էր հատուցանել, որով յայնմ ժամանակի ոչ գտանէր անդ բնաւ գող եւ աւազակ :

Արդ նաւապան ամսոյ յամիս պահանջէ 'ի ջիմինտարէն զհարկս, բայց ջիմինտարն ոչ կարէ ամսոյ յամիս յաղքատ գիւղականացն ժողովել, այլ սպասել մինչեւ ցբոլորել տարւոյն . յորում պտուղք եւ բերք երկրին հասունացեալ վաճառին . ուստի բռնադատի առնուլ յայլոց դրամս ծանր տոկոսեօք մինչեւ 18 առ հարիւրն առ 'ի վճարել նաւապետին : Ահա այս իսկ է պատճառ, զի ջիմինտարք չարաչար կողոպտեն եւ կեղեքեն զեղկելի գիւղականս՝ մինչ նաեւ զկահս եւ զերկարասիս տան նց զալղեմի անօթս, եւ յետ այնորիկ զորդիս նց, 'ի վաճառ արկանելով :

Ուստի գիւղականք նց, թէպէտ սակաւ ծախս առնեն 'ի պէտս հանդերձից եւ կերակրոց, սակայն եւ այնպէս հազիւ կարեն հատուցանել : Եւ այնչափ է աղքատուն եւ պահանջումն նց, մինչեւ բաց 'ի հարկաց եւ 'ի կապալաց որ 'ի վր երկրին՝ պահանջեն մասնաւոր հարկս վս իւրաքանչիւր պտղատու ծառոց որ 'ի նմ : Յայն սակս սակաւ առապէն ընդիւ յագարակս եւ 'ի պարտէզս նց, զի թէ բազմացուցիցեն ծառս, առաւելուցուն զսակ հարկին :

Անգղիացիք յորժամ տիրեցին ծովեզերեայ սահմանացն, թէպէտ անխախտ կալան զայս կարգ, այլ բղմ իրք թեթեւացուցին զհարկսն 'ի սահմանս անքուն խուրեանից ։ Զի ոչ թողուն զիմընտարաց՝ յայլոց առնուլ դրամս ծանր տոկոսեօք, այլ յընկերութենէ խուրեանից չափաւորեալ շահու. ց՟, 8 առ հարիւրն ։

ԺԷ. Կրօն կմ՟ Դէնն Մողոլաց ։

Ի վր՟ կրօնի կմ՟ դենի սց՟՝ ք՟զի նոր է և անլուր առ մեզ, փոքր ինչ ընդարձակ կամիմք յայսմ վայրի խօսել ։ Արդ՝ 'ի համօրէն Տէրն Մողոլաց 'ի բնիկ Մողոլսն՝ երկու են գլխաւոր դենք. բայց յայլոց անտի՝ զոր ունին անդ օտարական ազինք ։ Առաջինն՝ է կռապաշտութ՟ և հեթանոսութ՟. իսկ երկր՟ն՝ դէն տաճկաց ։

Դէնն կռապաշտից՝ է գլխովին այլաբանական և բարոյական. որոյ սկիզբն գլխովին անծանօթ է և ինքեանց իսկ բնիկ Հնդկաց. այլ այժմ փոխեալ է յառասպելս ծաղրականս, և 'ի խարդախս տղայականս՝ յիմարականս, և 'ի սնոտիութիւնս պիղծս և անհեթեթս ։ Երիս գիրս սրբազանս ունին, յորս հիմնեալ է հաւատք սց՟, որք ուսուցանեն զհաւատոյսն ։ Զառաջինն՝ կոչեն Պետաս. որ սբ՟ գիրք համարեալ է առ նս՟. զոր սաստիկ նախանձայուզութ՟ պահեն պրամանք նց՟՝ ք՟ քահանայք կմ՟ քուրմք. զի մի՛ անկցի 'ի ձեռս այլազգենի ուրուք. զոր՝ թէպէտ և անկանէր, սակայն ոչ ոք կարէ ընթեռնուլ, զի գլխովին պէսպէս նշանագրովք է գրեալ ։ Զերկր՟ն կոչեն Վտամ կմ՟ Վետամ. որ է իբրև կանոնագիրք ամ՟ բնակչաց 'ի մէջ Հնդոսի և Գանգէսի. և պարունակէ զվարդապետութիւն Պրամա անուն ուրումն, զոր համարին Էակ գերագոյն ք՟ զմարդկեղէն բնութիւն, թարգման ածութ՟, և մեծ օրէնսդիր Հնդկաց ։ Այն գիրք հրամայէ հաւատալ զէակ մի գերագոյն արարիչ էակաց. յորոց ոմանք գերագոյն են ք՟ զմարդիկ. այլ և կարի ստորին ք՟ զնս՟. և հրամայէ հաւատալ զանմահութ՟ հոգւոյն, և զվարձս և զպատիժս հանդերձել՟ կենաց, և զհոգեփոխութիւն. այս է հիմն և գլխաւոր վրդպտութ՟ դենի նց՟, որ այժմ բաժանեալ է 'ի 83 աղանդս, որք միաբանին ընդ միմեանս 'ի գլխաւոր սկզբունս ինչ. բայց և 'ի վր՟ այլոց չունին ինչ հակառակութ՟ ։

Իսկ զերր՟դ գիրսն կոչեն Շամբշգրիթ, կմ՟ Սամբշագրիթ. որ է իբրև մեկնութիւն Վտամ անուանեալ գրոց, զոր անգղիացիք թարգմանեցին 'ի լեզու անգղիական ։ Յայն գիրս գրեալ կայ, թէ յաւիտենականն գոլով էակ իմացական, հայեցեալ յէնդն վճռեաց հաստել էակս 'ի հաղորդակցութեան փառաց իւրոց. ասաց՝ և իսկ և իսկ եղեն հրեշտակք, որք երգեցին զերգս օրհնութեան արարչին իւրեանց, և լցին զերկինս քաղցրանուագ երգով: Ապա երկու 'ի նոցանէ ապստամբեալ, ձգեցին զհետ իւրեանց զլեգէոն մի ողջոյն. և Աստուած դատապարտեաց զնոսա մտանել 'ի պէսպէս անարգ և 'ի չնչին կերպարանս հնգից մոլորակաց առ 'ի պատիժ՝ ըստ չափոյ մեծութեան յանցանացն: Եւ իւրաքանչիւրն 'ի նոցանէ պարտաւորեցաւ 87 անգամ շրջանս առնել յերկրի 'ի ձեռն հոգեփոխութեան, նախ քան զմտանել 'ի մարմին կովու՝ զոր գերագոյն համարին 'ի մէջ անասնոց. և ապա մտանէ 'ի մարմին մարդոյ. և անդ 'ի ձեռն բարի կամ չար գործոց՝ համառօտէ կամ յերկարաձգէ զժամ քաւութեան:

Արդարն 'ի մեռանելն՝ գնայ միանայ ընդ գերագոյն էակին. իսկ մեղաւորն սկսանի զժամ քաւութեան 'ի ձեռն հոգեփոխութեան. որ առ նոսա համարեալ է պատիժ մեղաց: Յայն վերայ սահմանին և պարտաւորութիւնք մարդկան՝ որք յերկրս ընդհանուր գլուխս վերածին. այս՝ 'ի սէր կամ յողորմութիւն, 'ի հրաժարումն 'ի մսոյ, և 'ի փոյթ զհետ երթալոյ հանդամանաց կենաց ծնողացն: Սահմանին անդէն և կերակուրք՝ որք թոյլ տուեալ են յայլևայլ կարգի մարդկան. զխնձորաց և այլոց ոմանց թողացուցանէ ուտել զմիս վայրի էրէոց և ոչխարի: Ոմանց մշակաց և արհեստաւորաց թոյլ տայ զձուկն: Իսկ այլոց՝ մանաւանդ քրմացն միայն կաթն և արմտիս:

Այս են գլխաւոր պատգամք դենի նոցա ըստ Նախայիշատակեալ գրոց. բայց ժողովուրդք՝ որպէս և քուրմք՝ պէսպէս օրինակաւ պատմեն զհաւատոյ իւրեանց: Ոմանք 'ի հմաստագունից ասեն հաւատալ 'ի մի Աստուած, որ է երրեակ ըստ զանազան գործողութեան և եթ, ըստ միաւորութեան անբէլի: Իսկ այլ բազմութիւնք աստուածոց իրապէս չեն աստուածք, այլ մարդիկ դիւցազունք՝ որք արժանի եղեն աստուածային անուան: Այլ ռամիկք ոչ գիտեն ինչ բաց 'ի քանի մի յերևելի աստուածոց, և 'ի կատարելոյ զարտաքին ծէսս, զարարողութիւնս, և ըզխորանս իւրեանց:

Երևելի և գլխաւոր աստուածք նոցա են՝ Ճընկըրնատ, որ է իշխան Ծի, և կառավար նորա. զորոյ զերկոսին ձեռսն հատեալ նկարեն: Սիվ՝ որ է հայր աշխարհի: Դուրկա, կամ Դուրկէն, զոր տասն ձեռամբ նկարեն, որ է ասեն մայր Ծի, և կին սիվ աստուածոյն

Կալի՝ զոր նկարեն չորեքումբք ձեռամբք , որ է Լկշ̄ կին նորին սիրոյ ածոյն : Եւ այլ ունին բազում որդիս , որոց գլխաւորն կոչի Գըշնու , որոյ գլուխն է փղի : Այս ածք են հն̃դկ երկրին մոլորելոց · այլ բաց ՚ի սոցանէ ՚ի վ̄ր ամ̄ նիւթական իրաց՝ կարգեն մի մի ածս · զ̃օ օրիզոյ , ցորենոյ , ոսկւոյ , են : Եւ ևս բաց յայսց անբաւ բազմութե̃ մարդկեղէն ածոց՝ պաշտեն և զանասունս ինչ , և զնիւթական տարերս , և զբոյսս , զհանքս , և զերկու տեսակս վայրաւոր ծառոց · և զայլ ամ̄ ինչ , յորոց բարու̃ ինչ ը̃ունել համարին ՚ի վ̄ր երկրի · և յորում գեղեցկութի̃ ինչ տեսանեն , զորոց զթիւ ոմանք ՚ի քրմաց նց̄ հասուցանեն մինչև ցվաթսուն հազար : Բայց նախապատիւ ք̃ զամ̄ ունին զլուսաւորս երկնից · ապա զմահացեալ մարդիկ · իսկ յանասնոց պաշտեն զփիղ , զսիրամարգ են · իբր զի ածք նց̄ ՚ի վ̄ր նց̄ հեծանէին՝ մինչդեռ էին յերկրի · ոմն ՚ի վ̄ր այս ինչ կենդանւոյ , և ոմն ՚ի վ̄ր այլոյ · և զկովն՝ զի մայր է ասեն հասարակաց , որ կերակրէ կաթամբք զամ̄ս և ՚ի վ̄ր նր̄ նստէր սիրոյ չածն նց̄ : Այլ զհաւն անարգ համարին յոյժ , ասկս անխտիր ուտելոյ զամ̄ , ը̃ որս և զցեռունս՝ զորս պաշտեն նք̄ · վ̃յ կամեցեալ սաստիկ նախատել զոք , ասեն անիծանելով * Կերիցես զմիս հաւու || :

Մեհեանք նց̄ գմբեթաւոր են միով գմբեթիւ՝ չունելով բնաւ պատուհանս · այլ մի միայն դուռն փոքրիկ՝ զոր միշտ ը̃ արեւելս շինեն · և ՚ի հանդիպոյ դրան ՚ի ձախակատ անդր մեհենին սեղան · և ՚ի վ̄ր նորին դրօշեն : Զև մեհենից կէս կռատանց պէսպէս են , ոմ̄ և շինուած նց̄ · են որք քառակուսի են և գռեհկաշէն · և են որք խաչաձև և մեծակառոյց , ներքուստ և արտաքուստ զարդարեն բազմագին զարդու · ունելով զկատարն ՚ի միջին տեղւոջ · ոմ̃ ըլ̃ և սարխու կոչեցեալ ցեղ ինչ , որոց չէ օրէն մտանել ՚ի ներքս , արտաքուստ ը̃ դուռն կարասցեն տեսանել զնա : Են ՚ի նս մեծամեծ աւազանք ջրոյ՝ կարգեալք առ ՚ի լուացումն · զոր ամ̄ պղծութեց և չարագործութեց քաւութ̃ համարին ·

՚Ի ցամաքակղզին որ յայսկոյս Գանգիսի , կմ̄ ՚ի տաքան մեծ Յի , գոյ անուանի մեհեան ՚ի ներքուստ ունելով շուրջանակի մեծամեծ սիւնս քարեղէնս կապեալս առ միմեանս քարեղէն շղթայիւք · և պատմի թէ այն ամ̄ սիւնք և շղթայք , սքանչելի արուեստիւ և անհնարին աշխատութեամբ կոփեալ են ՚ի մի միաձոյլ ժայռ.

ժայռէ: Դոյ և այլ ուրեք մեհեան Ջընկըռնաթ կոչեցեալն, որ է երևելի ուխտատեղին նոցա, ծովեզերեայ ՚ի վերայ բլրոյ. ուր չէ օրէն այլ ազգ երթալ յուխտ, յամենայն սահմանաց որչափ և հեռի իցէ, բայց եթէ ծնգօք. մինչ ըստ մի հազիւ ՚ի միում ամի կարեն վճարել զայն տաժանաւոր ուխտագնացութի, անցեալ ընդ լերինս, և ընդ ձորս, և ընդ առապարս: Ոմանք ՚ի նմանապատիկ ուխտաւորացն հասեալ ընդ երեկս ՚ի գետոյ ուրեմն, ոչ առ ժամայն իջեանէին անդ, այլ յառաջ խաղան զճանապարհ իւրեանց ընդ ժամս ինչ. և իբրև հասանեն ՚ի նշանաւոր տեղի ինչ, նշան դնեն անդ. և քայլելով դառնան անդրէն ՚ի գետոյն հանգիստ առնուլ: Իսկ ընդ առաւօտն զայնչափ ճանապարհ, զոր ծնգօք արարին, քայլելով գնան մինչև ՚ի նշանակէտն. և անտի անդրէն սկսանին զծնրադրական ճանապարհորդութիւնն իւրեանց: Առ նովին մեհենաւ՝ գոյ լճակ մի մեծ՝ Լիճ քաւութեան ամենայն մեղաց համարեալ ՚ի նոցէ. ուր ամենայն ուխտաւորք մտանեն. և յետ մտանելոյ և լուանալոյ նովին ջրովն, զանազան ցեղք՝ որք յառաջն խորշէին ՚ի միմեանց, այնուհետև անխտիր և համարձակ կենակցին ընդ միմեանս:

՚ի ժամու պաշտաման իւրեանց՝ վառեն ճրագս և մոմեղէնս, արկանեն խունկս առաջի դրօշելոյն, և կանայք ոմանք սպասաւորք չոյն կաքաւեն առաջի նորա: Քուրմք որ պաշտեն ՚ի մեհեանս՝ զդարման կենաց ունին ՚ի կաշառաց անտի իւրաքանչիւր մեհենից. իսկ այլք ողորմութեամբ կամ արուեստիւ հայթհայթեն զառօրեական պէտս իւրեանց. զի չէ արգելեալ նոցա գործել արուեստս: Ունին ամի ամի տօնս երևելիս, յորս գլխաւորն և առաւել երևելին է տօնն Ջընկըռնաթ չոյն: Արձանեայ պատկերն միշտ ՚ի մեհեանս նոցա եդեալ կայ ՚ի մեծաշէն գահոյս, որ է շինուած գմբեթայարկ շուրջանակի զարդարեալ ակամբք. ուր յիւրաքանչիւր սիւնսն փորագրեալ կան պատկերք զանազան դից: Յառաջ քան զօր տօնին, տարեալ զարձանն ՚ի գանգէս կամ յայլ գետ լուանան ջրով. և ապա հանդերձ զարդուք եդեալ ՚ի կառս, զոր ձգեն բազմութիւն քրմաց հարիւր յիսնից, և երբեմն երկերիւրոց, առ ուրս ինչ շրջեցուցանեն ընդ փողոցս մեծաւ հանդիսիւ թմբկօք և սրնգօք և բազմութեամբ խաղանգանձից. և երբեք երբեք արկանեն մանկունս ընդ անուովք կառաց նորա ՚ի զոհ. և ՚ի տեղիս տեղիս յանկարծ զկայ առնուն ասելով, թէ ինքնին կառքն կասեաւ անշարժ. յայն ժամ զենուն անասունս 'ի պոհ նմ՝ ոմն զի հաճեսցէ շարժիլ։

Երեւելի է և տօն դուրկս ա՟ծուհւոյն. զի 'ի մերձենալ տօնի ն՟ր յոյժագոյն խաբեբայ քուրմք նորա, ազդ առնեն մեծամեծաց որոց և կամին, թէ ա՟ծուհին բեզ հրամայէ յայսմ ամի չինել զարձան իւր, ուստի և ն՟ք ծախիւք իւրեանց տան չինել քրմաց 'ի կաւոյ փետոյն. զոր ներկեն 'ի պէսպէս գոյնս ձեւացուցանեն զդիւսս, և դնեն յապարանս իւրաքանչիւր մեծատան որ եւս չինել, 'ի զարդարել բարձրաւանդակ վայրի։ Ապա զաւուրս տասն անընդհատ պար առնեն քրմաց զնոքօք՝ կատարեն զպաշտամունս երգօք և աղօթիւք զտիւ և զգիշեր. բազմութ՟ի վառեալ մոմեղինաց և բուրմամբ ազգի ազգի խնկոց անուշից. և մի ոմն 'ի քրմաց ունելով 'ի ձեռին թաւամազ ագի կովու հովահարէ նովաւ անդադար զարձանն առ 'ի պատիւ, միանգամայն 'ի վանել ըզճանճս։ Ընդ այն աւուրս պաշտօնատեարք ա՟ծուհւոյն առաքեն 'ի պարգեւ խնկանոցս և այլ պէսպէս ոսկի և արծաթի անօթս, և ազգի ազգի քաղցրեղէնս և խորտիկս. յայս սակս պատրաստեալ կան երկու սեղանք. մի՝ 'ի բարձրաւանդակի անդ յանդիման արձանին, ուր դնին առաջի ընծայք և քաղցրեղէնք 'ի պէտս քրմաց. զի զպարգեւսն ն՟ք սեպհականեն, և զքաղցրեղէնսն ուտեն. և մասն ինչ առաքեն և իւրեանց բարեկամաց իբր նուէրս իմն և սրբազան։ Իսկ զերկրորդ սեղանն պատրաստէ տանուտէր տանն 'ի ստորին կողմն՝ լի զնոյն խորտկօք և քաղցրեղէնօք վ՟ս հ՟րկ ժողովրդեան։

Յետ տասնօրեայ պաշտամանն բարձեալ քրմաց 'ի վ՟ր ուսոց իւրեանց զարձանն, հանեն թափօրիւ յիւրաքանչիւր տանց, և մեծաւ հանդիսիւ երգօք թմբկօք և ծնծղայիւք պարելով, և կաքաւելով ոմանց առաջի ն՟ր, տանին 'ի գետն Դանդէս, կ՟մ յայլ ինչ մերձակայ գետ. զհետ երթալով բազմութ՟ն ժողովրդեան բաց 'ի տանուտեարց։ Իսկ անդ է տեսանել առ գետովն տեսարան զուարճալի յեւանել 'ի փողոցս այլեւայլ բազմամբոխ խմբից, որք բարձեալ բերեն յապարանից մեծատանց զկաւակերտ գունագեղ արձանս 'ի գետ. ուր 'ի պատրաստի կան նաւակք գեղեցկաձեւք զարդարեալք ըստ իւրեանց օրինի. յորս եդեալ զարձանսն, դնեն սպասաւորքն և երգեն ընդ նոսին այլանդակ շարժմամբք. ապա յանկարծ թիւն իւրեանց յեմարեալք, մեծագոյն աղաղակաւ և շառաչմամբ.

մամբ արագ արագ հարկանեն խորտակեն զկուռսն, և փշրեն ընկենուն 'ի գետն. զվերջին զարժանաւոր պատիժ տալով չոյն իւրեանց: Յաւուրս տօնի այսր չքնաղուհւոյն՝ Թէպէտ չէ օրէն ն՟ց պարապել յառևտուրս, սակայն գուն գործեն գէթ փոքր ինչ առնել, և շահել ինչ. զի համարին ունել այնուիկ առատութ̄ և յաջողութ̄ յառևտուրս իւրեանց ը̄ ամն ողջոյն. ուստի և զգրամս շահելոյս յայն աւուրս, ներկեալ տանին դնեն առաջի արձանաց և պաշտեն. նաև զդուրս համբարանոցի վաճառաց իւրեանց, մինչև նաև զկշռորդսն և զվէմս ներկեն աղօթաձև իմն պաղաջելով առ 'ի տալ յաջողութ̄ շահաստանութ̄:
Ունին և տօն ինչ մեռում 'ի չքնոց, յորում աւուր որթ գոմշոյ զոհ մատուցանեն, բայց վ՟ այնր զոհէ սահմանեալ է զի միով հարմամբ հատցի գլուխ որթոյն, ապա թէ ոչ իբրև պիղծ 'ի բաց ընկենուն զայն, և զայլ որթ մատուցանեն 'ի զենումն:

Այսպէս օրէնք համօրէն յածի զարտաքին խորանիւ. զի ոչ համարին այլով իմիք զօգուտ հոգւոց իւրեանց ստանալ, բայց եթէ պահելով զարտաքին խորանս որ անհամար է. և զորս ճշդիւ պահեն նախանձաւորք ն՟ց. ուսեալք 'ի հարց, և խրատեալք 'ի քրմաց. իսկ 'ի ներքին առաքինութ̄ և 'ի սրբութ̄ անմասն են ամենևին, զոր թէ բնաւ անգամ քարոզեսցէ ոք ն՟ց, ոչ երբէք 'ի միտ առնուն. գոլով ընկղմեալ 'ի մարմին՝ հանգոյն անասնոց անբանից, և լցեալ ամ զարշութ̄: Վ՟յ դժուարին է և գրեթէ անհնարին դարձուցանել զն՟ս 'ի ճշմարիտ հաւատս. ո՟պ բ՟զմք բ՟զմ անգամ զփորձ առին: Մանաւանդ զի զամ կրօնս և զաղանդս ուղիղ համարելով, հաստատեալ ունին 'ի միտ թէ իւրաքանչիւր յինչ կրօն և իցէ ծնեալ, նովաւ հասանէ իւրում վախճանի: Ուստի ոմն 'ի վարդապետաց՝ որ քաջ ուսեալ էր զլեզու նոցա, իբրև յաւուր միում առաջի բազմամբոխ ժողովրդեան՝ քարոզեաց ն՟ց զճշմարիտ հաւատս, սկսեալ յարարչութ̄ Ա՟ծ մինչև ցմահն ք՟ի, թէ զիարդ այն ամենակարող ած, որ զամ տիեզերս արար, եկեալ վ՟ մեր խաչեցաւ և մեռաւ, յարատուս հարան, որով յուսայր ամէն ն՟ց դառնալ 'ի ճշմարիտ հաւատս քրիստոնէութ̄: Բայց յետ աւարտելոյ զբանս իւր, ն՟ք ևս մատուցեալ առ նա, պատմել սկսան զվարս զնոցին ածոց իւրեանց. թէ զիարդ այս ոք և այն ոք ած իւրեանց՝ զինչ և դժնդակ չարչարանս կրեաց յ՟ծի: Եւ 'ի զայրանալն մ՟ր, ն՟ք զարմացեալ ասեն. 'ի պատմելն զվարս ած քո, մեք ուժինդիր եղեն 'ի յոյզս և յարտասուս շարժեցաք . իսկ դու Տէ՛ր բարկանաս 'ի պատմելն զվարս ածոց մերոց :

Համօրէն ժողովուրդ հնդկաց բաժանեալ է 'ի չորս դասս . որք են Պրամանք, ու քուրմք . Զինուորք . Մշակք կամ հողագործք . և Արհեստաւորք : Եւ ս՟ք դարձեալ բաժանին յայլևայլ դասս : Այս անհաւասուն դասակարգութի՟ հին է յոյժ . զորմէ չիք բնաւ ոչ աւանդութի՟, և ոչ յիշատակարան ինչ յորդ ծանուցեալ, թէ երբ, և յումմէ եղև . որ է հաւաստի ապացոյց հնութե՟ հնդկայնոց . զի այսպիսի անհաւասութի՟ ենթադրէ ըղհաստատեալ ընկերութի՟, և զվիճակ մարդկան զարգացելոց 'ի քաղաքականութե՟ :

Պրամանք՝ որք 'ի տամկաց կոչին պամանք՝ որք են քուրմք նց՟, ազնուականագոյն են ք՟ զա՟մ ցեղս, նաև ք՟ զցեղ թգ՟րին . բայց և 'ի նս՟ա գոն այլևայլ ցեղք մի ք՟ զմի առաւել վերագոյն : Պաշտօն սոցա յաջորդութբ՟ անցանէ յորդիս . որք 'ի նշան քրմութե՟ ունին կախեալ զպարանոցաւ ածեալ ը՟ անթուլս 'ի վ՟ր մերկ մարմնոյ՝ եօթն ապանիս, որով որոշին յամենցունց . ունին և բառս ինչ անծանօթս այլոց . զորս կամեցեալ հաւաստել, թէ այս որ լսէ քուրմ, և ոչ կեղծեօք կախեալ ունիցի զպարանոցէն զայն լար ապանեացն՝ ասեն 'նմ՟ զբառսն . զոր թէ գիտիցէ, իմանան թէ 'ի ճշմարիտ քրմաց անուի է . զի այլք բաց 'ի նց՟է ոչ երբէք կարեն ուսանել, իբր զի անդադար փոփոխեն զբառսն զայնոսիկ :

Զպամանս կամ զքուրմս սպանանել չէ օրէն . և մի 'ի մեծագոյն և յաններելի մեղաց է համարեալ այն առ նս՟ա : Կարօղ են զա՟մ ազնուական արուեստս 'ի գործ ածել, և ելանել յզին՟ական և 'ի քաղաքական իշխանութիւն : Ոմանք 'ի սոցանէ բնակեն 'ի մէջ մարդկան՝ պաշտօնեայք գոլով մեհենից . և ս՟ք գրեթէ առհ՟րկ լի են պղծութ՟բ և ա՟մ չարագործութ՟բ, զոր համարձակ գործեն, առընթեր ունելով զԳանգէս և զայլ գետս՝ յորս 'ի լուանալն, համարին սրբիլ յա՟մ պղծութեանց . չունին ոչ սրբակեցութի՟, ոչ համեստութի՟, ոչ բարեխառնութի՟, և ոչ բնաւ լաւութի՟ ինչ . բայց միայն ըստնական կարեկցութի՟ ինչ՝ որ հասարակ է հնդկայնոց : Իսկ այլք զատուցեալ յընկերակցութենէ մարդկան՝ վարեն առանձինն կեանս գազանականս . և են որք դատարկասունք, և մոլեդինք . միանձնեայք յորս դատարկութե՟, աւելորդապաշտութի՟, և խելաժէտ ցնորից . առնեն 'ի կեր արկանելով 'ի ցնորս իւրեանց մեթաֆիզիգական անուանս ինչ վերացեալս. զոր գոյացութիւն, պատահումն, յառաջնութիւն և յետնութիւն, անփոփոխականութիւն, անբաժանելութիւն. հոգւոյ իմացական և զգայական են: Այլ առհասարակ խաբեբայ են և նենգաւոր. որք խորամանկութեամբ իւրեանց գերեալ ունին զժողովուրդն. զոր ինչ կամին առնեն. և զոր ինչ կամին խնդրեն 'ի ժողովրդենէ. մինչև և զկանայս նոցա, պատճառելով թէ այս ինչ աստուած խնդրէ զկին քո 'ի ծառայութիւն իւր. իսկ ռամիկ ժողովուրդն խղճելով, կատարեն զհաճոյս նոցա:

Պատմի ևս թէ նախ քան զգալուստ Լանկթամուրայ. եղեալ էին 'ի տեղւոջ ուրեք բոլորակաձև երկաթ ինչ սրեալ իբրև զսուսեր. և քարոզէին ամենայն՝ թէ որ ոք մատուսցէ զպարանոց իւր յայն երկաթ, և զոմ ինչ զլուխ թողուցու անդէն, իսկ և իսկ նոյն խառնի 'ի դասս աստուածոց. ուր ասի թէ անբաւ բազմութիւն մարդկան զենեալ, զորոց զպարանոց հարկանէին ինքեանք պրամանքն 'ի վերայ այնր. և զինչս նոցա ինքեանք սեփականէին, այլ Լանկթամուր խորտակեաց զայն երկաթ:

Զինուորք, կամ դունդ զինուորական դասու, են Ռոյաք ընակիչք ծովեզերեայց Գորոմանտելայ. և Նայրք՝ որք 'ի ծովեզերեայս Մալապարայ. են և այլուր այլ ազգին ժողովուրդք՝ որոց անխտիր թոյլ տուեալ է այս կարգ զինուորական, որպիսի են Կանօրինեանք և Մարաթայք:

Աշակք կամ հողագործք՝ բազմաթիւ են քան զայլս, և 'ի յարգի յոյժ առ նոսա վասն պիտանութեան և օգտութեան իւրեանց առ ընկերութիւն մարդկան:

Իսկ դասն արհեստաւորաց յայնչափ ցեղս բաժանի, որչափ են արհեստք. և այնչափ ազնուականագոյն կամ ստորին և անարգ են համարեալ, որչափ ազնիւ կամ անարգ են արուեստք նոցա. քանզի և յարուեստս դնեն զզօրաշումն և զպանազանութիւն: Անարգագոյնք յարուեստս՝ են կօշկակարք. քանզի հերձուն զմորթ կովու, նաև ոսկեգործք, և այլք՝ որք կռանաւ հարկանեն զոսկի և զայլ հանքս, զորս պաշտեն. սակայն ինքեանք ոչ խղճեն գործել սալ նոցա: Ոչ ոք ընաւ կարող է թողուլ զարհեստ հօր իւրոյ, և մտանել յայլ. յայն սակս ոչ ոք կարէ 'ի ստորին աստիճանէ ելանել յազնուութիւն եթէ ոչ նշանաւոր ինչ շնորհիւ. նաև վասն սորին պատճառի յայնչափ դարուց հասեալ բազում արհեստք չեն այնչափ ինչ ծաղկեալ առ նոսա, որչափ արժան էր:

Բաց 'ի չորից դասուց աստի են այլ ևս երկու, զորս մարթ է կոչել դիրաս ազգաց · իբր զի են մերժե՟լք և որոշե՟լք յայլոց դասուց, սակս օրինազանցութ՟ն և պղծութ՟ն, և կոչին Բարիասք · որոց գործ է թաղել զմեռե՟լս տաճիկ մուսլմանաց, մաքրել զաղբանոցս, աւել ածել փողոցաց, և զայլ սոցին նման անարգ գործս առնել, զի այլ ամ՟ արհեստք արգելե՟լ են նց՟ : Ոչ պահեն զխտրանս, ուտեն զմիս սատակե՟լ անասնոց, և զայլ ամ՟ արգելե՟լ կերակուրս՝ բաց 'ի մսոյ կովու · վ՟յ այնչափ զզուելի և խորշելի են՝ մինչ եթէ ոք 'ի ն՟ցէ հուպ լիցի ումեք յայլոց ցեղից կ՟մ դասուց, կարօղ է նա անդէն վաղվաղակի սպանանել զնա :

Իսկ եկ՟դ ցեղն կոչի Բոլեքիս · ս՟ք գտանին 'ի Մալապար, կերպարանօք և եթ նմանե՟լ մարդկան, այլ ինքեանք գլխովին են իբրև անասունս : Բնակութ՟ի նց՟ է յանտառս · ուր առ անմտութ՟ն ոչ գիտեն շինել ինքեանց խրճիթս, այլ ըս՟ թռչնոց գնեն բոյնս 'ի վ՟ր ծառոց, և 'ի քաղցնուլն՝ գոչեն իբրև զանասունս, առ 'ի գութ շարժել զանցաւորս, որք և գթացե՟լ նց՟՝ դնեն փոքր մի որիզ, կ՟մ այլ ինչ կերակուր ը՟ ծառովն, և վաղվաղակի խոյս տան անտի · զի և մատիլ իսկ այնպիսի անասնաբարոյ մարդկան՝ պղծութ՟ն համարին անձանց : Գոյ և այլ ցեղ ինչ սփռե՟լ ը՟ ամ՟ Տ՟ն մուղալաց, որք կոչին Պանեանք, յորոց են լումայափոխք, այն է Սառաֆք այնր Տ՟ի, և վաճառականք : Ս՟ք փարթամ և մեծատուն են յոյժ ք՟ զայլ ցեղս, որք աղանդիւք զանազանին յայլոց՝ առաւել թոյլ գոլով ք՟ զն՟ս · զի ս՟ք ճնպ՟հորդեն և ը՟ ծով, որ արգելե՟լ է ամ՟ն յօրինաց նց՟ :

Բաց 'ի ցեղից աստի, որք որոշե՟լ են 'ի միմեանց ըս՟ սահմանադրութ՟ն դենի իւրեանց, են և այլք 'ի Հնդիկս անուանե՟լ Ֆախիրք, որք են իբրև ազգ մի վանականաց՝ մեծապէս պատուեալք 'ի հնդկաց : Յայս ժողով կարեն մտանել յամ՟ ցեղից · միայն թէ յանձն առցեն տալ զանձինս ըս՟ օրինակի պայմանաց 'ի [illegible] խոկմունս, կ՟մ լաւ ևս ասել ցնորս, և 'ի զարհուրելի ճգունս մարմնոյ · զորս մարթ է ասել ժողով մոլեգնելոց · յորոց ոմանք վ՟ն ճգնութ՟ն զօրէն խոզից թաւալին 'ի տիղմս · ոմանք դատապարտեն զանձինս յամ՟ կեանս վերամբարձ ունել զբազուկս մինչև իսպառ գօսանալ : Այլք աւուրս ևթն՝ և առաւել ուղիղ յոտն կան անշարժ ամենևին · մինչև ջրաջար այտնուլ սրունից նոցա : Իւ-

եվքն

ամ՟քն ուխտեն ոչ երբեք լուանալ զերեսս. և ոչ սանտրել զհերս, և այլ ազգի ազգի օրինակաւ խանգարեն և աղճատեն զլինուն առ 'ի հաճոյանալ կռոց իւրեանց, և փառաւորել 'ի ժողովրդենէ։

Ամ՟ ցեղք, որք յաջորդական սերնդեամբ յա՟ջ գան՝ խորշին մեծապէս, ոչ միայն յօտար ազգաց այլև 'ի միմեանց. ոչ ամուսնանան ընաւ ցեղ ը՟ ցեղի, ոչ բնակեն 'ի տունս միմեանց, ոչ խնդրեն ջուր 'ի նց՟է յարբումն՝ ևս և 'ի ստիպել մահուչափ ծարաւոյ. ոչ ուտեն 'ի միասին, և ոչ առանձինն 'ի տունս այլոց ուտեն եփեալ ինչ, բայց եթէ զպտուղս զորս ընդ ինքեանս բարձեալ ունին։ Վ՟յ յորժամ երթան 'ի տունս այլոց ցեղից, կ՟մ օտարական ազգաց, ո՟ր հայոց կ՟մ անգղիացւոց, տանուտեարք ոչ կարեն հանել առաջի նց՟ այլ ինչ, բայց միայն բան տերև, զորմէ գրեցաք 'ի վեր անդր 'ի վ՟ր արծաթի սկուտեղ և վարգաւէշ, կ՟մ իւղ վարդի. յորմէ առեն սակաւ ինչ օծանին։ Յուտելն ն՟ց 'ի տեղւոջ ուրեք որոշեալ վ՟ր անձանց, եթէ մերձեսցի կ՟մ կոխեսցէ ոք յանկարծ անդ՝ զկերակուրն զոր տակաւին 'ի բերանի ծամեն, իսկ և իսկ արտաքս ձգեն. և երթան լողան 'ի գանգէս, կ՟մ յայլ գետ 'ի մաքրել։ Բաց 'ի յայսց զանազան յոգնատաժան արտաքին խորանաց, ունին բզ՟մ նորամուտ սովորութիւնս խորանս և օրէնս 'ի պաշտամունս կռոց, 'ի կերակուրս, յապաշխարութիւնս, 'ի հարսանիս, և 'ի յուղարկաւորութիւնս մեռելոց, զորս պահեն ամ՟քին. բաց 'ի ցեղից ինչ, յորս գոյ զանազանութիւն յիւրս կրօնի. և բաց 'ի թուլացելոցն, և յանձնծեց որք ոչինչ պահեն։

Յամ՟ առաւօտու կուապաշտ ժողովուրդ՝ արք և կանայք, ծերք և մանկունք, երթան և լուանան 'ի գետս. և առնուն ջուր մատամբ սրսկելով աստ և անդ ազգի ազգի ձևով. զի ջրով համարին սրբիլ. զի 'ի տարերս զջուրն առաւելապէս պաշտեն՝ մ՟նդ զԳանգէս. ուր ամի ամի գնան յուխտ և լողան, հանդէս մեծ կատարելով անդէն. բզ՟մ անգամ արկանեն 'ի գետս շաքար, որիզ, և այլ կերակուր։ Վ՟յ ջրհորք նց՟ ը՟ մեծի մասին են առ դրամբք 'ի դիւրութիւն. այլ մեծատունք ունին և 'ի տունս իւրեանց տեղի մասնաւոր 'ի պէտս լուանալոյ։ Յետ լուանալոյ երթան և 'ի ծունկս անկանին առաջի քրմաց՝ որք կան առ ափն գետոյ, իւրաքանչիւր առ իւր քուրմն. որք և ունին զանազան ներկս. և ներկեն նոքօք զերեսս մ՟նդ զճակատ նոցա, ոմանց 'ի գոյն

կար

կարմիր, և ոմանց՝ դեղին են, այլ և այլ ձևովք: Այն գունաւոր նիշք՝ են նշանակք գործոց ինչ չքծոց իւրեանց, որ կայ գրեալ 'ի գիրս ինչ նոցա. ուստի իւրաքանչիւր ոք առ որ 'ի չքծոցն առաւելապէս փութեռանդն է՝ զնորին նիշն նկարէ քուրմն 'ի նմ: Ապա տուեալ քրմին յընծայ փոքր մի որիզ, կմ այլ ինչ, գնան 'ի տունս իւրեանց աղօթս առնել առաջի դրոշելոց՝ զոր ունին 'ի տան, իբրև ժամ մի կմ երկուս. և ապա այնպէս գունագեղեալ երեսօք երթան 'ի գործս իւրեանց և շրջին ը̅ քղքն՝ մինչ 'ի վաղուեան օրն. բայց զայս սովորութիւն 'ի տեղիս տեղիս ոչ պահեն ծոյլն ամքին: Նոյնպէս և քուրմք նց մէջ ներկեալ ունին զերեսս զանազան ձևովք. և մերթ ընդ մերթ նստեալ առ գետափն 'ի ձեռին առեալ սխտակ ինչ ընթեռնուն և քարոզեն ժողովրդեան, երբեմն ողբաձայն և երբեմն սաստկաձայն, շարժելով զգլուխ և զաչս իբրև խելագար :

Մեծամեծք ունին 'ի տունս քուրմս, զոմանս առ 'ի պաշտօն տանիլ առ անին կռոց իւրեանց, զորս յերեկոյի ընկողմնեցուցանեն 'ի վարագուրաձևս դահոյս. իսկ յառաւօտուն հանեալ լուանան, և նկարեալ 'ի նմ զանազան ձևս, դարձեալ կանգնեն 'ի տեղւոջն՝ զոհս մատուցեալ առաջի նց: Իւ զոմանս 'ի խաշարուն կերակրոց. քզի նաև 'ի հնրկ ժողովրդեան զկերակուրն միշտ պատշաճականագոյն անձն եփէ. որ հայրն. և եթէ նա ոչ գտցի, երեց եղբայրն. ապա եթէ սա ևս պակասեսցի, այլ ոմն յերիցագունից տանն. և բաշխէ ամն 'ի տան եղելոց, որոց առեալ զբաժինս իւրեանց, ուտեն 'ի նմին սենեկի՝ հեռի 'ի միմեանց՝ առանձինն և ոչ 'ի միում սեղանի: Նոյնպէս և 'ի Չնմչհորդեցին ուրեք բազմուէ, յորժամ ոչ գտցի անդ քուրմ, կմ այլ ոք յերիցագունից, նա եփէ զկերակուր նց՝ որ պատշաճականագոյն է ցեղին. իսկ յորժամ միայն է, յայնժամ ուր և իցէ, ինքնին եփէ զկերակուր վն իւր :

Ի նիւթս կերակրոց են ցեղք ինչ որք խստագոյն են քան զայլս. և ոչ ուտեն բնաւ զմիս, զձուկն, զձու, և զպանիր, և ոչ ըմպեն զգինի կմ օղի. այլ միայն զորիզ, զարմտիս, զկաթն, զկոտի, զբանջարեղէնս, և ըմպեն զաւելիչկ նարկիլ ծառոյն, զորմէ գրեցաք վերագոյն: Իսկ այլք ուտեն և ըմպեն զամ՝ բայց 'ի մսոյ կովու. զի այս արգելեալ է ամց: 'Ի Չնմչհարգելցն ը̅ գեաւ՝ ոչ եփեն կերակուր 'ի նաւակի, առ 'ի զգուշութե օրինաց իւրեանց ամ Թուէք.

զի ոչ կարեն անդ համարձակ զիւր խորանս պահել ըստ իւրեանց օրինաց, մանաւանդ եթէ օտարազգի ոք գայցէ 'ի նաւակն անդ, սակս վտանգին մերձենալոյ նր 'ի կերակուրն: Այլ ելեալ 'ի նաւակէն 'ի ցամաք և զչափաւոր իմն տեղի թացեալ ջրով գետոյն՝ և սրբեալ, անդ եփեն և ուտեն: Իսկ թէ յանկարծ մերձեսցէ ոք 'ի տեղին, պղծի ոչ միայն կերակուրն, այլև սպասք. վասն զկերակուրն 'ի բաց հեղուն. ընկաւեղէն անօթս խորտակեն. իսկ զպղնձիս լուանան նաև ջրով, զի սրբեսցին 'ի պղծութենէ: Բայց զայս ամենայն և զայլ խորանս ինչ, ոմանք ցեղք ոչ պահեն. որ բնակիցք մուլթան նահանգի՝ կոչեցեալ մուլթանի, որք մերձ են 'ի պարսկաստան, և հեռի 'ի խորին մէջ հնդկաց:

Ունին այլևսպէս օրինակս և ճգնութիւնս, զոր տանեն կամ վասն ուխտի, և կամ վասն ապաշխարութեան. որպէս զի կամ զերկոտին ոտս և զբազուկս գօսացուցանել վերամբարձ ունելով. որ պատմեցաք զֆախիր անուանեալ ճգնաւորաց. և զայս կամ առ ժամ մի, զոր ապա իւղովք կակղացուցեալ՝ դարձեալ ուղղացուցանեն, և կամ մինչև 'ի մահ իւրեանց այնպէս: Եւ ևս ունին մասնաւոր տօն միոյ 'ի գերագոյն չաստուծոց իւրեանց, զորմէ առասպելեն բազում չարչարանս կրեալ յօձէ. վասն որոյ բազումք, որք տուեալ պաշտօնեայք են՝ առ նմանակից լինելոյ նմ, աւուրբք ինչ յառաջ քան զտօնն, մխեն սուր 'ի բազուկս, կամ յայլ անդամս. և այնպէս շրջին 'ի փողոցս. ապա յաւուր տօնի նր, մատնեն զանձինս յայլ դժնդակագոյն տանջանս: Զի 'ի քաղաքս մանաւանդ յերևելիս, գրեթէ յամ թաղս՝ և 'ի գլխաւոր փողոցս, կառուցեալ կայ մեքենայ ինչ նման կշռորդի, այն է՝ թերազիի, կամ նման մեքենային՝ որով կշռեն փայտ 'ի կոստանդնուպօլիս. յորոյ 'ի մի ծայրն կախեալ կայ ձանկ երկաթի՝ զոր քուրմն անցուցանէ ընդ մորթ թիկնամիջաց նր. և երկոքեան պատեալ ընդ գիս ընդ ձանկն՝ զի մի առ ծանրութեն պատառեսցի մորթ թիկնամիջաց. իսկ 'ի միւս ծայրն նստին այլք առ 'ի լինել հաւասարակշիռ երկոցունց կողմանց: Ապա արագ արագ շրջաբերեն զայն թաթ, և ճգնաւորն առկախեալ յօդս, շարժէ զգլուխն զօրէն լուանոտից. տարածէ և ամփոփէ զբազուկս և զոտս որպէս առնեն լողակք 'ի ծովու. ունելով 'ի գլուխն խոյր երկայն, այն է քիւլահ. զորոյ զծայրից կախեալ կան բոժոժք. Երեսք նր առ հասարակ ներկեալ են սպիտակ. և 'ի վր սպիտակին զնշանս գունովք այլ և այլ ձև դրոշմեն, որով դիմանման այլանդակ լինին երևին: Այս տանջանք երբեմն տևէ իբրև քառորդ մի ժամու՝ մինչև կախեալն ինքնին ազդ առնէ դադարեցուցանել. յետ իջանելոյ նր՟, այլ ոք ելանէ ՚ի տեղի նր՟, և յետ նր՟՝ այլք անը՟հատ զօրն ողջոյն, ՚ի գնին կալով բազմութե՟ ժողովրդեան. որք միանգամայն ը՟ այս կարգ. ցնծութե՟ անցանեն, պարծանք մեծ համարելն անձանց և տանց իւրեանց՝ կրելով ՚ի մարմնի զնշան սպիացն:

Ունին և այլ մոլեգնական ապաշխարութիւնս՝ յորժամ գործեն ինչ՝ որք ը՟ իւրաժէտ խորանաց նց՟ մեծամեծ մեղք են համարեն: Զոր օրինակ եթէ ՚ի տան ուրուք յանկարծ վնաս ինչ դիպեսցի կովու. ոմ՟ եթէ ոտք նր՟ խորտակեսցի, կմ՟ գլխապտուտով լինի սատակեսցի. յայնժամ քուրմն դնէ սահմանուածն երբեմն ապաշխարանս, բառնանել ը՟ օրինակի կովու, շրջելով ՚ի փողոցս՝ մինչև ցամս եօթն՝ կմ՟ յաւէտ և նուազ: իսկ եթէ ոք գործեսցէ մեծագոյն մեղս. զո՟ եթէ նաւուս ճանապարհորդեսցէ այլուր, որ արգելեալ է նց՟ բաց ՚ի ցեղէ ինչ, և եթէ կերիցէ յեփեալ կերակրոց այլոց ազգաց, կմ՟ միս մինդ կովու. և կմ՟ գործեսցէ ինչ, որ է ընդդէմ մեծամեծ պատուիրանաց և ը՟հանուր օրինաց նոցա, տուհմակեցք և ազգականք նր՟ ջանան որչափ ինչ հնար է ՚ի ծածուկ պահել. իսկ եթէ յայտնեսցի, յայնժամ նոյն հետայն արտաքս հանեն ՚ի ցեղէ և ՚ի տանէ իւրմէ. զրկեն և ՚ի ժառանգութենէ, և ոչ իսկ բնաւ հուպ լինին նմ՟. ապա թէ ոչ և ինքեանք մերժին և արտաքսին յայլոց: Եթէ ոք յայսպիսի պղծելոց՝ իցէ աղքատ, խառնի յայն ցեղն՝ որ արտաքոյ է ամենին և անարգ ք՟ զամենին, զորոց ասացաք ՚ի վեր անդր: իսկ թէ իցէ մեծատուն և խնդրեսցէ սրբիլ և զծախս քաւութեն յանձն առնուլ, յայնժամ քուրմք առեալ ածեն զնա առաջի քրմապետին. և անդ գըլխովին մերկացուցեալ, պատեն զբովանդակ մարմնոյն՝ պատրոյգ մածեալ ը՟ քակոր կովու. և չորացուցեալ յարևու, սկսեն յոտից մինչև ցգագաթն: Ապա լուցանեն զծայրն ծագ պատրուգին, և առժամայն ծաւալեալ հրոյն՝ ՚ի գլխոյ մինչև ցներբանս ոտից, խանձատեղ զմարմինն բովանդակ. այլ եկելին ՚ի քաւութե՟ մեղաց իւրոց բանադատի առկայ: Յետ այնորիկ երթայ ՚ի գետն և լուանայ. ապա լուանայ և զոտս քրմապետին, և ՚ի ջրոյն առեալ արկանէ ՚ի վր՟ իւր և ըմպէ. հուսկ յետոյ քրմապետին տէին զտասն 'ի վ՟ր գլխոյ նո՟ր եդեալ, արժանի է յազատութե։ Եւ նա առաքէ ընծայս և նուէրս նմ՟, և այլոց քրմաց, և ջծոյ. ծախք զորս առնեն սակս այսր մաքրութե և քաւութե առաւել է ք՟ զտասն հզ՟ր ռուփիս։

Նոյնպէս եթէ տուն ուրուք պղծեսցի, մտանելով անդ 'ի մասնաւոր ինչ տեղիս տանն՝ հաւու՝ և կմ՟ մարդոյ յայլ ցեղէ, քանզի բաց 'ի հնդկաց սենեկէ, ուր օրէն է ում և իցէ մտանել, ունին մ՟նդ մեծատունք 'ի տան իւրեանց մասնաւոր կողմն կմ՟ սենեակ սեփական 'ի բնակութե իւրեանց, ուր եթէ մտցէ ոք յայլոց ցեղից՝ պղծի։ Յայնժամ 'ի յայտնիլն՝ դարձեալ զքակոր կովուն խառնեալ ը՟ ջուր, մածանեն նովաւ առ հ՟րկ զառաստաղս, զորմունս, և զյատակն, և զամ՟ ինչ, և լուանան. և ապա կարեն մտանել և բնակել 'ի նմ՟։

Սովորութ է առ հնդիկս 'ի տղայութե հասակի առնել զամուսնութի. յորոց բ՟զմք միակին են, այլ ոմանք յերևելի ցեղից կարող են ունել և բ՟զմ կանայս։ Կանայք յետ մահուարանց իւրեանց կմ՟ պարտին տալ զանձինս յայրումն, և կմ՟ մնալ 'ի ծառայութե պամմնաց և ղծոց. բայց այն հրակիզումն թողեալ է յազատ ընտրութե իւրաքանչիւրոց, առ որ քուրմք յորդորեն եւեթ, այլ ոչ բռնադատեն։ Ակայն եթէ կինն խոստանայցէ միանգամ տալ զանձն 'ի հուր, այնուհետև թէև դարձցի 'ի խոհից իւրոց՝ ոչ ներեն նմ՟, այլ բռնի ձգեն յայրումն։ Պատմեն՝ թէ յորժմ՟ հանդերձեալ է ոք 'ի կանանց անտի մտանել 'ի հուր, պաշտօնեայք գործոյն տան նմ՟ ըմպել զարբեցուցիչ ինչ ըմպելի՝ առ 'ի ցուցանել 'ի վերին երեսս զուարթութի և զյանդգնութի. իբր թէ խնդութ՟ մեռանի վ՟ առն իւրոյ։ Բայց եւրոպացիք 'ի սահմանս տէրութ՟ իւրեանց խափանեցին զայս անօրէն սովորութ. ուստի բ՟զմք 'ի հնդկաց որք սահմանակից են ը՟ բնիկ իշխանաց հնդկայնոց՝ անդ տանին և այրեն։

Նոյնպէս զդիակունս մեռելոց ոչ թաղեն ը՟ հողով, այլ այրեն. աղքատք հ՟րկ փայտիւ, իսկ բ՟զմք 'ի մեծատանցն Նօա ապանձը կոչեցեալ ծառով կմ՟ այլով պատուական փայտիւ. յոյր սակս ծախս մեծամեծս առնեն նք։ Իսկ յետին աղքատք որք ոչ կարեն նաև հ՟րկ փայտիւ այրել, 'ի գետ ընկենուն զմեռեալս։ Յորժամ հիւանդ ոք մերձենայ 'ի մահ, զգուշանան յոյժ, զի մի մեռցի 'ի տան. այլ ը՟ իմանալն զմերձենալ մահու՝ տանին առ ափն գանգէսի կմ այլ գետոց . և անդ քուրմն առեալ 'ի գետոյն ափով ջուր , սակաւ սակաւ արկանէ 'ի բերան խօթացելոյն . յորմէ ըմպեալ հեղձամղձուկ եղեալ 'ի ջրոյ՝ սատակին : Իսկ թէ դէպ լիցի , զի յետ միանգամ տանելոյ զոք յափն գետոյն՝ և արկանելոյ ջուր 'ի բերան , դարձեալ առողջասցի , ոչ դարձուցանեն այնուհետև 'ի տուն , և ոչ հուպ լինին 'ի նա բնաւ . այլ պղծեալ համարեն , և երբև անհաճոյ դից՝ թողուն անդէն զեղկելին առ գետափն : Ոմն երբեմն մեծազգի տիկնին մի , որ քզի ոչ մեռաւ յետ տանելոյ զնա 'ի տանէն , որդիք նր շինեցին նմ խրճիթ յեզր գետոյն , ուր բնակեցաւ եղկելի մայր նց զամս բզմս մինչև մեռաւ անդ . և որդիքն՝ յորժամ կամէին խօսել ը նմ , 'ի միւս կողմն գետոյն կայեալ 'ի հեռուստ , այնպէս խօսէին :

Իսկ դէն տաճիկ մողոլացն , է նոյն լոկ մահմետականն . այլ խառնեալ ընդ նմին խոտորմունք , թէպէտ ոչ ը հնդկաց : Քանզի թէպէտ 'ի կերակուրս այլոց մերձենան , և վն այլոց եփեն զի ըն մեծի մասին խոհարարք այլոց ազգաց՝ որք հայոց և անգղիացւոց են , 'ի սպէ են , սակայն եթէ ոք մերձենայ 'ի կերակուր ինչ , չուտեն , և չառնուն ինչ անտի . ուստի նոյն խոհարարք՝ նախ քն զատուցանել զկերակուրս տերանց իւրեանց , առնուն զբաժին իւրեանց 'ի կաթսայէ , և ապա տանեն : Ոչ առնեն աղօթս կմ նամազս , շատ համարին զպարապեալսն մոլլային վն իւրեանց : Շինեն մզկիթս յոլովս , մնդ մեծամեծ տիկնայք և դշխոյք նց . քզի գործ ողորմութե և օգուտ հոգւոց համարին . պատմի թէ 'ի մախսուտապատ քաղաքի եւեթ . որ է մայրաքղք նհնգին պանկալայ , իցեն 300 մզկիթք . բայց չիք բնաւ առ նս իմամք և փոյթ 'ի պահպանութի մզկիթաց . բաց են հնպզ դրունք նց :

ժէ . Բաժանումն Մողոլաց :

Նախ քն զառնուլն զայս մողոլ թաթարաց , որք տասցաք 'ի կառավարութե նց . ոչ էր մի տէրութի , այլ բաժանեալ էր 'ի զնին և յանհամար թգրութիւնս և 'ի ռամկայութիւնս : Յետ տիրելոյ մողոլաց , և յետ ընդարձակելոյ զնա ակբարայ և ովրանկզէպայ , քաջայաղթ ինքնակալաց , 'ի ծաղկեալ ժմկի անդ՝ յերիս մեծամեծ նհս բաժանեցին զայն մողոլք , որք կոչէին . Հնդոստան . Տէքան , կմ Տաքան . և Պանկալայ :

Հնդկաստան կմ Հինդուստան կոչէին զհիւսիսային կողմն աշխարհին: Տուքան կմ Տըքան զայն մասն՝ զոր աշխարհագիրք կոչեն ցամաքակղզի որ յայսկոյս Գանգեսի: Պանկալա՝ զնհնգս լինչ արևելեան կողման աշխարհին խուրճանց: Եւ զայս երիս աշխարհս բաժանէին դձլ 'ի Գ մեծամեծ նհնգս, զոր կոչեն Սուպայութի: Այլ բաց 'ի Գ սուպայութեց՝ էին այլ և բզմ փոքր տրութիք կմ ռաճայութիք, որոց իշխանք էին ոչ բնիկ մուղալք մահմետականք, որք կոչին սուպա նապապք, այլ բնիկ հնդիկ կռապաշտք, որք կոչին ռաճայք. որոց իւրաքանչիւր էին ազատ թագաւորք. և միայն հարկս հարկանէին նապապաց, կմ կուսակալաց նհնգաց: Սակայն այս Գ նհնգք և զանազան ռաճայութիք, ոչ մնացին միշտ նոյն, այլ անդադար փոփոխէին. մինչ՝ յետ տիրելոյ դահմասին: Երբեմն բզմ ռաճայութիք և սուպայութիք 'ի մի յօդէին, և երբեմն առաւել ևս բաժանէին. ըստ յաղթելոյ զօրաւոր ռաճայից և սուպա նապապաց. և այնպէս յանդադար խռովութի և 'ի պտրզմի կայր այն լայնածաւալ աշխարհն մուղալաց: Մերթ ևս 'ի զանազան սուպայութեց՝ հաւաքեալ տրանց որխիայից և աւազակաց, նոր ազգ, և նոր տրութ կացուցանէին. որք են մարաթայք: Եւ այժմ ևս յետ հաստատելոյ անդր եւրոպացւոց, անդադար փոփոխին նահանգք և իշխանութիք սուպայութեց և ռաճայութեց: Վսյ դժուարին է յոյժ որոշ և ամփոփ բաժանմամբ խօսիլ զայսր լայնածաւալ աշխարհէ. ուստի և իւրաքանչիւր աշխարհագիրք որք ընդարձակ խօսին զամենէ, զնոյն բաժանումն դնեն, և զնոյն անուանս տան նհնգաց և իշխանութեց նր. զորս այլ աշխարհագիրք և աշխարհացոյցք ոչ յիշատակեն:

Իսկ այժմեան աշխարհագիր՝ չփոթ և աղաւաղ կարգաւ բաժանէ զայս աշխարհ. Տես 'ի հատ. Ի. 'ի Թղթահամարն 91. տպագրութն որ 'ի Վենետիկ, 'ի չորս մասունս բաժանէ զաշխարհն. նախ՝ յառանձին տէրութի մողոլաց. երկ՝ 'ի ծովեզերեայս Մալապարայ. երրդ՝ 'ի ծովեզերկոյս Կորոմանտելայ. և չորրդ՝ 'ի թագաւորութի կմ 'ի տրութ Պանկալայ: Յառաջնումն աստ ունիմք խօսել զամ միջերկրեական նհնգաց հնդկաց աշխարհին: Իսկ յերկրորդումն՝ յերրորդումն և 'ի չորրորդումն՝ զամ կալուածոց եւրոպացւոց: Այս տորև 'ի սկսանիլն խօսել նախ առաջին զտէրութեն մողոլաց, թողեալ զայս առաջին բաժանումն իւր, նորա բաժանէ զհամայրէն աշխարհն, նախ՝ 'ի հիւսիսային մասն. երկ՝ յարևմտեան

յա

յորում խօսի և զմալաբարայ, զոր պարտ էր 'ի բաց հանել յառանձին տրութ՟է մողոլաց, և դնել յեկ՟ր գլուխ և 'ի կարգս կալուածոց եւրոպացւոց, ոչ 'ի վեր անդր յը՟հանուր բաժանման խոստացաւ: Եր՟դ՝ յարևելեան մասն, զոր յը՟հանուր բաժանման եւրում ոչ յիշէաք բնաւ. ուր խօսի և զտ՟րուէն պանկալայի, զորմէ պարտ էր խօսել 'ի չ՟րդումն. և ուր անջատէ զգորոմանտել 'ի գառնադիկ Տ՟էն, և ապա 'ի գառնադիկ խօսի նաև զնմ ծովեզերեայ ք՟ղքաց որք վերաբերին առ գորոմանտել: Չ՟րդ՝ բաժանէ 'ի միջերկրական նահանգս հնդկաց, կմ 'ի մողոլս առանձնակի. ուր չէ յայտ Թէ ը՟էր զայս միջերկրական նահանգս ևեԹ կոչէ առանձին և սեպհական Տ՟ մողոլաց, որովհետև և հիւսիսային նահանգք որք են՝ (ո՟պ և նա ինքն դնէ .) քիշմիր, քապուլ, լահոռ ևն, են այժմ ևս երկիր և Տ՟ սեփական մողոլաց, ուր ոչ տիրեն եւրոպացիք: Եւ այսպէս որ խոստացաւն 'ի մի միայն գլուխ՝ յառաջնումն ևեԹ խօսիլ զառանձին տրութ՟է մողոլաց, և յերկուս զկալուածոց եւրոպացւոց, յերկու գլուխս յառաջնումն և 'ի չ՟րդումն խօսի զմողոլաց, և յերկուսն ևեԹ զկալուածոց եւրոպացւոց. ուր խառնէ ևս զայլ Տ՟ս և ըննահանգս, որք սեփական են մողոլաց: Եւ որ զԹագաւորուԹէն պանկալայի պարտ էր ըստ խոստմանն խօսել 'ի չ՟րդումն՝ խօսի յեր՟դումն:

ԹողցուՔ զայլ չփոԹ կարգս ք՟ղքաց և գաւառաց, զորս 'ի չորեսին յայն գլուխսն դնէ. ք՟զի յեկ՟ր մասին որ է արևմտեանն, 'ի Է՟ Թիւն. 'ի ճառելն զծովեզերեայց մալապարայ, խօսի և զռաձայութէն կմ զտ՟րուէն մանկլօրայ, որ ոչ է 'ի նոյն ծովեզրն մալապարայ, այլ գանարայ, սահմանակից նմ. իբր զի տէ 'ի նոյն հտո. ԼԸ. 'ի Թղթահամարն 115. մեք կամիմք * ստորագրել յռ՟ջ ընԹանալով զնմ կալ-
« ուածս եւրոպացւոց, յարևմտեան ծովեզերեայս
« ցամաքակղզւոյն հնդկաց ||: Եւ սակայն զկնի մանկլօրայ անմիջապէս 'ի խօսելն զկոա ք՟ղքին, որ նոյնպէս է 'ի ծովեզերեայս գանարայ, բաժանէ զկոա ք՟ղք 'ի մալապարայ. և իբրև նոր գլուխ դնէ խորագիր. * Կալուածք եւրոպացւոց յայլ կողմանս
« արևմտեան ծովեզերեայց հնդկաց Տ՟ին ||, որ ոչ սակաւ չփոԹումն արկանէ 'ի վերծանօղս. կարծելով Թէ մանկլօր և կոա են յայլևայլ ծովեզերեայս. և սակայն են 'ի նոյն ծովեզրն գանարայ: Եւ զգանադիրն նհնգ զատուցանէ յեր՟դ մասին եւրում 'ի

կորոմանտելայ․ և սակայն զսահման Կառնադիկ նահանգին այնչափ տարածանէ, մինչև զբազում երկիրս Կորոմանտելայ 'ի նմա պարփակել․ ուստի զպխմլէբաղամ քաղաք որ է 'ի Կորոմանտել 'ի Հէյտարապատ, և ըստ ոմանց յՈրիսսա, դնէ 'ի Կառնադիկ ։

Արդ՝ կամեցեալ մեր խորշել 'ի շփոթ կարգաց և զամփոփ և զորոշ բաժանումն դնել առաջի վերծանողաց, բաժանեմք զայս աշխարհ յերիս մեծամեծ մասունս և 'ի պրակս․ 'ի Հիւսիսային, յԱրևելեան, և 'ի Հարաւային ։ Հիւսիսայինն՝ պարունակէ զբազում մեծամեծ նահանգս ։ Արևելեանն՝ պարփակէ զերիս և եթ նահանգս, որք թէպէտ են 'ի հարաւակողմն հայելով 'ի վերին նահանգս Մողոլաց, այլ ցամաքակղզին կամ Տաքան աշխարհն, ըստ առաւել մասին 'ի հարաւ է քան զսա․ յոյր սակս զՏաքան աշխարհն և եթ յայսմ բաժանման կոչեմք հարաւային մասն ։ Եւ թէպէտ բազում և այլ նահանգս մարթ էր դնել յայսմ արևելեան մասին՝ սակայն մեք զերիս և եթ եդաք վասն մասնաւոր իմն պատճառի, զոր նշանակեսցուք անդէն ։ Իսկ հարաւայինն զայն մասն, զոր աշխարհագիրք կոչեն Ցամաքկղզի յայսկոյս Գանգէսի, և Մողոլք կոչեն Տաքան, կամ Տէքան ։

Պրակ Ա․ Հիւսիսային մասն Մողոլաց ։

Այս մասն ըստ որում առնումք աստէն, առաւել ընդարձակ տարածի քան զայլ երկու մասունս․ 'ի հիւսիսոյ՝ սահմանակից է Բուխարիոյ․ յարևելից՝ Տիպէթայ․ յարևմտից՝ պարսից աշխարհին․ իսկ 'ի հարաւոյ՝ ցամաքակղզւոյն իւրոյ կամ Տաքանայ․ նաև երից նահանգացն՝ զորս ունիմք ստորագրել յերկրորդ մասին ։ 'Ի կողմանս ինչ այսր աշխարհի՝ տիրէ ազգ ինչ անուանեալ Սէյքք, կամ Շէյքք՝ ազգ զօրաւոր․ որք գիտացին թօթափել 'ի պարանոցէ իւրեանց զլուծ ինքնագլուխ միապետութեան, և զծանր բեռն մահմետապաշտութեան Մողոլաց ։ Զորոց ասեն՝ թէ զհետ երթան փիլիսոփայի ուրեմն Դիպեգայ․ որ եմոյծ 'ի նոսա զսէր և զնախանձ ազատութեան․ այլ և ուսոյց նոցա զմիաստուածութիւն, ոչ խառնելով 'ի նմա արտաքին ինչ ծէսս կամ խորհուրդս ։ Սոքա զառաջինն հանդիսացան 'ի սկզբան ամաց անցեալ դարու․ բայց ոչ իբրև ազգ մի, այլ իբրեւ նոր աւանդութիւնք, որք 'ի ժամս խռովութեանց տէրութեան մողոլաց բազմացան յոյժ. մինչեւ եւ այլոց բազմաց թողեալ զբուն դէն իւրեանց, գնալ խառնել 'ի նմ. փախուցեալք 'ի հարստահարութեանց բռնակալաց իւրեանց: Ընդունելին սք 'ի միաբանութիւն իւրեանց զամենեսին, որք միանգամ երդնուն անհաշտելի ատելութի բերել ընդդէմ միապետութե զամ աւուրս կենաց: Յամ տաճարս իւրեանց ունին սեղան, յորոյ վր եդեալ կայ գիրք օրինաց իւրեանց, եւ առ նովաւ գաւազան արքունի եւ սուր. չորք ծերք կարգեալ կան առ 'ի խնդ. հարցանել 'ինչէ 'ի լինել հարկի. որք են իբրեւ թարգման օրինաց նց. որոց մի միայն գլուխ եւ թգր՝ են օրէնք նց:

Տէրութի սց ընդարձակ է յոյժ. զի ը իշխանութե իւրեանց ունին զայն Ծ առ հնրկ, որ 'ի լահոռայ ձգի մինչեւ ցսերհէնտ, եւ 'ի քեշմիրայ մինչեւ ցսընտ, կմ ցդադա. ստի եւ անտի ինդոս գետոյն: Նոյնպէս եւ զօրութի նոցա երեւելի է. զի կարող եղեն 60000 հեծեալս հանել. ուստի եթէ բռնակալ ոք զօրաւոր՝ ոչ նուաճեսցէ զնս ընդ ժմկին, մարթ է թէ առ սակաւ սակաւ եւս ընդարձակեսցեն զիշխանութի իւրեանց մինչեւ ափնել համօրէն հնդկաց. 'ի բաց վտարեալ անտի եւ զեւրոպացիս:

Բզմ գետս ունի այս Ե. յորս գլխաւորքն են ինդոս, կմ Սինդ. Ճէլում, կմ Ըամտր. Իրաւի. Պէաս. Լոգա. եւ այլք բզմք:

Բաժանի 'ի ժդ հետագայ նահանգս:

Ա. Տըլլի.
Բ. Լահոր.
Գ. Քեշմիր.
Դ. Քապուլ.
Ե. Հայտզան.
Զ. Մուլթան.
Է. Սինդ.
Ը. Աճմէր.
Թ. Աճէմապատ.
Ժ. Աուդ.
ԺԱ. Իլլահապատ.
ԺԲ. Մալվա.
ԺԳ. Պէրար.
ԺԴ. Գանտէշ.

Յօդ Ա. Տըլլի, կմ Տէհլի.

Նահանգ ընդարձակ փարթամ եւ բազմամարդ քան զամ նհնգս ինքնակալին մուղալաց. ունելով յինքեան զարքայանիստ ընդ համօրէն տէրութե: Սա 'ի հիւսիսոյ ունի իւր սահման զդ խոյ. յարեւմտից՝ զլահոռ նահանգն որ կոչի եւ բննկապ. 'ի հարա.

բուռոյ՝ զանկեարապատ · իսկ յարեւելից՝ զոխալ կ՟մ
զավուդ ։

Տէլլի, կոչի եւս Տէհլի ։ Է մայրաքաղաք եւ գլուխ համօրէն տէրութ՟ն մողոլաց, յորմէ առնու զանուն նհնգ՟ նր՟ ։ Ընդ բզմ՟ ժամս 'ի ծաղկեալ ժմկի անդ եղեւ աթոռ ինքնակալին, թէպէտ յետոյ միայն յամարայնի բնակէր անդ · կառուցեալ առ Ճըմնա գետով · եւ բաժանեալ 'ի քղք՟ հին՝ որ այժմ արուարձան է եւեթ · եւ 'ի նոր որ կոչի Շահճիհանապատ, կ՟մ Շահանապատ, յանուն ինքնակալին՝ որ շինեաց զնա 'ի սկզբան Է՟ դարուն · զոր բզմք՟ յեւրոպացի Ֆագրաց 'ի բաց բարձեալ զՇահն, կոչեն միայն · Ճէհանապատ ։ Է սա քղք՟ մեծ ընդարձակ եւ ամուր · շրջապատ արքունի հոյակապ ապարանիւքն՝ է իբրեւ մղոն մի եւ կէս ։ Թովմաս մեծոփեցին կոչէ զայս քղք՟ Դիլէ · ուր կամեցեալ յայտ առնել զմեծութ՟ն նր՟, պատմելն ասէ · թէ յառնուլն զսա Լանկթամուրայ, զաւուրս քառասուն նստաւ անդ հնգ՟ զօրօք իւրովք · այլ զերդ քղքին ոչ ծանեաւ ։ Յառաջագոյն որպ՟ ասացաք 'ի Թիւէն է · 'ի վաճառսն՝ բզմք՟ կային բնակեալք յազգէս հայոց 'ի սմ՟ · այլ յետոյ սփռեալ 'ի ծովեզերեայ նհնգս հնդկաց, սակաւք ոմանք մնացին այժմ անդէն սերեալք 'ի նախնեաց անտի ։ Յետ բզմ՟ ժմկաց զկնի Լանկթամուրին էառ զայս քղք՟ Թահմաս Ղուլի խանն յամին 1739 · որ եւ յետ քանդելոյ զնա, եւ գրաւմբ ածելոյ զինքնակալն մողոլաց, կողոպտեաց գրեթէ զամ՟ փարթամութիս եւ զծոխութիս նր՟ · անհնարին կոտորած արարեալ 'ի նմ՟, մինչեւ 'ի միում աւուր
եւ եթ հարիւր հզր՟ ոգիս ետ սպանանել ։

Յօդ Ը · Լահոռ, կ՟մ Բէնկապ ։

Լահոռ, կ՟մ Լահօռ, որ կոչի եւ Բէնկապ, յ՟ի՝ Հնգագետ, մեծ է ք՟ զօրլի, եւ ք՟ զայլ շրջակայ նհնգս ։ Եւ կոչի հնգագետ՝ իբր զի հինգ երեւելի գետք են 'ի նմ՟, զորս եւ նախնի պատմագիրք յիշատակեն · որպ՟ Պղինիոս յիշատակէ զորեսին՝ որք են · Ակէսինէս · Բոթէս · Հիտասպէս · Հիփասիս ։ Եւ Պտղոմէոս յիշատակէ զհինգերորդն՝ որ է Զաադրոս ։ Իսկ այժմ յայլ եւ այլ անուն անուանին · ա՟ Պէհատ · Գանապ · Փէրատ · Ռաւէ · եւ Վահ ։ Այս նհնգ՟ է մի յառաւելն արգաւանդ եւ 'ի բազմաբեր նահանգացն

Հնդկաց · բերէ ազգի ազգի պտուղս · ցորեան որիզ շաքար այլեւ գինի : 'Ի քղքս նր գործեն նրբանիւթ պաստառս նկարէնս ընտիրս՝ որ է Չիթ · եւ զայլ ամ արհեստակերտ գործածս, զոր գործեն 'ի Հնդկաց Տի : Գլխաւոր տեղիք նր են հետագայքդ :

Լահօռ, կմ Լահաւր · կոչի եւս Ռահմէր, եւ Լահաւէր : Է քղք մեծ հզօր եւ փարթամ մերձ 'ի Ռավի գետն · 'ի նախնումն էր արքայանիստ քղք մողոլաց · այլ 'ի փոխադրել Ակբարայ զաթոռ արքայութեն 'ի յԱկբարապատ կմ յԱկրա, այնուհետեւ մեծապէս անշքացաւ քաղաքս այս : Բզմ մեծամեծ հին շինուածք գտանին 'ի նմ · յորս յաւէտ նշանաւոր են արքունիք, ուր զառաջինն նստէին ինքնակալքն մողոլաց : Այս քղք չէ այնչափ հին · վս զի յռջ ք զհումայոն անուն արքայն՝ որ երկր է զկնի պապուր ինքնակալին, էր գեօղ աննշան : Սոյն այս հումայոն կառոյց անդէն քղք եւ ամրոց՝ որ կայ մինչեւ ցայժմ · ուր եւ հաստատեալ զաթոռ իւր, ընդարձակեաց զնա յոյժ · զի ընդ այն ժամս երկայնութի նր էր իբրեւ 9 մղոն՝ հնդձ արուարձանօք : 'Ի քղքէ աստի մինչեւ ցԱկբարապատ է ճնպհ գեղեցիկ եւ զուարճալի յոյժ, իբրեւ 750 մղոն երկայնութբ · առ որով աստի եւ անտի ուղղագիծ տնկեալ կան առ հնրկ ծառք վայելուչք : Վս այնորիկ ոմանք յարեւելեան Տագրաց զԼահոռ քղք անուանեն Ռահմէր · 'ի հռչակաւոր ճնպհէ անտի · զի բառդ ռահ, 'ի լեզու պարսից նշանակէ ճնպհ · որպ եւ 'ի մեզ · զոր 'ի պարսից առաք : Մեծ մասն բնակչաց քղքիս են կռապաշտ հնդիկք :

Նակրագօտ : Քաղաք առ նովին ռավի գետով առ սահմանօքն դիպէդայ :

Ճէնիաբատ · զոր ոմանք գրեն Եճնա բոլէր : Է քաղաք առ Օմփ, կմ Քոնել գետով · որ իջանէ 'ի լերանց անտի, որք անջրպետեն զդիպէդ 'ի Հնդկաց Տէ :

Սարհէնդ : Քղք առ ընդարձակաւ միով օվկիտ կմ քամէ գետոյն 'ի հարաւոյ :

Իմպա : Է քղք առ Պիեահ գետով որ իջանէ 'ի դիպէդեան լերանց : Են անդ եւ այլ քղքք բզմք · գ Փիշահօր · Բանձաղ եւն :

Յօդ Է. Քաշմիր ։

Ի հիւսիսոյ սահմանակից է մեծին բուխարիոյ. և մասամբ ինչ գիւղէգայ. 'ի հարաւոյ՝ լահօռ նհ՟նգին. յարևմտից՝ քապօլայ. և յարևելից՝ գիւղէգայ։ Այս նհ՟նգ 'ի նախնումն էր հզօր և ծաղկեալ թգ՟րութ, զոր առաւ նհ՟նգ մողոլաց մեծ ինքնակալն ակբար յաջորդ հումայօնայ, որ էր հզօր և իմաստուն և անուանի յոյժ առ նն՟. զորմէ բզ՟մ ինչ պատմեն։ Աստանօր բազմամարդ և արգաւանդ կողմն նհ՟նգիս՝ է այն լայնարձակ դաշտավայրն, որոյ երկայնութիւն է իբրև 90 մղոն. իսկ լայնութիւն 36. բազմապատիկ փոքրիկ բլրովք պարապատեալ։ Շրջապատ լերինք նր՟ բարձր են յոյժ, և սեպացեալ. մանաւանդ 'ի կիսոյ'ն վեր, և գլխովին անբեր։ 'Ի լերանց անտի բզ՟մ հեղեղատք և ուղխք իջանեն. որք միացեալ՝ գործեն զՋիլում գետ. որ անցեալ ը՟ անցս ինչ ը՟ մէջ ժայռից, գ՟նայ խառնել յՀնդոս գետն։ Բազմամարդ է յոյժ այս նհ՟նգ, մինչև ասել ոմանց, թէ իբր 100 հզ՟ր գիւղօրէք գտանին 'ի նմ՟. և բնակիչքն ճարտարք և գործունեայք ք՟ զամ՟ բնակիչս հնդկաց։ Գիտեն գործել բնաւիր և պատուական արհեստակերտս. որպ՟ ազգի ազգի կահս և կարասիս տան. և բնաւիր և ազնիւ ցփսիկս. այն է շալ գօտիս. Քէշմիրլենս, և Ճաշ կոչեցեալ. որոց երկոքին ծայրք են ասղնագործեալք. և անտի սփռի յամ՟ Ասիա աշխարհ մինչև ցկոստանդնուպօլիս. զոր մեծամեծք 'ի կեր արկանեն, կմ՟ 'ի գօտի, կմ՟ արկանել զպարանոցաւ։ Սր՟ երկու են տեսակք, մին գործեալ 'ի զզալթու անտի նհ՟նգին. իսկ միւսն յասուէ մասնաւոր ինչ այծից գիւղէգայ, որ պատուական ևս է ք՟ զառաջինն. յորմէ ինքնակալք մողոլաց տային գործել վս՟ ինքեանց այնպիսի գօտիս. որոց գին միոյն հասանէ ց150 ոսկի դահեկան։ Սք՟ գիտք են բարեսէրք ք՟ զբնակիչս այլոց նհ՟նգաց։ Ոմանք ասեն իջանել ս՟ց յեբրայեցւոց, հաստատեալ 'ի վր՟ աւանդութեանց։ Գլխաւոր տեղիք են ս՟ք ։

Քէշմիր. ոմանք յՃագլրաց կոչեն զսա և Շրինագէր, կմ՟ Շէհրինկէր. այլ սովորաբար կոչի քեշմիր. յորմէ և նհ՟նգն առնու զանուն։ Է ք՟ղ՟ք մեծ, այլ անպարիսպ 'ի վր՟ ափանց գետոյ 'ի դաշտավայրի. շուրջա-

Նակի պատեն լերամբք 'ի ձև կիսաբոլոր : Շինուածք նր ոչ հնրկ են փայտակերտ . Թէպէտ գտանի՝ անդէն և քար . ուստի 'ի նախնումն էին 'ի նմ բղմ քարաշէն շինուածք . որոց հետք երևին մինչև ցայժմ : Բնակիչք նր ը̄ մեծի մասին՝ են մոլորք . որք են ճարտարք, և յաջողակք յարուեստս . գտանին և բազմութի տաճկաց . նաև բղմ վճռկանք յազգէն հայոց, որք գնան անդ 'ի բառնալ ղալէսալէս ցփոխեալ կմ շալի գործածս . մնդ զքեմերականս դօտիս : Դիրք Քղքին գեղեցիկ է յոյժ և զուարճալի . յորում կն պարտէզք բարետեսիլք, և 'ի շրջակայ դաշտավայրս այնչափ է առատութ նշնարայս քրքումծաղկին՝ մինչև նեղել ճնպհորդաց յանցանելն ը̄ այն 'ի հոտոյն սաստկութ : Այլ Քղքն գոլով ազատ, և բազմութ բնակչաց 'ի նմ, յաճախեալ են յոյժ անդ անառակութիւնք զեղխութիւնք և ապականութիւնք բարուց :

Պամպէր : Քղք և անցք նեղագոյն 'ի կիրճս լերանց . ը̄ որ հնար է զօրաց մտանել 'ի ներքինս :

Յօդ Է · Քապօլ · Քապուլ · կմ Քապուլաստան :

Յարևելից ունի իւր սահման զքշմիր . յարևմտից՝ զղանտահար, և զխորասան . 'ի հիւսիսոյ՝ զբուխարիա . իսկ 'ի հարաւոյ՝ զմուլթան նհնգ : Այս նհնգ յուռթի է յոյժ և խոտաւէտ . ունի երիվարս բղմս և ընտիրս . և այլ չորքոտանի անասունս ընտանիս : Աճի անդ հալիլէ առատ . որ է արմատ լուծողական, զոր և 'ի դեղորայս 'ի գործ ածեն . ուստի և բղմ ուրեք Քապուլի անուանեն յանուն նահանգին : Ելանեն նաև ազգի ազգի համեմք, և փայտք պիտանիք 'ի դեղորայս . որով բղմ տուրևառութս առնեն բնակիչք նր . նաև եղէգն պատուական և ամուր, յորմէ առնեն բունս նիզակաց և գաւազանս . գտանին անդ և բովք երկաթոյ . յորոց ելանէ երկաթ պատուական :

Մարգաչատ է յոյժ այս նհնգ . ունի գետս բղմս . և աւանս, և Քղքս : Բնակիչք նր ը̄ մեծի մասին են կռապաշտք . որք ազգի ազգի հանդէսս և տօնս կատարեն ծիծաղականս, յորս երևելի է այն՝

զոր ամի ամի կատարեն 'ի լրանալ լուսնոյն փետրվարի. որ ձգի աւուրս երկուս և եօթ. յորս արկանեն զխմանկս զերեսօք, և առնեն այսպէս խաղարկութիւս. շինեն հսկայաձև արձան' որոյ յանդիման կացուցանեն փոքրիկ մանուկ. որ նետաձիգ լինի 'ի նա. և ապա յարձակին 'ի վ՛ր, խաղաւ սպուռ խորտակեն զարձանն։ Եւ զայս յայն սակս առնեն, զի աւանդուն է 'ի նոսա, թէ ած եկն յ՟ 'ի կերպարանս մանկան, զոր Քրուշման անուանեն. և մի ոմն հսկայ երկուցեալ թէ գուցէ սպանցէ 'ի նմէ, խնդրեաց կորուսանել զնա. այլ մանուկն կշռակի ձգեալ նետս 'ի նա, անդէն ընկեց յերկիր և սատակեաց զնա։ Յայսմանէ ոմանք 'ի պատմագրաց համարին, թէ ս՟ք 'ի նախնումն քրիստոնեայ էին. բայց այս չէ այնչափ ինչ յայտնի նշան քրիստոնէութեան նց. զի մարթ է թէ նախնիք նց լուեալ 'ի քրիստոնէից զգալուստ փրկչին մերոյ յս՟ի, զայդ աւանդել 'ի վ՛ր նց յօդեցին. որոց դենն' ոպ և այլոց կռապաշտից' գլխովին յառասպելաց է խառնեալ։ Թէպէտ և չէ անհաւանելի կարծիք նց. նա մնդ մարթ է համարել, թէ քարոզեցաւ և առ նս 'ի հնումն հաւատք քրիստոնէութեան. զի և այլուր' մօտ 'ի բենկիւ, և 'ի պանկալա, գտանի ցեղ ինչ հնդկաց, յորս հետք ինչ քրիստոնէից երևին։ Գլխաւոր տեղիք նր են հետագայքդ։

Դեհլի, կմ' Դելի։ Է գլխաւոր քղք Հնդկիս ասպեհաց գետով. հզօր և բարգաւաճ 'ի վաճառս վաճառականութե. որոյ գլխաւոր վաճառք են երեվարք, և նուխադք։ Ունի երկու ամրոցս. և է նշանաւոր անցքյոն պարսից 'ի Հնդկաստան։ Յամին 1738, առ թգւթբ Մէհմէտ շահին մօղոլաց, էառ զայս քղք Թահմաս ղուլիխանն։

Լահօր։ Քղք առ եզր ինդոս գետոյն յարևմտից կուսէ, ուր յինքն ընդունի զհնգեղարէ գետն։

Խազնէա։ Քղք առ սահմանօքն պարսից 'ի վ՛ր նիպալ գետոյն. որ երևելի է վն լինելոյ նր քաղաք ծննդեան սուլտանացն խազնավացւոց։

Յօդ Է. Հայադան ։

Հայադան յարևմտից ունի իւր սահմանակից զՂանդահար. 'ի հիւսիսոյ' զքաղաք ... յարևելից' զինդոս գետ. իսկ 'ի հարաւոյ' զմուլթան։ Գլխաւոր

տեղիք

գետք նոր են Լագա. և Նիգար, կամ Նըգար։ Իսկ քաղաքք զորս գտոք նշանակեալ յԾագիրս՝ են այք։

Նեպալ։ Քղ̃ք հին 'ի նախնումն անուանեալ Գիւռնէւերուշէս. և յարտաքացուց Նեպալու. 'ի մ̃ջ նեպալ գետոյ. հանդէպ դրան Հ.ն գետոյն, ընդ որ զեղու 'ի Նեպալ։

Աղրէգ։ Քղ̃ք սո. Ինդոսի. ուր յինքն ընդունի ըզՌուտաբ գետն։

Յօդ Ղ. Մոլթան, կամ Մուլթան։

'Ի հիւսիսոյ ունի ևս սահմանակից զՀայադան, և մասամբ ինչ զԼահօր. յարևմտից՝ զՊարսս. 'ի հարաւոյ՝ զՍինտ. իսկ յարևելից՝ զԼահօր։ Ունի գետս յոլովս, յորս գլխաւորն է Ինդոս. և է արգաւանդ և բարեբեր. բերէ բամբակ ընտիր յորմէ գործեն բեհեզս. և այլ ազգի ազգի պտուղս բազում յոյժ։ Բերէ և շաքար, ծծումբ. և ուղտս բազումս, որք անցանեն ը̃ խաղնա, կամ ը̃ խաղնեա, և ը̃ Ղանտահար։ 'Ի Լէրինս Մուլթանայ գտանի ազգ ինչ անուանեալ Բադրէք. կամ Բոյարաւդք իջեալ 'ի հնդկաց անտի, զորս եհար մեծն Աղէքսանդր. որք յաւուրն մողոլաց զծ Լուրեանց, փախուցեալ անկան 'ի Լէրինս յայնոսիկ. յորոց ընդ մէջ իջեալ անտի տարածեալ են 'ի մերձակայ սահմանսն։ Այ̃ք սահմ̃ք կռապաշտ են, և ունին հռչակաւոր մեհեան ինչ 'ի Մուլթան. ուր երթան յուխտ ամ̃ աղանդակիցք ն̃ց, ոչ միայն 'ի սահմանաց Լուրեանց, այլ և 'ի մերձակայ գաւառաց։ Երեսք կռոց ն̃ց՝ զոր պաշտեն, սեաւ են, և հանդերձքն մաշկեղէն կարմրագոյն. իսկ երկուքին աչքն՝ երկու մարգարիտք։ Գլխաւոր տեղիք նահանգիս են այք.

Մուլթան, կամ Մոլթան։ Է մայրաքաղաք տեղւոյն՝ ուր պհաւ գետն խառնի յԻնդոս. և թէպէտ չէ այնչափ ինչ մեծ, այլ քաջ ամրացուցեալ. և է վաճառատեղի շահաւոր յոյժ մողոլաց. յորժամ պարսիկք տիրէին Ղանտահարայ։ 'Ի նախնումն էր սա քաղաք բազմավաճառ յոյժ. զի անտի մինչև ցԹաթթա քաղաք ծովեզերեայ, վաճառքն իջանէին ընդ Ինդոս գետն. ուր վաճառականք բազում ազգաց գնէին, և անտի բարձեալ տանէին յայլևայլ կողմանս։ Բայց յետ խցանելոյ դրանց գետոյն աւազով, և յետ լինելըյ աննաւարկելի բազում ուրեք 'ի պատճառս բազմակոյտ աւազոյ, նաւք ոչ ևս կարեն գնալ ընդ նա. ուստի և վաճառականութիւն մոլթանայ մեծապէս նուազեցաւ:

Պաքօր, կամ Պէքէր: Քաղաք առ եզերբ Ինդոսի յարևելից կուսէ:

Սաքօր: Քաղաք ոչ այնչափ ինչ հեռի 'ի պաքօր քաղաքէ անտի, առ եզերբ նորին Ինդոս գետոյ յարևմտեան կողմն:

Են այլ ևս բազում քաղաքք. որպէս Գօշտար. Սանթալին. Սանտուր. ևն:

Յօդ Է. Սընտ, կամ Դադա:

Սընտ նահանգն կոչի ևս Ինդոս, յանուն մայրաքաղաքին. իսկ 'ի պարսից և յարաբացւոց Աղընտ Տէլէ: Ձգեալ տարածի սա 'ի դրանց բաստառը գետոյն մինչև ցպարսս, 'ի հիւսիսակողմն ծովուն հնդկաց. և է մի 'ի մեծամեծ նահանգաց այնց ծովեզերեայց, փարթամ օրգաւանդ, և բազմավաճառ. ուր յաճախեն վաճառականք հնդիկք, հայք, և երոպացիք: Ունի բամբակ բազում. ուստի և ազգի ազգի բամբակի պաստառս, և իւղ և կոզի և խէժ և մորթ աղէնկար գունագոյն մետաքսիւք, գեղեցիկ յոյժ և առ բազում իրս պիտանի և շաքարեղէնս, և այլ պէսպէս արհեստակերտ գործածս. որք ընդ Ինդոս գետն գան իջանեն անդ 'ի վերին նահանգաց անտի հնդկաց: Ակպար մեծ ինքնակալն մուղալաց, էառ զնահանգս զայս 'ի միասին ընդ գուճրաթ նահանգին: Բնակիչք նորա մահմետական են. բայց 'ի մեծամեծ քաղաքս գտանին բազում վաճառականք քրիստոնեայք և հնդիկք: Գլխաւոր տեղիք նորա են սոքա:

Դադա, կամ Դադդան: Է մայրաքաղաք կառուցեալ առ արևմտեան բազկաւ Ինդոս գետոյն. քանի մի մղոնաւ 'ի վերոյ քան զգետաբերանն նորա, ընդ որ զեղանի 'ի ծովն. յորոյ անուն և սընտ նահանգն անուանի երբեմն Դադա: 'Ի նախնումն հռչակաւոր էր յոյժ 'ի պատճառս վաճառականութեան փորդուգալաց. գործեն անդէն զպէսպէս նորատեսիլ բազմարուեստ գործածս զոր տանին 'ի բազում տեղիս: Այլ տօթ տեղւոյն սաստիկ է յոյժ: Անգղիացիք կոչեն զսա, Կոտտա Նէկէր Դադդան:

Մանսուրա: Քաղաք առ նովին գետով 'ի հիւսիսոյ կողմանէ դադդայ:

Հաուր: Քղ̃ք առ Համմնուն գետով, որ մտանէ 'ի ծովն. յարեւելից կուսէ մտանսայ հրոճանդանին:

Ալրաղա. կմ̃ Քանդաղէլ: Քղ̃ք առ արապա գետով 'ի խորին հիւսիսակողմն նահանգիս առ սահմանօքն պարսից:

Իննաւար. կմ̃ Լեանաւար: Քղ̃ք երեւելի առ բաստար գետով, որ զեղու 'ի ծոցն Գուճրադայ:

Տեաու, կմ̃ Տէպէլ, և կմ̃ Տեաու Բընդր: Է քղք մերձ 'ի բերան Ինդոսի, և յայն սակս կարի յարմարաւոր վաճառականութե:

Են այլ ևս քղքք բզ̃մք զոր ունիս տեսանել յաշխարհացուցն մեր. որք են Մանհապէր. Բաքքէր. Ալօոր. Սհվան:

Յօդ Ը. Ազմէր.

Այս նահանգ կմ̃ թագաւորութի յարեւմտից ունի իւր սահման զՍինդ և զՄուլթան. 'ի հիւսիսոյ և յարեւելից՝ զԴէլլի և զԱկբարապատ. 'ի հարաւոյ՝ զգանտիշ և զԳուճրադ: Երկիր նր̃ ը̄ մասին չոր է անբեր և լեռնային: Մի միայն երեւելի գետ ունի կոչեցեալ Բաքքար, որ ելեալ 'ի լերանց՝ որք անջրպետեն զնահանգս զայս յակրայէ, և անցեալ առ Լինակար քաղաքաւ որ 'ի Սինդ, մտանէ 'ի ծոցն Գուճրադայ: Ազմէր: Է գլխաւոր մայրաքաղաք նահանգիս՝ կառուցեալ յարգաւանդ վայրի ը̄ մէջ լերանց, յորոց ելանէ բաստար գետն:

Են և այլ քղքք 'ի սմին նահանգի. ոպ̃ Մէրթա. Սահօլոր. Թաուէճճէ. Պանթօ. և այլք:

Յօդ Թ. Ակբարապատ, կմ̃ Ակրա.

Նահանգն կմ̃ թգւթն Ակբարապատայ, կմ̃ Ակրապատայ, զոր եւրոպացւոց Աշխարհագիրք միշտ կոչեն Ակրա. 'ի հիւսիսոյ՝ սահմանակից է Դէլլի, կմ̃ Տեհլի նահանգին. յարեւելից՝ Աւուդ նահանգին. 'ի հարաւոյ՝ Մալուայի. իսկ յարեւմտից՝ Ազմէրայ: Երկիր նր̃ ը̄ առաւել մասին գիւր է և արգաւանդ, ոռոգեալ 'ի բազմապատիկ գետոց , որք դնան միանան 'ի Ճըմնա գետն մեծ . Գլխաւոր տեղիք սորա , են սոքա :

Աքպէրապատ . Աքպարապատ , կամ Աքրա : Է գլխաւոր քաղաք թագաւորութեան շինեալ յինքնակալէն Ակպարայ , յորոյ անուն և կոչի . ձգեալ է երկայն առ Ճըմնա գետով . 'ի լայնարձակ , յաւազուտ և յանբեր դաշտավայրի : Զունի ամրոց , և ոչ այլ ինչ ամրութիւն , բայց պահապանս յոլովս կարգեալս 'ի պահպանութեան նորա . մանաւանդ յորժամ անդ նստին ինքնակալք մողոլաց : Ապարանք մեծամեծաց քարաշէն են կառուցեալք . գրեթէ առհասարակ մերձ 'ի գետն ըստ սովորութեան հնդկաց . բայց տունք հասարակ ժողովրդեան՝ աղքատակերպք յոռիք և ցածունք . ոչ և այլ իմ տեսլեաց Ծին մողոլաց : Բազմամզկիթք են 'ի նմա . և հասարակաց պանդոկք . ընդ Խանք , և բաղանիք , և պարտէզք , և ջրհորք : Ապարանք ինքնակալին 'ի բնակչաց Մոհալ ասացեալ , է 'ի ձև կիսաբոլոր լուսնի . որոյ շրջապատն է 3 կամ 4 մղոն , պատեալ բարձր և հզօր պարսպօք և ամրացուցեալ զինուք . և առ նովաւ խրամ լայն և խորայատակ . հանդերձ բազում շարժական կամրջօք : Իսկ ներքին հանդամանք նորա չէ ինչ ծանուցեալ . բայց միայն զի 'ի մտանել ընդ առաջին դուռն , ընդ առաջ լինի ընդարձակ ճանապարհ ինչ ընդ մէջ երկուց ընթացողական ջուրց . յորոյ 'ի ծայրն է քառակուսի սրահ . ուր կան պահապանք ինքնակալին , և զօրապետք նոցա . և առ նովաւ են այլ ևս բազում սրահք . և այլ տեղիք որոշեալ 'ի պէսպէս գործս , որք անջատեալ են 'ի ներքին ապարանից անտի , ուր նստի ինքնակալն և կանայք նորա :

Բազմամարդ է յոյժ այս քաղաք . փարթամ բազմավաճառ և մեծ . մինչև ոմանց յաշխարհագրաց ասել , թէ մեծութեան նորա գրեթէ կրկին է քան զսպահան արքայանիստ քաղաք պարսից . թէպէտ ըստ մեծութեան նորա չէ պարսպ կշռեալ և զբազմամարդութիւնն . վասն զի լի է մեծամեծ և ընդարձակ պարտիզօք . և մեծ մասն տանց նորա ցածուն են , և տարանջատք 'ի միմեանց . յայսր սակս աւելի ընդարձակ գրաւէ նիստ նորա : Բնակիչքն են բնիկ հնդիկք , և ըստ առաւել մասին մողոլք մահմետականք . բայց 'ի միջնի գտանին անդ և յազգէս հայոց . և հրէայք . այլև սակաւ ոմանք եւրոպացիք , 'ի պատճառս վաճառականութեան , որոց գլխաւոր վաճառք են լեղակ , կամ երանգ երկնագոյն . զի սորայս լաւ ևս է , քան որ յայլ տեղիս գտանի : Այս քաղաք 'ի նախնումն մինչև յիւրում հաստատութեան կայր ինքնակողմանն մուղալաց, բարգաւաճ էր յոյժ փառաւոր և մեծապէս ծաղկեալ. այլ զկնի պէսպէս հարուածոց և աւերմանց Թիւն հնդկաց, մեծապէս անշքացաւ յառաջին վայելչութենէ անտի իւրմէ :

Սէքանտրա : Քաղաք 5 կամ 6 մղոնաւ հեռի յԱկպարապատոյ յարեւելից. անդ են գամբարանք իշխանականաց մուղալաց. յորս առաւել հռչակեալ են երկուքն. մին Ակպարու իշխանականին, իսկ միւսն տիկնոջ Շահ Ջիհան անուն իշխանականին. յորոյ շինուել ամս ԻԲ. քսան հազար գործաւորք. և ի ստորագրութեան նոցա Տաւռնից, երկոքին ես յիշելոյ բաւել արժանի են զարմացման :

Ֆաթէփուր, կամ **Ֆիթիփուր** : Քաղաք վայելուչ և մեծ յարեւմտից Ակպարապատոյ. հիմնեալ և զարդարեալ ըստ վայելչուչ և գեղեցիկ շինուածովք յԱկպարայ. յորս գլխաւոր են արքունի ապարանքն. բայց ուր ուրեմն բնակիլն անգէն վասն ժխտակարութեան օդոյն :

Մաթուրա : Է հռչակաւոր կռատուն առ Ջեմնա գետով 'ի հիւսիսոյ Ակպարապատոյ :

Ճայփուր : Քաղաք մեծ և գեղեցիկ 'ի հիւսիսոյ կողմանն Ֆաթիփուրայ :

Գուալիօր : Քաղաք գլխաւոր 'ի մասնաւոր ջրաւ 'ի հարաւակողմն քարնաւ գետոյն :

Գէտանուր : Քաղաք մերձ 'ի սահմանս ալլահ նահանգին, յարեւմտեան կողմն գանգէսի :

Նարվար : Քաղաք առ ստորոտով գագաթ կոչեցեալ լերանց. առ գետովն՝ որ յանուն նորա կոչի Նարվար :

Յօդ Ժ. Աւուդ, կամ Աւդ :

Այս նահանգ կամ սուպայութիւն. որ կոչի երբեմն Աւուդ, և երբեմն Աւդ, 'ի հարաւոյ ունի զիւր սահմանակից զԱլլահապատ, կամ զԻլլաապատ. յարեւելից և 'ի հիւսիսոյ՝ զԴիպէդ. իսկ յարեւմտից՝ զԴօըլի : Երկիր նորա ի մեծի մասին լեռնային է. և ոչ այնչափ արգաւանդ. յայն սակս է մի յաղքատ սուպայութեանց Հնդկաց :

Աէձոտ, կամ **Աէձօտ** : Է մայրաքաղաք սորին նահանգի. կառուցեալ առ Տէւա գետով. որոյ բնակիչքն են հնդիկ կռապաշտք, և մուղոլք :

Լաքնաւ : 'Ի նախնումն էր սա գլխաւոր քաղաք նահանգին րէն հնդկաց Ծին. կառուցեալ յափն գանգէսի յարեւելից կուսէ. իսկ այժմ է քանդեալ և աւերակ :

Կօր : Գլխաւոր քղ̃ք յիւրում համանուն գւ̃ռի սահմանակից գիւլէդայ :

Նարնօլ, կմ̃ Ցոնոխաբ : Քղ̃ք փոքրիկ 'ի Մուլթան գաւառի :

Գոլլա, կմ̃ Գլուր : Քաղաք 'ի հարաւակողմն քանուէ քաղաքին՝ 'ի հիւսիսոյ գանգէսի :

Յօդ. ժա̃. Պնարիս, Ելլահապատ կմ̃ Հելապաս :

Զայս նահանգ ոմանք կոչեն Պնարիս, յանուն մեծի քղքին որ է 'ի նմ. ոմանք Ելլահապատ յանուն մայրաքղքին որ̃ և այլ ընդ̃ն անուամբք յորջորջի : Ունի ևս սահմանակից 'ի հիւսիսոյ զաւուդ. 'ի հարաւոյ՝ զպերարն, և զմալվա. յարեւմտից՝ զգանտեշ. իսկ յարևելից՝ զբահարանս կմ̃ զփադնա : Մասն ինչ սորին նահանգի, զոր առին անգղիացիք 'ի նապապէն սինարիայ, տուեալ ինքնակալին մողոլաց որոյ տարադրեալ 'ի Թգ̃րուէն՝ յետ բազմապատիկ անցից, գնաց անկաւ առ անգղիացիս, որ̃ զկնի ևս ունիմք պատմել : Եւ Թէպէտ չէ ինչ ընդարձակ նահանգս այս, սակայն փարթամ է յոյժ, և երկիր նր̃ արգաւանդ, ոռոգեալ 'ի գանգէսէ : Գլխաւոր քաղաքք նր̃ են :

Իլլաապատ. Իլլահապատ. Իլիապատ, կմ̃ Հէլլաբաս. և Հալլաբաս : Է մայրաքղք նհ̃նգիս, ընդ̃ն անուամբ կոչեցեալ. կառուցեալ առ գանգէսիւ. քանի մի մղոնաւ 'ի վերոյ, ուր Ծըմնա գետն խառնի 'ի նմա, կմ̃ 'ի գանգէս : Անդ գնան հնդիկք յուխտ, 'ի խառնուածս երկուց գետոցս բազմութ̃ ժողովրդեան :

Պնարէս : Է քաղաք մեծ, բարեշէն, փարթամ, և բազմավաճառ. զոր բն̃իք համարին մի 'ի հնագոյն քաղաքաց անտի Ծին մողոլաց. որ առ հնդիկս է իբրև բնիկ տեղի և սկզբնավայր գիտութեց և դենից նց̃ : Կառուցեալ առ գանգէս գետով. ունի հոյակապ շինուածս, և տունս գեղեցիկս, և բնակիչս բզ̃մ : Անդ է գլխաւոր մեհեանն հնդկաց յափն գանգէսի : Այս մեհեան կմ̃ կուատուն է խաչաձև. որ̃ և այլ ևս մեծամեծ կուատունք նց̃. 'ի մէջն անդունի գմբէթ բարձր, և 'ի ներքոյ նորա է սեղան 7 կամ 8 ոտնաչափ երկայն · և 5 կամ 6 լայն · և երկու սանդուխք առաջի նորա ծածկեալք մետաքսեայ և ոսկեհուռն գորգօք : Իսկ սեղանն ծածկեալ է ասղնագործ ոսկեհուռն դիպակօք · 'ի մէջ այլոց արձանաց կայ , է արձան մի յոտն կանգնեալ · բարձր 5 կամ 6 ոտնաչափ · որոյ գլուխ և պարանոցն և եթ երեսի · յոր արկանեն երբեմն մեծագին մանեակ ոսկի · յեռեալ 'ի նմա ականս ծանրագինս և մարգարիտս մեծամեծս Յաջմէ սեղանոյն՝ է օտարակերպ արձան ինչ ոսկի · որ ըստ մասին բերէ զնմանութիւն փղի · ըստ մասին ձիոյ , և ըստ մասին ջորւոյ , առ որ պաշտմանք նոցա եւեթ կարող են մերձենալ : Իսկ ընդ մէջ սուրբ դրանն և սեղանոյն , է և այլ կուռք ինչ 'ի սեաւ մարմարիոնէ բազմեալ ծնգծալ · և արտաքոյ դրան նստի մի ոմն 'ի պաշտմանց · որոյ առաջի կան դեղնագոյն հեղանիւթք , զոր ուսկէ 'ի ճակատս և 'ի բազուկս՝ ուխտաւորաց , որոց լուծանեն 'ի գանձս , մտանեն 'ի կատարուն անդր : 'Ի դրանէ կատարան մինչև ցգետն՝ են լայն և ընդարձակ սանդուխք · ընդ որ իջեալ ուխտաւորաց , ընդ մեծարանօք ըմպեն ջուր 'ի գետոյ անտի · որով համարին սրբիլ 'ի մեղաց · պաշտմանք նոցա երևելի վաճառականութեան ջրովն այնուիկ · զի լցեալ յանօթս , և կնքեալ կնքով իւրեանց առաքեն 'ի հեռաւոր տեղիս՝ ընդ որս ոչ անցանէ գանձէ՝ մեծագին վաճառելով · զայն ջուր 'ի կիր առնուն հնդիկք 'ի զանազան պէտս , և մանաւանդ 'ի լնուլ 'ի բերան հիւանդաց՝ 'ի ժամու մահուան :

Արտաքոյ քաղաքին 'ի հիւսիսակողմն է մեծաշէն գամբարան · զոր հնդկաց կարծիք բնակչաց տեղւոյն համարի լինել մի 'ի թագաւորաց անտի դիպեդայ · որոյ մտեալ 'ի հնդիկս , հաստատեաց զթագաւորութիւն , զոր ապա եղծեալ քանդեցին յաջորդք Լանկթամուրին : Իսկ անգղիացիք յետ տարադրելոյ անտի զնապապն , միշտ պահեն անդէն գունդ մի զօրաց յապահովութիւն սահմանաց իւրեանց :

Յօդ ԺԲ · Մալվա , կամ Մալովէ :

Մալվա նահանգն յոմանց Ճապրաց Մալովէ ասացեալ , 'ի հիւսիսոյ՝ սահմանակից է Ակբարապատոյ , և Իլլահապատոյ · յարևմտից՝ Գանտիշայ ·

'ի

'ի հարաւոյ՝ Պերաւէձ և Պալաւկաթ նահանգաց. իսկ յարևելից՝ մասամբ իւիք Պերաւէձ նահանգին. և մասամբ իւիք Փադանայ։ Գլխաւոր տեղիք նր՟ են։

Ճհուփ. յոմանց Նշուփ ասացեալ. որ է իբրև գլխաւոր քղ՟ք նհ՟նգիս, կառուցեալ 'ի մէջ գետոյն՝ որ մտանէ 'ի Ճըմնա գետն։

Գուէնէֆ։ Քաղաք 'ի հարաւոյ վերնոյն, առ հեղեղատաւ ինչ, որ միացեալ 'ի նոյն վերին գետն, գնայ խառնել 'ի Ճըմնա։

Սերոնձ. Քղ՟ք ը՟ մէջ Քումնութրփուռայ և Կոտահայ. առ գետովն՝ որ կոչի յանուն նր՟։

Են այլ ևս բ՟զ՟մ քաղաքք 'ի սմին նահանգի, զորոց զանուանս և եթ գտաք։

Յօդ. ԺԷ՟. Պերաւէձ. կմ՟ Պերար ։

Պերաւէձ, կմ՟ Պերար նահանգն 'ի հիւսիսոյ սահմանակից է Մալվայ նահանգին. յարևմտից՝ Պալակադայ՝ որ է 'ի սըքան Ձի և Մալվայի. 'ի հարաւոյ՝ Օրիսայ. իսկ յարևելից՝ Պանկալայի և Փադանայ։ Եւ է ը՟ տրու՟թ ազգին Մարաթայից. որք են ժողովուրդք բնիկ կռապաշտք. հաւաքեալ 'ի զանազան ցեղից և իշխանաց հնդկաց։ Սք՟ 'ի նախնումն տերեցին բազմաց նհ՟նգաց, այլ վտարեցան սրով մողոլաց, և զկնի փախուցեալ 'ի լերինս՝ որք 'ի Սուրադայ ձգին մինչև ցԿոժա 'ի ծովեզերեայս Գոնդուանայ, բազմացան անդէն. և յետ ժմկաց կազմեցին տրու՟ն ինչ, որոյ մայրաքաղաք էր Սատարա քաղաք 'ի մէջ ժայռաւոր լերանց, յորոց ելանէ Քիրշնա գետն՝ որ է մի 'ի նշանաւոր գետոցն հնդկաց։

Սք՟ վարելով 'ի լերինս անդ անասնական կեանս, 'ի բաց թօթափեցին զլուծ կրօնի, ը՟ նմին և զամ՟ բնական օրէնս, և զլոյս բանի, և այնուհետև լցան ամ՟ ապականու՟թբ. թողեալ զխաղաղական և զգօվանի գործառնութիւնս, ետուն զանձինս 'ի գողութիւնս և յաւազակութիւնս. զի ելեալ 'ի լերանց անտի ասպատակ սփռէին 'ի մերձակայ գիւղօրէս. զորս կողոպտեալ դառնային անդէն յորջ իւրեանց։ Սք՟ առ ժմկօք՟ Աւրանկզիպայ ցուցին զզօրու՟թն իւրեանց. զի յօգնու՟թն կոչեցեալք յիշխանաց անտի հնդկաց, ը՟ դէմ Աւրանկզիպայ արքային մողոլաց, անպարտելի քաջու՟թբ մարտ եդուն ը՟դէմ նր՟։ Եւ թէպէտ նա ինքն արքայն մուղալաց՝ եառ զերկելի մասն կալուածոց իշխանացն այնոցիկ, սակայն 'ի վերջոյ սահմանեցաւ խաղաղութիւն առնել ընդ մարաթայից. շնորհելով նոցա յաւէժաբար զչորրորդ մասն մտից սուպայութեան առանձնական տաքանոյ. զոր չորշափ եկաց ովրանէզիպ՝ հատուցանելին նոցա հաւատարմութեամբ. այլ յետ այնորիկ, է՝ զի տային, և է՝ զի ոչ. ըստ յաւէտ և նուազ զօրութեան սուպայութեանն տաքանոյ:

Սոցա բանուն այնչափ զօրացաւ, մինչև հարկադրել զինքնակալն մուղալաց յաւուր թագադրութեան իւրոյ դեղին գոյն արկանել 'ի ճակատն ընդ կուապաշտից, զի ճանաչելի լիցի. թէպէտ ինքն է մահմետական: Եւ հետզհետէ առաւել ընդարձակեցին զսահմանս իւրեանց. մանաւանդ 'ի ժամս բազմիշխանութեան Յին հնդկաց զի տարածեցին զտէրութիւն իւրեանց 'ի տաքանոյ մինչև ցնահանգս փաղանոյ և օրիսսայ, գոլով քաջաձի ասպատակողք: Մանաւանդ զի ըստ մեծամեծ նաձայք և նաւէզք 'ի սոսա յաւելան. յորոց մի է և հռչակաւոր հէյտէր ալի խանն կիմ հէտէրնաւէզն: Ուստի դժուարին է որոշակի նշանակել զսահմանս տէրութեանն մարաթայից. քանզի պարագրէ զմասն ինչ սուպայութեանն փաղանոյ և օրիսսայ, և զպէրաւէճ նահանգն, և տարածի ընդ մէջ քանտեշայ և պանկալայի ընդ հիւսիսակողմն: Իսկ 'ի միւս կողմանէ պարունակէ զարևելեան մասն սուպայութեանն տաքանոյ. ընդ մէջ գելէնկայ, վիզափուռայ, և պալակադայ: Բայց յայսցանէ ունին և կալուածս առ եզերբք գոնդաանայ ընդ մէջ կովայի, և դապուլայ. և 'ի նորումս տարածեցին զսահմանս իւրեանց մինչև ցդուռրադ. և զի մինորամոյն ասացից, աստ օրըստօրէ զնան և ընդարձակեն զտէրութիւն իւրեանց ըստ ձգել ըղձից, և ըստ ներել ուժոյ իւրեանց:

Պատմի՝ թէ յորժամ անգղիացիք բանակեցան 'ի պանկալայ, 'ի պահանջել մարաթայից զսովորական հասս սուպայութեանն պանկալայի 'ի նոցանէ ըստ առաջնոյ կարգի, նոքա փոխ դրամոց առաքեցին 'ի վերայ սկաւեղ հրազէն, որ է՝ թիւֆէնկ, և վառօթ. յայտ արարեալ թէ մարտիւ կամին խօսել ընդ նոսա: Սակայն մինչև ցայժմ ոչ ինչ զօրեցին առնել նոցա. թէպէտ ոչ սակաւ նեղութիւնս կրեն 'ի նոցանէ յարաժամ, այլ՝ է զի զինուք ահացուցանեն զնոսա, և է զի՝ ստիպին հաշտութեամբ խօսել ընդ նոսա:

Գլխաւոր քաղաքք այսր պէրաւէճ նահանգի, են Քատաք. Եռնըտէտաք. և Սամպըլպուր. որ թուի լինել մայրաքաղաք նր̅ : Զորոց չունիմք ինչ ծանօթութիւն · գոլով 'ի ձեռս աւազակաւորուաց ազգին մարաթայից :

Յօդ. ժը̅. Քանտէշ :

Այս նահանգ կամ սուպայութն ձգի յարեւելից գուծրադայ, և յարեւմտից մալվայի · 'ի հարաւոյ՝ աղմէերայ և տըլլի նահանգին · և 'ի հիւսիսոյ՝ մասնաւոր և առանձինն տաքանեայ · կամ սուպայութեանն տովլադապատայ : Երկիր նր̅ ը̅ մեծի մասին լեռնային է · ընդ որ հոսի Սուրատ գետն : Գլխաւոր տեղիք նր̅ են հետագայքդ :

Պրհանփուր : Մայրաքաղաք նահանգիս 'ի վր̅ սուրատ գետոյն :

Ասիրգառ : Բերդ առ սահմանօքն գուծրադայ :

Պատուր : Տեղի ճարձակի · որ է ը̅ իշխանութ̅ ռաձայի միոյ հնդկաց · որ վիճօս բ̅ղմ հասուցանէ սուրատ Քղքին · և գրեթէ միշտ ասպատակէ 'ի նահանգն գուծրադայ :

Կոփահ : Քաղաք մօտ 'ի լերինս · կառուցեալ 'ի դաշտավայրի, որ պատեալ է լերամբք · մերձ յակն անդ սերընձ գետոյն :

Մանդառ : Քաղաք սահմանակից գուծրատ նահանգին · մերձ յակն անդ լայնարձակ գետոյն՝ որ զեղանի 'ի ծոց քամպահաղայ :

Ուճէն · 'Ի հիւսիսակողմն մանտուհայ, կառուցեալ 'ի վր̅ նորին գետոյ :

Պրակ Է. Արեւելեան մասն Մողոլաց :

Յայսմ մասին ունիմք խօսել զերից մեծամեծ նահանգացն կամ սուպայութեանց, որք են Պանկալ · Փաթնա, կամ Պահար · և Օրիսսա : Զի թէպէտ և զայլ նոյնպէս մուղալաց՝ մարթ էր դնել յայս կողմն այլ ա̅ք երբեմն մի որոշ էին յռ̅ջ ք̅ զատանուլն անգղիացւոց · ո̅պ նաև յետ փոխման նց̅ · զի նապապն

պան

պանկալայի ընդարձակեալ էր զիւր տէրութիւն մինչեւ ցփագանա և մինչեւ ցմասն ինչ օրիսսայ. նոյնպէս և անգղիացիք բաց 'ի պանկալա նահանգէն, ունին այժմ ընդ տէրութեամբ իւրեանց զերեւելի սահմանս փագանայ, և զեզերս ինչ օրիսսայ:

Արդ՝ այս մասն աշխարհի յարեւելից՝ ունի խոր սահման զաչհամ և զարաքան. յարեւմտից՝ զայլ յոլով նահանգս աշխարհին մուղալաց. 'ի հիւսիսոյ՝ զանմատչելի լերինս դիբեթեայ. իսկ 'ի հարաւոյ՝ զծովն: Տարածութիւն նորա հասանէ յ90 հազար քառակուսի մղոն աշխարհագրական: Իսկ զթիւ բնակչաց նորա [illegible] դնեն 15 միլիոն, բայց բնակիչք երկրին հաստատեն մինչեւ յ30 միլիոն, որք ընդ մեծի մասին են գործունեայք և օգտակարք թագաւորութեան: Այս մասն աշխարհի է առաւել գեղեցիկ արգաւանդ փարթամ և յառաջ բազմամարդ մասն տէրութեանն մուղալաց. և թէպէտ ոչ գտանին 'ի նմա բոյսք, և ոչ ընդ մեծագին քարինք, սակայն առաւել ձոխ է և հարուստ քան զամենայն հնդկաստան. ոչ միայն վասն վաճառականութեան ձեռագործաց իւրոց, այլ նաև վասն արգասաւորութեան երկրին պատճառեալ 'ի սոսթոյ և յառատութենէ անձրևաց, որ բաւական է դարմանել զայնչափ բազմութիւն բնակչաց:

Ընդ ժամս ժամս ընդ մեծամեծ փոփոխութիւնս եղեն 'ի սմա. է զի յաջողակ. և է զի ձախողակ. է զի միապետական էր. և է զի բազմապետական: Ի ժամուն՝ յորժամ միապետական էր, որ 'ի 1590. ագպար ինքնակալ պապն հռչակաւոր աւրանկզիպայ՝ զօրու ծանու ել 'ի վերայ, և 'ի 1595 զհամօրէն աշխարհն ընդ իւրեւ նուաճեաց: Իսկ այնուհետև պանկալա, փագանա, և օրիսսա միշտ եղեն ընդ տէրութեամբ մուղալաց, որք կառավարէին զնոսա 'ի ձեռն սուպա նապապաց, կամ ընդհանուր կուսակալաց՝ ընդ որովք էին բազում նապապք ստորինք: Այս կուսակալք ընդ ժամս ժամս եղեն 'ի հնազանդութեան տեարց իւրեանց, գրաւելով անձանց երբեմն և զանկախ իշխանութիւն, և երբեմն զլանալով հատուցանել զհարկս: Այլ յետ խորտակելոյ թահմաս գուլի խանին զինքնակալութիւն մողոլաց՝ այնուհետև եղեն սոքա ամենեքեան ինքնագլուխ տեարք աշխարհաց իւրեանց. և թագաւորութիւն մողոլաց յետ այնր մեծի հարուածոց զգլխովն զուրկ գտաւ 'ի գրամոց, և անկարացեալ 'ի վճարել մարաթայից ընդ դաշինն՝ զոր եդ ընդ նոսա, ետ նոցա հրաման հարկս արկանել 'ի վերայ պանկալայի, փագանայ, և օրիսսայ. Սովին պատճառաւ մտին յայն աշխարհ 200000 զօրօք, և հարստահարեցին

զաշխարհն

զՅՆ ամս իբրեւ 10 անը՟հատ, ոչ մեկնելով անտի՝ մինչեւ
հաւաքեցին դրամս բ՟զմս ։

Յետ այնորիկ յեւրոպացւոց անտի մտին անգղիացիք, որք բ՟զմ խռովութիւս յարուցին, եւ բ՟զմ պատերազմունս մղեցին ը՟ բնիկ զօրացն հնդկաց եւ ը՟ զօրացն հայոց՝ որք ՚ի կողմանէ հնդկաց պ՟տըզմ ետուն ը՟ նմ . եւ հուսկ ուրեմն սու սակաւ սակաւ զմեծ մասն այսր Յ՟ի՝ ը՟ տէրութ՟բ իւրեանց գրաւեցին . յորմէ ջ՟ղի բ՟զմ փոփոխութիւնք եղեն յՅ՟ին եւ յազգս հայոց անդ բնակելոց, կամիմք համառօտիւ ի՟ն պատմել աստանօր ։

Արդ՝ եւրոպացիքն մանաւանդ անգղիացիք յառաջագոյն ունէին կալուածս ինչ ՚ի ծովեզերեայ կողմանս որիսայ եւ պանկալայ . այլ եւ յայլ կողմանս աշխարհին հնդկաց . եւ առնէին անդէն զառեւտուրն . ունէին եւ ամրոցս ինչ, յորս պահէին պահապան զօրս առ ՚ի պաշտպանութե՟ ։ Յեղծանել միապետութեն մողոլաց, եւ ՚ի լինել բազմապետութե՟, մուծեալ էր ՚ի նահանգս յայսոսիկ սովորութի՟ ի՟ն վնասակար . երբ զի ո՟մ կուսակալք կալուածոց եւրոպացւոց օրինաւոր համարէին տալ տեղի ապաստանի հնդկաց, որք առ ՚ի զերծանել ՚ի պատժոյ՝ դիմէին առ նս ։ Եւ կաշառքն՝ զոր առնուին ՚ի նոցանէ ՚ի սոյնս պաշտպանելոյ նց՝ կափուցանէին զաչս առ ՚ի չտեսանելոյ զվտանգն՝ յոր արկանէին զօգուտս գլխաւոր տեարց իւրեանց ։ Արդ՝ միոյն ՚ի գլխաւոր պաշտօնատարաց անտի պանկալայի, առ ՚ի խոյս տալ ՚ի պատժոց անհաւատարմութե՟ իւրոյ, փախուցե՟լ գնաց ապաստան եղեւ առ անգղիացիս ։ Ընդ որ մեծապէս ցասուցե՟լ նաւապալին, ծանր զօրօք եկ՟ ՚ի Կ՟ալկաթայն՝ որ էր յայնժամ աւան ինչ փոքրիկ ը՟ ի՟րու՟ն անգղիացւոց . էառ զնա, եւ կորոյս դրեթէ զամ զօրս անգղիացւոց՝ որք կարգեա՟լ կային անդ ՚ի պահպանութե՟ ։

Զայս լուեալ մըրտար վաթսն՝ ծովակալ իշխան անգղիացի որ նորոգ հասեալ էր ՚ի Հնդիկս, հ՟ձ փոքրիկ գնդաւ միով զօրաց, եւ քլէյֆ զօրապետն՝ որ եւ յառաջագոյն ցուցե՟լ էր զքաջութե՟ իւր յառնուլն զգառնադիկ, դիմեցին անդր . յորս յաւելան եւ այլ անգղիացիք որք ցրուեա՟լ կային աստ եւ անդ . այլ եւ սակաւք ումանք ՚ի հնդկաց անտի որք թոշակաւորք էին անգղիացւոց ։ Եւ անցեալ զգետն ՚ի դեկտեմբերի ՚ի 1756, առին զկալկաթա, եւ տիրեցին այլոց եւս բ՟զմ վաճառատեղեաց . սակաւ զօրօք կատարեա՟լ յաղթութե՟ կանգնելով ը՟դէմ բազմազօր գնդի նաւապալին . եւ

խախորամանկ հնարիմացութ̃բ 'ի ծածուկ դաշինս կռեցին ը̃ Ճաֆար ալի խանին՝ որ էր սպարապետ Նորին Նապապի, և զայլ զօրապետս կաշառօք կուրացուցին. զի Նապապն գոլով բռնակալ ոմն արդէն ատելի էր զօրապետաց իւրոց, մանաւանդ Ճաֆար ալիին. ուստի սա խոստացաւ անգղիացւոց 'ի ձեռն միջնորդի որ էր մի ոմն յերևելեաց հայոց, տալ նց̃ 230 միլիոն ռուփին զոր խնդրէինն. միայն զի նմ̃ տայցեն զնապապութիւն : Եւ այսպէս 'ի ժամ պտզմին մեծ մասն զօրաց ոչ միայն չմտին 'ի պտզմ, այլ և մատնեցին զնապապ իւրեանց 'ի ձեռս անգղիացւոց՝ որք 'ի կալանս անդ սպանին զնա :

Ապա անգղիացիք զսուպայութիւն պանիկալայի ետուն ը̃ խոստմանն՝ Ճաֆար ալի խանին՝ որ էր գլուխ ապստամբաց. սա ոչ միայն ետ անգղիացւոց վճարս ինչ, այլև հաւանեցաւ ը̃ նմ̃ ազատութիս և չահատանութիս, և ը̃ այնչափ հասս զոր խնդրեցին անգղիացիք. Այլ փութով տաղտկացեալ 'ի ծանրաբեռն լծոյ անտի անգղիացւոց, գաղտ խնդրէր հնարս զերծանել 'ի ձեռաց նց̃. զոր ծանուցեալ անգղիացւոց՝ արգելին զնա յիւրում մայրաքաղաքի իբրև 'ի կալանս : Եւ փխնկ նր̃ կացուցին զխասըմ ալի խանն փեսայ նր̃. որ գնոյ էառ զիշխանութի զայն անհամար դրամս վճարելով : Սա ը̃ օրինակի աներոյ իւրոյ Ճաֆարին՝ չհանդուրժեալ լծոյ նց̃՝ ել 'ի հնազանդութե նց̃. յորմէ և դրդուեցաւ պտզմ 'ի մէջ անգղիացւոց և հնդկաց : Իսկ անգղիացիք անդրէն հաստատեցին 'ի սուպայութե պանիկալայի զՃաֆար ալին զոր 'ի կալանս ունէին. և նոքեանք մեղմով իմն և պէսպէս հնարիւք ոպ̃ թէ 'ի կողմանէ հարազատ Նապապին Ճաֆարայ, ելին պտզմաւ 'ի վր̃ խասըմ ալիին, հրապարակելով զնա իբրև բռնաւոր, և անիրաւութբ անցեալ 'ի տեղի Ճաֆարայ. թէպէտ յառաջագոյն նոյին իսկ անգղիացւոց էր կացուցեալ զնա իբրև հարազատ և հաւատարիմ նապապ :

Այլ խասըմ ալի խանն՝ ոչինչ ը̃հատ գոլով խորամանկութե̃ն յանգղիացւոց, այր ճարտար և հնարագործ, յառաջագոյն պատրաստեաց անձին գանձս անհամարս, մինչև ոմ̃ ասեն հաւաքեալ 900 միլիոն ռուփի. և ընտրեաց իւր զօրապետս և զօրս յազգէն հայոց, ք̃զի զօրացեալ և ծաղկեալ էին յայնմ ժմկի հայք 'ի պանկալա և 'ի շրջակայ կողմանս, որոց զօրութի և աներկիւղ քաջութի սոսա հաւաստեալ էր առ ամ̃ հնդիկս : Գլուխ սց̃ ամ̃ջն էր կօրկին խի̃

դրէ.

գրիգոր խանն, եղբայր մեծի պետրոս աղային յարութեան, այրն մեծախորհուրդ կորովամիտ առոյգանձն քաջազգոտի քաղցրաբարոյ խնամակալ և սէրելի ամ՟ն : Զսա կացոյց խասըմ ալին սպարապետ ամ՟ զօրաց իւրոց . և արար իւր նէբըբին և մահրեմ խորհրդական սակս իմաստուն կառավարութե՟ն . մինչև ոչ գործէր ինչ 'ի գործս քաղաքականս առանց խորհրդոց նր՟ . Ը՟ սովին սպարապետաւ էին այլ ևս զօրապետք երկու յազգէս հայոց, որոց անուանք են յարութ և մարգար . և այլ ոմն գեղամանեանցն՝ որ կոչէր սըմբու :

Յայնմ ապստամբութե՟ ժմկի՝ որ տևեաց ամս երիս, այնչափ էր իշխանութ՟ և ընդարձակ մ՟ծութ՟ն հայոց, մինչև ո՟չ երևէին ընևկ ազգ, և հարազատ սր՟ երկրին . իսկ մողոլք և հնդիկք՝ իբրև օտարականք և նոցա ստրուկք, մինչև համարձակիլ 'ի մախսուտապատ բաղմամարդ մայրաքաղաք պանկալայի, ամ՟ մեծամեծացն հայոց դրօշս կանգնել 'ի վ՟ր տանց իւրեանց նշանաւ խաչի . Նաև բաղմաց 'ի նցէ կեղեքել և չարաչար հարստահարել զժողովուրդս և զաղքատ հնդիկս քաղաքաց և գիւղօրէից . յանդգնել իշխանութ՟ կօրկին կմ՟ գրիգոր խանին, և իշխանութ՟ իւրեանց՝ զոր 'ի դոյզն ժմկի ստացան : Այլ այս համարձակութ՟ն և ընդարձակութե՟ն ազ՟՝ ոչ սակաւ զայրացուցին և նախանձուկս էարկ 'ի սիրտ մողոլդկաց, և 'ի սիրտ մեծամեծացն հնդկաց . և գրգռեաց հակառակութե՟ն ետուկէլ ըն՟դեմ հայոց . մանաւ՟ ըն՟դեմ կօրկին խանին, որում այնչափ իշխանութե՟ տուեալ էր նապապն . և որոյ իշխանութե՟ն այնչափ յանդգնեցան ժղ՟դք հայոց :

Ուստի ստէպ զանգատ և բողոք բառնային առ խասըմ ալի խանն զհայոց . այլ նր՟ ջ՟ղի բոլորովին էր ապաստանել 'ի հայս վ՟ս քաջութե՟ նց՟, և մանաւանդ առ սիրոյ կօրկին խանին, զնց՟ չարախօսութե՟ն մերժէր, և զհայս արդարացուցանէր : Նոյնպէս և պետրոս աղային եղբայր նր՟՝ սիրելի էր յոյժ և մեծարգի յաչս նապապին յռ՟ջ ք՟ զանցանելն 'ի կողմն անգղիացւոց, մինչև երբեմն 'ի գնալն յայցելութե՟ նմ՟, յոմ՟ ք՟ղքս է՟ որ անցանէր զճնպրհայն, զամ՟ բանտարկեալսն հրամայէր արձակել . վ՟յ սուհնրկ ամ՟ քաղաքապետք և դատաւորք բողոք բարձեալ զանգատ գրեցին առ նապապն . որոյ ամ՟ն արար պ՟ինի, թէ նր՟ արարք և գործք, են իմ արարք և իմ գործք .

Յետ բզ՟մ պտ՟զմաց եւ ապստամբութե՟նց՝ զոր առնէին աստ եւ անդ զօրք եւ զօրավարք Հայոց 'ի կողմանէ Հնդկաց ընդդէմ անգղիացւոց, ը՟ խորհրդոյ եւ ըստ հարգելոյ կորկին խանին, պետրոս աղայն եղբայր կորկին խանին՝ էանց 'ի կողմն անգղիացւոց 'ի վերջին ժամս ապստամբութե՟ խասըմ ալիին. զի եւ յռ՟ջ եւս կուսակից էր նց՟ 'ի ծածուկ եւ ձեռնտու. ք՟զի զօրաց նց՟ որք էին 'ի նաւսն՝ եւ չունէին համբարս կերակրոց, սա բզ՟մ անգամ պէսպէս հնարիւք ինքնին տանէր նց՟ կերակուր. եւ այլ բզ՟մ իրօք նպաստամատոյց լինէր կարեւոր պիտոյից նց՟՝ զոր ոչ է տեղւոյս ը՟արձակ պատմել. մինչեւ նոցին եւս անգղիացւոց երախտապարտ խոստովանել զանձինս նմ՟, բերանով՝ եւ նաեւ 'ի գիրս պատմութե՟ իւրեանց՝ թէպէտ ոչ ը՟ արժանեաց: Զի թէ 'ի յանձուկ ժամս ինչ եւ 'ի դիպուածս չէր օգնել՟ նմ՟, դժուարին էր յոյժ մնալ եւ յաղթութ՟ի անգղիացւոց, եւ առանց եւս պտ՟զմի ինքնին հարկադրե՟լ հեռանային 'ի պանկալայէ:

Զկնի անցանելոյ պետրոս աղային 'ի կողմն անգղիացւոց, երկիւղն նց՟ 'ի կողմանէ պտ՟զմին էր միայն 'ի կորկին խանէն. ք՟զի տեղեակ եւս էին առն իմաստութե՟ եւ քաջութե՟, վ՟զի 'ի վ՟ր բզ՟մ այլ նենգութե՟ց զոր գործեցին 'ի կորուստ Հնդկաց, զայս եւս յաւելին, բանսդաւէին զպետրոս աղայն ստէպ ստէպ գրել եւ յորդորել զեղբայր իւր զկորկին խանն՝ անցանել 'ի կողմն անգղիացւոց. որ՟ոյ զի ծանուցեալ նաւաբին զայս երթեւեկութե՟ թղթոց՝ կմ՟ սպանցէ զկորկին խանն, եւ կմ՟ նա ինքնին փախուցեալ անցցէ 'ի կողմն իւրեանց: Բայց կորկին խանն ոչ ունկն առնէր բանից եղբօրն՝ գիտելով զբռնադատելն նր՟ յանգղիացւոց, եւ ոչ թաքուցանէր զայն ամ՟ թուղթս, այլ ինքնին բանայր մի առ մի 'ի ցոյց հաւատարմութե՟ իւրոյ, եւ ընթեռնոյր առաջի նաւաբին: Այլ սակայն նաւաբին յառաջագոյն զժգունեալ ը՟ անցանել պետրոս աղային 'ի կողմն անգղիացւոց, եւ միանգամայն կասկած երկիւղի առեալ յանձն իւր զնմանէ, մանաւանդ 'ի սադրելոյ նախարարաց իւրոց՝ որք պատճառս քսութե՟ առեալ զայն՝ անդադար չարախօսէին զնմանէ, ոչ վստահանայր 'ի նա հաւատարիմ սրտիւ ոպ՟ յռ՟ջն: Աւասիկ 'ի վերջին բաղխման նոց՝ ոչ եւեթ զկորկին խանն մտանել 'ի բանակն եւ պտ՟զմել ը՟ անգղիացիս, այլ ը՟ իւր կալաւ 'ի մունկիր քաղաքն՝ որ է 'ի փաթանայ նահանգին:

Այս վերջին պտ՟ղմ 'ի դերև եհան զամ՟ Հնդաց և զգործս, զոր մինչև ցայնժամ լռ՟մ. քաջութ՟ գործեաց կօրգին խանին յօգուտ Նաւապալին, և 'ի կորուստ անգղիացւոց, և ցրուեաց և ը՟ունայնացոյց զայլ եւս առաջարկուն խորհրդոց ն՟ր զոր ունէր 'ի սրտի առնել յօգուտ և 'ի մշտնջենաւոր պարծանս ազգին իւրոյ ը՟ ամ՟ ծ՟՝ յետ յաղթելոյ և վտարելոյ անտի զանգղիացիս ։ Այդ՝ վերջին բաղխումն և պտ՟ղմն եղև արտաքոյ մախսուտապատ քաղաքին՝ որ է մայրաքաղաք պանկալայ . յորում բանակ անգղիացւոց էր իբրև 7 . 8 հազար զօրաց, իսկ խասըմալին՝ անբաւ անհամար, բայց առանց սպարապետի, անգլուխ, և երկպառակեալ, ք՟զի յարութ՟ խանն կիր զօրապետն՝ որ՟ 'ի սկզբանէ հետէ հակառակ էր և թշնամի կօրգին խանին՝ նոյնպէս հակառակ էր և սոմրու զօրապետին, վ՟յ 'ի ժամ պտ՟ղմի խնդ. արարեալ ը՟ սոմրուին և ը՟ մարգարին, նախ զսոմրու հաւանեցոյց միայն ելանել ը՟դէմ անգղիացւոց, որ՟ զի 'ի վաստակիլ զօրաց ն՟ր՝ այլ զօրապետք և զօրք 'ի տեղի ն՟ր յ՟ռջ մատիցեն, և այնպէս ընդերկարելով զպտ՟ղմն՝ դիւրաւ յաղթեսցեն անգղիացւոց . այլ խնդ՟ք և կամք ն՟ր էին պարտութ՟ սոմրուին ։

Իսկ սոմրու ոչ գիտելով զինչ զնենգութ՟ ն՟ր, և գալով ուսեալ և վարժեալ 'ի պտ՟ղմական արուեստս եւրոպացւոց, քաջութ՟ մարտեաւ ը՟ անգղիացիս, մինչև մերձ 'ի պարտել զն՟ս, այլ զինի վաստակեալ, ստէպ ստէպ պատգամ յղէր առ մարգար, և առ յարութ՟. գալ յօգնութ՟ ն՟ր ։ Բայց յարութիւն առ մախանաց սրտին զոր կրէր առ նա, ոչ թող տայր ումեք գնալ, որ՟ զի 'ի պարտութ՟ն մատնեսցի ն՟ա, ինքն յարձակեալ 'ի վ՟ր անգղիացւոց, ժառանգեսցէ զփառս յաղթութ՟. բայց ոչ եհաս որում ցանկայրն ։ Քանզի թէպէտ վաստակեալ էին յոյժ յայնմ սաստիկ պտ՟ղմի սակաւ զօրք անգղիացւոց, սակայն 'ի լուր խոստման առ առատ վարձուց՝ զոր խոստանայր զօրավարն ն՟ց՝ եթէ դէթ այլ ևս կէս ժամ պտ՟ղմեսցին, քաջալերեալ պնդեցին զանձինս, և ոգւով չափ մարտուցեալ 'ի դոյզն ժամանակ՝ յաղթեցին զօրաց սոմրուին ։ Իսկ 'ի լսելն զայն լուր պարտութե՟ զօրաց յարութ՟ խանին և մարգարին, առ հասարակ զարհուրեալ 'ի փախուստ դարձան և ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս ։

Զայն լուեալ Նաւապալին անհնարին տրտմութ՟ և դառնութե՟ պաշարեցաւ . առա 'ի դրդուելոյ մեծամեծ՝ իշխանաց հնդկաց, որք անշուշտ 'ի նենգութէ կօրգին

խա

խանին հաստատելին լինել զայն պարտութն, եւ ապանանել զայրն հզօր յերթալ նր̄ յաւուր միում 'ի Ճանապարհ անդէն ամենեւին · ը̄ որոյ մահ եւ ինքն իսկ նապապն յետոյ ապրջացաւ եւ սուգ եղաւ · յորժամ ետես զինքն զրկեալ 'ի սիրելոյն, եւ 'ի զրաջ խորհրդականէն · որ առանց խորհրդոյ նր̄ ոչ էր ուսեալ կառավարել, եւ ոչ առնել ինչ :

Ահա այս եղեւ կատարած մեծի պատրաստութե զինուց եւ զօրաց Խասըմ Ալիին · եւ այս եղեւ վախճան ձախութե եւ իշխանութե մերոյն՝ որոց թէ փոյթ կալեալ էր յանձին բերել զցանկալի միաբանութին առ իրեարս, եւ խնամատուն գութ եւ սէր առ հնդիկս, առաւել եւս արդեօք պայծառ պերճութ̄ անոանէաք այժմ զազգ մեր վայելել յայն տէրութե եւ յիշխանութե՝ զոր ժառանգեն անգղեացիք · եւ տր̄ համօրէն Եին եւ վաճառականութե լեալ ը̄դարձակագոյն եւս ք̄ զանգղիացիս :

Այլ զկնի՝ Խասըմ Ալին ժամ դիպող գտեալ, գերծոյց զանձն հզ̄ գանձիւն իւրով զոր կուտեալ էր · որ քաջալեր եղեւ նմ՝ եւ յոյս 'ի խնդրել զվրէժ յանգղիացւոց : Եւ դէմ եդեալ գնաց առ Նապապն պնարեայ կմ̄ ելլահապատայ, որ էր փոխարքայ մեծ Ինքնակալին մուղալաց :

Իսկ անգղիացիք զայս օրինակ կալեալ զտէրութե պանգալայի, կարեւոր վարկան առ ժմկ մի պահել ըզնախնի սովորութի երկրին · կառավարելով եւ հաւաքելով զմուտս ը̄ անուամբ սուպայլին՝ զոր ինքեանք կացուցանէին · որում եւ ամի ամի մասնաւոր հաս ինչ կարգեալ էին · որ եւ առ արտաքս ցուցանէր զանձն իշխան երկրին · այլ ներքին կառավարութին բոլոր կախեալ կայր յատենէ անուն անգղիացւոց որ 'ի կալկաթա : Եւ այնուհետեւ ընկերութին վաճառականաց անգղիացւոց՝ թէպէտ առ երեւոյթս երեւէր իբրեւ վճռական, այլ 'ի ներքուստ իւրով խոհեմութբն երկայնմտութեն եւ հնարիւք զիշխողին փոխեալ, եղեւ տր̄ եւ հրամանատար երկրին · եւ մատակարար մտից նր̄ 'ի ձեռն վճռականութե · որով դրեթէ եւ զբովանդակ վճռականութի երկրին յինքն գրաւեաց · եւ վաճառականութի ազգիս հայոց՝ որք առաջին եղեն 'ի ծաղկեցուցանել զայն յԵին հնդկաց, նուաղեցաւ մեծապէս :

Այսչափ ինչ առ հարկ սակս տիրելոյ անգղիացւոց՝ եւ նուաղութե իշխանութե հայոց բնակելոց անդէն, առ որոյ կատարեալ տեղեկութի՝ թէպէտ բազում ինչ կայր

կայր պատմել, այլ ոչ ներէ մեզ համառօտութիւն բանիցս : Այժմ ստորագրեսցուք զերիս նահանգսն :

Յօդ ա. Պանկալա :

Պանկալա է մի ՚ի մեծամեծ նահանգացն մողոլաց. իսկ արգասաւորութեն և առատութեն երկրի նա՛ զանցանէ ՚ի զամ նահանգս : Յարեւելից՝ սահմանակից է աշխարհն Չինի. յարեւմտից՝ պեհարայ նահանգին. ՚ի հիւսիսոյ՝ փողանայ, իսկ ՚ի հարաւոյ՝ ովկիանոսի, ուր գանգէս մտանէ ՚ի ծով : Մուտք սորա առ ժամուք յորում տիրեցին անգղիացիք, համարէր 332 միլիոն ռուփի. որ առնէ ոսկի վենետիկեան 7,272,727. յորմէ 3,727,272 ոսկի որոշեցաւ ՚ի ծախս առ ՚ի կառավարութեն և ՚ի պաշտպանութեն երկրին. և 27272 ոսկի սուպային կա՛մ նաւապետին. ուստի և ընկերութեն անգղիացւոց՝ մնայր գեռևս 2,727,272 ոսկի. զոր ամ տարեւոր մասին գրաւեալ էին ՚ի վաճառս. բայց քանի մի միլիոն դրամս առաքէին և յանգղիա. այլ այժմ առ սակաւ սակաւ նուազեցուցանեն ըզմուտս նաւապետին, և ինքեանք սեփականեն զամ՛. մինչ զի ոչ Թուի, յետ ժամկաց ինչ և զնաւապետութիւնն բառնայցեն անտի, և ինքեանք միայն թագաւորեսցեն :

՚ի պանկալա ոչ և յայլ տեղիս ինչ փոքր փոքր դրամոց կա՛մ փողոյ, ՚ի գործ ածեն մանրիկ քարինս բերեալ այլուստ. նման այնմ՝ զոր կոչեն ՚ի կոստանդնուպօլիս խալթըր աղանձուխաւ. իսկ հնդիկք կոչեն զայն Գովրի. և Օրօջ. որոց վաթսունն և երբեմն ութսունն՝ առնէ մի փող. ՚ի զի պանեանք՝ լումայափոխք հնդկաց Չինի՝ որք բերեն տան զայս գովրի, միշտ փոփոխեն զգինս նո՛ց ՚ի պատճառս անյագ շահախնդրութեանց. ուստի ՚ի գնելն զառօրեական պէտս տանց, բազում դժուարութիւն կրեն՝ ՚ի մեծամեծ պարկս և ՚ի զամբիւղս շրջեցուցանելով զայն : Բազումս ջանացին անգղիացիք մուծանել փոխ այնր պղնձի դրամս. բայց ոչ կարացին : Երկիր պանկալայի առաւել դաշտային է քան թէ լեռնային. սակաւք գտանին անդէն լերինք ՚ի հիւսիսային և յարեւելեան կողմանս. իսկ մնացեալ երկիրն է դաշտավայր. առ հասարակ սերմանեալ և ծառատունկ. յորս բազմադիմակ են տունք գիւղականաց սփռեալ աստ և անդ :

անդ։ Գտանին 'ի պանկալս և գազանք, ո՛չ առիւծանման վագր, և վայրենի գոմէշ, և կոկորդիլոս ըղ՛մ առ գետովք, ո՛չ և յայլ նահանգս։ Իսկ զայլ համգամանաց երկրին պանկալայի խօսեցաք 'ի ներածութե անդ Մծին մողոլաց․ քզի զոր միանգամ անդէն գրեցաք վ՛ն հարաւային կողման մողոլաց, ոչ միայն պարտ է իմանալ զարքան Մծէն, այլ նաև զպանկալայէ, զօրիսայէ, և զփագանայ։ Գըլխաւոր տեղիք սորին նշնգի՝ են հետագայքդ։

Գուլտոր։ Է կալուած և վաճառատեղի հոլանտացւոց՝ յափն Կանջահար գետոյն 'ի հարաւոյ․ մերձ 'ի բերան նր, որ ելանէ 'ի լերանցն օրիսայ նշնգին։ Կալկաթա․ զոր ոմանք գրեն Գալկաթա։ Է քղք մեծ և գլխաւոր տեղի անգղիացւոց․ 'ի վ՛ր միոյ 'ի վտակաց գանգեսի․ որ այժմ է մայրաքղք պանկալայի․ քղի զվայելչութի և զմեծութի մախսուտապատ նախնի մայրաքղքին, առ սակաւ սակաւ 'ի սմ՛ փոխադրեն անգղիացիք․ ո՛չ արդէն զդատաստան նաւապին՝ որ 'ի լեզու հնդկաց կոչի Քաչարի առ սա փոխադրեցին․ ուր բաց յանգղիացւոց դատաւորաց, գոյ և հնդիկ դատաւոր․ որ դատէ զազգ նց։ Օդ քղքիս յոռի է և վնասակար, որոյ բնակիչք 'ի զգուշութի զանազան հիւանդութեց՝ յաճախելոց անդէն զորոց գրեցաք 'ի ներածութե անդ, ոչ կարեն ազատել յայնց․ Ջուր գետոյն է աղեհամ․ և շրջակայ սահմանք նր բաց 'ի սակաւ ձեռագործաց՝ այլ ինչ ոչ բերեն։ Շրջապատ նր է իբրև 9 կամ 10 մղոն․ և թիւ բնակչաց նր՝ յառաջագոյն էր իբրև վեց հարիւր հզր․ այլ յետ այնորիկ և ևս բազմացաւ, և օր ըստ օրէ բազմանան յոյժ որով և քղքն հետզհետէ տարածեալ ընդարձակի։ Բնակիչք նորա ըստ առաւել մասին են հնդիկք կռապաշտք և մահմետականք․ են անդ և բազմութի օտար ազգաց՝ ո՛չ անգղիացիք՝ փորթուգալցիք՝ և առաւել քան զսոսա փորթուգալք, ըստ մեծի մասին սերեալք անդէն 'ի նախնի փորթուգալաց․ յորս շատք ևս այնք են՝ որք 'ի բնիկ հնդկաց անտի դարձեալ 'ի քրիստոնէութի խառնեցան յազգն փորթուգալաց։

Գտանին անդ և բազմութի յազգէս հայոց, յորս են վաճառականք երևելիք և փարթամք․ 'ի նորումս յամին 1781, և 1782 առաւել բարգաւաճեալ ծաղկեցան, և շինեցին տունս հոյակապս։ Յայս քղք պայծառացաւ և մեծաւ մեծ իշխանն և վաճառականն փարթամ և անուանի պետրոս յարութենեան եղբայր Կօրնէլին խանէին այր ազնուական զգօն և արդարակորով ։ Բնակիչք քաղաքիս գրեթէ առ հարիւր պարապին 'ի գործ վաճառականութեան ․ ուստի սակս անչափ բազմութեան վաճառականացն՝ անբաւ են 'ի նմա գանձք և հարստութիւնք ․ վաճառք և վաճառատունք կան Գօգէք ․ և երթևեկք մեծամեծ նաւուց, բեռնաւորեալ զանազան վաճառօք ։ 'Ի համօրէն քաղաքին երկու են միայն եկեղեցիք ․ մին հայոց, և միւսն լատինացւոց՝ ընդ խնամակալութեամբ օգոստինեան կրօնաւորաց ։ Ունի և դղեակ մեծ շինեալ յանգղիացւոց ․ յորոյ 'ի շինութեն՝ ծախեցան 5 միլիոն արծաթ ռուփադ ․ և ոսկի վենետիկեան 1,818,181 ․ այլ այս դղեակ է անօգուտ վասն քաղաքին զի ոչ կարէ պաշտպանել նմա ։ Բայց 'ի սմանէ՝ ունի այլ ևս երկու ամրոցս աստի և անտի գետոյն ․ որոց մեծագոյն օգուտ այս է ․ զի ընդ մէջ սոցա ունին անցանել ամենայն նաւք՝ որք գնան 'ի Կալկաթա ․ և յայլ ամենայն կալուածս եւրոպացւոց, որք են 'ի վերնագոյն կողմանս Ծլին ։

Մուտք նաւահանգստին Կալկաթայի վտանգաւոր է յոյժ, 'ի պատճառս գետոյն՝ որ է առաջին ճիւղ Գանգեսի ․ որ ընդարձակեալ ծաւալի յոյժ ․ մանաւանդ 'ի խառնելն ընդ նմա և այլոց վտակաց ․ մինչև առաւել մօտհեալ 'ի Կալկաթայէ՝ լինի ցամաք երկուց կողմանց որոց նաւուն ընդ մէջ նորա ։ Այս գետս բարձեալ բերէ աւազ և կաւ ․ որք 'ի անկիւնս տեղիս գիզացեալ լեռնանան ․ և 'ի յորդել անձրևաց փոփոխին անդադար ․ և վտանգաւորեն զնաւս ․ յայն սակս զկնի անձրևաց միշտ առաքին քննիչք, 'ի զննել զամենայն վայրսն ․ և դնել նշան յաւազուտ տեղիս 'ի զգուշութիւն նաւարկողաց որք և առաջնորդեն նաւուց մինչև ցքաղաքն՝ ուր չիք ևս վտանգ ։ Բայց յայս աւազուտ տեղեաց՝ որք յար 'ի փոփոխման կան, են ուրեք ուրեք և տեղիք ծանծաղք կաւայատակք, և 'ի տեղւոջ ուրեմն բլրակերպ գիզացեալ է կաւն ․ և կարծրացեալ աստի և անտի, և միջոցն ընդ որ մարթ է նաւարկել, անձուկ յոյժ, և ջուրն սակաւ ․ զի խորութիւն նորա հազիւ հասանէ ցերիս գրկաչափս ․ ընդ որ դժուարին է նաւի մեծ և յաջողակ հողմով անվտանգ անցանել ․ զի թէ դիպի ինչ ընդհարցի նաւն 'ի մի կողմն այնր կաւակոյտ բլրոյ, որ գոլով ողորկ, խրի և իսկ կործանի ։ Բազում տառապեցան անգղիացիք 'ի դիւրացուցանել զճանապարհ այսր նաւահանգստի, այլ ոչ կարացին ։

Վտանգաւոր է ևս 'ի ժամս մակընթացութեան ծովուն

ով

ովկիանոսի, որ սաստիկ լինի յոյժ 'ի ծննդեան եւ 'ի լրման լուսնի. մանաւանդ յայն ամիսս՝ յորս նուազի գետն. եւ ոչ կարէ յորդութիւն՝ ըղանուն մակընթացութեն խափանել. ջր̃ 'ի յունվարի 'ի փետրվարի եւ 'ի մարտի, որոյ ալիքն եւ եթ զարհուրեցուցանէ զնաւսն. ձգին ջուրք ովկիանոսի իբրեւ աշտարակ բարձրացեալք, յանկարծակի անհնարին ուժգնութբ̃ դիմեն յայն ծոց լայնածաւալ 'ի գետն կոյս. ուր թէ գտցեն նաւակք յեզերս, հարկէ̃ բառնալ 'ի ցամաքն՝ խորտակեն զնաւսն. ուստի յայնմ պահու նաւակք կամ մտանեն 'ի ծոց ինչ փոքր գետոյ, եւ կամ կան 'ի մէջն անդ՝ հեռի յերկուց կողմանց գետոյն, տարածեալ ունելով զթիակսն 'ի ծովն. զորս լեռնացեալ կոհակք ովկիանոսին՝ թէպէտ մեծ̃ տանեն յանկարծ թօթափել ցոր վայր ժամանէ բառնուլ նոյ, այլ անվնաս գերծանին. միայն զի առ նոյ բաւական վտանգ եւ երկիւղ արկանէ 'ի սիրտ ճնպհորդաց: Այս մակընթացութիւն յառաջնում աւուր ծննդեան եւ լրման լուսնի սաստիկ լինի յոյժ. որ եւ տեւէ մինչեւ ցերիս աւուրս. այլ յերկրորդում եւ յերրորդում աւուր՝ առ սակաւ սակաւ նուազի: Յայս ծոց ծովու գտանի թէքէէ. որ է ազգ ինչ ծովային ժժմանց՝ մեծամեծ յոյժ. որոց նման ոչ գտանի 'ի միջերկրական կամ յայլ ծովս. զի հնգտասանիկ եւ առաւել մեծ են քան որք լինին 'ի ծովս մեր:

Սիրամփուր. որ կոչի եւ Ֆրէտէրէք նակար: Ի վաճառականաց հիմնեցաւ 'ի դանիաց 'ի 1756 երբեւ 18 մղոնաւ հեռի 'ի կալկաթայէ. առ 'ի փոխադրել անդր զգանձս իւրեանց. որք 'ի վաղ ժամուց եկեալ բնակէին յայլ կողմն Ծէն. ուր չէին կարող դարմանել ըզկեանս: Այլ այսու տեղի մինչեւ ցայժմ չառաջացաւ ինչ հաստատութեն. եւ ոչ երեւի ոչ երբէք եղիցի շահաբեր իմն տեղի:

Ջանննաքար, կամ Ղանննաքէր: Քղք̃ երբեւ 7 մղոնաւ եւ կիսով 'ի վերոյ ը̃դ տէրութ̃ գաղղիացւոց: Նաւահնգիստ նոյ պատուական է յոյժ, եւ օդն բարի. որչափ ինչ մարթ է լինել յափն գանգեսի: 'Ի շինել անդէն շինուած ինչ հաստատուն, հարկ է անդ եւ յայլ կողմանս պատնկալեալ, նախ ցից վարել ը̃ երկիր խոր առ խոր. եւ ապա 'ի վ̃ր զհիմանս արկանել. վ̃ զի 'ի բրել անդ զերկիր երբեւ երկու կամ չորս ոտնաչափ միայն բղխէ ջուր: Շրջակայ վիճակ նոյ որոյ շրջապատն է երբեւ 3 մղոն եւ եթ, լի է արուեստաւորօք. որք յետ ասպատակութ̃ մարաթայից, փախեան անդր 'ի խնդրել իւրեանց տեղի ապաւինի ։ Գործեն անդէն թաշկինակս անբաւս, և այլ կտաւս. սակայն և այնպէս վաճառականութի՛ն նր՟ ստորին է ք՟ զայլ երևելի տեղեաց ։ Յայս ամ՟ քղքս պանկալայի՝ որք են ը՟ ձեռուք՟ այլոց ազգաց եւրոպացւոց՝ 'ի լինելն երևելի ինչ հակառակութե՟ կմ՟ վիճի՝ 'ի դատաստանս անգղիացւոց վճարին, սակս գոլոյ նց՟ տր՟ երկրին ։

Գանտէլ ։ Յառաջագոյն էր սա տեղի փորդուգալաց. ուր դեռևս տեսանի դրօշ նց՟. ք՟զի գոյ մենաստան մի օգոստինեան կրօնաւորաց, որոց սովորութի՛ է կանգնել զդրօշակս փորդուգալաց. այլ այժմ սակաւամունք գտանին անդ 'ի փորդուգալաց ազգաց, որք իսպառ մոռացեալ են զհայրենիս, գոլով և ինքեանք լքեալ անխնամ 'ի թշուառութե՟ իւրեանց ։

Հուկլի, կմ՟ Հուղլի ։ Քաղաք մեծ 'ի հարաւակողմն մախսուտապատայ և տագայի. կառուցեալ առ գետով. որոյ բնակիչք ը՟ մեծի մասին են հնդիկք կռապաշտք ։

Սէյտապատ ։ Քաղաք առ վտակաւ գետոյն գանգէսի՝ որ կոչի Պոկրատ ։ Բզմ՟ ժղվդ՟ դոն անդէն 'ի կռապաշտից, 'ի մահմէտականաց, և յազգէս հայոց. որք ունին և եկեղեցի. և է սա վաճառատեղի՝ յորում են բզմ՟ արուեստաւորք և գործաւորք մետաքսեայց՝ սակս հայոց վաճառականաց ։

Խասըմպազար ։ Քաղաք առ նոյն պոկրատ գետով. որ ը՟արձակեցաւ յոյժ 'ի քանդելն երկուց այլոց քաղաքաց. ք՟ Մայտուն. և Բռունա մէհօշ անուամբ քղքին. գլխաւոր վաճառք սր՟ է մետաքս ։ Յառաջին ժմկս ոտ՟ և պէշկինդ իսկ վայրէ, գոյր անդէն հաստատեալ ինչ ժողովրդեան հայոց. այլ զկնի սփռեցան 'ի զանազան տեղիս ։

Մախսուտապատ ։ Քաղաք երևելի. 'ի հիւսիսոյ կողմանէ խասըմպազարայ, առ նովին պոկրատ գետով. որ 'ի նախնումն էր մայրաքղք համօրէն մեծի նահանգին պանկալայի ։ Քաղաքք որք են ը՟ մէջ սր՟ և սէյտապատայ. որ՟ խասըմպազար, ևն, չեն այնչափ ինչ զատեալ 'ի միմեանց, այլ գրեթէ կից ը՟ միմեանս. որով թուէին լինել մի քղք ։ Ձգի սա ը՟երկայն առ գետովն իբրև 8 մղոն. յորում է բնակութի՟ և աթոռ սուպա նապապին կմ՟ նազիմայ պանկալայի ։ Բնակիչք նր՟ գրեթէ առ հասարակ են հնդիկք կռապաշտք և մահմէտականք. յորում են մեհեանք մեծաշէնք և մանուանք բզմք. և 300 մզկիթք. յաճախեն անդ վաանդր 'ի խնդրել իւրեանց տեղի ապաւինի : Գործեն անդէն Թաշկինակս անբաւս, և այլ կտաւս, սակայն և այնպէս վաճառականութիւն նորա սոորին է քան զայլ երևելի տեղեաց : Յայս տեղ քաղաքս պանկալայի՝ որք են ընդ ձեռս այլոց ազգաց եւրոպացւոց՝ 'ի լինելն երևելի ինչ հակառակութիւն կամ վէճ՝ 'ի դատաստանս անգղիացւոց վճարին, սակս զօրոյ նոցա որ երկրին :

Գանփէլ : Յառաջագոյն էր սա տեղի փորթուգալաց, ուր դեռևս տեսանի դրօշ նոցա. քանզի գոյ մենաստան մի օգոստինեան կրօնաւորաց, որոց սովորութիւն է կանգնել զդրօշակս փորթուգալաց. այլ այժմ սակաւոմանք գտանին անդ 'ի փորթուգալաց աղքատք, որք խաղաղ մնացեալ են զհայրենիս, զօրով և ինքեանք լեալ անխնամ 'ի Թշուառութեան իւրեանց :

Հուկլի, կամ Հուղլի : Քաղաք մեծ 'ի հարաւակողմն մախսուտապատոյ և տագայի. կառուցեալ առ գետով. որոյ բնակիչք ըստ մեծի մասին են հնդիկք կռապաշտք :

Սէյտապատ : Քաղաք առ վտակաւ գետոյն գանգէսի՝ որ կոչի Պոկրատ : Բազում ժողովք գոն անդէն 'ի կռապաշտից, 'ի մահմետականաց, և յազգէս հայոց. որք ունին և եկեղեցի. և է սա վաճառատեղի՝ յորում են բազում արուեստաւորք և գործաւորք մետաքսեայ՝ սակս հայոց վաճառականաց :

Խասըմպազար : Քաղաք առ նոյն պոկրատ գետով. որ ընդարձակեցաւ յոյժ 'ի քանդելն երկուց այլոց քաղաքաց. այսինքն Մոյտոռի. և Ռոսմա Պէհօլ անուն քաղաքին. գլխաւոր վաճառք սորա է մետաքս : Յառաջին ժամանակս և պէշէնգ իսկ վճայէ, զոյր անդէն հատուցած ինչ ժողովրդեան հայոց. այլ զկնի սփռեցան 'ի զանազան տեղիս :

Մախսուտապատ : Քաղաք երևելի. 'ի հիւսիսոյ կողմանէ խասըմպազարայ, առ նոյն պոկրատ գետով. որ 'ի նախնումն էր մայրաքաղաք համօրէն մեծի նահանգին պանկալայի : Քաղաքք որք են ընդ մէջ սորա և սէյտապատայ. կը խասըմպազար, էն, չեն այնչափ ինչ զատեալ 'ի միմեանց. այլ գրեթէ կից ընդ միմեանս. որով թուին լինել մի քաղաք : Ձգի սա ընդ երկայն առ գետովն իբրև 8 մղոն. յորում է բնակութիւն և աթոռ նուապ նապապին կամ նազիմայ պանկալայի : Բնակիչք նորա գրեթէ առ հասարակ են հնդիկք կռապաշտք և մահմետականք. յորում են մեծեանք մեծամեծք և մանուկք բազումք. և 300 մզկիթք. յաճախեն անդ վաճառականք հայոց 'ի նշեալ առևտրուն. քզի յայս շրջակայ սահմանս գանգէսի, և 'ի ձորս մախսուտապատայ, և 'ի քղքս որք առ նովաւ, որպէս 'ի սէյտապատ և 'ի խասըմպազար, և մանաւանդ 'ի նոյն իսկ 'ի մախսուտապատ, առաւել մասն բնակչաց են արհեստաւորք մետաքսագործք. որոց ոմանք պատրաստեն թելս, և զլաւն 'ի յոռւոյն զատանեն, և ոմանք նիւթեն և մանեն: Ուստի սա է առաւել հռչակաւոր վաճառատեղի մետաքսի 'ի բոլոր պանկալս. և մեծագոյն մասն մետաքսին 'ի շրջակայ գաւառէ սորին եղանէ :

Անդ գործեն բազմապատիկ մետաքսեայ կերպասս, և բամբակի բեհեզս, որք սփռին ընդ համօրէն ասիա, այլ երևելի մասն մետաքսեայ կերպասուց գնան 'ի կողմանս ասիոյ, և 'ի դէլլի մայրաքղք մողուլաց: Իսկ յեւրոպիա առաւել գնայ մետաքս անգործ իբրև 150000 օխայ, 'ի խոշոր և 'ի մանրին տեսակէն. որ քզի ոչ առնու ինչ գոյն պայծառ և կենդանի, եւրոպացիք 'ի կիր առնուն զայն միայն 'ի ներքին նիւթ ծաղկեայ դիպակաց՝ որ արտաքուստ ոչ երևի: 'Ի գաղղիա արգելեալ է բնաւ տանիլ անտի կերպաս, իսկ 'ի հիւսիսային կողմանս եւրոպիոյ՝ տանին սակաւ ծիրանի կերպասս, այլ թաշկինակ բզմ յոյժ :

'Ի քղքի աստ է տունն անուանի Ճիկիսէթ վաճառականին և լումայափոխին հնդկաց՝ այն է Սառաֆ. շինեալ բարձր պարսպաւ, և հարուստ ապարծուք. յորում բնակին այժմ որդիք և թոռունք 'ի սերնդոց նր. որք ունին և այլ բզմ տեղիս և տունս 'ի մէջ քղքին. և արտաքոյ քղքի ագարակս և կալուածս: Սա էր լումայափոխ ինքնակալին մողոլաց. որում վր հաւատարմութեան և անչափ փարթամութեան տայր նապապն զթագաւորական հարկս ժողովեալս 'ի նահանգէն բուրմէ՝ հասուցանել 'ի գանձն արքունի: Երևելի էր յոյժ և համբաւեալ ընդ ամ հնդկաստան 'ի վաճառականութեան և 'ի կառավարութեան, որպէս և այժմ սերունդք նր. զի նապապն պանկալայի ոչ կարէր առնել զավորական դատաստան իւր առանց նր: 'Ի տան նր են անբաւ գանձք ոսկւոյ և արծաթոյ. և անթիւ մարգարիտք, և ակունք պատուականք, այլ և պէսպէս զարդք ընդ բազմագունի ակամբք յօրինեալք. զորս յերևելի տօնս կարգեն 'ի պարտիզի անդ առ աւազանաւ ջրոյ 'ի զբօսանս և 'ի տեսիլ բարեկամաց իւրեանց. որով սքանչելի իմն երևի պարտէզն.

տեղ նոցա լուսաւոր ակամբք 'ի գոյն գնդին ծաղկին: Առ պարանոցսն կախին կրեն մեծամեծ մարգարիտս և յակինթս. և 'ի խոյրս մեծամեծ ակունս սակաւագիւտս: Սջ յամ ականջս, յամ քիթս, և յամ նուհնգխոտս հնդկաց, և յայլ ծովեզերեայ մերձակայ կողմանս Ասիոյ, ունին սեպհական վաճառականս ծանօթս և պաշտօնատարս. միայն 'ի մաքսաւորապետաց քաղաքի և 'ի շրջակայ տեղիս վեց հազար ծառայք են նոցա, յորս կան և սպասաւորք կարգեալք՝ ատակ 'ի համարել զդրամն որ 'ի պէտս տուրեւառութե. և և 'ի յանչափ և յանճառահաս համարելոյ նոցա՝ պատճառ, թէ յանօթն անդ ջրոյ՝ ուր լումայն զձեռս ամսոյ յամիս ժողովին ոչ սակաւ արծաթ. հարստութին նոցա ասի հասանել 7300 միլիոն ռուփի: 'Ի սոյն ցեղէ վերկուս եղբարս յարունի խանին զօրավարս խասըմ ալի նապապին, հնարիւք իւր մտեալ 'ի տուն նոցա, կալաւ և եած առ նապապն. որ տայր սպան զնն. զի ասի թէ բանսարկու էր 'ի մէջ նոցա և անգղիացւոց: 'Ի ձնշհեն՝ յորժամ առնէր զնն յարունի զօրավարեանն՝ յերկս աւուրս կատարելով զուխտօրէայ ձնշհն. նաջղի բերմ մեծամեծ ակունս ունէին կախեալ առ 'ի զարդ, խոստացան տալ նմա՝ միայն անվնաս տանել հասուցանել զնն առ նապապն:

Տաթա. որ կոչի և Թաթան: Քղք է 24 աստիճանաւ հիւսիսային լայնութե. կառուցեալ 'ի վր միում 'ի վտակաց Գանգեսի, իբրև 80 մղոնաւ հեռի 'ի բերանոյ նր՝ է որս մտանէ 'ի ծովն. զոր ոմանք յաշխարհագրաց վրիպեալ եդին մայրաքղք պանկալայի: Արդասաւորութ երկիր նր. և յաջողակ դիրքն արար զնա 'ի հնմ ժամից տեղի բազմավաճառ, և ժողովարան տուրևառութեց: Քանզի աստ գնեն յամ կողմանց՝ զանազան տեսակս պատրաստուաց որք սփռելին մինչև 'ի Դելլի մայրաքղք, և յայլ նմ նահանգս մողոլաց, և հնդկաց. և արտաքոյ, 'ի Ճիտտա, 'ի պասրա, յերուսաղէմ, 'ի մանիլա, և 'ի փիլիպպեան կղզիս. և անտի յամերիկա: Նաւք անգղիացւոց, գաղղիացւոց և հոլանտացւոց առ հասարակ բարձեալ 'ի կտաւոց անտի սփռեն յաշխարհս ամ. 'ի զարմացումն տեսողաց՝ վասն անհնարին գեղեցկութե և նրբութե նց: Զի արտաքուստ 'ի տեսիլ մտանէ միայն բամբակ անզարդ, և 'ի ձեռաց բերոյ և ոսկա սեաւ հնդկացն եղանէ այնչափ զանազան ոստայն ազնիւ և ծաղկազարդ, որոց զուգակշիռ հազիւ ուրեք երևի. մեծ է հանճար և ճարտարութին նց յայսմ մասին. զի թէ

Նոր ինչ գործ անկռճածոյ տեսանեն ուրեք, առանց տեսանելոյ գործեն զնմանն, և յարմարեն արուեստիւ: Յամ կտաւսն որք գործին 'ի սմին քղքի՝ ընտրելագոյն և յաւէտ բազմավաճառ, են նորանիւթ բեհեզքն, կմ Մալմալք պարզք. ք Թիւլպէնտ. Նաև ձողաւորք, և ասղնեգործք. այլև պէսպէս ճարտարագործ նորանիւթ Տիմի ազնիւ յոյժ ք զոր գործեն յայլ տեղիս:

'Ի ստորին կողմանս ռագայի մերձ 'ի ծովն՝ վասն լինչ գանգէսի՝ յանհամար առաջս բաժանել, բզմ շրջապատօք ընթացիւք զեղանի 'ի ծով, ուր և 'ի տեղիս տեղիս տեսանին ծովակք և լիճք: Պատմեն թէ, յառաջագոյն այն ամ տեղի՝ էր ծով և ոչ ցամաք. այլ գանգէս գետն յառատանալն իւրում զաւազ և ըղկաւ բերելով, և 'ի տեղիս տեղիս կուտելով լցին ըղհողաբլուր, յայնմանէ այսչափ բազմուն ծովակաց և շրջապատօյ ճանապարհք գործեցան անդէն, մինչև մոլորել բազմաց զի չէք անդ բնաւ բնակութիւն մարդկան:

Չիտէկան. որ կոչի և Իսլամապատ: Է քղք մեծ բազմամարդ և բազմավաճառ ոչինչ կարի հեռի 'ի մեծագոյն արևելեան բերանոյ գանգէս գետոյ 'ի կողմն սահմանաց առագանայ, է որ մարթ է մինչև 'ի քղք անդր նաւարկել, զի ուղիղ ընթանայ անդ գետն: Անդ որպէս և յայլ այսպիսի տեղիս, ուր գանգէս խառնի 'ի ծովն՝ կռապաշտ հնդիկք կատարեն զուխտս իւրեանց, զի մտեալ 'ի գետն լռանան, և 'ի կաւոյ գետոյն ձեւացուցանեն պէսպէս խառնակերպ ուրուականս, զորս զկնի բզմ այլանդակ և անհեթեթ պաշտամանց ընկենուն 'ի գետ անդր: Յեւրոպացւոց զառաջինն փորդուգալք հասին յայս քղք, որպ և յայլ բզմ տեղիս հնդկաց. բայց յետոյ այլք յափշտակեցին 'ի նոցանէ: Մեծ բերանն գանգէսի է որ 'ի ծովն զեղանի, է առ սովին քղքաւ, է որ մինչև 'ի քղքն մարթ է նաւարկել զի ուղիղ հոսի:

Պուրտուան, կմ Պուրտուան: Մայրաքղք համանուն իւրում գաւառի, կառուցեալ ոչինչ կարի բացագոյն 'ի հիւսիսայլին եզերաց Տամօտ գետոյն. 'ի հիւսիսակողմն բնակութ եւրոպացւոց որ առ ՈՒԿԼԻ վտակաւ գանգէսի:

Մէտնիփուր, կմ Միտնիփուր. Է մայրաքաղաք մասնաւոր ինչ գաւառի. ընդ մէջ սահմանացն օրիսայ և պանկալայի, մերձ 'ի Գասսայի գետն՝ որ գնայ խառնի 'ի գանգէս:

Փունչաչերի․ Փունչինչերի, կամ Պոնաչերի ։ Մայրաքաղաք 'ի համանուն գաւառի իւրում․ որ է ընդ մէջ պարդվանայ և Մէտնիփուռայ․ որոյ տարածութիւն է իբրև 60 մղոն ։ Իշխան նորա 'ի վաղ ժմկաց հետէ՝ է մի ոմն 'ի բրամանաց կամ 'ի քրմաց հնդկաց ։

Տինաջփուռ ։ Է գլխաւոր քաղաք համանուն գաւառի, որ ձգի ը̅ մէջ գանգէսի և Պրէմախփուտրէ գետոյն․ կառուցեալ 'ի կղզի ինչ գործեալ 'ի Ջէնտրայ գետոյ՝ որ իջանէ 'ի դիալէգայ․ և յերկու առաջս ը̅ բժ̅մ մղոնս ընթացեալ, ապա միանայ 'ի քաղաքուր գիւղ․ և այնպէս անկանի 'ի ծովակ ինչ մեծ երկայն առաւել քան զվաթսուն մղոն․ և լայն իբրև տասն ։ Այս ծովակ գործի 'ի ջուրց այսր գետոյ, գանգէսի, և պրիմաքուտրայ․ և ապա իբրև 40 մղոնաւ հեռի 'ի տապայ քաղաքէն խառնի 'ի գանգէս ։

Են այլ ևս քաղաքք յոլովք 'ի նահանգին պանկալայի որ Բուրդուան․ 'ի համանուն գաւառի սահմանակից օրիսայ 'ի լեռնային վայրս ։

Փատնէ ։ Գլխաւոր քաղաք համանուն գաւառին․ 'ի մէջ Գոգրայ գետոյն և Տինաջփուռայ ։

Մալտա, յարևելից նակոր գետոյն․ Ռասմբոռ․ Ռանամալի․ Սիլհէթ․ որ է սահմանակից աչամայ ։ Լուգնաու․ Գանտպուռ ։ Քաղաք սահմանագլուխ և անցք որ 'ի պանկալայէ հանէ 'ի դիլլըհէրա նահանգ, առ փոքր քէննի գետով ։

Յօդ Ը. Փատանա, կամ Պահար ։

Յարևելից՝ սահմանակից է դիալէգայ․ յարևմտից՝ Լլահապատայ, և պէրաէշ նահանգին․ 'ի հիւսիսոյ՝ ավուդ նահանգին․ իսկ 'ի հարաւոյ՝ պանկալայի ։ Օդ և առատութիւն երկրին նման է պանկալայի ։ Գլխաւոր տեղիք նորա են հետագայքդ ։

Փատանա, կամ Փատնա ։ Է մայրաքաղաք սորին նահանգի, յորոյ անուն կոչի և նէհնդն, առ գանգէս գետով 'ի հարաւոյ հանդէպ բերանոյ Կոնտաուխ գետոյ, կառուցեալ 'ի բարձրաւանդակ վայրի սակս ջուրց գանգէսի, որ մերթ ը̅ մերթ զեղեալ զափամբք ողողանէ զշրջակայս դաշտն առ հերի ։ Է սա մի 'ի մեծ բազմամարդ և 'ի բազմավաճառ քաղաքացն հնդկաց, թէպէտ շինուածք սոցա նորա անշուքեն և աղքատին, այլ ունի բերդ մեծ աշտարակաւոր․ զայս բերդ մարգար գօրայեան կորովի, 'ի ժմկս խառըմ ալի Նաւապային, քաջութ̃ և հնարիւք եառ 'ի ձեռաց անգղիացւոց. որով ստացաւ անուն մեծ 'ի մէջ համօրէն զօրաց խառըմ ալիին ։ Ունի և բ̃զ̃մ մեծաշէն և գեղեցիկ կառուցանս. և այլ հոյակապ շինուածս ։ Ընդ մէջ ք̃ղ̃քին 'ի միոյ ծայրէ մինչև 'ի միւսն' է փողոց երկայն և ուղիղ, առ որով յերկուց կողմանց առհասարակ են կրպակք վաճառականաց և արհեստաւորաց, ուր լինի տուրևառութ̃ մեծ ։ Բայց 'ի տնմէ են այնքս բ̃զ̃մ փողոցք աստի և անտի, յորոց ոմանք հանեն 'ի դաշտն, և այլք 'ի կողմն գանգէսի ։ 'Ի բարձրագոյն կողմն քաղաքին գոյ ընդարձակ հրապարակ, ուր լինին տօնավաճառք. անդ են և ապարանք նաբաբի տեղւոյն ։

Ընկերութիւն վաճառականաց հոլանտացւոց ունէր 'ի նմ վաճառատուն, կմ գօղի. սակս վաճառականութ̃ բորակի. զի բ̃զ̃մ բորակ ելանէ 'ի պաթնա. որ և է մի 'ի գլխաւոր վաճառաց նր ։ Ունի և այդ իմն բուրակեր, զոր բնիկքն 'ի գործ ածեն. որ և աղդողա կամ էյոյժ, 'ի լուծանել 'ի մաքրել և 'ի փորձել զհրահալեղէնս. այլ և 'ի պնդացուցանել զնոյն. բայց չէք ոք որ գիտիցէ զանել զայն, բայց միայն հոլանտացիք. որք զԹ ասելոյ նդ̃ ուսան 'ի վենետկեցւոց ոմանց' որք փախուցեալ գնացին 'ի հոլանտա ։ 'Ի ք̃ղ̃քէ առաւ ելանէ և Աֆիոն, բայց ստորին է ք̃ զայն' որ ելանէ 'ի փոքր ասիա, յասորիս, և 'ի պարսս. որոյ մեծագոյն մասն սփռեալ ծաւալի 'ի զանազան կողմանս հնդկաց, մինչ 'ի մալայա. ուր յաճախ 'ի գործ ածի ։ Այլ յաշխ̃ն չինաց ոչ մտանէ. վասն զի սաստիկ հրամանաւ արգելեալ է մուծանել անդր աֆիոն. և 'ի կեր արկանել 'ի ծուխ, կմ յըմպելիս, և կմ 'ի կերակուրս. որ թէպէտ առ փոքր մի զուարթացուցանէ, այլ մեծապէս վնասէ կենաց ։

Տօրբաճնէյ, կմ Տօրբանեհլ ։ Է ք̃ղ̃ք մեծ և բազմամարդ ը̃ մէջ երկուց գետոց. և մայրաքաղաք Պէնէրէզ գաւառին. որ է ը̃ մէջ Կանգաւու, Գումտ և գանգէս գետոց ։

Պահար ։ Է քաղաք 'ի կղզի ինչ գործեալ 'ի փոխանցան անուն գետոյն. 'ի նախնումն ը̃ ժմկս ինչ ք̃ղ̃քս այս երևելի էր յոյժ և ծաղկեալ. մինչ թէ և մայրաք̃ղ̃ք համօրէն նահանգին, յորմէ և կոչէր Պահար. բայց այժմ ոչ̃ սակայն 'ի վերայ, ք̃ղ̃ի փադամնա է գլխաւոր. քաղաք նահանգիս, յանուն նորա կոչի փադամնա ։

Մուն.

Մունկէր, կամ Մոնկէր։ Է քաղաք և ամրոց առ Գանգէսիւ 'ի հիւսիսոյ կողմանէ 'ի լեզու ինչ հողոյ, որ առնէ զծոց ինչ 'ի գանգէս. և է սա գլխաւոր տեղի յիւրում համանուն գաւառի։ Խասըմ ալի խանն յայս քաղաք հաստատեաց զաթոռ իւր և զտեղի ապաւինի, 'ի ժամս պատերազմին անգղիացւոց։

Են այլ ևս գաւառք և քաղաքք 'ի սմին նահանգի. [illegible] Աճմիրփուռ. որ է քաղաք գլխաւոր 'ի Մորունկ գաւառի, մերձ 'ի լերինս Թիպետայ. և մերձ յաղբիւրն տումրիա գետոյն։ Պէտտէահ. 'ի համանուն գաւառի։ Հաջիփուռ. 'ի համանուն գաւառի մերձ 'ի Փաթնա։ Սասսէրամ. յիւրում համանուն գաւառի. առ ստորոտով լերանց՝ յորոց բղխէ տունսօդ գետ։

Յօդ Գ. Օրիսսա։

Օրիսսա նահանգ, զոր ոմանք կոչեն և Օրիխա, 'ի հիւսիսոյ սահմանակից է պէնկալէձ նահանգին. 'ի հարաւոյ՝ ծոցոյն պանկալայի. յարևելից՝ պանկալայի. իսկ յարևմտից՝ Հէյտարապատոյ և պալակադայ։ Մեծագոյն մասն սորա է ընդ տէրութեամբ մարաթայից. անգղիացիք չունին անդ, բայց եթէ քանի ինչ տեղիս 'ի ծովեզրին։ Քաղաքք՝ որք են 'ի խորին կողմն երկրին. և որք յաւէտ երևելի են, որչափ ինչ են մեզ ծանօթ, են սոքա։

Քաթաք։ Քաղաք մարաթայից առ միով 'ի հիւսիսակողման վտակաց անուն գանգէսի։

Սըմպըլփուռ. և Բոնա։ Են այլ երկու քաղաքք մարաթայից 'ի հարաւոյ գանգէսի. առ սահմանօքն տըգանայ. զորոց զժողովս՝ անգղիացիք որք են սահմանակիցք նոցա, միշտ ջանան վանել անտի։

Ճէնկըռնաթ. զոր եւրոպացիք գրեն Եակրնաթ, կամ Ճէակրնաթ։ Է հռչակաւոր կռատուն 'ի ծովեզրին. մերձ 'ի կանճամ. 'ի հիւսիսակողմն որ այժմ է ընդ տէրութեամբ մարաթայից։

Քաճաթ, կամ Քաճէթ։ Է մայրաքաղաք 'ի համանուն գաւառի իւրում, ընդարձակ յոյժ. մերձ յարևմտեան բերան գանգէսի՝ ընդ որ զեղու 'ի ծով։ Աստ բառնան նաւք գաղղիացւոց և անգղիացւոց 'ի պէտս մալտիվեան կղզեաց՝ որիզ կտաւ և կերպաս։

Կանճամ։ Քաղաք երևելի 'ի հարաւոյ քաթաք քաղաքին, յորում անգղիացիք 'ի բազում ժամանակաց հետէ ևնաս

Ի զատանուլն զպանդկալս, և զշրջակայ երկիրս, ունելն վաճառականութեան մեծ տուրեւառութիւն:

Են այլ ևս ջուրք՝ զորոց զանուանս ևեթ գիտեմք. զորս աւելորդ է յառաջիկայս յիշատակել:

Պրակ Գ. Հարաւային մասն Մողոլաց.

Զայս հարաւային մասն աշխարհագիրք կոչեն Ջամաթակղն որ յայսկոյս Գանգէսի, յորոշեալն 'ի միւս ցամաքակղզւոյն՝ որ է արտաքոյ աշխարհին Մողոլաց, յայնկոյս Գանգէսին՝ յորում գոն զանազան Թագաւորութիւնք և Տէրութիւնք: Մողոլք՝ զայս աշխարհ կոչեն երբեմն Տոքան կամ Տըքան. որ է անուն մասնաւոր սուպայութեան կամ նահանգի՝ այսր ցամաքակղզւոյ. որոյ Նապապն է միանգամայն փոխարքայ հարաւային կողման: Սահմանն այսր սուպայութեան է ժամս ժամս պէսպէս փոփոխեցաւ. երբեմն պարունակեր զՎիզապուր, ըզՀէյտարապատ են. և երբեմն զայլ մեծագոյն նահանգս ցամաքակղզւոյն: Այլ եւրոպացւոց աշխարհագիրք զնոյն սահմանս դնեն այսր սուպայութեան: Պիշինկ է անուամբ Տըքանայ առնու զամենայն նահանգսն՝ որ 'ի Գուճրաթայ ծովէն մինչև ցԳառնատիկ. և ըստ այսմ առեալ, դնէ նմա սահմանակից 'ի հիւսիսոյ զԳուճրաթ և զՔանտիշ. յարևելից՝ զՕրիսսա. իսկ 'ի հարաւոյ՝ զԳառնատիկ: Ուստի է սուպայութիւն այսր մասնաւոր Տըքանայ դնէ զծովեզերեայս Գոնգան կոչեցեալ, զԳոլկոնտա, զԴալաքատ, և զՎիզապուր: Իսկ այլք յաշխարհագրաց այլ տարածութիւն և զայլ սահմանս դնեն սմա. յորս և ընտրող ոմն անգղիացի երևելի աշխարհագիր՝ զտէրութիւն կամ զսուպայութիւնս զայս յերիս գաւառս բաժանէ. որք են Տըքան. և բաց 'ի Տըքանայ, Պալակատ, և Քունկվամ. տալով նմա տարածութիւն կարի նուազ, քան զոր դնէ Պիշինկ, և ըստ այսմ յարևելից ունի իւր սահմանակից զտէրութիւն Նաղբինկայ. յարևմտից՝ զծովն. իսկ 'ի հարաւոյ՝ զտէրութիւն Կանարայ. յորմէ անջատի 'ի ձեռն Ասւինկադետոյն: Իսկ այժմեան աշխարհագիրք անջատեն զարքան կամ զդաքան 'ի Քունկվամ գաւառէ, և զդաքան առնուն առանձինն:

Այլ եղև երբեմն՝ զի սահման այսր սուպայութեան ձգեր 'ի կոմորինեան սարէ մինչև ցվերին կողմանս ցամաքակղզւոյն. վս՟ այսր պատճառի թուի թէ Հնդիկք զհամօրէն ցամաքակղզին՝ անուանեցին երբեմն տաքան կ՟մ ոլքան. թէպէտ չէ մեզ յայտնի՝ թէ զորչափ սահմանս ցամաքակղզւոյն որոշակի յայս անուն կոչէին ։ Արդ՝ 'ի յիշատակել մեր յայսմ Աշխարհագրութե՟ մերում զմասնաւոր սուպայութին տաքանայ, կոչեմք Աշանջին կ՟մ Մանաւար փափան. զորմէ չունիմք խօսել մասնաւոր յօդուածով, սակս անորոշ գոլոյ սահմանաց նր՟. այլ զբնիկ տեղի նորա ունիս տեսանել յՑացոյցն մեր ։ Իսկ յանունն փնկ Ճարձակագոյն թրութե՟ Նապապին, կ՟մ փնկ համօրէն ցամաքակղզւոյն, կոչեմք Տաքան, կ՟մ Տըքան աշխարհ ։ Այս ցամաքակղզի, կ՟մ տաքան աշխարհ՝ յարևելից սահմանակից է ծովուն պանկալայի. յարևմտից՝ ծովուն արաբիոյ. 'ի հիւսիսոյ՝ նհնգացն զորս 'ի վեր անդր ստորագրեցաք. իսկ 'ի հարաւոյ՝ ծովուն հնդկաց ։ Յայսմ մասին աշխարհի եղեն երբեմն 33 ռաճայութիւնք կ՟մ թագաւորութիւնք. իւրաքանչիւրքն ինքնագլուխ տեարք զանազան կողմանց՝ ազգաւ հնդիկք, և միայն հարկատուք Նապապաց, յորոց բզ՟մք կան մինչև ցայժմ ։ 'Ի բնակիչս այսր ցամաքակղզւոյ՝ նշանաւոր են մարաթայք, զորոց պատմեցաք 'ի վեր անդր. 'ի պրակ Ա. յօդ. ժդ ։ Կն՟ անդ և այլ ազգ մի իջեալ յարաբացւոց, որք յափրիկոյ և 'ի կողմանցն պարսից մտին 'ի հնդկաստան. ոչ 'ի տիրել նմ՟, այլ 'ի վաճառականութե՟ սակս. որք և անդէն հաստատեցին զբնակութի՟ իւրեանց. և առ սակաւ սակաւ այնպէս որսացան զսիրտ ոչ միայն իշխանաց, այլև ժողովրդեան, մինչև յետ սուղ ժմկի ելանել նց՟ 'ի մեծամեծ իշխանութիս յերկրին յայնմիկ. և զբզ՟մ նհնգս մողոլաց է՟ իշխանութե՟ գրաւել ։ Ապա սկսան սոքա տարածել անդէն զդենն մահմետի. գնեին գերիս. և յետ թլփատելոյ զնս՟, և ուսուցանելոյ նոցա զօրէնս իւրեանց, ազատէին զնս՟ ։ Այլ քզի անարգանք համարէին անձանց 'ի ձեռն առևտրութե՟ խառնակիլ ը՟ գերեաց իւրեանց, յայն սակս սոքա զկնի ժմկաց կացուցին մասնաւոր ազգ մի և ժողովուրդ 'ի ծովեզերեայս կողմն մինչև ցմադրաս. որք 'ի մալապար կոչին Մափոլդէք, և 'ի գորոմանտել՝ Քավլիաք ։ Ոչ գիտեն սք՟ ոչ զլեզուն պարսից, ոչ զարաբացւոցն, և ոչ զափրիկեցւոց. այլ խօսին 'ի լեզու երկրին՝ յորում բնակեն ։

Զայս տաքան աշխարհ, կ՟մ զհամօրէն ցամաքակղզին ա-

Նիւք բաժանել ՚ի ժա նահանգս, եւ առաջնեկաց օրինակի։

ա. Գուճրատ.
բ. Պակլանա.
գ. Պալակատ.
դ. Վիզափուր.
ե. Հէյտերապատ.
զ. Գոնգան.
է. Գանարա.
ը. Գառնատէք.
թ. Մալապար.
ժ. Մայսուր.
ժա. Գորոմանտէլ։

Յօդ ա. Գուճրատ.

Գուճրատ յառաջին ժամս էր մասնաւոր տէրութիւն հնդկաց ՚ի տէքան աշխարհին, կամ ՚ի ցամաքակղզին որ յայսկոյս գանգէսի. և ձգեալ տարածէր ընդարձակ եւս, քան զոր այժմ. պարունակելով զթագաւորութիւն քամպայհաթայ, կամ կամպայէթայ, և զօլըքան առանձնակի։ Այլ յամին իբրև 1545 սուլթան մահմէտ թագաւոր գուճրատայ՝ իբրև մերձ էր ՚ի մեռանել, յանձն արար զմիակ զորդին իւր և զհանուր կառավարութիւն համօրէն տէրութեան իւրոյ՝ միում յիշխանաց անտի իւրոց, որոյ փառամոլութիւն անհնարին խռովութիւնս յարոյց ՚ի մէջ մեծամեծաց նահանգին։ Սա առ ՚ի կալ մնալ յիւրում իշխանութեան, կոչեաց յիւր օգնութիւն զակպար արքայն մողոլաց, խոստանալով նմա ՚ի հատուցումն՝ զեգերս մի հինձ շրջակայ դիւռաւ իւրով։ Իսկ ակպար եհաս նմա յօգնութիւն. այլ փոխանակ միոյ քաղաքի՝ էառ զհամօրէն տէրութիւն գուճրատայ. ՚ի կալանս եդեալ զնա ինքն զկուսակալն և զորդի արքային։

Այս նահանգ գեղեցիկ է և զուարճալի, փարթամ և արգաւանդ։ Գլխաւոր գետք նորա են. Նարպատա. և Դաբդի։ Դաշտք նորա միշտ դալարագեղ են ընդ ամն ողջոյն. բերէ ցորեան, և որիզ առատ յոյժ. անդ և պտուղս ազնիւս. քաց ՚ի բնաւոր արգասեացն մեծագին արուեստակերտք որք գործին անդ՝ առաւելուն զհամբաւ նորա. այս ոսկեթել և արծաթաթել պատուական դիպակք. և մետաքսեայ կերպասք, և պէսպէս սկանակուռ գործածք. զի ամ ազգ ախտից գտանի անդէն։ Լինին անդ և եղինք անգիւղք յաղթանդամք սպիտակք և գեղեցիկք. որոց զօրութիւն և այժ գոլով առատիկ, մեծամեծ իշխանք, մինչ ՚ի մայրաքաղաքն որ գուճրատ, զեղինս փիղս փխ՟նկ երիվարաց լծեն 'ի կառս․ որք և առաւել արագ ձգեն ք՟ զերիվարս․ զորոց զնմանն չէք տեսանել, այլ Ծս մողոլաց։ Ծովեզերեայ կողմն Գուճրատայ ձևացուցանէ ցամաքակղզի ինչ ընդարձակ 'ի ձև եռանկիւնի․ որոյ յարևելեան կողմն է ծոցն Քամպահաթայ, կմ՟ Քամպայեթայ․ իսկ յարևմտեան կողմն՝ ծոցն Գուճրատայ։ Գլխաւոր տեղիք նր՟ են հետագայքդ։

Գուճրատ, կմ՟ Ահմատապատ․ և ըստ Հնդկաց Ահմատապատ։ Է մայրաքաղաք նահանգին՝ մեծ, բազմամարդ յոյժ, և բազմավաճառ, յարգաւանդ և 'ի զուարճալի վայրի, մերձ առ գետն Սապրմեթ։ Ունի շուրջանակի գեղեցիկ և հզօր պարիսպս․ և առ նոքօք աշտարակս ստուարս։ Երկայնութի՟ նր՟ հդ՟ձ արուարձանեօք՝ է առաւել ք՟ 3 մղոն․ ունի 12 դրունս։ Այս է մեծագոյն ամրոց 'ի համօրէն նահանգին ամրացուցեալ ք՟ զայլս, առ ահի ասպատակութե՟ց հզօր ռաճային կմ՟ իշխանին պատաուրայ ք՟ղքի՝ որ 'ի Քանտէշ նահանգ։ Ամ՟ փողոցք լայն են և գեղեցիկ․ ունի և հրապարակ մի մեծ անուանեալ Շահ մէյտան՝ լայն 400 քայլ․ և երկայն 900։ Ունի և բերդ ամուր պատեալ քարաշէն պարսպօք՝ իբրև փոքրիկ ք՟ղք․ առ դրամբ նր՟ են երկու բոլորաձև քարաշէն աշտարակք։ Բնակիչք նր՟ կէս մի մահմետական են, և կէս մի կռապաշտ Հնդիկք․ որք ունին անդէն կռատունս, այլ և երկու անկելանոցս․ մի վս՟ թռչնոց, և միւս ևս վս՟ չորքոտանի անասնոց․ յորս դարմանեն զախտացեալ անասունս․ և որոց գոյ հնար բժշկութե՟՝ բժշկեն․ իսկ որք անբուժելի են, պահեն զնս՟ անդէն մինչև ցսատակիլ։

'Ի սմին ք՟ղքի գտանին և յազգէս հայոց սակաւք․ իսկ յեւրոպացւոց՝ հոլանտացիք յոլովք, որք 'ի լաւագոյն կողմն ք՟ղքին բնակեն, այլ և անգղիացիք մեծամեծ վաճառականք։ Գլխաւոր վաճառք նր՟ են ազգի ազգի ոսկեթել և արծաթաթել դիպակք․ և այսպէս մետաքսեայ կերպասք․ Ատլազ․ Խատաֆէ․ Ճանֆէս․ և ոսկեթել Ղաթմայ՝ մետաքսեայ և ասուեղէն։ Այլ և բամբակի պաստառք որք գան 'ի տըլլի նահանգէն, և 'ի լահոռայ․ որպէս և Չիթ ազնիւ․ նաև բնական բերք․ որ՟ շաքար, կաճապղպեղ․ այն է Զէնճէֆիլ․ կարմիր և կապուտակ երանգ այն է Լաճիվէրտի առատ և գեղեցիկ․ աֆիոն․ մեղր․ հալիլէ․ Թամըրհընտի․ և բորակ։ Զայս ք՟ղք նորոգեաց ահմէտ արքայն․ յայն սակս յանուն նր կոչեցաւ Ահմատապատ․ թէպէտ սովորաբար 'ի խօսս ամատապատ ասի․ զի Հնդիկք ոչ կարեն հնչել զտառս Հ․ կոչի ևս գուճրատ յառաջին անուն իւր։ Ոմանք համարին զսա լինել նոյն ը̄ Ահնոփաղասդիս քղքին՝ զոր յիշէ արրիանոս, սակս մերձաւորութե հնչմանն․ այլ կարծիք առաջնոյ հաստատագոյն է։

Սուրատ․ զոր ոմանք համարին լինել Մուզիրիս քաղաքն՝ յիշատակեալ 'ի պտղոմեայ։ Է քղք ամենահարուստ, բազմավաճառ, և հռչակաւոր յոյժ 'ի համօրէն Հնդիկս առ Դափթի կամ Պիննափի գետով․ երկ․ 10․ կամ 12 մղոնաւ հեռի 'ի ծովէն․ մեծ և ընդարձակ․ շուրջանակի ամրացուցեալ պարսպօք և աշտարակօք․ որոյ արտաքոյ են արուարձանք նր․ ունի և ամրոց կառուցեալ 'ի հարաւոյ արևմտից քղքին․ զորով 'ի միոյ կողմանէ պատէ գետն, և 'ի միւս կողմանէ խրամ լայն և խոր, և է քառակուսի․ ունելով 'ի չորեսին կողմանս մի մի աշտարակս․ և պարիսպք նր վառեալ բազմապատիկ հրազինուք։ Իսկ ձև քղքին է կիսաշրջանակ․ ունի դրունս 7․ յորում թէպէտ գտանին բզմ գեղեցիկ շինուածք հրապարակականք և մասնաւորք, բայց չեն համեմատ փարթամութե բնակչաց․ տունք նր ըստ առաւել մասին՝ են կրկնայարկք։ Իսկ բնակարանք հնրկ ժողովրդեան՝ ոպ յայլ ոմ քղքս հնդկաց՝ են աղքատաշէն խրճիթք․ եղեգամբք և տերևովք արմաւենեաց ծածկեալք։ Փողոցք նր իբր 'ի բզմս նեղ են․ կրպակք նպարավաճառաց սակաւ և հեռի 'ի միմեանց․ յայն սակս քղքացիք յանձն առնեն թէլլալաց գնել զպիտոյս։ Մեծ հրապարակ նր անուանեալ Հրապարակ բերդին, գեղեցիկ է․ որ և է բուն վաճառատեղի քղքին։ Բերդն է ը̄ իշխանութե անգղիացւոց․ զոր խորամանկ հնարագիտութե իւր կալան․ իսկ կառավարութի քղքին փոքր մի յառաջ էր 'ի ձեռս Նապապին, որ մահմետական քղքապետին․ թէպէտ և յայնժամ ոչ կարէր առնել ինչ առանց հարցանելոյ անգղիացւոց․ իսկ այժմ կառավարութի և մաքս քղքին բովանդակ 'ի ձեռս նց են։

Թիւ բնակչաց քղքիս մերձենայ յերկու միլիոն․ որոց մեծ մասն են հնդիկք կռապաշտք․ գտանին անդէն և բազմութի մահմետականաց, և այլ ազգաց եւրոպացւոց սակս վաճառականութե։ Են բազմութի յազգէս հայոց, ուր յառաջագոյն ունէին եկեղեցի մեծաշէն և գեղեցիկ․ այլ ուխտաւորք տաճկաց որք

Նախ ք՟ զգալուստ անգղիացւոց, ամի ամի 'ի դառնալ 'ի քեալէէ, երթային անդր 'ի բառնալ զվաճառս երկրին, և տանել յԵ՟ իւրեանց, յորդորեալ զքղքապետն՝ որ էր մահմետական, քանդել ետուն զայն. վ՟զի այժմ յառանձին տան կատարեն զպաշտամունս: Այլ արտաքոյ քաղաքին են կալուածք Ճարձակք նորին եկեղեցւոյ. յորում է և գերեզմանատուն հայոց, և մատուռն կամարայարկ որ մինչև ցայժմ է ը՟ իշխանութ՟ նց՟. Գոյ 'ի սուրատ և անկելանոց մի վ՟ս անասնոց, ո՟պ և 'ի գուճրատ. Քզի և 'ի սահմանս յայսոսիկ, ո՟պ և ուրեք ուրեք յայլ կողմանս Ե՟ին մողոլաց, գոյ ցեղ ինչ խատակրօն, որք 'ի գոյն դեղին ներկեն զճակատս: Ս՟ք 'ի մեղս համարին սպանանել կմ՟ անխնամ թողուլ զանասունս. կարծելով թէ բզ՟մք 'ի նց՟նէ են մարդիկ մեղաւորք, որք 'ի քաւութեն մեղաց իւրեանց, մտին յայն տեսակս կենդանեաց. վ՟զի և ոչ իսկ զնեղացուցիչ կենդանիս սպանանեն. ո՟պ զճանճ, զլու, են: Այլ թէ 'ի մահճի գտցի լու բզ՟մ, կմ՟ մլուկն, այն է փառօջիլ, տան վարձս աղքատաց ընկողմանիլ 'ի մահիճս իւրեանց, ո՟պ զի ժողովեսցին 'ի վ՟ր նց՟. և ապա ջնջեանք մեռանեն:

'Ի գտանել 'ի գետնի զմրջիւն, 'ի վեր առնուն, և մաքրեն փչելով զփոշին, և դնեն յորմն՝ զի մի այլ ոք կոխեսցէ 'ի վ՟ր նորա: Նաև թէ տեսանեն զոք յայլոց ազգաց որ սպանանել կամիցի զկենդանի ինչ կմ՟ զզեռուն, տան վարձս ազատել զնս՟, թէպէտ զայս սովորութ՟ 'ի ք՟ղքս ինչ, ուր գտանին բազմութիւք օտարական ազգաց, բարձին յետոյ սակս անհնարինս յաճախելոյ: Քանզի բզ՟մք յաղքատաց առ 'ի շահել դրամս 'ի կապարիշտ հնդկաց, ստէպ ստէպ տանէին առաջի նց՟ զեռունս սպանանել կամելով, առ 'ի առնուլ վարձս ինչ 'ի նոցանէ:

Գտանին 'ի սուրատ և կեավգաւ անուանեալ պարսիկք կրակապաշտք, որք հատուածեալ 'ի բազմաց հետէ՝ յեզդ և 'ի քիրման Ե՟է պարսից եկին և աստ հաստատեցին զբնակութիւն իւրեանց. ուր այժմ գտանի իբր 60000 տուն: Ունին ս՟ք անդ ատրուշան մի մեծ. յորում անշէջ վառի հուրն զոր ը՟ ինքեանս ածին յԵ՟է իւրեանց. զորմէ ասեն թէ 'ի սկզբանէ անտի մինչև ցայժմ է նոյն հուր: Սոքա սիրեն յոյժ զշունս. և կերակուր բաշխեն նց՟. ուստի լի են 'ի ք՟ղքն սուրատ շունք, որք չեն այնչափ ինչ թաւամորթք: 'Ի սատակել շանց զկորիւնս նց՟

տանելն մօտ յռունգունս, ոպ̃ զի շունչ ոգւոց նց̃ մախեսցի 'ի կորիւնս: Ոչ Թողուն զոք յայլազգեաց վառել 'ի ճրագացն՝ զոր ինքեանք վառեցին. քանզի գիտեն թէ նք̃ ոչ խնայեն շիջուցանել. իսկ ինքեանք 'ի լուցանելն միանգամ զճրագ ինչ, Թողուն վառել մինչև 'ի սպառումն:

Դիրք քաղաքիս՝ քաջադէպ է 'ի տանել անդր զվաճառս արտաքինս, որք գան ոչ միայն յեւրոպիոյ, այլ և 'ի սինէացւոց, յարաբիոյ, 'ի պարսից, և 'ի հիւսիսոյ կողմանց մողոլաց: Անդ վաճառին ազգի ազգի մետաքսեայ կերպասք, մարգարիտ բերեալ 'ի պարսկային ծոցոյ, և պէսպէս ակունք պատուականք: Գլխաւոր մասն վաճառաց նր̃ բարձեալ բերեն անդ 'ի կողմանէ ցամաքին կարաւանաւ, 'ի յաքբարապատայ, 'ի տըլէի նահանգէն, 'ի գուձրադայ, կմ̃ յամատապատայ, և յայլ երևելի քղքաց: Իսկ վճռականք որք գնեն, են բզ̃մ ազգք՝ հայք, արաբացիք, պարսիկք, և եւրոպացիք: Նաւահանգիստ սուրաթայ իբրև 9 մղոնաւ հեռի է 'ի քղքէն, մերձ 'ի գեօղն Սուալի, ուր նաւք Թափեն զբեռինս իւրեանց, և անտի 'ի ժմկս անձրևոյ յառատանալ գետոյն՝ փոխադրեն 'ի քղքն. քզ̃ի յայլ ժմկս գետն գոլով փոքրիկ, նուաղի յոյժ: Մուտ նաւահանգստին չէ այնչափ ինչ լայն, և ոչ անքոյթ վն̃ մեծամեծ նաւուց. զի խորութի̃ ջուրց նր̃ է իբրև 7 գրկաչափ և կէս 'ի ժմկի մակընթացութե̃ ծովուն. իսկ 'ի ժմկի տեղատուե̃ 5 և կէս: Լայնութի̃ նաւահանգստին համդէպ գեղջն՝ չէ ինչ առաւել քն̃ 500 քայլ. և են 'ի նմ̃ ժայռք յոլովք. ուստի և վտանգաւոր է յոյժ 'ի ժմկս ալէկոծութե̃. քզ̃ի և ոչ իսկ շրջապատեալ է ը̃ստ օրինակի այլոց նաւահանգստից, այլ միայն առ նուազութե̃ ջուրցն՝ համարեալ է իբր նաւահանգիստ:

Շրջակայ գւռ քղքիս՝ զուարճալի է յոյժ, և ամենայնին դալարացեալ կանաչազգեստ. յորում աստ անդ սփռեալ կան բնակութիւնք մարդկան, այլ տօթն սաստիկ է. ուստի յելս փետրվարի գտանին անդէն մեղրապտուղ. խաղող. կաղամբ. և բանթլիճան: Իսկ հունձք ցորենոյ լինին յելս յունվարի և 'ի սկիզբն փետրվարի:

Քամպայէթ, կմ̃ **Քամպայէա**: Էր քղք մեծ երկին քան զսուրաթ. այլ բնակիչք նր̃ նուազ են յոյժ քն̃ զսուրաթի: Շուրջանակի ունի պարիսպ պատուական իբրև չորս հողաչափ բարձրութե̃, ամրացուցեալ աշտարակօք. փողոցք նր̃ գեղեցիկ են. և շինուածք տանցն յաղիւսոյ թրծելոյ յարկու : Մեծագոյն մասն բնակչաց են կռապաշտք : Ունի և գիւղակ մեծ, այլ անշուք և անզօր . անդ է բնակութիւն քաղաքապետին : Շրջակայ վայրք նորին, գեղեցիկ են և լի պարտիզօք : Է անդէն գամբարան մի կամ բուրգն մարմարիոնեայ, զոր ետ կանգնել Թագաւոր ոմն Գուճրատայ 'ի պատիւ միում 'ի սպարապետաց իւրոց՝ զոր մեծապէս սիրէր, այլ լքեալ կայ անխնամ: Են անդ և երեք սրահաձև շինուածք . յորոց 'ի միումն կան մինչև ցայժմ բազում սամախի սիւնք : 'Ի նախնումն գոյր անդ և անկելանոց չորքոտանեաց և Թռչնոց, բայց այժմ աւերակ է:

Այս քաղաք յառաջին ժամս ձգէր մինչև 'ի ծովն, այլ այժմ իբրև մղոնաւ և կիսով հեռի է 'ի նմանէ . վասն մեծապէս նուաղելոյ վաճառականութեան նորա . զի Թէպէտ ծովն և այժմ չէ այնչափ ինչ հեռի 'ի նմանէ . սակայն յատակ նորա գոլով բարձրացեալ, նաւք բեռնաւորեալք բռնադատին երբ 12 մղոնաւ հեռի 'ի ցամաքէն խարիսխ արկանել : Եւ տեղատուութիւնք և մակընթացութիւնք ծովուն՝ այնչափ սաստիկ են անդէն, մինչև հաւասարել արագահոս ջուրց գետոյ . յայն սակս հազիւ երբեք պատահեն անդ նաւք . և այն՝ յամսեանն սեպտեմբերի և եթ . վասն զի 'ի ծովեզերեայ կողմանն յայնոսիկ, որք հային յարաբիա, մինչ 'ի ծոցն քամպահաթայ կամ քամպայեայ՝ մինչև 'ի սկիզբն սեպտեմբերի՝ գրեթէ միշտ խռովեալ է ծովն 'ի պատճառս արեւմտեան հողմոյն, որ սաստիկ շնչէ անդանօր : Ծոցն քամպայեայ՝ զոր ոմանք համարին լինել Պարիգազընեան ծոյն յիշատակեալ 'ի պտղոմեայ, է իբրև 168 մղոն ըստ երկայնութեան :

Տիու : Է ծովեզերեայ քաղաք 'ի հարաւային ծայր ցամաքակղզւոյն գուճրատայ : Փորդուքալք ընդ որոց իշխանութեամբ է քաղաքս՝ կոչեն զնա Տիւ, որ Թարգմանի կղզի, վասն զի է 'ի կղզի ինչ իւր համանուն . անջատեալ 'ի ցամաքէն 'ի ձեռն անձուկ նեղուցի, յորոյ վերայ արկեալ կայ կամուրջ, ընդ որ լինի անցանել 'ի կղզւոյ անտի 'ի ցամաքն : Իսկ քաղաքն գեղեցիկ է յոյժ . լի բազմապատիկ կրպակօք սպասպէս վաճառաւաց . և պատեալ հզօր պարսպօք . որք գնան աւարտին 'ի նեղնդիւն անդր, ուր գոյ սահմանք ինչ 20 քայլ երկայնութեամբ՝ ընդ որ հանեն զբեռինս 'ի նաւուց . և բեռնաւորեն զնաւս : Են անդէն և երկու բուրգք՝ յորոց 'ի մին քանդակեալ կայ կնիք արքայեն փորդուքալայ . իսկ 'ի միւսն երեք նետք .

Հանդէպ նաւահանգստին է մաքսատունն՝ յորում երկու գրօշք կախեալ կան. և ՚ի մուտս նորա խաչ կանգնեալ. և ՚ի վ͞ր նաւահանգստին ամրոց հզօր. որ գրեթէ անմատչելի է, վ͞ս զի ՚ի գ͞ մասին պատէ զնովաւ ջուրն ծովու. որ չունելով բաւական խորութի, չիք հնար նաւուց մերձենալ յամրոց անդր. իսկ ՚ի ցամաքին կողմանէ քաջ եւ ամրացուցեա͞լ է յարուեստէ, և ՚ի բնութենէ. զի է ՚ի վ͞ր ժայռի, առ որով քերէ գետ մի մեծ, և յեզր գետոյն կանգնեա͞լ կայ աշտարակ հզօր. և ՚ի միջոցին ՚ի գետափին անդ՝ որ է ընդ մէջ աշտարակին և ամրոցին՝ են այլ եւս երեք փոքրիկ մարտկոցք։ Առ ՚ի շինութի͞ն այս ա͞մ ամրոցաց, անբաւ ծախս արարին փորդուգալք հանդերձ ծանր աշխատութ͞բ։

Զայս ամրոց Պատուլ սուլդանն քամպահաթայ՝ թոյլ ետ շինել նունոսի ակունեացւոյ գերահռչակ սպարապետին փորդուգալաց. այլ յամին 1538 սուլդանն քամպահաթայ մահմուտ անուն, ընկալեալ յիւր օգնութի͞ ՚ի սիւլէյման թ͞գրէն տաճկաց 74 նաւս, զինու և զօրօք վառեա͞լս, պաշարեաց զնա առ ՚ի վանել անտի զփորդուգալս. բայց անպարտելի քաջութի͞ փորդուգալաց ՚ի ձեռն արկեա͞լ զթշնամին, կատարեալ յաղթանակ կանգնեաց ՚ի վ͞ր ն͞ց։ Ապա անտի և այսր խաղաղ և անվրդով ժառանգեցին փորդուգալք զայս ք͞ղք հ͞դձ շրջակայ սահմանօք իւրովք. որ թէպէտ ոչ եւ համարի իբրև բանալի ա͞մ կալուածոց ն͞ց որ ՚ի հնդիկս՝ ո͞րպ էր յառաջն, սակայն է մի ՚ի նշանաւոր տեղեաց անտի՝ զոր փորդուգալք ունին յե͞րին հնդկաց։

Բասէին։ Է ք͞ղք յարևմտեան եզերս ցամաքակղզւոյն գուզերաթայ. ՚ի նախնումն էր ք͞ղք մեծ և բազմավաճառ. այլ այժմ մեծապէս անկեալ է ՚ի նախնի շքոյ անտի իւրմէ։ Ունի ամրոց և հոյակապ տաճար ընդ ա͞մ մարմարիոնեայ սեամբք զարդարեա͞լ. ուր յառաջն պաշտէին կուռս. այլ այժմ փոխեա͞լ է ՚ի մզկիթ։

Գետեֆուա. և Պարնար։ Են ք͞ղքք ՚ի միջագետ վայրս ՚ի հիւսիսոյ ամատապատայ։

Են այլ եւս ք͞ղքք բ͞զմք, զորոց ջանիմք ինչ տեղեկանալ. ո͞րպ Սոնէնտրա. Կօհա. Նարիատ. Մահմուտապատ. ևն։

Յօդ Է. Պակլանա ։

Պակլանա նհնգ յարևմտից՝ սահմանակից է գօնգանայ. յարևելից՝ պալակադայ. 'ի հիւսիսոյ՝ քանտիշայ. իսկ 'ի հարաւոյ՝ վիզափուրայ ։ Գետք նր են Քրուսսար. Մուլէր. և Պէնհօրա ։ Իսկ գլխաւոր տեղիք որչափ ինչ են ծանօթ, են հետագայքդ ։

Մուլէր ։ Քաղաք առ համանուն իւր գետով, հառուցեալ 'ի մէջ լերանց, ուստի և չէ այնչափ ինչ բարգաւաճ 'ի նմ վաճառականութեն ։

Բօնէ. և Բէէբլնուր ։ Են գիւղք երևելիք 'ի սմին նահանգի ։

Յօդ Ը. Պալակադ, կմ Տէօվլէդապատ ։

Սա 'ի նախնումն էր մասնաւոր տէրութն կմ առձայութն, ապա եղև ձեռ. վիզափուրայ. յետոյ ձեռ. մուղալաց պարունակեցլ 'ի սուպայութն սէօվլէդապատայ, կմ մասնաւոր դըքանայ. ուստի ամենք յԾագրաց կոչեն զսա Տէօվլէդապատ, կմ Տօվլադապատ ։ Եւ է շատաջուր ոռոգէլ 'ի Կանկայ գետոյն, զոր չէ պարտ շփոթել ը̄ կնկայ գետոյն՝ որ է գանգէս. որ ելանէ 'ի դիպեդայ ։ Երկիր նր արգաւանդ է և բարեբեր. և բնակիչքն փարթամ յոյժ. 'ի հիւսիսոյ սահմանակից է քանտիշայ և մալվայի. յարևմտից՝ պակլանայ. 'ի հարաւոյ՝ մասնաւոր դըքանայ. իսկ յարևելից՝ օրիսայ և պերարայ ։ Գլխաւոր տեղիք նր են հետագայքդ ։

Տէօվլէդապատ, կմ Տօվլադապատ ։ Է գիւղ որ 'ի նախնումն էր մայրաքաղաք համօրէն նհնգին առ Բուրնա գետով, և յանուն սորա կոչէր նհնգն որպ ասացաք ։ Այլ այժմ անկեալ է յոյժ յառաջին վայելչութե իւրմէ ։

Ովրանկապատ ։ Մայրաքաղաք համօրէն նհնգին, բազմամարդ և ամենահարուստ առ նախայիշատակեցլ գետով. շինեալ յովրանկզիպ ինքնակալէն. յորմէ կոչեցաւ Ովրանկապատ. որ Քղք Ովրանկայ ։

Աճէնտանէր ։ Քաղաք աննշան 'ի հիւսիսոյ կողմանէ հոչսհռչակաւոր լերանց պալակադայ, վաճառականութիւն նր՟ աղքատ է յոյժ, վս՟ հեռաւորութեն նր՟ 'ի գետոյ:

Բէէւն: Քաղաք մեծ 'ի վերջին սահմանս պալակադայ. և մերձ 'ի սահմանս մալվայի:

Յօդ Է. Վիզափուռ.

Վիզափուռ 'ի նախնումն էր մասնաւոր թագաւորութիւն բարգաւաճ յոյժ և ծաղկեալ. այլ յինքնակալացն մողոլաց փոխեցաւ 'ի նահանգ կմ՟ 'ի սուպայութիւն: Սահմանակից սորին նահանգի յարևելից՝ է սուպայութիւնն հէյտարապատայ. յարևմտից՝ ծովն հնդկաց և կալուածք եւրոպացւոց. 'ի հիւսիսոյ՝ պալակադ. իսկ 'ի հարաւոյ՝ գառնադիկ: Անուանի է 'ի սմին նահանգի հանքն՝ ուստի ելանէ ադամանդ ական պատուական այն է՝ էլմաս սպիտակ յոյժ՝ մաքուր և ընտիր, որ է 'ի ռաօլգոնտա մերձ 'ի հարաւային բազուկն Քրիշնայ գետոյն: Գլխաւոր տեղիք սորին նահանգի են ս՟ք:

Վիզափուռ: Մայրաքաղաք նահանգին առ մանտրաշա գետով, մեծ և պատուական. անդ նստի սուպայն 'ի հոյակապ ապարանս. բզմ՟ մեծատուն վաճառականք գտանին 'ի նմ՟. որոց համբարանոցք վաճառացն են յարմարաձանս, որք են շուրջ զքղ՟քաւ:

Ռաօլգոնտա: Տեղի անուանի վս՟ հանքաց ադամանդականց, զոր վերադոյնդ յիշատակեցաք: Վաճառականք, և այլք որք կամին գտանել ադամանդ, առնուն գնով յիշխանէն մասնաւոր սահմանս ինչ երկրի, որչափ և կամին, և տան փորել, ուր լինի երբեմն, զի բիւրապատիկ շահին ք՟ զգին երկրին, սակս առատ գտանելոյ ականց: Սակայն սահմանեալ կայ յօրինուստ մասնաւոր չափ ինչ. զի թէ գտցի ադամանդ մեծ ք՟ զայն չափ, յարքունիս գրաւի. այլ լինի ևս զի կրեն վնաս մեծամեծս, յորժամ զկնի բզմ՟ ծախուց և ծանրակիր աշխատութեանց սակաւ, կմ՟ ոչինչ գտանեն:

Ռաճափուռ: Քղ՟ք կառուցեալ 'ի վր՟ համանուն գետոյ, իբրև 12 մղոնաւ հեռի 'ի ծովէն. յորմէ ընդդէմ փոքրիկ նաւակօք բարձեալ տանին զվաճառս 'ի քաղաքն՝ յորժամ առատացուն են ջուրք. վս՟ զի յայլ ժմկս այնչափ սակաւ են ջուրք նր՟, մինչ մարթ է և ոտիւք անցանել ը՟ նա. ու՟ է փոքրիկ աւան.

'ի սմին քաղաքի էր աթոռ Ծավանձի կամ Սըվանձ անուն բռնակալին. որ յանցեալ դարու բազում աշխատ արար զնապաստն վիզափուրայ զօր իւր, այլ և զարքայն մողոլաց ։ Անգղիացիք ունէին անդէն բնակութիւն, և համբարանոցս վաճառաց. բայց արտաքսեցան 'ի հնդկաց. և [illegible] նչ̃ մտին գաղղիացիք ։ Գլխաւոր վաճառք քաղաքիս են բորակ, պաստառք, և պղպեղ, որ լինի 'ի շրջակայ անտառս նորա ։

Վէլլօրը ։ Բերդ ծովեզերեայ 'ի հարաւակողմն առճափուտայ ։

Յօդ Է . Հէյտարապատ . Հէյտէրապատ, կամ Կօլգօնտա .

Սուպայութիւն կամ տէրութիւն Հէյտարապատայ՝ յարևմտից սահմանակից է վիզափուրայ. 'ի հարաւոյ՝ գառնատիկ նահանգին. 'ի հիւսիսոյ՝ օրիսայ. իսկ յարևելից՝ ծովուն ովկիանոսի ։ Գլխաւոր գետք նորա են Կօտէրի. Վէնէրա. Մուսի, կամ Մուզի. Նէւա. Բիմանա. Քրիշնա, կամ Քիշնա.

Տէրութիւն Հէյտարապատայ 'ի նախնումն էր մասն մեծի տէրութեան բիշնակարայ կամ պիսնակարայ, որ 'ի կումորինեան հրուանդանէ ձգէր մինչև յսուպայութիւն օրիսայ ։ Պատանացիք որք են ցեղք ինչ եկեալք 'ի հիւսիսոյ, առին զմի մասն կալուածոց նորա. ապա զմիւս ևս մասն առին մողոլք ։ Վերջին ինքնակալն բիշնակարայ զհրամանատարութիւն համօրէն զօրաց իւրոց հաւատացեալ էր չորից մահմետական սպարապետաց իւրոց. որոց իւրաքանչիւրն թիկունս արար ինքեան զզօրս իւր, առ 'ի լինել ինքնիշխան տէր մասին իրիք այնր տէրութեան ։ Հզօրագոյնն 'ի նոցանէ հիմնեաց զթագաւորութիւն Հէյտարապատայ կամ Կօլգօնտայ. և զբնակութիւն իւր հաստատեաց 'ի վիզափուր ։ Այլ մողոլք զսա ևս փութով ընդ տէրութեամբ իւրեանց նուաճեցին 'ի ձեռն ավրանկզիպ թագաւորին. բայց 'ի լինել բազմաշփոթութեան 'ի հնդկաստան, սուպայն սորին նահանգի անդրէն կալաւ զանկախութիւնն. և մինչև ցայժմ է ինքնիշխան տէր յիւրում նահանգի ։ Յայսմ [illegible] են [illegible] հանք անդամանդ քարանց. և այլոց պատուական ականց. յորս երևելի է հանք գովլըռուրայ. Նոյնպէս ծաղկեալ է 'ի նմա և վաճառականութիւն նկարեալ կամ Չիթ պաստառաց, և այլն:

Գլխաւոր տեղիք նորա են :

Հէյտարապատ, կոչի ևս Պաղնակար որ Թարգմանի Պարտէզ Նակարայ, զի յառաջագոյն ոչ այլ ինչ գոյր անդ եթէ ոչ պարտէզ Թագաւորի տեղւոյս. որ 'ի խնդրոյ կնոջ իւրոյ Նակարայ հիմնեալ աստէն ապարանս և քաղաք, յանուն նորա անուանեաց պարտէզ Նակարայ: Ունի պարիսպ խոնարհ առ որով անցանէ գետ՝ որ Թափի 'ի ծոցն պանկալայի մերձ 'ի Մախսուլիպատամ. և է քաղաք մեծ, յորում գտանին բազում մեծաշէն և վայելուչ շինուածք, և ապարանք, մինչ ապարանք սուպայլին. բնակիչքն են բազմահարուստք և լի գանձիւք. արտաքոյ քաղաքին են երկու լիճք, ուրոյ իւրաքանչիւրոց շրջապատ է իբրև 3 մղոն. և առ նոքօք տունք մեծամեծաց: Տես ստորև և ըզ Կօլգօնտա. և զերենկապատ:

Կօլգօնտա: Երևանէ սաւ 'ի բառէս Կօլգար, որ նշանակէ Հովիւ. վասն զի գոգուբ շահ յետ յափշտակելոյ զայս սահման, 'եյուղելն տեղի ինչ ամուր յապաստան անձին, հովիւ ոմն առաջնորդեալ եցոյց նմա զայս տեղի, և յայն սակս կոչեաց յայս անուն: Է բերդ հէյտարապատայ 'ի վերայ լերին, հեռի 'ի նմանէ 6 մղոնաւ 'ի հիւսիսոյ արևմտից. պարիսպն քարաշէն, ունի հինգ բոլորակաձև աշտարակս և ամրաձիգ գործիս, առաջի պարսպին խրամ խորայատակ, և առաջի դրանց բերդին կամուրջ 'ի վերայ խրամին. շրջապատ նորա գոլով մեծ իբրև քաղաքի, մարթ է կոչել զսա քաղաք. պատմի թէ 'ի հէյտարապատայ մինչև 'ի Կօլգօնտա, է լայն անցք ստորերկրեայ առ 'ի փախչել բնակչաց յայս բերդ 'ի ժամու պատերազմի. փոքր ինչ հեռի 'ի Կօլգօնտայէ են շիրիմք կամ Թիւրպէք հիմնողի բերդիս և հնգից Թագաւորաց որք զկնի նորա յաջորդեցին: Եւրոպացւոց մատենագիրք բազում ուրեք զՀէյտարապատն կամ զպաղնակարն Կօլգօնտա քաղաք կոչեն. իսկ զայս բերդ, բերդ Կօլգօնտայի անուանեն. որպէս կոչէ և հայրն բուշ 'ի նամակն իւր գրեալ 1719 'ի Բունտիչէրի: 'Ի շրջակայս Կօլգօնտայի ելանէ անդամանդ ընտիր, ուստի ածի յամենայն աշխարհ. իսկ արծաթ և ոսկի ամենայն աշխարհի հաւաքի յայս տրուն Կօլգօնտայի:

Երենկապատ: Է արուարձան հէյտարապատայ՝ ուր բնակեն հասարակ ժողովուրդք:

Գունտուր: Քաղաք հռչակաւոր վասն իւրոց հանքացն ա-

դազադամանդ ականց․ որք կարի մեծ են քան զադամանդս ռաօլգոնդայ՝ որ 'ի սահմանին վիզափուրայ․ սակայն ստորին են գեղեցկութ̃ և պայծառութ̃ ։

ՋԸԳԷՐՆԷԴԷ ։ Է հռչակաւոր կռատուն․ ուր խուռն ընթանան ուխտաւորք կռապաշտից 'ի շրջակայ կողմանց, և է առ սահմանօքն գառնադիկայ․ 'ի հարաւոյ կողմանէ միումն 'ի վտակաց քրիշնայ գետոյն ։

Յայս Հնդիկ անկանին և այլ ք̃ղ̃քք ծովեզերեայք․ որք են Մասուլիպատամ, կամ Մախսուլիպատամ․ Գանփաշիր․ Մոնդաջանաւոր․ Նարսափուր․ Վիզիգաբատամ․ և Պիմլիպատամ ։ Այլ ք̃ղ̃քի այն ծովեզերեայ կողմանք միով անուամբ անուանեն Գորոմանտել, 'ի յօդ․ ժա․ ունիմք խօսել զա̃յնէ, ուր և զԳորոմանտելայ ։

Յօդ Է̃․ Գոնդուան ։

Գոնդուան անուանի հիւսիսային ծովեզերեայ մասն արևմտեայ կողման ցամաքակղզւոյն․ և պարունակէ զ̃ք̃ղ̃քս՝ որք յառաջն էին կամ 'ի մասնաւոր տեարսն, և կամ 'ի վիզափուր, և կամ յայլ Հնդիկս ։ Արդ ոչ է այլ ինչ Հնդիկ զանազան յայն Հնդկայն․ այլ մեր զայս Գոնդուան եդեալ 'ի կարգս Հնդկաց այսր ցամաքակղզւոյն, յայսմ վայրի ունիմք խօսել զա̃մ երևելի ծովեզերեայ ք̃ղ̃քացն ։

Տաման ։ Է ք̃ղ̃ք ը̃ ի̃րութ̃ փորդուգալաց բաժանեալ յերկուս 'ի ձեռն համանուն գետոյն․ և է 'ի մէջ ծոցոյն քամպահաթայ, կամ քամպայեայ․ 'ի հիւսիսոյ պասդայիմայ ։ Այն կողմն ք̃ղ̃քին՝ որ է յաջմէ գետոյն, կոչի Հին Տաման․ իսկ միւսն՝ որ է 'ի հակառակ կողմն, Նոր Տաման, յետինս այս գեղեցիկ է․ Թէպէտ փոքր և սակաւաբնակ․ որ և բաժանեալ է ը̃ երկայն յերիս ուղղագիծ փողոցս․ զորս այլ ևս չորք խաչաձև ը̃ մէջ հատանեն ։ Տունք նր̃ գրեթէ առ հասարակ զատուցեալ են 'ի միմեանց․ իւրաքանչիւրն ունելով իւր սեփական պարտէզ․ և ը̃ մեծի մասին են միայարկ ։ Շրջապատ քաղաքին է իբրև 2 մղոն․ պատեալ շուրջանակի պարսպաւ․ և վառեալ պտ̃զմական զինուք․ ունի և երևելի գունդ մի պահապան զօրաց՝ որոյ զօրագլուխն է միանգամայն հրամանատար և իշխան ք̃ղ̃քին ։ Երիք մենաստանք են 'ի նմ̃․ և մի ժողովրդապետութի̃ ։ Գտանին 'ի նմ̃

և

Պոմպայի ։ Եւ փոքրիկ կղզի, զոր ոմանք յԹադրոյց համարին լինել ՄԻԼԻԶԻԳԵՐԻՍ կղզի՝ յիշատակեալ 'ի պտղոմէայ ։ Այլ վն գոլոյ մօտ 'ի ցամաք անդր, եդաք 'ի ծովեզերեայս գաւառակս ։ Շրջապատ նր է իբրև 20 մղոն և ևթ ․ յորում է և քաղաք համանուն ․ և բերդ նր ամուր և կանոնաւոր ․ այլ օդն յոռի և մահաբեր, որոց չէն ընտել տեղւոյն ։ Յայս կղզի զառաջինն յեւրոպացւոց փորթուգալք տիրեցին 'ի 1662 ․ զոր ապա ետուն արքային անգղիոյ 'ի պատճառս ամուսնութե դստեր արքային փորթուգալայ, ընդ արքային բ կարոլոսի ․ ապա արքայն անգղիոյ ետ զնա 'ի պարգև ընկերութե վճռկանաց անգղիացւոց արևելեան հնդկաստանի, վն յաջողակութե նւհնգստին 'ի դիւրութե նաւուց նր և վաճառականութե ․ Է որոց իշխանութե կայ մնայ մինչև ցայժմ ։

Փորթուգալք 'ի սկզբան անդ զայս կղզի ունէին միայն իբրև դիպաւոր նւհնգիստ ․ որ 'ի ժմկի խաղաղութե լինէր 'ի հանգիստ նաւուց վճռկանաց յաճախելոց յայն ծովեզերեայս ։ Իսկ 'ի ժմկս պտզմի դիպան տեղի ձմերելոյ անդէն զօրաց, որ օգուտ մեծ բերէր նց ․ զի այսպիսի քաջադէպ բանակետղ ուրուրեմն գտանի 'ի ծովս հնդկաց ։ Այլ յետոյ որքն օրէ ծաղկեալ բարգաւաճեցաւ 'ի նմ և վաճառականութիւն յոյժ ․ զի ընկերութիւն վճռկանաց անգղիացւոց արար զսա վաճառատեղի ամ տուրևառութե իւրոյ՝ որ 'ի մալապար, 'ի սուրատ, 'ի պարսկային ծոցն, և 'ի ծովէ արաբացւոց ։ Քանզի ամի ամի առաքէ նաւս ըն վաճառօք 'ի վաճառատեղիս իւր՝ որք են յարևմտեան ծովեզերեայս հնդկաց, 'ի կոմորինեան սարէ մինչև ցսուրատ ․ նաև յայլ տեղիս և 'ի նւհնգիստս ․ ոպ 'ի սընտ, 'ի պասրա, և 'ի պէնտէրապաս, իբրև 1300 բեռինս 'ի պէտս ագանելեաց ։

Այլ յաւէտ շահաբեր է սորին ընկերութե, տուրևառութիւն որ ը սուրատ ․ ուր տանին նաւուք երկաթ բրդ և կապար ․ այլ և ատոճեղէն կերպասս ․ և 'ի դարձի իւրեանց բառնան անթիւ ազգի ազգի ձեռակերտս ։ Վսն սորա քաջայարմար դիրք զբղմ անգղիացի վճռկանս յինքն ձգեաց ․ որք աճեցուցին զտուրևառութե նր յոյժ ։ Այլ և բռնակալութե Անկրիաս անուանեալ բարբարոս ազգին՝ բնակելոյ 'ի ցամաք անդր 'ի մերձակայ սահմանս կղզւոյն, զբղմս 'ի պանեան ցեղէց՝ որք առ հնրկ են լումայա-

փոխք

մոխք և վաճառականք փարթամք, 'ի սոյն կղզի փոխադրեաց· որոց գլխաւորքն անձնատուր գոլով 'ի վաճառականութե, մինչ 'ի նմին բարգաւաճութե պահեն զայն: Սոքա 'ի մալապարայ բերեն փայտ 'ի պէտս շինուածոց· և Բահրէ սնուանէն նիւթ 'ի պէտս առասանաց նաւուց: Նաև մեծագին և բազմագանձ բեռինք և վաճառք նաւուցն որք 'ի սուրաթայ ամի ամի գնան 'ի պասրա, 'ի ճիտտա, և 'ի մոքքէ, և երբեմն նաև 'ի չինումաչին, ը մասին են վաճառականացն սուրաթայ, և ը մասին վաճառականացն պոմպայի:

Նոր Չաւուլ: Է քղք իբրև 24 մղոնաւ հեռի 'ի տապուլյոյ 'ի հիւսիսակողմն մերձ 'ի ծովէ· որ թէպէտ չէ այնչափ ինչ մեծ, այլ վայելուչ է և ամուր· և ունի ամրոց հզօր 'ի գլուխ լերին, զոր 'ի 1507 առին փորտուգալք: 'Ի շրջակայս Չւոս սր են բզմ մեծագին վաճառք և ձեռագործք, որք 'ի յարգի են յամ կողմանս հնդկաց և արևելեայց: Գլխաւորն է մետաքս, զոր առաքէ 'ի կոա· 'ի համօրէն ծն հնդկաց· որ լաւ ևս է ք զչինացւոյն:

Հին Չաւուլ: Քղք մեծ և ընդարձակ ք զվերբինն, այլ ոչ այնչափ վայելուչ և ամուր· իբրև 8 մղոնաւ հեռի 'ի ծովէ· որում տիրեն բնակիչք երկրին: Յայս քաղաք գործեն ազգի ազգի պատուականն մետաքսեայ կերպաս, և գեղեցիկ արկեղս և տուփս· որ է Ղուլթի, և այլ պէսպէս արհեստակերտս ը օրինակի և սովորութե չինաց՝ բազմարուեստ ճարտարութբ· քղի բնակիչք նր ճարտար են յոյժ և աշխատասէր:

Տապուլ, կմ Տաբօլ: Քղք առ Գուճճվագօ անուն գետով 'ի հիւսիսակողմն կոայի· 6 մղոնաւ հեռի 'ի ծովէ: Այս քղք յառջն ծաղկեալ էր յոյժ· այլ յետոյ քանդեցաւ 'ի պտրզմաց: Փորտուգալք 'ի 1508 աւերեցին նմ առ ալմէյդաւ սպարապետիւ իւրեանց, աւել 'ի հիտալ խանէն՝ որ առ նովին ժամօք թագաւորէր 'ի կոա· և զքաղաքն ողջոյն 'ի հուր և 'ի սուր մաշեցին: Այսպէս յետ բզմ ամաց բնակիչք տեղւոյն անդրէն յինքեանս ընկրկեցին զքղքն· բայց գտին զնա քանդեալ և աւերեալ· որ 'ի 1639 էր առանց դրանց և առանց պարսպաց· բոլոր ամրութիւք նր էին երկու փոքրիկ մարտկոցք 'ի կողմն գետոյն զինեալք չորիւք երկաթի հրազինուք: Իսկ յամին 1641 եղև ը իշխանութբ սուսլայ նապապին վիզափուռայ· այլ այժմ 'ի պտճռս բազմապետութե յաճախելոյ յԾէն մողոլաց. է զի՝ այսոք տիրէ նմ, և է զի՝ այն ոք ։ Բնակիչք տապալուլոյ ըստ մասին կռապաշտք են և ի մասին մահմետականք, որոց գլխաւոր վաճառք են աղ, և պղպեղ, բայց սակաւ ։ Յառաջագոյն ծովս այս առաքէր բեռնաւորեալ նաւս ընդ կարմիր ծովն, և ի ծոցն պարսից. իսկ այժմ վաճառականութիւն նորա գրեթէ բոլորովին անկեալ է ։

Են այլ ևս գիւղք երևելիք ՚ի ծովեզերեայս գօնգանայ. որ Դամպա. Սէբօլիա. Բուռնա. ևն ։

Յօդ Է. Գանարա ։

Գանարա կոչին ծովեզերքն, որք ձգին ՚ի հարաւակողմն գօնգանայ ։ Յառաջին ժամս փարթամ էր յոյժ այս երկիր, մինչ մարթ էր կոչել զնա անսպառ շտեմարան որիզոյ. այլ իբրև հար զնա Հէյտար Ալի խանն կմ հետևորդն այնր քաջ՝ հաւ-բաւէլ առ ժմնսին, զամ վաճառս նր յինքն գրաւեաց. զոր նց և եթ վաճառէ, որք տանին նմ զէնս և վառօդ և այլ պէսպէս գործիս պտղմի. որով և մեծապէս նուաճեցաւ տուրևառութիւն շահավաճառութեան նահանգին, զոր յառաջն ազատաբար առնէին ամենքն. միայն փորդուքալք ազատ են յօրինաց ատի հետևորդացն. որք վն զի տիրեցին երբեմն այսմ նահանգի, ունին շնորհելուն ինն ՚ի վճ այլոց ազգաց ։ Իսկ հոլանտացիք և անգղիացիք ունին ՚ի մէջ նահանգիս և բերդս ինչ, որք անուանի են առ վաճառականս ։ Գլխաւոր տեղիք որչափ ինչ են մեզ ծանօթ, են այս ։

Կօա, կմ Տէսլաժէս ։ Բերդ փարթամ հզօր և բազմավաճառ, որ և է գլխաւոր տեղի փորդուքալաց զոր ունին ՚ի Հնդիկս. երբև 75 մղոնաւ հեռի յՕնօրայ ՚ի հիւսիսոյ կողմանէ. կառուցեալ ՚ի կղզի ինչ, որոյ շրջապատն է երբև 27 մղոն ։ Նաւահանգիստ նր է մի ՚ի լաւագոյն նաւահանգստից ասիոյ. սակայն կարի նուաղ է այժմ անդ վաճառականութիւն. վն զի զկնի կորուսանելոյ փորդուքալաց զբազում արդիւնս և բարեբեր գեօղս, զորս ունէին ՚ի կողմանս յայնոսիկ, չլզեալ թշնամիք խափանեն զամ հաղորդութիւն նց ընդ ցամաքին. և չթողուն ձեռնհաս առնել, բայց միայն զենարս ծովու, ընդ որ կոյս երկու և եթ նաւոք առյաճախելոյ յԾէլին մարդկանց, է զի՛ այս ինչ տիրէ նմ, և է զի՝ այն ինչ : Բնակիչք տասպուլայ լռա մասին կռապաշտք են և բ մասին մահմետականք, որոց գլխաւոր վաճառք են աղ, և պղպեղ, բայց սակաւ : Յառաջագոյն Ճեղկս այս առաքէր բեռնաւորեալ նաւս ընդ կարմիր ծովն, և ը̄ ծոցն պարսից. իսկ այժմ վաճառականութի՛ն նորա գրեթէ բոլորովին անկեալ է :

Են այլ ևս քաղաքք երևելիք ՚ի ծովեզերեայս գաւառանայ. որք Դամզա. Սէէօլա. Բասնա. ևն :

Յօդ Է. Գուանարա :

Գուանարա կոչին ծովեզերեայք, որք ձգին ՚ի հարաւակողմն գաւառանայ: Յառաջին ժամս փառթամ էր յոյժ այս երկիր, մինչ մարթ էր կոչել զնա անսպառ շտեմարան ոսկւոյ. այլ երբ եհաս զնա հէյտէր ալի խանն կմ հետևեցինն այն քաջ՝ հաւրանէն առ ձեռին, զնմ վաճառս նր յինքն գրաւեաց. զոր նչ և եթ վաճառէ, որք ունին նմ զնա և փառօք և այլ պէսպէս գործիս պղնձի. որով և մեծապէս նուաճեցաւ տուրևառէն շահավաճառութի նահանգին, զոր յառաջն աշտատարար առնէին ձեռին. միայն փորգուքեալք ազատ են յօրինաց առտի հետևէրնաեցւոց. որք վս զի տիրեցին երբեմն այսմ նէհնգի, ունին զառանձնելուն իմն ՚ի վ.ծ այլոց ազգաց: Իսկ հոլանդացիք և անգղիացիք ունին ՚ի սմ նահնգիս և ինչս ինչ, որք անուանի են առ վաճառականս: Գլխաւոր տեղիք որչափ ինչ են մեզ ծանօթ, են այս :

Կոա, կմ Տեէլոկա: Քղքս փարթամ հզօր և բազմավաճառ, որ և է գլխաւոր տեղի փորգուքալաց զոր ունին ՚ի հնդիկս. երբև 75 մղոնաւ հեռի յծոփայ ՚ի հիւսիսոյ կողմանէ. կառուցեալ ՚ի կղզի ինչ, որոյ շրջապատն է երբև 27 մղոն: Նահնգիս նր է մի ՚ի լաւագոյն նաւահանգստից ասիոյ. սակայն կարի նուազ է այժմ անդ վաճառականութին. վս զի զնի կորուսանելոյ փորգուքալաց զբազում արդիւնս և բարեբեր վ.ռս, զորս ունէին ՚ի կողմանսն յայնոսիկ, աշխարհս թշնամիք խափանեն զնմ հայրենութն նց ը̄ չափայն. և չմտոցն ձնղ. արձակ, բայց միայն չձնղ. ծովս, ... որ կոա երկու և եթ նաւօք առ_ նէ տուրևառութիւն ընդ սխոււ քաղաքին, ընդ Միւղէնմալէկայ, և ընդ Մադաճայ :

Լերինք՝ որք շուրջ պատեն զկոա քաղաքաւ, 'ի ցամաքակողմն՝ պատճառեն անդէն տօթ սաստիկ. և այն ևս ջուր խմիք է պատճառ չլինելոյ նորա այնչափ մարդաշատ : Անդ նստի փոխարքայն և ընդհանուր քննիչն փորդուգալաց 'ի մեծաշէն ապարանս. մեծ փողոց քաղաքին, որ կոչի Ուղիղ ուղղոտայ երկայն իբրև 1500 քայլ, գեղեցիկ է յոյժ. առ որով աստի և անտի են հրապարակք ոսկերչաց և ադամանդագործաց. և տունք մեծամեծ վաճառականաց : Իսկ 'ի կէսն փողոցին գոյ վայելուչ հրապարակ զարդարեալ բազմապատիկ հոյակապ շինուածովք. յորս երևելի է տունն խորհրդոյ ընդհանուր քննութեան. և տունն քաղաքին. և արքեպիսկոպոսարանն, առ որով է մենաստան մեծակառոյց Ֆրանչիսկեան կրօնաւորաց [illegible] հոյակապ է կերպիւ. և յաւարտ փողոցին՝ է միւս ևս գեղեցիկ եկեղեցի անուանեալ Տեառն ողորմութեան. և առ նովաւ երևելի անկելանոց վասն որբոց. ուր և միւս ևս անկելանոց մեծաշէն և փարթամ յոյժ յայլ կողմն քաղաքին. Բնակիչք նորա պէսպէս են ազգաւ և կրօնիւք : Գետն որ կղզացուցանէ զկղզին՝ յորում կառուցեալ կայ քաղաքն՝ կոչի Մանտովի. և է մի 'ի մեծագոյն գետոց անտի համօրէն ծովեզերեայց այնր կողման :

Յամին 1500 էառ զայս քաղաք ալփոնսոս ալպուքուերք. և այնուհետև եղև ժողովարան փարթամութեան հնդկաց, և վաճառանոցն գլխահռչակ ամենայն աշխարհի, և բանալի համօրէն տուրևառութեան արևելեայց. իսկ այժմ անկեալ է յոյժ և նուաղեալ 'ի նախնի մեծութենէ և 'ի ճոխութենէ իւրմէ. սակայն տակաւին ունի յանձին բազմութիւն զօրաց. որոց ռոճիկ ամի ամի հասանէ 390909 ոսկի վենետիկեան : Արքեպիսկոպոսութիւն սորա հիմնեցաւ առ ժամանակօք սրբոյն Ֆրանչիսկոսի քսաւերեան. որոյ նշխարք մեծապատիւ յարգանօք պահին 'ի սմին քաղաքի 'ի պօնճէզու, [illegible] բարի Յիսուս անուանեալ եկեղեցւոջ :

Օնոր : Է նաւահանգիստ և բերդ ամուր ընդ իշխանութեամբ հոլանտացւոց. 'ի հիւսիսոյ պարսէլլորայ. որոյ շրջակայ երկիրն բերէ պղպեղ առլիւ, և որեղ սեաւ, որ առաւել 'ի համարի է քան զսպիտակն :

Գուշէլէր : Բերդ է և ամրոց անգղիացւոց հզօր. յորում են իբրև 800 բերդապահ զօրք. յորոց երեքհարիւր են եւրոպացիք. Թիւ բնակչաց քաղաքին հա-

սա

սանէ ց15000 ․ որոց երեւելի մասն են անգղիացիք ․ զի 'ի սկզբան անդ հաստատեալ ժողովրդեան անգղիացւոց գնաց անդր ։ Ընկերութիւն անգղիացւոց վաճառականաց ամի ամի առնու սատի միլիոն մի եւ 500 լիտր պղպեղ ։

Պուրճուլօր ․ Պուրգալօր, կամ Պուրգօլօր ։ Էր նաւահանգիստ ծովու, զոր առեալ փորդուգալաց շինեցին անդէն ամրոց ․ այլ յետոյ առաւ 'ի հոլանտացւոց, որք տէրեն նմա մինչեւ ցայսօր ։

Մանկլօր, կամ Մանկալօր ։ Յառաջագոյն էր սա ընդ տէրութեամբ փորդուգալաց ․ յորոց առին հոլանտացիք ․ ընդ որոց տէրութեամբ է մինչեւ ցայժմ ։ Քաղաքն է փոքր եւ յոռի ըստ շինուածոց ․ ունի ամրոց փոքրիկ, այլ անզօր եւ անշքեղան ․ ունի եւ նաւահանգիստ 'ի ծոց մի կիսաբոլոր ․ զոր առնեն երկու գետք մինչ եւ են մտեալ 'ի ծովն ։ Բռնութեամբ մակընթացութեան ծովու՝ ջուր տիղմ բերէ 'ի նաւահանգիստ անդր ․ եւ 'ի լինել տեղատուութեան, անդրէն 'ի ծովն դառնայ ընդ բազում աւազս հոսմամբ ։ Այս մանկլօր կամ մանկալօր է միանգամայն տէրութեան կամ ռաճայութեան հնդկաց ․ որ 'ի հիւսիսոյ գանանորայ՝ (զորմէ ունիմք գրել ստորեւ,) ձգի 'ի ծովեզերեայ կողմանս գանարայ ։ Երկիր նորա արգաւանդ է, բերէ պղպեղ, եւ անասուն բազում ։ Բնակիչքն ըստ մեծի մասին են հնդիկք կռապաշտք ։

Յօդ Ը ․ Գառնադիկ ․ Գառնադ ․ կամ Բիշնակար ։

Ընդ անուամբ գառնադիկ՝ առնումք աստանօր զհամօրէն զայն սահմանս, որ ձգի ընդ մէջ տէրութեան մայսուրայ մինչեւ ցսուպայութիւն հէյտարապատայ, որ է ընտրելագոյն կողմն նախնի տէրութեան բիշնակարայ կամ սիսնակարայ ․ եւ ունի իւր սահմանս 'ի հարաւոյ զթանճաւուր, զմատուրէ, եւ զմայսուր ․ յարեւմտից՝ զծովեզերեայս մալապարայ եւ գանարայ ․ 'ի հիւսիսոյ՝ զսուպայութիւն հէյտարապատայ ․ իսկ յարեւելից՝ զովկիանոս ։ Եւ բաժանի 'ի բազում գաւառս, որոց զգլխաւոր տեղիս որչափ ինչ ծանօթ են մեզ աշխարհագրեսցուք յառաջիկայդ ․ բայց զծովեզերեայ ճիղս մի՝ որք են գուրգըլուր, բոնդիչէրի, Մելափուռ. և Մատրաս, ուսկից ստորագրել 'ի յօդ. ժա. 'ի խօսելն զԿորոմանտէլայ:

Գառնուլէլ, Գառնուլ. որ կոչի եւ Բիճանակար, կամ Վիճանակար: Է քղք որ 'ի նախնումն էր մայրաքաղաք մեծի և զօրաւոր տէրութեան բիճանակարայ: Եւ այժմ եւս է մեծ և բազմամարդ կառուցեալ 'ի գլուխ լերին. յորում են հոյակապ արքունիք, ուր յառաջին Ժամս նստէր նաբապն գառնատըլին նէնգլին:

Դինտուբէրէ: Է քղք անջատեալ 'ի գառնուլայ կամ 'ի բիճանակարայ՝ միայն 'ի ձեռն գետոյ. յայն սակս մարթ է համարել զնա նոյն ը̃ առաջնոյն:

Անանտաբուռամ: Քղք կառուցեալ 'ի վր̃ միոյ 'ի վտակաց փէննէր գետոյն. որ յետ բզ̃մ ընթացից մտանէ յովկիանոսն առ կանիկարագնաւ քղքաւ:

Քանտէնօրէ, կամ Քանտէնէլօրէ: Քղք յարևելեան կողմն անանտապուռամայ. զոր ոմանք նոյն համարին ընդ բիճանակարայ մայրաքղքի նէնգին:

Գուրուլամ: Քաղաք կառուցեալ 'ի միջնավայրն սորէն Ծի: Պտղոմէոս յիշատակէ զԳուրուլա անուն քղք 'ի հնդկաց յայսկոյս գանգէսի. որ գուցէ սոյն այս քղք իցէ:

Քանճիվարամ: Քղք կառուցեալ 'ի մէջ գառնատայ և մատրասի. գրեթէ նոյնչափ հեռի յերկոցունց եւս:

Արքոտ, կամ Արգատ: Է գլխաւոր քղք համանուն նաւապութեն կամ գաւառին. որոյ գլխաւոր իշխան և կառավար՝ առ երևոյթս է նաւապ նր̃, այլ բուն տէրութի գաւառին է 'ի ձեռս անգղիացւոց. զորոյ պաշարումն սաստիկ յամին 1751, կացուցանելով իշխան զՄահմէտ Ալի խանն: Բայց 'ի սկզբան սոյն այս արարք անգղիացւոց՝ բզ̃մ և մեծամեծ դժուարութիւնս կրեաց. այլ սակայն զկն̃ պատերազմաց և աւարառութեանց, յաղթութեանց և դաշնադրութեանց որք ե̃ բզ̃մ ամս ձգեցան, 'ի գլուխ ելին անգղիացիք: Յայնժամ առաջ նոր իշխանն՝ որ միշտ բզ̃մ թշնամիս ունէր՝ զզ̃ւուս իւր և զանձն եւ տարապանս արար առ անգղիացիս, 'ի մատրաս հաստատելով զբնակութի իւր. այլ և առ 'ի վերծանել 'ի ծախուց և 'ի հարկաց, զոր եդեալ էին 'ի վր̃ նր̃, զնա՛ զվասս երկրին եւ նց̃. որք 'ի բազում ամս՝ Յամի հասանէին մինչև ց1090909 ռուփի վճարելեան. բայց և այժմ հասանեն ց763635 ռուփի. յորմէ 'ի բաց հանեալ 254545 ռուփի, որք զնան 'ի պէտս հն̃րկաց ծախուց. և զնոյնչափ զոր քառ. ամի ամի ընծայական կամ ցեղխանն

խանն առ 'ի մէջ սոսա նր, միայ տակաւին նշ լրկ շահ 240000 : Ուստի սակս այսպիսի դաշնադրութեան, գլխաւորագոյն մասն Գառնադիկ նհնգին ունին անգղիացիք ը՟ իւրեանց տէրութ՟բ :

Ճէնճի, կամ Ճինճի : Գլխաւոր քղք համանուն գաւառի 'ի հարաւային կողմանս Գառնադիկ նհնգէն առ փոքրիկ գետով, որ հոսի 'ի հիւսիսոյ Բոնդիչերայ : Անդ է բնակութ՟ն իշխանի գաւառիս, ուր ունի երկու մեծաշէն ապարանս, յորս փոփոխակի բնակէ :

Յօդ Թ. Մալապար :

Մալապար է հարաւային մասն արեւմտեայ ծովեզերեայց այսր ցամաքակղզւոյ. որ ձգի ը՟ մէջ Կոմորինեան սարին, և Նէթրէվէրայ գետոյն : Յարեւելից ունի իբր սահմանակից զԳառնադիկ, զՄայսուր, զԳօյմպատուր. յարեւմտից. և 'ի հարաւոյ՝ զՈվկիանոս. իսկ 'ի հիւսիսոյ՝ զծովեզերեայս Գանարայ : Յայս ծովեզերեայս Մալապարայ ըստ պատմելն՝ յառաջագոյն իշխէր մի միայն Թգր. այլ 'ի Թ գարու բաժանեցաւ 'ի զնդն Թգրութիւնս 'ի պատճառս ինչ զորս սորա ունիմք պատմել : Եւ մինչեւ ցայժմ գտանին 'ի նմ՟ չորք Թգրութիւնք կամ ռաճայութիւնք Հնդկաց, զորս յորոշելն 'ի միմեանց՝ ուրոյն ուրոյն նշանակեսցուք յառաջիկայդ :

Ա. Թագաւորութ՟ն Գանանօրայ :

Այս տէրութիւն ունի իբր սահմանակից 'ի հիւսիսոյ՝ զտէրութիւն Մանկլօրայ որ 'ի Գանարա. 'ի հարաւոյ՝ զտէրութիւն Գալիգուդայ : Եւ ունի իւր գլխաւոր տեղի զԳանանօր, որ յառաջագոյն էր մայրաքղք համօրէն սորին տէրութ՟ն. իսկ այժմ վաճառատեղի հոլանտացւոց. է սա քղք մեծ և ամուր. գլխաւոր վաճառք նր են պղպեղ՝ որ լինի 'ի շրջակայս նր. այլեւ արմաւս փայտ. հիլ. ՟թ՟ քեարիւլէ. Թամբրհընտի. և կոճապղպեղ. այն է Զէնճէֆիլ : Առաջին սկզբնաւորիչ քղքս եղեւ Ալմէյդա հիւպատոս փորթուգալ. որ հրաման առեալ 'ի Թգրէն Գանանօրայ՝ շինեաց ամրոց 'ի տեղւոջ, ուր է այժմ քղ՟քն գաւառօք. զոր բնակիչք տեղւոյն բզ՟մ անգամ ջանացան առնուլ, այլ ոչ կարացին: Ապա յամին 1664 առին զնա հոլանտացիք, և ունին մինչև ցայժմ: Այս քղ՟ք ունի և նաւահանգիստ պատուական ը՟դարձակ և ապահով ք՟ զայլ ամ՟ շրջակայ նաւահանգիստս:

Է. Թագաւորութիւն Գալիկուտայ.

Թագաւոր այսր Տ՟ի է մի ոմն 'ի պաշտօնէից կմ՟ 'ի քրմանց. ուստի այս Տ՟է միայն առ հնդիկս, ուր իշխանազունք և եթ իշխանեն յաթոռ թգ՟րութե. քզ՟ի յայլ տեղիս թգ՟րեն ամ՟ենք սոսկականք. մ՟նդ թէ ուրեք ուրեք արք անատոհմք և արհամարհէք այնչափ, զի թէ ընտանիք նց՟ խոնարհեսցին ճաշել 'ի միասին ը՟ թգ՟րին, մերժին 'ի ցեղէ իւրեանց իբր անարգս և պիղծս. արդարև ոչ ոք պարծանս համարի անդ ճաշել ը՟ թգ՟ր իւրեանց: Կառավարութ՟ն գալիկուտայ յոռի է յոյժ և անկարգ: Վաճառականութ՟ն նր՟ գրեթէ բովանդակ է 'ի ձեռս ոմանց սեւոց. որք են կռապաշտական ազգաց, անհաւատարիմք և լի ամ՟ ապականութ՟բք: Գլխաւոր բերք նր՟ է Պեհպէ. որ է տեսակ իմն պատուական փայտի. յաճախեալ 'ի գաւառս և 'ի լերինս նր՟. իսկ քղ՟ք են հետագայք:

Գալիկուտ: Է մայրաքղ՟ք մեծ, այլ անպարիսպ. որոյ շրջապատն է 9 մղոն. և իբրև 7000 տունք են 'ի նմ. ը՟ առաւել մասին անջատք 'ի միմեանց. այլ առ հ՟րկ ցածունք և անշուքք. ունի և նաւահանգիստ իբրև 3 մղոնաւ հեռի: Առաջին հիմնադիր քղ՟քիս եղև Չրամ Բերումալ ինքնակալն համօրէն Մալաբարայ, զոր 'ի պատուի ունին յոյժ համօրէն ծովեզերեայ բնակիչք հնդկաց: Ըստ աւանդութե արաբացւոց, և ը՟ պատմութե երկրին հնդկաց, իբրև սկսան արաբացիք մտանել յՏ՟ն հնդկաց 'ի Է դարուն, սոյն այս ինքնակալ սէր մեծ կալաւ առ մահմետական դենն. վ՟ն որոյ և ընտրեաց երթալ 'ի Մեքքէ. և անդ վճարել զկեանս իւր: Բայց նախ ք՟ զեղանելն՝ բաժանեաց [illegible] թգ՟րութե իւրոյ յազգականս և 'ի սիրելիս իւր. և յայս անտի ծագեցին այնչափ մանր տ՟րուք 'ի Մալաբար:

Յետ մեկնելոյ սր՟ գալիկուտ քղ՟քն այնչափ սիրելի և 'ի յարգի եղև արաբացւոց, մինչ առ սակաւ սակաւ սովորութ՟ի եղև անդ ուղղելոյ զնաւս իւրեանց.

եանց • Թէպէտ անյաջող է և վտանգաւոր նաւահանգիստ նր̄, սակայն և այնպէս եղև վաճառատեղի ծաղկեալ և բարգաւաճ յոյժ • որոյ զուգական ոչ գոյր 'ի համօրէն յայն աշխ̄ : Անդ տանէին ականս պատուականս, մարգարիտս, էլէքտրիոնս՝ որ է Քէհրիպար • ոսկի, արծաթ • կերպասս մետաքսեայս և բամբակիս • շաքար • և ազգս ազգս դեղօրէից և համեմից • փայտս պատուականս, պէսպէս խէժս, կապոյտ լեղակս, և անուշահոտ ծխանելիս • և զայլ ևս պատուականագոյն բերս, զոր բերէ ասիա : Զայս ևս մեծագին վաճառս տանէին անդր ըս̄ մասին ը̄ ծով, և ըս̄ մեծի մասին ընդ ցամաք՝ բարձեալ 'ի վ̄ր ուղտուց, եզանց, և փղաց • ք̄զի նաւարկութիւն չէր այնչափ ապահով, և ոչ այնպէս յաճախ, ոպ̄ եղև այժմ: Թ̄ր սորա 'ի ժ̄մկին յորում մտին փորթուգալք 'ի մալապար, բարգաւաճ էր յոյժ և մեծաշուք • որ կոչէր Զամօրին, ք̄ է ինքնակալ մեծ • այլ զկնի տիրելոյ եւրոպացւոց՝ կողմանց ինչ աշխ̄ի նր̄, և ը̄ իւրեանց իշխանութ̄ե գրաւելոյ զլաւագոյն ծովեզերեայ ք̄ղքս նր̄, անկաւ և մեծապէս անշքացաւ յառաջին վայելչութ̄է և 'ի փարթամութ̄է իւրմէ :

Դանոր, կ̄մ Դանուր : Է մայրաք̄ղք փոքրիկ ինչ գաւառի • որ յանուն ք̄ղքին դանոր անուանի • պարունակէ յինքեան 'ի զամօրինեան տ̄րուէն գալիկուտայ; յեզերս ծ̄ւին 15, կ̄մ 18 մղոնաւ հեռի 'ի գալիկուտայ :

Բոնիէնէ • և Պալուր, կ̄մ Բալուր : Են գեօղք ը̄ մէջ դանորայ և գրանկանորայ՝ որոց բնակիչք ըս̄ մեծի մասին են ձկնորսք :

Մայէն, կ̄մ Մահէ : Է վաճառատեղի գաղղիացւոց՝ քանի մի մղոնաւ հեռի 'ի գալիկուտայ 'ի հիւսիսոյ կողմանէ, ուստի պղպեղ բ̄զմ ելանէ :

Գ̄ • Թագաւորութ̄ն Գոչինայ :

Գոչին էր Թ̄գրութ̄ն ծաղկեալ և երևելի յորժամ փորթուգալք մտին 'ի հնդիկս և առին զարքայանիստ ք̄ղք նր̄ • այլ յետոյ վանեցին զնս̄ անտի հոլանտացիք : Իսկ մնացեալ սահմանք գոչինայ կացին մնացին ը̄ իշխանութ̄բ հարազատ Թ̄գրի իւրում • զոր ը̄ 25 ամս առ սակաւ սակաւ յինքն գրաւեաց արքայն դրավանկորայ : Իսկ Թ̄գրն գոչինայ մերկայեալ յետ մատուցածոց իւրոց, առաքեցաւ ապաստան լինել 'ի Դոլանի մայրաքղք իւր · ուր կարգեցաւ նմ̃ հաս՝ յամին լինել 144.000 · որ առնէ 6600 ոսկի վենետիկեան առ 'ի դարման կենաց իւրոց:

Յայս Ծ գաւառին և սարեաց · որոց վը̃ պատմի թէ 'ի ժամս Թգ̃րութ̃ յունաց անհնարին նեղեալ 'ի չարչարանաց և 'ի տառապանաց, որովք նեղէին զնս̃ յոյնք, սակս քաղկեդոնի ժողովոյն, հատուած մի 'ի նցն̃է գնացին փախստական յԾէն իւրեանց · և ճնպհորդելով ը̃ ցամաքն 'ի զինին Ծա, գտին հասին 'ի գօչին · յորոց ոմանք ապա դարձան յուղղափառ հաւատս: Իսկ այլք անխափան ունէին մինչև ցայժմ զնեստորական աղանդն և զծէսս իւրեանց: Սոցա կերպարանք բոլորովին փոխեալ է այժմ 'ի տարազ բնիկ սևամորթ հնդկաց · մինչև ոչինչ իմիք զանազանիլ արտաքուստ 'ի նցն̃է · ոպ̃ և փորտուքալք որք սերեալ են անդէն 'ի նախնի փորտուքալաց որք գնացին 'ի հնդիկս:

Գօչին: Էր քղք 'ի յուռթի և յարգաւանդ դաշտավայրի առ եզերբ մեծ գետոյն՝ որ բաժանի 'ի բզմ̃ առուակս, յորս հնար է նաւել փոքր նաւուց: Սակայն և այնպէս չէ այնչափ ծաղկեալ 'ի նմ̃ վճռկանութին: 'Ի միում յարուարձանեայց անտի քղքին՝ է հատուած մի հրէից գունօք սպիտակ և սևք · որք աւանդեալ են թէ գնացին անդր 'ի ժամս գերութեն բաբելոնացւոց: Զայս քղք առաջին առին փորտուքալք, ոպ̃ ասացաք · ապա յամին 1662 պաշարեցին զնա հոլանտացիք · և յետ ութ աւուրց պաշարման, նենգութբ̃ տիրեցին նմ̃: Մինչդեռ ը̃ իշխանութբ̃ փորտուքալաց էր կառուցին 'ի նմ̃ և եպ̃սարան · այլ յետոյ բարձաւ: Օդ քաղաքիս է այնչափ առողջարար · ուր գոյ և ախտ ինչ՝ յորմէ չարաչար այտնուն ձեռք կմ̃ ոտք:

Բօրքա: Էր քղք ընդ մէջ գօչինայ և տրավանգօրայ շինեալ 'ի հոլանտացւոց յետ տիրելոյ նց̃ գօչինայ՝ 'ի կղզի ինչ ը̃ մասին ձևացուցեալ 'ի ծովու, և ը̃ մասին 'ի գետոյ անտի գօչինայ · երկ 45 մղոնաւ հեռի 'ի նմանէ 'ի հարաւոյ:

Գօլէան · որ կոչի և Անճանկ: Էր տեղի ինչ հոլանտացւոց երկ 6 մղոնաւ հեռի 'ի բօրքայ 'ի հարաւոյ:

Է · Թագաւորութիւն Դրավանգօրայ :

Այս տէրութիւն ձգի մինչև ցսահմանս գօչինայ · և ունի իւր սեպհական թգւր անկախ և ինքնագլուխ : Փոքր մի յառաջ տ՟ս այս էր մի յանինշան և յաղքատ տ՟ացն հնդկաց · այլ մի ոմն 'ի թգւրաց նր 'ի վերջին ժմկս , Ճոխացոյց զնա յոյժ , կազմեաց գունդ մի 'ի փախստական զօրաց անտի գաղղիացւոց և փորդուգալաց · որք 'ի պտերազմունս նր բզմ քաջութիս գործեցին յօգուտ տէրութե դրավանգօրայ · իսկ 'ի ժմկի խաղաղութե կացոյց զնս պահապանս կոդադայ բերդին · Եմոյծ 'ի թգւրութե իւրում գործարանս խոշորանիւթ բամբակի կտաւուց և այլոց իրաց , որք 'ի սկզբան անդ բարւոք ելս ունէին առ հոլանտացիս 'ի Պուռագաւրէն , այլ յետոյ փոխադրեցան առ անգղիացիս` որ յավէնկին :

Երկուս տեղիս կմ կալուածս ունէին եւրոպացիք 'ի սմին թգւրութե · մին է դանեաց · որք ունէին սակաւ ինչ տեղի 'ի Քօլէչէն : Իսկ երկրդն անգղիացւոց յԱճինկօն · որք ունէին անդանօր չորս փոքրիկ մարտկոցս կառուցեալ 'ի լեզու ինչ աւազուտ երկրի · յորս կարգեալ կան` 150 զինուորք 'ի պահպանութե , կէս մի անգղիացիք , և կէս մի սեաւ հնդիկք : Գլխաւոր վաճառք նց` զոր հաւաքեն 'ի դրավանգօրայ տ՟էն` է պղպեղ , կինամոն հնդկ , որ է Տարչին · և կեղև ինչ ծառոյ` որ կոչի Գայերէ · յորմէ գործեն առասան 'ի պէտս նաւուց հնդկաց · այլև խոշորանիւթ պաստառ :

Դրավանգօր : Է մայրաքաղաք սորին թգւրութե` կառուցեալ 'ի հարաւային ծագ ցամաքակղզւոյն · քանի մի մղոնաւ հեռի 'ի ծովէ : Եւ թէպէտ չէ այնչափ ինչ մեծ , բայց է բարւոք վաճառատեղի , զօրաւոր և փարթամ:

Են այլևս քղքք և գիւղք 'ի մալապար · զորոց բաց յանուանց չունիմք այլ ինչ ծանօթութե :

Արփէնտու: Աւան առ սահմանօք տէրութ՟ն գալկունդայ:

Տաճան Գօդդէյն. և Ահմաբանճամ: Են աւանք առ վանի գետով:

Ջանկէր բալամ. և Տարապան: Են աւանք 'ի հարաւային մասին այսր տէրութ՟ն:

Են այլ ևս աւանք և գեօղք 'ի սմին տ՟րութ՟ն՝ զորոց զանուանսն և եթ գիտեմք:

Յօդ ժա՟. Գորոմանտել:

Այսպէս անուանին համօրէն արեւելեան ծովեզերեայք այսր ցամաքակղզւոյ, որ 'ի հարաւոյ ձգի մինչեւ ցօրիսսա. զ՟ր ունիս տեսանել յԵացոյցն մեր, հանդէպ մալապարայ, գանարայ և գոնգանայ: Ոպ՟ 'ի մալապար, նոյնպէս և յայս ծովեզերեայս 'ի հարաւային կողմանս լինի տօթ անհնարին. սկսեալ 'ի մայիս ամսոյ մինչեւ ցվերջն հոկտեմբերի. բայց գիշերն բարեխառն է վ՟ն շնչելոյ ցօղաբերին ինչ հողմոյ 'ի հարաւոյ արեւմտից. և բ՟զմ անգամ սոյն այս հողմն զովացուցիչ շնչէ և 'ի յերեկի զկնի երից ժամուց միջօրէի: Իսկ յայլ ամիսս տարւոյն՝ օդ նորա թէպէտ ջերմ է յոյժ, այլ չէ այնչափ ինչ տապախարշ: Իսկ յամսեանն նոյեմբերի և դեկտեմբերի՝ դրեթէ անը՟հատ անձրեւէ: Երկիր ն՟ր բ՟զմ ուրեք աւազուտ է. և բաժանի 'ի մալապարոյ 'ի ձեռն անմատոյց բարձրաբերձ լերանց:

Ծաւալ ք՟ դյայտնել ծովեզերեայց գորոմանտելայ, սաստի մինչեւ ցպանկալա, առեալ միանգամայն և զզառանգիկ և զՀէկյտարապատ, են, եր մի միայն տ՟րութ՟ն Բինճալոր, կամ Պինճալոր անուանեալ: Նախնի ինքնակալք այսպիսի մեծ և ընդարձակ տ՟րութ՟ն ըստ հաստատելոյ աւանդութեանց և պատմութեանց սորին թ՟ի, էին արգարութ՟բ և իրաւամբք և ազատութ՟բ վարեին զխնամարութն իւրեանց. մեծապէս փոյթ կալեալ 'ի խնամս նախանգաց իւրեանց: Այլ յետոյ առ սակաւ սակաւ զայլոց ասիացւոցն կալան սովորութի, կալ եւ ալ փակեալ յապարանս իւրեանց 'ի գրգանս և 'ի հեշտութիւնս ընկղմեալ. և զհոգ՟ թ՟ի թողուլ 'ի ձեռս կուսակալաց և պաշտօնատարաց. որոց տովեն պատճառաւ ապստամբեալ, իշխանութիւն եղև ինքնագլուխ տ՟ր իւրում նախանգի և քաղաքի. որ սարքին կուսակալքն գառնատայ, հէյտարապատոյ կմ գոլգոնտայ, օրիսայ, մանտուրայ, դանձաւուրայ, մայսուրայ, և Ճինճայ. բայց ոչ՝ միայն զիշխանութիւն կալան զթգրականն. իսկ անուն՝ զիւրեանցն պահեցին՝ Նայիպ կոչեցեալ. որ այնինքն է կառավար կմ կուսակալ: Այս խռովութիք դեռ նոր էին՝ յորժամ եւրոպացիք հասին 'ի ծովեզերեայս գորոմանտելայ: Առ նովին ժմկօք առեւտուրն ը օտարականաց 'ի կողմանսն յայնոսիկ նուազ էր յոյժ՝ ամփոփեալ միայն յադամանդ ակունս հէյտարապատոյ կմ գոլգոնտայ, զոր հանէին 'ի գալլիգուդ և 'ի սուրադ. և անտի յորմուզ և 'ի սուէզ. յորմէ սփռէին յեւրոպիա և յասիա: Իսկ այլ վաճառք էին սակաւ պաստառք սպիտակք, և նկարէնք. և այլ սոցին նման ձեռագործք. որք երբեմն հասին յեւրոպիա, նոր իսկ գալով այն նց, ըղմք 'ի ծովեզերեայ ազգաց եւրոպիոյ՝ յորդորեալ գնացին 'ի կողմանսն յայնոսիկ: Զառաջինն զտեղի կալան յեզերս ծովու. ոմանք զօրութ զինուց, այլ մեծ մասն քաղցրութբ յինքեանս յանկուցեալ զիշխանս տեղեացն, կալան անդէն իւրեանց սակաւ ինչ տեղիս բնակութե, որոց սահմանք ցանգով փակեցան: Բայց ապա փոխ ցանգոյն կառուցին դղեակս և ամրոցս. ուր առ անդորր և քաղցր կառավարութե, օրըստօրէ բազմացան բնակիչք. որոց բարգաւաճութիւն և անկախութե 'ի նախանձ շարժեաց զիշխանս տեղեայն այնոցիկ. այլ չունէին զօրութի բաւական առ եղծանել զնս. ուստի անշարժ կացին մնացին անդէն, օրըստօրէ և ևս ընդարձակեալ զկալուածս իւրեանց:

Բայց 'ի սկզբան անդ ոչինչ ընկերութի վաճառականաց եւրոպացւոց, առնէր առեւտրութիս ընդ ադամանդ ականց, այլ թողեալ էր 'ի ձեռս մասնաւոր վաճառականաց. մնդ հայոց. ապա առ սակաւ սակաւ անկաւ 'ի ձեռս անգղիացւոց ձեռնտուութ և ընկերակցութ վաճառականաց ազգիս մերոյ և հրէից՝ որք բնակէին ը պաշտպանութ նոցին անգղիացւոց թմ և սկզբնդ իսկ վկայէ: Այլ այժմ այս առեւտրութե դրեթէ իսպառ խափանեալ է. վն զի 'ի բաժանել հնդկաց ծէ 'ի բազմապետութիս, իշխանք կողմանցն այնոցիկ կարճեցին զերթեւեկ օտարոտի ազգաց 'ի տեղեացն՝ յորս ելանէին այն ակունք: Այլ այժմ հանօրէն վաճառք գորամանտելայ՝ են այսպիսիք բամբակի պաստառք ազնիւք սպիտակք և նկարէնք. բերեալ 'ի պանկալայէ. որոց առեւտրութիւն ըստ փոքր ինչ մասին է 'ի ձեռս բուն բնակչաց նր, որք կմ սպիտակ վաճառեն, և կմ ներկեն և նկարեալ՝ տանին և վաճառեն անդրէն 'ի պանկալա առ հարիւրն 35 կմ 40 շահին։ Իսկ մնացելն՝ որ է մեծագոյն մասն, բովանդակ է 'ի ձեռս օտարական ազգաց, հայոց, և այլոց աղգաց ոմանց արեւելեայց, և մնդ. եւրոպացւոց. յորս դասին նաև 'ի պանեան ցեղիցն հնդկաց՝ որք բնակեն 'ի կողմանս յայնոսիկ։

Զվաճառս սօ̃ նաւք եւրոպացւոց տանին սակաւն յաշխարհն նմ. որք ըստ հաշուէին պիտենկայ ամի ամի հանեն 'ի գործառնութեան մի̃ այլեւայլ վաճառատեղեաց կմ նաւահանգստից հնդկաց ծի՝ 4000 բեռինս։ Զի նաւք գաղղիացւոց 800 բեռինս բարձեալ տանին 'ի մալապար, 'ի մինդա, և 'ի կողմն գանգէսի։ Անգղիացւոց 1200 'ի սրատմայի, 'ի մոզամպայր, 'ի սումադրա, և 'ի փիլիպպինեան կղզիս։ Հոլանտացւոց 1500 'ի տեղիս խորեանց զոր ունին յափին հնդկաց։ Թող զայլ 500 բեռինս սահմանեալ մի մանիլայի։ Եւ գին բովանդակ 3500 բեռանցն՝ ը̃ նորին պիտենկայ է 305454 ոսկի վենետիկեան. 'ի բաց առեալ 2500 թանկագին բեռինս, որոց գին է 948 ոսկի։ Իսկ յեւրոպիա տանին 9500 բեռինս. 800 'ի դանիա. 2500 'ի գաղղիա. 3000 յանգղիա. 3200 'ի հոլանտա։ Եւ զի գին միոյ բեռին չէ ինչ աւելի քան 87 ոսկի վենետիկեան, վ̃յ և գին բոլոր բեռանց է 741818 ոսկի։ Բայց զայս գումար դրամոց՝ ոչ եւրոպիա, և ոչ ասիա, ը̃ բոլորին առձեռն դրամովքն՝ նաղդ ընտրելով վճարէ, այլ ը̃ մասին փոխանակութ̃ այլեւայլ իրաց. զի եւրոպիա տայ երկաթ կապար պղինձ բուստ, որ է մերճան. ապակեղէնս, և այլ սոցին նմանս։ Իսկ ասիա՝ համեմս՝ պղպեղ որիզ շաքար ցորեան և արմաւ. որոց գինն բովանդակ է իբրև 436363 ոսկի. յորմէ յայտ է թէ առձեռն դրամք մտանեն 'ի գործառնութեան իբրև 545520 ոսկի։ Այսր՝ յայս ծովեզերեայս գործառնութեան՝ ունիմք խօսել զամ ծովեզերեայ քաղաքացն և զի̃րութեցն՝ որք 'ի կոմորինեան սարէն ձգին մինչև ցօրիսսա. ուստի և զայնց ծովեզերեայ ջղեաց որք ը̃ ոմանց ծագրաց անկանեն 'ի նենգպն դառնադիկ, և 'ի հէյտարապատ։ Բայց զլմգրութիւնս և զմեծամեծս, որք են 'ի հարաւային կողմն մերձ 'ի կոմորինեան սար, առ որոշումն՝ ուրոյն ուրոյն կարգեմք ը̃ սովաւ։

ԺԱ. Թագաւորութիւն Մադուրայ:

Այս տէրութիւն որ 'ի կոմորինեան սարէ ձգի մինչև [illegible], և ըն̃ մե տարածի 'ի ներքս 'ի ցամաքն, 'ի հիւսիսոյ ունի իւր սահմանակից զմայսուր և զՃինճի. յարևելից՝ զմարաւա և զտանճաւուր. 'ի հարաւոյ՝ զծովն. իսկ յարևմտից զմալապար: Տարածութիւն նր̃ հաւասար է աշ̃ին փորթուգալաց. և մուտք նր̃ հասանեն ց8 միլիոն լիրէ գաղղիական: Եօթանասուն իշխանութիւնք են 'ի նմին Թագաւորութեան. իւրաքանչիւրն ինքնիշխան յիւրում վիճակի. որք առ այլ ինչ չեն պարտաւոր, բայց միայն վճարել ըզհարկն՝ զոր արկանէ 'ի վր̃ նոցա Թ̃գրն մադուրայ: Սոյն այս Թ̃գր, կարօղ է հեշտեաւ ժողովել գունդ մի 20000 հետևակ զօրաց, և 5000 հեծելոց. այլև 100 փիղս, որք 'ի պ̃տղմունս հնդկաց պիտանացու են յոյժ: Գլխաւոր տեղիք նր̃ են:

Մադուրա, կմ̃ Մադուրէ: Բ̃ղք՝ որ յառաջն էր մայրաքաղաք Թ̃գրութեն մադուրայ՝ կառուցեալ առ գետով 'ի խորին կողմն աշ̃ին, կրկնապատիկ պարսպօք և ըն̃մ փոքր աշտարակօք, ամրացուցեալ և վառեալ պ̃տղմական զինուք: Ունի ամրոց հզօր 'ի ձև քառակուսի, և առ նովաւ խրամ լայն և խորայատակ, պատեալ աստի և անտի ստուար պարսպօք: Իսկ ամրոցն 'ի ներքսուստ բաժանեալ է 'ի չորս մասունս: Յարևելեան և 'ի հարաւային մասին են արքունի ապարանքն և բազմապատիկ պողոտայք, ծովակք, և անտառք, և մեծամեծ հոյակապ սրահք. յորոց մին հաստատեալ կայր 'ի վր̃ 20 սեաւ մարմարինեայ մեծամեծ սեանց. այլև տունք ցրուեալք աստ անդ. և այլ ևս գմբեթայարկ շինուածք, և փոքրիկ աշտարակք: Ասեն թէ զայն ապարանս շինեաց միումն ճարտարապետ եւրոպացի. վ̃ն զի ը̃ պատմելոյ ականատես վկայից՝ ըն̃մ զարդք և ձևք տեսանին 'ի նմ̃ ը̃ կանոնաց ճարտարապետութեն եւրոպացւոց, խառնեալ ը̃ հնդկայինս:

'Ի ժմկս Թ̃գրացն մադուրայ՝ էր տեղի կանանց և հարճից Թ̃գրին, և ներքինեաց նց̃. յորում հաւակուորն դրումնուլոնայիգէն, որ առաւել քան զայլ վայելչացոյց զապարանսն զայնոսիկ, հաւաքաւոր կանայս բնակեցուցանէր: Իսկ 'ի միւս կողմն ամրոցին է հոյակապ տաճար Չքաւատէն անուանեալ կոչց̃.

և առ նովաւ քանի մի սրահք. յորոց 'ի միումն է մեծաշէն կառք. յորում յաւուրս տօնից եդեալ զկուռս շրջեցուցանեն յաղթանակաւ: Եւ տաճարն շուրջանակի պատեալ է երրեակ պարսպօք. և 'ի միջոցի իւրաքանչիւրոցն տնկեալ կան գեղեցիկ կարգաւ ծառք մեծամեծք: Զորս մեծամեծ աշտարակս ունի առ մուտս երից դրանց իւրոց: Իսկ արտաքոյ ամրոցին յարևելից կուսէ՝ են այլ ևս մեծամեծ կառք յաղթութեան, վ՟ն շրջեցուցանելոյ նոքօք զկուռսն 'ի թափօր. որք այնչափ մեծ են, մինչև ը՟ս ասելոյ հնդկաց, հազարաւոր մարդկան պէտք են առ 'ի ձգել զն՟ս: Յառաջագոյն էին անդէն և եկեղեցիք քրիստոնէից, յորոց հնագոյնն որ նուիրեալ էր Ա՟ծամօրն՝ էր ը՟ն խնամակալու՟թբ յ՟յեան կրօնաւորաց. բայց այն եկեղեցիք առհ՟սրկ քանդեցան, յորժամ էառ զքաղաքն Թ՟փուն մայսուրայ. այլ յետոյ շինեցաւ այլ նոր եկեղեցի մի քրիստոնէից յարուարձանս քղ՟քին :

Այս քղ՟ք կարի անշքացաւ յառաջին վայելչութէն յետ պ՟տզմի Թ՟գրին մայսուրայ. և մ՟նդ զկնի փոխադրելոյ զաթոռն թ՟գրու՟ե վերջին թ՟գրաց ն՟ց 'ի Դրիչենաբալ: Յամին 1757 առին անգղիացիք զքաղաքս զայս, և ամրացուցին զնա յոյժ. բայց ոչ վ՟ն յաճախութ՟ե տուրևառու՟ե ն՟ց. զի կարի նուազ է անդ վաճառականութ՟ն. վ՟ն զի զմեծ մասն պաստառաց՝ զոր գործեն 'ի սմին թ՟գրութ՟ե վ՟ն ասիոյ և ափրիկոյ՝ տանին 'ի վաճառատեղիս հոլանտացւոց 'ի ծովեզերեայս անուանեալ Բէկաքերի, կ՟մ Զենարան, այլ ևս եկամուտ երկրին որ կարի առաւել է. ՟ք զծախս, զոր ստիպին առնել 'ի պահպանութ՟ն տրութ՟ե իւրեանց :

Դրիչինաբալ: Էր և սա մայրաքաղաք. այլ գրեթէ զխովլին քանդեցաւ 'ի դժնդակ պ՟տզմնց յառաւել ներքսակողմն ցամաքին 'ի հիւսիսոյ մատուրայ առ քավէրի գետով. որ երևելի է ՟ք զայլ ա՟մ գետս գարոմանտելոյ: 'Ի նմին Ժ՟մկի առին անգղիացիք և զսա, և արարին զնա վաճառատեղի ամուր և շահաւէտ առաւել ՟ք զմատուրա քաղաքդ. վ՟ն զի մարթ է զսա ասել բանալի գաւառաց, մայսուրայ, և մատուրայ. որք առհասարակ են ը՟ն տրութ՟ե անգղիացւոց: Դրանգաւպին, կ՟մ Դրանգանգորին: Քղ՟ք մերձ 'ի ծովեզերեայս Թ՟գրուեն մատուրայ. որ սովորաբար կոչի Զենարան. ը՟ս իտալացւոց Բէկաքերի. որ 'ի ձեռս հոլանտացւոց: 'Ի հեռաւստ երևի սա ՟ք մեծաշէն՝ զարդարեալ պատուական շինուածովք, այլ 'ի մերձէ-

Ճենաւըն 'ի նա՝ ոչինչ ի͞րհաստ գտանի յայլոց անշուք և յոռի խղրացն հնդկաց: Թեպէտ բազմամարդ է, զի իբրև 50000 բնակիչք են 'ի նմ՝ քրիստոնեայք և հեթանոսք: Հոլանտացիք շինեցին անդէն ամրոց: 'Ի բոլոր ծովեզերեայս ընդերկրեայ չիք նաւահանգիստ բաց 'ի նաւահանգստէ անտի դուդգուլինայ:

Ե͞· Երկիր Մարաւայ:

Երկիրն մարաւայ ձգի յարեւելից մատուրայ. 'ի հիւսիսոյ սահմանակից է տանճաւուրայ: Չիք անդ քաղաք երեւելի, այլ միայն աւանք ինչ յորոց գլխաւորքն են.

Պիրուլ: Աւան յափն ծոցոյն մանարայ 'ի հարաւոյ:

Օրէյիւր: Աւան առ դրամբ գետոյն Մատուրայ, ե որ մտանէ 'ի ծովն:

Զ͞· Թագաւորութիւն Տանճաւուրայ:

Այս տ͞րութն յարեւմտից սահմանակից է մատուրայ. 'ի հիւսիսոյ՝ մայսուրայ. 'ի հարաւոյ՝ մարաւայ. իսկ յարեւելից ունի իւր սահման զովկիանոս: Երկայնութն նր է իբրև 100 մղոն. իսկ լայնութիւն 80 ևեթ. ուստի փոքր է յոյժ: Երկիր նորա արգաւանդ է և բարեբեր ք͞ զայլ ա͞մ տեղիս գորամանտելայ. զոր ոռոգանէ Քավէրի գետն մեծ, որ բղխանէ 'ի մայսուրայ յետ 400 և առաւել ևս մղոն ընթանալոյ. և 'ի մտանելն 'ի նա, բաժանի 'ի բզ͞մ առուս ը͞ սահմանս նր ողջոյն, պահէ զնա յանհնարին ցամաքութէ, պատճառեալ 'ի բոցակէզ տապոյ անտի, որ առէ ը͞ մեծագոյն մասն տարւոյն: Գլխաւոր բերք նր են որիզ առատ յոյժ, և ազգի ազգի արմատք 'ի պէտս ներկարարաց. թող զայլ բազմապատիկ ձեռագործս: Յառաջին ժամս տարեկան մուտք նր հասանէր յ91,090909 ոսկի վէնէտիկեան. բայց զկնի փոխանակելոյ զնա եւրոպացւոց, մ͞նդ անգղիացւոց, որք զտեղիս ինչ ա͞ռ ը͞ տրութ͞ իւրեանց գրաւեցին, կարի նուազեցան մուտք նր. և թերևս առ սակաւ սակաւ տիրեսցեն նաև համօրէն տրութ͞. ո͞պ տիրեցին այլոց տեղեաց: Գլխաւոր տեղիք սորին տրութե՝ են հետեւեալքդ:

Գանձաւոր : Մայրաքաղաք համօրէն թագաւորութեանս յարեւմտեան կողմն նորի, առ քաղէքի գետով : Յառաջին ժամս ոչ էր սա քղք, այլ լոկ տաճար կռոց. առեալ են և այլ ըստ մ փաքրիկ ամրոցք առ[ին] տրուն, որք յետոյ առ սակաւ սակաւ փոխեցան 'ի քղք : Կրկին պարիսպս ունի, առ և դրբշինարալ. բայց չէ բարեշէն երբեք զնորայն : Յերկու մասն է բաժանեալ. 'ի Հիւսիս, և 'ի Հարաւ. 'ի Հիւսիսային մասին են ապարանք թգրին, յորս չկք ինչ մեծաշինութի, բայց միայն քանի մի գեղեցիկ աշտարակք : Իսկ 'ի Հարաւային մասին չկք նշանաւոր շինուած. բայց տաճար մի կռոց, որ չէ ինչ մեծայէն :

Նեգաբատամ. որ թարգմանի Քղք օձից. այսպես կոչեն զսա Հնդիկք վս յաճախուն օձից՝ որք անդ գտանին : Յառաջագոյն էր սա ը իշխանութ փորտուքալաց. յորոց 'ի 1658 ամին Հոլանտացիք ձեռնտուութ թագաւորին գանձաւորայ, և բազմացուցին զբնակիչս նր. մինչև առամն կմ երկոտասան պէտքս շինել. զորս և լցուցին տառայնանկօք : Զայս տեսեալ թագաւորին գանձաւորայ, եւ պնդմա ընդդէմ Հոլանտացւոց, կամելով վտարել զնս անտի, այլ կորագլուխ հնդ կորստեամբ ըստ մ զօրաց դարձաւ յետս : Յամին 1690 Հոլանտացիք շինեցին անդէն ամրոց. և 'ի 1742 պատեցին զքղքն պարսպաւ, զոր պահեն մինչև ցայժմ :

Յայս քղք հաւաքին ամ պատուաւք սպիտակք և գունաւորք և ներքինք Դրբանիւթք և խոշորանիւթք. զոր ընկերութին Հոլանտացւոց ծախէ 'ի պէտս իւր : Փողոցք քղքիս լայն են, և տունքն մեծամեծք յորժ. յորս ը տիրապետութ փորտուքալաց՝ են մեծամեծ եկեղեցիք և լայնարձակ սրահք և այլ տեղիք զբօսանաց : Են անդէն և քանի մի եկեղեցիք. որոց մին է ուղղափառաց ը խնամակալութ Ֆրանչիսկեան կրօնաւորի միոյ : Բնակիչք նր ըստ մ են. որոց մեծագոյն մասն են քրիստոնեայք սերեալք 'ի նախնի փորտուքալաց. իսկ մնացեալքն են Հնդիկք. և պանեանցիք, որք վաճառականութիւն առնեն անդէն ընդ հովանաւորութ Հոլանտացւոց : 'Ի Հիւսիսային կողմն քղքին է արուարձան, յորում բազմութ կռատանց գտանին. այլ առհասարակ չքնիմք և աղքատաշէնք. և կուռք նց են զլուխ, և այլ խառնակերպ այլանդակ կերպարանք կուակերպք : Փոքր մի հեռի է սմա ևս կռատուն՝ որ ունի քարաշէն աշտարակ, զոր բնակիչք տեղւոյն առասպելեն թէ ա̃նյի է շինեալ։

Գուալիէօռ։ Քղ̃ք 'ի վ̃ր միոյ 'ի բերանոց անտի Գուչամ գետոյն՝ որ է մի 'ի վտակաց քավերի մեծի գետոյն. և որ մարթ է նաւել 'ի հիւսիսակողմն նեկաբոտանայ. չորք մզկիթք տաճկաց են 'ի նմ̃. և 14 կռատունք։ Բնակիչք նո̃ր են իբրև 15000. որոց մեծագոյն մասն պարապի 'ի գործել թաշկինակս հասարակս, և պաստառս խոշորանիւթս առ 'ի պէտս բնակչաց։ Զայս ք̃ղք 'ի 1738 ետ 'ի պարգև անգղիացւոց թ̃ր ումն որ անկեալ էր յաթոռոյ, և ընդ ամ̃ տեղիս շրջէր խնդրել օգնութ̃. այլ իբրև յաջողեցան իրք նորա, և անդրէն նստաւ յաթոռ իւր, վերստին էառ զք̃ղքն։ Այլ 'ի 1739 մի ոմն նաւապետ էառ զնա, և ետ 'ի պարգև գաղղիացւոց նախնի բարեկամաց իւրոց. իսկ 'ի 1760 անդրէն առին զնա անգղիացիք. այլ յետոյ 'ի 1765 վերստին առաւ գաղղիացւոց։ Շրջակայ գ̃աւ ք̃ղքիս թէպէտ փոքր է, այլ բազմամարդ է յոյժ. զի 15 աւանս ունի. յորոց գլխաւորն է հեստադայդ։

Ռամնաբադն, կմ̃ Պինբանոլէ։ Աւան 'ի գ̃աւռին գաբիլայոյ. թիւ բնակչաց նո̃ր համանէ 925000։ Անդ գործեն և ներկեն ազգի ազգի պաստառս պարսկայինս, թէպէտ ոչ այնչափ լինին ազնիւ վ̃ս պատգավիոյ և փիլիպպինեան կղզեաց։

Դրանկեբար, կմ̃ Դրանկամպար. զոր հնդիկք բնակիչք տեղւոյն անուանեն Դարանկանպատի որ թարգմանի. Քաղաք ալեաց ծովու։ Է ք̃ղք ը̃ իշխանութ̃ դանեաց. 'ի վ̃ր միոյ 'ի բերանոյ անտի քավերի գետոյն է որ մտանէ 'ի ծով. պարսպապատ. ունի և ամրոց բաւական 'ի պատսպարել զք̃ղքն և զծովեզերեայս նո̃ր։ Զշրջակայ երկիր ո̃ր՝ դանիք գնոյ առին 'ի թագաւորէն թանճաւուրայ, յորոյ սակս ամի ամի վճարեն 1500 ոսկի վենետկեան։ Այս երկիր թէպէտ փոքր է. զի բոլոր շրջապատ նորա է իբրև 6 մղոն եւեթ, սակայն արգաւանդ է յոյժ և բարեբեր և բազմամարդ. զի ունի բնակիչս իբրև 30000. յորոց 12 հազար բնակին 'ի դրանկեպար. և այլեւս 12 հազար յ[illegible] աւանի միում, յորում են բազմապատիկ գործարանք խոշոր արուեստից։ Իսկ այլք բնակին յայլ փոքրիկ աւանս՝ որք գրեթէ ամենեքեան գործավարք են խոշորանիւթ պաստառաց։

'Ի սոսա 300 եւեթ են եւրոպացի դանիք. յորոց 150 զինուորք են կարգեալք 'ի պահպանութիւն երկրին, որոց թոշակ յամին հասանէ ց8727 ոսկի. որ գրեթէ հաւասարի մտիցն՝ զոր Դանիք առնուն յերկրէ անտի ։ Ուստի ոչինչ կմ՟ սակաւ օգուտ բերէ նց՟. այնզի՝ և Դրինկիպար մայրաքաղաքն նց՟ թէպէտ հին է և բազմամարդ, այլ կարի նուաղ է տուրևառութ՟ նց՟. զոր թէպէտ Գաղղիացիք առ ժամ մի ծաղկեցուցին, մինչ առին զկողմանսն զայնոսիկ, այլ զկնի դաշնադրութե՟ն՝ որ եղև յամին 1763. իբրև ելին անտի նք՟, վերստին անշքացաւ և նուաղեցաւ վաճառականութե՟ն Դրինկիպարայ ։ Երեք եկեղեցիք քրիստոնէից գտանին 'ի սմին քաղաքի. մի՝ վն՟ Դանեաց լուտերականաց. երկ՟ն՝ վն՟ բուն բնակչաց դարձելոց 'ի լուտերականութե՟ն. զի Դանիք առաքեցին անդր քարոզիչս, որք և թարգմանեցին զա՟ծաշունչ գիրս 'ի լեզու հնդկաց. և զբզ՟մս 'ի նց՟նէ դարձուցին յաղանդ իւրեանց. երր՟դ եկեղեցին է ուղղափառաց ։ Մահմետականք ևս ունին անդանօր մզկիթ մի. որպէս և կռապաշտք հինգ կռատունս ։

Է. Այլ քաղաքք 'ի ծովեզերեայս Կորոմանդելայ ։

Պուտտըլուր, կմ՟ Կուտըլուր. կոչի ևս Սբ՟ Դաւիթ. որ է քղք՟ 'ի համանուն իւրում գաւառի ։ Այս քաղաք՝ ուր և հետագայքն մինչև ցՄախսաւլիպատամ, անկանին 'ի Կառնադիկ նահանգի Է՟ սահմանացն զոր որոշեցաք նմ՟ անդէն. այլ մեք ոչ՟ ասացաք՝ եդաք 'ի Կորոմանդել. զի յայս անուն կոչին այն ամ՟ կողմանք ծովեզերեայք ։ Երկայնութ՟ քղքիս ութն մղոնաւ չափ ձգի յափն ծովու. և իբրև չորս մղոնաւ 'ի ցամաքն. և է ը՟ տրութ՟ անգղիացւոց. զոր առին յումեմնէ իշխանէ հնդկաց, տալով 'ի գին նր՟ 67500 ոսկի վենետիկեան. յետոյ հաստատեցին զամրութ՟ սոյ 'ի սմ՟ նաև մօտոլք. որք առ ինչ զկնի՝ արեցին գառնադայ ։ Բայց ապա տեսեալ անգղիացւոց՝ եթէ վաճառատեղին զոր գտին նք՟ անդ, իբրև 2 մղոնաւ չափ հեռի է 'ի ծովէն, և զմտաւ ածեալ թէ հնար էր խափան կմ՟ արգելք ինչ լինել օգնութե՟ց առաքելոց նց՟ ը՟ ծովու, իբրև ասպարէզ կմ՟ ամրածիգ մի հեռի 'ի տեղւոջէ անտի, շինեցին ամրոց անուանեալ Սբ՟ Դաւիթ. մերձ 'ի բերան գետոյն. յափն ծովուն. որ կոչեցաւ և Գուրգըլուր յանուն գետոյ ։ Ապա կառուցան այլ ևս երկու գիւղք.

յորս ամենին նաև 'ի վաճառատեղին անդ՝ գտանին իբրև 60000 ոգիք. որոց գործ է ներկել և նկարել պաստառս, որք գան յայլոց նահանգաց Հնդկաց. և շինել պատուճակսն և գեղեցիկ սկահակս կամ պընակս. այն է ֆիալակ:

ԲՈՆՏԷՇԷՐԻ, կամ ԲՈՆՏԷՇԷՐԻ: Քղք երևելի ծովեզերեայ քանի մի մղոնաւ հեռի 'ի Գուրդըլուրայ 'ի հիւսիսակողմն. որ յառաջագոյն էր աւան փոքր և անշան. այլ յանցանել 'ի ձեռս գաղղիացւոց, 'ի սուղ ժամու եղև քղք մեծ, բազմամարդ հզօր և անառիկ: Շրջապատ նր իբրև 3 մղոն. պատեալ յերից կողմանց հողակերտ պատուարաւ, և խորախորատ խրամիւ. և ուրեք ուրեք ամրացուցեալ ամբարտակօք. և նաւակայան նր պաշտպանեալ յարմարադիր ամուր մարտկոցօք: Փողոցք նր ըստ առաւել մասին լայնանիստ և ուղղագիծ. ունելով աստի և անտի ծառս մեծամեծս վարսախիտս 'ի հովանի և 'ի զովացումն տօթոյ արեգական: Շինուածք տանց նորա վայելչակերտք: Էին 'ի նմ երկու եկեղեցիք քրիստոնէից, և առ նոքօք բնակարանք, մին յիսուսեանց, իսկ միւսն կապուչինաց. մի մզկիթ տաճկաց. և 2 կռատունք. այլ յամ շինուածս նր նշանաւոր իմն էր խորհրդարան քղքին մեծաշէն և հոյակապ: Իսկ թիւ բնակչաց 'ի 1761 հասանէր 960 հզր. յորոց 4 հազարն եւրոպացիք էին, կամ խառն 'ի հօրէ եւրոպացւոյ, և 'ի մօրէ հնդկացւոյ. 10 հազար և աւելի մահմետականք. իսկ մնացեալքն բովանդակ հնդիկք. յորոց իբր 15 հազար քրիստոնեայք էին. իսկ 'ի մօտակայ շէնս, որք կախեալ կան զքղքէ աստի, գտանէին բնակիչք իբր 10 հզր: Յայսմ վիճակի էր քղքս 'ի 1761 յորժամ առին զնա անգղիացիք, և հիմնայատակ արարին, քանդեալ և զամ ամրութիւնս նորա, և վարեալ զբնակիչս անհետ: Այլ 'ի 1765 իբրև անդրէն կալան գաղղիացիք զտեղին, նոյն հետայն համագումար դարձեալ անդր հնդիկք, որք ցրուեալ էին, և սկսան շինել զաւերակս բնակութեան իւրեանց. ուր և 'ի սուղ ժամու այնչափ բազմացան, զի 'ի 1770 թիւ նց հասանէր 927 հզր: Այլ 'ի 1778 'ի գրգռել նորոգ սկզբն գաղղիացւոց ը անգղիացիս 'ի պատճառս ապստամբութեան ամերիկացւոց, Հեքտոր Մունրօ զօրավար անգղիացւոց յանկարծ իմն եկեալ 'ի ծովեզր քաղաքիս ծանր նաւահանգստին հանդերձ 10 հզր պատերազմականօք. որոց պէսպէս կռուակալ գործեցին թէպէտ ըմ քաջութբ և ըն երկար դիծանարանաց, այլ զի չոլաալատ ամրութիւնք քաղաքին էր առաւել մասին չեւ եւ լին լցեալ, յայն սակս ՚ի կատարածի ստիպեցաւ հաշտութե խօսիլ ընդ անգղիացիս. տալով նոցա զկէս երկրին հանդերձ պատշաճաւոր պայմանօք ։ Այլ յետոյ անդրէն դարձաւ ՚ի ձեռս գաղղիացւոց, որք էրբ ՚ի 1785 սկսան շինել զպարիսպս նորա եւս քան զառաջինն. առ որ գործէին 2000 հնդիկք օրը եւ կանայք, մի մի ֆանօ առնլով յաւուրն, որ առնէ իբր 11 փող օսմանեան. եւ ՚ի 1789. եւ 90 հասեալ մերձ ՚ի կատարումն, չգիտեմ յինչ պատճառս՝ թողլին զգործն կիսակատար ՚ի հիւսիսակողմն քաղաքին. արձակեցին եւ զ4000 զօրականս, զոր պահէին անդ ։ Մի մասն պարսպին առ խրամով ցածւայր հասանէ ջուր ծովուն քարաշէն. իսկ մնացեալն հողակերտ պատուար լայնարձակ. եւ ՚ի վր ճնպրհ զուարճալի՝ ունելով յերկուց կողմանց միաշար ծառս հովանաւորս կանաչազգեստս ընդ ամն ողջոյն ՚ի ձմեռ եւ ՚ի զբօսանս քաղաքացւոց ։ ՚Ի վերջին ճիզս քահանայք ունին ՚ի կարգէ յիսուեանց հիմնեցին անդ եւ ուսումնարան, ուր ուսուցանէին զանազան ուսմունս եւ լեզուս. եւ յաճախեն անդ ուսանողք յայլեւայլ տեղեաց, մինչեւ եւ ՚ի մանիլայէ ։ Այս քաղաք թէպէտ չունի գեղեցիկ նաւահանգիստ, որպ եւ ոչ այլ քղքք որք են ՚ի ծովեզերս կորոմանտելայ, սակայն սա ՚ի վր այլոց ունի զայս առաւելութի, զի նաւախարիսխն սր պատեհական է. ուր նաւք կարեն խարիսխ արկանել առ ցամաքաւ ընդ պաշտպանութբ ամրոցացն ։ Նոյն եւ՛ ոչ սակաւ նշանաւոր է այժմ նաւակայանի առ անվտանգ առաջնորդութի նաւուց՝ լուսոյ մի բարձր իբր 100 ծողաչափ. որ երեւի ՚ի 21 կամ 24 միղոնաչափ հեռաւորութե ։

Մելափուր. Մելիափուր, կամ Մելափօր. կոչի եւ Ս̃ Թովմա ։ Գիւղ ծովեզերեայ երբեմն միով ժամաւ հեռի ՚ի մադրասու կիսաւերակ ։ Յառաջագոյն ՚ի ժամանակս տէրութե փորթուգալաց էր քղք բարեշէն, ունէր տունս, եւ այլ զանազան շինուածս քարաշէնս. բայց ապա յառնուլն հոլանտացւոց զմեծ մասն կալուածոց նց՝ զոր ունէին ՚ի կողմանս յանուսին, ենթակայ եղեն ղայս տեղի ՚ի ձեռս սուպա նաւապային, կամ թգւրին հէյտարապատայ. յետոյ առին զնա գաղղիացիք ՚ի նաւապատէն. այլ ՚ի վախճանի անկաւ ՚ի ձեռս անգղիացւոց ։ Կայ անդ եւ եկեղեցի մի մեծ յանուն սրբոյն Թովմայի. յորում ամփո

ընա

բնակիչքն թէ պահեն զեղարդն՝ որով խոցեցին զՍրբ առաքեալն Թովմաս. յանուն այսր եկեղեցւոյ, Միլափուր՝ կոչի բազում անգամ 'ի բնակչաց Սէն Թովմաս։ Անդ է և եպիսկոպոսարան լատինացւոց՝ որոյ թեմ ձգի մինչև ցպանկալա։ Գիւղինդ զՄելափուր, և զՍրբն Թովմաս, զինչն ջրդա համարի 'ի բանից վանականն Ճնճհորդին, որ երբեմն զայլևայլ անեղծս ցուցանէ զնա 'ի պատմութեան իւրում. այլ որ Թովմաս է 'ի յարուարձանին Միլափուրայ, և մի համարի 'ի բնակչաց. զի ոչ պատմեն, յառաջագոյն միացեալ էր Ժ ՆՃ. վն զի 'ի Միլափուրայ մինչև ցեկեղեցին Սրբ առաքելոյն՝ կային տունք. որք այժմ քանդեցան. ոչ նաև 'ի նոյն իսկ Միլափուր բազում տունք աստ և անդ կործանեցան, որով մնացեալքն ցրիւ երևին բազում 'ի միմեանց. տեսանի և եկեղեցին որ նստի 'ի Սրբն Թովմաս, որ կոչի եկեղեցի Սրբոյն Թովմայի՝ նոյնպէս և եկեղեցի Միլափուրայ. այն զի նոյն Ճնճհորդ՝ անջատէ 'ի Միլափուրայ ոչ այնչափ զայս եկեղեցի, քան թէ զմիւս եկեղեցին Սրբոյն Թովմայի՝ որ է 'ի վերայ լերին. զորմէ տես 'ի հետագայդ։

Լերինք Սրբոյն Թովմայի։ Են երկու բլրաձև լերինք, մին մեծ, և միւսն փոքր. իբրև 2 ժամու հեռի 'ի Միլափուրայ. յորս գան և երկու եկեղեցիք յանուն Սրբոյն Թովմայի։ Մօտակայ լեառն մատրաստու է ժամու հեռի 'ի նմէ 6 և կէս անգղիական մղոնաւ, և 'ի գլուխ նորա պարապապատ մենաստան ուր երբեմն բնակէին յիսուսեանք. առ եկեղեցաւ մենաստանին՝ է այր Ճգնութեան Սրբոյն Թովմայի ըստ աւանդելոյ բնակչաց, և խորան 'ի նմին. և 'ի մենաստանի բղխէ ջուր յապառաժ վիմէ, յորոյ վերայ է և մատուռն. վասն զի աղօթիւք Սրբոյն բղխեալ ասեն զայս ջուր, յորմէ առնեն աստ և անդ 'ի բժշկութեան հիւանդաց, ոչ միայն քրիստոնեայք, այլև կռապաշտք. առաջնոյ մենաստանին ցուցանեն և զայլ տեղի աղօթից Սրբոյ առաքելոյն։

Ալընմէր ժայռոտ է գիւղ 'ի տափարակի կոչեցեալ Մամլան. որոյ բնակիչք են կռապաշտ հնդիկ, որոճեռանիկ խալէմքեար. երևին աստէն աւերակք բազումք, վասն զի յառաջագոյն կային բազում տունք փորթուքալաց և հայոց. որք և ունէին պարտէզս և կալուածս, այլ այժմ քանդեցան.(ոչ նաև եկեղեցիք աստ և անդ,) 'ի պատճառս պատերազմաց և ասպատակելոյ մարաթայից։ Ընդ մէջ ժայռին և Մամլան գեղջն՝ է գետակ որ 'ի ժամս անձրևաց առատանայ

ամէ.

կոյծ. 'ի վ̃ր գետակիս մեծ իշխանն յազգէս հայոց պետրոս ոսկաննեան շինեաց քարաշէն կամուրջ մեծակառոյց բազմակամար 'ի դիւրուն̃ անցաւորաց, յոր ասի թէ ծախեաց 30 հզ̃ր հուն, որ է ոսկի մարգասու և մողոլաց. (մի հուն առնէ 4 ղո̃ւշ. և իբր 10 փռ̃յ.) և 'ի նորոգութ̃ կամրջին հաստատեաց եկամուտ առնել 'ի ձեռս անգղիացւոց ։

Իսկ միւս մեծ լեառն հեռի է 'ի մադրասու 9 անգղիական մղոնաւ. իսկ 'ի մեծ լեռնէն կէս փարսախաւ, ուր̃ դնէ հայրն դաշար 'ի թուղթն իւր. գրեալ 'ի 1711. ուր և յիշատակէ զհայս ։ 'Ի գագաթան նր̃ է պարսպապատ եկեղեցի օրորոցաձև, ուր աւանդեն նահատակեալ ս̃րյն թովմայի. և առ նովաւ բնակարան փոքր օգոստինեան կրօնաւորաց. զայս եկեղեցի նորոգեաց ձուղայեցի ոմն յազգէս հայոց. և եդ մակագրութ̃ հայկական 'ի հիւսիսակողմն եկեղեցւոյն արտաքուստ, 'ի յիշատակ նորոգութ̃ն, որ և կայ թաղեալ 'ի նմին եկեղեցւոջ հայկական տապանագիր ունելով 'ի վերայ ։ 'Ի սմին եկեղեցւոջ է հրաշագործ պատկեր ս̃րյ ածածնին և խաչ փորագրեալ 'ի վիմի. զոր ս̃րյն թովմայի ասեն քանդակեալ. այս պատկեր և խաչ յամին իբրև 1556 գտաւ ը̃ երկրաւ. 'ի բրելն զերկիր առ 'ի կառուցանել զեկեղեցի յանուն ս̃րյն թովմայի. երկայնութ̃ խաչին է 4 ոտնաչափ. իսկ լայնութ̃ն 3. շուրջանակի զխաչիւն կամարաձև գրեալ կան 36 տառք բայց ը̃ օրինակի հին գրուածոց հնդկաց. փորձուքեալ ցուցեալ երկուց հմտագոյն պրահմանի քրմաց, երկոքին եւ միաբան այսպէս ընթերցան տառանց ինչ դիտելոյ միոյն զմիւսոյն. թովմաս, այր ա̃յ. առաքեալ յորդւոյն ա̃յ, քարոզեաց զճշմարիտ հաւատս 'ի թգ̃րութենս սակաւու. ուր գործեաց մեծամեծ սքանչելիս. և 'ի փոխմանն ծունր եդեալ 'ի վ̃ր այսր վիմի, 'ի միոյ 'ի պրահմանից սրդաւ խոցեալ սպանաւ ։

'Ի ստորոտէ այսր լերին մինչ 'ի գլուխն անդ ուր կառուցեալ կայ եկեղեցին, նախագրեալ պետրոս ոսկաննեան՝ յամի տ̃ն 1726 անբաւ ծախիւք եւ շինեալ 160 քարաշէն աստիճանս սանդխոց. Ճ̃նպ̃հ աստիճանացն է շրջապատեալ. ը̃ մէջ քանի մի աստիճանաց շինեալ մի զկնի միոյ զառ 'ի վեր սալայատակ յարկւոյ. յերկուց կողմանց աստիճանացն որմ խոնարհ. և նստարան առ որմով. ունի և դուռն կամարակապ, և 'ի վ̃ր կամարին գրեալ կայ հայկական գրով.

գրով լեզուաւ չունին . եւ Թող նա եւ եկամուտ 'ի ձեռս եղցին մշակութեան 'ի բերել այսր ճանապարհի : Մեծագոյն յամին լինի անդ տօնօրէից տօնավաճառ մեծ . ուր ժողովին երբեմն 15 հազար ուղտաւորք յամ ազգաց եւ 'ի կարաւանաց . որք գիտեն անդր 'ի Թոմպկթու եւ 'ի Կաշնա որոյ կոչեն, Թէպէտ եւ են անհնարին : Այս առաւելապէս այսր են, են՝ է ամե Մանդ կոչեցեալ, ոչ է՝ ընտանի, որ յանձնազոյն էր գետ կայեն 'ի նմ երեք ամառուան՝ յորոց մերձաւորին առին անդրանիկ, եւ յայլ պէսպէս կարգեցին . իսկ զերկրին յորում կայ արձան ածանին՝ ոչ եւս ուղղա փառք . զայս արձան 'ի ձեռքուն առ որ մերոպրեն տօնավաճառին ազգին Թոմպուկթուոյ ընդ Հերմեսեան դուռն եւ մեծահանդէս Թափօրին, քահեւք հոյակապ զուգ եւ նուագօք բարձեալ տանին 'ի գլուխ լերին 'ի վերադարձեալ եկեղեցին . եւ հրեն յանձնազոյն նախ յերկուս մասունս տանեն , եւ ապա 'ի լեառն հանեն, այժմ եւս 'ի լեզուական այնր՝ անցուցանեն առաջի նոյն մատուռից, եւ այնպէս շուրջ ածեն զայս տանին յեկեղեցի լերինն . իսկ 'ի յետագայ աւուր նովին հանդիսիւ դարձուցանեն 'ի նոյն մատուռն : Յայսմ աւուրն են եւ քանի ինչ տօնք հայոց :

Այգ Թոմպուկթուն՝ կոչեցեալ մի հնդկաց, որք ի առանձին, քաղաքն ոչ յառաջեալ զի Թոմպուկթու գարձան 'ի քն . յորոց կան մնան մինչեւ ցայժմ եւ պահեն առաքելին զնշանս ինչ քրիստոնէութե , բայց ընդ մ հեթանոսական սնոտիապաշտութ խառնեալ . զոսա հաւատացեալ ծանեան զսեպհ Հնդկութե եւ նահատակ որոյ առաքելոյն, զորս պատմեցաք : Այլ 'ի ծանօթութիւն Տոդրուն պիտանեաց էր առաւելապէս կան իմն մերձ 'ի քաղաքն նորին Թոմպուկթի անդէն . իսկ նախագրեալ աւանդութիւն ընծայեն (Թէպէտ է կարծեօք) ժողովրդեան ինչ հայոց . որք 'ի Է կմ Թ դարուն գնացեալ անդր , արկեալ զանձինս զօրութեան աւանդութեց : Այլ ոչ է անհաւան զայսմանէ յառաջանիշեալ լինել :

Մոփշա . առ հնդիկս կոչի եւ Զէնաբաթնամ, կմ Զէնաբաթամ : Էր ծայր լինել դուռնկեղմոն օրոցն լաւաբորակաց, առաւել ք Հարիւր ամօք յառաջ . 'ի նշաւակէն արդարոց յայտն ծովու 'ի դաշտավայրի . որ եւ բարդուածով Տոխողած ընտրեալ եւ ընդարձակեցաւ յաւելուլ միլիոնաւոյ , կմ նոյն Թոմպուկթի : Ընդ բերդ ամուր , զոր երբեմն առին դաղղիացիք յանգղիացւոց ձեռաց , զոսա որք էին առ բերդամն՝

առհասարակ քանդեցին , առ 'ի բանալ հրապարակ առաջի բերդին 'ի դիւրութիւն պիտոյից · յորս կայր և եկեղեցի մի հայոց՝ զոր նոյնպէս քանդեցին· իսկ սակայն յորժամ դարձեալ առին անգղիացիք , կրկին պարսպաւ ամրացուցին : Ունի Մադրաս և երկու արուարձանս այս հեռի 'ի միմեանց , յորոց 'ի միումն բնակին քրիստոնեայք և տաճիկք · իսկ 'ի միւսումն կռապաշտք :

Արտաքոյ արուարձանեայց 'ի ծովէ անտի սկսեալ մինչև մերձ 'ի բերդն՝ շուրջանակի պատէ պարիսպ ինչ խոնարհ՝ ձգեալ է երկայն յոյժ · առ 'ի դէմ ունել արշաւանաց մարաթայից հեծելազօրաց որք ստէպ յարձակէին անդ : Բնակիչք նորա բաց յայլ եկամուտ ազգաց , են իբրև 250 հազար , ծնեալք դրեթէ ամենքն 'ի հնդիկս · 'ի սոցանէ 15000 են արհեստաւորք՝ որոց գործ է նկարել , և ծաղկազարդ յօրինել պատոճական պաստառս , այլև հասարակ կտաւս բազում յոյժ առ 'ի պէտս ծովեզերեայ կողմանց ասիոյ· մանաւանդ բնակչաց փիլիպպեան կղզեաց : Են իբրև 40000 պարապին 'ի գործել և 'ի վաճառել զսէյլան ալին , և ապակեայ ակունս , առ 'ի զարդ կանանցն հնդկաց այնր կողման : Այլ կտաւագործք կարի սակաւ են : Իսկ մնացեալքն կէս մի վաճառականք են , և կէս մի յայլ պէսպէս գործս զբաղեալք : Ուստի և է այս մի յառաւել բազմավաճառ փարթամ և 'ի բարգաւաճ քաղաքացն հնդկաց · որ և կայ մնայ ընդ տէրութեամբ անգղիացւոց · և թէպէտ մարաթայք բազում անգամ յարձակեցան 'ի վերայ նորա · նոյնպէս և հետևորդք նորին հէյտարալի խանին , որ յամին 1769 պաշարեաց զՄադրաս 'ի ժամուն , մինչ զօրք անգղիացւոց երթեալ էին յայլ կողմն ընդդէմ այլոց ասպատակաց մարաթայից , այլ անգղիացիք բազում կաշառս տուեալ նմա , ազատեցին զքաղաքն :

Ունին անդէն անգղիացիք պահապան զօրս 2500 · յորոց հազարն եւրոպացիք են · և ամի ամի հաւաքեն 10910 ոսկի վէնէտիկեան 'ի մաքսից , 'ի հարկաց , և 'ի շահից վաճառականութեան : Ուղղափառ հայք չունին անդէն եկեղեցի · զի զմեծագոյն եկեղեցին նոցա՝ որ կայր 'ի մէջ բերդին՝ քանդեցին անգղիացիք · և զեկեղեցին որ էր յարուարձանս անդ կարգեցին անկելանոց հիւանդաց · որոյ վասն տան նոցա ամսոյ յամսեայ վարձս 15 ոսկի մադրասու · այժմ 'ի միում փոքրիկ եկեղեցւոջ կատարեն զամենայն պաշ-

Վ F տաւն

տամունս, որ է արտաքոյ քղքին ը̅ խնամակալութ. քափուչին կրօնաւորաց:

Այլ մեծ մասն բնակչաց են մողոլք կռապաշտք որք ունին մեհեանս բ̅զմս. յորոց զմին քղքի քանդեցին անգղիացիք սակս մօտ գոլոյ 'ի բերդն, փոխ նր̅ շինեցին այլ մեհեան ծախիւք իւրեանց. զառաջին վէմն հիման եդ նոյն ինքն քաղաքապետն անգղիացի. և ը̅ նմին ոսկի մի մեծ յոյժ 'ի տեղ անգլիացւոց. և մուտս եւս սահմանեցին մեհենին: Աջերմագոյն են 'ի հեթանոսական աղանդս ք̅ զբնակիչս այլոց տեղեաց. ոչ թողուն օտար ազգաց մտանել 'ի մեհեանս իւրեանց՝ ոչ̅ թողուն այլուր. և թէ ոք մտցէ, պարտ է տուժել ոսկի հինգ. մինչև դատաւորն անգղիացւոց 'ի մտանելն 'ի մեծաշ մեհեան Ջնկունատ զ̅յն նց̅, առ 'ի երդմնեցուցանել զոք ըս̅ սովորութե̅ տեղւոյն, պարտ է նախ տալ ոսկիս հինգ, և ապա մտանել:

Են անդ և յազգէս հայոց իբրև 20 կմ̅ 25 տուն. որք բնակեն 'ի միում թաղի. պարապել̅ առհս̅րկ 'ի գործ վաճառականութե̅. ունին և եկեղեցի կից եկեղեցւոյն լատինացւոց, որ այժմ է հիւանդանոց ոմ̅ ասայք 'ի վերայ. Թէպէտ 'ի սկզբան անդ աւեին և զեկեղեցին հայոց 'ի բնակութի̅ հիւանդաց. այլ յետ ժմկաց ինչ անդրէն դարձուցին: Յայսքաղաք պայծառացաւ յանցել̅ դարու մեծ իշխանն և վաճառականն յազգէս հայոց, կոչեցեալ̅ պետրոս ուկանեան, բարեհամբաւ յոյժ ազգս, և մի 'ի խորհրդականաց խմբի ընկերութե̅ անգղիացւոց որ 'ի մադրաս. այր արդարակորով, բարեսէր. և խոնարհամիտ:

'Ի գալ թգ̅րին 'ի մադրաս, նա ինքն հիւրընկալեաց զնա զաւուրս ինչ մեծասպաս փառօք, մինչև կերպասիւք զարդարել զա̅մ կողմանս փողոցին և զատակս ճ̅ն որ ունէր անցանել. 'ի յանձնել նմ̅ թագաւորին փոխարէն այսքան մեծարանաց խնդրել ինչ յինքենէ, նա խնդրեաց ունիլ և վաճառել զա̅մ վաճառս որք արտաքուստ գան յայն քղք, և անտի անցանեն 'ի ներքին սահմանս հնդկաց. զոր ընկալեալ յարքայէն ստացաւ գանձս անբաւս:

Յորժամ գաղղիացիք առեալ̅ զմադրաս 'ի ձեռաց անգղիացւոց, քանդեցին զա̅մ շինուածս՝ որք էին առ բերդաւ, երեսուն և երեք տուն էին նր̅ անդէն. զորս ընդ այլսն առհս̅րկ կործանեցին, բաց յայլ-

տանեց

տանց զոր ունէր 'ի բերդի անդ և զստացուածս և զգանձս նորա՝ որչափ ինչ կայր 'ի մատրասս , առեալ զնոսա տարաւ 'ի բունդիլքէրի քաղաք իւրեանց : Իսկ սպարապետն նոցա պատգամ յղեաց առ նա որ կայր փախուցեալ 'ի քաղաքն դանեաց մերձ առ մատրասս , գալ մտանել ընդ տէրութեամբ գաղղիացւոց , և ժառանգել զամենայն զստացուածս իւր , սպառնացեալ յարքունիս գրաւել զնոսա 'ի չանսայն : Սակայն նորա ընդ վեհ և զեղջէկ աւագուն անձինն՝ իմաստութեամբ պատասխանի արարեալ ասաց․ Վասն զի զոր ունիմս այսչափ ճոխութեան ընչից՝ յանգղիացւոց տէրութեան ստացեալ ունիմ, 'ի նոյն տէրութեան կամիմ մնալ խոպան հաւատարիմ․ այլ զստացուածս իմ զայդոսիկ , թէ հաճոյ թուին ձեզ բանքս , առէք ողորմութեան կարօտելոց․ զի ոչ կարծեմ զգաղղիացւոցդ զերահամբաւ արքունիս , կարօտիլ իմոց դուզնաքեայ ստացուածոց իբր 'ի լրումն ինչ մեծութեան գանձուց : Սա 'ի մահու իւրում զանբաւ ինչս և զընծայս եթող կտակաւ ետ երևելի ուխտատեղեաց այլևայլ ազգաց․ և զտայետ մահու նորա թանգյայլոց ստացուածոց եօթն հարիւր հազար ռուփի դրամ:

'Ի ծովեզերեայս մատրասու՝ ալիք ովկիանոսի զարհուրելի իմն երևին․ Քանզի ցերկու գրկաչափ և առաւել բարձրացեալ 'ի հեռաւոր իբրև պարիսպ , ուժգին դղրդմամբ և անհնարին բռնութեամբ դիմեալ երիցս անգամ հարկանեն մի զկնի միոյ ընդ ցամաքն , ընդ որ անհնարին էր նաւորդաց մերձենալ և ելանել 'ի ցամաք : Սակայն ճարտարութեան բնակչաց եգիտ հնարս հանելոյ զնոսա 'ի ցամաք․ զի շինեն անդէն նաւակ ամենևին [illegible] բեեռաց , այլ լոկ չուանաւ կամ լարիւ կար[illegible]դէն զտախտակսն , որպէս զի 'ի հարկանել բռնութեան ալեաց 'ի ծանծաղ ծովայատափն մերձ յափն կոյս , տեղի տուեալ ուժգնութեան , մի խորտակեսցին․ և 'ի լինել նաւակին մօտ 'ի ցամաք , կան անդէն 'ի ծովափին արք քաջամարտք պատրաստականք 'ի նոր թոմմայեան ազգէն , որք չուանն ընկեցեն 'ի նաւակն , ձգեն և պինդ ունին զնա․ որպէս զի 'ի դառնալն յետս բռնութեամբ ալեացն , մի ընկղմեսցի ընդ նմա և նաւակն , և վտանգեսցի : Եւ այնպէս սակաւ առ սակաւ հազիւ ուրեմն և բազում աշխատութեամբ մերձեցուցանեն 'ի ցամաքն :

Բալիքաթար : Է կառուցած և ամրոց հոլանդացւոց 'ի ծովեզերն 'ի հիւսիսակողմն մատրասու , կոչեցեալ Գելդրոյ կուաքէնայ :

Մախսուլիփաթամ, կամ Մասուլիփաթամ: Էր սա յառաջն գեօղ աննշան, յոր ձկնորսք և եթ բնակէին, այլ այժմ 'ի պատճառս վաճառականութեան՝ եղև քղք երևելի սա առ բերանով Քրիշնա կամ Քրիշնայ գետոյն որ անդ մտանէ 'ի ծովն, ունի և է ծովեզերեայ. որոյ անուանն եւս յայտ առնէ. զի Բանդան. Բանդամ, կամ Բանդնամ, 'ի լեզու Հնդկաց նշանակէ քղք ծովեզերեայ: Էր սա տեղի յարմարական յոյժ վաճառականութեան, որում 'ի 1749 տիրեցին Գաղղիացիք. այլ 'ի 1759 հանին զնա անտի Անգղիացիք, և ինքեանք տիրեցին: Այլ այժմ ոչ ևս է այնպէս ծաղկեալ և բարգաւաճ, որպէս գտին զնա Եւրոպացիք, յորժամ զառաջինն հասին 'ի Հնդիկս: Զի բայց 'ի սակաւ ներկ և նկարէն պաստառաց, այլ ինչ արուեստական ոչ գործի անդէն. և թէպէտ ազնիւ են պատրաստք նր, բայց ոչ այնչափ յաճախութբ վաճառին: Անգղիացիք ունին այժմ զքղս զայս իբրև վաճառատեղի՝ յորում յաւէտ գնեն յայլոց, քան թէ վաճառեն. բայց 'ի ձեռն կարաւանաց՝ որք 'ի հեռաւոր տեղեաց գան անդր բառնալ զաղ, և 'ի ձեռն վաճառականաց ընկերաց, զոր ունին 'ի ներքս 'ի ցամաքն, մուծին զգործածութիւն կտաւոց իւրեանց՝ 'ի ներքին և 'ի խորին կողմանս սուպայութեանն Հէյտարապատայ և մանաւոր տէքանայ, յոր յաւելեն և զաղն և ընմաքսն՝ ամի ամի հանեն անտի 120000 ոսկի վէնեկեան, յորմէ 54545 ծախեն 'ի պէտս քղքին:

Գոնտպալլի: Է գաւառ զոր 'ի 1767 ստացան Անգղիացիք 'ի շնորհելոյ նր սուպա Նապապին Հէյտարապատայ: Մայրաքաղաք նր կոչի գանտապալլի, կամ Գոնտպալլի. ոչինչ կարի հեռի 'ի Քիստնայ, կամ 'ի Քրիշնայ գետոյն 'ի հարաւոյ: Են այլ ևս տեղիք 'ի սմին գաւառի. որք Բէտտաբօլի. Մոտուփիլի. ծովեզերեայք. և Հուալիքոնտայ 'ի խորին կողմն ցամաքին:

Մոստաֆանաքար: Գաւառ զոր նոյնպէս ստացան Անգղիացիք 'ի նոյն ամին 1767. և ունի իւր մայրաքաղաք զՄորսաֆօսա. որ է առ բերանով կանկայ կամ կնկայ գետոյն՝ 'ի հիւսիսոյ Մախսուլիփաթամայ, և է տեղի անուանի:

Վիզակկաբաթան. Վիզակաբաթան, կամ Վիզակաբաթնամ: Քաղաք փոքր ծովեզերեայ որոյ անուանն եւս յայտ առնէ (յդ նշանակելոյ վերագոյնդ) է տէրութբ Անգղիացւոց. թէև բնակչաց նորա հասանէ 94000. այլ բաւում վաճառականութեան պատրաստաց կարի բարգաւաճ է և ծաղկեալ:

Պիմլիպաթնամ․ կամ Պիմլիպաթամ։ Աւան ծովեզերեայ ՚ի հիւսիսակողմն վիզինկէրապատնայ, և մօտ առ նա․ յառաջագոյն էր սա ը̅ տրուէ̅ անգղիացւոց․ այլ այժմ ՚ի ձեռս հոլանտացւոց։

Կան ՚ի կողմանս յայսոսիկ այլևս գ̃ւառք․ ո̃ր Նըւլ․ Մաճլիբէնտէր, կամ Մաչլիպէնտէրի․ ուր գաղղիացիք ունին մեծական վաճառատեղի կոչեցեալ Եանոն․ որ յառաջագոյն ծաղկե̃լ էր, այլ այժմ ոչ նոյնպէս։

Սիքաքօլա, կամ Չիքաքօլա։ Աւան ՚ի վ̃ր փոքրիկ գետոյ առ սահմանօք սուպայութեն օրիսայ․ զոր ՚ի 1767 ստացան անգղիացիք ՚ի նապապէն հէյտարապատայ։

Յօդ ժբ̃․ Կղզիք առ որքան աշխարհաւ, կա̃մ առ ցամաքակղզեաւն, որ յայսկոյս գանգէսի։

Սէյլան, կա̃մ Սէլէան, կա̃մ Ձէյլան․ ՚ի բնակչաց կոչեցեալ Լանքաձիւ․ իսկ ՚ի նախնեաց ը̅ անունց Տապրոբանէ։ Է յարևելեան կողմն հարաւային ծայրի ցամաքակղզւոյն մալապարայ, կամ որքան Ծին ը̅ մէջ Ծին հնդկաց առ ձնմ̃րհաւ, որ հանէ յայլ բաղմացանձ Ծս հնդկաց։ Ամ̃ նաւք եկեալք յեւրոպիոյ յարաբիոյ և ՚ի պարսից, հարկաւ անդ ունին խարիսխ արկանել․ մանաւանդ զի ունի նաւահանգիստս բարեպատեհս, յորս ը̅ այլևայլ եղանակաց տարւոյն անկասկած կարեն մտանել և ելանել ը̅ ամի̃ ողջոյն։ Երկայնութի նո̃ ՚ի հիւսիսոյ ը̅ հարաւ իբրև 270 մղոն․ իսկ լայնութի յարևելից յարևմուտս իբրև 200։ Այս կղզի անջատեալ է ՚ի ցամաքէն նեղ և սակաւաջուր նեղուցաւ․ յորում գտանին սփռեալ աստ և անդ աւազակոյտք, փոքրիկ կղզեակք, և ժայռք․ որք բացայայտ ցուցանեն, թէ երբեմն կցեալ էր ը̅ ցամաքն յայնմ կողմանէ․ յորմէ գուցէ անջատեցաւ ՚ի ձեռն բուռն ալեկոծութե̃ և մակընթացութե̃ ծովուն, որ կարի սաստիկ և սրընթաց է անդէն։

Յայս կղզի ը̅ ստուգագոյն աւանդութե̅ բնակչաց սկսեալ 2000 ամօք յա̃ռջ ք̃ զգալուստն ք̃ի, մինչև 1107 ամի, և առաւել զկնի ծննդեան նորա տիրեցին միանգամայն 16 թագաւորք, կա̃մ լաւ ևս ասել կուսակաւք · որք յետոյ միացան 'ի միապետութիւն յամ 1135 'ի ձեռն վիմելայ ուրումն · որ եղև միապետ 'ի վերայ համօրէն 16 գաւառացն: Եւ այս եղանակ կառավարութե եկաց մնաց մինչև ց1505 · յորում 'ի մեռանել Թգրի կղզւոյս, միապետութիւն նր բաժանեցաւ յերիս կուսակալաւնս ընդ երից որդւոց նորա· յորմե գրգռեցան պտզմունք, որք հանապազորդեցին նաև զկնի մահու նր 'ի պնդմաս փառասիրութ և Թշնամութե յաջորդաց նր: Յայս վիճակ և յայսպիսի ծուփս ալեկոծութե կայր կղզին ողջոյն, յորժամ հասին անդր փորթուգալք: Առքա զառաջինն ելին յայն կողմն կղզւոյն, որ կոչի Կոտտա · յորում առ նովին ժամօք տիրէին երեք իշխանք, Թոռունք Թգրին · որ մեռաւ նախ ք զժամանել անդր եւրոպացւոց · և էր 'ի մէջ նց հնպզորդ խռովութի և պտզմ · յորում ըստ սովորութե եւրոպացւոց փութով սողոսկեալ մտին և փորթուգալք, է՛ զի սր, և է՛ զի նմա Թիկունս լեալ:

Եւ այսպէս 'ի սուղ ժմի նենգութբ և բռնութբ բարձին 'ի միջոյ զիշխանս, որք տիրէին 'ի Կոտտա, և յայլ կողմանս կղզւոյն · այլ ապրեցուցին զորդիս նց, և զքաղաքսն 'ի նցէ վերոտեցին · կամելով նովին ճնպհաւ առնուլ զտրութի 'ի վր համօրէն կղզւոյն, և պատուհական արդասեաց նորա: Վսյ և զկնի ակաւուց եղեն 'ի կղզի անդր չորք իշխանք քրիստոնեայք, բնիկ սուլեանացիք · անուանեալք յովհաննէս, փիլիպպոս, յովհաննէս աւագրեան, և մի առիկին · որք վարէին զԹգրական իշխանութի, բայց ընդ բռնակալութբ փորթուգալաց: Ընդ այսպիսի պատրուակաւ կարծէին փորթուգալք ունել 'ի ձեռին զամ · այլ յովհաննէս աւագրեան դժկամակեալ ը այնպիսի գերութե, խոյս ետ 'ի խորին կողմն կղզւոյն և զօրաժողով լեալ 'ի համազգեաց անտի իւրոց· ե հան տարագրեաց զփորթուգալս 'ի հայրենեաց իւրոց, և եղև տր ինքնակալ միոյ երևելի մասին կղզւոյն · և Թէպէտ փորթուգալք յարուցին 'ի վերայ նր զոմն 'ի զօրաւոր իշխանաց անտի կղզւոյն՝ այլ վրիպեցան 'ի յուսոյ· վզի սա յաղթեաց և նմա· Այս կաշառաբեկ արարին զառաջին իշխան նորա որ յինքն գրաւեաց զանուն Թգրութե ձեռնասունու նց, յորմե պարտեալ յովհաննու որ անուանեցաւ Սեբրիա տատասին, խոյս ետ 'ի լերինս: Իսկ նոինքն իշխանն անուանեալ Դավիէր պանտար ակնունէր Թէ զինքն ունիւ Թգրեցուցանել 'ի տեղի նր

իւ

իւրոյ . այլ՝ նք վճնկ նր թագաւորեցուցին զդուստր միոյ յիշխանաց անտի Կոդդայի՝ անուանեալ Տեկեն կատարինէ, յառաջագոյն լեալ քրիստոնեայ : Ընդ որ ցասուցեալ պանտարայ, գնաց միաբանեցաւ ընդ ձն իւրում յովհաննու, և բզմ վնասս հասոյց փորդուգալաց : Յետ մեռանելոյ յովհաննու յաջորդեաց որդի նր, որ էառ 'ի կնութի զտեկէնն կատարինէ : Առ որոյ [illegible] իշխանութի փորդուգալաց օրըստօրէ սկսաւ նուազել :

Առ նովին ժամօք, թէ՝ 'ի սկիզբն ժէ դարուն հասին անդր և հոլանտացիք, որոց յառաջագոյն ոչ երբէք ոտնկոխ եղեալ էր յայն ծով : Իսկ իշխանք կղզւոյս ծանուցեալ զթշնամութի նց ընդ փորդուգալս, աճապարեցին և միաբանեցան ընդ նս . այլ դուռն պտրզմի, կմ դաշնադրութե խաղաղութե որ 'ի մէջ փորդուգալաց, և հոլանտացւոց և այլ արգելք ինչ ամս իբրև 12 նպաստեցին փորդուգալաց : Ընդ այն ժամս մեռաւ տիկինն կատարինէ . և այր նր որդին յովհաննու արքայի յամի 1613 : Յայնժամ փորդուգալաց ժամ դիպող գտեալ երկպառակութի սերմանեցին 'ի մէջ իշխանացն կղզւոյս, զբզմս 'ի նոցանէ գրգռելով հեռամուտ լինել թգւորութե . և ինքեանք օգնութի ընկալեալ յեւրոպիոյ, սկսան հիմնել ամրոցս շուրջ զկղզեաւն, առ 'ի հատանել զյոյս բնիկ տեարց կղզւոյն օգնութի ընդունելոյ յարտաքնոց : Եւ այսպէս 'ի սուղ ժմկի զբզմ տեղիս ամրացուցին, իբրև 9 ամրոցս կառուցեալ . որք գրաւեալ ունէին [illegible] իւրեանց զսահման իմն 'ի բոլոր ծովեզերեայս կղզւոյն, իբրև 12 մղոն :

Այլ ոչ շատացեալ նովաւ՝ կամեցան տիրել և համօրէն կղզւոյն . ուստի և պնդմաւ մտին 'ի ներքս 'ի խորին կողմն : Բայց հոլանտացիք ձեռնտու լեալ բնակչաց կղզւոյն՝ ոչ միայն յետս ընկրկեցին զնոսա, այլև յետ այսպէս անցից, նաև 'ի կղզւոյն իսկ խաղահանեին վանեցին զնս . և նորաշէն ամրոցաց նց հոլանտացիք տիրեցին յամին 1656 : Որք թէ ոչ մարդասիրագոյն, գէթ զգուշագոյն և բարեբախտ գտան քան զփորդուգալս, և միշտ պատսպարեցին զանձինս 'ի հնարաւոր դարմանակալութեց անտի, որով իշխանք տեղւոյն հնարեին և հնարին վնասել նց : Ուստի և դաշնադրութք, պարգևօք, և երբեմն ևս բռնութք, և այլ պէսպէս հնարիւք կացին մնացին 'ի կալուածս իւրեանց, զոր ստացան անդանօր, որ թէև թէ տևել շահաւոր էր նց՝ քան զայլ ամ տեղիս . զորանէին յարևելեան Հնդկաստան. այլ յայս վերջին ժամանակս առին անգղիացիք 'ի ձեռաց նց :

Պատուականագոյն բերք կղզւոյս է Կինամոնն կմ Դարիճինն որ այն ինքն է Տարչին : Արմատ այսր ծառոյ է ստուար բազմաճիւղ կարծր և սպիտակ. կեղև նր արտաքուստ է դեղնախառն կարմիր. իսկ 'ի ներքս անդ կարմրագոյն : Բուն ծառոյն բարձրանայ 38 , կմ 310 ձող. որոյ կեղև ոտ և ոստոց նր 'ի սկզբան անդ է կանաչագոյն. և ապա փոխի 'ի կարմրագոյն. տերևք նր նման են տերևոց դափնւոյ. բայց միայն սոքայս չեն երկայն և սրածայր. 'ի սկզբան անդ ցորչափ են մատաղագոյնք , հրագոյն են. բայց ապա 'ի հնանալն և 'ի չորանալ 'ի վերին ծայրս փոխին 'ի մթին կանաչագոյն. իսկ 'ի ստորին կողմն 'ի պայծառագոյն կանաչ. ծաղիկք նր մանր են և սպիտակ. և հոտ նց քաղցր և անուշակ , որք փունջս փունջս փթթին 'ի ծայրս ոստոց. ունի և պտուղ որ նման է կաղնոյ. բայց մանր քան զայն. որ սովորաբար հասանէ յամսեանն սեպտեմբերի. յեփելն զայս պտուղ 'ի ջուր , արձակէ իւղ որ 'ի ցրտանալ իւրում պնդանայ: Յիւղոյ անտի գործեն ճրագ. միայն 'ի պէտս թգրին սեղանոյ , որ 'ի վառելն է լուսոյն բուրէ և հոտ անոյշ: Իսկ կեղև ծառոյն է նոյն իսկ կինամոնն. զոր կեղևեն 'ի ծառոյն , դոսանայ բունն , այլ արմատ նր մնայ. յորմէ շառաւիղեն այլ ծառք. բաց 'ի շառաւիղաց ունի և սերմն , յորմէ բուսանին այլ ծառք : Որչափ դալար և մատաղատունկ է ծառն այնչափ պատուական է կինամոնն նր. բայց և յայնմ գոյ խտիր. զի ազնուագոյնն է երկրորդական կեղևն քան զարտաքինն , զոր բուն 'ի մի կեղևելոյ է զանազանելին երկրորդակէն՝ յորում առաւելու հիւթ նր: Իսկ կինամոնն հանեալ 'ի ծերացեալ ծառոց չէ այնչափ ինչ լաւ. ուստի առ հանել ազնիւ կինամոն, չէ պարտ թողուլ ծառոց նր անցանել զերիւք , կմ զչորս ամօք :

Այս բերք պատուական և 'ի բնչմ իւր կարևոր կըպարաւորէ է 'ի 42 մղոնաչափ տարածութե առ ծովեզերբ կղզւոյս , և ոչ անդր ևս. քզի ոչ թողուն հոլանդացիք զի բազմասցի , և եթէ ինքնին բուսցի ուրեք , 'ի բաց խլեն. զի մի առ յաճախութե գին և յարգ նր անկցի: Իսկ զինի հանելոյ նց զփորթուգալս 'ի սէյլանայ , զհետ պնդեցան առնուլ 'ի ձեռաց նց և զթգրութին քոչինու որ 'ի ծովեզերս մալապարայ. զոր և առին 'ի 1661. և առաջին գործն

'ի

'ի մտանելն անդ , եղև խապառ ապուռ ջնջել զամ բոյս գաղթականաց. Ք̃զի լինէր և անդ Թէպէտ ոչ այնպէս աղնիւ ոպ̃ 'ի սէյլան։ Եւ այսպէս առ անյագ շահասիրութեան հոլանտացւոց, բոլոր Ծ սոխակ ընուղ զհարկաւորութեն, զոր ունի առ այս համեմ 'ի 42 մղոնաչափ տարածութէ կղզւոյս. ուստի ասի Թէ ամ ամի տանին յեւրոպիա 300 հզ̃ր օխայ. նոյնչափ ևս 'ի հնդիկս, այլև յամերիկա. մնացեալն 'ի բերու 'ի պէտս չոքոլաթի։

Լինի 'ի սէյլան և պղպեղ, և խահֆէ, զոր հոլանտացիք մուծին անդր. բայց ստորին է յոյժ քան զխահֆէն եէմէնու. և պտուղ ինչ անուանեալ Պէթել, որոյ բոյսն իբ̃ նմանութ̃ բաղեղան պատատի զծառովք, համ նր̃ աշխարժական է և նման համեմի, ք̃ պահարի. այլ՝ յաճախակերութե՛ն սևացուցանէ զատամունս և տկարացուցանէ. սակայն առ հնդիկս կարի 'ի գործ ածի. ուստի և այն ևս է մի 'ի գլխաւոր վաճառացն սէյլանացւոց։ Եղանի և Արեգվէ կոչեցեալ պտուղ, զոր 'ի պանկալա և այլուր Սըփարի կոչեն, որ նման է հնդկային ընկուզոյ. որ է հնետխտան Ճէվլիզլի, զոր նոյնպէս յաճախ 'ի կեր առնուն 'ի հնդիկս 'ի ծամել։

Ունի և փիղս բազումս. վ̃յ՝ և մի 'ի գլխաւոր վաճառաց նր̃ են ատամունք փղաց, այլև կենդանի փիղք, զորս տանին 'ի գորոմանտէլ. Թէպէտ այս վաճառք չէ այնչափ ինչ բարգաւաճ։ Եւ 'ի ծովեզերեայս նր̃ գտանի ազգ մի ծովային խեցւոյ մանր և սպիտակ, գավրի կոչեցեալ. զոր 'ի հնդիկս, կմ̃ առ մասունս 'ի գործ ածեն փոխ մանր դրամոց։ Գտանի անդ և մարգարիտ. որ Թէպէտ սպիտակ է յոյժ, այլ չունի զայն աղնուութի, զոր ունի մարգարտեան պարսկային ծոցոյ. Ք̃զի զինի սակաւուց կորուսանէ զգոյն իւր. և է գրեթէ բովանդակ 'ի ձեռս ընկերութե հոլանտացւոց. յորմէ ամ ամի շահին 18181 վենետիկեան ոսկի։ Գտանի անդ և ազգ մի ական, որ յանուն կղզւոյն կոչի Սէյլան։ Բաց 'ի բնական վաճառաց աստի, գործեն անդ և բո՛մ Թաշկինակս ընտիրս, և բամբակի պաստառս պատուականս։ Ցայս ամ̃ վաճառաց, բաց 'ի գաղթականաց, շահի ընկերութին հոլանտացւոց ամ ամի 181818 ոսկի վենետիկեան։ Այլ զայն բովանդակ ծախեն 'ի պահպանութի և 'ի շինութե տեղեաց իւրեանց որ անդ. ուստի և ձ̃այ նր̃ միայն շահն զոր առնեն 'ի կինամոնէ, որ բազմ է յոյժ։ Յառաջին Ժամս ընկերութին ունէր անդէն

400 զօրս 'ի պահպանութիւն կալուածոց և ամրոցաց իւրոց. այլ այժմ են իբրև 1500, կամ 1600. զօրս բաւական համարին 'ի զգուշութիւն յերկուաց թգ̄րին Գանտեայ, որ մի միայն մնացեալ է 'ի կղզի անդր: Յորժամ փորդուքալք հասին 'ի Սելեւան, գտին զնա բազմամարդ յոյժ, բնակեալ յերկուց այլ ևայլ ազգաց. որք 'ի բարս և 'ի կառավարութեան և 'ի կրօնի գլխովին օտար են 'ի միմեանց:

Մին անուանի Պէտաս. ա̄ք գրեթէ միշտ մերկ շրջին. և բնակին 'ի հիւսիսային կողմանս կղզւոյն, յապագուն և յանբեր վայրի. և բաժանեալ են 'ի ցեղս ցեղս. յորոց իւրաքանչիւր ցեղ համարի իբրև տուն մի, և միում և եթ գլխոյ հնազանդի և թուին լինել առաջին բնակիչք կղզւոյն, որք միացեալ՝ մինչ քաջութ̄ պատերազմեցան վ̄ն ազատութեան իւրեանց: Սակաւ ինչ գիտեն 'ի կրօնից իւրեանց. այն զի՝ բ̄մք յերկրպագս են զնոյանէ թէ ունիցին արդեօք բնաւ ինչ պաշտօն: Ոչ ախորժեն հաղորդութիւն առնել ը̄ օտարականս. և յանցանելն ոմանց ը̄ ծ̄ նց̄, թաքչին զգուշանան. և թէպէտ բարւոք հիւրընկալութիւն ցուցանեն նց̄, այլ առ ժամայն յետս դարձուցանեն զնս̄. կարի նախանձայոյզ են 'ի վերայ կանանց իւրեանց. և այն իսկ է պ̄տճ̄ն այնչափ խորշելոյ յօտարականաց:

Իսկ միւսն, որք բ̄մ են և հզօր ք̄ զառաջինն, կոչին Չինկուլք, և բնակեն 'ի հարաւային կողմանս կղզւոյն, որք առ համեմատութ̄ առաջնոց, առաւել քաղաքական են և ընտանի: Սոքա զգեցեալ շրջին, և բ̄մ իրօք նմանին հնդկաց, բայց կրօնիւ տարբերին 'ի նց̄ն: Ճանաչեն զմի էակ գերագոյն, և ը̄ նովաւ զայլ ած̄ս երկրորդականս և երրորդականս. և ած̄յն ս̄յ ունին զանազան քահանայս կարգեալ. բայց յերկրորդական ած̄ս առաւելապէս պաշտեն զոմն Պուտտավ անուանեալ. զոր համարին միջնորդ ը̄ ած̄ և ը̄ մարդիկ: Քահանայք, կամ քուրմք նոցա 'ի պատուի են յոյժ առաջի ժողովրդեան. զորս և ոչ նոյն իսկ իշխանն ո̄ր երկրին կարող է պատուհասել, թէպէտ և միաբանեալ իցեն 'ի ապանութ̄ անձին նր̄: Գիտեն զարհեստ պտ̄զմի, որք և քաջութ̄ պաշտպանեցին զե̄րի իւրեանց ը̄դէմ եւրոպացւոց, որոց և յաղթեցին բ̄մ անգամ: Խորամանկ են բարուք. և շահասէրք և կեղծաւորք և շողոմաքորք: Յերկուս լեզուս խօսին. մին է իբր աշխարհաբառ, որ հասարակաց է ամ̄ցն. իսկ միւսն իբր գրաբառ և ո՟ք, սեփականե՟ն քրմայ, և իրաց կրօնից նոցա ։

Համօրէն կղզին այժմ՝ բաժանեալ է յերկու տ՟րութիւնս. մին է տ՟րութիւն Գանտեայ, իսկ միւսն Հոլանտացւոց, զորս յառաջիկայդ ստորագրեսցուք ։

Տէրութ՟ Գանտեայ ։

Գանտի պարագրէ զներքին մասն կղզւոյն, և է ը՟ տ՟րութ՟բ համազգի բնակչաց ն՟ց · ունի իւր սեփական թգ՟ր՝ որոյ տ՟րութի է միապետական, և կոչի թգ՟ր գանտեայ ։ Բաժանի 'ի 20 գ՟ւառս կմ՟ վիճակս · ('ի բաց առեալ զնահանգն նախայիշատակե՟ն պետաց ազգին · որք են իբրև մասնաւոր հասարակապետութի ·) յորս են · 5 քաղաքք երևելիք, որք կոչին ։ Աչըլըւաթընիւր · Պանտօլա · Տինկինիւր · Միւլաճղինիւր · և Գանտի կառուցե՟ն 'ի միջին տեղւոջ կղզւոյն · մերձ առ գետն Մաւէլըկանկա · որ յա՟ռաջագոյն էր գլխաւոր մայրաքաղաք համօրէն կղզւոյն · և աթոռ տմ՟ թգ՟րաց ն՟ր · բայց զկնի հրդեհակէզ առնելոյ զնա հոլանտացւոց կարի նուաղեցաւ յառաջին ճոխութենէ և 'ի մեծութենէ իւրմէ · մանաւանդ զի և բնակութի թգ՟րի ն՟ր այլուր փոխադրեցաւ, որ և այն ոչ սակաւ անշքացոյց զնա ։ Իսկ վ՟ս այլոց չորից քաղաքաց, ոչ և վ՟ս գ՟ւառաց չունիմք ասաէն ինչ նշանակել, բայց միայն՝ զի այն 20 գ՟ւառք կմ՟ վիճակք բաց 'ի հնգից, որք կոչին Վաննա · Հարբէրաթօւլէ · Նուրէգալաւա · Հօնդօնթի · և Գոմանկօրա պարագրելն 'ի բոլորս արգաւանդս և յոքնաբեղունս, առոգե՟լս 'ի պատուական ջուրց, միով անուամբ կոչին Գոնտէնտա ֆ լեռնասարք · և թգ՟րն որ տիրէ կոչի Թագաւոր գանտէնտայից, կմ՟ լեռնասարից ։

Տէրութ՟ Հոլանտացւոց ։

Տէրութիւն հոլանտացւոց ձգեալ տարածի ը՟ բոլանդակ շրջակայ եզերս կղզւոյն իբրև 36 մղոնաչափ լայնութ՟բ · և ուրեք ուրեք մինչև 950 մղոն · յորում բզ՟մ քաղաքք և ամրոցք գտանին ։ Նաև բոլոր Եաֆանաբաղամ, կմ՟ Ճաֆանաբատամ ցամաքակղզին, և տ՟րութիւն վաննիայ, է ը՟ իշխանութ՟բ ն՟ց · յորս յառաջագոյն տիրէր միամի իշխան բուն բնակ երկրին ·

զոր սպանին փորդուքալք համդերձ համօրէն տամբ իւրով, և տիրեցին երկրի նր՟․ յորոց յետոյ առին Հոլանտացիք։ Բազում գ՟ւղք են 'ի սմին տէրութ՟ն․ զորս աւելորդ համարիմք 'ի մասնաւորի յիշատակել․ վն՟ զի Հոլանտացիք ոչինչ զանազանութի ունին 'ի նմ՟․ այլ թուէին միայն զամրոցս և զգ՟ղս նոցա․ որոց գլխաւորքն են սք՟։

ՔՈԼՈՄՊՕ։ Է գլխաւոր քաղաք համօրէն կղզւոյն, շինեալ 'ի վր՟ լեռնէի ինչ հողոյ, որ ձեւացուցանէ ըղծոց 'ի ծովն որ և է պատշաճական նաւահանգիստ վն՟ միջական նաւուց։ Այս քաղաք առ տ՟րութ՟ն փորդուքալաց էր մեծ յոյժ և ընդարձակ․ զոր Հոլանտացիք անձկացուցին առ 'ի կարող լինել սակաւ զօրօք պատսպարել զնա․ իսկ ը՟ հակառակն՝ զամրոցն ընդարձակեցին։ Եւ թէպէտ չէ այնչափ ինչ մեծաշէն, բայց և ոչ կարի անշուք․ զի ունի պատշաճական շինուածս, յորս երևելի են հոյակապ ապարանք իշխանին Հոլանտացւոց։ Յամին 1520 փորդուքալք ամրացուցին զ՟տեղս զայս․ որպ՟ և զայլ բ՟զմ տեղիս կղզւոյն․ զորս 'ի 1656 ամին բազում դժնդակ պատերազմաց՝ առին Հոլանտացիք յանուն Թագաւորին Կանտեայ․ բայց անձանց սեփականեցին զնա․ և աւերելով դաշինն՝ բռնութ՟ զինուց առին և զանտառս դարչինենեաց որք մերձ են 'ի քաղաքն։

ՆԷԿՈՄՊՕ կամ ՆԷԿՈՄՊՈ։ Է ամրոց երևելի շինեալ 'ի փորդուքալաց իբրև 25 մղոնաւ հեռի 'ի Քոլոմպոյէ 'ի հիւսիսակողմն, շինեալ 'ի պաշտպանութի տեղեացն, յորս լինին կինամոնք․ 'ի ծովակողմն պաշտպանեալ է 'ի ծովէ և 'ի գետոյ միոյ, որ աստ ձեւացուցանէ նաւահանգիստ պատշաճական վն՟ փոքր նաւուց․ իսկ 'ի ցամաքակողմն ունի՝ երկու պատուարս ամրակուռս։

ՔԻԼԱՒ, կամ ՔԻԼԱ։ Նաւահանգիստ պատշաճական ը՟ զայլ ամ՟ նաւահանգիստս կղզւոյն իբրև 20 մղոնաւ հեռի 'ի Քոլոմպոյէ 'ի հիւսիսակողմն։

ԳԱԼԲԷՆՏԻՆ, կամ ԳԱԼՊԷՆՏԻՆ։ Է կղզի իբրև 16 մղոնաւ հեռի 'ի Քիլաւայ 'ի հիւսիսակողմն․ երկայնութ՟ն նր՟ է իբրև 32 մղոն․ և լայնութ՟ն իբրև 3․ և փոքր մի աւելի։ Երկու աշտարակս ունի և ամրոց մի՝ համդերձ պահապան զօրօք։ Մօտ առ սա են և այլևս երկու փոքրիկ կղզիք կոչեցեալ ՄԱՆԷՐՕ․ և ԲԷԹՐԱՄԱՆ։

ՄԱՆԱՐ։ Է կղզի յարևմտեան ծովեզրն սէյլանայ և 'ի հիւսիսոյ Նախըլնիթայ կղզւոյն․ զոր առին Հո_

լան_

լանտացիք 'ի Փորդուգալաց 'ի 1658 · յորում ամի բոլորովին 'ի բաց հանին զնոսա 'ի Սէյլանայ · ունի իւր համանուն ծոցք, և պէօղս բազմս : Գլխաւոր վաճառք նր է ձուկն, որ առատ է անդանօր · 'ի նախնումն անուանի էր և 'ի պատճառս պատուական մարգարտաց, զորս հանէին 'ի շրջակայ եզերաց նր : 'Ի կղզւոյ աստի մինչև ցՌամմանագոյի կղզին, որ մօտ է 'ի ցամաքն, գտանին բազմ աւազակոյտք, կմ սակաւաջուր տեղիք 'ի ծովուն Հնդկաստանի անձուկ նեղուցիւք, զոր փորդուգալք կոչեցին Կամուրջ ադամայ :

Տէլֆտ · Միտտէլպուրկ · Ամստէրտամ · Լէյտըն Էնքհոյզէն · Ռոտտէրտամ · Ոռլէօտ · Ահօրէն · Քռայնպինէ : Են փոքրիկ կղզիք ընդ մէջ նախագրեալ կամրջին ադամայ և ծայրին Ճաֆանաբադամայ · որք ըստ առաւել մասին ամրացուցեալ են, և պահպանեալ 'ի զօրականաց առ խափանելոյ զանցս նաւուց այլոց ազգաց : Աստ մուծանեն 'ի նաւս զփիղս, զոր ունին տանել յայլ տեղիս :

Ճաֆանաբադամ, կմ Եաֆանաբադան, և կմ Եաֆանաբադնամ : Է ցամաքակղզի, որ յառաջագոյն միանաւոր Թագաւորութիւն էր, բարեբեր և բազմամարդ · ունի անտառս բազմս, և դաշտս արգաւանդս · բայց ջուր բարի սակաւ : Եւ բաժանի 'ի դ գաւառս · ունի բազմ փոքրիկ քաղաքս, և 159 պէօղս և աւանս, և համանուն գլխաւոր քաղաք կառուցեալ 'ի գլուխ ինչ հողոյ, սրածայր առարտեալ 'ի ծովն, առ որով ձգի նեղուց անձուկ և երկայն, որ և ձևացուցանէ զայս ցամաքակղզի բաժանեալ 'ի չորս գաւառս : Շրջապատ քաղաքիս է իբրև 4 մղոն · ունի բազմ գեղեցիկ փողոցս, վայելուչ շինուածս · յորս է մեծաշէն անկելանոց մի, և եկեղեցի փոքր · և այլ բազմ շինուածք : Ունի և բերդ ամուր և մեծ շինեալ ըստ կանոնի, յորում բնակէ իշխանն հոլանտացւոց · և ամենայն պաշտօնատարք վաճառականութեան ընկերութեան նց : 'Ի նախնումն առաւել մեծաշէն և բարգաւաճ էր քաղաքս այս, զոր ցուցանեն և մնացորդք նախնի հոյակապ շինուածոց նր, և մանաւանդ մեծաշէն ջրհորոց : Զայս քաղաք 'ի 1658 առին հոլանտացիք 'ի փորդուգալաց : Փորդուգալք, որք յառաջ քան զհոլանտացիս տիրէին սմ, զհիւսիսային ծայր նր անուանեցին Սոր ծայրէն · ուր կայր և ամրոց · բայց այժմ աւերեալ է :

Պուինկալ մալա, կմ Պուէնթէնմալէ · որ և Գոնգանէլլա : Է

քաղ

քաղաք յարևելեան եզերս սէյլէան կղզւոյն 'ի հիւսիսակողմն 'ի վ՟ր լեզուէի ինչ հողոյ, առ որով են նաւահանգիստք պատուականք և ամրութիւնք վ՟ն ամ՟ նաւուց · ունի և բերդ ամուր և հզօր · բայց չիք անդ վաճառականութիւն ինչ · քանզի երկիր ն՟ր ոչինչ վաճառս բերէ ։ Վ՟կ բազում անգամ լքեալ զնա հոլանտացիք · բայց յետոյ առին վերստին երկուցեալ թէ գուցէ՝ այլոց ազգաց մտեալ 'ի ն՟մ, միաբանեսցին ը՟ թ՟գ՟րին գանտեայ 'ի վնաս իւրեանց ։

Պատտըգալօա, կ՟մ Պատտէնգօյ ։ Է քաղաք և ամրոց 'ի կղզի ինչ լինն մղոնաչափ · կալեալ զանուն 'ի գետոյն, որ մտանէ 'ի ծոց ծովու, առ որով կանգնեալ կայ ամրոց 'ի պաշտպանութիւն կղզւոյն ։

Բունտա տը Կալէ · կ՟մ Ծուագ կաղայ ։ Է քաղաք մեծ, և հզօր շինեալ 'ի վ՟ր լեզուէի ինչ հողոյ, 'ի ծայր կղզւոյն 'ի հարաւակողմն ։ Ունի ծոց, կ՟մ նաւահանգիստ բաւական և վ՟ն մեծամեծ նաւուց, այլ մուտն ն՟ր վտանգաւոր է վ՟ն բազմապատիկ ժայռից, որք կան 'ի ծով անդր · առ որով 'ի բերան նաւահանգստին աստի և անտի են երկու ամրոցք · ուր նստի իշխան մի հոլանտացի ։ Յառաջագոյն մինչև էին առեալ հոլանտացիք զքօլոմպօ քաղաք, սա էր ն՟ց գլխաւոր տեղի 'ի սէյլան · անդ էր և աթոռ հանրական կուսակալին ն՟ց, ուստի ծաղկեալ յոյժ և բարգաւաճ · այլ այժմ ոչ ևս է նոյնպէս · սակայն և այնպէս նշանաւոր է առ ն՟մ, զի անդ բառնան ըզբեռինս, զոր ունին առաքել յեւրոպիա ։

Մատուրէ ։ Աւան, կ՟մ ամրոց, ուր հոլանտացիք հաւաքեն զպղպեղ, և զկահֆէ · զոր ինքեանք մուծին 'ի սէյլէան կղզին ։

Պէլլէնկամ ։ Է աւան երևելի առ կարմիր ծոցով 'ի հարաւային ծագ կղզւոյն, յարևելեան կողմն նախադրելոյ բունտաս տը կալեայ ։

Դընէնկալէ ։ Աւան առ համանուն ծոցով յարևելից պէլլէնկամայ մօտ առ փոքրիկ գետ մի ։ 'Ի շրջակայ վիճակի ս՟ր է գլխաւոր տեղի որսոյ փղաց ։

Բաձնէ ։ Աւան յարևելեան ծովեզերս կղզւոյս, նշանաւոր 'ի սակս երևելի կռատանն դըլինքօլեայ որ 'ի վիճակին արէբադդեայ, ոչինչ կարի բացագոյն 'ի տեղւոջէ աստի 'ի հիւսիսակողմն ։

Տինավաքա ։ Էր գլխաւոր քաղաք մասնաւոր իմն թագաւորութ՟ ը՟ մէջ երկուց առաջնոց Քոնտուրա գետոյն · այլ այժմ աւերակ է ։

Մարինօ. Զեփրոնտալ: Են փոքր կղզիք:
Համքէնհայլ. Քանծլանդուռ. Քոտեըր: Են ամրոցք ծովեզերեայք յայնկոյս կողմանս կղզւոյս:

Մալտիվեան, Լաքետիվեան, Անդմանեան, և Նիկոբարեան կղզիք:

Մալտիվեան կղզիք են բազում մանր կղզիք սփռեալք յովկիանոս անդր, որ քերէ առ եզերբք Մալապարայ, և 'ի խումբս խումբս բաժանեալք, որք կոչին Աթօլ, կամ Նահանգք. և իւրաքանչիւրն կացուցանէ զմասնաւոր փոքրիկ իշխանութիւն բաժանեալ յայլոց: Փորթուգալք գտին զնա 'ի 1507. այլ 'ի բաց լքին. ապա յետոյ գաղղիացիք և անգղիացիք իբր անպէտս և դժուարամատոյցս, և սակս յոռութեան օդոյն, և անպտղաւորութեան երկրին, զի ոչ բուսանին անդ ոչ ցորեան ոչ բրինձ և ոչ այլ արմտիք. այլ միայն նուռն և լեմոն և կիտրոն և այլ այսպիսի պտուղք: Գտանի անդ և բուստ. այն է՝ մերճան. և ծովային ինչ խխունջ մանր քովրի կոչեցեալ, զոր 'ի Պանկալայ 'ի կիր արկանեն փոխանակ մանր դրամոց. այլև արուսեկ, որ է ծովային ինչ խեցի, ազնուագոյն քան զսատափ, որ երփն երփն հարկանի: Այս կղզիք բաժանին 'ի ժգ նահանգս բնական իմն բաժանմամբ. և իւրաքանչիւրն պատեալ շուրջանակի բազմակոյտ քարամբք իբր պարսպաւ որ պաշտպանէ զնա 'ի բռնութենէ ծովու. և դժուարամատոյց գործէ մտից թշնամեաց. շրջապատ իւրաքանչիւրոցն իբր 90 մղոն ոմանք յաւէտ և ոմանք նուազ, մի զկնի միոյ կարգաւ դասաւորեալք և երկայնեալք 'ի հիւսիսոյ 'ի հարաւ: Թիւ բնակչացն հասանէ ց12 հզր: Մեծագոյն մասն կղզեացն այնոցիկ է անապատ անբնակ. յորս ոչինչ բուսանի, բայց միայն խոտ և ծառք վայրենիք: Անթիւ ծովային թռչունք գտանին անդէն, նոյնպէս և խեցգետինք բազում յոյժ: Իսկ ջուր քաղցր չիք յամ կղզիս, այլ միայն յոմանս, յորս բնակութիւն է, և այն ոչ 'ի գետոյ. վն զի գետ բնաւ չիք 'ի նոսա, այլ 'ի ջրհորոց. քանզի ուր և բրեսցի 3, կամ 4 ոտնաչափ խորութ, ելանէ ջուր քաղցր, նաև յեզերս անդ ծովուն: 'Ի նեղուցսն որք անջրպետեն 'ի միմեանց զխումբս կղզեաց, անբաւ բազմութիւն կոկորդիլոսաց գտանի: Այս ամ կղզիք միանգամայն ունին իւրեանց սեփական թգր դենիւ մահմետական.

որ նստի 'ի Մալէ կղզին, որ գլխաւորն է յայլս. սակայն բոլոր շրջապատ նր չէ ինչ աւելի՝ քան գերի մղոնս: 'Ի սմանէ կոչման նոքա զանուն. զի անուն Տիւէ. նշանակէ Կղզի. յորմէ յայտ է թէ Մալդիւէ, նշանակէ Կղզի մալայի:

Բնակիչք նր ըստ մեծի մասին արաբացիք են, կմ նման են արաբացւոց 'ի գոյն երեսաց և դիմիւ: Ոմանք համարին զնս լինել 'ի քինկուլ ազգէ անտի, որ 'ի սէյլեան. բայց այլք ոչ հաւանին. վն զի քինկուլացիք սեաւ են, և բիրտ և յաղթանդամ. իսկ մալայիք 'ի դէմս և 'ի կազմած մարմնոյ նման են այլոց ազգաց, իսկ 'ի գոյնն՝ արաբացւոց: 'Ի մէջ նախնի Յադրաց Պտղոմէոս ունէր ծանօթութի ըղասցանէ, զորս եդ առաջի Տապրոբանէոս որ է՝ սէյլանայ, որ և է: Ասէ թէ թիւ կղզեացս յայնժամ համարէր ց1378. գուցէ թէ և այժմ այնչափ լիցին, կմ փոքր մի նուազ. թէպէտ և թագաւորն մալայի անուանէ զանձն թագաւոր 13 նահանգաց, և 12000 կղզեաց:

Այս ճշմարիտ է. թէ բզմ մանր կղզիք աւերեալ կորեան 'ի բռնութէ ալեաց ծովուն: Յամ նեղուցս, որք են 'ի մէջ կղզեացն այնոցիկ այնչափ սակաւ է ջուրն, զի եթէ ներքին սրածայր ժայռքն, որք են 'ի նմ, և չկայր երկիւղ ձկանց ինչ Ամիան անուանելոց, որք հաւասար են կոկորդիլոսաց, և կլանեն զմարդ, մարթ էր և ոտիւք անցանել 'ի կղզւոյ 'ի կղզի, մանաւանդ 'ի ժամս տեղատուութ ջուրց ծովու: Անուանք խմբից, կմ նահանգաց կղզեացն են այսք.

ա. Դիլլատուն Մատիս. ը. Մօլուգէ.
բ. Միլլատուէ Մատուէ. թ. Նիլլանտուս.
գ. Պատիփօլօ. ժ. Գօլլօ Մատուս.
դ. Մալօս Մատուն. ժա. Ադուն Մատիս.
ե. Արիատօլլօն. ժբ. Սուատուն.
զ. Մալէ Ատօլլօն. ժգ. Ադուն. և Բուէմ Մօլուգէ:
է. Փուլիսդուն.

Երկու յետինքս թէպէտ անջատ են 'ի միմեանց, սակայն համարին իբրև մի, վն զի կարի փոքր են: Գլխաւոր կղզի, որ անուանեալ է Մալէ կղզին. յորում չիք քաղաք. այլ միայն բնակութի տանց ցրեւ ըն համօրէն կղզին: Ապարանք թագաւորին քարաշէն է, այլ գեղեցկայարկ. և չինուած նր գլխովին անարուեստ. 'ի շրջակայս իւր ունի պարտէզս և բուրաստանս և շատրուանս և աւազանս: Բայց 'ի սմանէ 'ի բոլոր կղզիս յայտնի է չիք ինչ յիշատակաց արժանի:

Լաք.

Լաքքէդիվեան կղզիքն են 'ի հիւսիսակողմն նախընթաց կղզեացդ · և ձգին ընդ երկայն առ մալաբարաւ · որք ըստ մեծի մասին անբնակ են և աննշան ·

յորոց գլխաւորքն են ։

Գուէլայի · Մուլիգիլէ · Գուլբինի · Գարատուլի · Պրէտոբաթրա · Աճինդ · Գունլպադ · Մինիկոյ ։

Կամելեան կղզիք անկանին ընդ արևմ Նահանգաւ և ձգին յարևմտեան կողմն Մոանոյ Սարին ։

Սալսէթէ կղզին է 'ի հիւսիսակողմն պոմպայեայ, և 'ի հարաւակողմն պասսայիմ քաղաքի, որք են 'ի ցամաքակղզին որ յայն կոյս գանգէսի, կից տօքան Ծոցի ։ Երկայնութիւն է 26 մղոն · իսկ լայնութիւն 8 կամ 9 · որ և է ի իշխանութ. մարաթայից, զոր առին 'ի փորթուգալաց, և սկսան այնուհետև ասպատակել 'ի ծովու, զառաջինն յարձակելն միայն 'ի վր փոքրիկ նաւուց Հնդկաց · ապա այսպիսի ասպատակութե առ սակաւ սակաւ այնչափ զօրացան, մինչև առնուլ նց և յեւրոպացւոց նաւս մեծամեծս ։ Այլ յամին 1722 անգղիացիք միացեալ ընդ փորթուգալացիսն պատերազմաւ 'ի վր նց · այլ բռնադատեցան կորուսելով և հանդերձ բազում վնասու անդրէն ընդ կրունկն դառնալ ։ Նոյնպէս գլխաւ և հոլանտացւոց, որք 'ի 1724 եօթն մեծամեծ նաւուքեալքն 'ի վր նց ։ Այլ 'ի 1755 անգղիացիք միացեալ ընդ մարաթայից · առին զմեծ մասն ամրոցաց և նաւահանգստից, որք էին անգղիք ապստամբաց ծովայինն հինից · ուստի և այնուհետև ապահովեցաւ այն ճանապհ ։

Ցամաքկղզի յայնկոյս գանգէսի ։

Այս մասն ևս Հնդկաստանի Ծէն է ցամաքակղզի բայց երկայնաձիգ յոյժ ընդ ընդարձակութեան, որ յայնկոյս գանգէսի, կից քան զորքան, որ 'ի գծէ գեղերահաւասարին ձգի մինչև ցանգր ևս քան զարևադարձն խեցգետնի, մղոնս իբրև 1920 ։ իսկ լայնութեամբ յարևելս ի 15 աստիճանս, մղոնս 900 ։ Բայց 'ի հարաւակողմն 'ի Նեղ լինի ցամաքակղզի ասուրանի ։ Զայս ևմ տարածուն երկրի, յորում բազում թագաւորութիւնք, և մանաւանդ իշխանք պարտական, առ վարուն եղև Ծագրաց միով անուամբ կոչել ։ Ցամաքկղզին կից Հնդկաստան որ յայնկոյս գանգէսի ·

առ 'ի զանազանել 'ի միւս մասնէ Հնդկաց աշխարհին, որ կոչի Ցամաք կղզի, կամ Հնդկաստան յայսկոյս Գանգեսի. որ և է մեծ ցամաքակղզին ալբիանայ, և մասն Մողոլաց աշխարհի. զորմէ ցայս վայր ճառեցաք: Արդ՝ զայս մասն Հնդկաց ոմանք 'ի չորս ընդհանուր մասունս բաժանեն, ըստ չորից գլխաւոր կողմանց աշխարհի, այսինքն յարևելս, յարևմուտս, 'ի հիւսիս և 'ի հարաւ. այլ մեզ լաւ ևս թուեցաւ բաժանել յութն մեծամեծ նահանգս կամ աշխարհս. որք են.

ա. Աշամ. ընդ որում և Դիփրա.
բ. Արագան.
գ. Հաւա. ընդ որում և Բէկու. և Միէն.
դ. Շիամ.
ե. Քամպոյա.
զ. Լաոս.
է. Քոչինչին.
ը. Տունքին:

Այս ութն նահանգք էին այլևայլ տէրութիւնք. յորոց ոմանք յետոյ միացան 'ի մի թագաւորութիւն որպէս սորին ունիմք նշանակել, որպէս և զկառավարութիւն, և զկրօն, և զայլ այսպէս հանգամանս նոյն յիւրաքանչիւր տեղիս նշանակեսցուք, որչափ ինչ հնար իցէ մեզ տեղեկանալ զայնցանէ:

Յօդ. ա. Թագաւորութիւն աշամայ, կամ ասեմայ. և դիփրայ:

Աշամ 'ի հիւսիսոյ սահմանակից է գիպետայ. յարևմտից՝ պանկալայի. յարևելից՝ թագաւորութեան հաւայի. իսկ 'ի հարաւոյ՝ արագանայ: Երկու մեծամեծ գետս ունի. մին կոչի Պրհմաբուտրէ. որ գնայ խառնի 'ի գանգէս 'ի ներքոյ տաքքայ քաղաքին պանկալայի. իսկ երկրորդն Զանդիկամ. կալեալ զանուն 'ի քաղաքէ անտի առ որով քերէ յաշխարհին արագանայ: Ունի սա իւր սեփական թագաւոր. և բնակիչք նորա կռապաշտք են ըստ օրինակի այլոց հնդկաց, որք յայսկոյս գանգէսի, և յաշխարհին մողոլաց: Ոմանք ասեն, թէ 'ի նախնումն մասն էր սա պանկալայի, և թէ 'ի սմա գտաւ զառաջինն վառօդն. յետոյ անտի էանց 'ի պեկու և յաշխարհին չինաց: Ունի բովս ոսկւոյ արծաթոյ երկաթոյ և կապարի. որք թէ բարւոք կարգաւորեալ էին, առաւելաբեր ևս լինէին քան զոր են այժմ. այլ աղ, որ կարի պիտանացու է մարդկան չունէր բնաւ, ուստի բնակիչք տեղւոյն, առնպէցան հանել աղ 'ի բուսոց ինչ, է̅ երկար եփելով: Այլ 'ի սկզբան անցեալ դարու ոմանք 'ի պաշտօնէից անտի պանկալայի գնացին անդր, կամելով և անդ մուծանել զանուն պաշտամանս իւրեանց. վ̅ն զի մինչև ցայնժամ բնական օրինօք գնային անդէն: Սոքա հաւանեցուցին ժողովրդեան, թէ կարի հաճոյ լինէր ա̅ծոյն, եթէ փոխանակ այնր աղի, զաղ մաքուր և ծովային 'ի կեր առնուցուն: Իսկ թ̅գրն հաւանեցաւ է̅ այն, բայց ընդ սովին պայմանաւ. զի վաճառականութ̅ն աղին լիցի 'ի ձեռս իւր. և մի̅ ոք կարասցէ բերել անդ աղ, բայց միայն պանկալացիք. և նաւակքն յորս բարձեալ բերի աղ 'ի վեր ընդ գետն՝ զտեղի առնուցուն առ սահմանօք տ̅րուն իւրոյ: Սովին ստաքանութ̅բ պայմանաց բացաւ դուռն մեծի վաճառականութ̅ն պանկալացւոց. զի ամի ամի աղ բե̅մ՝ տանին անդր. որով է̅ հարիւրոյ երկերիւր շահին, և առաւել ևս: Եւ անտի բառնան սակաւ ինչ ոսկի և արծաթ և փղոսկր և բեհեզ մշկոյ, այն է մուշկի. և փայտ. և ործոնի և խէժ, այլ առաւել քան զնոյն մետաքս որ առատ է յոյժ անդէն և լինի առանց ինչ խնամակալութ̅ե մարդկան. զի որդունքն գոյանան 'ի վ̅ր ծառոց, անդ ածեն անդ սնանին և անդէն գործեն զմետաքս: Իսկ բնակիչք չունին այլ ինչ առնել. բայց ժողովել զնոսա. և որք ուրեք ուրեք մոռացմամբ մնան, ինքնին արկանեն զսերմն: Եւ այս գրեթէ յամ ամի երկոտասան անգամ լինի: 'Ի ցամաքային ժմկս առատագոյն լինի, քան յանձրևայինս: Այս ազգ մետաքսից թէպէտ պայծառ են և շողշողուն, այլ սակաւատև և կարծր, զոր 'ի հնդիկս կոչեն Մունկի:

Թ̅գրն աշամոյ է միապետ ինքնիշխան. իսկ ժղ̅վդն թուի իջեալ յայլ և այլ սերնդոց: Ջինոքա որք բնակին 'ի հարաւային կողմանս են թխագոյն հնդիկք. առափնկունք. իսկ որք 'ի հիւսիսայինս գրեթէ ամ̅քն ուռուցս ունին 'ի պարանոցն և գծագրութ̅ դիմաց ն̅ց այլազան: Ամենին գրեթէ մերկշրջին, միայն զամօթոյն ծածկեալ ունելով փոքր ինչ կտաւերտ կտաւոյ սփածեալ զմիջով: 'Ի գլուխս կրեն գլխարկ շուրջանակի զարդարեալ ատամամբք խոզի. ունին և յականջս գինդս մեծամեծս ոսկի և արծաթի: Արք թողուն զհերս գլխոյ երկայնեալ մինչև ծածկել ըզթիկունս ևեթ. իսկ կանայք թոյլ տան աճել որչափ ինչ տայ բնութ̅ին: Բազմակին են. և իւրա-

քանչ

քանզիւր տուն ունի շուրջանակի բակ . և աղբիւր մի ջրոյ առ 'ի պէտս բաղանեաց ընտանեաց տանն . և փող մի 'ի դիւրութիւն կանանց իւրեանց : Համեղագոյն կերակուր նց է միս շան . վն յմ քաղաքս յմ ամիս տարւոյն լինի վաճառ շանց : Յոյժ ծի են այդպէս յոլովք . բայց 'ի խաղողոյ նց ոչ մզեն գինի , այլ Թթուն ցամաքեն . և այս ձմեռնալ մզեն անտի հեղանիւթ իմն ոգելից , և զօրեղ քան զնմանուն ցքւոյ : Գլխաւոր տեղեք սորին Թգրուն են :

Զոմփարա , կամ Շոմփարա . որ քան ամենից Ծագրաց է գլխաւոր մայրաքաղաք սորին Թգրուն կառուցեալ ի մէջ երկրին . քանի մի մղոնաւ հեռի 'ի Զագլիկամ գետոյն յարեւմտեան կողմն :

Քօսխում : Գիւղ յարեւմտեան եզր նորին գետոյ 'ի հարաւոյ չամոտրայի :

Աչաւ , կամ Աչուէն : Է մայրաքաղաք , յորմէ առնու զանուն համօրէն Թգրութին կառուցեալ առ Լոփիոյ գետով առ սահմանօքն Գիպեղայ :

Գուէէօրա : Է գլխաւոր քաղաք Ծիլինչ , կամ մասնաւոր Թգրուն . զոր ոմանք յԾագրաց շփոթեն ընդ Թգրուն աչաւայ . և է 'ի հարաւոյ քօսփուաայ , յարեւմտեան կողմն չագլիկամ գետոյն :

Են անդ և այլ ևս քաղաքք որք Շէքէ . մերձ 'ի պանկալա : Մէրօպ . Գոմոյա , սահմանակից Գիպեղայ : Զէրխօն . 'ի հարաւակողմն Շամոյ կոչեցեալ լերին , կամ ծովակին , որոյ գետք , և տարածութիւն չէ յայտ որչափ : Զաքօմաք . են . յորոց զոմանս ունիս տեսանել յԾագոցն մեր :

Յօդ Զ . Թագաւորութի Արագանայ :

Այս Թագաւորութի կայր սորին է քան զԹրուին աչաւայ . զոր 'ի հիւսիսոյ ունի իւր սահմանակից . յարեւմտից՝ զպանկալա . 'ի հարաւոյ պատեալ է ովկէանոսիւ . իսկ յարեւելից ունի իւր սահման զԹրութն հուայի և բէկուայ : Ոմանք յԾագրաց զպէտոն չանդիկամ զնեն սահման ընդ մէջ սորին Թագաւորութ , և պանկալայի . արտաքս Թողեն զդանդիկամ Ծգջն , զոր նք գնեն 'ի պանկալա : Առ Թէկայէտ յառաջագոյն տիրեցին նմա մուղալք , և կարգեցին անդ զիւուսակալ . սակայն և այնպէս պարտէ համարել զսա միացեալ ընդ Թագաւորութեն

սրա

արագանայ. վ՟ զի բնակիչք նր զնոյն դէնն ունին, զնոյն բնաւորութ՟ բարուց, և զնոյն լեզու զոր տրագանացիք :

Ունի բզմ գետս. յորս գլխաւորքն են Զանդէնամ. որ ելեալ 'ի դիպեդայ, և անցեալ ը՟ Յն աշամայ, կմ՟ ասեմայ մտանէ 'ի ծոցն պանկալայի մերձ 'ի բերանս գանգէսի : Աւրագան, որ կոչի ևս Քաղնէրխ. սա ևս է գետ մեծ. որ ելանէ 'ի լերանցն աշամայ, և բաժանեալ յերկու առաջս, մտանէ յարագան, և անտի զեղու յովկիանոսն : Այլ մերձ 'ի բերան նր, գտանին 'ի ծովն բզմ քարաժայռք և կղզիք աւազոյ ը՟ որս հարկ է անցանել բզմ զգուշութ՟, նախ քան զժամանել 'ի տեղին, ուր գետս այս գործէ նաւահանգիստ խոր և բաւական ամ՟ ազգ նաւուց վաճառականաց: 'ի ծովեզերեայ կողմանս սորին Յի ը՟ երկայն առ ծոցով պանկալայի են մանր կղզիք, քարաժայռք և ճախին տեղիք, յորս վտանգեալ բզմ անգամ՝ նաւքն, որք նաւեն 'ի կողմանսն յայնոսիկ : 'ի կղզիս անդ բնակէին աղքատ ձկնորսք ոմանք, յորս չէր ինչ յիշատակաց արժանի :

'ի հարաւային կողմանս այսր Յի սակաւ են բնակիչք, այլ յաճախեն անդէն գազանք վայրենիք. վ՟ վագր փիղ ցուլ վայրենի և այլ սոյին նման անընտել գազանք: Հիւսիսային կողմն 'ի նախնումն կարի բազմամարդ էր. այլ այժմ ոչ ևս է նոյնպէս, 'ի պատճառս պատերազմաց, և այլոց բազմապատիկ խռովութ՟ց, որք յաճախեն 'ի հնդիկս : Օդ երկրին կարի ջերմ է, այլ մաքուր և առողջարար. մանաւանդ յայնմ եղանակի տարւոյն, զոր նոքա ամառն անուանեն. զի 'ի միւս եղանակի զոր ձմեռն կոչեն, յորժամ տիրեն անձրևք, և օդք խոնաւք, յաճախեն անդք վտանգաւորք, և այլ պէսպէս ախտք :

Յառաջին ժամս սոյն արագանայ էր հզօր ինքնակալ, և աշխարհս համօրէն սահմանակից թգրաց : 'ի վախճան նախընթաց դարուն դեռևս ծագեալ էր երան նր, որ և կոչէր մականուամբ *Բարձր և գերահռչակ ինքնակալ, որ պայծառացեալ փայլէ 'ի մէջ թագաւորաց տիեզերաց. ամ՟ արեգակն 'ի մէջ աստեղաց երկնից. յորոյ 'ի կարողութ՟ զարհուրէին ամ՟ ազգք. մինչ յաղթական թշնամեաց իւրոց. և իր սրբոցն ոսկւոյ, են : Այս և այլ սոյին նման վսեմական վերատուութիւնք հարկ լինելոցն առնոյ՝ ցուցանեն զնախնի կարողութ թագաւորաց սորին երբեմն. որք բայց յանբաւ զօրաց ունելին և 'ի ծովու բզ՟մ ցռկանաւս. այն է՝ չէքտիրիս, և այլ նաւս պիտոյից 'ի խափանել զվաճառականութի՟ մերձաւոր ազգաց, և 'ի յափշտակել վաճառս և գերիս 'ի նոցէ:

Յարքունիս անդ թգ՟րուե՟ գոյր սենեակ ինչ համակ ոսկեզէն, զարդարեալ առհ՟րկ արձանօք կռոց, և այլ զանազան ոսկի և ականակուռ զարդու, ուր պահեալ կային և երկու մեծամեծ և իբր սնդլին կարմիր յակինթք. որոց վ՟ն բազում պատերազմունս մղեցին շրջակայ թգ՟րք. այսպիսի իմն պատուականաւ, թէ որ միանգամ առնու զայն երկու յակինթս, ունի այնուհետև տիրել համօրէն մերձակայ թգ՟րուեաց: Այլ այժմ ոչ՟ թուի ոսկեզարդ սենեակն այն կողոպտեցաւ յայնչափ մեծամեծ խռովութիւնս և 'ի պատերազմունս, որք եղեն 'ի նմա:

'Ի հասանել անդ փորդուգալաց, յետ սուղ ինչ ժամանակի կարգեցան 'ի թագաւորէն վերակացու, և կառավար ապաստանաւոր նաւուց նոցա, որք ընդ երկար ժամանակս վարեցին զայն պաշտօն. զի յնմ ցռկանաւս էր մի ոմն հրամանատար 'ի փորդուգալաց. որոց կարգեալ էր թոշակ յարքունուստ. և բաց յայնմանէ, նաև յաւարաց անտի ունելին բաժին: Յամին 1690 'ի մեռանել թգ՟րին արագանայ, յարեան երկու որդիք ն՟ր հակառակ միմեանց 'ի ժառանգել զաթոռն հայրենի. յորմէ մեծամեծ քանդմունք և աւերածք գործեցան յծ՟ի անդ: Եւ այս մարտ ը՟ միմեանս ոչ էր այնչափ վ՟ն իրաւանց յաջորդութե՟, ք՟ որչափ վ՟ն ժառանգելոյ զմեծագանձ ճոխութիւն հնդիկ իշխանի ուրումն, որ առ 'ի զերծուցանել զանձն և զգանձս իւր 'ի յափշտակելոյ ձեռաց մողոլաց, որոց և հարկատու էր, խոյս ետ հանդերձ գանձիւ իւրով առ թգ՟րն արագանայ. ուր փոխանակ ապահովութե՟ կենաց և գանձուն, եգիտ մահ դառնագոյն: Իսկ երկպառակութի՟ երկուց որդւոյն վէր 'ի վայր արարին զթգ՟րութիւնս զայս. որ թէպէտ կայ մնայ և այժմ, բայց մեծապէս անկեալ և անշքացեալ յառաջին վայելչութենէ և 'ի կարողութենէ:

Վաճառականութի՟ սորին ծ՟ի է 'ի ձեռս հայոց, և այլոց ազգաց՝ եւրոպացւոց, պանկալացւոց, և բնակչացն օրիսայ, և քաթապայ: Փորդուգալք, որք ոչ վերագոյնդ ասացաք կարգեալ էին 'ի թագաւորէն արագանայ հրամանատարք նաւուց ն՟ր, թողին զայն գործ և գնացին հաստատել զբնակութի՟ն իւրեանց 'ի

պան

պանկալայ, յորդորեալք 'ի խոստմանց իշխանի նր՟, այլ վրիպեցան 'ի յուսոյ, և կորուսին զերկոսեան ևս: Եւ փոքր նց՟ մնոյն յարագան հոլանտացիք. բայց առ սակաւ ժմկ կացին անդ. վն՟ զի 'ի 1683 լքին զտեղին ձանձրացեալք 'ի հանապազորդ նեղութեանց, և 'ի հարստահարութեց՟ բնակչաց երկրին:

Վաճառք, որք ելանեն յԾէ աստի են փայտ պատուական 'ի պէտս շինուածոց. կապար, անագ, վերնիճ, փղոսկր, և փիղ, զոր յՃմ կողմանց հնդկաց տանեն անդր, և անտի սփռին յայլևայլ տեղիս. որ և է մի 'ի գլխաւոր և 'ի շահաբեր վաճառաց այսր թագաւորութե՟ն: Բաց 'ի փղաց զոր այլուստ տանին անդր, ունի և այլ բազմատեսակ անասունս. զի վայրի գոմէշ խաշն և այծ խոզ և եզն սագս, և բադս են. այլև որիզ առատ և պտուղական. որ համով և ախորժակութ՟բ գրեթէ անզուգական է: Վաճառեն անդ և պէսպէս ակունք պատուականք, և ոսկի. բայց ջզն ոչ են նք՟ բերք այսր երկրի. բզմք՟ համարին լինել մնացորդս գանձուց նախայիշատակեալ հնդիկ իշխանին, զոր սպան թգ՟րն Արագանայ: Իսկ յայլ կողմանց տանեն անդր ազգի ազգի ոստայնս, բամբակ, պղպեղ, և այլ պէսպէս համեմինս, սանտալ փայտ երկաթ պողպատ պղինձ կաշի և անօթս հասարակս յախճապակեայս: Ստորին դրամ նր՟ կոչի գանձէն, որ առնէ չորս վենետկեան լիրէ, առաւել ք՟ զմի ղուռուշ կոստանդնուպօլսոյ ըստ այժմեան արժէից. իսկ փոքր մանր փողս 'ի գործ ածեն զծովային խին խեցի գոլրի կոչեցեալ, որպէս և 'ի պանկալայ և յայլ կողմանս հնդկաց:

Դին նց՟ նման է դենի բեկուճացւոց. զոր ստորև ունիմք ստորագրել: Կռատունք նց՟ ի մեծի մասին կառուցեալ կան 'ի գլուխս բարձրաւանդակաց, և են բոլորաձև. յորոց նց՟ զարդարեալ արտաքուստ ոսկեզօծ գնտակօք, և այլ պէսպէս քանդակօք: Որմունքն ամրակուռ, բայց մի միայն դուռն ունին. իսկ պատուհան կամ բնաւ չունին, և կամ յոյժ սակաւ. 'ի ներքս անդ են բզ՟մ արձանք առհասարակ նստեալք ոտն զոտամբ արկեալ. յորս ոմանք են հսկայաձևք կաւակերտք: Ականջք նց՟ տարադէպ երկայն կախեալ զթիկամբք, քանզի երկայն ականջք գեղեցիկ համարեալ են առ բնակիչս տեղւոյն, ոչ՟ և այլոց ազգաց լինել յայս ցամաքականցն: Երեսք և ձեռք և ականջք նց՟ ոսկեզօծ են. իսկ մնացեալ անդամք

մաս

մարմնոյ սեաւ․ որք և զգեցեալ ունին հանդերձս
մեծագինս ։

Քուրմք նց բժշկեն յոյժ, որք վարեն անկին կեանս, որոց գործ է դաստիարակուն մանկանց․ և բնակեն 'ի մայր անտառս, որք ամ ուրեք կեցեն կատարանց։ Հանդերձ նց դեղնագոյն, նմ և գլխարկն․ և հերք գլխոցն կարճ։ Բազում պարկեշտութ և ծանրութ ըղջեն է փառօք մեծաւ ունելով է ինքեանս զկառավարութ աշակերտաց, և ոչ երբեք միայն ։ 'Ի մատուցանելն զպաշտօն կռոց, անկանելն 'ի վր երեսաց առաջի նց, և ընծայեն նց ծաղիկս, և ազգի ազգի խոտեղէնս անուշահոտս ։ Ոչ ամ տաճարք նց զնոյն կարգ ունին․ այլ են ոմանք, որք առաւել սրբազան համարին են սու․ նմ, որք և են ուխտատեղիք նց ։

Յամէն միանգամ տանեն հանդիսաւոր Թափօր, առնելով 'ի նմին զմի 'ի կռոց անտի բարձեալ 'ի կառս, և բազմութ քրմաց նց զգեցեալ դեղնագոյն աթլաս։ Յայնժ հանդիսի՝ ոմանք առաւել փոյթեռանդն պաշտօնատէրք կռոց՝ ինքնակամ արկանեն զանձինս ը անուոք կառացն, ուր ջախջախին ոսկերք, ոմանք և անդէն սատակամահ լինին ։

'Ի սմին Թգրուն գտանին և բազմութիք քրիստոնէից և մահմետականաց, որք ոչ միայն հրապարակաւ կատարեն զպաշտամունս իւրեանց, այլև կարող են առնուլ կանայս 'ի բնակչաց երկրին, և դարձուցանել 'ի հաւատս իւրեանց ․ Չէ յայտ թէ 'ի քանի գաւառս բաժանի այս Թ ․ Ոմանք բաժանեն 'ի ժե կուսակալութիւնս, կամ գւռս ․ բայց յերկոտասան քաղաքաց անտի, զոր դնեն նք գլխաւոր տեղիք այնց գւռաց, յոլովք անծանօթ են։ Յայն սակս 'ի բաց Թողեալ մեր զայն բաժանումն նց, ունիմք յառաջիկայդ ստորագրել զանուանս 'ի քղքաց, զորս գտաք նշանակեալ 'ի գիրս Տագրուեն աշխէնկայ։

Աւրափան ։ Է գլխաւոր մայրաքղք համօրէն Թագաւորութեն․ կառուցեալ 'ի մէջ հովտի, որոյ շրջապատն է 15 մղոն․ է մէջ բարձրաբերձ և ժայռաւոր լերանց, յորոց է նեղ և է անձուկ կիրճ ինչ հովի արագան գետն, անցեալ է մէջ քղքին ։ Անդ լերանց 'ի քաղաքն կոյս փակեալ են հզօր դրամբք։ Այս քաղաք, նմ և այլ ամ քաղաքք որ յայնկոյս Գանգէսի, անշուք են, և աղքատաշէնք․ զի տունք նց առհասարակ փայտակերտք 'ի վր բարձր ցցից շինեալ առ 'ի խորշել 'ի խոնաւութենէ և յորդամանէ գետոյն 'ի բարձրանալն ջուրց 'ի յորդութեան անձրեւաց․ այլ 'ի նեղու̃ն թիւնաւոր զեռնոց, որք յաճախեն ը̃ բովանդակ ծ̃ն: Եւ է յարևելեան կողմ̃ն ծ̃ին. մերձ 'ի սահմանս բենկոլայ: Ընդարձակ է և բազմամարդ. ունի շուրջանակի պարիսպ. ոմանք 'ի փողոցաց նո̃ր և 'ի հրապարակաց քարայատակ են, այլ խորտաբորտք, և աւազապարք. ուստի և դժուարաքայլ, և յանձրևային ժմկս լպրծուն: Գլխաւոր շինուած քաղաքին են ապարանք թգ̃րին. բայց և այն անշուք:

Օրիէնտալ: Քղ̃ք՝ մերձ 'ի բերան արագանայ գետոյն, որ յառաջն բազմամարդ էր և բազմավաճառ, գոլով նւհնգիստ պատուական. այլ այժմ մեծամ̃բս անկե̃լ է 'ի նախնի ճոխութե̃ իւրմէ. թէպէտ և այժմ գնան անդ նաւք հնդկաց, ուր և նստի ծ̃ւակալ ոմն արագանցի: Փոքր ինչ հեռի 'ի ք̃ղքէ աստի առ արագան գետովն գոյ մեհեան երևելի ուխտատեղի այսր ծ̃ի. ուր յա̃մ կողմանց ընթանան բազմու̃թ ուխտաւորաց նց̃, ուստի քան զա̃մ մեհեանս նց̃ սա է փարթամ և բազմագանձ:

Պէկուէն: Քղ̃ք ծովեզերեայ քաջայարմար վճռ̃կանութե. ունելով բզ̃մ գիւղօրէս, և պատուական նաւահանգիստ: Իշխան նր̃ է փոխարքայ, որոյ շուք և արտաքին հանդէսք գրեթէ ոչինչ ընդհատ են 'ի շքոյ թագաւորին արագանայ:

Զանդէկան: Քաղաք և նաւահանգիստ՝ գործեալ 'ի չանդէկամ գետոյն: Յռ̃ջագոյն փորդուգալք ունէին անդէն կալուածս. յորոց տարագրեցին զնս̃ հոլանտացիք: Իշխանութի̃ անդղիացւոց պանկալային՝ ձգի և յայս ք̃ղք. ո̃պ և 'ի վ̃ր ուխանկայ բազմավաճառ քաղաքին, որ մերձ է սմ̃ յարևելից կուսէ, զոր և բզ̃մ անգամ էառ ընդ իւրև ինքնակալն մողոլաց:

Բոմա: Քղ̃ք՝ աւուրբք ինչ հեռի 'ի պէկուէն քաղաքէ կառուցե̃լ 'ի դժուարամատոյց վայրի, թէ ը̃ ծովակս յաճախ և գրեթէ հանապազորդ ալեկոծութե, և թէ ը̃ ցամաք 'ի պատճառս պատատող գազանաց: Են այլևս բզ̃մ քաղաքք յայսմ թագաւորութե. ո̃պ Քօրօմայա. Սէփօն. Զարա. Աշատրամ. Դինէրա. Տօղրայէ. որ է նաւահանգիստ 'ի հարաւակողմն արագան գետոյ:

Յօդ. Ժ. Թագաւորութիւն Հաւայի, կամ Պրամայ, Բեկուայ, և Միհնայ :

Այս երեք թագաւորութիւնք՝ որք 'ի նախնումն զանազան էին և անկախ զմիմեանց, այժմ կացուցանեն զմի միայն թագաւորութիւն կրկնապատիկ մեծ քան զհամօրէն հայաստանեայս, և բազմամարդ յոյժ: Վասն որոյ և մեք միով յօդուածով ունիմք խօսիլ զնմանէ : Յարևելից ունի իւր սահման զտէրութիւնն անուանեալ լաոս, և զաշխարհն չինաց. յարևմտից՝ զարագան, և զաշամ կամ զաշէմ. 'ի հարաւոյ՝ զովկիանոս, և զսիամ. իսկ 'ի հիւսիսոյ՝ զդիպէդ: Հարաւայինն կողմն սորա առհասարակ է դիւր դաշտավայր. իսկ հիւսիսայինն թէ առաւել մասին լեռնային. յորում են և լայնարձակ հովիտք արգաւանդք: Արտաքին կողմանք աշխարհիս լի են բազմախիտ անտառովք, մանաւանդ 'ի լեռնակողմանս առ սահմանօքն արականայ, ուր գտանին և անապատք վտանգաւորք 'ի պատճառս յաճախութեան գազանաց, որք են վագր և փիղ, և այլ ամեհի գազանք յաճախեալք առ սահմանօքն չինաց: Երկու հռչակաւոր գետք ոռոգանեն զայս աշխարհ. յորոց առաջինն յանուն աշխարհին կոչի Հաւա. և է մի 'ի մեծամեծ գետոցն ասիոյ, որ ելանէ 'ի դիպեդայ, ուր կոչի Զամբու. և անցեալ ընդ հաւա արքայանիստ քաղաքն մտանէ յովկիանոս. ջուր նորա սրընթաց է յոյժ քաղցր և մաքուր: Առ պագան քաղաքաւ ըստ պատմելոյ ոմանց մատենագրին. անհնարին լայնեալ ընդարձակի. և ունի անդէն զքարացուցիչ զօրութիւն, որ 'ի սուղ ժամանակի քարացուցանէ զփայտ: 'Ի սըրընկ նաւահանգստէ այսր աշխարհի մինչև ցհաւա արքայանիստ քաղաք նորա որ է ճանապարհ երկամսօրեայ, (քանզի պարտ է ընդ հակառակն ընթացից ջուրց գնալ,) յերկուց կողմանց գետոյն առհասարակ են անտառք մեծամեծք ազգի ազգի ծառոց, որք ձգին 'ի խորս բազմօրեայ ճանապարհաւ, յորում գտանին բազում գիւղօրէք, և բազմատեսակ կենդանիք: Անդ առ ափն գետոյն կան բազմութիւնք կոկորդիլոս գազանաց, զոր Կումիր կոչեն, դարանեալք յաւազուտս գետոյն, մինչև չերևիլ բնաւ աչաց, և յելանել անցաւորաց արտաքս 'ի ցամաքն, կամ 'ի գալ գիւղականաց առ ափն գետոյ, յանկարծակի 'ի վերայ յարձակեալ կլանեն, ոչ միայն զմարդ, այլ և զեզն, և

զգո.

պտամէշ ողջոյն · քզի երկայնութն նր̃ հասանէ յերիս գրկաչափս և առաւել : Գիւղականքն առ 'ի անքոյթ կալ 'ի սարսափելի գազանաց անտի, յերկուց կողմանց գետոյն մեծամեծ գերանօք փակեալ ունին զեզերսն :

Իսկ երկ̃դ գետն կոչի Բէնկու որ նոյնպէս եղանէ 'ի գխալեգայ · և ոչինչ ընդհատ է ը̃ մեծութն յառաջին գետոյ անտի: Բերանք երկուց գետոցս բղ̃մ են յոյժ · որք 'ի ձեռն բազմապատիկ և ընդխառնեալ վտակաց իւրեանց գրաւեն յեզերաց ծովուն տարածութն ընդ երկայն երից կմ̃ չորից աստիճանաց · գջ̃' 180, կմ̃ 240 մղոնաց : Այս գետք մեծապէս նպաստեն ոչ միայն արգասաւորութն երկրին, այլ և առաւելապէս ճոխութն և փարթամութն 'ի ձեռն վճռկանութն, որում դիւրացուցիչ են յոյժ :

Բերք և վաճառք սո̃ առաւել առատագոյնք' են որիզ, և այլ ազգի ազգի արմտիք, և բանջարք, և պէսպէս արմատք · ունի և վայրի անասունս չորքոտանիս, և ընտ̃ն տեսակս զարմանաւոր թռչնոց · բղ̃մ յոյժ, մանաւանդ յանտառսն, ոպ̃ և կապիկս անհամարս, որք վնասակար են յոյժ տանց և կարասեաց նր̃ · զի զա̃մ անօթս գտեալս 'ի տան խորտակեն, զկղմինդր տանեաց առհ̃րկ ցրուեն : Գտանին և բղ̃մ մեծամեծ փիղք 'ի նախագրեալ անտառսն և այլուր · զոր այսպիսի հնարիւք կենդանւոյն որսան · քզի ունին յանտառսն անդ ցանկապատ տեղի մեծամեծ գերանօք շուրջանակի ամրակուռ հաստատել, ուր արձակեն զմատակ փիղ վարժեալ · որում զհետ պնդեալ արու փղաց, մտանեն անդ 'ի ներքս · և յայնժամ փակեն զմի դուռն, և 'ի միւս կողմանէ 'ի բաց հանեն զմատակ փիղն · անդ թողեալ զփիղսն առանց կերակրոց սովալլուկ, մինչև 'ի քաղցոյ տկարացել անկանին յերկիր, ապա կապեալ զնս̃' չափով տան նր̃ կերակուր, մինչև առ սակաւ սակաւ ընտելանալ, զորս 'ի համօրէն հնդկաստան 'ի բղ̃մ պէտս, ոպ̃ 'ի հանդէսս, 'ի պատերազմունս, և երբեմն և 'ի խաղարկութս 'ի կիր արկանեն :

Ունի, և զանազան դեղորայս, և ամպէր և մուշկ, նաև ազգի ազգի մետաղս · ոպ̃ պղինձ երկաթ անագ կապար, և մանաւանդ ոսկի և արծաթ · վս̃յ և առ աղքատս իսկ և առ գռեհիկս տեսանին բազում ոսկի զարդք · և մեհեանք նր̃ արտաքուստ և ներքուստ ոսկեզօծեալ : Ունի և ազգի ազգի ակունս · ոպ̃ ամեթօս, տօպաճ, և յակինթ' կապոյտ, դեղին, և կարմիր · որք աստի սփռեն

Է ՃԺ Ձ ։ Պատմեն թէ յայս Ձ մաքսատեղեաց ոչ առնուն դրամս 'ի մաքս, այլ զորոշեալ մասն ինչ 'ի վաճառաց անտի. զոր եթէ կտաւ են կամ մետաքս, մասն ինչ հատեալ առնուն անտի 'ի մաքս ։ Եւ ևս ոչ 'ի գործ ածեն դրամս տպեալս, այլ անտիպ և անձև, զոր և կշռելով տան իրերաց, վասնզի բազումք կրեն յանձինս կշիռ և զուռն, և զայլ հարկաւոր գործիս, զի 'ի լինել պիտոյից հանեալ զգործիսն, հատանեն զոսկին կամ զարծաթն, և այնպէս կշռեալ տան միմեանց. և յամենայն կրպակս միշտ պատրաստական գտանին այն գործիք ։ Վասնզի բազումք 'ի փոքր և 'ի նուազ առևտրութիւնս ոչ վճարեն վաղվաղակի, այլ սպասեն հասանել 'ի մեծ ինչ գումար դրամոց. և թէպէտ 'ի հասարակ առևտրութիւնս կապար 'ի գործ ածեն փոխանակ դրամոյ, բայց զայն ևս կշռելով տան ։ Զափք նոցա որոշեալ են 'ի թագաւորէն, բայց և ձևք չափուց են անսովոր, քանզի առաւել մեծագոյնն է յօրինեալ ըստ ձևոյ աքաղաղի ։ Երևելի տեղի վճռականութեան սորա, բաց յականց՝ որոց վճռականութիւն առաւել լինի 'ի խորին կողմն Ձին և 'ի հասքղք, է նուհնդկաստան սրրընկ, կամ սիրխամ կոչեցեալ ։ Յառաջին ժամանակս յորժամ յաջողեալ էր տրուէն փորդուգալաց 'ի հնդիկս. միայն նոքա էին որք տուրևառութիւնս առնէին 'ի սմին Ձի. որք և իբրև տէարք էին երկրին. և առ նովին ժամանակօք կարի ծաղկեալ և բարգաւաճ էր Ձ. այս, քան զայժմու ժամանակս. զի այժմ ոչ ոք գնայ անդր, բաց 'ի վաճառականացն, որք բնակին 'ի գօրօմանտէլ և 'ի պանկալայ՝ 'ի հայոց և յայլ ազգաց. բայց պանկալացիք չեն կարօղ վաճառել անդ, բայց միայն խոշորանիւթ պաստառս ։ Ուստի բազումք 'ի նոցանէ երթան անդ առաւել 'ի շինել և 'ի նորոգել զնաւս իւրեանց, քան վասն վաճառականութեան. զի բաց յերկաթոյ և 'ի պարանաց՝ գտանին անդէն ամենայն նիւթք կարևորք նաւուց, և այն՝ չափաւոր գնով. և ոչ ամենայն 'ի սուրատ, ուր ամենայն նիւթք նաւուց մեծագին վաճառին. յայն սակս նուհնդկաստան սիրխամայ է այժմ իբրև գործարան իմն նաւուց, որք նաւեն միայն 'ի ծովս հնդկաց ։

Բնակիչք նորա ըստ բարուց մարդասէր են և քաղցրաբարոյ, ողորմած և խոնարհամիտ. բայց և կեղծաւոր զեղխ և անառակ. վասնզի և կարի յաճախեալ է առ նոսա բազմակնութիւն. իբր 'ի բազումս բարձրահասակ են մարմնով, և դիմօք սպիտակ. զգենուն հանդերձս մեծագինս արք և կանայք, որ է պատմուճան երկայն ըստ թեզանիսք, զորս պատեն զմիջով ։

կա

կառավարութ̃ն սորին տրուե̃ է միապետական ինքնիշխան ամենևին. որոյ ինքնակալն շահ անուանի, և ոչ խան. ըստ ոմանք յԾագրաց առեն, և վերտառութ̃ն ն̃ր այս է.՝ Արքայ արքայից, և բարեկամ և ազգակից ա̃ծոց երկնից, և ն̃. եղբայր արեգական. մերձաւոր ազգակից լուսնի և աստեղաց, և տ̃ր տեղատուութ̃ե և մակընթացութ̃ե ծովու ||։ Ահա քեզ վերտառութ̃ի ծաղրական, որ̃ և այլոց ինքնակալացն ի խելամէտ ամբարտաւանութ̃ե։ Կոչի ևս Թագաւոր սպիտակ փղի. և 24 սպիտակ ամպհովանեաց, կմ̃ տաղաւարաց. որք են նշանակ 24 ն̃հնգաց, յորոց վ̃ր իշխէ նա ինքն ինքնակալն։ Զինուորական կարողութ̃ն ն̃ր երևելի է ը̃ բազմութ̃ե թուոյ զօրացն, բայց ը̃ զօրութ̃ե՝ առ ոչինչ գրելի. զի զուրկ են յա̃մ զինուորական արուեստից։ Ո՛չ բաշխին յարքունուստ թոշակք զինուորաց, բայց միայն ՚ի ժմկս պտրզմի. և յաւարտել պտրզմին թէ յաղթող և թէ ձախող, այր իւրաքանչիւր գնայ ՚ի տուն իւր։ Ուստի սուտ է այն՝ զոր ասեն ոմանք, թէ ինքնակալն հաւայի և բեկուայ ունի երբեմն յոտին միլիոն մի և կէս զօրաց։ ՚ի նախնումն երեք այս թագաւորութիւնք անկախ էին զմիմեանց, որ̃ և վերագոյնդ ասացաք, իւրաքանչիւրն ինքնագլուխ գոլով. յետոյ փոխեցաւ ՚ի միապետութ̃ն այսպիսի առթիւ։ Արքայն չիամայ և բեկուայ բարեկամ էին միմեանց և դաշնադիր. այլ ՚ի ժմ̃ն դարուն բեկուացիք գողացան ՚ի չիամացւոց զհռչակաւոր կուռս կոչեցեալ Սամմոնայի որում երկու ազգքն ևս պաշտօն տանէին։ Արքայն չիամայ բողոք կալաւ սակս այսր գողութ̃ե, և խնդրեաց յարքայէն բեկուայ դարձուցանել զա̃ծն իւր. իսկ նա ոչ կամեցաւ տալ։ Յայնմ ամի դիպաւ սաստիկ երաշտութ̃ի, և սով ՚ի թ̃գրութ̃ն չիամայ. զոր քուրմքն ասացին լինել պատիժ առաքեալ յա̃ծոց վ̃ս անհոգութ̃ե չիամացւոց ՚ի դարձուցանել զՍամմոնայի ա̃ծն իւրեանց։

Վ̃կ արքայն չիամայ ել պտրզմաւ ՚ի վերայ արքային բեկուայ, և երկիցս յաղթեաց ն̃մ։ Իսկ արքայն բեկուայ խնդրեաց օգնութ̃ի ՚ի փորթուգալաց, յորոց և ընկալաւ 1000 զօրականս, որք ՚ի փախուստ դարձուցին զչիամացիս, զարհուրեալք ՚ի զինուց եւրոպացւոց։ Վ̃ս այսր մեծի յաղթութ̃ե ընկալան փորթուգալք յարքայէն բեկուայ զա̃մ զոր խնդրեցին. և մի ո̃մն ՚ի զօրապետաց անտի փորթուգալաց կոչեցեալ փերէիրա, եղև ը̃ հանուր սպարապետ համօրէն զօրացն բեկուացւոց։ Այլ յանդգնեալ ս̃ր ՚ի պատձեռս իշխանութե՟ իւրոյ, եւ քննութե՟ յափշտակել զհարսն մի հրապարակաւ 'ի մայրաքղ՟ք անդր յանդիման աչաց իշխանին, ը՟ որ անհնարինս սրտմտեալ ժողովրդեան, առհ՟րկ յարձակեցան 'ի վրէժխնդրութի, և անդէն խողխողեցին զնա, ը՟ այլոց փորդուքալոց զորս գտին. և զմարմին նո՟ կապեցին ը՟ ձետ փղի, և զայլ պէսպէս անարգանս ետուն նմ՟, և այսպէս ջնջեցան փորդուքալք առհ՟րկ 'ի բեկուայ։ Այս տեսեալ շիամացւոց զարքայն բեկուայ զրկեալ 'ի ձեռնտուութե՟ փորդուքալաց, եկին միւսանգամ 'ի վ՟ նո՟. որոց ոչ կարելով ս՟ զդէմ ունել, խնդրեաց իւր թիկունս զարքայն հաւայի, որ էր իշ՟ան մեծազօր։ Գնաց սա յօգնութե՟ բեկուացւոց, յաղթեաց, և տարագիր արար զշիամայիս 'ի բեկուայ։ Բայց մինչ դառնալոյ անդրէն յաշխարհ իւր, դարձոյց զսուրն 'ի վ՟ արքային բեկուայ, ընկէց զնա յաթոռոյ. և միացոյց զբեկու, և զսահմանակից նո՟ զմիւսն աշխարհն ը՟ աշխարհի տէրութե՟ իւրոյ։

Դենն բեկուացւոց գրեթէ նմ՟ իրօք նոյն է ը՟ դենի շիամացւոց, զի երկոքին եւս պաշտեն զմանաւոր կուռս մանունս և մեծամեծս, առ որս սաստիկ յաճախեալ են նմանու՟ք, և դրօշել՟ք չ՟ծոց իւրեանց, մինչդ 'ի տեղիս տեղիս, զորս 'ի զ՟զն նիւթոց շինեն, ոմ՟ յոսկւոյ յարծաթոյ 'ի քարէ և 'ի փայտէ, բայց լի մեծագանձ և անչափ զարդուք։ Ունին և կռատունս գեղեցիկս բարձրաշէնս զմբեթայարկս և ոսկեզօծեալս, և մեծամեծ զանգակս. այլ 'ի մէջ անչափ անհամար կռատանց երկու են առաւել անուանի և մեծ, յորս կարեն կալ բիւրաւոր ժողովուրդք. մին կոչի Շենբիշմբալ, և միւսն Կեղ տլում։ Քուրմք նց՟ կոչին Տալաբոյնք, որք անկին վարեն կեանս. ագանին զզգեստ կանաչ, կմ՟ դեղին. և են 'ի պատուի յաչս ժողովրդեան. տունք նց՟ գեղեցիկ և զարդարեալ ամ՟ պատրաստութ՟. ոչ տան ծանրութ՟ ումեք վ՟ պիտոյից մարմնոյ. զի գործեն ձեռօք իւրեանց զերկիր, որ նուիրեալ են կռատանց, և նովաւ դարմանեն զկեանս։ Իսկ յորժամ կարեւոր ինչ պակասի նց՟, առաքեն զոմն յաշակերտաց իւրեանց մուրանալ, զգեցուցեալ նմ՟ զզգեստ որոշեալ առ այն գործ. որք շրջեալ տանէ 'ի տուն՝ զտեղի առնուն առ դրան իւրաքանչիւր տանց երիցս հարկանելով զփոքրիկ թմբուկ ինչ՝ զոր կրեն 'ի ձեռին. և եթէ չտան ինչ, անցեալ գնան յայլ տուն, առանց և եւ թախանձելոյ։

Պատ

Պատմեն բազումք, թէ այք կարի մարդասիրութիւն ցուցանեն օտարականաց նաւակոծելոց. կերակրեն զնոսա և զգեցուցանեն. և 'ի միջի վանաց իւրեանց տուքեն 'ի միւսն, մինչև հատուցանել զնոսա 'ի սիրելամ նուհնգխոսն, երթալ անտի յաշխարհ իւրեանց, և եթէ ոք 'ի նոցանէ հիւանդանայցէ, նախ բժշկեն զնա եթէ իցէ կարելի։ Զայս մարդասիրութիւն ցուցանեն ամենայն անխտիր յինչ կրօնէ և իցէ. և ոչ երբէք հարցանեն ումեք յորմէ՞ աղանդոյ ես դու. շատ է զի մարդ է, յայն սակս արժան է ասեն բարիս առնել նմա. բայց ոմանք պատմեն կեղծաւորութիւն և կախարդութիւն յաճախեալ է յոյժ առ նոսա։

Բազում և պէսպէս առասպելական աւանդութիւնս ունին զկռոց իւրեանց, որ սովորական է ամենայն կռապաշտից. յորոց մի է և այն, զոր աւանդեն վասն քեազգեազ կռոց զոր ձևացուցանեն ընկողմանեալ և 'ի քուն. և ասեն թէ, 600 ամք են յորմէհետէ ննջէ. և ոչ զարթիցէ, եթէ ոչ 'ի մերձենալ կատարածի աշխարհի. 'ի տաճար սորա կարեն մտանել ամենեքին։ Ունին և այլ կուռս ինչ անուանեալ Տակուն. զորմէ ասեն թէ չէ 'ի կերպ մարդոյ. այլ զիսկական կերպարանս նորա զլխովին 'ի ծածուկ պահեն քուրմք նոցա, 'ի տաճար սորա ոչ ումեք օրէն է մտանել, բայց միայն քրմաց. և ասեն թէ 'ի խորտակել և 'ի ջնջել քեազգեազ չաստուծոյ զաշխարհս, սա անգէն վաղվաղակի վերստին նորոգեսցէ, կամ նոր աշխարհ հաստատեսցէ։

Ունին և զաղանդն հոգեփոխութեան, իբր օրինակի մաղլայ. զի համարին թէ 'ի մեռանել մարդոյ, եթէ բարի էր, դարձեալ փոխի 'ի մարդ. իսկ եթէ չար, յանասուն։ Զդիակունս մեռելոց ոչ թաղեն, այլ հրով այրեն. բայց 'ի հաւատս նոցա գտանին և նշանք ինչ ճշմարիտ հաւատոյ. զի թէպէտ պաշտեն զկուռս, այլ իմաստունք նոցա ընդունին և զԱստուած գերագոյն արարիչ երկնի և երկրի, և անուանեն հայր և որդի և հոգի. զհայր կոչելով Փրայ, զորդին Սրայ, զհոգին Ըռըդանայ, և զսոսա զերեսին Սունպայ։ Եւ քուրմք նոցա ներքին պաշտամամբ պաշտեն զգերագոյն իմն էակ, զոր կոչեն գերագոյն, կամ մեծ աստուած. որում ոչ առնեն բնաւ պատկեր, կամ նմանութիւն ինչ. զի ասեն թէ չիք տեսութիւն, կամ գաղափար նորա 'ի մարդիկ։ Չունին 'ի կերակուրս այնչափ ինչ խտրութիւն որպէս կռապաշտ հնդիկք յաշխարհին Մողոլաց, զի զամենայն կենդանիս ուտեն անխտիր զփիղ զշուն զկատու զմուկն և զգորտն, բայց ոչ զեզն. և ոչ սպանանեն, այլ տապակեն մինչև ցամաքիլ, և ապա ուտեն. քզի զանասունս ընդունակս հոգւոյ համարին, ուստի և ապականել զնս մարդասպանութն: Ունին պաշտս ամիսս վեց անընդհատ, յորում ոչ ուտեն միս, և ոչ ըմպեն ջուր, յետ պահոց տօնեն տօն մեծահանդէս, զոր կոչեն Սգանքօգ, զորոյ զմեծաշուք հանդէս, և զզնդն խաղարկութս որ 'ի վր գետոյ չէ մարթ լեզուաւ պատմել, քզի սոսկ տեսիլ այնչափ բազմութ նաւակացն զարդարելոց զաչս խտտղէ հիացուցանէն. յորս ամ ինչ ոսկեհուռն դիպակօք, և ոսկեղէն կազմածովք են զարդարել մինչև և թիակք նց առհսրկ ոսկեզօծք. առնեն և բզմ հրձգութս վառօթոյ: Այս թգրութն այժմ բաժանի յերիս ընդհանուր մասունս, կմ Ծա. որք են Հաւա. Բէկու. և Մէէ որոց գլխաւոր քաղաքք են առաջնիկայքդ:

Հաւա, որ կոչի և Պըրմա: Է գլխաւոր մայրաքղք և արքայանիստ այժմեան տրուե այսր Ցի առ Հաւա, կմ ջամբռով գետով. մեծ և բարեշէն. տունք նորա բարձր են և քարաշէն. փողոցքն լայն և ուղիղ: Ապարանք թգրին է գլխաւոր զարդ քղքին, որ ներքուստ և արտաքուստ է ոսկեզօծ. և շուրջանակի պատել քառակուսի պարսպաւ. որոյ իւրաքանչիւր կողմանք 800 քայլ են ը երկայնութ: Ունի և զերիս բերդս ամուրս 'ի մէջ իւրերաց իբր բերդ 'ի բերդի. լի են 'ի նմ մեծամեծ շինուածք, մնւնդ մեհեանք մեծագանձք: օդ նր բարի է և առողջարար, ուստի և չիք 'ի նմա այնչափ ինչ հիւանդութ. ամ ինչ առատ է անդ և սակաւագին:

Բնակիչք նր բաց 'ի զնդն ազգաց հնդկաց են և բզմ փորդուքալք կոչեցեալ հնդիկ քրիստոնեայք, որոց թիւ ը ոմանց հաստանէ մինչև 94000 տուն կմ գերդաստան: Գտանին անդ և բազմութք հայոց, բայց ոչ որչափ յառաջին ժմկս. ուր ունին և եկեղեցի գեղեցիկ պայծառ և ոսկեզօծեալ, և բարձր զանգակատուն առ նովաւ, և սենեակք և բնակարանք քահանայից: Առաջին քահանայն որ գնաց անդ հովուել զեկեղեցին, որպ ասեն եղև մովսէս վարդապետ յէջմիածնէ. զկնի նր տր նիկողայոս յերևանայ. ապա տր պետրոս ջուղայեցի. ապա տր աղէքսանդր. և զկնի նր տր խդատուրս ջուղայեցի եղբայր տր պետրոսին, որ եկաց անդէն ամս 12: Յայն ժմկս մերայնեայք որք կային անդէն՝ ունէին իշխանութն մեծ. հազարապետք ընչից և տան թգրին լինէին 'ի մերոց. յորոց մի էր և պարոն նիկողոսն այրն անուանի, որ էր գանձապետ Թգրին ։ Նաև վաճ՟ռականուԹ՟ մեծամեծ իրաց, մինչդ՟ ականց էր 'ի ձեռս նց՟ ․ որպէս վկայէ նաև պիշինկ Յագիր ․ հատ ․ ի՟ը ․ 'ի Թղթ 204 ․ ուր յետ գրելոյ Թէ վաճ՟ռականուԹն ականց բարդեալ է 'ի մայրաքղ՟քն անդ հաւա, ասէ ․ Հայք հաստատել ունին անդէն զիշխանուԹ՟ իւրեանց, որ դժուարացուցանէ զվաճ՟ռականուԹին եւրոպացւոց, նաև անգղիացւոց եւս ․ որք յեւրոպացւոց անաւ ինքեանք միայն ունին կալուած մի 'ի բեկու ։

ՊԱԳԱՆ ։ Քղ՟ք մեծ ձգեալ է՟ երկայն առ հաւա գետով ․ իբրև 150 մղոնաւ հեռի 'ի հաւա մայրաքղ՟քէն 'ի հարաւակողմն նր՟, այլ այս քղ՟ք է՟ մեծի մասին աւերեալ է ։

ԲՐԱՆ ։ Քաղաք կառուցեալ 'ի կղզի ինչ, որ է 'ի մէջ երկուց վտակաց հաւա գետոյն ։

Են և այլ բազ՟մ քղ՟քք և գիւղօրէք առ նովին գետով ․ այս՟ ՀԱՆԴԸՊԱՐԱ ․ ՍԷՐԱ ․ ՄԷՆԱԸԷՆՄԱ ․ ԲՕՐԱՄԷՆ ․ ՆԱՐԷԲ ․ ՆԱՊՕ ․ ԼԷՋԷՆ ․ ՋԱՄ ․ ՄԷԱԻ ․ ԲՈԴԷՆ ․ ՏԷԿԱՆ ․ ՊՌԱԼՕՄՕ ․ ԿՕՓԱՄ ․ ՏՕՆԷՔ ․ ևն ։

ԲԷԿՈՒ ։ Է քղ՟ք՝ որ 'ի նախնում՟ն էր գլխաւոր մայրաքղ՟ք, և աԹոռ արքային բեկուայ ․ նախ ք՟ զվերջոյ յիշատակել խռովուԹիւն, որք զհամօրէն Թ՟րուԹ զայս արկին ընդ իշխանուԹ՟բ ինքնակալին հաւայի ։ Ձգի է՟ երկայն առ իւր համանուն գետով, որ յերկուս բաժանէ զնա ․ յորոց մին կոչի Նոր քղ՟ք ․ իսկ միւսն Հին քղ՟ք ։ 'Ի հին քղ՟քն վաճ՟ռականք և արհեստաւորք բնակին ․ իսկ նորն էր բնակարան արքային, և արքունի պաշտօնէատարաց յորժամ բեկու ունէր իւր սեփական Թգր ։ Բայց իբրև անկաւ է՟ ձեռս՟ հաւայի, այնուհետև արքունի ապարանք եղեն բնակարան փոխարքայի նր՟ ․ որ է իբրև քղ՟ք փոքր, կամ գեղակ քաղ՟ ամրացուցեալ է՟ սովորուԹ՟ երկրին ։ Տունք քղ՟քիս նորոյն և հնոյն՝ առհասարակ փայտակերտ են, և ծածկեալ սերևովք ․ այլ համբարանոցք վաճառաց աղիւսաշէն և կամարակապ առ 'ի պատսպարուԹ՟ վաճառաց 'ի հրոյ, որ բազ՟մ անգամ յաշխարհին հնդկաց ողջոյն քղ՟քս ապականէ ։ Շրջապատ քղ՟քիս է իբրև 18 մղոն, և է անպարիսպ ։

ՍԵՐԷՆԻ կմ՟ ՍԵՐԻԷՆԻ, զոր եւրոպացւոց Յագիրք կոչեն ՍԻՐԻԱՄ ։ Է նաւահանգիստ, կմ՟ բանդար երևելի առ բերանով հաւա գետոյն յՅելին բեկուայ, 'ի կղզի ինչ ձևացուցեալ 'ի ծովու, և 'ի նոյն հաւա գետոյն ։ Զայս և եԹ նաւահանգիստ ունի բեկու ․ զի խցաւ նաւահանգիստն մարդապանայ, որ չէ այնչափ ինչ հեռի 'ի սմանէ և է պատահական՝ բուսական ա֟մ ազգ. նաւուց · երից աւարց Ճ֟ն֟դ֟նա հեռի է 'ի բեկու հին յորքայ նիստ քղքէն Ը գետն գնալով։ Օդ ն֟ր բարի է, և ջուր գետոյն բարեհամ, վ֟յ և չեն այնչափ յաճախեն անդ հիւանդութիք, և մարթ է զա֟մ ինչ համարձակ ուտել։ Տունք և շինուածք ն֟ր, ո֟ղ և այլ ա֟մ քղքաց առհ֟րկ փայտակերտ են մեծամեծ գերանովք շինեալք · քղ֟ի 'ի շրջակայ սահմանս ն֟ր են անտառք մեծամեծ ծառոց, որոց փայտք պատահական և պիտանի են 'ի շինուածս · վ֟յ շինեն անդ և մեծամեծ նաւս։ Բնակիչք ն֟ր են զնոյն ազգ. հնդկաց, և փորդուքալք, որք ազգաւ չեն փորդուքալք, այլ հնդիկք դարձեալ 'ի քրիստոնէութի, որ յանուն ազգին փորդուքալաց անուանին, ո֟ղ և յայլ Յս հնդկաց։ Քրիստոնէութիւն համարձակ է անդէն, մինչև մարթ է համարձակ զկռապաշտս դարձուցանել 'ի քրիստոնէական հաւատս · ո֟ղ պատմեցաք և զարադանայ Յէն։ Գտանին անդէն և բազմութի հայոց, բայց ոչ որչափ յառաջին Ժմկս, որոց ոմանք նորոգ երթեալ են 'ի Ճուղայոյ · և բ֟զմք ևս անդէն ծնեալ, ուր ունին և եկեղեցի։ Ունին և եւրոպացիք կմ֟ հնդիկ փորդուքալք քրիստոնեայք մեծամեծ եկեղեցիս · յորոց զմին շինեցին հայք վ֟ն ուժեղ֟ն քահանայի պօղոս անուն, Ը որ զչարեւին այլ քահանայք եւրոպացւոց · շինուած եկեղեցւոյն գեղեցիկ է մեծ և հոյակապ հանդերձ կաթուղիկէիւ, և զանգակատամբ, և բ֟զմ անհեռիք առ նովաւ 'ի բնակութի քահանայից, զորս առհ֟րկ շինել ետուն մերազնեայք, որոց գլուխ էր պարոն նիկողոսն Ճուղայեցի ազայարենց, որ առաւել ք֟ զա֟մենին սէր ունէր առ քահանայն, յայլ և այլ տեղեաց ածեալ արուեստաւորս։ Ա֟մ լրաց առատութի է անդ, և ա֟մ ինչ դիւրագին · ո֟ղ մի խուղ որիզ ձուկն շաքար, ևն։

Յամին 1600 արքայն արադանայ զայս նւհնգիստ ետ 'ի պարգև փիլիպպոսի բրիգօնեան, որ էր ազգաւ փորդուքալ, թոյլ տուեալ ամրացուցանել զնա · և շինել անդէն քղք, լինել տեղի ապաստանի փախտականացն բեկուացւոց առ 'ի շինութի Յի իւրոյ։ Իսկ փիլիպպոս շինեաց վաղվաղակի ամրոց հզօր, ձոր և ամրացոյց պատերազմական զինուք · Ը նմին ձեռն էարկ և 'ի շինութի քղքին։ Այլ արքայն արադանայ հրապուրեալ յամնից մահմետական հնդկաց հրամայեաց փիլիպպոսի կործանել զամրոցն, Ը նմին և զքղքն։ Իսկ նա դաշնադիր լեալ Ը մերձակայ իշխանաց հնդկաց, և ևս ամրացոյց զոր Թէպէտ պաշարեցին արագանացիք, այլ ոչ ինչ կարացին առնել նմա: Ապա յամին 1608. հուր անկեալ 'ի քղք անդր, հրդեհակէզ արար զայն ամրոց. զոր վերստին շինեցին փորդուգալք 'ի բարձրավանդակ վայրի, ուր կայ մինչև ցայսօր, որոյ արուարձանք քառասալաւոնկ մեծ են, քք զքղքն: Սակայն յետոյ, ոտ՟ վերադոյնդ նշանակեցաք, տարագրեցան անտի վն բռնակալուե իւրեանց՝ որով հարստահարէին զբուն բնակիչս երկրին: Ուստի այժմ քղքն է 'ի ձեռս բռնկուացուց, ուր նստի քղքապետ ոմն, որ գրեթէ միշտ է յարքայական զարմէ:

Մօրդապան. զոր ոմանք դնեն 'ի թգրուեն շիամայ: Յառաջագոյն էր սա մի 'ի զօրաւոր քղքաց սորին տրուե, քաջայարմար վճռկանուե. զի դոլով առբերանով բեկու գետոյն, որ կոչէր և գետ մարդապանայ, ունէր նաւահանգիստ մեծ՝ և բաւական ամ՟ ազգ նաւուց, առ համանուն ծոցով ծովու: Իսկ արքայն հաւայի՝ զկնի Ը լուրև նուաճելոյ զբեկու, քանդեաց զքղքն, Ը նմին աւերեաց և զնաւահանգիստ նորա, ուր ոչ ևս կարեն մտանել նաւք, այլ միայն փոքրիկ նաւակք:

Են այլևս քղքք բաղումք մերձ 'ի բերանս գետոյն հաւա, ոտ՟ Նէկրէյն. Գռամին. Ռանգօն. Տալա. Բոմլէլին. սոքա երկրոքեանս են 'ի կղզի ինչ ձևացուցեալ 'ի նոյն գետոյն. Տօնկու 'ի հիւսիսակողմն սիրիամ նաւահանգստին, զորմէ գրեցաք 'ի վերոյ: Եւ առ բեկու գետովն մերձ 'ի ծով Սիխիամոս. Մարտօնիօ. Ճամբան:

Յօդ Է. Թագաւորութն շիամայ:

Յարևմտից ունի իւր սահմանակից զբեկու և զովկիանոս. յարևելից զգամպոջա կմ զգամպօջա. և զլաօս. 'ի հիւսիսոյ ըս մասին զլաօս, և ըս մասին զմիէն, և զբեկու, իսկ 'ի հարաւոյ զովկիանոս, որ ձևացուցանէ զընդարձակ և զերկայն ցամաքակղզին իւր, որ կոչի ցամաքակղզի մալաղայի: Ընդ տրուե շիամայ պարունակին տրուեքն Լաօս. և Գամպայա. զորոց խօսեսցուք մասնաւոր յօդուածովք:

Աշխարհս այս է լեռնային. քզի ըստ մեծի մասին դաշտավայրք նր շուրջանակի պատեալ են լերամբք. և բոլ յարեցանէ են 'ի նմ միադօտի լերինք ինչ, որք ձիւն ը բազմօրեայ ճնպհ, և գնան միանան ը լեռինս որ 'ի Թաթարստան : Սակայն 'ի վր այսր ամն արգաւանդ է յոյժ, մինչև ը միոյ երկերիւր բերել : Եւ պատճառ առաւել արգասաւորութե երկրի նր են տեղիք, որք լինին 'ի յորդուէ անձրևաց, մնւնդ զի հող նր չէ ապառաժուտ. Թէպտ զկնի անձրևաց իսկ և իսկ ցամաքին, և սաստիկ պնդանան, որ 'ի տեղիս տեղիս մնայ յոյժ արգասաւորութե երկրին : Եւ 'ի կողմանս ինչ անհամար բազմութե ժժմանց եղծանեն զքերս նր, յորոց գլխաւորքն են ազգի ազգի արմտիք և պտուղք և գօգօ անուշանեղ ծառք և եղէգն շաքարաբեր, և այլ սոցին նման բերք՝ սեփականք Տին հնդկաց : Իսկ լեռնային կողմանք լի են բազմախիտ անտառովք, յորս բուսանին և ստուար եղէգունք, բայց առաւելապէս 'ի գիճին վայրս. ունի և ազգ մի ծառոց բձր յոյժ, որք կարի պատուական են 'ի շինութե նաւուց : 'Ի վայրենի անասնոց յաճախագոյն գտանին անդ փիղ, ռնգեղջիւր, յովազ, վագր, և կապիկ բզմ, եղջերու, և նապաստակ. ունի և ընտանի անասունս, որպ խաշինս և արջառս և այծս. նաև ընտանի հաւս, բայց սակաւ :

Այլ 'ի ցամաքակղզին այսր Տի՝ կոչեցեալ մալաղա, լինին ազգի ազգի Թռչունք անբաւք մի .ք զմի գեղեցիկ և սքանչելի գունովք, նոյնպս և զնզն բոյսք և խոտք առատք, հոտաւէտք և օգտակարք 'ի պէտս դեղորէից : Գտանին անդէն և ոսկիք մեծամեծք, յոմանս 'ի նցէ են զեղթափ կոչեցեալ բանզէհիր, որ Թէպէտ և յայլ բզմ կենդանիս լինի, որպ 'ի կապիկս, յայծս են, այլ պատուական .ք զամենին է ոզնւոյն, որոյ ուտելով զմինասակար ինչ խոտ՝ լեզի նր պնդանայ առ սակաւ սակաւ իբրև զքար, և մարմին նր հիւծի, ոչ կարելով ճաշակել ինչ. զայսպիսի գտեալ բնակչացն՝ ըմբռնեն, և զլեզի նր առնուն, որ լինի մարդկան դեղ օգտակար ըդդէմ պէսպէս ծանր ախտից. մնւնդ ընդդէմ հիւծման անուշանեալ հիւանդութե. օգտէ և ըմբռնելոց 'ի ժանտախտէ, զի եդեալ զայն 'ի ջուր առ .քանի մի վայրկեանս, զոր գառնացուցանէ յոյժ, և ըմպեալ զջուր ըն, պտճռէ զբերան. որ է գլխաւոր դեղ այսպիսի ջերմնատոչոր ախտից. այլ գործածութե ար անծանօթ է եւրոպացի բժշկաց. Որչափ գառնագոյն է այս դեղթափ, այնչափ ազնիւ է և օգտակար. և գառնութեն ոմանց 'ի լաւագունից այնչափ ազգու և զօրաւոր է, մինչև յունիլն զայն 'ի ձեռին, գաւն որակութե նր ծաւալի ոչ միայն 'ի ձեռս այլ և 'ի վերին մասն բազկին . ուստ վկայեն՝ որք զփորձ նր առեալ են, 'ի մերձեցուցանել զեղջու 'ի բազուկն : Այս աշխարհ, որ կարծի լինել Քերսոն ոսկի, կամ Ցամաքագլուխն ոսկւոյ, յիշատակեալ 'ի նախնեաց, ըստ ոմանց Օփիրայ ունէր յոքնագոյն բզմ բեռս ոսկւոյ . զոր և բազմութիւն ոսկեխառն կաւոյն հաստատեն՝ որք պահին 'ի տաճարս նց . բայց այժմ չիք, և ոչ մի . և թէպէտ յամին 1688 արքայն Սիամայ ետ յուղել զերկիրն Ի ամ տեղիս, յոր գործ աշխատեցաւ և ոչն 'ի սպանիացւոց որ վարժ էր յայս արուեստ 'ի հանքս ամերիկոյ, այլ ոչ եգիտ բայց եթէ հանք մի պղնձոյ . յորում և փոքր ինչ ոսկի, այլ սակաւ յոյժ, և իբր ոչինչ : Եւ ոմն յեւրոպացւոց վինչէնդի կոչեցեալ, որ էր բժիշկ արքային Սիամայ, եգիտ 'ի գլուխ միոյ 'ի լերանց նր բովս պատուական պողպատի 'ի վաղ ժամկաց բացեալ . բայց չէ յայտ թէ յումմէ՞ . եգիտ անդ և ակն վանի, և շառիկ . ռամկ" . զմնեխ, կամ զառնիխ ասացեալ, և սպիտակ մարմարիոն, այլ և ոսկի, բայց ոչ յայտնեաց արքային : Չիք անդ երկաթ . կմ գէթ ոչ գիտեն գործել զերկաթ . վս զի չունին ոչ դանակս երկաթիս, և ոչ բնեաս : 'Ի լերինս նր գտանին և ազգի ազգի ակունք պատուականք . որպս զմրուխտ, յակինթ, անդամանդ, այն է՝ էլմաս . և այլ սոցին նմանք . այլ շահ և ոչ մի ինչ բերեն արքունի գանձուց . քզի բովանդակն է 'ի ձեռս պաշտօնատարաց, որք Ը հաճոյից իւրեանց 'ի կեր առնուն զայսոսիկ :

Արտաքին վաճառականութիւն սորին Ծի է 'ի ձեռս այլոց ազգաց, մանւնդ եւրոպացւոց . յորս հոլանտացիք գլխաւոր էին, որք և կալուածս ունէին անդէն . զոր 'ի 1660 'ի բաց թողին, սակս անիրաւութեանց . զոր արարին նոցա պաշտօնեայք արքային, և այլ Սիամցիք : Այլ փոքր ինչ զկնի, տեսեալ Սիամացւոց զվնաս շահու առևտրուն իւրեանց . զոր 'ի հոլանտացւոց անտի շահէին, դարձեալ կոչեցին զնս . և արքայն Սիամայ շնորհեաց նց բզմ ազատութիւն և առաւելութիւն 'ի վր այլոց ամ ազգաց . որք յետոյ սովորութբ խափանեցան . այս ինչ եթէ մնացեալ նց . զի նաւ նց կարէ Ը մենան գետն գնալ մինչև ցՍիամ քղք . ուր նաւք այլոց ազգաց պարտաւոր են զկայ առնուլ 'ի բերան անդր նորին գետոյ : Բայց և այս 'ի յաճախել անդ և այլոց ազգաց, անօգուտ եղև նց : Այն զի արքայն Սիամայ զամ առևտուր երկրին յինքն գրաւեալ ունի, որ բաց 'ի պարգևաց զոր պահանջէ յարտաքնոց,

յինքն

ինքն միայնակ գնէ զվաճառս նց՟ կարի նուազ գնով. և զվաճառս երկրի իւրոյ ըստ հաճոյից իւրոց վաճառէ նց՟ ։ Վ՟յ և հոլանտացիք այժմ մի միայն նաւ առաքեն անդր, բարձեալ 'ի նմա երիվարս 'ի Ճաւայ կղզւոյն, շաքար, համեմս, և կտաւս. և առնուն անտի բերս ինչ կոչեցեալ առ նս՟ Գալին. զերեսուն և զվեց օխայն իբրև 6 վէնէտիկեան ոսկւոյ. և զպատուական իմն խէժ, զոր 'ի գործ ածեն 'ի ներկս, զ144 լտրամն 5 ոսկւոյ. և ատամունս փղաց, զորոյ զմի օխայն վաճառեն իբրև 4 տաճկական ղրուշի և կիսոյ. այլ և ոսկի սակաւ. զորոյ զմի մարքա, որ է մսխալ 48, գնեն 26 ոսկւոյ ։ Զայս ամ՟ առևտրութիւն առնեն նք՟ 'ի պատճառս Սափան անուանեալ փայտի, զորոյ զերեսուն և զվեց օխայն գնեն իբրև երկու ղուռուշի և կիսոյ. ապա թէ ոչ 'ի վաղուց արդեօք 'ի բաց թողեալ էին զայսպիսի առևտրութիւն. որոց ծախք առաւելուն քան զշահն ։

Երկու լեզուք և գիր են 'ի Շիամ. մին կոչի լեզու շիամացւոց. իսկ միւսն պալիեցւոց. և երկոքին ևս ունին սեփական տառս. առաջինն ունի 37. իսկ երկրորդն 33. որք առհ՟րկ բաղաձայնք են և լի նշանախեցիւք ։ Արտասանութիւն շիամացւոց դժուարին է, գրեթէ ոչինչ ընդհատ 'ի սինեացւոց, որ արտաքնոց թուի ազգ իմն երգոց. մեծագոյն մասն բառից նց՟ միավանկ են ։ Իսկ լեզուն պալիեցւոց՝ սեփական է ուսումնականաց նց՟ և քրմաց, յորմէ առնուն զանուն զոհք նց՟, և ծէսք, և օրէնք, և պաշտօնք. և է առ նս՟ իբր գրաբառ լեզու, և այլն. զոր և բանաստեղծք նց՟ 'ի կիր արկանեն 'ի շարադրութեան ծիծաղական առասպելեաց իւրեանց ։

Նախնի պատմութիւն սորին թգ՟րութն լի է առասպելօք. որք և երկու ընդհանուր դարս դնեն ազգի իւրեանց. մի 545 ամօք յառաջ ք՟ զգալուստ փրկչին մերոյ յ՟Ք. յորում մեռաւ մեծն Սամոնա գոտամ օրէնսդիր շիամացւոց, զոր խելաժէտ քուրմք նց՟ և ռամիկ ժողովրդն ա՟ծացուցին. իսկ զերկրորդ դարն սկսանին 638 ամօք զկնի ծննդեան փրկչին մերոյ. որ գրեթէ հաւասարի հիճրէթին մահումետի. այլ թողեալ զայսպիսի առասպելս նց՟ յիշատակեսցուք զանցս, որք անցին ընդ նա 'ի վերջին ժամս ։

Արդ՝ յամին 1679. այր ոմն յոյն ազգաւ կոչեցեալ կոստանդին ևէրաքի, կմ՟ ֆալքօն՝ այր անհանդարտ և փառամոլ ծնեալ 'ի չէֆալօնիա, յածեալ նախ աստ և անդ յեւրոպիա. և յետոյ յանգղիա, հուսկ յետոյ գնաց անկաւ 'ի շիամ․ ուր այնչափ որսացաւ զսիրտ թ՟գրին, մինչև յետ սուղ ժ՟մկի լինել նր՟ առաջին պաշտօնատար յարքունիս նր՟․ որ և անկոպար իշխանութ՟, մ՟ւնդ թէ բռնակալութ՟ կառավարէր զժողովուրդն․ և զի թ՟գրն միշտ հիւանդագին էր, և անժառանգ․ եդ 'ի մտի յաջորդել զկին նր՟ 'ի թ՟գրութն շիամայ։ Նա առ կատարումն խորհրդոց իւրոց՝ խորհեցաւ իւր թիկունս առնուլ զգաղղիացիս․ ո՟չ յա՟ջագոյն արարին ոմանք 'ի փառաւորաց իշխանացն շիամայ․ որք ունելով իւրեանց օգնական 600 ճապօնացիս ը՟ հաճոյից իւրեանց կառավարէին զթ՟գրութն։ Արդ սա յամին 1684 առաքեաց հրեշտակս 'ի գաղղիա, խնդրել նաւս և զօրս յարքայէն գաղղիացւոց։ Իսկ մեծն լուդովիկոս ժդ՟, որ առ նովին ժամօք թ՟գրէր, ընկալաւ զպատգամ նր՟՝ կամեցեալ նովին ճ՟նպրհաւ տարածել զտ՟րութն իւր և յաւելեալ հնդիկս։

Իբրև հասին գաղղիացիքն 'ի շիամ, կոստանդին ետ նց՟ զքաջայարմար նւ՟հնգիստն պանգօղայ, զոր ամրացուցին նք՟, որչափ ինչ մարթ էր։ Իբրև ծանրացաւ հիւանդութն թ՟գրին և մերձ էր 'ի մեռանիլ, կամեցեալ կոստանդնոյ կալ մնալ յիւրում իշխանութ՟՝ ջանայր հնարէր, զի մօնքի դօնաս որդեգիր արքային յաջորդեսցէ 'ի տեղի նր՟, և բարձցի 'ի կենաց մեծ սպարապետն զօրաց շիամայ․ յորմէ երկնչէր մեծապէս։ Բայց գաղղիացիք, որք չէին լեալ հասու խորհրդոյն կոստանդնոյ, չեղեն նմա ձեռնտու յայնմ՝ որպ՟ պարտն էր։ Այդ եղև սպարապետին խորհուրդն կոստանդնոյ, և առժամայն ետ հատանել զգլուխն մօնքի դօնայ, ը՟ նմին սպան և զկոստանդին․ զոր ապա 'ի չորս մասունս հատեալ, արկ 'ի կերակուր շանց։ Իսկ զօրապետն գաղղիացւոց անագան ուրեմն 'ի վ՟ր հասեալ իրացն, թէպէտ առ ժմկ մի վիշտս ոչ սակաւս հասոյց բնակչաց երկրին․ այլ 'ի վերջոյ ստիպեցաւ ելանել 'ի թ՟գրութ՟ անտի հանդերձ զօրօք իւրովք։ Այսպէս անօրէն սպարապետն կորոյս զամ՟ իշխանս որք էին յարքայական զարմէ․ որոց և անկ էր յաջորդութիւն թ՟գրութ՟․ և ինքն յափշտակեաց զթագաւորութիւն անուանեալ զանձն թ՟գր շիամայ, դանաէրեայ եղ՟ն․ և խնամակալ քամպայեայ, եօհօրայ, բադանայ, և քվետայ։ 'Ի սր՟ սերնդոց թ՟գրեն մինչև ցայժմ 'ի շիամ։

Տարեկան մուտք թ՟գրութեն շիամայ, է 3 միլիոն ոսկի վենետիկեան․ թող զայն, զոր առնու յայլ արտաքին ազգաց, որք յետոյ միացուցան ը՟ թ՟գրութն նր՟։

Իսկ ծախք նորա սակաւ են յոյժ. զի ոչ տայ թոշակս զօրաց. այլ պարտական են ծախուք իւրեանց զինուորել. և ոչ տայ վարձս ծառայից, զի գերի են ամենքն: Իսկ զէնն չիամացւոց գրեթէ ամենայն իրօք նոյն է ընդ զինու պեկուացւոց, որպէս ասացաք ՚ի վերոյ. հաւատան զհոգեփոխութիւն, որ է հնդկաց աղանդ համօրէն հնդկաց. այլև զմիութիւն Աստուծոյ. բայց ընդ նմին պաշտեն և կուռս. և մանաւորապէս զոմն անուանեալ Սամօնակոտոն, որ թարգմանի քահանայ, կամ գալաբօն անտառի. այն է անապատաւոր. զորմէ աւանդեն, թէ էր որդի թագաւորի սէյլան կղզւոյն. այր բարեբար գալաբօնաց. մայրն նորա կոչէր Մաքա Մանիա, այսինքն մեծ մանիա, յղացաւ ասեն զայն զայս Սամօնակոտոն ՚ի հոտոյ ծաղկի միոյ, որ եղև նորոգիչ կրօնի նոցա, և ոչ առաջին հիմնադիր: Այլ ոմանք հաւանական համարին, թէ սա այր անուանի՝ էր մի ոմն ՚ի պրամանաց անտի հնդկաց, որ յոլովս զայլս գնացեալ քարոզեաց անդ զկրօնս պրամանց: Ընդ ժամանակս ժամանակս գնացին անդ և քարոզիչք քրիստոնէական հաւատոյ, այլ ոչինչ պտուղս արարին. զի թէպէտ ՚ի ժամանակս սովու. կամ այլ ինչ կարօտութեան ոմանք տային զանձինս ՚ի մկրտութիւն, որպէս եղև ՚ի ժամանակին՝ յորժամ գաղղիացիք ունէին եպիսկոպոս, և եկեղեցի ՚ի չիամ քաղաք. առ ՚ի ընդունել նպաստս ՚ի քրիստոնէից. բայց իբրև անցանէր սովն, ոչ ևս կամէին լինել քրիստոնեայք:

Այս թագաւորութիւն առհասարակ բաժանի ՚ի Վերին, և ՚ի Ստորին. կամ ՚ի Հիւսիսային, և ՚ի Հարաւային. յորոց իւրաքանչիւրն պարունակէ եօթն եօթն գաւառս, որք ունին զանուն ՚ի մայրաքաղաքաց իւրեանց: Նահանգք վերին, կամ հիւսիսային մասին չիամայ են Բօրսընըլօք. Սանքէլօք. Լօքօնդայ. Քամբէնքբէդ. Քօքօնրէբին. Բիչայ. Բիչիդ: Իսկ ստորին, կամ հարաւային մասին են. Եօհօր. Լիկօր. Դընասէրի. Չանդաբօն. Տէդըլմէնք. Պօրփըլէնք. Գիհայ. Յայս ամենայն նահանգս իշխեն փոխարքայք. յորոց ոմանք ժառանգութեամբ ունին զայն պաշտօն, և ոմանք ընտրութեամբ. առաջնոցն իշխանութիւն կայական է ընդ կենաց. իսկ յետնոցն ձգի ընդ ամս երիս: Այլ մանաւանդ զի սահմանք նահանգացս անծանօթ են մեզ. նմին իրի յառաջիկայդ ունիմք ստորագրել զգլխաւոր քաղաքսն, որք գտանին ընդ հնարաւորս յայսմ թագաւորութեան. նախ զհիւսիսակողմանն, ապա զհարաւայինն, կամ ցամաքակղզւոյն, որ և մալաղա կոչի:

Հիւ

Հիւսիսային կողմն Հիմալայ .

Լէհ, կամ Օդէօքա . 'ի բնակչաց երկրին անուանեալ Մէնէա, ինքեա : Է քղք մեծ և գլխաւոր տեղի Հիմալայ, յընդարձակ դաշտավայրի ը որ անցանէ Մէնան կմ Մէյնան գետն : Շրջապատեալ է իբրև 9 միղոն . ամրացուցեալ պարսպօք և աշտարակօք . առ որով քերեն առաջք ինչ մէնան գետոյն, որք առնեն զնա կատարեալ ցամաքակղզի . զի յմ կողմանց պատեն զնովաւ, բաց յարևելից կուսէ : Պարիսպք նր ոչ պարփակեն և ոչ զվեցերդ մասն շինուածոց . և են անդէն բազմութիւն յոյժ կռատանց իբրև 300 . և առ նոքօք բնակարանք քրմաց . շուրջ զկռատամբք են բազում դամբարանք . յորոց վր կանգնեալ կան բուրգք կմ մահարձանք բարձրաբերձք . որք միանգամայն ը աշտարակայն կռատանց, որոց գլուխք իբր 'ի բղմս ծածկեալ են անագեայ թիթղամբ ոսկեզօծեալ . վայելուչ իմն երևին 'ի հեռուստ : Փողոցք քղքիս երկայն են և լայն և ուղիղ, ոմանք քարայատակք՝ և ոմանք ոչ, ուստի և աղմուտ . ընդհատեալ խրամօք՝ ը որս անցանեն կամրջօք . և յայն սակս ոմանք յՖադրաց նմանեցուցանեն զնա վենետիկ քղքի վս բազմութն կամրջաց նորա :

Տունք քղքիս ը մեծի մասին եղէգնակերտ են 'ի վր ցցից քանի մի ոտնաչափ բարձրութ յերկրէ . սենեակք նց ցրիւ աստ և անդ 'ի մի բակ շրջափակեալ . ուստի բնակիչք միոյ տան ոչ կարեն բնակել ը միով յարկաւ : Նաև ախոռք անասնոց նց 'ի վր ցցից շինեալ են՝ բարձր յերկրէ . առ 'ի պաշտպանել 'ի ջուրցն ողողմանէ : Սակաւ տունք գտանին 'ի նմա քարաշէնք, և այնք ևս օտարականաց են . Թգրն ևս ետ շինել քանի մի քարաշէն տունս վս դեսպանաց արտաքնոց : Իսկ ապարանք Թգրին քարաշէն են, կառուցեալ 'ի հիւսիսային կողմն քղքին, և երրեակ պարսպօք շրջապատեալ . ը մէջ երեցունցն ևս երրեակ հրապարակք : Ներքինն՝ ուր բնակի Թգրն, կոչի Վանկ . ուր կան անտառք պարտէզք և վտակք հոսական ջուրց . իսկ համօրէն տեղին՝ յորում են այս երեքին պարիսպք կոչի Բրասատ . յմ նուագս յորժամ բնակիչք տեղւոյն մտանեն կմ ելանեն 'ի վանկ կոչեցեալ տեղին . ծունր կրկնեն խորին խոնարհութբ . նաև 'ի շրջելն յայն տեղիս 'ի հեռուստ անցանեն առ առաջնով դըրամբ նը : Բայց 'ի սմանէ ունի թգրն 'ի քղք անդր այլ և ապարանս :

Լօլօ, կմ Լուլօ : Քաղաք մեծ և գեղեցիկ 'ի դաշտավայրի առ մերձ գետով 'ի հիւսիսակողմն չինաց. ուր բզմ անգամ բնակի թգրն 'ի մեծաշէն պալատի իւրում :

Մնանչ ֆանչ, կմ Մէնլաֆ : Քաղաք առ մերձ գետով 'ի հիւսիսակողմն Ծին չինաց :

Լանփանդայ : Քաղաք ը̄ երկայն ձգեալ առ մերձ գետով 'ի հարաւակողմն նախագրեալ քաղաքին :

Բոսրանէլաֆ : Է քղք յարևելեան կողմն նորին մերձ գետոյ 'ի հարաւոյ Լանքանդայոյ :

Բրապաֆ : Է տեղի որում թգրին վայելուչ, և զուարճալի. անդ անցուցանէ զժմկ մի տարւոյն :

Պանֆօֆ : Է մի միայն նաւահանգիստ սորին տէրութ. որ թոյլ տուեալ է ամ̃ նաւուց վաճառականաց խարխ արկանել. որ և 55 մղոնաւ հեռի է 'ի չինաց, 'ի բերան մեծամ գետոյն :

Պանաուէրի, կմ Պանաուէրէմ : Քղք ծովեզերեայ յարևմտեան կողմն. յորմէ արևմտեան ծովեզերքը չինաց՝ կոչին Ծովեզերք Պանաուէրեմայ. ոմ և կղզիքն, որք 'ի մերձակայ ծով անդր կոչին Կղզիք Պանաուէրեմայ :

Մէրէն, կմ Մէրէնուն : Քաղաք յարևմտեան կողմն գանաերիմայ : Ընկերութին վաճառականաց գաղղիացւոց ունէր անդ վաճառատեղի. զոր չինեաց առնել զվճռականութ ամ̃ ազգ. ակամց բեկուայ, և հաւայի. այլ և անապի, և փայտի 'ի պէտս չինուածոց :

Պաւէյս : Քաղաք ծովեզերեայ 'ի հիւսիսակողմն միւկի քաղաքի. կառուցեալ 'ի սար ինչ, որ յանուն նը կոչի Սար Պաւէյսայ :

Են անդ այլ և քաղաքք բազումք. յորոց զոմանս ունիս տեսանել յաշխարհացոյցն մեր :

Հարաւային կողմն Չինաց, կամ Ցյամայ

Կղզին Մալաղա :

Մալաղա : Է գլխաւոր մայրաքղք համօրէն ցամաքակղզւոյն. որ 'ի նախնումն մինչև էր անկեալ ը̄ իշխանութ փորդուգալաց՝ էր աթոռ թգրացն մալաղայի. որ անկանի 'ի հարաւակողմն առ մալաղա անուանեալ հուչակաւոր նեղուցաւն, ը̄ որ անցանեն ամ̃ նաւք, որք գնան կամ դառնան 'ի Ճարօնայ, յՃէն չինաց, 'ի դունդինայ, 'ի քօչինչինայ, 'ի քամ-

պա

պայոյ, 'ի չիամայ, 'ի եօհօրայ, և 'ի գերահռչակ կղզւոյն մագասարայ, 'ի ֆօռմօզայ, 'ի փիլիպպեան կղզեաց, 'ի մօլուղեան կղզեաց, 'ի պանտամայէ, 'ի պօրնէօ կղզեաց, 'ի ճէաւայէ, 'ի սումադրայէ, 'ի պանկալայէ, 'ի գօրօմանտէլայ, 'ի մալապարայ, ևն:

Յամ 1744 Թուականին յայս նեղուց ո՛չ այնչափ ինչ յաճախեն նաւք, ոպ՟ և ոչ 'ի նեղուցն պատդալլոյ• վ՟ զի գաղղիացիք գտին զնեղուցն պալեայ• և անգղիացիք զլամպօգայն, որք քաջայարմար ևս են: Վ՟ այլին պտ՟ճառաց մալաղա 'ի նախնումն էր իբր վաճառատեղի համօրէն վաճառաց նախայիշատակել՟ տեղաց• նաև նախ ք՟ զտիրել՟ն նոցա փորդուգալաց: Իսկ այժմ՝ զի է ը՟ տ՟րութ՟ հոլանտացւոց, կորոյս զնախնին պայծառու՟ն իւր: Փորդուգալք առաջնորդել՟ք 'ի մեծէն ալբուկուերկայ 'ի 1512 առին զնա, և գտին անդ անբաւ գանձս, և մեծամեծ համբարս վաճառաց: Շենեցին անդ ամրոց հզօր, և ամրացուցին զլինուք: Ապա 'ի 1641 հոլանտացիք առին 'ի փորդուգալաց, ը՟ որոյ իշխանութ՟ կայ մնայ մինչև ցայսօր:

Եւ է քղ՟ս այս ընդարձակ 'ի լայնատարր դաշտավայրի, որ ձգի 'ի ծովակողմն առ պատուական և յաջողակ ծոցով ծովու• յոր մարթ է միշտ մտանել նաւուց, թէպէտ ոչ մինչև ցամրոցն• զի չէ ջուրն բաւական խոր առ նովաւ: Այս ամրոց է դրեթէ բոլորաձև• կառուցել՟ առ ոտս սրածայր փոքրիկ լերին, պարիսպք նր՟ հիմնեալ կան 'ի վ՟ր ժայռից, որք բարձր են և ամուր: Հոլանտացիք և փորդուգալք ունին անդ եկեղեցի: Յռ՟ջագոյն թիւ բնակչաց քաղաքիս համարիւր ց12000• իսկ այժմ՝ հազիւ 300 տունք գտանին 'ի նմ՟ 'ի միասին առեալ զհոլանտացիս, ըզփորդուգալս, զչինէացիս, և զհնդիկս• յորս յաւէտ երևելի են չինէացիք• յորոց 'ի կրպակսն գտանին ամ՟ ազգ վաճառուց, որք 'ի գործ ածին 'ի նմին տ՟ի: Տունք նր՟ իբր 'ի բղ՟մն քարաշէն են և փողոցքն երկայն և ուղիղ• բայց ոչ քարայատակ, ուստի յանձրևային ժամս տղմուտ են: Բուն մալաղացիք յարուարձանս նորա բնակին 'ի փոքրիկ խրճիթս• որք իբրև գերի են հոլանտացւոց:

Շրջակայ սահման քղ՟քիս յորում տիրեն հոլանտացիք ը՟ երկայնու՟ն է իբրև 140 մղոն• իսկ ը՟ լայնու՟ն ուրեք 38, և ուրեք 48• և է անդ կուսակալ ոմն հոլանտացի հանդերձ խորհրդականօք իւրովք, ոպ՟ և յայլ տեղիս ընկերու՟ն• և թէպէտ յռ՟ջագոյն կախել՟ կային զմանէ և այլ քանի մի տեղիք զոր ունին հո-

լանշանտացիք 'ի Հնդիկս · ուստի և սա անուանէր գլխաւոր տեղի կամ աթոռ · բայց այժմ ունի ընդ իւրև միայն զհետագայ քաղաքդ:

Քէտա: Է գլխաւոր ք̃ղք համանուանն իւր դրուի առ նեղ և խորին գետով · 76 մղոնաւ հեռի 'ի ծովէ · ուր նստի կուսակալ, կամ փոխարքայ անձնիշխան:

Լիկօր, կմ̃ Լինկօր: Է քաղաք յարևմտեան կողմն ցամաքակղզւոյն, որոյ հիւսիսային ծայրն կոչի Կէփ Լիկօրայ:

Եօհօր, կմ̃ Եօր · որ կոչի և Սօհօր: Է գլխաւոր ք̃ղք համանուն նահանգի 'ի հարաւային ծայրի անդ այսր ցամաքակղզւոյ առ ծոցով ինչ ծովու որ 'ի նեղուցն սինկափուրայ:

Պատուսաւէր: Քաղաք՝ ուր նստի կուսակալն եօհօրայ, մերձ 'ի բերան Եօհօր գետոյն: Նախնի պատուսաւէր ք̃ղքն քանդեցաւ 'ի փորդուքալաց · իսկ այժմեանս շինեցաւ ձեռնտուութ̃ հօլանտացւոց, որ չնչին է և աղքատաշէն · զի տունք նր̃ ը̃ մեծի մասին եղեգնեայ են · իսկ մեծամեծայն փայտակերտ:

Փահանկ: Քաղաք անշուք 'ի սոյն եօհօր նահանգի առ համանուն գետով, որ ը̃ ք̃ղքն անցանէ, պատեալ շուրջանակի փայտակերտ պատնշօք, ը̃ նմանութ̃ պատուսաւէր ք̃ղքին · ոճ և շինուածք տանցն, և փողոցքն նման են ամենևին տանց և փողոցաց նր̃, բաժանեալք 'ի միմեանց եղեգնեայ ցանգովք, և գօգօ անուանել̃ ծառովք: Իսկ Փահանկ գետ նր̃ ոչ կարի ինչ հեռի 'ի ք̃ղքէ անտի գործէ կղզի, ուր ը̃ երկու գրուհս մտանէ 'ի ծով̃ · յորոց մին, որ է 'ի հիւսիսակողմն՝ խոր է իբր 4 ձողաչափ · և լայն իբրև 40: Ունի պատշաճական ծոց, կմ̃ նաւահանգիստ նաւուց իբրև 200 քայլիւ հեռի յեզերաց ծովու, ուր գտանին պատշաճական ինքնաբուղխ աղբիւրք · Սակայն զի են 'ի նմա աւազակոյտք և ցամաք տեղիք · յայն սակս վտանգ է նաւուց նաւել մինչև ց̃ք̃ղք անդր: Այս գետ ոռոգանէ զնահանգն ողջոյն, և հասանէ մինչև ցոտս մալէյեան լերանց · գտանին 'ի նմ̃ հատք ձոյլ ոսկւոյ · զորոց պատմէ համիլթօն ոմն եթէ ետես ինքն անդր հատս, կմ̃ բեկորս ոսկւոյ՝ 5, և մինչև 96 ունկի կշռով · որք յաճախագոյնս գտանին 'ի խորագոյն և 'ի շատաջուր տեղիս գետոյն: Առ եզերբք սորին գետոյ տնկել̃ կայ պղպեղ, որ ամի ամի բերէ իբրև 300 պարկս և եթ · այն է չափաւ · զի աւելի ք̃ զայն ոչ տանի երկիրն: Ունի և եղէգն հնդկային ազնիւ, յորոց գործեն գաւազանս ընտիրս · և ձուկն առատ, և որս վայրի : Օդ նր՟ չէ այնչափ առողջարար առ սաստիկ տապոյ և յաճախութե՟ անձրևաց :

Դուրանկանօ, կամ Դուրընկան : Է տեղի լի՟ն զուարճալի յոյժ առ գետով միով մեծ 'ի ծովն . յորում են երբև 1000 տունք, բայց ոչ 'ի միասին առ 'ի ձևացուցանել քաղաք, կամ աւան, հանդերձ փողոցօք և հրապարակօք . այլ ցրիւ : Կէսն բնակչաց նր՟ չինացիք են . որք գտանեն անդէն վաճառս այնչափ, մինչև բաւական լինել նց՟ ամի ամի բեռնաւորել զերիս կամ զչորս նաւս մեծամեծս . որ գնան յածին 'ի չինաս, 'ի քամպոյա, 'ի գուանգքին, և 'ի սամիպաս :

Բուդանի : Քաղաք' որ չինուածովք գրեթէ ոչինչ է՟ հատէ յառաջնոյն, կառուցեալ առ ծոցով ծովու 'ի վր՟ լեռնակին, որ կոչի Սար Բուդանեայ . որ և է 'ի հիւսիսակողմն քղքին, յարևելեան եզերս ցամաքակղզւոյն . ունի մզկիթս տաճկաց, և կռատունս : 'ի նախնումն էր սա քղք՟ բազմավաճառ, բայց վս՟ կարի հեռաւորութե՟ իւրոյ յարքայանիստ քղքէ . և վս՟ չարութե՟ և անօրէնութե՟ բնակչացն տեղի ետուն անտի ամ՟ օտարականք, որք վճռկանութիւս առնէին անդէն . ուստի և քղքն դարձաւ 'ի նսեմութե՟ և յաղքատութե՟ անդր, յորում լեալ էր երբեմն :

Բրայ, կամ Բրահ : Է քաղաք' յափն ցամաքակղզւոյն յարևմտեան կողմն' 'ի վր՟ սրածայր ինչ հողոյ, որ ձևացուցանէ զծոց, յորում է Բէրաֆ կղզին 'ի հիւսիսակողմն սորին քղքի : Բնակիչք նր՟ են ազգ վայրենիք, գազանաբարոյք և անընտելք : Հոլանտացիք' որք ունէին անդ տեղի վաճառոյ, 'ի ժանտութե՟ բնակչացն ստիպեցան թողուլ զայն 'ի բաց, և խոյս տալ անտի :

Յօդ. Ե. Թագաւորութի՟ քամպայայ, կամ քամպօյայ .

Այս թագաւորութե՟ յարևելից ունի իւր սահման զքօչինչին . յարևմտից' զսիամ . 'ի հիւսիսոյ' զլաօս . իսկ 'ի հարաւոյ' զովկիանոս ծովն : Ունի գետ մի մեծ Լուֆէօ կոչեցեալ, որ բղխէ ը՟ մէջ աշխարհին չինաց և տիպետայ, և անցեալ ը՟ թգւրութիւն լաօսայ մտանէ յայս աշխարհ, զոր և ը՟ մէջ բաժանէ, և զնորին անուն առնու . այլ 'ի բնակչաց երկրին կոչի և Մէգան . կամ Մէգօն գանսալ . և

ա

ապա ը̃ երկու առաջս զեղու յովկիանոս անդր . որոց մին գնայ ը̃ արևելս, և պահէ զՔամպայայդ անուն. իսկ երկրորդն անուանի Պանդալ, կմ̃ Բեծրան փարանկէբայ : 'Ի մուտս անդ նր̃ յեզր ծովուն խորութն նր̃ հազիւ հասանէ ցչորս ձողաչափ . բայց 'ի ներքին կողմանս ուրեք ուրեք խորագոյն է . Վ̃ս և մարթ է նաւակաց գնալ մինչև ցմայրաքղ̃քն նր̃, Թէպէտ և ուրեք ուրեք սակս բարձրայատակ սահանացն ը̃ որ զառ'ի վայր հոսին ջուրք, հարկ լինի նց̃ ը̃ ցամաք ձգանապարհորդել: Այս Թգ̃րութ է ը̃ պաշտպանութ̃ արքային քօշինչինայ . բայց ունի և իւր սեփական Թգ̃ր, կմ̃ փոխարքայ . որ յառ̃ջն հարկատու էր արքային չինայ, այլ 'ի 1717 անկաւ ը̃ ի̃րութ̃ արքային քօշինչինայ : Գլխաւոր տեղիք սորին Ցի են :

Քամպօճիա, կամ **Քամպօյա** . 'ի բնակչաց **Կամպէջ** անուանեալ: Է գլխաւոր մայրաքղ̃ք սորին ի̃րութն կառուցեալ առ մէգան, կամ քամպայա գետով . ուր նստի Թգ̃րն, կմ̃ փոխարքայն : 'Ի նախնումն էր 'ի նմ̃ արքունի պալատ ինչ, որ էր գլխաւոր զարդ քղ̃քին . Թէպէտ փայտակերտ, այլ առհս̃րակ ոսկեզօծ պէս պէս գեղեցիկ զարդուք զարդարեալ: Բնակիչք նր̃ ը̄ առաւել մասին են բնիկ ազգ երկրին . և ը̄ մասին օտարականք, ո̃ր ճապօնացիք, փորդուքալք, քօշինչինացիք, և մալայեցիք : Յառ̃ջագոյն բզ̃մ էին անդ եւրոպացիք . այլ այժմ ո՛չ ևս նոյնչափ . և որք ենն՝ ը̄ մեծի մասին փորդուքալք են, և Թօշակաւորք փոխարքային :

Թէնքօանա . **Լանքօր** . և **Գարօլ** : Են նւ̃հնգիստ յարևմտեան ծովեզերեայս սորին ի̃րութ̃ :

Քոռէանկ . և **Սօաէ** : Են քղ̃քք, և նւ̃հնգիստ, ուստի ելանէ փղոսկր, և խէժ, անուանեալ խէժ քամպայայ : Յայս երկու նւ̃հնգիստս ոչ ոք կարէ վճռ̃կանութե առնել, առանց հրամանաց արքային քօշինչինայ . յորմէ և փոխարքայն քամպայայ այնչափ երկնչի . զի 'ի 1720 ոչ իշխեաց առանց հաւանութե̃ նր̃ տուրևառութիս առնել ը̃ ումեմն եւրոպացւոյ՝ համբլթօն կոչեցեալ :

Բօնջամա : Է նւ̃հնգիստ, և քղ̃ք . որ յառ̃ջագոյն երևելի էր . այլ յամին 1717 առին զնա չինացիք, և հրկեզ արարին : Յառաջքան զայն այս քղ̃ք էր 'ի համօրէն ի̃րութս յայսմիկ, ուր յաւէտ ծաղկեալ և բարգաւաճ էր վաճառականութի̃ն ը̃ օտարականաց :

Յօդ. Է. Թագաւորութ՟ի Լաօսայ :

Յայսր աշխարհէ սակաւ ծանօթութ՟իս ունիմք ք՟ զայլոց աշխարհոց Հնդկաց . ք՟զի ոչ յաճախեն անդ վաճառականք օտար ազգաց . յայն սակս համառօտիւ ունիմք անցանել զնովաւ : Արդ՝ այս աշխարհ ունի իւր սահման յարեւմտից՝ զչիամ . յարեւելից՝ զՏունգին . 'ի հարաւոյ՝ զՔամպայա . իսկ 'ի հիւսիսոյ՝ զաշխարհն չինաց : Բերք ն՟ց են ազգի ազգի խէժք, կնդրուկ՝ այն է ասըլպէնտ, վէրնիճ, բէշկ մըշկոյ ազնիւ, ոսկի սակաւ, և տեսակք ինչ պատուական ականց . և առաւել ք՟ զա՟մ՝ կարմիր յակինթ, և մարգարիտ՝ զոր քամպայացիք Մուք անուանեն: Բայց զարմանք են, թէ զիա՟րդ մարթ է սմա, այնչափ հեռի գոլով 'ի ծովէ, ունել մարգարիտ, և առաքել 'ի ծովեզերեայ կողմանս :

Բնակիչք Լաօսայ բազմօք նմանին չինաց, բայց առ փոքր մի առաւել խարտեաշ են, և յամօք մարմնով, և գեղեցիկ ք՟ զչինացիս, և զքամպայացիս, այլ նման են ն՟ց գծագրութ՟ դիմաց, լեզուաւ և դենիւ : Բլթակ ականջաց նոցա երկայն են, ո՟պ և բէկուացւոցն և այլոց ծովեզերեայ բնակչաց, զոր կանայք զարդարեն ոսկւով մինչև են ամուսնացեալ: Արքն 'ի վ՟ր սրունից մինչև ցծունկս կտտեն ասղամբ պէսպէս ծաղիկս, կամ այլ ինչ 'ի նշան բարեպաշտութ՟, և առ յարգի լինելոյ առաջի այլոց : Ունին զգեն չէամացւոց և բէկուացւոց, և 'ի լեզու ն՟ց խօսին . բայց միայն զի ոչ կարեն արտասանել զերկու տառս՝ Ռ և Լ: Զբանս դենի և հաւատոյ իւրեանց գրեն 'ի վ՟ր տերեւոց ծառոց . իսկ զայլ բանս աշխարհականս 'ի վերայ ստուար թղթոց կաւեղէն գրչօք :

Գլխաւոր քաղաք ն՟ց կոչի Վինգեան . որ է աթոռ թագաւորին: Զայս քաղաք ոմանք յաշխարհագրաց Լանճեան, կամ Լանդչանկ անուանեն :

Ունի միւսեւս ք՟ղք անուանեալ Չիամայ, զոր երկ՟մայրաքաղաք ասեն տէրութեան տանն :

Յօդ Է. Թագաւորութիւն քօչինչինայ:

Այս աշխարհ յարևելից ունի իւր սահման զծոց ծովուն դունգինայ, յարևմտից՝ զերկարաձիգ միագօտի լերինս, որք անջրպետեն զնա 'ի Թագաւորութենէ քամպոյայ և լաօսայ. 'ի հիւսիսոյ՝ զդունգին. իսկ 'ի հարաւոյ՝ զծովն հնդկաց. որ և ձգի առ ափն ծովու ընդ երկայն իբրև մղոնս 750. իսկ ընդ լայնութիւն 60 մղոնաւ ևեթ. ուստի և է երկարաձիգ լեզու: Յետ ԺԷ դարուն էր սա նահանգ դունգինայ. բայց այժմ է ինքնագլուխ Թագաւորութիւն. յոր զայս օրինակ ամբարձաւ: Զի իշխան մի յարքայական զարմէ առաքեալ 'ի հարաւային նահանգս դունգինայ, կացուցաւ անդ կուսակալ նոցա, ընդ սովին պայմանաւ, զի պարտական լիցի տալ զհամար կառավարութեան իւրոյ սպարապետին զօրաց արքային դունգինայ: Իսկ նա յայտնապէս ապստամբեալ, հիմնեաց 'ի քօչինչին զնոր թագաւորութիւն, ուր յայնմ օրէ մինչև ցայժմ տիրեն միմեանց զկնի յաջորդք նորա, 'ի բաց բաժանեալ յարքայէն դունգինայ:

Դենն սորին տէրութեան նոյն է ընդ չինաց, քանզի յառաջագոյն էր մի 'ի նահանգաց նոցա: Բազում մեծաշէն կռատունս ունի. ուր և քրիստոնեայք ունին եկեղեցիս գեղեցիկս: Բնակիչք նորա ըստ առաւելն մասին տգեղ են կազմութեամբ մարմնոյ, և գծագրութեամբ դիմաց. առ որս գեղեցկութիւն համարեալ է ունել սեաւ ատամունս, և երկայն եղունգունս: Ձայն նոցա քաղցր է. և ինքեանք կարի օգտակարք ընկերութեան մարդկան վասն անխոնջ աշխատասիրութեան իւրեանց. զի գործեն զամենայն գործ ծանրակիր, մշակեն զերկիր. որսան զձուկն. առնեն վաճառականութիւն. մտանեն 'ի պատերազմունս քաջութեամբ: Իսկ ըստ բարուց՝ քաղցրաբարոյք են և անկեղծք, մարդասէրք առ օտարականս, մանաւանդ քաղաքացիք, և մեծամեծք նոցա՝ որք ծանրաբարոյք են առաջի ռամկին, սիրեն զիրաւունս և զարդարութիւն, զոր և անյապաղ և առանց ինչ ծախուց վճարեն: Թէպէտ ոմանք 'ի մատենագրաց զայսոսիկ գեղեցիկ ձիրս քօչինչինացւոց յերկբայս արկանեն, բայց այլք հաստատեն: Վաճառականութիւն սոցա ընդ արտաքնոց չէ այնչափ ինչ երևելի. գլխաւոր վաճառք նոցա են հալուէ, և այլ ծառակ մի անուշահոտ փայտի , կոչեցեալ Պետկէլ . մետաքս , բամբակ , մարմարիոն , փայտն կոչեցեալ Սաւան . շաքար , և կասիայ , այն է՝ Խըյարչէնպէ : Երևելի վՃՌկանք սորին տրուե են չինացիք , որք գնան և 'ի Ճեապոն , 'ի մալաքա , և 'ի Ճաւա . վՌ զի բնիկ քօչինչինացիք չեն այնչափ ինչ վարժք 'ի նաւարկութիւն : 'ի սմին Ծի գտանին և հանք մարմարիոնի , և բովք ոսկւոյ , և երկաթոյ . լինի անդ և որիզ , և եղէգն շաքարաբեր . և ազգ մի պատուական փայտի՝ որ կոչի փայտ արծուոյ . և Գալամպագ անուանեալ փայտն ազնիւ , զոր 'ի գործ ածեն 'ի պէտս արքունեացն որ աստ , և յայլ Ծս : Ունի անտառս Թթենեաց՝ յորս ճճամք ինքնին գործեն զմետաքս առանց ինչ մարդկային խնամոց . ուստի բզմ է յոյժ 'ի սմին Ծի այսպիսի վայրենի մետաքս , զոր ժողովել վաճառեն չինացք . Բուսանի անդ և Թէյ՝ բայց ստորին , և պղպեղ , ևն :

Այս տրուն 'ի ժբ նահանգս բաժանի . յորոց երեքն են 'ի հիւսիսակողմն . ա Տէուքէ . Գուէամպինհ . Տէհլաւ . Եօթն 'ի մէջն . որք են . Հուէ . Չամ . Գուէանկնէա . Գուին-նոն . Փուէն . Մարսա . Նադրանկ : Եւ երկու 'ի հարաւակողմն . Ջէամբա . և Տօնայէ :

Նահանգն Հուէ որ առնու զանուն 'ի գլխաւոր մայրաքաղաքէ համօրէն տրուե , ուր է աթոռ Թգւրին , որ և յայն սակս կոչի և Նհնգ արքունեաց . է փարթամ քմ երկք ժա զայլ նհնգս . օդ նր առողջ . ջուրքն բարի յոյժ՝ որ ուր ուրեմն գտանի յայլ նահանգս . և լի այլ քմ բարեօք :

Նահանգն Չամ , սահմանակից է հուէ նահանգին . մեծ է և փարթամ , 'ի լերինս իւր ունի բովս ոսկւոյ . այլ և փայտ արծուոյ , և գալամպագ :

Իսկ միջին նահանգք փոքր են . յորս երևելի է նհնգն Նադրանկ , ոչ միայն վՌ լաւութե օդոյ և առատութե արգասեաց , այլ և վՌ յաճախութե բունոց ինչ թռչնոց , որք մեծութբ չեն ինչ աւելի քն զծիծառունս , 'ի վՌ ժայռից առկախեալ : Եւ ասեն թէ բաղադրութե բունոցն այնոցիկ է 'ի փրփրոյ ջուրց ծովու , և 'ի հիւթոց ինչ որ ծորի 'ի կրծոց այնց թռչնոց . յորս հարեալ շառաւիղաց արեգական պնդացուցանեն զնս և սպիտակացուցանեն , և թափանցիկս գործեն : Բայց հատեալ 'ի ժայռից անտի , և արկեալ 'ի ջուր ջերմ , սևանան , և ոմանք մանր մանր հատեալ , լինին համեմիչ ըմպելեաց . թէպէտ համ նց չէ ամմն ախորժական , այլ կարի զօրացուցիչ :

Ջէամբա նահանգն , որ է 'ի հարաւակողմն՝ անտառաւոյց է, և ըստ առաւել մասին անապատ անմարդի, ուր գտանի վագր, և փիղ: Օդ նորա յոռի է իբրև ամիսս հինգ կամ վեց, ջուրք նորա և կերակրեղէնք, բաց 'ի ձկանց՝ վնասակարք. երկիրն աւազուտ և անբեր: Այս նահանգ թէպէտ ըստ բնական արգասեաց անբեր, այլ առ համեմատութեան այլոց, արգաւանդ և բեղմնաւոր գտաւ. պտղով աւետարանին քանի. վասն զի բազում քարոզիչք մեծամեծ դարձս գործեցին անդանօր, և գործեն մինչև ցայժմ:

Նահանգն անուանեալ Տօֆէայի է մի յերևելի նահանգաց սորին տէրութեան, որ ձգի իբրև երկայն յափն ծովու ըստ նմանութեան Ջէնովայի: Ունի զբազում ազգս պտղոց, և այլոց արգասեաց, այլև վաճառ բազում ելանէ 'ի նմանէ: 'Ի սմին Թագաւորութեան չիք երևելի ինչ քաղաք, կամ նաւահանգիստ արժանի մասնաւոր իմն յիշատակի. բաց յերկուց հետագայ քաղաքացդ, թէ արժան իցէ քաղաքս անուանել զնոսա:

Հուէ, կամ Փէնչէ: Է արքայանիստ տեղի, և գլուխ համօրէն այսր տէրութեան, անձև և անշուք, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հաւաքումն աղքատաշէն խրճիթոց 'ի խումբս խումբս բաժանեալ, որք մի միայն գեօղս կացուցանեն 'ի գեղեցիկ դաշտավայրի, բաժանեալ յարևմուտս և յարևելս 'ի ձեռն գետոյ, յորոյ եզերս շինեալ կան բազում փոքրիկ տունք. ունի քանի մի հրապարակս վայելուչս, և կրպակս յոլովս և բազմավաճառս: Ապարանք Թագաւորին փայտակերտ են, և միայարկ. շինեալ 'ի վերայ սեանց, որք են յոյնխազ փայտէ. այն է՝ ապանոզ. և է 'ի հիւսիսակողմն գետոյն 'ի կղզի ինչ երկայն իբրև 3 մղոն. յորում բնակին նաև մանտարինք, կամ ազնուական իշխանք արքունեաց. որ և յայն սակս կոչի Թագաւորական կղզի:

Ֆայֆօ, կամ Գայխօ: Է երկրորդ գլխաւոր տեղի սորին տէրութեան. որ երկու մղոնաչափ ձգի իբրև երկայն առ գետով միով. ունի բազում փողոցս, որք իբրև մէջ հատանեն զմիմեանս. ուստի և 'ի հեռուստ վայելուչ իմն երևի: Կարի յաճախեն աստ չինացիք 'ի պատճառս նաւահանգստի իւրոյ. ուր և առնեն բազում առևտուրս բրնձոյ, շաքարի, մետաքսի, ոպնխազ փայտի, հալուէի և ոսկւոյ. տունք նորա քարաշէն են. ունին անդ և տաճար մի կռոց:

Յայսմ Թագաւորութեան, որպէս և 'ի Չիամ, և 'ի Քամպայա գտանին ժողովուրդք ինչ վայրենիք. որք յանտառս և 'ի լերինս բնակին. և չունին ոչ օրէնս, և ոչ կառավարութիւն, այլ ըստ անասնոց՝ ըստ բերման բնութեան վարին:

Յօդ.

Յօդ Ը . Թագաւորութիւն Դունգինայ .

Այս Թագաւորութիւն 'ի հիւսիսոյ ունի իւր սահմանակից զՉին չինաց . 'ի հարաւոյ զքօչինչին . յարեւմտից զԼաօս . իսկ յարեւելից՝ զծոց ծովու իւր համանուն, ը̅ մէջ Դունգինայ և Քօչինչինայ ածեալ կայ պարիսպ երկայնաձիգ սկսեալ 'ի լերանց որք սահմանակից են Լաօսայ, մինչև ցծովն, անջրպետ ը̅ մէջ երկոցունց Ազգաց կառուցեալ : Բ̅մ գետս ունի . յորս գլխաւորն է Քոլէ անուն գետն, որ ելանէ . յՉէն չինաց, 'ի Խնան նահանգէն, և անցեալ ընդ մէջ սորին ե̅րուէ̅, մտանէ 'ի ծոցն Դունգինայ :

Օդ նր̅ մաքուր է և առողջ, մանաւանդ 'ի ջերմ և 'ի ցամաք ժմկս : Երկու եղանակք տարւոյ զանազանին 'ի սմին Ե̅ի, ոպ̅ և յայլ Ե̅ս ինչ ը̅ արևադարձիւք՝ մին ցամաք, և միւսն անձրևային : Առաջինն սկսանի յամսեանն մայիսի, և տևէ մինչև ցօգոստոս . և յայնժամ անհնարինս սաստկանայ տապն . յոր և հողմունք ոչ այնչափ ինչ հնչեն : Իսկ երկրորդն 'ի սկզբնէ սեպտեմբերի մինչև ցմայիս . և յայնժամ յաճախեն մէգք, և անձրևք :

Երկիր նր̅ արգաւանդ է յոյժ . բերէ ազգս ազգս ամրդաւեաց, մանաւանդ որիզ, և պտուղս պատուականս . առատութիւն է անդ և լեմոնի կիտրոնի և այլ այսպիսի պտղոց : Ունի և բազմատեսակ անասունս վայրենիս և ընտանիս . զի յանտառս նր̅ լինեն վագր, եղջերու և կապիկ . ոպ̅ և 'ի դաշտս եզն և կով և խոզ . այլ խաշն և էշ և առիւծ չիք անդ : Ունի և ձուկն առատ 'ի գետոյ, և 'ի ծովու : 'Ի կողմանս ծովեզերեայց քօչինչինայ գտանի կրիայ բ̅մ յոյժ, որոյ միսն համեղ է և պատուական :

Բնակիչք նր̅ իբր 'ի բ̅մս բարեձեւ են մարմնով, Թխադոյն, և վարսք նց̅ ը̅ մեծի մասին սեաւ երկայն և Թաւ . ներկեն զատամունս 'ի սեաւ . զի տգեղութիւն համարին զսպիտակութիւն ատամանց . աշխատասէր են և ճարտարամիտ և ուսումնասէր . համբոյրք և մարդասէրք առ օտարականս . մանաւանդ առ վաճառականս : Մեծամեծք ամբարտաւան են, և մեծամիտ . զօրականքն յանդգունք . իսկ խառնիճաղանճ ռամիկն կարի յօժարեալ 'ի գողութիւն, Թէպ̅ և խստիւ պատժին :

Բազմակնութիւն օրինաւոր է առ նոսա · և դեն նոցա նման է դենի չինաց : Անչափ բազմամարդ է աշխարհս այս , զի բնակիչք նորա թէպէտ ժրաջան են 'ի գործ , սակայն անբաւ բազմութիւն աղքատաց գտանի 'ի նմա , որք առ 'ի չգոյէ դարմանոյ կենաց , բազում անգամ բռնադատին վաճառել զորդիս իւրեանց , երբեմն և զանձինս ևս : Կառավարութիւն սորին թագաւորութեան անկարգ է և չփոթ · զի երկու իշխանք են 'ի նմա , որք ունին զանուն թագաւորի : Մին կոչի Պօվա , որ թէպէտ է բնիկ և հարազատ թագաւոր , այլ բաց յանուանէ և 'ի կնքոյ , չունի այլ ինչ իշխանութիւն թագաւորական · Իսկ միւսն կոչի Քօվա , որ 'ի սկզբանն ոչ այլ ինչ էր , եթէ ոչ համ աշխարհական արքունի սպասաւոր · իսկ այժմէ ինքնիշխան տէր ամենայն գանձուց և ճոխութեանց համօրէն թագաւորութեանն : Պօվա բնիկ թագաւորն փակեալ կայ յապարանս իւր իբրև 'ի բանտի · որում լոկ առ երևոյթս ամ ամի խոստանայ ժողովուրդն և քօվայն զհաւատարմութիւն · իսկ ըստ այլում մասին՝ գլխովին առ ոչինչ է համարել : Սակաւ ծառայք են նորա · զոր տայ նմա քօվայն ըստ հաճոյից իւրոց · չունի թիկնապահս · և ոչ իսկ կարող է տալ պաշտօնս ինչ , ոչ քաղաքականս , և ոչ զինուորականս · զի այն ամենայն կախեալ կայ զհաճոյից քօվային : Յաջորդութիւն նորա ժառանգութեամբ անցանէ որդւոց յորդիս · իսկ քօվայինն ընտրութեամբ է , զոր ընտրէ նոյն քօվայն նախ քան զմեռանիլ իւր : Սա բաց 'ի լինելոյ բացարձակ տէր գանձուց արքունեաց · յիւր ձեռս ունի զամենայն զօրութիւն թագաւորութեան · ունի իւր թիկնապահ 300 երիվարս , և 150 փիղս հանդերձ բազմութեամբ հետևակ զօրաց , որք կարգեալ կան 'ի պաշտպանութիւն արքայանիստ քաղաքին , և այլ ևս 70 · մինչև 80 հազարս սփռեալս յայլ և յայլ կողմանս թագաւորութեան :

Դունդինացիք չունին մասնաւոր դրամս , այլ 'ի կիր առնուն զդրամս եւրոպացւոց · այլ և կտորտս արծաթոյ աննշանս , և անտիպս , զոր կշռով տան , յայն սակս միշտ կրեն յանձինս զկշիռ : Բայց գտանի առ նոսա պղնձի ինչ դրամ · որոց 1000 առնէ իբրև ղուռուշ և կէս կոստանդնուպօլսոյ :

Այս աշխարհ կարի անպատսպար է 'ի թշնամեաց , զի չունի ամրոցս · յայն սակս մեծ մասն զօրաց նորա կարգեալ կան 'ի պահպանութեան առ սահմանօքն քօչինչինայ · վասն զի երկու այս թագաւորութիւնք անհաշտ թշնամութեամբ են ընդ միմեանս · ուստի և բազում անգամ 'ի պահապանս երկոցունց կողմանց դիպին առանձին մրցմունք · բայց ոչ երբեք ճակատին միմեանց օրինաւոր պատերազմաւ ։ Նոյնպէս և ծովային զօրութիւն արքային Տունգինոյ չէ ինչ մեծ ։ Քանզի 60 և եթ ցուկանաւս, այն է՝ չեքտիրիս ունի մանուանս, որք ըստ լայնութեան են 10 և 12 ոտնաչափ, իսկ ըստ երկայնութեան 60 ։ և 70 ։ որք հազիւ երկու ոտնաչափ և կէս մխին 'ի ջուր ։ յորս են զօրք սկսեալ 'ի 16 թուոյ, մինչև 340 ։ զի առաւել ոչ կարեն տանիլ ։ Եւ ունին երկու առագաստս փսխաթիս, մի 'ի խելս, և միւս ևս յառաջս ։ և թէպէտ անպիտան են 'ի ծովու, սակայն 'ի լայն և 'ի խորին գետս բազում զօրեն ։

Պատմութիւն սորին թագաւորութեան կարի անստոյգ է ։ այլ թուի թէ զձև և զկարգ թագաւորութեան սկսեալ առնուլ առ ժամկօք Ենկդ ինքնակալին Չինաց զոր Տունգինացիք Թամնով անուանեն ։ 'ի սոյն անուն անուանեն և զառաջին գտիչ գործեաց երկրագործութեան, որ բազում դարոք յառաջէ քան զթուականն Քրիստոսի ։ Առ նովին ժամկօք ժողովուրդքն բնակեալք յայսմ Տի ոչ օրէնս ինչ ունէին, և ոչ քաղաքականութիւն ։ մինչև թոռն, կամ որդի Թամնով ինքնակալին, ընդ իւրև նուաճեալ զայս Տ, հիմնեաց 'ի նմա զնոր ինքնակալութիւն, և եմոյծ զքաղաքականութիւն, որ եկաց մնաց ընդ դարս բազումս ։ Այս ինքնակալն Չինաց կամեցեալ յինքն նուաճել զՏունգին, առաքեաց անդ Ժ սպարապետս, որք առին զնա ։ և ինքեանք տիրեցին նմա, բաժանեալ 'ի Ժ նահանգս ։ որոց եղեն ինքեանք ինքնագլուխ իշխանք ։ Ընդ այն ժամս յարեաւ հովիւ մի Տունգինացի, որ սակաւ առ սակաւ ժողովեալ զբազմութիւն սրիկայից 'ի համազգեաց իւրոց, մի առ մի տարադրեաց յՏէ անուի զնախասացեալ Ժ բռնակալս ։ և ինքն տիրեաց Տին ։ որոյ տէրութիւն եկաց մնաց ամս 12 և եթ ։ վասն զի ինքնակալն Չինաց վերստին տիրեաց Տին, և ընդ բազում ժամս կալաւ զնա ընդ իւրև ։ Եւ յետ այնորիկ պատմութիւնք Տունգինոյ՝ ոչ այլ ինչ ցուցանեն, եթէ ոչ խռովութիւնս, գործս անստոյգս, քանդմունս, անդադար ապստամբութիւնս ։ յորս ինքնակալքն Տունգինոյ է զի 'ի թշնամեաց, և է զի 'ի հպատակաց իւրեանց ընկեցան յաթոռոյ ։

Այս Տ յաջորդոյն ըստ Տին Չինաց բաժանէր 'ի ժղ նահանգս, որք անդադար փոփոխէին ըստ յաւնելոյ զօրաւոր իշխանաց, որք զբազում նահանգս ընդ իւրեամբք նուաճեալ 'ի մի յօդէին, այլ քանզի և այժմ հինգ իշխանք տիրեն 'ի նմա, յորոց ոմանք ազատ են ։ և ոմանք հարկատու ։ յայն սակս մարթ է բաժանել զայն 'ի հինգ նահանգս, ըստ հնգեցունց իշխանացն ։ Եւ ե-

Թէ յաւելցին 'ի սոսա այլ և ս երկու իշխանք լեռնաբնակ վայրենի ժողովրդոց. յորոց մին կոչի Թգր ջրոյ, իսկ միւսն Թգր հրոյ. լինին եօթն: Առաջինն է Թագաւորն գունգինոյ: Երկր. քօչինչինայ, որ տիրապէս ոչ կոչի Թգր. այլ Կնագա. ֆ՝ տուն, կմ ցեղ ազնուական. այլ այժմ բաժանեալ է նոյնգս այս 'ի գունգինոյ: Երրորդն է Թգրն քիւկանկայ, կմ չիւքանկայ, որ տիրէ 'ի քիւանկ նոյնգն չինաց: Չորրորդն է փոքրիկ Թգրութն պաօսայ: Հինգերորդն է փոքուն լաօսայ. (որ փոքր ասի, առ 'ի զանազանութե 'ի մեծէն, որ արտաքոյ է 'ի գունգինոյ:) Իսկ վեցերորդն և եօթներորդն են 'ի լեռնային կողմանս, ուր բնակին ժողովուրդք վայրենիք, յորոց կէսս մի հնազանդին փոքրիկ Թգրացն ջրոյ, և հրոյ:

Այլ գունգինացիք այլազգ բաժանեն զտրութ իւրեանց, ֆ՝ յերիս մասունս միայն: Իսկ զգունգին առանձնակի 'ի վեց մասունս, ֆ յԱրևելեան. յԱրևմտեան, 'ի Հիւսիսային, և 'ի Հարաւային, 'ի Կուսայօն, և 'ի Թինհուա. զոր ոմանք յայժմեան Ծագրաց այլազգ կոչեն, զարևելեանն Գէտօն, զարևմտեանն Գէհօյ. զհիւսիսայինն Գէպաք զհարաւայինն Գէնամ. իսկ զերկու յետինս Գէհօյա և Թինան: Սակայն ջոկքս գտանին 'ի սմին Ծի. այլ աւանք և գիւղք անհամարք. որք ըստ առաւել մասին են յընդարձակ դաշտավայրի. զի մեծագոյն մասն Ծինն է դիւր դաշտավայր. Թէպէտ են 'ի նմա և բլուրք արգասաւորք, և լերինք միւնդ. առ սահմանօք Ծինն: Գլխաւոր տեղիք նր են հետևեալքդ:

Գաչաօ, կմ Քէչօ: Է գլխաւոր ջոկք համօրէն Թագաւորութե, յորում է և բնակութի Թգրին. յընդարձակ դաշտավայրի, ոչ ինչ կարի հեռի 'ի Տօնքեայ գետոյ. չունի պարիսպ և ոչ ամրոց: Իբրև 20 հազար տունք են 'ի նմա. գրեթէ առհրակ փայտակերտ, կմ եղէգնաշէն. և ամ տուն մեծ իւր ունի տեսակ մի փուան քարաշէն առ 'ի պատսպարել 'ի նմա զկարասիս տան 'ի լինել հրկիզութե, որ կարի յաճախէ անդանօր. այլ և ջրհոր մի. և անօթ ինչ կապեալ 'ի ձող երկայն, 'ի շիջուցանել նովաւ զհրդեհն: Գլխաւոր փողոցք նր լայն են, այլ ոչ ըստ կարգի բաշխեալ, ուստի և տղմալից յանձրևային ժամս: Օդ նր բարի է: Երեք ևեթ ապարանք գտանին 'ի նմա. որոց գլխաւորն է այն՝ յորում բնակի պօվայն, կմ Թգրն, որ ընդարձակ է յոյժ: Բարձրութ շրջապատ պարսպաց նր է 15 ոտնաչափ. գրեթէ նոյնչափ և Թանձրութն չինեալ յաղիւսոյ : Բազում դրունս ունի , որոց գլխաւորն պահեալ է Թգ̃րին . և են 'ի նմ̃ պարտէզք , վտակք ջուրց , մասնաւոր տեղիք անասնոց , և այլ սոցին նման զուարճութե̃ վայրք : Իսկ բուն ապարանք Թգ̃րին , և պաշտօնէից նր̃ փայտակերտ են : Եւ պալատն յորում բնակի քօվայ իշխանն , ունի յանդիման իւր ընդարձակ դաշտ քառակուսի , ուր երբեմն զինուորք առնեն կրթութի̃ պտ̃րզմի : Եւ հանդէպ սր̃ է միւս եւս ապարանք , որ և է զինարան Թգ̃րութե̃ն . յորում են 560 երկաթի մեծ հրազէնք , այն է Թօփ . և քանի մի ումբարտակ , ջ̃ս հաւանթօփու :

Մերձ յայս տեղի է տխուսմի , յորում գրեթէ միշտ պահին 200 փիղք , կմ̃ 'ի պէտս պտ̃րզմի , և կամ 'ի բառնալ զկարասիս զօրավարաց զօրուն , և առ նովաւ միւս եւս ընդարձակ ախոռ , ուր են իբրև 300 էրիվարք . 'Ի սմին քղքի ունին անգղիացիք բնակարան ընդարձակ 'ի հիւսիսային կողմն որ Թէպէտ ցած է , բայց լաւ եւս է և կարգաւորեղ̃ գրեթէ ք̃ զամ չինուածս քղքին : Մերձ անգղիացւոց ունին և հոլանտացիք սեփական տեղի , այլ փոքր քան զանգղիացւոցն :

Հէան : Է գլխաւոր մայրաքղք հարաւային մասին այսր Ծի իբրև 60 մղոնաւ հեռի 'ի ճագաօվայ , մերձ 'ի տեղին , ուր Քալէ անուն գետն բաժանի յերկուս առաջս . և է սա քղք երևելի , և իշխանանիստ , որք կոչին մանտարէնք , այլ անպարիսպ , ոպ̃ և այլ քղքք սորին Ծի . 2000 տունս ունի : Գաղղիացիք ունին 'ի նմ̃ սեփական տեղի , այլև եպ̃սարան :

Յօդ Թ . Կղզիք առ ցամաք կղզեաւ որ յայնկոյս գանգէսի :

Առ սովին ցամաք կղզեաւ յարևմտից և յարևելից գտանին բազմութի̃ կղզեաց մեծաց և մանունց , յորոց զոմանս յայսմ վայրի յիշատակեսցուք . և նախ զարևմտեանս :

Կղզիք չղոսյ : Են մանր կղզիք իբրև 19 մղոնաւ հեռի 'ի ցամաքէն առ արագանաւ : Ընդ մէջ նեղուցին որ անջրպետէ զկղզիս զայսոսիկ 'ի ցամաքէն , է ժայռ մի յորմէ բղխէ ջուր քաղցր :

Նէկրայիս : Է կղզի յորմէ իբրև 38 մղոնաւ հեռի գոյ զարհուրելի ժայռ ինչ 'ի ծովուն, որ ոչ երևի, բայց միայն 'ի նուազել ջրոյն: Ասս կղզի, որ և կոչի Սուրհէլէնայեայ, նաև կղզի անդամանդի վ̃ն ձևոյն իւրոյ, փոքր է և անբեր: Եւ է մօտ 'ի ցամաքն բեկուայ Ծին: Ընդ մէջ կղզեացս այսոցիկ բազում ժայռք գտանին 'ի ծովուն. յորս յամին 1704 գաղղիացիք կորուսին նաւ մի մեծ, որ տանէր մեծամեծ ամբարձիգս եօթանասուն:

Գօգօյեան կղզիք: Յայս անուն կոչին սակս յաճախելոց 'ի նմ̃ա գօգօ անուանեալ ծառոց. որք հեռի են 'ի Նէկրայիս սարէն 60 մղոնաւ 'ի հրաւակողմն հանդէպ բեկուայ Ծին:

Բէրբէրեան կղզիք: Իբրև 108 մղոնաւ հեռի 'ի սարէ անտի Նէկրայիսայ մօտ 'ի բեկու. որք 'ի հեռուստ անտառաւալից երևին. և շուրջ զնոքօք են բազում մեծամեծ ժայռք 'ի ծովու. յայն սակս կարի դժուարին է մատչել 'ի նմ̃ա նաւուց:

Գօնօփա: Կղզի իբրև 40 մղոնաւ հեռի 'ի ծովեզերէն բեկուայ:

Գտանին և այլ ևս բազում մանր կղզիք 'ի կողմանս յայսոսիկ հանդէպ ծովեզերացն բեկուայ:

Մեծ հանդաման. Փոքր հանդաման զորս կոչեն ևս Անդաման: Են երկու կղզիք հանդէպ շիամայ: Առաջինն է երկայն յոյժ, բայց նեղ. հինգ աստիճանօք հեռի 'ի ծովեզերաց շիամայ: Իսկ երկրորդն է խումբ մի կղզեաց պատե̃լ շուրջ անհամար ժայռիւք 'ի հր̃ւակողմն մեծին: Բնակիչք սր̃ են վայրենիք, և մարդակերք:

Նարգէն Ֆառաւ: Է լեռան ինչ և փոքրիկ կղզի մերձ 'ի հանդամանն. բնակիչք նր̃ սակաւ են, և վայրենիք: 'Ի շրջակայ ծովու սորին կղզւոյ գտանի ամպէր, (որ է դեղ, և ծխանելի) պատուական և առատ. ք̃զի 'ի կղզի անդր առ ափն ծովու են մեծամեծ վայրենի ծառք 'ի ծովն կոյս խոնարհե̃լ. յորս անհամար բազմունք մեղուաց գործեն մեղր և մոմ. և լուծեալ 'ի ջերմագին շողոյ արեգական, մեղրն և մոմն 'ի միասին 'ի վերուստ անտի հոսին 'ի ծովն, զորս ուտեն մեծամեծ ձկունք ովկիանոսի և ջրային օձք. և երբեմն անմիջապ̃ս 'ի բերանս նց̃ հոսի, զի ելեալ յերեսս ջուրց ը̃ այն բանան զբերանս. այլ ոչ կարացեալ մարսել զմոմն, փսխեն արտաքս, և ահա սյ̃ն է ամպէրն ծխանելի՝ զոր բնակիչք տեղւոյն որք միշտ յածին փոքրիկ նաւակօք, կմ̃ ը̃ լող շուրջ զկղզեաւ իւրեանց՝ ժողովեն. և 'ի տեսանելն 'ի հեռուստ զանցաւոր նաւս՝ ելեալ 'ի վր̃ փոքր տախտակաց գնան և վաճառեն ոչ նշանացի խօսելով • զի ոչ գիտեն զայլ լեզու բաց 'ի լեզուէ իւրեանց : Եւ փոխարէն առնուն ոչ դրամս որ յոյժ ինչ համարիցի առ նոսա, այլ երկաթի գործիս, որպէս բրիչ, կացին, ևն : Այս առ պէր գտանի և յայլ ծովեզերեայս Հնդկաց աշխարհի, բայց ոչ այնպիսի առատ և պատուական, որպէս աստ :

Քարնիկո Բար : Է կղզի 'ի հարաւակողմն հանդաման կղզւոյն Է մէջ նոր և Նիկկիբարայ :

ՆԻԿՈԲԱՐ • զոր եւրոպացիք գրեն ՆԻԿՕԲԱՐ : Են երկու կղզիք որք գործեն նեղուց, կամ անցք, անուանեալ ՆԷՂՈՒՑ ՍԷՅՆ ԳԷՈՐԳԷԱՅ • իբրև 150 մղոնաւ հեռի 'ի հիւսիսային ծայրէ սումադրայ կղզւոյն, հանդէպ ցամաքակղզւոյն մալաղայ : 'Ի միումն յայս կղզեաց ելանէ նարկիլ բազում յոյժ • զի համօրէն կղզին է իբրև մի միայն անտառ նարկիլ ծառոց • վասն բազումք յաշխա հայոց, որպէս և յայլոց ազգաց երթան անդ գնել : Բայց չունի առ ընթեր նաւահանգիստ • ուստի նաւք վաճառականաց ոչ կարեն մերձ առ նա խարիսխ արկանել • յայն սակս զպտուղս բնակիչք կղզւոյն բարձեալ տանին նաւակօք իւրեանց 'ի նաւս վաճառականաց : Նաև բազում անգամ 'ի դիպիլ աշէկոծութեան, հարկէ նաւուց տեղի տալ, և հեռանալ անտի :

Առ բնակիչս այսր կղզւոյ չիք բնաւ տեսակ ինչ քաղաքականութեան • որպէս և այլ մերձակայ կղզեաց • ոչ բնակին բազմութեամբ 'ի միասին, այլ ցրիւ աստ և անդ, և բաժանեալ են սանց • իսկ տունք նոցա են փոքրիկ խրճիթք խոտովք և ոստովք ծառոց ծածկեալ : Արք նոցա բոլորովին մերկ շրջին • իսկ կանայք ոստովք ծառոց ծածկեն միայն զմերկութիւն իւրեանց, և երբեմն կտաւօք • կերակուր նոցա ոչ այլ ինչ է, բայց եթէ նոյն իսկ նարկիլ պտուղն, և այլ ինչ սննդարար և յագեցուցիչ, որ և յայլ տեղիս Հնդկաց բուսանի առատ • զայն խարշեալ ուտեն • նաև 'ի կենդանեաց խոզ, հաւ, և ձուկն : Վարեն կեանս հասարակաց՝ ըստ մարդկան առաջին դարուց աշխարհի • եթէ ոք աշխատի ինչ, այլք ևս աշխատին ընդ նմա • ոյք և կամին, և առնուն 'ի վարձ 'ի պտղոյ և յարդեանց երկրին :

Չունին սոքա բնաւ կրօն ինչ, ոչ քուրմ, և ոչ պաշտամունս, այլ վարեն բնական օրինօք • մանաւանդ յօրէնս ամուսնութեան, որում վրէժխնդիր են յոյժ • յոր թէ ոք տեսցեն անօրինեալ և բռնաբարեալ զկին ուրուք, իսկ և իսկ սպանանեն զնա : Ո՛չ գոյ առ նոսա գլխաւոր ոք դատաւոր և ընտրող վիճի և հակառակութեան • այլ 'ի լինել հարկին՝ խնդրով վճարեն զիրսն :

Չունին և դրամս, և ոչ առնուն յումեքէ. 'ի տեսանելն զոսկի և զարծաթի դրամս 'ի բաց ընկենուն իբրև անպիտան ինչ. ուստի վճռ̃կանք որք երթան անդր, փոխ դրամոց տան նց̃ ստուար կտաւս կապուտակս, զոր ոմանք 'ի կիր առնուն 'ի ծածկոյթ մերկութե̃ մարմնոյ. ծխախոտ, որ յաճախեալ է յոյժ առ նս̃, և սուր, և կացին, կամ այլ ինչ գործի երկաթի բթացեալ և անպիտան. զորս 'ի գործ ածենն̃ք հատանել զնարկիլ պտուղն. և 'ի պաշտպանութե̃ անձանց. Զի բնակիչք մերձակայ կղզւոյն մարդակերք են, որք բզ̃մ անգամ յարձակին 'ի վր̃ որսալ զոք 'ի սոցանէ:

Իսկ ըստ բարուց միամիտ են և անխարդախ, բայց կասկածոտք. ընդ օտարական ազգս միշտ զգուշութբ̃ և արթնութբ̃ գնան կասկածեալ զի մի ինչ չարիս արասցեն նց̃. ուստի և յայսմ մասին կարի դիւրահաւան են թէ ոք ասասցէ, թէ այս ոք եկեալ է 'ի կորուսանել զձեզ. անդէն առանց ինչ քննելոյ սպանանեն: Չիք այժմ յօտար ազգաց ոք յերկիր նց̃. և որք երթան 'ի պէտս վճռ̃կանութե̃, զգուշանան 'ի յամելոյ. և 'ի գիշերի ոչ մնան անդր երկուցեալք 'ի կասկածոտ և 'ի դիւրահաւան մտաց նց̃, որք ամ̃ բանից այլոց հաւատան: Սոքա կարի յարեալ են սիրով 'ի կարասիս տան իւրեանց. մինչև զոր միանգամ սեպհականեն և 'ի կիր առնուն 'ի պէտս իւրեանց, թէպէտև իցեն չնչինք և աղքատիկք, ոչ տան բնաւ ումեք, և ոչ փոխանակեն երբէք ընդ ամ̃ իրաց, որչափ և պատուական իցէ և հաճոյական նց̃: Ձև նաւակաց նց̃ է նորատեսիլ իմն և ծիծաղական. այլ ինքեանք կարի վարժ են և յաջողակ լողալ 'ի խորին յայն ծով ովկիանոսի:

Ունին սեպհական իմն լեզու, բայց գիտեն ինչ և 'ի բարբառոյ փորդուքալաց, այլ խառնեալ և այլայլեալ. և նովաւ խօսին ընդ վճռ̃կանս. Զի փորդուքալք յորժամ նաւարկէին 'ի զընդդէմն կողմանս Հնդկաց առ 'ի գիւտ նորանոր Տաց. մտին և յայս կղզի. և զի անուն նաւապետի որ զառաջինն եհաս անդր կոչէր անտոն, յայն սակս անտի մինչև ցայսօր զամ̃ նաւապետս, որք միանգամ գնան անդր քաբուդան անդօնեօ կոչեն. կարծելով թէ ամ̃ նաւապետաց անուն անտոն կոչի: Պատմի թէ յայնմ ժմկի յորում փորդուքալք հասին յայս կղզի, կրօնաւորք երկու մնացին առ նս̃. որոց մին էր քհ̃նյ, և միւսն եղբայր սպասաւոր, առ 'ի սակաւ սակաւ դարձուցանել զնս̃ 'ի քրիստոնէական հաւատս · ուր առ երկիւղի նց՟ փոփոխակի ննջէին 'ի գիշերի, 'ի պատրաստի ունելով միշտ զզէնս իւրեանց : Քահանայն բզմ՟ սիրով և եմաստութ՟ և քաղցրութ՟ կենակցէր ը՟ նս՟, որով սիրելի եղև յոյժ նց՟ · այլ եղբայրն այլազգ սկսաւ վարիլ ը՟ կանոնս նց՟, զոր իմացեալ քհնյին, բզմ՟ անգամ խրատէր զնա ինքնին, նաև 'ի ձեռն բարեկամաց իւրոց զգուշանալ · մնւնդ՟ յայնպիսի երկրի, յորում վտանգ նենգաց կայր առաջի :

Եւ յաւուր միում 'ի խրատելն զնա խստիւ քհնյին, սխացեալ, ը՟ նա եղբօրն, յորժամ ննջէր քահանայն 'ի գիշերի առ ընթեր ունելով զզէնս իւ՟ սովորութ՟, հոժարաց եղբայրն զոմանս 'ի բնակչաց անտի կղզւոյն, և ցուցեալ նց՟ զզէնս՝ ասէ · ահա սա եկեալ է նենգութ՟ կորուսանել և սպանանել զձեզ : Իբրև տեսին նք՟ զզէնս, մնւնդ՟ զհրազէնն, յորմէ յոյժ զարհուրին, իսկ և իսկ սպանին զքհնյն · ապա կասկածել՟ և զեղբօրէն, անդէն սպանին և զնա : Յայս կղզի բաց 'ի նարկէլ ծառոյն, ելանէ և եղէգն, յորմէ գործեն ընտիր և պատուական գաւազանս : Են այլ ևս բզմ՟ կղզիք 'ի կողմանս յայնոսիկ հանդէպ ցամաքակղզւոյն մալայայ : զորօրինակ,

Դոնաուէրէ կղզէ : Որք են բազմութի մանր կղզեաց յարևմտեան կողմն չիամայ հանդէպ դանասէրիմ քղքի, յորմէ առնուն զանուն : Նեկրէմբամ · Դուրուլ · Դուլիլան · Սուրի · Բէնմոէ · Յանտունէլօն · Բանբանկ · Լձտա · ևն · յորոց զոմանս ունիս տեսանել յաշխարհացոյցն մեր :

Իսկ յարևելեան կողմն նորին ցամաքակղզոյն են այստոքիկ :

Անտամպաս · Նաքուինա · և կղզիս Հոգւոյն սբյ՟ : Են երեք խումբք փոքրիկ կղզեաց հեռի 'ի միմեանց ը՟ մէջ ցամաքակղզւոյն մալաղայ, և պօրնէօան մեծի կղզւոյն, զորմէ ստորև ունիմք խօսիլ :

Քարնան · Սէդաօրէ · Պարպէա · և Ձէն : Են կղզիք և նաւհանգիստք 'ի ծոցն չիամայ :

Ուխթան · Լօձօղ · Սանտօրէն : Են աննշան կղզիք 'ի նոյն ծոց չիամայ :

Բուլօգօնդօր : Է կղզի 'ի հարաւակողմն 'ի ծոցն քամպայայ · ուր 'ի սկզբան անցեալ դարու անգղիացիք փոխադրեցին զվաճառատունս իւրեանց 'ի քուսանայ, ը՟նմ և հաստատուած լինչ ժողովրդեան · այլ յամին 1705 մակասարացիք յարձակեալ 'ի վր՟ մեծամեծ քանդմունս գործեցին 'ի նմա :

ԱՇԽԱՐՀ. Բ.

ՉԻՆ. կամ ՉԻՆՈՒՄԱՉԻՆ.

Ա. Անուն:

Այս երեւելի մասն ասիական աշխարհի կոչեցեալ իտ". Քինա, երեւի թէ անծանօթ էր նախնեաց, որք գրեցին յառաջ քան զգալուստ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի ոչ ոք 'ի նոցանէ, կամ գէթ զորոց մեք ունիմք զծանօթութիւն խօսեցան ինչ վասն նորա. միայն պտղոմէոս թուի թէ ունէր զընդհանուր եւ զանորոշ իմն ծանօթութիւն. զի յիշատակէ զաշխարհ մի, զոր կոչէ Սին կամ Սինէացւոց աշխարհ. եւ զբնակիչս նորա Սինէացիս. որ 'ի դրից տեղւոյն եւ 'ի սահմանաց, զոր դնէ նա, երեւի լինել այս աշխարհ զորմէ է բան մեր. բայց յետոյ յաւելու ինչ ինչ որք գլխովին շփոթ եւ անորոշ առնեն զբան նորա: Յայն սակս չէլլարիոս 'ի ծանօթութիւնս հնին աշխարհի. գիրք Գ. գլ. 23. 'ի խօսելն զպտղոմեան սինէացւոց աշխարհէ, ասէ թէ ոչ է այժմեանն չին." չէ պարտ ասէ " զսինէացիս պտղոմեայ շփոթել ընդ մերոց չինաց": Իսկ իսահակ վոսսիոս 'ի ճառս տեսողութեան աշխարհի. գլ. ժը. թղթ" 279. համարի թէ սինէացւոց աշխարհ յիշատակեալ 'ի պտղոմեայ իցէ չիամ կամ սիամ 'ի հնդկաց աշխարհի յայնկոյս գանգէսի: Այլ եդեալ եւս թէ ճշմարիտ իցէ այս կարծիք վոսսիոսի. սակայն երեւի թէ պտղոմեանն սին 'ի մէջ առնու եւ զմասն ինչ չինաց աշխարհի. զի պտղոմէոս դնէ զայն յայնկոյս մեծի ծոցոյն. որ այժմ կոչի ծոց չիամայ՝ յարեւելեան կողմն յեզերս անծանօթ արեւելեան երկրի. ուր է այժմեանն չին:

Իսկ 'ի միջին ժամանակի աշխարհագրաց եւրոպացւոց զառաջինն խօսեցաւ զմանէ մարկոս պօղոս վենետիկեան 'ի ժգ դարու գիրք Բ. գլ. 10. եւ կոչէ զնա Քաթայի եւ Քաթա. եւ զմայրաքաղաք նորա Քամպալու. որ այն ինքն է այժմեանն փէքին: Բայց անուամբս քաթայի ընդ այն ժամս իմանային միայն զհիւսիսային մասն չինաց աշխարհի. որպէս երկար ցուցանէ աստեմն. որ է մասն նախնի Սէրիկոյ կամ Սէրի[illegible] աշխարհի ըստ գրելոյ չէլլարիոսի համարեալ 'ի բանս պտղոմեայ: Այլ պատմութիւնք պօղոսի որ վասն չինաց ընդ ժամս բազումս յառասպելս համարեցան, մինչեւ մեծն ալպուքերք փորդուգալ անց-

տալ

եալ զՀրուանդանն բարեյուսոյ՝ եհաս ը̃ ծով'ի ցամաք կղզին Հնդկաց աշխարհի որ յայնկոյս գանգէսի, և առեալ զմալաղա, կալաւ ծանօթութիւն զայսր աշխարհէ. զոր և վղվղ̃կի ծանոյց թգ̃րի իւրում. և անտի սփռեցաւ 'ի համօրէն եւրոպիա:

կոչի այս աշխարհ յարաբացւոց Սին. իսկ 'ի պարսից և յայլոց արևելեայց Չին. զոր ասեն լինել մի յորդւոց յաբեթի, և 'ի նմ̃է առեալ զանուն. իսկ այժմեանք ոմանք 'ի բարբառոյ չինաց ածանցեալ կարծեն զայս անուն, առ որս Չին, կմ̃ Սին, նշանակէ Մետաքս, որ վս̃ զի անբաւ առատութ̃բ գտանի անդէն, կմ̃ զի ըստ այլոց ոմանց՝ նախ անդ սկսան գործել, վ̃ըկ ասեն այս անուն եդաւ նմ̃. բայց զմեծ մասն նախնի անուանց աշխարհաց՝ ուսանեմք յանուանէ միոյ ուրուք 'ի նահապետաց նոցին կոչեցեալ. եւրոպացիք զայս անուն փոխեցին 'ի Քինա, որ 'ի փորդուգալաց տարածեալ ասի ը̃ համօրէն եւրոպիա, սակայն և եւրոպացիք 'ի գրելն 'ի լատին բարբառ ոչ ասեն Քինա, այլ Սինէա կմ̃ Սինացւոց աշխարհ: Մեք յայսմ վայրի ունիմք կոչել Չին. բայց արևելեանք 'ի խօսելն առհ̃րկ՝ կոչեն Չինու-մաչին զՄաչին համարելով լինել անդրանիկ որդի Չինու: «Արևելեանք (ասէ Էրպլօ 'ի բառն Սին,) 'ի խօսելն առհ̃րկ զՔինայէ, կոչեն Չին և Մաչին. զ̃ր և յանուանելն զբոլոր թաթարստան, կոչեն Եաճուճ և Մաճուճ, որ է Գոգ և Մագոգ ըս̃ գրոց, բայց սակայն գտանին աշխարհագիրք որք ասեն, թէ Չին անուամբ պարտ է իմանալ զՔինա հիւսիսային, զոր բզ̃մք կարծեն նոյն որ Խաթա, կմ̃ Խաթայ (Խէթայ), իսկ Մաչին անուամբ պարտ է իմանալ զՔինա հարաւային, առեալ 'ի նմ̃ զքօչինչին, զտունքին, զթգ̃րութիւն անան ը̃ չիամից և ը̃ բեկուայ»: Իսկ Չինք զաշխարհ իւրեանց անուանեն Թիւղում Խօձէ. այլև Թիէն Հիա. որ թարգմանի Միջերկրեայ թ̃րութ̃. վս̃ զի նք̃ զերկիրն համարին քառակուսի. և զաշխարհ իւրեանց դնեն 'ի միջակէտ նր̃ իբր գլուխ և իշխան համօրէն աշխարհի. յայս սակս զթ̃րութ̃ իւրեանց՝ սովորական մեծամտութ̃բ կոչեն ը̃հանուր, կմ̃ տիեզերական. իբր թէ զա̃մ զառ 'ի ներքոյ երկնից ը̃ իւրով իշխանութ̃բ ունի:

բ̃. Դիրք Չինաց:

Աշխարհն չինաց 'ի բաց թողել զթաթարստան, ը̃ որում միացեալ է այժմ, ունի իւր սահման յարևմտից զՏիպէդ և զքօպի մեծ անապատն. յարևելից՝ զովկիանոս . 'ի հարաւոյ՝ նոյնպէս զովկիանոս և մասամբ իմն զթ՟րութ՟ին տունգինոյ . իսկ 'ի հիւսիսոյ՝ զթաթարաստան չինաց . զոր յա՟ջագոյն ստորագրեցաք . յորմէ անջատի 'ի ձեռն հռչակաւոր պարսպին, որ է մի 'ի գլխաւոր հրաշալեացն աշխարհի . զոր 'ի դէպ համարիմք յայսմ վայրի ստորագրել . իբր զի է սահման որոշիչ այսր աշխարհի :

Արդ այն հաստատակառոյց պատուար, զոր մեք կոչեմք մեծ պարիսպ չինու, 'ի բարբառ չինաց կոչի Վաւլինկամ ւլին . երկայնութ՟ն ն՟ր ը՟ս ոմանց է 1500 մղոն . իսկ ը՟ս այլոց մինչև ց2000 . բարձրութ՟ին 30 կամ 40 ոտնաչափ . իսկ թանձրութ՟ին 15 : Եւ է համակ 'ի թրծեալ աղիւսոյ . սակայն և այնպէս յայնչափ դարուց հետէ կայ մնայ ամբողջ : Ուրեք ուրեք չափաւոր հեռաւորութ՟բ է ամրացուցեալ հզօր աշտարակօք, յորս հ՟նպզ կան զօրք կարգեալք 'ի պահպանութ՟ի սահմանաց . և 'ի կողմանս դիւրամատոյցս կառուցեալ կան մօտ առ մօտ երկու կամ երեք հողաբլուրք 'ի պաշտպանութ՟ի միմեանց : Չորս դրունս ունի, և կամարս ինչ ը՟ս որս գետք անցանեն : Այլ առաւել մեծ այն է . զի այն պատուար ոչ միայն 'ի դիւր տեղիս է շինեալ, այլև 'ի վ՟ր բլրոց և լերանց . յայն սակս 'ի բ՟զմ տեղիս ելևէջս ունի ը՟ս բարձրութ՟ե և ը՟ս խորութ՟ե վայրացն ը՟ս որս անը՟նհատ շարունակի . և չունի ուրեք խրամատութ՟ի, բայց միայն 'ի ն՟հնգն փեքլինու մօտ առ յովէն ծ՟զք, ուր լեառն մի զառ 'ի թափ և ժայռաւոր փոխանակէ զտեղի պարսպին, որ հզօր ևս է ք՟ զբուն պարիսպն : Եւ զի զճշմարիտն կամեցեալ ասել կարծեմ թէ ոչինչ են առ սովաւ գերահռչակ բուրգք և մահարձանք եգիպտոսի : Զայս պատուար շինեաց չինհօհանդ ինքնակալ չինաց իբր 2000 ամօք յա՟ջ առ 'ի խափանել զյարձակմունս թաթարաց . սակայն ոչ ինչ արգել եղև որդւոյ Ճինկիզխանին, որ 'ի ժ՟գ դարու եմուտ յայս աշխարհ . և յետ ն՟ր 'ի ժէ դարու սունչի թ՟գր թաթարաց . որ յինքն կալաւ զինքնակալութ՟ն չինաց . ո՟պ ունիմք պատմել ստորև :

Գ . Տարածութիւն և բազմամարդութիւն Չինաց :

Այս աշխարհ ը՟ս նախակարգեալ սահմանաց՝ է 'ի մէջ 20 և 42 աստիճանաց հիւսիսային լայնութ՟ե . և 'ի մէջ 118 և 146 աստիճանաց երկայնութ՟ե առեալ ընդ քօրէա ն՟հնգն : Եւ այսպէս լայնութ՟ն ն՟ր 'ի հիւսիսոյ ը՟ս հարաւ է իբրև 22 աստիճան . որ առնէ 1320 մղոն

Ծագրական · իսկ երկայնութիւն յարեւմտից յարեւելս 28 աստիճան · ք 1680 մղոն · Թող զկղզիս, զոր ունի շուրջ զիւրեւ · եւ զԹաԹարաստան չինու · որոյ սահմանք ձգին մինչեւ ցամուր գետ · որ է ը 55 աստիճանաւ լայնութե ։ Այլ չէք յԾէ Թգրութե այնչափ ընդարձակ ուրեք զսա, բաց 'ի Թգրութէ մոսկովաց · բայց նոցայն մեծ մասն մնեալ 'ի հիւսիսային կողմանս զուրկ է 'ի բնակչաց, սակս անհնարին սառնամանեաց · իսկ չինաց Ծ բազմամարդ է յոյժ ը ամ տեղիս · զի Թիւ բնակչաց նր ըստ ստուգագոյն հաշուի անցանէ զ120 միլիոնիւ · զոր այլք հաստուցանեն ց130 միլիոն ։ Եւ այս չէ ինչ անհաւանելի հայեցեալ յընդարձակութի երկրին · որ ըստ ոմանց առաւել է ք զկէսն եւրոպիոյ · առեալ ը նմ եւ զԹաԹարս · եւ ինքնին նր ըստ հօրն քօնԹեայ բաւական են առ մի մի Թգրութի ։

Նա չէ իսկ դժուարին գիտել ճշտիւ զԹիւ բնակչաց չինու · վն զի ըստ օրինաց երկրին՝ ամ տանուտէր պարտական է ը ծանր պատժով ունել 'ի վերայ աւագ դրան տան իւրոյ նշանակեալ զԹիւ անձանց իւրոց ընտանեաց 'ի ծերոյ մինչեւ ցնորածին տղայն · եւ 'ի վր իւրաքանչիւր տասնեակ տանց կարգեալ կայ մի ոմն ոստիկան, որոյ գործ է զգուշանալ, զի անԹերի պահեսցի այն օրէնք ։ Նոյնպէս եւ Թիւ քղքաց նր ըղմ է ըստ բազմութե բնակչաց · որք եւ այնչափ մօտ են միմեանց, զի առ ասէ հայրն քօնԹի, յելանել 'ի միոյ քղքէ՝ եւ ոչինչ կարի հեռացեալ երեւի միւսն ։ Արդ՝ է պիչինկայ 150 · եւ ըստ այլոց 173 քաղաքք են անդ գլխաւորք եւ յառաջին կարգի · յորոց յոլովք ըստ մեծութե եւ ըստ բազմամարդութե եւ ըստ հարստութե առաւելուն ք զփարէզ եւ ք զլոնտրա մայրաքղքս գաղղիացւոց եւ անգղիացւոց, եւ 300 յերկդ կարգի · եւ 1160 յերրդ եւ 'ի ստորին կարգի · որք եւ կախեալ կան զառաջնոց եւ զերկդականաց · եւ ամքն միանգամայն ըղփէքին քղքէ · Թող զաւանս եւ զգեօղս, որք անհամար են · եւ զդղեակս եւ զամրոցս, զոր ոմանք հաստուցանեն ց2000 ։

Այլ 'ի հնումն ընդարձակագոյն եւս տարածէր Թգրութե չինաց, զի 'ի հարաւոյ եւ յարեւելից ունէր ը իւրեւ զմոլուղեան կղզիս, որք են ը հնրկածիւ · զմլինտանաօվ · զփիլիպպեան կղզիս, զգեղեցիկ կղզին, զոր եւրոպացիք ֆօրմօզա կոչեն · զլէգէոճխեան կղզիս · եւ զմեծ Թգրութիւնն ճաբօնայ · իսկ 'ի հնդկաց Ծի զբեկու, զչիամ, զլաօս եւ զքօչինչին · յարեւմտից՝ զպեղէդ, զլասաա մինչեւ 'ի ամըողանտ ։ Բայց քզի դժուարին

րին է, և չասացից անհնարին միոյ գլխոյ կառավարել զայսչափ զնշին և տարածիգ երկիրս. յայն սակս առ փոքր փոքր վտարանջին ելլին 'ի հնազանդութենէ նոցա. և եղեն ինքնագլուխ թագաւորութիւնք. միայն հայնան կղզի, և գեղեցիկ կղզին, որպէս և Թաթարաստան, այլև Քօրէա կան մնան մինչև ցայսօր ընդ տէրութեամբ նոցա:

Գ. ԳԵՏՔ Չինաց:

Բազում գետք գտանին յայսմ երկրի. որոց ոմանք բըղխեն 'ի նոյն երկրէ, և ոմանք յայլուստ եկեալ մտանեն անդ. ուր ընկալեալ զայլ գետս բազումս, և ընդարձակեալ անցանեն ընդ նահանգս նորին, և գնան անկանին յովկիանոս. յորոց գլխաւորքն են հետագայքդ:

ՔԷԱՆՁ. ՔԷԱՆ, կամ ԳՆԳԱՔԷԱՆՁ. յոմանց կոչի և ԼԱՆՔԷԱՆՁ, կամ ԵԱՆՁԷ. այլև ԳԵՏ ԿԱՊՈՒՏԱԿ: Է գետ մեծ և գլխաւոր քան զայլ ամենայն գետս չինաց, որ ելանէ 'ի խորին հիւսիսային կողմանց դիպէդայ. որպէս ասացաք 'ի ներածութեան անդ Թաթարաստանայ. և հոսէ ընդ իւնան, ընդ սուչվէն, ընդ հուքվան և ընդ քեանձնեան կամ նանքին նահանգս չինաց մղոնս իբր 1320, երթայ անկանի յովկիանոսն արևելեան հանդէպ ջունմին կղզւոյ 30 մղոնաւ հեռի 'ի նանքին քաղաքէ, ընդ մէջ հատանելով յարևմտից յարևելս զամենայն երկիրն չինաց:

Այս գետ խոր է յոյժ. զոր չինացիք իւրեանց սովորական չափազանցութեամբ անյատակ կոչեն:

Պիչինկ բազում շփոթ և հակառակ բանիւք ստորագրէ զայս գետ. զի յերկրին դիպէդայ կոչէ զնա միայն Գնգաքեանձ և Կապուտակ. իսկ աստ 'ի չինաց երկրի ոչ երբէք կոչէ Գնգաքեանձ. այլ ուրեք Քեան և Կապուտակ. և ուրեք Քեանձ. անդ ասէ թէ ելանէ յերկրէն դիպէդայ, և անցանէ ընդ համօրէն երկիրն չինաց. և 'ի նանքին նահանգի մտանէ յովկիանոսն. իսկ աստ գրէ թէ ելանէ յիւնան նահանգէ չինաց, զհետ երթեալ յայսմ մասին սալմօնի: Եւ քն սք այլ և այլ գետք նախ՝ զի նոյն իսկ պիչինկ որպէս աստ, նոյնպէս և յերկրին դիպէդայ զայսն գետ կոչէ Կապուտակ. և զընթացս երկոցունց նոյնօրինակ ստորագրէ. իբր զի վասն երկոցունց ևս գրէ, թէ անցանեն ընդ համօրէն երկիրն չինաց յարևմտից յարևելս. և երևի զի այլ Տաքիրք և Տացույցք զոյն քեանձ կամ քեան գետն կոչեցեալ Կապուտակ՝ նոյն դնեն ընդ Գնգաքեանձ գետոյն, և զակն նորա 'ի դիպէդ, և զընթացս նորա այնպէս ստորագրեն որպէս պիչինկ զընթացս Գնգաքեանձ գետոյն, որպէս և նոր և ՚ի զա՛մմին ուղղագոյն Ծացոյցք օնվիլան կմ՟ տան-վիլէայ. որոյ գոլով Ծափիր գաղղիացւոց արքայի. և ուսուցիչ արքայորդւոյ դքսին օռլէանեայ, նորոգ չինեաց մեծամեծ Ծացոյցս իւրաքանչիւր նհնգաց գիւղէգայ և չինաց Ծի. զորոց և ինքն պիտանի վկայէ թէ ՚ի զա՛մ Ծացոյցս, որք ստորագրեն զկողմանս ինչ այր Ծի, ստուգագոյն և առաւել ճշգրիտ թուէին: Հօհամ, կմ՟ Հօամհօ. որ կոչի և Դեղին գետ: Է երկգլխաւոր գետ չինաց Ծի, որ ելանէ ՚ի լերանց տնտի, որք սահմանեն զատուցեն նհնգ յարևմտից, կմ՟ ը այլոց ՚ի գիւղէգայ. և մտանէ ՚ի թաթարաստան. ուր հոսէլ հարուստ մի յայնկոյս նախայլէշաստակէլ մեծի պարսպին, և դարձէլ ը հարաւ, մտանէ ՚ի չին ը մէջ չէնոսի և չանոսի նհնգաց. և անցէլ ը նհնգն հօնան. և ը մասն ինչ նանքինոյ իբրև 1200 մղոնս հասէլ, մտանէ յովկիանոս ՚ի հիւսիսակողմն քեանձ գետոյն: Այս գետ բա՛մ և մեծամեծ վնասս գործէ ՚ի նհնգս ը որս անցանէ. զի յաճելն՝ ջուրք նր զեղեալ արտաքս ՚ի ծոցոյ գետոյն, հեղեղեն զշրջակայ վայրս. վասն այնորիկ աստի և անտի ունի թումբս հաստատակառոյցս: Սա թէպէտ մեծ է և շատաջուր, այլ ոչ է նաւարկելի. զի յաստակ նր ոչ է հաւասար. այլ է ուրեք զի խոր է. և է ուրեք զի ոչ նոյնպէս, և ուրեք ուրեք մեծամեծ քարինք կան գտանին: Բաց ՚ի գետոց են ՚ի չին և խրամք ջրալէցք կմ՟ ջրմուղք հոսական ջուրց մեծամեծք և մանունք հասեալք ը բա՛մ տեղիս երկար և սարժանաւոր աշխատութբ և անբաւ ծախիւք. որք աստի և անտի ունին թումբս հաստատունս ամրացուցեալս անտաշ քարամբք. և ուրեք ուրեք չափաւոր հեռաւորութբ կամուրջս վիմաւաշս, առ ՚ի տալ անցս ձնդհորդաց ՚ի միոյ կողմանէ ՚ի միւսն: Այլ թէ անթիւ են այն կամուրջք. այլ գլխաւորքն են իբր 300. յորոց ոմանք են երեք կամարեան. ոմանք հինգ. և ոմանք մինչև ցեօթն. միջին կամարն բարձր է յոյժ ՚ի զայլս, զի նաւք մարթասցին ՚ի ներքուստ անցանել առանց իջուցանելոյ զկայմն: Գրեթէ յա՛մ նհնգս են մի մի գլխաւոր երկայնաձիգ ջրմուղք. որք յերկուց կողմանց բաժանին յայլ և այլ առաջս. յորոց ելանեն անհամար մըտակք և բաշխին ՚ի գեղջս և ՚ի գեօղս, և ոմանք երթեալ հասանին ՚ի ծովակս կմ՟ ՚ի լիճս, և անտի սփռեալ առուանեն զշրջակայ երկիր. այլք հոսին ՚ի խրամս ջվէաց և բերդից, ասպս անտի անցեալ գնան յայլ տեղիս:

Յա՟մ ջրմուղս չինաց մին անուանի է յոյժ, զոր կոչեն մեծ ջրմուղ. և յերկար, վ՟ս զի երկայնութիւն է իբր 1200 մղոն. զի սկսե՟լ 'ի քանթօն ք՟ղքէ որ է 'ի հարաւակողմն, ձգի մինչև ցփեքին մայրաք՟ղք որ է 'ի հիւսիսային եզերս չինաց աշխարհի. և չէ ուրեք ը՟ հատե՟լ, բայց միայն իբր միոյ աւուր ճ՟նպրհաւ առ մօյիլին լերամբ, որ է յեզերս չանսի ն՟հնգին:

Այլ ք՟ղի յայսչափ երկարաձիգ տարածութեն՝ եկերն ոչ է ը՟ ա՟մ տեղիս միապէս հարթ հաւասար, կ՟մ զի այսպէս առայեց՝ դիրք երկրին ոչ իջանէ ը՟ ա՟մ տեղիս մեղմով և համեմատաբար ըստ ընթացից ջուրց. այլ ուրեք ուրեք զառ 'ի թափ անկանի, յայն սակս կարևոր դատեցան յայնպիսի տեղիս շինել արգելս կ՟մ կապանս, զորս մարթ է կոչել սահանս ջուրց. զի անդ ջուրք 'ի բարձրագոյն ջրմղէ անտի գահավէժ հոսին 'ի ստորինն յաւէտ և նուազ սրընթաց՝ ը՟ յաւէտ և նուազ զառ 'ի վայր գոլոյ երկրին: Եւ առ 'ի հանել զնաւակս 'ի ստորին ջրմղէ 'ի վերինն, յայնպիսի տեղիս սահմանե՟լ կան բազմութ՟ն մարդկան, որք բազմապատիկ սռասանօք կապեալ զնաւակս և աստի և անտի ձգե՟լ ուժգին՝ հանեն 'ի վերին ջրմուղ անդր. կ՟մ ը՟ հկ՟ռկն՝ 'ի վերին ջրմղէ իջուցանեն 'ի ստորինն ծանր դժնդակ և երկար աշխատութ՟բ. վ՟ս զի չև ևս ուսան շինել կապանս ջուրց ո՟պ սովորութ՟ն է յեւրոպիա 'ի ձեռն դրանց. զոր բաւական է մի միայն մարդ սակաւ աշխատանօք բանալ և փակել. և առ 'ի նաւակաց առաւել ծանունց ք՟ զչինացւոցն՝ ինքնին 'ի ստորին ջուրց ելանել 'ի վերինն, կ՟մ 'ի վերնոյն իջանել 'ի ստորինն. ո՟պ է տեսանել 'ի տրուն՟ վէնէտիկոյ, և յայլ տեղիս:

Այն ջրմուղք կարի պիտանի և շահաւէտ են. նախ զի առատապէս մատակարարեն ջուր յա՟մ ք՟ղս և 'ի գեօղս. և ոռոգե՟լ զբ՟մ անջրդի վայրս, արդիւնարարս և բիւրաբեղունս գործեն. որք առանց այնր ոռոգման ամենևին ամուլ և անբեր լինէին: Եր՟կդ՝ պահեն զերկիրն յողողմանէ ջուրց գետոց և հեղեղաց. զի 'ի յորդել ջուրց նց՟, և 'ի զեղանել արտաքս 'ի ծոցոյ, ծածկէին արդեօք զա՟մ շրջակայ վայրս, եթէ ոչ հաւաքէին 'ի ջրմուղսն յայնոսիկ: Եւ թէպէտ տակաւին հօհամ գետն գործէ վնաս ոչ սակաւս յառատանալն, սակայն ևս մեծամեծս գործէր, եթէ չէին այն ջրմուղք: Այս իսկ եղև մի 'ի գլխաւոր պատճառաց, որք ստիպեցին զչինացիս բանալ զխրամս զայնոսիկ. զի եթէ հաւատասցուք նց՟, երկէր խուրեանց 'ի սկզբանէ անտի լճային էր և զրեթէ առհ՟րկ ծածկե՟լ 'ի ջուրց․ ուստի և անբեր, և օդն յոռի․ այլ իբրև բացան խրամք և ջրմուղք, այն լճացեալ ջուրք 'ի նմ՟ հաւաքեցան․ և երեսք երկրի ցամաքեցան։ Եր՟դ՝ մեծապէս նպաստեն վճռ՟կանութ՟․ զի ընծայեն վճռ՟կանաց նց՟ ջրային ճնպ՟հ ը՟ ամ՟ կողմանս Ծին․ բաց 'ի չանսի և չէնսի գաւառաց, ուր առ նուազութ՟ ջուրց, չիք այնպիսի ջրմուղ։ Յայն սակս այն բազմութ՟ի ջրմղաց միշտ լի են նաւակօք, որք խուռնընթաց հն՟պզ երթևեկեն 'ի նմ՟ տանելով վճռ՟ս քղ՟ք 'ի քղ՟քէ։ Արդարև զուարճալի իմն է տեսանել զայն երթևեկ անհամար նաւակաց, որք բացե՟լ զփսխալթի առագաստս (զի առագաստք նաւուց չինաց մեծաց և փոքունց են հիւսե՟լ 'ի նուրբ չէրտից եղեգանց․ որ՟պ ստորև ունիմք ասել) սրաթռիչ ընթանան 'ի նմ՟, անցե՟լ ը՟ դաշտս և ը՟ հովիտս դալարագեղս և արգաւանդս․ և շրջապատե՟լ յանհամար քղ՟քաց և 'ի գիւղօրէից․ զի քղ՟քք և գիւղք ը՟ մեծի մասին են առ ջրմղօք։

Արդ՝ թէպէտ ջրմուղք և գետք չինաց Ծի շահաբեր են յոյժ։ որ՟պ տեսաք․ սակայն զայս ևս պարտ է խոստովանել ը՟ հօրն քօնթեայ, թէ ոմանք յայնցանէ վտանգաւոր են յոյժ․ և բզ՟մ վնասուց պտճ՟ռ սակս բազմապատիկ սեպից ժայռից և քարանց, որք սփռե՟լ կան 'ի նմ՟․ և սակս անհնարին դահավէժ ընթացից ջուրցն, մինչև չթողացուցանել նաւորդաց ը՟ հաճոյից ուղղել զընթացս նաւուց․ նմին իրի բզ՟մ անգամ ը՟հարկանին նաւք 'ի ժայռս և սպառսպուռ խորտակին։ Այլ թէ 'ի Փօքիէն նհ՟նգի իբր ը՟ աւուրս ութ կմ՟ տասն միշտ յայնպիսի վտանգս հարկ է ճն՟պհորդել․ ուր չիք այլ ինչ տեսանել, եթէ ոչ՝ սահանս և սրտոյտս ջուրց և յորձանուտս․ որք ը՟հարե՟լ միմեանց, աստ անդ տարուբերեն զնաւակս․ և գրեթէ ոչ անցանէ օր, յորում նաւ մի ոչ խորտակեսցի․ որ եթէ դիպեսցի մերձ յեզերս, դիւրին է մարդկան զերծանել․ այլ եթէ 'ի մէջն յորձանաց հանդիպեսցի՝ որպէս լինի երբեմն, յայնժամ չիք զերծումն։

Նա ինքն հայրն քօնթի, որ էառ զփորձ այնց վտանգաց հաստատէ, թէ յայնչափ ծովագնաց ճն՟պհորդութ՟ իւրում, զոր արար ը՟ ամս բզ՟մս 'ի մեծամեծ և յառաւել մրրկածուփ ծովս Ծի, ոչ կրեաց այնչափ վտանգս, որչափ յաւուրս տասն կրեաց 'ի վ՟ր ջուրց այնց սրընթաց ուղխից յԾին չինաց։ Բայց բզմ անգամ ը՟ աւելոյ նորին՝ խորտակումն նաւուց ոչ է այնչափ 'ի բռնութէ ջուրց, կմ՟ յանհմտութէ նաւավարաց, ք՟ թէ 'ի սակաւութէ նց՟. զի եթէ փնկ ութ նաւավարաց, որ է սովորական թիւ որոց վարեն զնաւս, տասներին հնգետասան կմ՟ վեշտասան, յայնժամ բոլոր բռնութն ջուրց չէր բաւական յափշտակել զնաւս. սակայն նք՟ տու խնայելոյ 'ի ծախս, ոչ խնայեն կենաց՝ 'ի յայտնի վտանգս արկանելով զանձինս. և զայս գործէ 'ի նս՟ տարապայման ագահութի՟ նոցա։

Է. Օդ Չինաց։

Այս Ե՟ գոլով ը՟արձակ գրեթէ 'ի չափ կիսոյ եւրոպիոյ ուն՟ տարածաք. օդ նորա զնզն է յոյժ ը՟ զնզնութե՟ այլ և այլ հեռաւոր տեղեաց։ 'Ի հիւսիսային կողմանս սաստիկ է ցուրտն 'ի ձմերայնի երբե ը՟ ամիսս չորս. ց՟ 'ի սկզբանէ ամսեանն նոյեմբերի մինչև ցմարտ. և յայնժամ սառին անդ գետք և ջրմուղք առհսրկ այնչափ՝ մինչև համարձակ անցանել 'ի վ՟ր սառին ոչ միայն մարդկան և անասնոց, այլև կառաց. և լերինք ը՟ այն ամիսս միշտ ձիւնապատ են։ Յարևելեան և յարևմտեան կողմանս բարեխառն է և քաղցր. զի թէպէտ 'ի ձմերայնի լինի ձիւն. բայց ոչ մնայ ընդ երկար. նոյնպէս և յամարայնի ստէպ հնչեն հողմունք զովացուցիչք։ Իսկ 'ի հարաւային կողմանս 'ի ձմերայնի ձիւն ոչ իջանէ. և ոչ սառն տեսանի բնաւ. այլ փխկ ձեան և սառին յաճախեն անդ կարկուտք, անձրևք, ջաղբք՝ մնդ 'ի ժմկս աշնանային գիշերահաւասարի. նոյնպէս է և 'ի գ՟ւռս, որք անկանին ը՟ արևադարձիւ խեցգետնի. իսկ յայլ ժմկս տարւոյն միշտ պարզ են երկինք և պայծառ։ Յամարայնի թէպէտ սաստիկ է անդ տօթն, այլ ոչ է անտանելի և ոչ կարէ նեղացուցանել, զի ձգի առ բարեխառն գօտեաւ, ուր ջերմութի ամարայնոյ գրեթէ չէ ինչ ը՟հատ 'ի ջերմութէ հարաւային մասին Իտալիոյ։ 'Ի նոյն հարաւային կողմանս մշակք, և այլք որք գործեն գործս ծանրակիրս և աշխատալիս, սովորութի ունին գործել ը՟ առաւօտն մինչև մօտ ցօր հ՟րկ. և 'ի հասանել արեգական 'ի կէտ միջօրէական, խոյս տան 'ի հովանաւոր տեղիս, կմ՟ 'ի գետնափոր փապարս հանգիստ առնուլ. ապա 'ի խոնարհել արեգական անդրէն 'ի գործ ելանեն. զի սահմանեալ ժմկ գործոյ նց՟ է ը՟ առաւօտն և ը՟ երեկս. իսկ ժմ զկնի ճաշուն և գիշերն 'ի հանգիստ առնելոյ է նոցա : Նոյնպէս ըստ լաւութեան և ըստ յոռութեան պէսպէս է օդ նորա· զի 'ի հարաւային կողմանս, և ուրեք ուրեք 'ի ծովեզերեայ տեղիս՝ ուր ցած է երկիրն և լիճք յաճախ, թանձր է և վնասակար· իսկ 'ի հիւսիսային և յարևելեան կողմանս՝ ուր յաճախ են լերինք, մաքուր է և առողջ· բայց ըստ հանրապէս խօսելով օդին չինացւոց բարի է և նուրբ· որում վկայէ և բարք բնակչաց նորա :

Է. Բերք Չինաց :

Հող երկրի նորա է ըստ իրաց լինել աւազախառն՝ [illegible] և թեթև և կակուղ, զոր բաւական է մի միայն եզն կամ կով ակօսագրել· այն զի ասէ Նիւհօֆ, թէ ինքն բազում անգամ տեսեալ անդ աչօք՝ առն և կնոջ հանդերձ իշով միով ձգել զարօր : Սակս այսպիսի կակղութեան և փափկութեան՝ երկիրն պէտս ունի սակաւ ոռոգման առ 'ի պտղաբերութիւն, զի վաղվաղակի չորանայ : Եւ առ դիւրաւ բաշխելոյ զջուրս հաւասար չափով ըստ ամենայն տեղիս, զայլ հնար ոչ գտին, եթէ ոչ հարթել զերկիր և հաւասարել· ապա թէ ոչ՝ բարձրագոյն տեղիք միշտ անջրդի մնային, իսկ խոնարհագոյնք հեղեղախոնաւ և լճային : Վասնորոյ երկիրն չինաց գրեթէ ըստ ամենայն տեղիս արգաւանդ է և բարեբեր· ոչ այնչափ առ պարարտութեան երկրին, քան թէ առ ժրաջան մշակութեան բնակչաց նորա· ուր զարհեստ հողագործութեան գրեթէ 'ի ծայր կատարելութեան հասուցին :

Վասն զի համօրէն չինք փոյթ մեծ ունին այնմ· այն զի՝ և նոյն ինքն ինքնակալ նոցա առ պատուական երևեցուցանելոյ յաչս ժողովրդեան զայս գործ բազմարդիւն, և առ առաւել յորդորամիտս առնելոյ զնոսա առ այն, ամի ամի 'ի հանդիսաւոր տօնախմբութեան միում ինքնին ակօսագրէ զսահմանափակ ինչ տեղի և սերմանէ : Զնոյն առնեն և համօրէն կուսակալք յիւրաքանչիւր նահանգս : Այլև ամենայն օրէնք նոցա և սահմանադրութիւնք քաղաքականք իբր մի միայն յառաջադիր վախճան ունին զարգաւաճութիւն երկրագործութեան : Վասնորոյ չիք անդ տեսանել 'ի դաշտային տեղիս ծառս անպտուղս միայն առ 'ի զարդ· և ոչ ընդարձակ պարտէզս և բուրաստանս անօգուտս 'ի պէտս զբօսանաց ևեթ կարգեալ· այլ ամենայն տեղիք նոցա մշակեալ են յարդիւնաւորութիւն պէսպէս արգասեաց :

Բլուրք իբր 'ի բազումս հատեալ են և բաժանեալ 'ի բազ-

մա

մասպատիկ անջրպետութիւն կամ տափարակեալ տեղիս պսակաձեւս մի ք̃ ղմի 'ի վերոյ · որք գեղեցիկ լինին տեսարան ընծայեցուցանեն աչաց · և իւրաքանչիւր անջրպետութիւն պատեալ է պատուարաւ · զի մի 'ի յորդել անձրևաց' սերմանիքն 'ի վայր հոսեսցին զոյգ ը̃ հողոյ: Այն բլուրք բաց յանձրևոյ, ոռոգանին և 'ի ջուրց ինքնաբուղխ աղբերաց հաւաքելոց 'ի մեծամեծ աւազանս, որք անտի ը̃ պխտոյից բաշխին յայլ և այլ տեղիս: Բ̃մ ուրեք ևս ուր չիք աղբիւր ինքնաբուղխ, զջուրս գետոց և ջրմղաց, որք անցանեն առ ստորոտով բլրոց, հանեն մինչև 'ի կատար նց̃ 'ի ձեռն բազմարուեստ գործեաց · որոյ զուգական ը̃ ասլից պխշինկայ' Թուի թէ չիք և յեւրոպիա · ուր այնչափ ծաղկեալ են արուեստք: Եւ սակս այսպիսի ժրաջան աշխատասիրութե, սովորաբար յամին երիցս սերմանեն և ժողովեն արդիւնս 'ի բլրոց անտի · Նախ' արմատս ինչ, յորմէ մզեն իւղ · ապա բամբակ · և հուսկ յետոյ ազգ մի արմատոյ, զոր բադադ կոչեն: Այս կարգ մշակութե և սերմանելոյ թէպէտ ոչ է անփոփոխ ը̃ ամ̃ տեղիս, սակայն իբր հն̃րկ է: Նմանապ̃ և լերինք, որք անպիտան են 'ի մշակութ չեն դատարկ · զի են 'ի նո̃ անտառք ծառոց 'ի պէտս շինուածոց և հրոյ · այլև բովք ազգի ազգի հրահալելեաց: Բայց այս արգասաւորութի չինաց Տի ոչ է միապէս ը̃ ամ̃ տեղիս · զի 'ի հարաւային կողմանս 'ի ցածուն տեղիս յամին երկիցս հնձեն · 'ի միջին կողմանս 'ի բարձր և յանջրդին տեղիս' միանգամ · բայց սրմունք նո̃ չեն այնպէս պատուական, ոպ̃ զարմտիս հարաւային կողմանց · իսկ 'ի հիւսիսային կողմանս առատութի է ամ̃ ազգ արմտեաց: Արդ ը̃հանրապ̃ խօսելով 'ի չին առատութի է ամի, ոչ միայն հարկաւորաց 'ի չահս և 'ի դարմանս մարդկային պիտոյից, այլև որոց 'ի վայելչութի են 'ի փափկութե և 'ի զուարճութի: Ունի ցորեան, որիզ, գարի, կորեակ բազմատեսակ, սիսեռն սեաւ և դեղին, զոր տան և երիվարաց առ 'ի պարարտանալ · ոլոռն, բակլայ, ոսպ, կաղամբ, շոմին, շողգամ, բադադ և այլ պէսպ̃ բանջարս և արմատս պատուականս:

Սովորական պտուղք նց̃ են խնձոր, տանձ, սերկևիլ, դեղձ, ծիրան, նուռն, նարինջ, կիտրոն, լեմին, ընկոյզ, շագանակ, խաղող աղնիւ այլ ոչ այնչափ բ̃մ, յորմէ առնեն չամիչ · սեխ, դդում, վարունկ, ձմ̃թ այլատեսակ 'ի մերոցն, յորմէ ոչ մզեն իւղ: Այլ այս ամ̃ պտուղք, բաց 'ի նռանէ և 'ի ծաղկահամ ինչ խաղողոյ, զոյ, ստորին են յոյժ ք՟ զմերս · բայց սեխ նց՟ ազնիւ է · որում երեք տեսակք են · մի տեսակն է փոքր գրեթէ ՚ի չափ մեծ խնձորոյ · գոյն նր՟ դեղին համակ · քաղցրահամ և նրբակեղեւ · զոր առանց կեղեւելոյ ուտեն · երկ՟րդ տեսակն, զոր կոչեն սեխ ջրային, մեծ է ք՟ զհ՟որկ սեխս մեր և երկայնաձեւ · մէջ նր՟ երբեմն սպիտակ է, և երբեմն կարմիր, քաղցր իբրեւ զշաքար և հիւթեղ և զովացուցիչ · որ և չունի ամենեւին զվնասակար ինչ որակութի՟ · յայն սակս և ՚ի սաստիկ տօթագին ժմս մարթ է ուտել զայն անվտանգ · իսկ եր՟րդ տեսակն է հ՟որկ` նման թանձրակեղեւ սեխից Իտալիոյ :

Բաց ՚ի հ՟որկ պտղոց աստի` են անդ և այլ ազգի ազգի պտուղք, որք առ մեզ ոչ երեւին · յորս նշանաւոր են հետագայքդ : Մանկլէ · է պտուղ անուշահոտ, մէջ նր՟ դեղին և հիւթալից և թթու գրեթէ ո՟պ ըղլեմոն, կորիզ նր՟ է դեղ ազդու ը՟դդէմ հոսման արեան : Լէթքի · է պտուղ ՚ի չափ մեծութե՟ թարմ ընկուզոյ, այլ երկայնաձեւ և մաշկապատ · մէջն կակուղ և ջրալից և առ փոքր մի թթու, այլ ախորժահամ · զոր չորացուցանեն ո՟պ մեք զշլոր, և ուտեն ը՟ ամ՟ն ողջոյն սովորաբար յորժամ ըմպեն զթէյ, այն է` չայ : Լուձե, կմ՟ Լօվիէն այ՟ ակն վիշապի · է պտուղ բոլորաձեւ նրբակեղեւ և մոխրագոյն · այլ ՚ի հասանելն փոխի ՚ի դեղին · մէջ նր՟ ջրալից է և թթու և ՚ի ծայրագոյն աստիճանի ցուրտ, այլ անվնաս : Սեղէք · պտուղ որ լինի յամ՟ տեղիս ՚ի չինաց Տ՟ի · այլ համք և որակութիւնք նց՟ պէսպէս են ը՟ պէսպիսութե՟ դրից տեղեացն : Որք լինին ՚ի հարաւային կողմանս ազնիւ են յոյժ նրբակեղեւ թափանցիկ և կարմրագոյն մինչդ յորժամ հասանեն · ձեւ նց՟ է ձուաձեւ, այլ մեծ քան զհ՟որկ ձու · կորիզքն սեաւ և տափարակ · մէջն փափուկ ջրալից և քաղցր, որ ինքնին հալի ՚ի բերանն զոր սովորաբար թարմ ուտեն · բայց և չորացուցանեն · և յայնժամ ը՟ օրինակի մերումս թզոյ` առ սակաւ սակաւ գոյանայ ՚ի վ՟ր նր՟ ալեւրանման գոյացութի՟ քաղցր : Բայց հիւսիսայինքն առ փոքր մի պինդ են և առաւել մսալից և տեւական, և համ նոցա չէ այնչափ քաղցր :

Ծառ Ճարպոյ կմ՟ Ճարպաբեր, է տեսակ ծառոյ, որոյ ոստք թիւրաթեկ են · տերեւքն սրտաձեւ, կարմիր և շողշողուն · իսկ պտուղ նր՟ գոյանայ ՚ի մէջ պարկաձեւ պատենի բաժանելոյ յերիս շերտս · որ ՚ի հասանելն ինքնին բացեալ լինի ը՟ մէջ` ը՟ օրինակի պատենի շաղգանակաց · և յայնժամ երևին 'ի նմ՟ երեք ընկոյզք սպիտակք կաղնաչափք մեծութ՟բ · որք 'ի հետուստ գեղեցիկ իմն երևին 'ի մէջ կարմրաժեռ տերևոց ծառոյն · և ծառն իսկ ողջոյն թուփ փունջ մի 'ի կարմիր և 'ի սպիտակ ծաղկանց կազմել : Այլ զարմանալին այն է, զի սպիտակ գոյացուին ք՟ միջուկն արտաքին պատենին գունով հոտով և այլ ամ՟ իրօք նման է Ճարպոյ անասնոց · յայն սակս և ծառն անուանի Ճարպաբեր · և յիրաւի՝ զի չինացիք գործեն անտի Ճրագս, ոպ՟ մեք 'ի Ճարպոյ : Եւ առ 'ի ձուլել անտի Ճրագ, շատ է լուծանել զայն հրով, որպէս լուծանեմք զՃարպ անասնոց · բայց պիտոյ է խառնել 'ի նմ՟ և փոքր մի իւղ, զի լաւ ևս կակղասցի և զանգեսցի, և հեշտեաւ ձուլեսցի · բայց ոչ գիտեն զտել · և փխկ բամբակեայ պատրուգի դնեն չիւղ փայտի պատեալ թելիւ կնիւնոյ, որ թէպէտ դիւրաւ վառի, այլ աղօտացուցանէ զլոյս բոցոյն, և արձակէ ծուխ և հոտ ծանր · իսկ եթէ զտէին, և դնէին 'ի նմ՟ պատրոյգ բամբակի, Ճրագք նց՟ ոչ ինչ ը՟հատ լինէին 'ի մերոցն :

Նունուֆար կմ՟ Նենուֆար · զոր չինացիք Պէթսի կմ՟ Փէթէլի կոչեն · է բոյս որ բուսանի 'ի ջուրս · բուն նր՟ է սպիտակ 'ի ներքուստ, իսկ արտաքուստ կարմրագոյն, և բաժանի 'ի բզմ՟ ոստս · համ նր՟ նման է կաղնոյ ք՟ ֆնտըխի : Ասեն չինացիք թէ այն բոյս ունի զօրուն՟ կակղացուցանելոյ զպղինձ · զոր և հայրն քօնթի հաստատէ փորձիւ · զի պատմէ թէ 'ի հասանել իւրում 'ի համթշու քղք՟, ոմն 'ի չինաց առեալ փոքր ինչ յարմատոյ այնր բուսոյ, եդ 'ի մէջ նորա պղնձի դրամ մի թանձր · և տուեալ զայն միում, որք էին ը՟ հօրն քօնթեայ, ասաց նմ՟ ծամել · զոր իբրև արար նա՝ զոյգ ը՟ արմատոյն և պղինձն մանրեցաւ 'ի բերան նր՟ : Չինա · զոր չինացիք Լափսթամ կոչեն, կմ՟ ը՟ այլոց Ֆօլիմ · է բոյս ինչ՝ որ ը՟ ասելոյ ոմանց բուսանի միայն 'ի սուչուէն նհնգի, և 'ի շրջակայս լեփինկայ · այլ պօվինոս ասէ թէ գտանի և յիւնան, 'ի չէնսի, 'ի չանսի և 'ի լէաթօնկ յանտառս սոՃեաց · իսկ վայրենին, զոր բերեն առ մեզ, բուսանի անխտիր ը՟ ամ՟ տեղիս յերին չինաց : Այս բոյս արձակէ ոստս կմ՟ բազուկս փշոտս · որք Ճապաղին ը՟ երկիր և պատատին զծառովք զօրէն բաղեղան · տերևք նր՟ մեծ են և կանաչ և սրտաձև՝ նման ը՟ իմիք ջղախոտոյ · բերէ գեղձն ոսկեգոյն կողակս, իսկ արմատն սովորաբար է առոՃար իբրև զքաղուկ մանկան ·

կան, թիւրաթեկ, ոստաշէց· արտաքուստ առ սակաւ մի կարմրագոյն, իսկ 'ի ներքուստ դեղնախառն սպիտակ։ Բայց են՝ որք սպիտակ են և արտաքուստ· և սոյնք լաւագոյն են քան զկարմիրս, որպէս և ծանրունքն քան զթեթևս· չունի մասնաւոր ինչ հոտ։ Այս արմատ է զովացուցիչ և մաքրողական արեան· զոր բժիշկք եւրոպիոյ յաճախ 'ի կիր արկանեն 'ի բժշկութիւն ախտից պատճառելոց յապականութենէ արեան։

Ճին սէնկ· կամ Ճէնս էնկ· չինք կոչեն Փէգ սի· բոյս՝ որ սովորաբար բարձրանայ իբրև կանգնաչափ, կամ փոքր ինչ աւելի· բուն նորա թաւամազ ստուար իբր մատնաչափ, ուղիղ և անոստ մինչև 'ի գագաթն· իսկ 'ի գագաթան արձակէ տերևս սրածայրս, որք ձևանան 'ի ձև հովանոցի· և 'ի միջոյ տերևոց ելանեն ոստք· որք 'ի ծայրս բերեն մանուշակագոյն ծաղիկս սկահաձևս բազմաթերթս· ապա կարմրագոյն պտուղս բոլորակս ողկուզօրէն· և իւրաքանչիւր հատ պտղոյ ունի երկու կորիզս տափնաձևս· որք են սերմ նորա։ Արմատ այսր բուսոյ 'ի մէզ կոչի լօշթակ· տճնկ· ատամքեօքիւ· թ՟ մարդարմատ· որպէս և անուանս Ճին սէնկ, թարգմանի բոյս մարդկային կամ մարդոյ· զի ըստ իւրաց ինչ ունի զձև մարդկային մարմնոյ· իբր զի բաժանի յերկու ոտս, որք բերեն զնմանութիւն սրունից մարդոյ։ Այս արմատ՝ եթէ արժան իցէ հաւատալ չինաց՝ գերազանցէ զօրութեամբ զամենայն բժշկական բուսովք· համարեն առ նա իբր ընդհանուր դեղթափ ընդդէմ ամենայն ախտից· զոր յայն սակս կոչեն բոյս ոգելից· մաքուր ոգի երկրի· դեղ տուիչ անմահութեան· զի մաքրէ զարիւն, ցրուէ զվնասակար հիւթս խառնեալս յարեան, քաղցրացուցանէ զարիւն 'ի խժայէն աղի հիւթոց, նորոգէ զոյժն տկարացեալ յերկար խօթութենէ, զօրացուցանէ զստամոքսն· և որ առաւել է՝ բժշկէ զախտ թոքացաւութեան՝ որ է վէրէմ, և զշնչարգելութիւն ևն։ Բայց գոլով սակաւագիւտ և մեծագին, յայն սակս մեծատունք ևեթ 'ի կիր արկանեն զայն՝ եթէ հիւանդ իցեն և եթէ առողջ։ Հիւանդաց առ մի նուագ տան զհինգերորդ մասն միոյ ունկեայ· իսկ առողջաց, որք առնուն 'ի պահպանութիւն առողջութեան՝ զտասներորդ մասն միոյ ունկեայ· հատանելով զայն 'ի մանր մասունս, և եռացուցեալ ջրով այնչափ, մինչև երեք մասունք ջրոյն սպառեսցին, և մնասցէ միայն իբր սկահակ մի խահֆէի, և արկեալ 'ի նմա փոքր ինչ շաքար, տան ըմպել։ Երբեմն և ըզտերևն 'ի կիր արկանեն ըստ օրինակի թէյի ոչ նոյն չափով որով առնուն զԹէյն, այլ սակաւ: Լինի առ 'ի հովանաւոր տեղիս 'ի մասնաւոր սահմանի, ուր են լերինք երկայնաձիգ, և անտառք. 10 հզ̃ր ԹաԹարք կարգեալ կան 'ի ժողովել, որոյ ժմկ է միայն ձմեռն, ոչ Թողուն այլում ումեք. և առ 'ի զգուշուԹե՛ առանձին ցանկով զատուցեալ է տեղին 'ի քանդօն պ̃ուէ. և առաջի նորա միշտ շրջին պահապանք. զմ̃ ամենին 'ի մաքրատուն կայսեր չինու, որ առնու անտի երկու ունկի յիւրաքանչիւր ժողովողաց Թէյ հարկ, և զյաւելեալն գնէ, և ինքն անդրէն վաճառէ ժողովրդեան, մի կշիռն վաճառի 'ի չին՝ երից կշռոց արծաԹոյ. իսկ յեւրոպա հոլանտացիք վաճառէին երբեմն ը̃ կշռոյ ոսկւոյ, իսկ 'ի յետին ժմկս ոչ այնչափ ծանրագին. Թերևս զի փորձն երկար ժմկաց ոչ եգիտ զզօրուԹիւն ը̃ համբաւոյն. ասի ևս Թէ 'ի ձնալն երկար լինի ճճնկեր և կորուսանէ զիւր զօրուն̃, բ̃մ անգամ վճռկանք եւրոպեանց խառնեն ը̃ այն և զնինչին. որ է այլ բոյս, և առաւել հզ̃րկ:

Զայս բոյս ծանօԹացուցին 'ի գաղղիա դեսպանք չինայոյ Թագաւորին զոր բերին առ Լուտովիկոս ԺԴ̃: Հալուէ չինաց, այն է՝ եօտ աղաճը. է ծառ ինչ ազնիւ օտար 'ի հզ̃րկ անկոյ հալուէի, նման ձիԹենւոյ. բուն նր̃ բաղկանայ յեռատեսակ փայտէ. առաջինն՝ զորով անմիջապէս պատէ կեղևն, է սեաւ և ծանր, անուանեալ փայտ արծուէոյ կմ̃ Արծուէափայտ, ազնիւ յոյժ և սակաւագիւտ. երկրորդն սպիտակ և ԹեԹև կոչեցեալ Քալէմպուկ. իսկ երր̃դն՝ որ է 'ի մէջն բնոյ ծառոյն անուանեալ Քալամպայ այնչափ 'ի յարգի է առ հնդիկս, և ը̃ համօրէն ասիա, մինչև կշռով ոսկւոյ վաճառել զայն. հոտ նորա անուշակ միանգամայն և օգտակար դեղ զօրացուցիչ նուաղելոց և ուշաԹափելոց: Տերևօք նր̃ գիւղականք ծածկեն զյարկս բնակուԹ̃ իւրեանց. զոր վարեն և փ̃նկ սկաւառակի. մանրաԹելք տերևոցն նման են կանեփոյ կմ̃ վշոյ, որք պիտանացու են 'ի պէսպ̃ իրս: Զփուշս, որք են 'ի տերևան 'ի կիր արկանեն փ̃նկ բևեռաց: 'ի հատանել զոստս 'ի բնոյ նր̃ ծորէ հիւԹ քաղցր իբրև զմեղր. որ յետ սակաւ միոյ փոխի 'ի քացախ պատուական՝ մարԹ է ևս ուտել զփայտ ոստոյն, որ ունի զհամ շաքարեալ կիտրոնի:

Այլ յիմ̃ բոյսս չինու առաւել համբաւեալ՝ որ յաճախեալ է և առ մեզ, է բոյսն պատուական, զորոյ զտերև կոչեմք Թէյ. այն է՝ չայ ազնիւ զօրաւոր և սքանչելի, որոյ նման չիք այլ ուրեք: Այս բոյս է ծառ փոքրիկ կ՟մ մանունդ թուփ նման մերումս մրտենւոյ. թէպէտ և երբեմն առաւել աճէ և լինի ծառ մեծ. բուսանի ՚ի սերմանէ արկելոյ ՚ի հող 4. 5 մատնաչափ ՚ի խոր: Յետ երից ամսոց բերէ տերև առատ յոյժ. այլ յեօթներ՟դումն սակաւ. և յայնժ՟մ հերձատեն զբունն. և պատուաստեն ՚ի ն՟մ ընձիւղս, որք փութով աճեն. և իւրաքանչիւրն բերէ գրեթէ նոյնչափ, որչափ ծառն ողջոյն: Ծաղիկ ն՟ր է սպիտակ նման վայրենի վարդի. իսկ պտուղն կ՟մ սերմն պէսպէս է. զի ոմանց է ոլոռնաձև, և ՚ի միջի ունի հատս մանունս և դեղնագոյնս. ոմանց ՚ի չափ բակլայի. այլ ձևն՟ց այլ և այլ է. ք՟ բոլորակ եռանկիւնի և երկայնաձև. և ՚ի միջի ունի երկու կ՟մ երիս հատս կ՟մ կորիզս ոլոռնաձևս: Եւ լինի ը՟ բովանդակ աշ՟ն չինաց. բայց ոչ ը՟ ամ՟ տեղիս ունի զնոյն զօրութ՟ի և զպատուականութ՟ի. որք լինին ՚ի հովիտս կ՟մ ՚ի ստորոտս լերանց և ՚ի քարուտ տեղիս լաւագոյն են ք՟ որք բուսանին ՚ի դաշտս և ՚ի կակուղ տեղիս:

Նոյնպէս առաւել պատուական են, որք լինին ՚ի հիւսիսային ն՟հնգս, ք՟ որք ՚ի հարաւայինս: Յամին երիցս քաղեն զտերևն ն՟ր. նախ՝ ՚ի մարտի, յորժամ տերևքն մանր են քնքուշ և փափուկ, զոր չորացուցանեն ՚ի հովանաւոր տեղիս. և այն կոչի թէյ թագաւորական. իբր զի ծախի ՚ի պէտս ինքնակալին և արքունեաց ն՟ր և իշխանաց երկրին. զոր ոչ երբէք հանեն արտաքս յաշ՟է անտի իւրեանց. զեր՟կդն ժողովեն յապրիլի. և յայնժամ առաւել մեծ են և դալարեալք. իսկ եր՟դ անգամ ժողովեն ՚ի մայիսի և յունիսի: Զերկոսին զայսոսիկ նախ եդեալ ՚ի ծակոտկէն անօթս և կալեալ ՚ի վ՟ր եռացե՟լ ջրոյ մինչև քաջ տամկասցին ՚ի գոլորշեաց անտի ջրոյն. ապա սփռեն ՚ի պղնձի ափսեայս, դնեն ՚ի ներքոյ հուր մինչև ցամաքեալ չորասցին. յետոյ դնեն ՚ի կապարեայ տուփս, և քաջ խնուն զբերանն. ապա թէ ոչ՝ ը՟ երկար ՚ի բացի մնալով կորնչի բնական զօրութ՟ի ն՟ր, կ՟մ գէթ նուաղի: Գործածութ՟ի թէյին մուծաւ յեւրոպիա զառաջինն ՚ի հօլանտացւոց. յորոց էանց առ անգղիացիս, և անտի յայլ տեղիս: Ոմանք ջանացին զբոյս ն՟ր փոխադրել և յեւրոպիա. բայց մինչև ցայժմ ոչ լուաք թէ յաջողեալ իցէ:

Անուանի է և բամբակն առաս և ողնիւ, յորմէ գործեն ընտրագոյն բամբակի պաստառս նրբաթելս ՚ի հիացումն տեսողաց. և առաւել ք՟ զամ՟ յաճախեալ է անդ մետաքս ընտիր. մանզ թէ ը՟ առաւել հաւանական կարծեաց՝ անդ նախ սկսան գործել մետաքսեայ կերպասս, և անտի էանց 'ի պարս. իսկ 'ի պարսից սփռեցաւ յեւրոպիա: Ունի և ազգի ազգի համեմս, զ՛ր դարիճենիկ՝ որ է տառչին ազնիւ ք̃ զսէյլանի կղզւոյ. պղպեղ. եղեգն շաքարաբեր. կոճապղպեղ՝ այն է՝ զէնճէֆիլ. աղ, և այլ սէնապն համեմս և բոյս բժշկականս: Անուանի է և Չիքու կոչեցե̃լ ծառն, յորմէ բղխէ հռչակաւոր խէժն չինաց, զոր այլազգեաց բարբառով վէռնիճ անուանեմք. որով օծանեն զպախճապակեայ անօթս. և սկաւառակս, և դղրոցս այն է՝ զութի, փոքրիկ արկեղս և տուփս և զայլ այնպէս անօթս և կահս փայտեղէնս և պղնձիս: Այն խէժ նման է հալե̃լ խէժի որ ծորէ 'ի սոճւոյ ք̃ 'ի չամ ծառոյ. այլ չունի հոտ. յորժամ կամին օծանել ինչ նովաւ, խառնեն 'ի նմ̃ իւղ յաւէտ և նուազ ը̃ պահպանչելոյ նիւթոյ անօթոյն, զոր ունին օծանել:

Բաց յայլոց նորատեսակ արգասեաց գտանի 'ի չին և ազգ մի մամռոյ սպիտակ երբև զձիւն յաճախեալ ը̃ բովանդակ Չ̃ն, բայց առաւելապէս 'ի հուքվան և 'ի քանթօն. որ ոչ է գործ մեղուաց, այլ փոքրիկ իմն կենդանւոյ, որ չէ ինչ մեծ ք̃ զլու: Արդ՝ այն փոքրիկ որդն աներևոյթ կնճթաւ իւրով ծակէ ըզծառս, և ը̃ մտեալ 'ի նո̃ ծծէ զհիւթ նց̃. և փոխարկէ զայն 'ի մոմ սպիտակ. որ զօրէն արտասուաց ծորէ 'ի ծակտեաց անտի արտաքս. և գիւղականք ժողովե̃լ և արարե̃լ գնտակս, տանին 'ի վաճառ: Ցետոյ ժողովեն 'ի ծակտեաց անտի և զկենդանիս, և պահեն. առաջ 'ի գարնան արկանեն զսերմն նց̃ առ բնովք այնց ծառոց, որք յարմարաւոր են բնութե̃ նց̃. ուր կենդանացեալ, ելանեն 'ի ծառն և սփռին յամ̃ ոստս նր̃. և վերստին սկսանին զվերոյգրեալ գործ իւրեանց, յոր անաշխատ վայելեն չինք:

Ունի և արօտս խոտաւէտս և ընտանի անասունս բազումս. զ՛ր անդեայս եզանց և կովուց. և հօտս ոչխարաց, ոչխարք նր̃ ը̃ մեծի մասին դմակաւորք են. և ձիս և ջորիս և ուղտս. ձիք չինաց փոքր են և տգեղ, տկար և երկչոտ. և զի չունին պայտ յոտս, եղնգունք նց̃ փութով մաշե̃լ եղծանին. և այնպէս զկնի հինգ կմ̃ վեց ամաց գլխովին անպիտան լինին: Խոզք չինաց առհ̃րկ սեաւ են և կարճոտն, այնչափ զի փոր նց̃ հասանէ 'ի գետին. և թէպէտ չեն այնչափ պարարտ ո̃զ առ մեզ. այլ միս նց̃ համեղ է: Ունի և զամ̃ սեռակս ընտանի հաւու յ. յորս են, որք թէ̃պ

նոյ

նոյնատեսակ են ը̄ մերումս․ բայց արտաքին ձեւով այլազան: Են անդ և վայրենի չորքոտանիք, զո̄ գայլ արջ խոզ և այլ պէսպէս գազանք․ և նապաստակ եղջերու աղուէս և տեսակ մի եղջերուի՝ որ առ պորտով ունի մաշկեղէն պարկ, յորում գոյանայ հիւթ ինչ հոտաւոր յոյժ՝ որ թուի լինել մուշկ:

Ունի և ձուկն առատ 'ի ծովէ 'ի գետոց և 'ի ջրանցից․ որ և է կերակուր անհամար բազմութե̄ գետափնեայ բնակչաց: Չինացիք որսան զձուկն ոչ միայն կարթիւ և ուռկանաւ ո̄պ առ մեզ, այլ և 'ի ձեռն մեծամեծ թռչնոց ինչ․ զորս վարժեն 'ի ձկնորսութե̄․ ո̄պ առ մեզ վարժին շունք և բազէք յորս թռչնոց և չորքոտանեաց: Տարեալ արձակեն զնո̄ առ գետովք և լճիւք, որոց նոյնժամայն թռուցեալ սուզանին 'ի ջուր․ և երկայնաձիգ կտուցաւ իւրեանց կալեալ զձուկն զմիջաց, բերեն յափն գետոյն առ տեարս իւրեանց․ և ասի թէ յորժամ մեծ ձկան հանդիպեսցին, զոր մին միայն ոչ է բաւական հանել 'ի ջրոյ անտի, այլք դիմեն յօգնութիւն նմա: Եւ յորժամ տեարք նո̄ տեսանեն զնո̄ վաստակեալս, փոքր մի հանգիստ տան նո̄․ բայց կերակուր ոչ տան․ մինչև հարուստ մի որսասցեն․ և ը̄ բոլոր ժամն որսորդութե̄ արկանեն 'ի պարանոց նո̄ ուլանոց, այն է՝ թամանոյ․ զի մի կարասցեն կլանել զփոքր ձկունս, և յագեսցին․ և ոչ ևս դիմեսցեն նովին յօժարութ̄ յորս:

Գտանին 'ի չին և բովք ոսկւոյ և արծաթոյ սնդկի պղնձոյ անագի և երկաթոյ․ բայց բովք ոսկւոյ կան մնան անգործ, զի կա̄մ սակաւ պտղաբերեն մինչև առաւելուլ ծախուց ք̄ զօգուտն, և կա̄մ զի չատ համարին զոսկին, զոր գետք ինչ և ուղխք բարձեալ բերեն խառն ը̄ աւազոյ և ը̄ տղմոյ: Նոյնպէս և արծաթահանք նո̄ անգործ լքեալ կան առ նուազութե̄ արծաթոյ: Են անդ և տեսակք ինչ ականց, և մագնիս, և քարահանք պատուական մարմարիոն քարանց: Այլ այս ա̄մ բովք առ ոչինչ են առ համեմատութ̄ պատուական հողոյ, յորմէ գործեն յախճապակի, այն է՝ փառֆօռի երկատեսակ կա̄մ եռատեսակ․ և անտի չինեն պէսպէս անօթս, որք 'ի յարգի են ը̄ ա̄մ տեղիս․ և են մի 'ի գլխաւոր վաճառաց չինու:

Են 'ի չին և հրաբուղխ լերինք, որք երբեմն այնպէս բորբոքին, մինչև զարհուրելի մրրիկս յարուցանել 'ի շրջակայ վայրս: Այլ և ջերմուկք․ յորոց ոմանք 'ի վերին երեսս ցուրտ են․ իսկ 'ի խորս անդ ջերմ․ և ոմանք բոլորովին ջերմին, որք և եռան իբրև կաթսայ նայ յեւանդեսն. մեծ բերմք 'ի շրջակայ բնակչաց 'ի նմ եփեալ հասուցանեն զկերակուր խուրմանց: Են անդ և լիճք, յորս ասեն թէ փայտն փոխի յերկաթ, կամ յայլ նիւթ կարծր: Եւ 'ի հայնան կղզի ասի թէ գտանի ջուր, բայց չգիտեմ թէ գետ իցէ, եթէ լիճ. ուր թէ ընկեսցի մանաւոր ինչ ուսուկ ձկան, առ ժամայն քարանայ: Բայց այս, որպէս և փոխարկութիւն փայտի՝ յերկաթ դժուարին ինչ թուի:

Է. Վաճառք Չինաց։

Գլխաւոր վաճառք բաց յարդեանց երկրին, որք են թէյ, ոսկի, փայտ քաղամպայ, սաք, դեղունչ. այն է՝ պուռնօլթի. չինայ կամ քինա ևն, են և պէսպէս արուեստակերտք. որպէս անօթք յախճապակեայք, զոր թէպէտ և 'ի ճապոն և այլ գործեն, այլ չինացւոց լաւագոյն է քան զնոցայն որպէս և քան զայլոց ազգաց՝ մաքուր ազնիւ նուրբ փայլուն և թափանցիկ. և այլք ազգի մետաքսեայ կերպասք միագոյն, և գունազեղ նկարեալ. այլև դիպակք ոսկեթելք և արծաթաթելք. և դերազանց բամբակի պաստառք նրբահիւսք, և մնդուսք, այն է՝ ալիւրինճիւկ անօսրունք պարզք և ծաղկեայք և ծաղկանկէնք երբեւ հիւսուածոյք. և պատկերք նկարեալք 'ի թուղթս զարմանագեղերանգօք, (այլ զուրկք յամ արուեստից.) նաև 'ի հայելիս. բայց հայելիքն են յեւրոպիոյ. և հովահարս, այն է՝ եէլփազէ՝ ազնիւս և գեղեցիկս. և հովանոցս, որպէս փոքրիկ չատըրս. և այլ պէսպէս արհեստակերտս. որպէս և զնոյն արուեստական գործածս 'ի վառօթոյ:

Զվաճառականութիւն չինու մարթ է բաժանել 'ի ներքինն և յարտաքին: Ներքինն է առևտուր, զոր նոքինք նր առնեն ընդ միմեանս. զի որպէս դիրք և օդ նոցա և հող երկրին պէսպէս են ըստ լերանց, դաշտաց, ձորոց և հովտաց, և ըստ չորութեան և խոնաւութեան, ցրտութեան և ջերմութեան. նոյնպէս և բերք նոցա զանազան են. զի են ինչ ինչ 'ի միում նահանգի, յորմէ զուրկ է միւսն. կամ ինչ ինչ առատ է 'ի միումն, իսկ յայլում նուազ. որպէս քանթօն նահանգ 'ի միում ամի բերէ ոսկի և մետաքս այնչափ, որչափ նահանգն փէքինու ընդ ամս տասն ոչ բերէ. և ընդ հակառակն նահանգն փէքինու բերէ ցորեան և մրգացորեան առաւել քան զքանթօն: զնոյն է ասել և վասն այլոց: Յայն սակս հարկ է նոցա զպէտս իւրեանց 'ի միմեանց լցուցանել. և այս լինի է պատճառն, զի գետք և ջրմուղք չինու միշտ լի են նաւակօք, որ երթան և գան 'ի նահանգէ 'ի նահանգ, և 'ի քաղաքէ 'ի քաղաք։ Իսկ արտաքինն է առեւտրութիւն, զոր առնէ ընդ օտար ազգս։ Այս վաճառականութիւն ընդ արտաքինս ընդ բազում ժամանակս սակաւ էր յոյժ և գրեթէ ոչինչ, 'ի պատճառս արհամարհ և առ ոչինչ համարելոյ չինաց զայլ ամենայն ազգս, ընդ որս անարժան համարէին անձանց առեւտրութիւն առնել. և անհնարին ծանրաբեռն կապալս և հարկս եդեալ էին 'ի վերայ նոցա։ Բայց իբրև կալան Թաթարք զինքնակալութիւն նոցա, թեթևացուցին զկապալս, բարձին և զարգելս. որով այնուհետև մեծապէս ընդարձակեցաւ արտաքին վաճառականութիւն չինաց ընդ ցամաք և ընդ ծով։ Եւ ինքեանք իսկ որք յառաջագոյն ոչ ելանէին արտաքս քան զսահմանս իւրեանց, սկսան այնուհետև առնել նաւարկութիւն սակս վաճառականութեան 'ի հնդիկս, 'ի ճաբօն, 'ի ճեաւա կղզի, 'ի փիլիփպինեանս և յայլ կղզիս հնդկային ծովու։ Ձև նաւուց նոցա փոքր մի այլազան են 'ի նաւուց եւրոպացւոց. զի առաջք և յետոյք նոցա են տափարակ քառակուսի. և 'ի ներքսակողմն ունին բազում անջրպետութիւն բաժանեալ 'ի խորշս խորշս առ 'ի զետեղել 'ի նոսա զվաճառս այլևայլ վաճառականաց։ Առագաստք նոցա են փսիաթեայք ծանրաշարժք, առ որ ոչ սակաւ աշխատութիւն պէտս է 'ի պարզել և 'ի ժողովել սակս կարկամութեան. այլ ամուր և դժուարահերձ։

Ընդ ցամաք ունի առեւտրութիւն ընդ քօրէայ. որոյ ընակիչք, որք թողին իշխանել 'ի թաթարաց՝ այժմ հարկատու են չինաց։ Վաճառականք սոցա ամի ամի երկիցս երթան 'ի փէքին, այսինքն 'ի մարտի և յօգոստոսի. և տանին անդր թուղթ հասարակ 'ի մեծամեծ թերթս, զոր դնեն 'ի լուսամուտս տանց փոխ ապակեաց. և այլ թուղթս ոսկեզօծս և նկարէնս. հովահարս. ծըխախոտ ազնիւ, որ 'ի յարգի է 'ի փէքին. պաստառ բամբակի. և մորթս. այլև ազգ մի աղած ձկան, զոր որսան 'ի ծովս ճաբօնայ. բայց տանին անդ և դրամս, զոր ստանան յեւրոպացւոց. վասն զի արգելեալ է նոցա առնել առեւտրութիւն 'ի չին լոկ փոխանակութեամբ իրաց։ Իսկ ինքեանք առնուն 'ի չինաց՝ թէյ, մետաքս ազնիւ. և պէսպէս մետաքսեայ կերպասս. յախճապակի անօթս և պղինձս։ Ընդ պուխարացւոց, մանաւանդ փոքուն պուխարիոյ. որք տանին 'ի չին բուստաս, որ 'ի յարգի է առ նոսա, և անդամանդ այն է՝ էլմաս անգործ, բայց 'ի ստորին աստիճանի, և այլ տեսակս հասարակ և դիւրագին ականց. վասն զի սակաւք գտանին առ չինս, որք յօժարեսցին գնել մեծագին ականս. զի առաւել պատուական է յաչս նց՟ բուստ վարդագոյն, ք՟ զյակինթ կարմիր. տանին և ոսկեփոշի կմ՟ մանրիկ հատս ոսկւոյ, զոր ժողովեն 'ի հեղեղատաց անտի պուխարիոյ: Եւ փոխարէն առնուն 'ի չինաց մետաքսեայ կերպասս, Թէյ, ծխախոտ, յախճապակեայ անօթս, արծաթ, կաշի 'ի պէտս կօշկաց, որ գայ 'ի չին 'ի մոսկովաստանու. և մորթս պէսպէս վայրենի էրէոց, որք նոյնպ՟ս 'ի մոսկովաց գնան անդր, այլև բամբակի պաստառս, և գիպակս եւրոպիոյ, զոր տարեւ՟ վաճառեն ղալմուխաց:

Առնեն չինացիք առևտուրս և ը՟ Թաթարս, որք հարկատուեն նց՟, այլ համարեալ են իբրև ազգ օտար. տան նց՟ Թէյ, և գեղունչ. այն է պուանօթի և այլ իրս. և 'ի նցնէ առնուն ոչխար, եզն, կով. և մորթս վայրի էրէոց. և առաւել ք՟ զամ՟՝ զնախայիշատակեր՟ ջին սէնկ զարմատն և զտերև նր՟. որ բուսանի 'ի Թաթարաստան չինաց 'ի քարաժայռս լերանց: Իսկ ը՟ հնդիկս չունին չինացիք առևտուրս ը՟ ցամաք. վս՟ զի յայն կողմն են լերինք անմատոյցք և աւազուտք դժուարակոխք, ը՟ որս դժուարին է յոյժ ճնպ՟րհորդել, այլ միայն ը՟ ծով: Վս՟յ ցամաքային վճ՟ռկանութիւն չինաց սակաւ է:

Իսկ ծովայինն ծաղկեալ է յոյժ և ը՟արձակ, զի ձգի գրեթէ ը՟ ⊖ ամ՟. որ և հիմնեալ կայ 'ի մետաքսեայ կերպասս, 'ի Թէյ, 'ի յախճապակի անօթս, և յայլ պէսպ՟ս արուեստակերտս, զորս ⊖ն չինաց մատակարարէ այլոց: Իսկ ինքն ը՟ունի 'ի նցնէ՝ այ՟ 'ի ճապոնացւոց ոսկի և պղինձ. 'ի պատավիոյ կմ՟ 'ի ճաւայ կղզւոյն՝ պղպեղ և այլ պէսպ՟ս համեմս. զի Թէպէտև 'ի չին լինի պղպեղ և այլ համեմ, այլ սակաւ. որ չէ բաւական բնակչաց նր՟. 'ի շիամայ փայտս 'ի պէտս ներկարարաց և վէռնիքձ. 'ի դունգինոյ մետաքս, 'ի քօշինչինայ շաքար և ոսկի: Իսկ յեւրոպացւոց՝ որպ՟ 'ի շվէտաց, 'ի դանեաց, 'ի հոլանտացւոց, յանգղիացւոց, 'ի գաղղիացւոց և 'ի փորդուգալաց ը՟ունի դրամս, և ձոյլս արծաթոյ և այլ իրս. որպ՟ անագ, կապար, երկաթ, չուխայ և այլ աստուեղէն կերպասս. զի չինացիք զատ իւրեանց անգործ վաճառեն. բուստ, գոճազմ՝ այն է՝ քէհրիպար, ապակի, հայելի, ժամացոյցս ևն, զորս տանին անդ եւրոպացիք ոչ միայն յեւրոպիոյ, այլև 'ի ըն՟չն կողմանց հնդկաց ⊖ի, ուր ունին կալուածս: Իսկ ինքեանք առնուն 'ի չինաց Թէյ, ծաղկեայ և անծաղիկ կերպասս մետաքսեայս. բամբակի պատառս նրբաթելս, և ծնդուսս պէսպէս. յախճապակի անօթս. և այլ ազգի ազգի արհեստակերտս, որք յառաջագոյն 'ի յարգի էին յոյժ և առ Եւրոպացիս. այլ այժմ ոչ նոյնպէս. վ՟ս զի և ինքեանք գործեն զնմանակս ն՟ց. Թէպ՟տ ը՟ս երանգոց և ը՟ս ազնուութե՟ նիւթոյն անհամեմատաբար սուղեն ք՟ զՉինացւոցն: Վ՟յ այժմ առաւելուե՟ Եւրոպացւոց ը՟ Չինս չէ այնչափ ինչ ծախել. զի բաց 'ի Թէյէն գրեթէ այլ ինչ իրաց չունին պէտս 'ի ն՟ցէ: Այս ա՟մ վաճառք, զոր քսան կամ երեսուն նաւք բարձեալ բերեն յԵւրոպիա, ը՟ս հաշուէին ոլիչինկայ հասանէ ցերկու միլիոն և ինն հարիւր հազար վէնետ-կեան ոսկի դահեկան. յորմէ մեծ մասն ծախի 'ի Թէյն. բայց այժմ կարծեմ թէ ոչ հասանէ 'ի նոյն չափ: Իսկ մուսկովք առնուն 'ի Չինաց մանր մորթաքիսս, և ձոյլս ոսկւոյ. և թէպէտ արգելե՟լ է յոյժ Չինաց վաճառել ոսկի օտարաց, սակայն նոքին իսկ մանտարինք վաճառեն գաղտ որչափ և կարեն: Առնուն և մետաքսեայ կերպասս՝ և մետաքս անգործ. և բամբակ, բամբակի պատառս սպիտակս և նկարէնս, և թուղթս ծաղկեայս, և դեղունչ, շաքար, կոճապղպեղ, խաչնդեղ՝ որ է ռէվէնտ, և այլ պէսպ՟ս դեղորայս և համեմս: Իսկ ինքեանք տանին անդ մորթս վայրի էրէոց, ո՟պ սամոյր, քաքում, աղուէս և սպիտակ գայլս, որք գտանին 'ի Սիպերիա առ Լենայ գետով, և այլ պէսպէս մորթս:

Նաւք Եւրոպացւոց երթան միայն մինչև 'ի Քանթօն ք՟ղք, բայց ոչ սակաւ վիշտս և տառապանս կրեն ն՟ք անդ 'ի մաքսապետաց և 'ի պաշտօնէից ն՟ց, այլև 'ի վերակացուաց կարգելոց 'ի վ՟ր օտարաց, եթէ առատ պարգևօք ոչ լցուսցեն զքաղց անյագ ագահութ՟ն ն՟ց. Թող զծանրաբեռն կապալս և հարկս, զոր բռնադատօրէն վճարել տան մտանելոյ 'ի նաւահանգիստ ն՟ց: Յառաջագոյն կարող էին 'ի Քանթօն ք՟ղքէ անցանել և 'ի ներքսակողմն ցոր վայր մարթ էր նաւարկել ն՟ց ը՟ գետ. այլ յետոյ սակս դիպուածոց ինչ արգելին Չինացիք չերթալ անդր ք՟ զՔանթօն և ոչ քայլ մի ոտին. ը՟ նմին բարձին և զազատութին, զոր ունէին Եւրոպացիք 'ի ք՟ղքի անդ. և սահմանեցին ն՟ց առանձին տեղի բնակութե՟ մեկուսի 'ի բուն բնակչաց ք՟ղքին, ը՟ որս ոչ կարեն առնել հաղորդակցութ՟ն ինչ, այլ միայն ը՟ վերակացուս վճ՟ռկանութե՟, և ը՟ ոմանց վճ՟ռկանաց:

Վ՟ս վճ՟ռկանացն Չինու այսպ՟ս համբաւք հնչին. զի ամանք գովեն զնա իբր արդարակորովս և անխարդախս յամի • և թէ չունին նք սովորութին երկար ժամ արկանել վաճառուց իւրեանց, այլ միանգամայն ասեն զգին և զարդար գին նց̃, և այնուհետև այլ ինչ ոչ խօսին: Իսկ լօքէր անգղիացի, որ անձամբ էառ զփորձ նց̃ 'ի Քանթօն քղք, և այլք ոմանք յեւրոպացւոց զնկ̃ին վկայեն, զի սուտ թէ անհնարին խորամանկութբ դաւաճանեն 'ի կշիռս և 'ի չափս յորժամ կանգնաւ չափեն, այլև 'ի վաճառելն իւրս, մինչև զհողն' ոճ սուխ, փնկ ոսկւոյ վաճառել • և դժուարին է յոյժ ըմբռնել զխաբէութին նց̃ : Վ̃յ եթէ ոք յօտարազգի վաճառականաց 'ի ձեռն չունիցի միջնորդ, ք̃թ թէլլալ հաւատարիմ • որչափ և արթուն իցէ, անտարակոյս դաւաճանի 'ի նց̃է : Այլ ըստ աւելոյ սամօնի' գործ մեծ է գտանել անդ միջնորդ հաւատարիմ որ ոչ միաբանեսցի ը̃ վաճառողին 'ի դաւել զօտարականն • և յորժամ 'ի յայս դայ խաբէութին' ամենեքին չքմեղս ցուցեալ զանձինս, ծանրութբ իմն այնուեն, յայս նուագ չեղաք բարւոք մտադիր, և յայնմանէ եղև այդ վրիպակ • յայլ անգամ արասցուք ոպ̃ արժան է :

Գրեթէ զամ̃ ինչ կշռով վաճառեն մինչև և զձու, և և զըմպելիս և զկենդանիս հաւս • յորում ոչ սակաւ դաւաճանութիւս գործեն • զի պատմեն' թէ 'ի վաճառել նց̃ զընտանի հաւս կմ̃ զաղաւնիս, զսագ և զբադ' բռնի խծողեն 'ի բերան և 'ի կոկորդս նց̃ խիճս, զի առաւել ծանր կշռեսցեն : Երիտասարդ մի մեծազգի, որ թուէր լեալ ազգաւ անգղիացի, պատմէ թէ անդ 'ի չին գնոյ էառ ինքն խոզ բճ̃մ 'ի պէտս արանց նաւու իւրոյ • և իբրև ածան խոզք 'ի նաւ անդր, վաղվաղակի սկսան մի առ մի սատակիլ • և 'ի սակաւ աւուրս առհասարակ սատակեցան : Զայս համարի նա լեալ 'ի դաւաճանութէ վաճառողացն • որք գուցէ զկնի վաճառելոյ ետուն նց̃ վնասակար ինչ կերակուր : Եւ զկարծիս իւր հաստատէ այնու, զի ետես աչօք, որ յընկենուլ նաւավարաց իւրոց զմեռեալ խոզս 'ի ծովն • նք̃ յորոց գնեալ էր, հանէին 'ի ծովէ և առեալ 'ի նաւակս տանէին առ 'ի վերստին վաճառել այլոց իբր զենեալ 'ի սպանդանոցի, ոպ̃ համարի նա ինքն: Այլ զի ասէ լօքէր թէ այնչափ է ագահութի նց̃ և շահասիրութի, զի յօժարութբ առնուն զսատակեալ խոզ մի փնկ կենդանւոյ, եթէ սատակեալն իցէ փոքր մի մեծ և պարարտ ք̃ զկենդանին :

Սակս այսր անչափ շահասիրութէ չինաց 'ի ներքին առ-

առևտուրս իւրեանց բարձին զոսկի և զարծաթի դրամս. և փոխան նց՟ սահմանեցին պղնձիս. վս՟ զի օր ըս՟ օրէ այնչափ բազմացան սուտ և պակասաւոր դրամք, մինչև ուր ուրեմն գտանել դրամս ճշմարիտս և ամբողջս ։ Այս յաղագս դիպուածոց ինչ, զոր ոչ նշանակեն պատմագիրք, նուազեցաւ և պղինձն, և սկսան այնուհետև զգօվրի անուանեալ խեցի ծովային 'ի գործածել փխ՟ն դրամոյ ։ Այլ զկնի սակաւուց արգելաւ, և ել հրաման յինքնակալէն, զի պղնձի անօթք, որք գտանին 'ի բովանդակ Չի՟ անդ, տարցին յարքունիս 'ի հատանել անտի դրամս. բայց և այն անբաւական գոլով, ձեռն արկին և 'ի պղնձի կուռս. յորմէ ասի թէ 400 մեհեանք քանդեցան ։ Զայս ամ՟ 'ի պէշլինկայ առեալ գրեցաք. այլ ճշմարտութ՟ն նր՟ յառաջին պատմիչն է ապաստան ։

Այժմեան դրամք չինացւոց են կտորակք պղնձոյ բոլորաձև, թանձր և անհարթ. չունին կնիք կմ՟ պատկեր դրոշմեալ 'ի վր՟. այլ 'ի կողմն մի են չորք տառք, որք զանուն ինքնակալին նշանակեն. և 'ի միւս կողմն երկու. և 'ի մէջն ունի ծակ քառակուսի, ընդ որ անցուցանեն զնոսա 'ի թել ։ Իսկ արծաթն, զոր վարեն յառևտուրս չունի ձև դրամոյ. այլ է ձոյլ անձև, զոր կշռով տան միմեանց. յայն սակս ամ՟քն կրեն կշիռս հանապազ. և եթէ լիցի ինչ կասկած վս՟ անմաքրութեան արծաթոյն, հատանեն անտի մասն ինչ. և այնու ճանաչեն թէ գոյ 'ի նմա խառնուրդ ինչ թէ ոչ ։ Այլ այնչափ հմուտ են յայսմ, զի և լոկ շօշափմամբ և տեսութ՟բ, առանց հատանելոյ կարեն ճանաչել, մ՟նւնդ եթէ արծաթն ձուլեալ իցէ ըս՟ սովորական եղանակի նց՟ ։ Իսկ ոսկին, ո՟պ ասէ հայրն քօնթի և այլք՝ ոչ 'ի գործ ածի անդ իբր դրամ. այլ գնի և վաճառի զօրէն այլոց վաճառաց, զոր յաճախ գնեն եւրոպացիք, բայց 'ի ծածուկ յոյժ, զի ո՟պ ասացաք՝ խստիւ արգելեալ է հանել անտի ոսկի արտաքս. սակայն նոքին իսկ մանդարինք 'ի ծածուկ վաճառեն. յորմէ բզ՟մս շահին եւրոպացիք. զի անդ գին ոսկւոյ առ համեմատութ՟ արծաթոյն է իբր միոյ առ տասն. իսկ յեւրոպիա իբր միոյ առ հնգետասան. և այժմ առաւել. որով 'ի հարիւրոյ շահին 50 ։

Է. Բարք և Սովորութ՟ք Չինաց ։

Չինացիք իբր 'ի բզ՟մս ըս՟ դրից մարմնոյ կարճ են հասակաւ, կմ՟ լաւ ևս ասել միջահասակ. պլնդակաղի՛ ուժեղակ լայնադէմք փոքրակն և սեաւ, կարճունչք տափակաքիթ, որ գեղեցիկ համարեալ է առ նս. գոյն երեսաց նց սպիտակ ոպ մերս. բայց հսրկ ժղվդն, մնւնդ որք 'ի հիւսիսային և 'ի հարաւային կողմանս բնակին՝ թխագոյն են, զի զմեծ մասն կենաց 'ի բացի անցուցանեն 'ի տաժանակիր աշխատութիւնս : Մօրուք նց սովորաբար երկայն են այլ անօսր : Սափրեն զհերս գլխոյ փունջ մի հեւթ թողեալ 'ի յետս կուսէ. զայս սովորութիւն թաթարք մուծին 'ի նս առ 'ի նմանիլ ինքեանց. զի յռջ բնիկ չինացիք ոչ սափրէին զվարսս գլխոյ : Գրագէտք և վրդպք նց թոյլ տան եղնգանց մատանցն աճել որչափ բերէ բնութին. որ զզուելի իմն է առ մեզ. այլ նք զայն պարծանս համարին. զի նովաւ ցուցանեն թէ չեն պատաղեալ 'ի ծառայական և 'ի մեքենական գործս, այլ միայն 'ի ներվարժմունս իմաստութեանց : Ուշիմ են և նրբամիտ, սթափք և աշալուրջք. մեծագործ և ծանրախորհուրդ, և դանդաղ յորոշումն և 'ի գործադրութիւն իրաց. և կարի մտադիր 'ի պատշաճողութիւնս : Բզմք գովեն զնախանձ նց, զոր ունին 'ի պահպանութիւն արդարութեան և բարի վարուց. այլ ըստ այլոց աւելոյ՝ այն նախանձ զոր երևեցուցանեն չէ այնչափ հիմնեալ 'ի ներքին ճշմարիտ իրաւասիրութիւն և բարութիւն նց, քան թէ 'ի հնացեալ իմն սովորութեան, զոր ունին 'ի զսպել զամ արտաքին նշանս ախտից և կըրից. և մնւնդ յինքնահաւան ամբարհաւաճութեան : Քանզի ոմ հաստատեն թմ մատենագիրք, որք խօսին զնցէ, մեծամիտ են և ինքնահաճ ունելով զազգ իւրեանց 'ի համօրէն ազանց միջի իբր մի միայն ժողովուրդ ընտիր և իմաստուն՝ բնակեալ 'ի միջակէտն երկրի 'ի լինել գերագոյն օրէնսաւորոյ և տնօրէն համայն երկրի : Իսկ զայլ ամ ազգս համարէին վայրենիս, բիրտս և իբր մարդակերպ անասունս ցանեալ և ցրուեալ յեզերս 'ի խորշս երկրի իբր դիրտս և յաւելուածս մարդկեղէն բնութեան. յոյր սակս և օրէնս ունէին չտանել բնաւ հաղորդութին ընդ օտար ազգաց. անվայել համարելով անձանց ընդ այնպիսի յետին սեռլեքորս ունել ինչ կցորդութիւն : Վն այնորիկ յորժամ զառաջինն տեսին զեւրոպացիս զգօնս քաջավարժս յամ գիտութիւնս և յարուեստս, յապուշ կրթեցան, ուստի՛ է ոց ասէին բզմ զարմացմամբ, այսչափ զգօնութիւն և իմաստութիւն, որոց չէ երբէք ընթերցեալ զգիրս մեր և ոչ զերկիր մեր տեսեալ, գոլով այսչափ հեռի 'ի մէնջ : Եւ թէպէտ յետ այնորիկ առաջան վարկումն ինչ զեւրոպացւոց․ բայց միշտ ստորին ունելով զնս՟ ք՟ զինքեանս․ իսկ վ՟ն այլոց ասիական ազանց ոչ փոխեցին զկարծիս իւրեանց․ ուստի իբր առակ է առ նս՟, թէ հոլանտացիք, որովք ճանաչեն զեւրոպացիս՝ միականի են․ իսկ այլ ամ՟ ազգք կոյր․ ինքեանք միայն երկու աչս ունին։

Խորամանկ են յոյժ եւ նենգամիտ եւ ծայրագոյն կեղծաւորք․ որք եւ այնչափ քաջավարժ են ՚ի պատրուճակել առ արտաքս զկրից յարձակմունս, եւ անկիրս եւ բարեկեցիկս ձեւանալ առ երեսս, զի թէ ոք չիցէ երկար փորձիւ եւ հմտութ՟ տեղեկացեալ զներքին բարուց նց՟, հաստատութ՟ դնէ ՚ի մտի, թէ ամ՟ գործողութիւնք նց՟ եւ գնացք անկեղծ են եւ կանոնաւորեալ առաքինութ՟։ Վ՟ն զի կենակցութի՟ նց՟ եւ ք՟ղքավարութի՟ քաղցր է, ազնուական եւ վայելուչ, այլ լի մօրգելոյշ շողոմութ՟։ Իսկ ՚ի ներքուստ այր իւրաքանչիւր միշտ հետամուտ է եւ ուշադիր ՚ի զննել զյօժարութի՟ եւ զպերութի՟ բնութե՟ ընկերին, եւ զխախտման նր՟ ՚ի գործս իւր, զի ըստ այնմ կեղծաւորեալ, որսասցի զնա։ Յորժամ ըդ՟իմակս ինչ կրեն յումեքէ, առ ժամն ծածկեն առ արտաքս զամ՟ կիրս բարկութե՟, խաղաղ եւ անվրդով երեւեցուցեալ զանձինս․ եւ սպասեն դիպօղ ժամու․ յայնժամ ապա յեղակարծումն թափեն զծածկեալ թոյն իւրեանց ըստ օրինակի ոխակալ ուղտուց։ Ագահ են յոյժ եւ անհնարին շահախնդիր․ վյ՟ եւ աշխատաւորք եւ ժրաջանք ամ՟քն առհ՟րկ․ չիք առ նս՟ տեսանել գստարկապորտս կմ՟ անգործս։ Ա՟ք զամ՟ փոյթ իւրեանց ունին ՚ի նիւթական բազմաշահ արուեստս․ իսկ տեսական եւ ազատական արուեստք՝ որպ՟ տաղաչափութի՟, ճարտասանութի՟, երաժշտութի՟ եւ այլ այսպիսի արուեստք եւ մակացութիւնք իբր անօգուտ՝ առ ոչինչ համարեալ են առ նս՟, թէ ոչ առ ամենին, գէթ հասարակաբար․ որք եւ միշտ ունին ՚ի բերանս իւրեանց զայս բան՝ Առ ինչ օգուտ է․ զի ամ՟ գործոց մարդ՟ թէ եւ բովանդակ կենաց նց՟ առաջին եւ վերջին կանոն է լոկ շահասիրութ՟։ Յայն սակս իբր անհնարին թուի չլինել ՚ի նս՟ ստախօսութե՟ եւ խաբէութե՟․ որով ճշմարտի եւ նախայիշատակեալ բանն յօքերայ անգղիացւոյ, զոր գրէ վ՟ն դաւաճանութե՟ց վաճառականացն չինաց։

Կանայք չինու իբր ՚ի բ՟գ՟ մս են փոքրակն, կարճունչ եւ սեւահեր․ եւ ոտք նց՟ մարդ՟ մեծամեծ ոտկնաց տարապայման փոքր․ վ՟ն զի անդէն ՚ի ծնանիլ նց՟ սնդեն զոտս ուժգին, եւ ըստ աճելոյ ամանց՝ ապուցանեն նց՟ եր-

երկաթի կօշիկս · զի մի՛ ընդ աճել հասակին և ոտք նոցա մեծասցին: Վասնորոյ ոտք երեսնամեան կնոջ չէ ինչ մեծ քան զոտս եւամեան տղայոյ · իսկ սրունք նոցա ընդհակառակն ստուար են և բոլոր մարմինն յոյր և փափկասուն. ոչ կարելով նոցա համարձակ շրջել և գործել · որով աւելորդ հիւթք մարմնոյ և թանձրամասնութիւն նոցա մաշեսցին, որ ըստ օրէ յօրանան: Սկզբնապատճառ այսր տարապէպ սովորութեան նոցա, ըստ ասելոյ ոմանց՝ է լոկ գեղեցկութիւն · զի ոտք փոքր գերագոյն գեղեցկութիւն համարեալ է առ կանայս չինաց · նմանապէս և պարարտն լինել և մսալիր, և փոքրաչին և կարճռունչ և մեծականջ: Իսկ ըստ այլոց՝ է տարապայման կասկած և նախանձաւորութիւն արանց, զոր կրեն զկանանց իւրեանց · յայն սակս՝ ասեն զի մի՛ կարասցեն նոքա համարձակ շրջել և երթալ ինքնին ուր և կամեսցին, զայս հնարս գտին · որ յետոյ էանց 'ի սովորութիւն, և 'ի գեղեցկութիւն:

Տիկնայք մեծատանց գրեթէ ոչ երբէք ելանեն 'ի հրապարակս · իսկ թէ երբէք ելանեն, ընկերակցութեամբ բազմաց չքնաղ համեստութեամբ · միշտ պահեալ ունելով զձեռս 'ի լայն և յերկայն թեզանիս · հանդարտ և նազելի 'ի գնացս · այլ սովորաբար դահաւորակօք շրջին · զի ոչ զօրեն երկար յոտն կալ կամ հետի շրջել սակս փոքրկութեան ոտից · և յելանել արտաքս զգլուխ և զաչս միշտ 'ի խոնարհ ունեն: Շքեղս և մեծագինս զգենուն · մոլեալ են 'ի պճնազարդութիւն · զի յամենայն առաւօտու ժամս ձիգս ծախեն 'ի լուանալ և 'ի մաքրել զանձինս, և 'ի պճնապաճոյճ լինել: Սաստիկ զգուշութեամբ ամփոփակեալ պահին յառանձինն բնակարանս, և ոչ երբէք երևին առն մարդոյ մանաւանդ մանկամարդք և աղջկունք · զի և չինացիք առ որս օրէն է ամուսնանալ բազում կանայս, ունին նամէհրամ խստագոյն քան զօսմանցիս և քան զպարսիկս:

Զգեստ չինաց արանց և կանանց երկայն են ըստ սովորութեան արևելեայց, և լայնաթև · զերիս կամ չորս պարեգօտս 'ի վերայ միմեանց զգենուն մի քան զմի կարճ. 'ի ձմերայնի առնուն զանձամբ և մուշտակ երկայն ոչխարենի կամ սամուրենի, և կամ 'ի մորթոց այլոց վայրի երէոց · թեզանիք մուշտակաց երկայն են և լայն, յորս պահեն զձեռս հանապազ՝ եթէ այր և եթէ կին: Գլխարկք նոցա պէսպէս են ըստ պէսպիսութեան եղանակաց · զի ամառայինն է սրածայր քիւլահաձև այլ կարճ, և ստորին շրթունքն լայն նման ըստ իմիք գլխարկաց եւրոպացւոց, որպէս շափքայի · և է հիւսեալ 'ի նրբաշերտ եղեգանց ըստ օրինակի փսիաթի · և ներքտակողին ն՟ցա պատեալ է մետաքսեայ կերպասիւ . իսկ 'ի գագաթան ունի կարմիր մետաքսեայ փունջ մեծ , որ յա՟մ կողմանց իջեալ, հասանէ մինչեւ 'ի շրթունս գլխարկին . մ՟յ յորժամ շրջին, փունջն այն ծածանի յա՟մ կողմանց 'ի հովահարութ՟է եւ 'ի շարժմանէ գըլխոյն . որ վայելուչ համարեալ է առ ն՟ս ։

Մանտարինք յորժամ գտանին 'ի հանդիսի իմիք , փոխ այնր փնջի դնեն 'ի ծայր գլխարկի իւրեանց ակն ինչ յեռեալ յոսկի . զո՟ ադամանդ հ՟րկ, կ՟մ ակատ , կ՟մ գոհար՝ որ է քէհրիպար . եւ կ՟մ ակն վանի . ոմանք եւս փոխ ական դնեն գնտակաձեւ կոճակ մեծ շինեալ յոսկւ թելս գլխոյակէ ։ Իսկ ձմեռային գլխարկ.ք ն՟ց են 'ի թանձր եւ թաւ խատիֆէէ սեաւ կամ մանուշակագոյն . ստորին կողմն պատեալ սամոյրիւ կ՟մ աղուեսու ։ 'Ի պարանոցս 'ի ձմեռայնի ունին ուլոնոց լայն իբր չորս մատնաչափ 'ի խատիֆէէ կ՟մ 'ի սամոյրենեաց եւ կ՟մ յայլ մորթոյ ։ 'Ի մէջս կրեն գօտի մետաքսեայ երկայն . յերկոսին ծայրս ն՟ց թողուն 'ի կախ յառաջոյ , որք եւ հասանեն մինչեւ 'ի ծունկս ։ Կօշիկք ն՟ց են մետաքսեայ 'ի ներքոյ պատեալ բամբակի սպիտակաւ . բայց ունին եւ մաշկեղէն կօշիկս, զոր ագանին յորժամ երթան ուրեք 'ի ձմեռն ։ Մանտարինք կրեն 'ի վ՟ր հանդերձից ասղնագործ զարդ ինչ ոսկի կ՟մ արծաթի թելիւ գործեալ . որ է նշան իշխանութ՟ե կ՟մ պաշտաման ն՟ց ։ Նշանք դատաւորացն են պէսպ՟ս թռչունք ըստ ազնուութ՟ե պաշտաման իւրեանց . իսկ սպարապետաց եւ զօրավարաց վիշապ ,

առիւծ , եւ յինձ ։

Չինացիք ըստ հանրապետ՟ս խօսելով՝ շատակեր են , եւ կերակուր ն՟ց խոշոր ։ Ուտեն զա՟մ ինչ անխտիր . զի բաց 'ի սովորական չորքոտանեաց եւ թռչնոց եւ ձըկանց , որք են կերակուր այլոց ք՟ղաքականն եւ հրահանգեալ ժողովրդոց , ս՟ք ուտեն եւ զձի զկատու ըղշուն զգօրան եւ զօձ եւ զայլ ա՟մ ինչ ։ Բայց հ՟րկ եւ սովորական կերակուր ն՟ց է որիզ ոլոռն եւ այլ արմտիք եւ բանջարք պարտիզաց ։ Կրկին օրինակաւ բազմին 'ի սեղան . բնիկ չինացիք ուտեն 'ի վ՟ր բարձր սեղանոյ ըստ սովորութ՟ե եւրոպացւոց բազմեալ յաթոռս . իսկ որք 'ի թաթարաց իջանեն , ն՟ք ըստ սովորութ՟ե պարսից ծնկնածալ նստին եւ ուտեն ։ Չունին 'ի սեղանի ոչ պաստառ սփռեալ . ոչ թաշկինակ սրբել զձեռս . ոչ սկաւառակ , ոչ դրգալ , ոչ պ՟տռաքաղ . այլ փոխ այսր ա՟մի 'ի կեր առնուն փոքրիկ գաւազանս սրածայրս՝ փղոսկրեայս , կ՟մ յազնիաղ փայտէ արծաթագործս • և նովաւ առնուն զմիս և զայլ թանձր կերակուրս • իսկ զորիզ , զոր սովորաբար ցամաք եփեն իբրև զփլաւ „ և զայլ այսպիսի կերակուրս սկտեղք տանին մօտ 'ի բերան , և նովին գաւազանաւ ձգեն 'ի բերան : Չեք բնաւ մաքրութի և քղքականութն 'ի սեղանս նց : Տանուտր տանն կմ այլ ոք որ բաշխէ 'ի սեղանն զկերակուր • ձեռամբ կալեալ մանրէ զմիս խորշեալ կմ խորովեալ • և առանց սրբելոյ զձեռս մանրէ և զայլ կերակուրս առաջի մըջաց բազմականաց • և նովին աղտեղի ձեռօք բաշխէ նց • որ անվայել լինէ գովեալ քղքականութե չինացւոց • զոր առ մեզ և ոչ գռեհիկք առնեն :

'ի կոչունս մեծամեծաց. ուրոյն ուրոյն բազմին • և իւրաքանչիւր բազմական ունի սեղան մի առաջի առանձին , եթէ բազմութի հրաւիրելոց ոչ առաւելեսցէ երկուց բազմիլ առ նովին սեղանով , ապ պատահէ երբեմն • բայց կերակուր նոյն է միօրինակ • և յանժամ 'ի կեր առնուն և սկաւառակս յախճապակեայս այլև արծաթիս : Ըմպելի նց է թէյ • և տեսակ մի ոզօղայի , զոր հանեն յորիզոյ կմ յայլոց սերմանեաց • և այլ իմն ըմպելի դեղին և կարմրագոյն ոգելից և զօրեղ իբրև զօղի , զոր Սամշուէ կոչեն • որ և է առ նս փխնկ գինւոյ • զի թուի թէ գինի ոչ ունին , կմ սակաւ : Մեծամեծք լոկ ջուր ոչ ըմպեն • վն զի ջուրք Չինաց ըստ մեծի մասին ծանր են և դժուարամարս • վսյ խառնեն 'ի նմ թէյ , սամշուէ : և կամ զլոկ ջուրն նախ եռացուցանեն և այնպէս ըմպեն • գուցէ աստի եղև սովորութի առ չինս միշտ ջերմ ըմպել • և քհնքն՝ զկերակուր իւրեանց ցուրտ ուտեն :

'ի ճաշս և 'ի կոչունս տնրեան խաղանս և սովորութիս ունին • զի նախ քան զբազմիլ 'ի սեղան , տանուտէրն առեալ բաժակ ոսկի կմ արծաթի 'ի ձեռին լի նախագրեալ ոգելից ըմպելեաւ 'ի վեր ամբառնայ և ողջունէ զմի ոք 'ի հրաւիրելոց որ նախապատիւ է 'ի նս • ապա ելեալ արտաքս և դարձուցեալ զերեսս ընդ հարաւ , ընծայէ զայն առաջին բաժակ աներևոյթ ոգւոց , զորս դնեն պաշտպանս տանն այնմիկ , և հեղու յերկիր : Յետ այնորիկ բազմին 'ի սեղան , այլ ոչ ոք մերձենայ 'ի կերակուր , եթէ ոչ զկնի ընդ երկար ողջունելոյ և յարգելոյ զմիմեանս պէսպէս անհեթեթ բեկբեկմամբ և կորացմամբ և երկրպագութ : Ապա տաճարապետ սեղանոյն տայ նշան պատրաստ լինել ամյն առ 'ի միանգամայն սկսանիլ զճաշն : Նախ առնուն ամքն զփոքրիկ բաժակ վերոգրեալ սամշուէ ըմպել.

պելւոյ, և երկոքումբք ձեռօք կալե՟լ ամբառնան 'ի վեր ցբարձրու՟ն գլխոյ, և անմռունչ լռիկ արտաքին ակնարկութ՟բ հրաւիրեն զմիմեանս հարուստ մի ճաշակ նախ ըմպել: Ապա ուշ եդե՟լ մնան, զի տաճարապետն տացէ նշան. յայնժամ ամ՟քն առնուն 'ի ձեռս զերկու փոքրիկ գաւաթս, որք են փինկ պատուաքաղ գործեաց. ամբառնան 'ի վեր, և առնեն նոքօք պէսպէս շարժմունս՝ դրեթէ որ՟պ առնեն զինուորք եւրոպիոյ 'ի զինուորական կրթութ՟ս. ապա մխե՟լ զայնս 'ի սկաւառակն սկտեղին ուտել ոչ կարի ձեպով զի մի յառաջեսցեն մի ք՟ զմի. և ոչ յոյժ յամր, զի մի տայցեն միմեանց սպասել. ք՟զի երկոքին եւս անարգութ՟ն համարե՟լ է առ նս՟:

Իբրև ուտեն զմի կերակուրն՝ դնեն զգաւաթս 'ի վ՟ր սեղանոյ 'ի նոյն տեղի և 'ի նոյն դիրս, ո՟ւր եդան 'ի սկզբանն. և մատուցանի ըմպելի. զոր ըմպեն վերոյասացեալ օրինակաւ: Յետոյ մատուցանի եր՟կդ կերակուրն, և յայնժամ վերառնին սկտանեան՝ նոյն շարժմունք. զոր առնեն և յայլ կերակուրս, և յո՟մ 'նըհագս ըմպելոյ մինչև ցաւարտ սեղանոյն. որ սովորաբար երկարի երիս կամ չորս ժամս. և ը՟ բոլոր ճաշն սեղանոյն լռութ՟բ նստին. և 'ի տալ տաճարապետին զվերջին նշան, ելանեն 'ի սեղանոյ խոնջք և վաստակք. և փոքր մի ձեմ առե՟լ 'ի պարտէզ կ՟մ 'ի բակ տանն՝ խօսակցին ը՟ միմեանս. ապա անդրէն դառնան 'ի սեղան ճաշակել քաղցրաւենիս և պտուղս և ըմպել զթէյ: Յայնժամ ածեն 'ի ներքս երգեցիկս և նուագածուս, որք երգեն և նուագեն, և առնեն անդ պէսպէս խաղս ձևացուցանելով զպատմութ՟ի չքնաղ նց՟, կ՟մ ոմանց դիւցազանց. այլ թէ երգք նց՟, և թէ նուագարանք, որք են ծնծղայ, թմբուկ, և այլ մի տրտմաձայն սրնգի՝ են խառնաձայն իմն ղօղանջմունք ծանր և անախորժ լսելեաց. և բանք խաղուց նց՟՝ որք սովորաբար են ռամկաւոր, անհեթեթ ամենեւին և անարուեստ. զոր եւրոպացիք որք միանգամ լուան բերանալիր գորովեն ոչ միայն արք իմաստունք, այլև բիրտ նաւավարք նց՟: Այս և այլ սոցին նման խաղանք և սովորութ՟իք իբր հայրենատուր աւանդութ՟իք և օրէնք հաստատեալ և արմատացե՟լ են 'ի նս՟, զոր ոչ ոք իշխէ երբէք լուծանել. ոչ միայն մեծամեծք, այլև յետինն արհեստաւորք և ռամիկք. զի և նց՟ 'ի ճաշս իւրեանց, և 'ի կենակցութ՟ն ը՟ միմեանս ունին պէսպէս սովորութ՟ս. թէպէտ ոչ այնչափ, որչափ մեծամեծքն:

Նոյնպէս յողջունելն զմիմեանս, կամ յերթալն յայցելութիւն միմեանց և յայլ ամենայն կենդանակցութիւնս անբաւ սովորութիւնս և գործս քաղաքավարութեան ունին : Սովորական և հարկ ողջոյն նոցա է խաչաձև դնել զձեռս 'ի կուրծս. և փոքր մի խոնարհել զգլուխ. իսկ յողջունելն զմեծամեծս ձեռնամած խոնարհին մինչ 'ի գետին. և յընդունիլն 'ի տուն զոք 'ի մեծամեծաց ծունր կրկնեն միով ծնգամբ : Յորժամ բարեկամք հանդիպին միմեանց 'ի փողոցս կամ 'ի հրապարակս, առաւել քան զքառորդ մի ժամու հարցաբանեն զողջունէ միմեանց նոյնպէս և 'ի հրաժարիլ 'ի միմեանց ոչ դոյզն ժամ ծախեն 'ի հրաւիրել զմիմեանս յառաջել : Ըստ նմին օրինակի յորժամ երթան 'ի տուն յողջոյն միմեանց, անբաւ կանոնս և սովորութիւնս ունին և գործս յարգութեան, բայց անգամ ծախեն իբր կէս ժամ և աւելի մինչև 'ի դրանէ մտցեն 'ի տուն և բազմեսցին. զնոյն առնեն և 'ի մեկնիլն 'ի տանէ : Խօսակցութիւն նոցա և կենակցութիւն ծանր են՝ համեստ քաղցր և [illegible] միմեանց. զոր ոմանքն միայնս պահեն. զի 'ի բարոյական սկզբանց նոցա մինն է այս, լինել քաղցր, համեստ, մարդասէր. և յամենայնի ցուցանել հեզութիւն, զսպելով զյարձակումն կրից. զի այսու ասեն պահել խաղաղութիւն 'ի մարդկային հասարակութեան :

Այսչափ ինչ վասն բարուց և սովորութեանց չինաց շատ լիցի. արդ տեսցուք ինչ և վասն քաղաքաց, տանց, և արքունի ճանապարհաց նոցա : Քաղաքք չինաց են բաժանեալ յերիս կարգս զանազանեալք 'ի միմեանց մեծութեամբ և նախապատուութեամբ իշխանութեան. և որպէս բարք և սովորութիւնք նոցա ընդհանրապէս ունին զմիօրինակ իմն տարազ, նոյնպէս և քաղաքք նոցա գրեթէ առհասարակ են միաձև. զի են քառակուսի որչափ ինչ ներէին դիրք տեղեաց. և բաժանեալ 'ի չորս մասունս 'ի ձեռն երկուց գլխաւոր փողոցաց, որք խաչաձև հատանեն զմիմեանս. և ձգին ուղղագիծ մինչև ցչորեսին գլխաւոր դրունս նոցա. զի ամենայն երևելի քաղաք չորս գլխաւոր դրունս ունի, որք հային 'ի չորս կողմն աշխարհի. զի յարևելս յարևմուտս 'ի հարաւ և 'ի հիւսիս. թող զայլ փոքր դրունս : Իսկ այն չորք մասունք քաղաքաց դարձեալ բաժանին յայլ փոքրագոյնս, որք պարագրեն տասն տասն տունս. և 'ի վերայ իւրաքանչիւր տասնեակ տանց կարգեալ կայ ոստիկան կամ վերակացու տեղեկանալ զամենայն անցից, որք անցանեն ընդդէմ օրինաց 'ի փոքրիկ թաղն անդ իւրում. և ազդ առնել մանտարինի կամ քաղաքապետին : Ամենայն տուն այնց թաղից պարտաւորեալ են պաշպան լինել և օգնել միմեանց. մինչ յորժամ դէպ լինի անդ վնաս ինչ, զի գիւղերայինն գաղութն, հրդեհ, մարդասպանութիւն, բոլոր թաղն պարտապան է 'ի հատուցումն վնասուն: Նոյնպէս իւրաքանչիւր տանուտէր պարտական է համարս տալ վասն տան անկարգութեանց, որք գործին 'ի տան իւրում՝ յորդւոց կամ 'ի ծառայս: Բայց յերկուց նախադրելոց գլխաւոր փողոցաց, և այլ փողոցք քաղաքաց նոցա սովորաբար ուղիղ են լայն և սալայատակ. սակայն և այնպէս ոչ սակաւ նեղութիւն կրեն, որք հետի շրջին 'ի նոսա, սակս խուռն բազմութեան երթևեկաց, մանաւանդ ձիաւորաց և գահաւորակաց. քանզի չինացիք մանաւանդ մեծամեծք ձիովք և գահաւորակօք շրջին, ունելով յառաջոյ և զկնի բազմութիւն ծառայից:

Տունք նոցա առհասարակ՝ մեծամեծաց և ռամկականաց են փայտակերտք, միայարկք, և քառակուսիք, և միաչափ բարձրութեամբ, զի մի 'ի ներքսակողմն միմեանց հայեսցին: Չունին լուսամուտս 'ի վերայ փողոցի. այլ են շրջապատեալ որմով. և 'ի շրջապատի անդ են ընդարձակ բակք և պարտէզք: Տունք մեծատանց են իբր պալատք մեծամեծք բաժանեալք 'ի բազմապատիկ սենեակս և սրահս. որք ունին և առանձին բնակարան վասն կանանց. բայց առհասարակ միայարկ են. իսկ պալատք մանդարինաց այնպէս ընդարձակ են, որ թուին մի մի փոքրիկ գեօղք: Գլխաւոր զարդք տանց նոցա են արկեղք, պահարանք նկարէնք և գեղափայլք. պէսպէս պատկերք մարդկան և չորքոտանեաց և թռչնոց. անօթք յախճապակեայք. և բազում փերթք մետաքսեայ կերպասուց ապլիտակք կախեալ զորմովք, յորս գլխագրով դրեալ կան պէսպէս բարոյական խրատք: Մահիճք նոցա չքեղ են պէսպէս քանդակօք յօրինեալ, և շրջապատեալ վարագուրաւ կամ սրսկապանօք, որք են կրկին, ամառային և ձմեռային: Ամառայինքն են մետաքսեայ կերպասք նրբաթելք և ծաղկայօրինաճարակ. ոմանց է մնդուս, այն է՝ պիւրիւնճիւկ մետաքսին և թափանցիկ: Իսկ ձմեռայինքն 'ի թանձր ատլասէ, յորս նկարեալ կան վիշապք, թռչչունք և այլ պէսպէս ուրուական նմանութիւնք: Վերմակք նոցա են եօրղանք, և անկողինք նման են մերոյն. սովիմբ ևեթ ընդունել, զի անկողինք նոցա թանձր են յոյժ քան զմերս. և միայն բրդոյ բամբակս լնուն 'ի նոսա: Առ տամբ երևելի քաղաքօք գտանին մի կամ երկու աշտարակք մեծակառոյցք ինն յարկեան դրուագեալք յախճապակեաւ. յորոց զմի՝ որ դեղնագոյն է քան

զայլ՝

զայլս՝ ունիմք ստորագրել յիւրում տեղւոջ : Նոյնպէս գրեթէ յամ երեւելի քղքս կանգնեալ կան կամարք յաղթութե 'ի պատիւ Թգ̃րաց և վարժապետաց ոմանց, որք երեւելի եղեն քաջութբ̃, կմ՝ հնարեցին ինչ պիտանացու 'ի կեանս :

Արքունի ճնպ̃հք չինաց Ծի յամ տեղիս դիւրեալ և հարթեալ են առ 'ի դիւրութն ներքին վճռկանութենց. զի ը̃ նախնի հռովմայեցւոց փոյթ մեծ ունէին 'ի վր̃ ճնպ̃հաց : 'Ի ճախճին և 'ի մօրուտ տեղիս, ուր սակս ցածութե հաւաքեալ լճանան ջուրք, կուտեն հող և աւազ, և գործեն ճնպ̃հ արահետ բարձր և անվտանգ 'ի ջուրց հեղեղէ : Իսկ ուր ը̃ պատաւջ լինին լերինք և բլուրք, և խափանեն զանցս ճնպ̃հաց, հարթեն և դիւրեն. իսկ ուր չէք հնար հարթելոյ, տաշեն ըզլեառն առ կողիւ, և բանան ճնպ̃հ. և 'ի տեղիս տեղիս առ շարունակելոյ զճնպ̃հս 'ի մէջ երկուց լերանց կառուցեալ կան կամուրջք ոհարկուք, որպիսի է հռչակաւոր կամուրջն 'ի չէնսինչինգի, զոր անդ ունիմք ստորագրել : Նոյնպէս և 'ի վր̃ ջրանցից և գետոց ը̃ ամ տեղիս են անհամար կամուրջք, առ 'ի տալ անցս ճնպ̃հորդաց 'ի միոյ կողմանէ 'ի միւսն : Հ̃րկ ճնպ̃հք Ծին չինաց սովորաբար են իբր ութսուն ոտնաչափ լայն. և հող երկրին աւազախառն, յայն սակս 'ի դադարել անձրեւի՝ թէպէտ և յորդ տեղացեալ իցէ, վաղվաղակի ցամաքի, և ոչ լինի անդ տիղմ: 'Ի գաւառս ինչ առ ճնպ̃հօք յաջմէ և յահեկէ են այլ ճնպ̃հք կամ մայթք այն է՝ խաւտուղղղմ փոքր մի բարձր ք̃ զբուն ճնպ̃հն, շինեալ 'ի դիւրութն այնոցիկ, որք հետի ճնպ̃հորդեն. և առ նոքօք աստի և անտի տնկեալ կան կարգաւ ծառք մեծամեծք, որք հովանի առնեն անցաւորաց. և մէջ ը̃ մէջ 'ի կէս փարսախէ 'ի կէս փարսախ կառուցեալ կան 'ի վր̃ ճնպ̃հի կամարք յաղթութե բարձր իբր 30 ոտնաչափ, բաժանեալ յերիս դրունս կմ̃ կամարս. յորոց վր̃ դրեալ կան մեծամեծ տառիւք անուանք քղքաց, ուր հանեն այն ճանապարհք : Իսկ և առ ամ̃ գլխաւոր ճնպ̃հօք շինեալ կան փոքրիկ աշտարակք հողակերտք 'ի կէս փարսախէ 'ի կէս փարսախ հեռի 'ի միմեանց, յորոց վր̃ կանգնեն արքունի դրօշս. և առ նոքօք են մի մի տուն 'ի բնակութն զինուորաց կարգելոց 'ի պահպանութն ճնպ̃հաց : Վ̃րկ ճնպ̃հք չինաց Ծի ը̃ ամ տեղիս անքոյթ են և ապահով 'ի գողոց և յաւազակաց. ուր սակս անհամար բազմութե բնակչաց, երեւի թէ հարկ էր գտանել և բազմութն գողոց և աւազակաց. զի

բայ

բզ՟մք 'ի նց՟է 'ի յետոյն և 'ի գաւառն աղքատութեան, և բզ՟մ տառապանօք և ծանր աշխատութ՟բ հազիւ հայթհայթեն զառօրէական դարման կենաց. սակայն և այնպէս ուր ուրեմն 'ի յայտ գայ տնդ գող կմ՟ աւազակ. Են 'ի չին և թղթաբեր սուրհանդակք կարգաւորեալք ը՟ սուրհանդակաց եւրոպիոյ, և թէպէտ ն՟ք կացուցեալ են միայն 'ի պէտս արքունի իրաց, բայց և այլք կարող են յանձնել նց՟ թուղթս կմ՟ այլ իրս, տալով փոքր ինչ պարգեւս կմ՟ կաշառս իշխանին, որ կարգեալ կայ 'ի վր՟ սուրհանդակաց. Չինացիք ըղջամաքային ճնպ՟հորդութ՟ն լերանց առնեն ձիովք կմ՟ ուղտուք, կմ՟ ջորեօք, այլև գահաւորակօք, զոր տանին բազմութ՟ն մարդկան բարձեալ յուս լերանց. բզ՟մք առնեն թէ ն՟ք և կառօք ճնպ՟րհորդեն, այլ ոչ նշանակեն թէ որպիսի ինչ են կառք նց՟ : Եւ 'ի բզ՟մ տեղիս առ 'ի չգոյէ դրաստուց և ջորոյ, մարդիկ բարձեալ 'ի թիկունս զվաճառս, տանին քղքէ 'ի քղք գաւառն և դժնդակ աշխատանօք:

Թ. Լեզու Չինաց:

Լեզու չինաց է առանձին իմն բարբառ օտար զբըխօսելին յայլ ամ՟ լեզուաց. զ՟ի որս չունի ընաւ հաղորդութ՟ն ինչ կմ՟ մերձաւորութ՟ն ոչ 'ի բառս, ոչ 'ի խօսս, և ոչ 'ի գիրս : Ըստ վկայելոյ հօրն Քօնթեայ 'ի լեզու նց՟ գտանին միայն իբրու 330 բառք ընաւքն միավանկք, կմ՟ գէթ այնպս՟ թուէին յեղանակէ արտասանութ՟ն նց՟. զի այնպէս լերկ արտասանեն, որ մի միայն վանկ լսի : Այս սակաւ բառք չէին արդեօք բաւական 'ի յայտնել զամ՟ որ ինչ կարեւոր է 'ի մարդկային կեանս, եթէ ոչ էր նց՟ գտեալ հնարս 'ի լնուլ զայն պակասութ՟ն. իսկ հնարք են զնզ՟ն շեշտք և եղանակք 'ի հնչմունս բառից. զ՟ր սուր և բութ, լերկ և թաւ, սուղ և երկար, բարձր և ցած, կոկորդային և նուրբ, պարզ և եղանակաւոր ևն՟, որով բազմանան յոյժ իմացուածք և նշանակութիք բառից : Վ՟յ 'ի խօսելն հարկ է առ իւրաքանչիւր բառ կմ՟ նշանակութ՟ն տալ զիւր սեփական շեշտ և եղանակ հնչման. ապա թէ ոչ՝ առ դոյզն ինչ այլայլութ՟ն մեծամեծ վրիպակք գործին. և բան խօսողին լինի ամենևին անիմանալի : Վ՟ս զի բառք նց՟ գրեթէ բովանդակ են համանուն բազմանշանակ. որք այլևայլութ՟բ հնչմանց որոշին 'ի միմեանց : Զոր օրինակ. ահա նոյն բառ է, որ նշանակէ տ՟ր և գազան, որք լոկ եղանակաւ հնչման որոշին. ուստի եթէ ոք անտեղեակ իցէ հարազատ հնչման նորա փոքր ինչ ասելոյ իւր՝ գազան ասասցէ. ըստ այսմ և յայլ իմն բառս: Նուագական լեզու նոցա, թէ խօսիցին որպէս արժանն է, լինի իբր ազգ իմն երաժշտութեան. յոյր սակս և դժուարին է, և երկար և բազմաշխատ վարժութեան պէտք են անվթար հնչել զիւրաքանչիւր բառ նոցա, զոր գրով բացատրել չէ հնար. այլ հարկ է վարժութեամբ և եթ ուսանիլ, յար և նման մերոց երաժշտական երգոց. զի թէ ոք չիցէ ուսեալ ախորժանս զեղանակս նոցա, լոկ ՚ի խաղս ապաստանեալ, ոչ երբէք կարասցէ երգել որպէս արժան է:

Բարբառ չինաց է կոկորդային և հագագային. բայց ոչ այնպէս թանձր որպէս արաբացւոց: Չիք ՚ի նոսա հնչումն ռայի կամ րէի. որ թուի երևելի պակասութիւն, զի այս հնչմունք հարկ են յամենայն բարբառս արևելեայց և արևմտեայց. և մեծ մասն բառից նոցա միավանկս յանգին: Ոճ և եղանակ խօսից նոցա նուրբ է, մեղմին և համառօտ. սակաւ բառիւք բազում ինչ իմացուցանեն: Եւ ճառք նոցա ոչ են ըստ մերոց ճառից յօրինեալ վայելուչ դասաւորութեամբ պարբերութեանց բանից, զի իբր ինքնաբերաբար և հարկաւ ՚ի միմեանց բղխեսցին. և զարդարեալ յաճախութեամբ բառից. այլ են իբր հաւաքումն գերազանց փոխաբերութեանց, ընտիր ընտիր նմանութեանց, և իմաստալից առակաց և վճռոց իւրեանց նախնի իմաստասիրաց անյօդ և անշարայար. որոց իւրաքանչիւրն ուրոյն ուրոյն գեղեցիկ է և ազդու. այլ բոլոր հաւաքումն և դասաւորութիւն նոցա ցրիւ, անկարգ և անարուեստ: Գլխաւոր լեզու չինաց է մի ըստ ամենայն տեղիս, զոր կոչեն մանտարինեան և թագաւորական. զի ՚ի նոյն լեզու խօսին յարքունիս և յամենայն ատեանս. և որ ոք ոչ գիտիցէ զայն լեզու ոչ կարէ ելանել յիշխանութիւն ինչ կամ ՚ի պաշտօն: Այլ բաց յընդհանուր լեզուէ անտի իւրաքանչիւր նահանգ ունի իւր սեփական բարբառ գրեթէ անիմանալի յայլոց. զոր մարթ է նմանեցուցանել մերում Տաբառ լեզուի, որ ըստ զանազան գաւառաց զանազան է և անիմանալի միմեանց: Չունէին այբուբենս փակեալս սահմանաւոր թուով տառից յօդելեաց ըստ միմեանս շարամանութեամբ և հեգմամբ ՚ի նշանակել զամենայն ազգ բառից, ըստ այլոց գրագէտ ազգաց. և զարմանան ընդ նոսա թէ զիա՞րդ կարեն սակաւ տառիւք զամենայն խօսս իւրեանց յօդել, և այնչափ ստուար մատեանս յօրինել: Այլ փոխ տառից ՚ի սկզբան միապետութեան իւրեանց ՚ի գործ ածէին ձևագրութիւնս ըստ սովորութեան եգիպտացւոց ՚ի յայտնել

ըզզմիտս, որ էր առաւել նկարագրութիւն, ք՟ գրուած. զի նկարելով զպատկեր իրացն յայտ առնէին զայնուիկ: Այլ յետոյ անեանալ թէ անբաւական էր այն 'ի բացատրել զա՟մ իմաստս խորհրդոց. քանզի թէպէտ հնար էր զմարդ, զթռչուն, զձուկն, զանասուն նկարել, բայց ոչ նոյնպէս զկիրս, զսէր, զատելութ՟ն, զձայն, զգիտութ՟ն և զայլ անհամար իրս, որք անմարմին են: Նմին իրի հարկեցան հնարել նշանագիրս 'ի նշանակել զա՟մ ազգ բառից՝ ուստի և զա՟մ ազգ իրաց, և ոչ այբուբենս. վ՟ն զի որովհետև մի և նոյն բառ ն՟ց բ՟զմ ինչ նշանակէ, և նշանակութիւնքն որոշին 'ի զ՟նզ՟ն ելևէջութ՟է ձայնի. և զի զայն ելևէջութիւնս չէ հնար տառիւք բաղադրել և բացատրել, հարկ էր նշանագիրս սահմանել առ իւրաքանչիւր նշանակութ՟ե և իր, և ոչ այբուբենս : Եւ վ՟նկ բազմացան յոյժ նշանագիրք ն՟ց, մինչև անցանել այժմ զութսուն հազարօք, յանհնարելն վիշտ և 'ի տարժանումն՝ ոչ միայն օտարաց, որք ուսանին զայն լեզու, այլև նոցին իսկ չինացւոց. որք զա՟մ ժամս կենաց ծախեն յուսումն այնց նշանագրաց. սակայն և այնպ՟ս մեծ ինչ է, թէ գրագէտ ոք յետ բ՟զմ աշխատութեց՝ հասանիցէ 'ի տեղեկութ՟ն տասն հազարաց. ուստի և դժուարին է ն՟ց գտանել պարապ ուսանելոյ զառաւել կարևորս և զպիտանիս :

Ոպ՟ տառք, նոյնպէս և եղանակ գրելոյ չինաց օտար է յայլոց ազգաց. զի ոչ ձգեն ն՟ք զտողն յաջ կուսէ յահեակ՝ ը՟ս եբրայեցւոց և արաբացւոց. և ոչ յահեակ կուսէ յաջակողմն՝ ը՟ս մեզ և ը՟ս յունաց և այլոց ազգաց եւրոպիոյ. այլ 'ի վերուստ 'ի խոնարհ ը՟ էջն 'ի վայր : Եւ սկզբնաւորութ՟ն մատենից ն՟ց ոչ է 'ի ձախակողմանէ՝ ը՟ս մեզ, այլ յաջմէ՝ ը՟ս արաբացւոց. ուստի անդ սկսանին ն՟ք ուր մեք աւարտեմք. Եւ գրիչ ն՟ց ոչ է եղեգնեայ կ՟մ 'ի փետրոյ, այլ նուրբ վրձին, այն է՝ ֆուչայ, նման այնմ, որով նկարիչք զպատկերս նկարեն : Եւ ոպ՟ թուի՝ առ հարկի արարին ն՟ք սովորութ՟ն այնպիսի կակուղ գրչաւ գրել. վ՟ն զի թուղթ ն՟ց նուրբ է յոյժ և կակուղ և գրեթէ թափանցիկ, յորոյ վ՟ն դժուարին էր կարծր գրչաւ գրել. և վ՟ն նոյն պ՟տճառի 'ի մի կողմն ևեթ թղթոյն գրեն : Այլ թուղթ չինաց է 'ի կեղևոյ Բամբօն կոչեցելոյ ծառոյ : Հանեն զառաջին կեղևն, և առնուն զերկրորդն, որ է փափկագոյն, կակուղ, և սպիտակ. ծեծեն 'ի ջուր յստակ, և կազմեն անտի թուղթ. և փինկ մածուցիկ նիւթոյ 'ի վ՟ր ածեն պաղլեղ, որ չտայ

Թոյլ ծծել զմելանն. և առնէ առաւել ողորկ և սահելի առ գրչաւ: Բայց այս Թուղթ չէ ինչ տևական. ընդունի զխոնաւութ՟ի, և լինի ճճեկեր, թէ ոչ ստէպ թօթափեսցեն զմատեանս, և դիցեն յարև: Վ՟նկ ոչ գտանի ինչ ձեռագիր վաղնջուց յ՟զգին չինաց. այլ հարկ է նորոգել ստէպ զգրատունս նց՟՝ օրինակելով, կմ՟ միւսանգամ տպագրելով զհին գիրս 'ի վր՟ նոր Թղթոց:

Նոյնպէս և տպագրութ՟ի նց՟ այլազգան է 'ի մերմէս. զի նք՟ փորագրեն զնշանագիրս իւրեանց ը՟ս ձևոյ ձեռագրաց յայնչափ տախտակս, որչափ են երեսք մատենին, զոր կամին տպագրել. վ՟յ այն տախտակք միայն առ 'նոյն մատեան ծառայեն: Զայս եղանակ տպագրութ՟ե զառաջինն 'ի կիր արկին և յ՟զգի մերում առաջին գոլով տպագրութ՟ե. զոր յետոյ յայն աստիճան կատարելութ՟ե հասուցին յեւրոպիա, ք՟ զոր կատարելագոյն և զմտաւ իսկ ածել երբէք թէ չիցէ հնար. այլ չինացիք միշտ 'ինոյն կացին մնացին. ոչ եթէ առ տգիտութ՟ե, իբր թէ չգիտիցեն շինել և շարժական տառս, ք՟զի ահա ունին և այնպիսի նշանագիրս փայտաշէնս, որով տպագրեն զթղթական վճիռս. որոց համառօտ գոլով՝ սակաւուց պէտս ունին, այլ զի նշանագիրք նոցա անհամար են, վ՟յ և դժուարին՝ մն՟նդ թէ անկարելի զնմ՟ ուրոյն ուրոյն ձուլել, և տալ առ միմեամբք շարայարել 'ի տպագրել նոքօք մատեանս: Պարծին թէ ինքեանք գտին զարուեստ տպագրութ՟ե, ոպ՟ և զվառօթ, և զբեւեռացոյց ասլաք նաւուց, և զայլ գործիս չափաբանութ՟ե: Բայց այս անհաւանելի իմն թուէի. վ՟ զի քաջայայտ է ամ՟ցն, եթէ մեծի ճարտարութ՟ե պէտք են առ 'ի նորոգ հնարել զիմն, ք՟ զհնարեալն կատարելագործել: Արդ՝ յայտ է թէ մինչև հաղորդեալ էին նց՟ եւրոպացիք զդաղանիս արուեստի իւրեանց, այն ամ՟ անկատար էին յոյժ առ նս՟. այն զի և այժմ գործիք չափաբանութ՟ե, ոպ՟ և պտղմականք չինաց առ համեմատութ՟ե եւրոպացւոցն՝ ոչինչ են ամենևին և իբր տղայականք:

Ժ. Դպրութ՟ի Չինաց:

Յաշխարհս չինաց չիք ուրեք հ՟րկաց համալսարան յորս աւանդեսցին գիտութիւնք և ազգի ազգի ազատական արհեստք. այլ միայն առանձնական դպրոցք կմ՟ տունք, որք ը՟ս հօրն քօնթեայ լի են յամ՟ քղքս.

Թ

ջըլքս · յորս ուսուցանեն մանկանց ճանաչել զնշանագիրս իւրեանց և 'ի թղթի ձևացուցանել կամ գըրել, ը՟ նոսին և զայլ մակացութիւս · այլ զմեծ մասն ժամանակի, կամ բոլոր կենաց վատնեն յուսումն նըշանագրաց :

Գլխաւոր մակացութիւնք և գիտութիւնք, որք ասին 'ի վաղնջուց ծաղկեալ առ չինս են երկրաչափութիւն, թըւաբանութիւն, և առաւել ք՟ զա՟մ՝ աստեղաբաշխութիւն : Այլ որ ինչ սքանչելի պատմի յայսմ մասին զն՟ց է բովանդակ առասպելք են : Վ՟ զի երկրաչափութեան ն՟ց յետ այսչափ դարուց՝ այնպէս է, ո՟պ թէ նորագսկսեալ էր 'ի լոյս ելանել, աղքատ ամենևին և չնչին · բովանդակեալ 'ի քանի ինչ նախադասութիւս գործնականս և դիւրինս · զուրկ 'ի տեսական սկզբանց և 'ի նախադասութեանց : Ըստ նմին օրինակի և թուաբանական գիտութ՟ ն՟ց բովանդակի 'ի գործի ինչ, որ է փոքրիկ տախտակ ոտնաչափ մի և կէս երկայնութ՟ · և 'ի վ՟ր ունի տասն կամ երկոտասան գաւազանս զուգահեռականս · յորս անցուցեալ կան բազմութիւն մանր գնտակաց շարժականաց · և նոքօք վճարեն զա՟մ համարս իւրեանց · ո՟պ սովորութիւն է առնել և այլոց տխմար և բիրտ ժողովրդոց : Նոյնպէս և գիտութ՟ աստեղաբաշխութ՟ անկատար է յոյժ :

Ճշմարիտ է թէ այժմ տոմարական գիտութ՟ ն՟ց առ փոքր մի կարգաւորեալ է · և ժամանէ ցայն վայր, մինչև նախագուշակել զխաւարմունս արեգական և լուսնի · բայց զայն յեւրոպացւոց ուսեալ 'ի հարց միաբանութ՟ յի՟սեանց · վ՟ զի նախ ք՟ զհասանել ն՟ց անդր · չինացիք այնչափ խորին տգիտութ՟ վարակեալ էին 'ի մասին աստեղաբաշխութ՟, մինչև համարել ն՟ց թէ 'ի խաւարել արեգական կամ լուսնի՝ վիշապ ահագին կլանէ զնոսա : Կարելի է, մանաւանդ թէ կարի հաւանելի թէ միայն ռամիկ ժղ՟վդն էր յայս բիրտ կարծիս, և ոչ գիտնականք ն՟ց · ո՟պ և մինչև ցայսօր խառնիճաղանճք չինաց 'ի նոյն միտս են · որք տեսեալ զխաւարել արեգական կամ լուսնի, սկսանին ծնծղայս հարկանել, փողս հնչեցուցանել, լալ և մեծաձայն աղաղակել առ 'ի հալածական առնել զվիշապն : Սակայն այս ճշմարիտ է, թէ նաև նոյն իսկ աստեղաբաշխք ն՟ց, մինչչև էր հասեալ անդր յի՟սեանց, չունէին զպայծառ ծանօթութ՟ զդրից երկնից, և գուցէ չունին և այժմ :

Եւ չէ՛ մարթ հաւատալ և զայն, զոր ասեն ոմանք զչինացւոց, թէ գիտեն ն՟ք գուշակել զշարժ գետաւորաց • զկարգ պարբերութեց մոլորակաց զարկզաւկամնս, և զփոփոխ խառնարմունս նց՟ • վ՟ն զի առ այն բժշ՟ և այլ ծանօթութեց պէտք են, և նոքա և խորին թուաբանութե՟ • յոր չև են հասեալ չինացիք : Բայց զայս խոստովանիլ պարտ է, թէ աստղաբաշխք նց՟ քաջահմուտ են յիւրեանց արուեստի, կամ գէթ այնպէս կարծին • և չեն ինչ զարմանք • վ՟ն զի առ՚ի երևելի լինել յայնմ, շատ է՝ ոպ՟ ասէ հայրն քօնթի՝ լինել նենգամիտ խաբեբայ, և գիտել խորամանկութբ՟ ստուս յօդել • յորում՝ ը՟ սովորմնի, չեք երբեք զչինս : Վ՟յ և բժշկք են 'ի նոսա այնպիսի խաբեբայք, որք պարծին 'ի ձեռն աստեղագիտութե՟ գուշակել զապագայս • և ամի ամի առնեն աղիւսակս, որով նշանակեն զյաջող և զանյաջող աւուրս վ՟ն ամուսնութե՟ և վ՟ն ճնպհորդութե՟ ը՟ ծով և ը՟ ցամաք • և զայլ պէսպ՟ս սուտ և խաբէական գուշակութս : Տրամաբանական գիտութն, որ դուռն է այլոց գիտութեց՝ անծանօթ է նց՟ • բնաբանութե՟ կամ բնական փիլիսոփայութե՟ և ճարտարապետութե՟՝ հազիւ նշմարանք ինչ երևին առ նս՟ : Կարծեն ունիլ զգիտութի երաժշտութե՟ • զորմէ պարծին ևս թէ ինքեանք հնարեցին, և յետոյ 'ի վերջին ծագ կատարելութե՟ հասուցին • այլ կամ ագիտութբ՟ խաբին, և կամ եթէ հնարեցին ևս, յետոյ իսպառ կորուսին • վ՟ն զի այժմեան երաժշտութի նց՟ այնչափ բիրտ է և անարուեստ • զի և անուն իսկ երաժշտութե՟ չէ արժանի :

'Ի բժշկական գիտութե՟ ևս տկար են և յետնորդ • զի բաց 'ի ծանօթութէ խոտոց ինչ և արմատոց, զոր առաւել 'ի փորձոյ ունին և յաւանդութէ, քան 'ի գրոց, յորոց և կազմեն զնմ՟ դեղորայս իւրեանց, յայլում ամի գրեթէ չեն ինչ ը՟հատ յայլոց բարբարոս ազգաց : Եւ թէպէտ պարծին նք՟ քաջ ճանաչել զզարկ բազկերակին, և անտի գուշակել զհանգամանս հիւանդութե՟ զծանրութն նր՟ և զտևողութն, և թէ մահաբեր իցէ թէ ոչ • բայց չէ պարտ և յայնմ՝ ասեն հարքն յի՟սեանք՝ կարի իմն վստահանալ 'ի նս՟ • զի սակաւք յոյժ գտանին, որք ունիցին զդոյզն ինչ տեղեկութե՟ զայնմանէ : Եւ պտճռն է, զի բժշկութն առ չինս է իբր մի 'ի չնչին և յառաւել դիւրին արհեստից • յոր ով և իցէ անխտիր համարձակ ձեռն արկանէ յորժամ չունի զայլ արհեստ 'ի ձեռին առ 'ի նովաւ գտանել զաւուրեայ պէտս • զի չեք անդ փորձ և քննութե՟ բժշկաց • վ՟յ ամ՟ դատարկաձեռն և գործատեաց անձամբ զանձն կացուցանէ բժիշկ 'ի կորուստ եղկելի հիւանդաց :

գաց : Յայսմ իմէ զոր 'ի հաւատարիմ մատենագրաց առեալ գրեցաք, քաջայայտ երևի սուտ բանից նոցա, որք ներհունս քարոզեն զչինացիս յամենայն գիտութիւնս, և մանաւանդ 'ի չափաբանականս, և յաստեղաբաշխութիւն. զի որպէս տեսաք՝ ոչ այնք, և ոչ այլ գիտունք երբէք ծաղկեցան առ նոսա. ապա թէ ոչ, զի՞ է զի յետ այսչափ բիւրաւոր դարուց ժամանակաց, ընդ որս պանծանօք երկարաձգեն զհնութիւն տէրութեան իւրեանց, չեղև երբէք 'ի նոսա ոք երևելի 'ի գիտութեան իմիք, որպէս 'ի չափաբանութեան, յաստեղաբաշխութեան կամ յայլ գիտութիւնս:

Իսկ յարհեստս թէ ոչ յամենայնի, գէթ յոմանս արժանի են մեծապէս գովութեան. որպէս 'ի բազմակի պաստառս զարմանաւորս, որք յիրաւի հիացուցանեն զտեսօղս. 'ի մետաքսեայ կերպասս, և յախճապակիս են. բայց ոչ նոյնպէս 'ի նկարս, մանաւանդ մարդկային կերպարանաց. սակայն ինքեանք հաճեալ են ընդ նկարս իւրեանց. և գերագոյն համարին զայնս քան զեւրոպացւոցն, և ծիծաղին ևս զնոքօք. որով բարձրաձայն քարոզեն զգիտութիւն իւրեանց : Վասն զի չիք բնաւ 'ի նկարս նոցա ոչ ստուերաց տեղեկութիւն, և ոչ կանոնաւոր զուգախառնութիւն գունոց. և մանաւանդ համեմատ չափակցութիւն անդամոց մարդկային մարմնոյ. Իսկ այն՝ զի զծաղիկս և զթռչունս լաւ քան զեւրոպացի նկարիչս երևին նկարել, այն է վասն ազնուութեան և պայծառութեան երանգոցն, և ոչ 'ի ճարտարութենէ նոցա, յորս չեն պէտք այնչափ հմտութեան ստուերաց, որչափ 'ի ստուերագրութեան մարդկային կերպարանաց : Այլ թէ ընդ այնպիսի սքանչելի գունոց, ունէին և քաջ հմտութիւն յարհեստին, ապաքէն զարմանալի լինէին նկարք նոցա :

Բայց որպէս խօսելով՝ գիտեն քաջ զհետ երթալ և նմանել արուեստաւորաց գործոց եւրոպացւոց, այլ ծառայաբար. զի ոչ կարեն անտի զայլ ինչ հանճարել, կամ կատարելագործել. այլ լոկ նմանութեամբ օրինակեն : Սակայն և յայնժամ 'ի բազմաց թերի գտանին. որ առաւել յայտնի երևի 'ի գործս, առ որս պիտի առաւել ինչ ուշիմութիւն, երկայնմտութիւն, զգուշաւորութիւն և ջանք, որպէս են փոքրիկ անուաւոր ժամացոյցք, հրացանք, որք ատրճանք և ատրճանակք են. զորս ուսան յեւրոպացւոց. բայց դեռ բազում ունին աշխատել մինչև հասցեն 'ի չափ կատարելութեան նոցա : Սակայն և այնպէս զարմանալ արժան է և ընդ այսչափ իսկ զարգանալ նոցա յարուեստս և 'ի գիտութիւնս. վասն զի չունելով նոցա բնաւ հաղորդութիւն ընդ այլոց զգօնամիտ և հանճարեղ ազգաց, ոչ ընկալան նոքա մինչև ցայս՝ ՚ի նոցանէ յուղղել և ՚ի կատարելագործել զարուեստ և զգիտութիւնս իւրեանց, եթէ ոչ ՚ի վերջին ժամանակս, յորում փոքր մի լուսաւորեցան ՚ի հարցն յիսուսեանց ՚ի տոմարական և ՚ի չափաբանական գիտութիւնս. վասն զոր ինչ ունին իւրեանց ջանիւք և ուշիմութեամբ հանճարեցին. որ արդարև մեծ իմն է:

ԺԱ. Հնութիւն և պատմութիւն Չինաց:

Պատմագէտք չինաց անմիաբան են ՚ի վերայ սկզբան և տեւողութեան ինքնակալութեան կամ միապետութեան իւրեանց. Ոմանք ՚ի իւրեանց բնածին չափազանց շաղակրատութեամբ զսկիզբն նորա բիւրաւոր դարուց յառաջ ձգեն. ասելով թէ առաւել քան 40 հազար ամք են յորմէ հետէ հիմնեցաւ ինքնակալութիւն իւրեանց. ուսանի և հազարաւոր ամօք յառաջ քան զարարչութիւն աշխարհի: Այլ զգօնագոյնքն, որոց զհետ երթայ և հայրն Քոնթի, և այլք ոմանք ՚ի մատենագրաց եւրոպացւոց, թողեալ զայս յիմարական առասպելս, ասեն թէ այս ինքնակալութիւն սկսաւ իբրու 4120 ամօք յառաջ ՚ի թագաւորէ ումեմնէ որոյ անունն էր Յաօվ: Հարք եւս՝ որոց զհետ երթան ժամանակագիրք եւրոպացւոց իբր առաւել հաւանելի կարծեաց՝ զսկիզբն նորա դնեն լինել 2952 ամօք յառաջ քան զգալուստ փրկչին մերոյ. վասն յայսմ ամի, որ է 1806 լինին 4758 ամք յորմէ հետէ հիմնեցաւ այս ինքնակալութիւն. որ յամի արարչութեան աշխարհի 2048. 392 ամօք յետ համաշխարհական ջրհեղեղին.

Այս կարծիք եթէ ճշմարիտ իցէ, առանց հակառակութեան սա լինի հնագոյն միապետութիւն որ լեալ իցէ յաշխարհի: Բայց որպէս ասէ կալմէթ. Որք զգուշագոյն քննեցին զիրաց՝ հարկեցան խոստովանիլ, թէ որ ինչ ասի յաղագս ծագման և վաղնջականութեան այսր երևելի ինքնակալութեան. և վասն յերկարաձիգ կարգի թագաւորացն չինու, զորս հասուցանեն մինչև ց209. կամ ըստ այլոց ց236, որք եղին ՚ի քսան և երկու տոհմից, և յաջորդեցին զմիմեանս, չէ ինչ հաւաստի. և ոչ հիմնեալ յարժանահաւատ ինչ յիշատակ. բայց ՚ի վերջնոց ամաց||: Քանզի հիմն սոցա հաստատեալ է ՚ի հին յիշատակարանս և ՚ի պատմութիւնս չինաց. իսկ առ նոսա չիք այժմ հին մատեան. վասն զի իբրու 2000 ամօք յառաջ մի ոմն յինքնակալաց նոցա ետ այրել ՚ի հուր զամենայն մատեանս, որք գտան յաշխարհի անդ իւրում. նմին իրի որ ինչ յեղելոցն յառաջ քան զայն պատմի այժմ ՚ի գիրս չի-

չինաց՝ լոկ յաւանդութիս հիմնեալ է. Թող զայն՝ զի և յետ այնորիկ բազում անգամ նորոգեցան մատեանք ն՟ց օրինակելով սակս դիւրեղծական Թղթոյ ն՟ց, որ՟պ ասացաք 'ի վերոյ. և յօրինակսն անդ ոչ սակաւ փոփոխումն կարծի լեալ հրամանաւ Ինքնակալաց ն՟ց կ՟մ առ 'ի նոր կարգ ինչ մուծանել. և կ՟մ առ 'ի եւս մեծացուցանել 'ի միտս ժողովրդեան զգերազանցութ՟ն ազգի իւրեանց : Վ՟ս պատմութ՟իւք չինաց, որք պատմեն զվաղնջական իրաց երկբայական են : Այլ Թողեալ զմանրազննին քննութ՟ն պատմութ՟ց ն՟ց, դիցուք յառաջիկայդ զկարգ առաջնոց Ինքնակալաց ն՟ց,
և զգլխաւոր գործս ն՟ց :

Արդ՝ ը՟ նախակարգեալ եր՟դ կարծեաց՝ առաջին հիմնադիր այսր երևելի Ինքնակալութ՟ն եղև Ֆոհի. որ թ՟գրեաց 2952 կ՟մ 3000 ամօք յ՟ռջ ք՟ զ՟ք : Սա ը՟ պատմելոյ չինաց՝ եած յընկերութ՟ն զժողովուրդ այնր ը՟րձակ երկրի. զի մինչև ցայն ժամ բնակիչք նորա թափառական շրջէին 'ի լերինս և յանտառս՝ վարելով կեանս զօրէն անասնոց : Այլ յայսմ վայրի առարկոյս ը՟առաջ եկանէ, թէ զիարդ հնար եղև զվայրենի մարդիկ ածել յընկերութ՟ն և 'ի ք՟ղքականութ՟ն առանց լեզուի՝ որ իցէ հն՟րկ օրէնսդրին և վայրենի ժողովրդեան. և զիարդ մարթ էր լինել միոյ լեզուի ն՟ց՝ առանց ընկերութ՟ն կ՟մ 'ի միասին բնակութ՟ն. այլ զայս ևս դասեալ 'ի կարգ առաջնոց առասպելեաց՝ մատիցուք յ՟ռջ : Սա ասեն չինացիք՝ կարգեաց օրէնս, հնարեաց զերաժշտութ՟ն, (այլք զգիւտ երաժշտութ՟ն տան հօամթեայ Ինքնակալի.) հետամուտ եղև աստեղաբաշխութ՟ն, ընտրեաց զվիշապն 'ի նշան թ՟գրութ՟ն չինաց, զոր վարեն մինչև ցայսօր. պաշտէր զԳերակայ հոգի երկնի և երկրի. և մատուցանէր ն՟մ զոհ եօթն ազգս անասնոց, զորս սնուցանէր յիւրում դարպասի : զՖոհի յաջորդեաց Զիննում կ՟մ Քսիննում, որ ուսոյց զերկրագործութ՟ն և զայլ արհեստս
յաւէտ կարևորս մարդկային կենաց :

Հօամթի թ՟գրեաց 2697 ամօք յ՟ռջ ք՟ զ՟ք. նա հնարեաց զդարս կ՟մ զվաթսնամեան շրջանս չինաց՝ աշխատասիրութ՟բ Թանօվայ քաջ աստեղագիտի. եգիտ կ՟մ պայծառացոյց զերաժշտութ՟ն, և զզէնս, և զկարթ ձկնորսութ՟ն, զսայլ, զնաւակ և զայն ամ՟, զոր պահանջէ արհեստ դարբնութ՟ն : Իսկ կին ն՟ր անուանեալ Լօվխսու ուսոյց յարդարել և պատրաստել զմետաքս, և գործել նովաւ կերպասս : Սոյն այս Ինքնակալ եդ նոր կարգ 'ի ք՟ղքական կառավարութ՟ն, կարգելով եօթն նախարարս կամ նախապատիւ պաշտօնէատարս թգ̃րութեան . զորս չինացիք Քալասօ կոչեն : Գրեաց և գիրս ինչ 'ի վ̃ր դեղորէից . յորմէ երևի թէ արհեստն դրութեան գոյր առ չինս և յռ̃ջ ք̃ զնա . այն զի՝ պատմութիւն չինաց աւանդէ , թէ ֆօհի առաջին ինքնակալն̃ց գրեաց մատեան 'ի վ̃ր աստեղաբաշխութե . ապա և 'ի ժամս ֆօհեայ ունէին չինացիք գիրս , կամ ածելի է թէ նա հնարեաց : Մեռաւ հօամթի 2577 ամօք յռ̃ջ ք̃ զք̃ի :

Յետ նորա Թգ̃րեաց Քաաօ լաւօ , որ սկսաւ շինել ք̃ղաքս և պատել զնոքօք պարիսպս . հնարեաց զնորատեսակ իմն երաժշտութ̃ն . և եմուծ զսովորութ̃ն լծելոյ եզինս 'ի սայլս . և մեռաւ 2517 ամօք յռ̃ջ ք̃ զք̃ի : Զսա յաջորդեաց Քօւէն հիօ Թոռն հօամթեայ , որ օրէնս եդ , զի այնուհետև ոչ ոք իշխեսցէ զոհս մատուցանել բարձրելոյն կամ երկնից ինքնակալին , բայց 'ի Թագաւորէն : Սա հնարեաց զտոմարն չինաց . և եդ սկիզբն տարւոյ զծնունդ լուսնոյ՝ որ յաւէտ մերձաւոր է գարնան . որ 'ի չինաց ե̃ի անկանի 'ի ժամս Ջըրհօսին , այսէ՝ 'ի մերումս փետրվարի . վ̃յ չինք մինչև ցայսօր զամիսս և զամս չափեն ը̃ ընթացից լուսնի . և զօրն սկսանին 'ի կէս գիշերոյ : Զկնի ս̃ր կալաւ զթգ̃րութ̃ն Թիկօ Թոռն ն̃ր 2457 ամօք յռ̃ջ ք̃ զք̃ի . որ ունէր չորս կանայս . կացոյց վ̃ժպետս ուսուցանել զժղ̃վդն . և ինքն ուսոյց զձայնաւոր երաժշտութ̃ն : Զկնի այսց վեց ինքնակալաց յաջորդեցին երկու հռչակաւոր ինքնակալք և օրէնսդիրք Եօվ կամ Յաօվ , որում ընծայեն ոմանք զհիմնարկութ̃ն ինքնակալութ̃ չինաց . և Սամ կամ Քսամ : Ս.ք̃ հաստատեցին զծէսս , և զահմանադրութիւնս ք̃ղքականս . արարին և այլ բ̃զմ շինութիւնս . յորոց սակի է և այն , զոր պատմեն վասն եօվայ , թէ ազատեաց զե̃ չինաց յիննամեան ջրհեղեղէ . բացեալ ջրմուղս և առուս ը̃ որս զծովացեալ ջուրս իջոյց 'ի ծով . և վ̃ն այսր երախտեաց արժանացաւ ընդունել զպսակ : Երկոքին ս̃ք ը̃ աւանդելոյ պատմութ̃ն չինաց թգ̃րեցին ամս 150 (որ անհաւատալի է) զոր միացուցել ը̃ 587 ամաց , յորս թգ̃րեցին վեց նախակարգել ինքնակալք , ը̃ ամ̃ լինին 737 ամք : Արդ՝ յերկուց ասացեալ երևելեաց , և 'ի վեցից առաջնոց իջանեն քսան տոհմք արքայականք , յորս եկաց մնաց թգ̃րական իշխանութ̃ն ը̃ դարս յոլովս 'ի սոսա յաջորդել և զայլ երկու տոհմս Թաթարաց , յորոց Թագաւորեցին 'ի չին՝ ը̃ ամենն լինին քսան և երկու տոհմք :

Քան

Քանզի նախ՝ գերահռչակ Ճինկիզխանին ազգաւ Թաթար փոքր մի յետ Քի զամ ամն 1200 տիրեաց մասին ինչ քաղաքաց. որ այն ինքն է հիւսիսային մասն Չինու. ապա 'ի 1228 ուխաթայ որդին նր եկաւ և 'ի հարաւային մասանէ զնոցին տեղիս, Ը որս և զնանքին արքայանիստ քղք չինաց՝ զոր աւար հարեալ դարձաւ 'ի տեղի իւր. յետոյ որդի նր գիւուգ կմ գույուգ. զկնի մանգույ խանի, որ մեռաւ 'ի 1260 ամն 'ի չինաց ծի: Սք թէպէտ տիրեցին բզմ տեղեաց չինու, այլ ոչ ոք 'ի նցէ կալաւ զինքնակալութիւն նց. մնչ և ոչ իսկ կոչեցան ինքնակալք չինու: Ապա յարեաւ քուպլայոս եղբայր մանգույ խանին 'ի չինաց Վուխքու անուանեալ, և յամին 1268 յաղթահարեալ զփիլթիմ բնիկ ինքնակալ չինաց, զոր թաթարք Փաքֆուր կոչեն. որ էր 'ի սում յիննևտասներրդ արքայական տոհմէ, զբոլոր թգրութիւն չինու Ը իւրով ձեռամբ նուաճեաց, զինքնակալութիւն նց 'ի տոհմն իւրենոյ փոխեալ, և զաթոռ թգրութեան իւրոյ հաստատեաց 'ի փեքին. ուր և թգրեաց մինչև ց1295. և զնա յաջորդեցին այլ ևս ութ ինքնակալք 'ի նոյն իւրեններն տոհմէ. որք թէմուրխան կմ քիմքում թոռն քուպլայոսի մինչև ցամն 1308. վուքում մինչև 1312. Ճինքում մինչև 1321. իմքում մինչև 1324. գայթիմ մինչև 1329. միմքում մինչև 1330. վենքում մինչև 1333. և քաունթի մինչև 1369. որ եղև վերջին ինքնակալ 'ի Ճինկիզխանեան սերնդոց յիւրեններն տոհմէ: Քանզի յամին 1369 զօրացեալ չինաց՝ հանին վանեցին զթաթարս յերկրէ իւրեանց. և վերստին սկսան բնիկ չինացիք թգրել 'ի միմ տոհմէ. որք և թգրեցին մինչև ցկէս նախանցեալ դարու. որ ցամ ամն մերոյ 1645. զի 'ի նմին ամի հիւսիսային կմ Նիւքայի թաթարք կալան զինքնակալութիւն չինու. և 'ի սերնդոց նց թագաւորեն մինչև ցայսօր. զորոյ զպատմութիւն 'ի դէպ համարիմք համառօտել յայսմ վայրի:

Սունչի կմ քուանքի և կմ գուանթէ թգր նիւքայ, որ է փոքրիկ ազգ ինչ թաթարաց 'ի հիւսիսոյ արևելից չինու, զոր յառաջագոյն յետ մեծ թաթարաց տարագրեցաք, խնդրեաց զհատուցումն վնասուց ինչ և զրկանաց, զոր ժղվդ իւր կրեալ էր յումանց 'ի մեծականաց չինաց, և 'ի մերժել զնա և յապախտ անել զբանս նր ինքնակալին չինաց, անձամբ կամեցաւ առնել իրաւունս: Այս զօրաժողով լեալ, յարձակեցաւ 'ի լէաթօնկ նահանգ, որ է արտաքոյ մեծի պարսպին: Իսկ ինքնակալն չինաց առաքեաց ընդ դէմ

Նր՟ զմի ոմն 'ի գլխաւոր սպարապետաց իւրոց ուսանկվէյ անուն յոքնախումբ զօրօք . և երկարեցաւ պտ՟զմ 'ի մէջ ն՟ց ը՟ հարուստ մի ժմկ , երկոցուն կողմանց անպարտելի մնացեալ ։ Ընդ այն ժամս սով մեծ եղև 'ի չին , և ժղ՟վդքն հնդաց ոմանց ոչ կարելով վճարել զտավորական հարկս յոյր սակս և 'ի խոշտանգանս մատնել 'ի հարկապահանջից, ապստամբեցան. գլուխ և առաջնորդ ապստամբութեան ունելով զմի ոմն 'ի չինաց անուն լիւգունձ անուն ։ Նա գումարեաց բազմութե՟ն աւանց պտ՟զմողաց , և դիմեաց 'ի վ՟ր փեքին արքայանիստ քաղաքի ։ Սա ք՟զի գիտէր՝ թէ դժուարին է նմ՟ պտ՟զմաւ առնուլ զք՟ղքն զայն ամրապարիսպ . որում 'ի խաղաղութե՟ ժմկի կային 'ի պահպանութե՟ 80 հազար զինուորք ընտրելագոյնք 'ի համօրէն զօրուէն . Նմին իրի յառաջագոյն 'ի ձեռն պարգևաց և մեծամեծ խոստմանց 'ի կամս իւր որսաց զներքինիս արքունեաց , որք առ նովին ժմկաւ զօրաւոր էին յոյժ . զի 'ի ձեռս ն՟ց էին գերագոյն իշխանութի՟ք արքունի տանն . և զի դժկամակս ինչ կրեալ յինքնակալէն ոխուց՟ էին ը՟ նմ՟, և հանապազ գուն գործէին ակէսպ՟ հնարիւք ատելի առնել զնա ժողովրդեան և զօրաց ։ Յայն սակս 'ի հասանել լիւգունձայ 'ի փեքին , բացան առաջի ն՟ր դրունք քաղաքին . և նա եմուտ իբր յաղթական 'ի ք՟ղք անդր ։ Իսկ եղկելի ինքնակալն տեսեալ զանձն լքեալ 'ի թիկնապահ զօրաց իւրոց , և մատնեալ 'ի ձեռս թշնամւոյն , ընտրեաց զմահ , ք՟ կենդանւոյն անկանել 'ի ձեռս ծառայից իւրոց ։ Վ՟ն այս եւ մեկուսացեալ 'ի պարտէզ արքունեացն ը՟ միամօր դստեր իւրոյ . գրեաց գիր աղերսանաց առ լիւգունձ չթողացուցանել զզօրս իւր առնել չարիս ժողովրդեան . և ինքն սուր եդեալ 'ի պարանոց դստեր իւրոյ անդէն խողխողեաց զնա , զի մի անկցի 'ի ձեռս բռնակալին և պղծեսցի արքայական սերունդ իւր . ապա և անձին խեղդ արկեալ մեռաւ և նա ։ Զնոյն արարին և դշխոյ տիկին ն՟ր , և ք՟ղքապետ ք՟ղքին և այլք ոմանք 'ի մեծամեծաց՝ արք և կանայք , որք էին 'ի կողմն ինքնակալին , առ երկիւղի ապստամբացն , և առ սաստիկ աղէտից վ՟ն մահու հարազատ ինքնակալի իւրեանց ։ Եւ լիւգունձ անարգել տիրապետեալ արքունեաց , կալաւ զինքնակալութե՟ն չինաց ։ Բայց ք՟զի դեռ կասկած երկիւղի կրէր 'ի սրտի 'ի ուսանկվէյայ սպարապետէն , աճապարեաց խաղալ 'ի վ՟ր ն՟ր մինչդեռ 'ի պտ՟զմի էր ը՟ թաթարս զի և զնա ը՟ իւրև հնազանդրեցուցէ. և զզօրսն յիւր կողմն ձգեցէ. որով յամ կողմանց ապահովեալցի տէրութի նր: Այլ վրիպեցաւ ՚ի յուսոյ. Քզի լուէլ ուսանկվէյայ զամանցս, որք անցին ՚ի Փէքին, վղվղկի հաշտուն արար ը Թաթարս, և առեալ զնս յօգնութն, դարձոյց զզէնս իւր ՚ի վերայ բռնակալին ՚ի միասին ը Թաթարաց: Բայց նր ծանուցեալ զ՚ի վերահաս վտանգն, փութացաւ կողոպտեալ զգանձն արքունի, յաւարի էառ զքղքն և այլ բիւր չարիս գործեաց ժողովրդեան՝ և փախուցեալ անկաւ ՚ի նհնգն Չէնսի, լցեալ անբաւ ձախութբ, միանգամայն և անիծիւք ժղվդեան: Իսկ Թաթարաց մտեալ ՚ի Չին, եկին ՚ի Փէքին. և ուսանկվէյ հանդերձ իւրով գնդաւ պնդեցաւ զհետ բռնակալին: Եւ մինչդեռ նա հետամուտ լինէր բռնակալին, առ ՚ի բառնալ զնա ՚ի միջոյ, սունչի Թգր Թաթարաց, որ անդէն ՚ի ձեռին ունէր զՓէքին և զարքունիսն նր, եւ քարոզեալ զանձն ինքնակալ Չինաց. և այնպէս յինքն կալաւ զտէրութի նց: Եւ առ յաւէտ ամրացուցանելոյ զտէրութի իւր, մինչև էր դարձեալ ուսանկվէյայ՝ եհան ՚ի քղքէ անտի զբնիկ Չինս, և բնակեցոյց զնս արտաքոյ քղքին, ուր ետ շինել նոր քղք. և ՚ի տեղի նց փոխադրեաց ՚ի հին քղք անդր զԹաթարս, որք յառաջնմէ բնակէին ՚ի Չին: Իբրև դարձաւ ուսանկվէյ ՚ի պտզմէն, և ետես զինքնակալութն իւրեանց մտանել ՚ի ձեռս Թաթարաց, լցաւ զարմացմամբ և սրտմտութբ ը դաւաճանութն նց. այլ չէր առժամն ձեռնհաս բռնութբ վանել զնս, հարկեցաւ զիջանիլ և միաբանիլ ը սունչեայ, որ առեալ նմ երիս մեծամեծ նհնգս ՚ի նհնգաց անտի Չինաց Ծի, անուանեաց զնա Թգր: Իսկ նր մտեալ ՚ի ժառանգութն նհնգաց իւրոց, ՚ի սուղ ժմկի ժողովեալ յամ կողմանց դրամս և զօրս բզմս հորդան եւ գաղտնաբար ՚ի վր Թաթարաց. և զառաջինն անդ ոչ սակաւ յաղթութիս արար. և եթէ չէր կանխեալ օրհասի նր, (զի մեռաւ զկնի սակաւուց իւրով բնական մահուամբ,) կարծեմ թէ իսպառ հանեալ էր զԹաթարս ՚ի Չինաց Ծէ: Այլ որդի նր որ յաջորդեաց զնա, աննման գոլով հօրն արիութե, հանճարոյ և պտզմական վարժութց, ՚ի պարտութն մատնեցաւ առաջի Թաթարաց. որոց ոչ սակաւ նպաստեցին և Եւրոպացիք ուսուցանելով նց ձուլել թնդանօթս. և այլ զինչ կահս կարևորս ՚ի պտզմի, որք ցայն վայր անծանօթ էին նց:

Եւ ահա ը այսմ մեծահամբաւ միահեծան տէրութն չինաց էանց 'ի ձեռս Թաթարաց յամի փրկչին մերոյ 1645. և մինչև ցայսօր կայ մնայ 'ի ձեռս ն՟ց: Եւ զի 'ի սկզբան անդ Թաթարքն սակաւաթիւ էին 'ի չին, սակայն խորագէտ թ՟գր նոցա հարկեցաւ զա՟մ հնարս 'ի գործ դնել առ 'ի հաստատութ՟ն տ՟րութ՟ իւրոյ. յայն սակս հրամայեաց չինաց սափրել զվարս գլխոյ՝ փունջ մի եւեթ թողել 'ի գագաթան. զի չինացիք կրէին վարս երկայնս, զոր փառս համարէին անձանց. և զգենուլ ը՟ ձևոյ զգեստուց Թաթարաց. նոյնպէս և զզգեստս զօրաց ն՟ց փոխեաց 'ի տարազ զօրաց Թաթարաց: Զայս արար մի՝ 'ի բառնալ զարտաքին խտիր որ 'ի մէջ չինաց և Թաթարաց. և 'ի ծածկել այնու զսակաւութ՟ն Թաթարաց և զնուազութ՟ն զօրութ՟ն ն՟ց. երկուցեալ թէ գուցէ չինք յարիցեն 'ի վ՟ր ն՟ր, և հանցեն զնոսա և զա՟մ Թաթարս յ՟եկ իւրեանց: Եւ երկ՟րդ՝ զի համարէր թէ 'ի ձեռն այսպիսի արտաքին նմանութ՟ առ սակաւ սակաւ և ներքին յօժարութ՟ն և ընտանութիւն բարք երկուց ազգաց ը՟ խառնեսցին ը՟ միմեանս: Եւ ես գրեմ թէ զա՟մ երևելի իշխանութիւնս և պաշտօնս ո՟ր զկուսակալութ՟ն զքաղաքապետութ՟ն և՟ն բաշխեաց մեծամեծաց բնիկ չինաց. գիտելով այսու պարտաւորել զն՟ս 'ի հաւատարմութ՟ն և 'ի հնազանդութ՟ն ինքեան. բայց 'ի պաշտօն զօրապետութ՟ն ոչ կացուցանէր 'ի ն՟ց: Պահեաց զա՟մ նախնի օրէնս և զքաղաքական սահմանադրութիւնս ը՟ նոսին և զհն՟րկ սովորութիւնս, զի մի նորաձևութ՟բ իւիք յապստամբութ՟ն գրգռեսցէ զն՟ս. և զի միանգամայն ասացից՝ առաւել Թաթարք նմանեցան և հնազանդեցան չինաց, ք՟ չինք ն՟ց. զի բաց 'ի վարսից և 'ի զգեստուց, յայլ ա՟մ իրս Թաթարք զհետ գնացին չինաց. ուստի այժմ հազիւ նշմարի ինչ զն՟շ՟նութ՟ 'ի մէջ ն՟ց: Արդ՝ յետ միանալոյ Տ՟ին չինաց ը՟ Թաթարաստանս, առաւել զօրացաւ և չունի այնուհետև երկիւղ ինչ ուստեք. զի շրջակայ ազգքն տկար են և անզօր:

Ժէ. Կառավարութ՟ն Չինաց:

Կառավարութիւն տ՟րութ՟ն չինաց 'ի սկզբանէ անտի հի՟մնարկութ՟ն ն՟ր եղև միշտ՝ և է մինչև ցայսօր միապետական. և ը՟ այնչափ դարս ժ՟մկաց թէպէտ տոհմք արքայազունք փոփոխեցան, այլ տարազ կառավարութ՟ն ն՟ց ոչ երբեք: Յայն սակս լուեալ չինաց զաւաքինն 'ի դեսպանէն հոլանտացւոց զանուն հա-

սա

տարակայետութե՟, գլխովին օտար և անլուր ի մե՟ թուեցաւ նց ․ և ոչ կարէին, ո՟չ և մինչև ցայժմ ոչ կարեն հասու լինել, թէ զիարդ հնար իցէ միոյ ազի և տրութե՟ բզմ տեարս ունել ․ որ թուէր նոցա իբր հրէշ իմն բազմագլխեան ․ և չէին ինչ զարմանք, զի ինքեանք այնպէս տեսին, և այնպէս ուսան 'ի նախնեաց իւրեանց ․ յոյր սակս և զմտաւ ածել անգամ զայլ իմն տարազ կառավարութե՟ ոչ կարեն ։

Արդ թզրն չինաց, որ կոչի կայսր կմ ինքնակալ, զի բզմ փոքր թզրութիս ունի ը՟դ իւրև, է գերագոյն գլուխ և տր ինքնիշխան համօրէն ազի նոցա ․ որում ածական պատիւ ընծայեն, կոչելով զնա տր ․ որդի երկնից, տր ամ ․ միակ տր և նախախնամօղ երկրի ․ մեծ հայր ժողովրդեան ։ Որ ուրեմն երևեցուցանէ զանձն ժողովրդեան ․ և չէ մարթ երբեք յանդիման լինել նմ, կմ խօսել առ նա՝ ոչ միայն իշխանաց, այլև եղբարց իսկ նր, եթէ ոչ 'ի ծունկս անկել, և զերեսս մինչև յերկիր խոնարհել ։ Զայսպիսի մեծարանս ընծայեն և դատարկ աթոռոյ նր ․ զի ունին աւուրս ինչ սահմանել, յորս իշխանք ժողովին 'ի գաւիթ մի ապարանեաց 'ի ցուցանել զհնազանդութի իւրեանց առ ինքնակալն ․ և զխոնարհագրեալ պատիւ և երկրպագութի ընծայեն լոկ աթոռոյն, թէպտ և ինքնակալն չիցէ անդ ։ Ամ բանք բերանոյ նորա են իբր պատգամք ածայինք, և հրամանք նր են օրէնք անդարձելիք ․ յորոց չիք հրաժեշտ կմ յապաղումն ։ Նա հաստատէ օրէնս՝ և զառաջինս բառնայ կմ փոխէ ։ Նա կարգէ 'ի դասս գիւցապանց, կմ զի յայտնի առացից՝ ածացուցանէ զայնոսիկ, որք առ կենդանութբ նշանաւորք եղեն յառաքինութիւս ինչ, և երախտաւոր առ թզրութե՟ իւրեանց ։ Նա ընտրէ իւր յաջորդ ․ և կարող է մերժել զանդրանիկ իւր զօրինաւոր յաջորդ թզրութե՟՝ զծնեալ 'ի միջէ յերից տիկնաց անուն, որք կոչին գշխոյք, եթէ տեսցէ 'ի նմ անբաւականութի առ այնպիսի գերագոյն իշխանութի ․ և փոխան նր նստուցանել զորդի միոյ 'ի հարճից իւրոց, կմ զայլ ոք յորմէ առնէ և իցէ ։

Բայց այս հազիւ երբէք դիպի ․ և ոչ իսկ արարին երբէք այնչափ ինքնակալք զայդպիսի ընտրութի առանց հաւանութե՟ գերագոյն ատենի, զոր ստորև ունիմք նշանակել ։ Յորժամ ինքնակալն անուանէ զոք յորդւոց իւրոց իւր յաջորդ, այլք թէպէտ և երիցագոյն իցեն հասակաւ քն զնա, նոյն ժամայն մտանեն ը՟դ նր հնազանդութբ ․ և իւրաքանչիւր

'ի

'ինչէ երթայ բնակէ 'ի միում 'ի քաղաքաց, որ սահմանել է նմա· և ոչ կարէ ելանել անտի առանց յայտնի հրամանի ինքնակալին, ոչ վարէ անդ իշխանութիւն ինչ, այլ է լոկ մեծազգի ումն ազատ:

Դարձեալ նորին ինքնակալի է առնել պատերազմ կամ խաղաղութիւն· դաշինս հաստատել ընդ օտար թագաւորութեանց որով և լիցէ պայմանաւ ըստ իւրոց հաճոյից· միայն թէ չիցեն պայմանքն նուաստացուցիչ և անարգու թագաւորութեան իւրեանց: Եւ նա կարող է փոխել զձև գրոց իւրեանց՝ ջնջել զառաջինս, և նորս սահմանել· փոփոխել զանուանս քաղաքաց և գաւառաց· այլայլել զձև և զեղանակ գրելոյ և խօսելոյ· բառնալ զհին սովորութիւնս և նորս մուծանել· և նոր տարազ քաղաքական կենակցութեան սահմանել կն: Վճիռք և սահմանադրութիւնք գերագոյն ատենից համօրէն թագաւորութեան իւրոյ զնմէ կախեալ կան· զի առանց նորա հաւանութեան և հաստատութեան առ ոչինչ գործին: Նորա է բաշխել զամենայն քաղաքական և հոգևոր իշխանութիւնս· և զի միանգամայն ասացից՝ 'ի ձեռս նորա է տնտեսութիւն բոլոր թագաւորութեան:

Այլ զի տիրապետութիւն նորա ոչ է բռնական, այլ օրինաւոր միապետական· վասն այնորիկ թէպէտ ընդարձակ է յոյժ իշխանութիւն նորա· և ըստ տեսելոյ ումանց իբր անսահման, սակայն ոչ է անկանոն և արտաքոյ օրինաց· ոչ զի առնել նորա զամենայն, զոր ինչ լոկ հաճոյք իւր թելադրեն նմա· այլ ուղղել և կարգաւորել օրինօք, զորս ընդ դարս դարս հաստատեցին նախնիք իմաստունք նոցա: Օրինակ իմն, թէպէտ ինքնակալին է հաստատել օրէնս, կամ բառնալ և փոփոխել, այլ ոչ երբեք առնէ զայն առանց խորհրդոյ իշխանաց գերագոյն ատենի իւրոյ· վասն զի 'ի տնտեսութեան մեծամեծ խորհրդոց թագաւորութեան իւրոյ ունի այլ և այլ ատեանս և ժողովս, և նոքօք կատարէ զամենայն:

Առաջին և գլխաւոր՝ են երկու գերագոյն ատեանք· մի՝ արտաքոյ կարգի, որոյ ատենակալք առհասարակ են յարքայական սերնդոց· միւսն սովորական· ուր բաց 'ի թագազարմ ատենակալաց՝ մտանեն և այլք ումանք 'ի նախապատիւ իշխանաց, որք Բօլայք կոչին: Սոքա քննեն զամենայն մեծամեծ խորհուրդս թագաւորութեան· զորս ապա ծանուցանեն ինքնակալին· և ընդունին 'ի նմանէ զվերջին բացորոշութիւն:

Բաց յայսց երկուց գերագոյն ատենից են 'ի փէքին արքայանիստ քաղաքի և այլ վեց գերագոյն ատեանք· որոց իշխանութիւնն ձգի 'ի վերայ համօրէն թագաւորութեան· ունելով իւրաքանչիւրոց սեփական գործ ուղղել և կար-

կարգել ը՟ օրինաց երկրին: Առաջինն, որ անուանեալ կոչի Լիւփիւ կ՟մ Լիփօվ, հսկէ 'ի վ՟ր մանտարինաց, որք են իշխանք երկրին, և քննէ զա՟մ գնացս ն՟ց 'ի պաշտաման իւրեանց. կացուցանէ կուսակալս և դատաւորս ն՟հ՟նգաց. հաստատէ կ՟մ փոխէ զն՟ս ը՟ պիտոյից, բայց միշտ գիտութ՟ և հաւանութ՟ ինքնակալին: Երկրորդն անուանեալ Հօփօն կ՟մ Հօփու, իշխէ 'ի վ՟ր արքունի գանձուց և ա՟մ արքունի հասից և մտից, և Թ՟գ՟րական կալուածոց. ունի զհաշիւ համօրէն տանց բոլոր Թ՟գ՟րուե, զոր ամի ամի նորոգէ, և զկալուածոց և զընչից ն՟ց. և Թէ իւրաքանչիւր 'ի ն՟ցէ որչափ ինչ պարտական է տալ յարքունիս ամի ամի: Երրորդն կոչի Լիփու, որոյ է դատաստան առնել 'ի վ՟ր ա՟մ իրողութ՟եց կրօնի. կարգաւորել զհրեշտակութիս, զհանդիսական սօնս, և զամուսնութիս. այլև խնամ ունել զարգանալոյ գիտութ՟եց և արհեստից, և քաջ պահպանութ՟ե նախնի սովորութ՟եց: Չորրորդն կոչեցեալ Փիմփու կ՟մ Փինփու, կարգեալ է 'ի վ՟ր պատերազմական գործոց, յայն սակս զն՟մ՟ կախեալ կան սպարապետք և զօրավարք. ն՟ր է խնամ ունել բերդից, ամրոցաց, զինարանաց, նաւուց և այլ ա՟մ իրաց, որք հային 'ի զինուորութ՟իս Թ՟գ՟րուե. ուստի և է նոյն, որ ինչ առ օսմանցիս՝ Ճէնկ տիւանի: Հինգերրորդն կոչի Հինփու, որ դատէ զդատաստան յանցանաց կ՟մ արեան: Իսկ վեցերրորդն Քօմփու, որ խնամ ունի Թ՟գ՟րական կ՟մ հ՟ս՟րկաց շինուածոց տաճարաց, կամրջաց, Թմբից, ջրմղաց, արքունի ճ՟ն՟պ՟հաց, նաւուց են:

Իւրաքանչիւրն 'ի վեց ատենից աստի դարձեալ բաժանի յայլ փոքրիկ ժողովս կամ խումբս՝ ոմանք մինչև ցժէ. զառաջինն 'ի փոքրիկ ժողովոց անտի կացուցանեն երեք անձինք ևեթ. ո՟ր մի ունի նախագահ, և երկու ընթերակայք կ՟մ գահակիցք, և ն՟ց հասանէ վերջին քննութ՟ի ա՟մ իրաց, որք հային յայն ատեան: Իսկ այլք 'ի փոքրիկ ժողովոց են 'ի ներքոյ իրերաց, զորս կացուցանեն մի նախագահ և ոմանք ատենակալք կ՟մ խորհրդականք, ամէն կախեալք զգլխաւոր նախագահէ առաջնոյ ժողովոյն. և չէ օրէն զդատ ինչ հանել առ ինքնակալն, մինչև իցէ քննեալ զայն ատեանն առ որ պատշաճի այն դատ: Եւ Թէպէտ ա՟մ նախակարգեալ գերագոյն ատենից որոշեալ են գործք, բայց զի մի զեղծանիցին գերագոյն իշխանութ՟ իւրեանց՝ այնպէս տնօրինեալ են իրողութ՟իք ն՟ց, զի ունիցին կախումն զմիմեանց. յոյր սակս բզ՟մ ան_ գամ մի ատեանն ոչ կարէ ինքնին առանց միւսոյ՝ երբեմն և առանց նմին 'ի գլուխ տանել զիրս իւր : Օրինակ իմն . 'ի լինել պտ՟զմի, չո՟րդ ատենին է որոշել զթիւ գնդից . կարգել նո՟ց զօրավարս, հրաման տալ չուոյ : Իսկ դրամս 'ի վճարել զթոշակ զօրաց, և այլ ամ՟ պէտս պտ՟զմի յերկ՟րդ ատենէ մատակարարի : Արդ՝ յայտ է թէ չէ մարթ չու առնել զօրաց, թէ պէտ և հրամայեսցէ չո՟րդ ատեանն, եթէ երկ՟րդն դրամս ոչ մատակարարեսցէ . սոյնպէս դիպի և յայլ բ՟զմ իրս :

Այսպիսի ատեանք դատանին և 'ի գլխաւոր ք՟ղս ամ՟ նհ՟նգաց . վ՟ն զի ի՟ ատեւլոյ աւլմօնի և այլոց ա-հ՟րկ՝ նհ՟նգք չինաց ժ՟ե են իբր մի մի փոքրիկ թագաւորութիւնք ը՟ արձակութ՟ և բազմամարդութ՟ . որք ունին և փոխարքայս, զորս Վուդանկս կոչեն . և իշխանութ՟ն կի՟մ պաշտօն նո՟ց ձգի ը՟ ամս երիս . և դատաւորս և ատենակալս, զորս հ՟րկ անուանէ Մանտարինս կոչեն . որք բաժանեալ են յինն կարգս . նմին են դրադէպք և իմաստունք . և թիւ բոլորեցուն ասի թէ հասանէ ց13000 . ա՟ք պարտապան են զգլխաւոր իրաց տալ համար նախայիշատակեալ գերագոյն ատենից փէքինու : Եւ թէպէտ մեծ է և ը՟րձակ իշխանութ՟ն ն՟ց նմին, այլ ոչ կարեն զոք 'ի մահ մատնել 'ի բոլոր թգ՟րութ՟ն չինաց՝ առանց յայտնի հրամանի ինքնակալին : Նոյնպէս և այլ ամ՟ վճիռք նո՟ց 'ի մեծամեծ իրս չունին ինչ զօրութ՟ առանց հաւանութե՟ և հաստատութ՟ ինքնակալին :

Յամ՟ ատեանս յայտնի ունի ինքնակալն զմի ոմն հաւատարիմ պաշտօնեայ . որ է իբր լրտես և քննիչ ամ՟ գործոց և գնացից մանտարինաց և փոխարքայից . և զամ՟ պակասութիս, զոր ըմբռնէ 'ի գործս կառավարութ՟ նո՟ց՝ գրով ազդ առնէ գերագոյն ատենի փէքինու 'ի ծածուկ . սակայն կարող է և յայտնի ամբաստանել : Պաշտօն նորա ոչ է փոփոխական, այլ կայեալ ը՟ կենաց . և ոչ կարէ յայլ վերագոյն պաշտօն ելանել . և ոչ անկանիլ երբէք յիւրմէ պաշտամանէ : Եւ այս իմաստութ՟ հաստատեալ է այսպէս . զի մի յոյսն յառաջադիմն լինելոյ յայլ մեծագոյն իշխանութի՝ յանդգնութ՟ն մղեսցէ զնա, և մի երկիւղ կորուսանելոյ զպաշտօն իւր, արգելցէ զնա յամբաստանելոյ :

Բայց յայսմանէ՝ յառաջին ժմկս ինքնակալք չինաց սովոր էին ը՟ ժմկս ժմկս առաքել յամ՟ նհ՟նգս և քըն-լրտեսս արս իմաստունս խոհականս և հաւատարիմս

ան

տեղեկանալ Թագաւոր 'ի ժողովրդենէ զգնացից փոխարքայից և մանդարինաց, թէ որպէս վարին նոքօք ընդ ժողովրդեան. զի քաջ գիտեն ինքնակալք թէ դժուարին է յոյժ սովորական ժողովրդեան մուտ գտանել յարքունիս, և զբողոքս իւրեանց, թէ ունիցին՝ հասուցանել յականջս նոցա: Եւ լրտեսքն յորժամ հաւաստեաւ գտանէին զոք յանցաւոր և հարստահարող ժողովրդեան, ունէին իշխանութիւն 'ի բանտ արկանել, և յայտնի դատաստանաւ դատել: Այլ զկնի անցանելոյ 'ի ձեռս Թաթարաց Թագաւորական իշխանութեան չինաց, այս սովորութիւն խափանեցաւ 'ի պատճառս պէսպէս անկարգութեանց լրտեսից: Սակայն փոխ այնր ունին զայլ եւս սովորութիւն, որ անլուր է յայլ Թագաւորութիս. իբր զի ամենայն պաշտօնատարք, մանաւանդ փոխարքայք, մանդարինք, և զօրավարք պարտաւոր են ընդ ժամս ժամս անկեղծութեամբ և խոր խոնարհութեամբ ինքնին խոստովան լինել զիւր յանցանս և պակասութիւնս, զոր յանցանեն 'ի մատակարարութեան պաշտաման իւրեանց, և գրով առաքել առ ինքնակալն. զոր եթէ ոք զանց առնիցէ, կամ ջանայցէ պատրուակել և թաքուցանել խստիւ պատուհասի:

Գլխաւոր կանոնք վարուց կամ օրէնք ընդհանուրք չինաց են երեք կամ չորք: Առաջինն պատուիրէ զերագոյն և գրեթէ աստուածավայել պատիւ և հնազանդութիւն ընծայել ինքնակալին: Երկրորդն՝ սէր, մեծարանս, հնազանդութիւն յամենայնի և զութ՝ որդւոց առ ծնօղս, ծառայից առ տեարս: Երրորդն՝ յարգութիւն և ակնածութիւն ժողովրդեան առ մանդարինս իբր առ նոյն ինքն ինքնակալն, զոր յանդիման առնեն. որք առ 'ի պահել զայս վեհափառութիւն, միշտ մեծահանդէս և արքայավայել շքով ելանեն 'ի հրապարակ: Չորրորդն՝ սէր և փոխադարձ բարեկամութիւն և քաղցր յարգոյ և պատուաւոր կենակցութիւն ժողովրդեան ընդ միմեանս: Զայսոսիկ չորեսին կանոնս ունին նոքա իբր առաջին սկզբունս և հիմունս խաղաղութեան, բարեկարգութեան, հաստատութեան և երջանկութեան Թագաւորութեան իւրեանց. վասն որոյ կարի նախանձայոյզ են 'ի պահպանութիւն նոցա. և յանցաւորաց դժնդակ պատիժս սահմանեալ կան առանց երբէք ներելոյ ումեք մեծի և փոքու:

Բաց յայսցանէ ունին և այլ հիմնական օրէնս, որք ոչ սակաւ նպաստեն առ բարւոք կառավարութիւն Թագաւորութեան: Նախ՝ ոչ տան ումեք 'ի մանդարինաց կամ 'ի փոխարքայից պաշտօն 'ի նահանգի կամ 'ի քաղաքի ծննդեան իւրոյ. զի մի՛ արհամարհեսցի 'ի ժողովրդենէ եթէ յաննշան զարմէ իցէ . կմ՟ զի մի զօրասցէ բռնացել՝ եթէ մեծազգի ոմն իցէ . և ևս զի մի առցի նմ՟ առիթ ակնառուէ նպաստելով ազգատոհմի իւրոյ . և զի յաւէտ հաւատարիմ լիցի առ ինքնակալն, գոլով զերծ 'ի բնական աղէտից հայրենասիրութե : Երկ՟դ՝ զորդիս գլխաւոր պաշտօնատարաց պահել յարքունիս ընդ պատրուակաւ ազնուական դաստիարակութե . այլ ը՟ ճշմարտութե պահին նք՟ անդ իբր պատանդք 'ի զգուշութի և 'ի սանձ հարց նց՟ : Եր՟րդ՝ ոչ երբէք վաճառել զպաշտօն ինչ, այլ ձրի տալ այնմ, որ առաւել յարմարաւոր է և արժանի . վ՟ս այնորիկ յորժամ հանդերձեալ են ումեք 'ի մանտարինաց տալ զերևելի ինչ պաշտօն, բզ՟մ քննութիս առնեն զկենաց և զվարուց նր՟ : Չր՟րդ՝ ոչ երբէք թոյլ տալ օտարականի ումեք ունել մասն 'ի քղ՟քական կառավարութե իւրեանց : Հինգեր՟րդ՝ զի ազնուականութիք և իշխանութիք մի անցցեն ժառանգութե՟ որդւոց յորդիս . նմին իրի՞ բաց 'ի տոհմէ կոնփուցիոսի, որոյ ազնուատոհմութին սերնդեամբ իջանէ, այլ համօրէն բնակիչք չինու յերկու դաս բաժանեալ են . ծ՟ յիշխանաւորս և 'ի ռամկականս . վ՟ս 'ի մեռանիլ փոխարքայի կմ՟ մանտարինի, որդիք նց՟ ոչ անցանեն 'ի տեղի նց՟ իրաւամբք ժառանգութե . ուստի չէք ոք 'ի չին, որ 'ի պ՟տճառս ազնուատոհմութե

զերծ իցէ 'ի գլխահարկաց :

Վեցեր՟րդ՝ պահել միշտ պատրաստական բազմութի զօրս, առ 'ի ահարկու երևելի սահմանակից թ՟րուեց . և խափանել զնմ՟ ներքին ապստամբութիս : Եօթներ՟րդ՝ անվրէպ հատուցանել վարձս կմ՟ պատիժս ը՟ արժանեաց գործոց, ո՟րպ երախտաւորաց թգ՟րութե իւրեանց տալ անուն ինչ պատուոյ, կմ՟ կանգնել կամար յաղթութե . իսկ յանցաւորաց պատիժ ը՟ յանցանաց անխնայաբար : Ութեր՟րդ՝ մի երբէք թագաւորեսցէ կին, թէպէտ և պակասեսցին արու զաւակք յարքայական զարմէ . և մի կարասցեն կանայք առնել զվճռ՟կանութե . զի նք՟ սահմանեալ են 'ի բնութե՟ 'ի գործ առ տնին տնտեսութեց, 'ի ծննդեան 'ի սնունդ և 'ի դաստիարակութե զաւակաց : Իններ՟րդ՝ միշտ ծաղկեցուցանել զառուրևառս վաճառաց ը՟ ամ՟ տեղիս թագաւորութե իւրեանց . զի անտի կախեալ կայ ոչ միայն հարստութի ինքնակալին, այլև կեանք ժողովրդեան : Մարթ է յաւելուլ իբր տասներ՟րդ օրէնս . զի 'ի վէճս և 'ի հկռ՟կութիս չէ պէ երբէք մուծանել իրաւագէտս և փաստաբանս 'ի մեկնել զօրէնս, և 'ի պաշտպանել կողմանց ոսոխաց . վո՟ զի օրէնք չինաց սակաւ են և մեկն և պարզ . վո՟յ և չունելին պէտս բացատրութե՟ . այլ այր իւրաքանչիւր ինքնին վարէ զդատ իւր, դրով մատուցեալ զպաշտօնս իւր դատաւորաց :

Բաց յայսց տանտեական օրինաց, որք համարեալ են իբր գլխաւորք՝ ունին և այլ վնիչն օրէնս և սովորութիս մասնաւորս, զորս մեծամեծս ներբողէն հայրն քօնթի և այլք իբր իմաստունս, արդարս և կենցաղօգուտս . և յիրաւի, զի թէ ոչ բովանդակ՝ գէթ մեծ մասն նո՟ց այնպիսի է . սակայն լաւուն օրինաց սակաւ նպաստէ առ բարեկարգութի՟ թ՟գրութե՟, եթէ ապահովութի՟ նո՟ց նուազ իցէ . իսկ 'ի չին՝ ասէ սալմոն հիմնեալ 'ի վկայութի՟ բազմաց մատենագրաց, որք գրեն զչինաց թէ, „ Ժողովուրդն և մանդարինք և պաշտօնա-
„ տարք թ՟գրութե՟ ոչ միայն զհետևէն օրինաց գործեն,
„ այլև յարաժամ մարտնչին ը՟ նոյն իսկ օրէնս . և
„ ը՟ իմաստուն սահմանադրութիս թ՟գրակ՟նս . մինչև
„ թէ 'ի գերագոյն գործառնութէ մինչև ցյետինն բո-
„ վանդակ մոլութի է և յոռի մատակարարութի || : Այս քան սալմոնի թուէի փոքր մի անցանել ը՟ չափ . բայց ևներբող հօրն քօնթեայ, որ երկնաչափ բարձրացուցանէ զ՟ք՟ղքական բարեկարգութի չինաց իբր մի միայն յԾի, թէ չիցէ առաւել, գէթ հաւասարի նմ՟ ը՟ չափազանցութե : Վո՟յ զմիջինն պարտ է գնալ շաւիղ . և ասել թէ ո՟չ յայլ թ՟գրութիս գտանի լաւուն և յոռուն, նոյնպս և 'ի չին . այն զի՝ զուրկ գոլով նո՟ց 'ի ճշմարիտ կրօնից ա՟ծպաշտութե, որ սանձ մեծ է 'ի զսպել զմարդ 'ի չարեաց, երևի թէ առաւելուն անդ անկարգութիք . զի բոկ հրաման օրինաց, և արտաքին բռնութի սակաւ զօրեն, եթէ զերկիւղ ա՟յ, որում յայտնի են ա՟մ խնդք մարդկան չունիցի ոք 'ի սրտի : Այսչափ ինչ վո՟ կանոնադրութեց չինաց . արդ՝ ասասցուք ինչ և վո՟ արտաքին շքոյ և փառաց ինքնակալին : Առաջին ինքնակալք բնիկ չինացիք համերերէք ելանէին 'ի հրապարակ, և ուր ուրեմն ցուցանէին զանձինս ժողովրդեան . իսկ այժմեան ինքնակալք, որք են յազգէ թաթարաց, զմիջին կալեալ ճնփհ, առաւել ընտելս ընծայեն զանձինս ժողովրդեան, և յաճախ ևս ելանեն արտաքս . թ՟ յամսեանն իբր չորիցս . և գրեթէ յա՟մ ամի ելանեն հանդերձ բազմութբ իշխանաց և զօրաց 'ի զննել զսահմանս թաթարաստանու, և 'ի սթափու՟մն որսոյ անդ 'ի թաթարստանն : Եւ յայնժամ մեծամեծ խմբք թաթարաց իբր երեսուն հզ՟ քառասուն արքայական

Շքով գան 'ի յարգութն ինքնակալին, և յընծայել զամորական հարկս. երբեմն ևս տեսանք 'ի նշէ ընծայեն զգաւառս իւրեանց ինքնակալին 'ի կենուն, և ինքնակալն տայ զգաւառ իւր նց. որոց է իբր պաշտպան ըդէմ արեւմտեան կմ ղալմուխ Թաթարաց, որք հզօրագոյն են քան զնոսա : Անդ երեւի մեծաշուք փառք ինքնակալին, յորժմ բազմեալ կայ յատենի ունելով զիւրեւ երեսուն կմ քառասուն խանս արքայակերպս. և բազմութն իշխանաց 'ի զարդս փոփոխեալս, և այլոց ստորին պաշտօնէից հազարաւորաց. որ Թէ պատմեալ հարց յանեանց, որք ականատես եղեն այնմ, զարմացուցանէ զլսօղն : Երբեմն ևս շրջին յայլեւայլ նհնգաց և գլխաւոր քղքաց իւրեանց, բայց սակաւաթիւ արամբք և սուրհանդակօքն գնացիւք և իբր ծպտեալ. սակայն ծանուցեալ են ընդ ամ տեղիս. վն յամ քղքս, որք ընդ առաջ ելանեն նմա 'ի ճնպհի. և յամ դժուարին և 'ի վտանգաւոր կիրճս և անցս ճանապարհաց կարգեալ կայ բազմութն զօրաց 'ի պաշտպանութն նմա :

Այլ գերագոյն շուք և փառք արքայական մեծան երեւի յորժամ հանդիսիւ երթայ 'ի տաճարն մատուցանել զոհս : 'Ի սկիզբն այնր շքեղապանծ հանդիսի երթան զոյգ զոյգ յերկու կարգս քսան և չորս փողահարք. և նոյնչափ Թմբկահարք ունելով 'ի գլուխ պսակս ոսկիս : Զկնի նց այլք քսան և չորք նոյնպէս պսակաւորք ոսկի պսակօք. և 'ի ձեռս նց գաւազան վեց և մինչև ցութ ոտնաչափ երկայն ներկեալ և ուրեք ուրեք ոսկեզօծ. որոց զհետ երթան հարիւր զինուորք տիգաւորք, տէգք նց լուսնաձև. և զկնի նց հարիւր տասնապետք ունելով 'ի ձեռս լախտ կարմիր նկարեալ գունագեղ ծաղկօք և ոսկի պատկերօք. և առ նոքօք երկու զօրապետք տիգաւորք : Այս հինգ խումբք կացուցանեն զառաջին դասն :

Յետ այ գան չորեքհարիւր լապտերք ճարտարագործք. և նոյնչափ ջահք փայտեղէնք ոսկեզօծք, որք վառին իբրև զմոմեղէն ճրագս մեր. զի իւղայինեն. և երկերիւր նիզակք. զորոց կախեալ կան մեծամեծ փունջք կմ ծոպք մետաքսեայք. և քսան և չորս դրօշակք, յորս նկարեալ կան երկոտասան կենդանակերպք. և այլ յիսուն և վեց համաստեղութք երկնայինք. ապա երկերիւր հովահարք, այսէ՝ ներփեղէ՝ ոսկեզօծք վիշապանկարք. և քսան և չորք վրանք կմ հովանոցք մեծագինք. զկնի այ արքունի պաշտօնեայք զարդարեալք 'ի հանդերձս չքնաղազարդս

բարձ

բարձե՟լ տանին սեղան փոքրիկ․ և ն՟մ անօթք որ 'ի վ՟ր ն՟ր 'ի մաքուր ոսկւոյ։

Զկնի այսր ն՟մի երթայ ինքնակալն արքայապանծ փառօք, հեծե՟լ յերիվար օդապարիկ պալարակապ․ ունելով զկուրև հարիւր պատանիս ազնուականս, որք են անձնապահ ն՟ր, և վերամբարձ տանին զվրանն կ՟մ զհովանոցն մեծ բոլանդակ ոսկեզարդ և ակնակուռ գործ սքանչելի, որ հովանի առնէ ինքնակալին և երիվարի ն՟ր, և զկնի ածեն վեց կ՟մ ը՟ այլոյ տան ձիս սպիտակս ասպաստանիկս․ զարդարեալս ոսկեսար կազմածովք, և ազնիւ գործ և ակնանկուռ վերարկուօք ը՟ զիլփօշիւք։ Զկնի ինքնակալին երթան իշխանք արքայազունք, և նախապատիւ մանդարինք, և փոխարքայք, և գլխաւոր պաշտօնեայք արքունեաց, ամենքն 'ի հանդերձս պատշաճեալս իւրեանց պաշտաման։ Յետոյ գան հինգ հարիւր երիտասարդք ազնուականք․ ունելով ը՟ իւրեանս իւր հազար սպասաւորս կ՟մ զինուորս զգեցեալս կարմրագոյն զգեստս մետաքսեայս զարդարեալս ոսկեթել ազնիւ գործ աստղանշանօք։ Զայս խումբ մարթ է անբազէս կոչել գնդապետ արքայական․ զի ս՟ք ամենքն յարքունիս բնակին։ Յետ ս՟ր արք երեսուն և վեց բարձե՟լ տանին գահ անծածկոյթ, որ նման է յաղթական կառաց․ և այլ ևս արք հարիւր և քսան տանին զայլ գահ ծածկե՟լ․ որ այնչափ մեծ է, զի մարթ է նստել 'ի նմ՟ աւելի ք՟ քառասուն անձանց։ Այս երթան չորք կառք՝ որոց երկու առաջինք ձգին 'ի փղաց, իսկ այլ երկուքս յերիվարաց․ և առ իւրաքանչիւր գահիւք և կառօք կարգե՟լ կան արք 50 'ի սպապանութ՟․ և կառավարքն, և փիղք, և երիվարք առհ՟րկ զարդարե՟լ են 'ի զարդ գեղապանծ։

Հուսկ յետոյ երթան երկերիւր մանտարինք դրագետք կ՟մ վճ՟ռւք․ և երկերիւր զօրապետք ամենքն գեղաշուք զգեցե՟լ։ Այս յոգնախումբ և մեծահանդէս չու այնպիսի իմն սքանչելի կարգաւ, և վսեմաքայլ գնացիւք և անշշունչ լռութ՟ երթայ 'ի տաճար անդր, մինչև յիրաւի հիացուցանել զամենեսին, որք նորոգ տեսանեն զայն։

ԺԴ․ ՆՇԱՆ ԿՄ՟ ԿՆԻՔ․ ՎԵՐՏԱՌՈՒԹ՟Ն․ ՄԱՔՍ և ԶՕՐՔ ՉԻՆԱՑ։

Ոմանք ասեն թէ նշան թգ՟րութ՟ չինաց են երեք մարդկային գլուխք սեաւք՝ երկուքն առ մի_

մեամբք

մեռամբք և երգն 'ի վ՟ր ն՟ր եդեալ · բայց վերջինն · և պ՟տճ՟ռ վախճանաց ն՟ր թուի լինել այն, զի 'ի սեղանն յորոյ վ՟ր ինքնակալն մատուցանէ զոհս 'ի սուտճարի, նկարին հինգ մարդկային գլուխք · այլ երեւի թէ այն հինգ գլուխք զայլ ինչ խորհուրդ ունէին : Իսկ բուն նշան թ՟գ՟րու՟ե չինաց է վիշապ, ո՟ր հաստատեն համօրէն մատենագիրք, որք գրեցին զօրութ՟է ն՟ր զոր սահմանեաց Փոհի առաջին ինքնակալ ն՟ր · ո՟պ ասացաք 'ի վերոյ :

Վերտառութ՟ ինքնակալին է այսպիսի · "Որդի երկնից կի՟մ ա՟յ · (զի բառս երկինք համ է առ նա, որ նշանակէ երկինք միանգամայն և ա՟ծ ·) Ինքնիշխան ո՟ր Տի · փառաւորեան և միջնորդ ժողովրդեան · և հայր հայրենեաց || · զայս վերջին անունն 'ի մեծագոյն փառս համարին անձանց ինքնակալք չինաց · զի առաւել սիրելի է ն՟ր հայր անուանիլ հայրենեաց և ժողովրդեան՝ որով 'ի սէր իւրեանց ձգեն զժողովուրդն, ք՟ս տ՟ր կի՟մ իշխան, որ բռնութե իմն ունի նշանակ :

Մուտք կա՟մ հասք թ՟գ՟րու՟է չինաց 'ի զնէ՟ն գլխոց հաւաքին · 'ի գլխահարկաց, յորմէ ոչ ոք է զերծ և ոչ իսկ մանտարինք · 'ի մաքսից, 'ի բաժից, որք առատապտղաբերեն սակս ծաղկեալ գոլոյ վաճառականութե յմի ն՟ր · յընչից յարքունիս առելոց, որ յաճախ հանդիպի · 'ի կապալաց, որք եդեալ կան 'ի վ՟ր կալուածոց, և այլ ա՟մ ընչից ժողովրդեան · և յայլ զնէ՟ն հարկաց · որք յերաւի ծանր են · զի ասի թէ ա՟մ պարտական են տալ յարքունիս ամի ամի զտասներո՟դ մասն ա՟մ հասութից և շահուց իւրեանց, զոր շահին · ո՟պ եթէ յամին շահի հարիւր ո՟սկ զտասն պարտական է արքայի :

Վ՟նյ ասէ հայրն քօնթի եթէ չինացիք չէին կարի աշխատասէրք և ճարտարք 'ի շահիլ, և երկիր ն՟ր չէր այնպէս արգաւանդ, ապաքէն թ՟գ՟րու՟թի չինաց լինէր մի յաղքատ և 'ի յետին թ՟գ՟րու՟եց · բայց ժրաջան գոլով ժողովրդեան շահին այնչափ, զի յետ վճարելոյ զծանր ծանր հարկս, մնայ և ինքեանց բ՟ա՟մ:

Դ՟իւրին իմն եղանակ ունի տ՟րու՟թ չինաց 'ի հաւաքել զհարկս 'ի ժողովրդենէ · զի ամի ամի առնեն անդ ցուցակ համօրէն տանց և ընչից ն՟ր, նշանակեա՟լ հանդերձ իւրաքանչիւրոց զպարտս, զոր ունին տալ արքայի, մի մի օրինակս բևեռեն 'ի վ՟ր դրանց ա՟մ տանց : Եւ իւրաքանչիւր տանուտ՟ր պարտական է ը՟ստ այնմ գրուածոյ ինքնին առանց ինչ գ՟տանակն

բըռբնութեան տանիլ և վճարել զնոյն գումար մանտարինաց կամ քաղաքապետաց երկրորդ կարգի քաղաքաց . ապա թէ ոչ՝ ընդ ծանր ծանր պատժովք անկանի . իսկ մանտարինք տան զհաշիւ կուսակալաց . և կուսակալք գերագոյն ատենի փեքինու : Ուստի և առանց ծախուց թագաւորութեան, զոր պարտ էր ծախել 'ի հարկապահանջս, հարկք ժողովրդեան հաւաքին 'ի գանձս արքունի . թող զայն միայն, զոր հարկապահանջք խորէին անտի . որպէս տեսանի յայլ տէրութիւնս :

Արդ՝ գումար բոլոր մտից տէրութեան չինաց հաւաքեալ յամենայն նախակարգեալ իրաց ըստ հաշուէի հօրն քոնթեայ . որ հետամուտ եղև գիտել զայն ճշտիւ՝ հասանէ ց20 միլիոն և 600000 ստէրլին լիրէ անգղիական . որ առնէ իբր 43 միլիոն և 200000 վէնէտիկեան ոսկի դահեկան : Արդարև մեծ է այս գումար, բայց առ համեմատութիւն այնպիսի ընդարձակ և բազմամարդ տէրութեան սակաւ է . ահա մի միայն դաղղիա, որ փոքր ինչ է առ համեմատութեամբ տէրութեան չինաց . և չունի գեթ զեօթներորդ մասն ժողովրդեան նորա, սակայն մուտք նորա հասանեն գրեթէ 'ի կէսն մտից չինաց : Եւ անգղիա որ փոքր ևս է քան զդաղղիա, սակայն 'ի ժամանակս պատերազմաց ընդ ամս բազումս վճարեաց յարքունիս իբր կիսով չափ մտից չինաց . իսկ 'ի ժամանակս խաղաղութեան սովորական մուտք նորա է իբր չորրորդ մասն մտից չինաց : 'ի մտից աստի մեծ մասն ծախի 'ի վճարս թոշակաց կուսակալաց, քաղաքապետաց, զօրավարաց և զօրաց . և 'ի պէտս հասարակաց շինուածոց կամրջաց, ջրմղաց և ճանապարհաց . իսկ յաւելեալն հաւաքի 'ի գանձն արքունի :

Նոյնպէս և ըստ զինուորական զօրութեան կարի զօրաւոր է այս տէրութիւն . զի ասեն թէ 'ի ժամանակս խաղաղութեան, յորժամ չիք ուստեք երկիւղ պատերազմի՝ սովորական թիւ կանոնաւորեալ զօրաց նորա հասանէ ցհինգ միլիոն . որք ըստ առաւել մասին են հեծեալք . իսկ փեքին արքայանիստ քաղաքն ունի 'ի պահպանութիւն իւր միշտ պատրաստական 160 հազար հեծեալս սպառազինեալս սուսերօք և նետիւք . որք ունին և հրազէնս ընդ թոփս, զոր յեւրոպացւոց ուսան ձուլել :

Վախճան այսչափ յոգնախումբ զօրաց է պահել 'ի խաղաղութեան զտէրութիւնն . բայց զօրք չինաց ըստ վկայելոյ հօրն քոնթեայ՝ առաւել 'ի զարդ են և 'ի շուք թագաւորութեան նորա, քան 'ի դիմամարտել ընդդէմ թշնամեաց 'ի պատերազմի . զի մեղկ են և կանացի և 'ի զինուորական կրթութեան թերի, մանաւանդ թէ անվարժ . ոչ միայն բնիկ չինք, այլև սերեալքն 'ի Թաթարաց . զի և նք խառն է չինաընտանեկէ , զնոյայն զգեցեալ ունին զվաստատարութի : Եւ թէպէտ 'ի սկիզբն մարտին քաջութբ յարձակին , այլ ոչ զօրեն տոկալ յերկար . յայն սակս արեւմտեան Թաթարք առ ոչինչ համարին զանթիւ բազմութի նց . և ծաղր եւս առնեն , ասելով թէ խրխնջիւն միոյ Թաթար երիվարի բաւական է չփոթել զբովանդակ հեծելազօրուն չինաց . և սակաւաթիւ զօրք եւրոպացւոց քաջավարժք 'ի մարտս զինուորութե կարօղ են զհազարաւորս նոցին վանել : Զի ճարտարապետութիւն զինուորական դեռ եւս անկատար է առ չինս . վս զի հզօրագոյն ամրութիք և պատսպարանք գլխաւոր քղքաց նց ոչ այլ ինչ են , եթէ ոչ հողալից պատնէշ պաշտպանել անզօր և անպիտան երկաթի հրազինուք , քն թօփերով . և աղեւսանկերտ աշտարակօք : Սակայն այժմ յետ միանալոյ չինաց ը Թաթարս , չունին ուստեք երկիւղ , եթէ ոչ՝ գուցէ 'ի ղալմուխ Թաթարաց . բայց և նց զօրութի այժմ սակաւ է , զի են բաժանել 'ի բզմ փոքրիկ իշխանութիս ինքնագլուխս , որք միշտ թշնամութբ են ը միմեանս . զոր ինքնակալն չինաց գուն գործէ միշտ արծարծանել և աճեցուցանել :

Ասի թէ թգրութին չինաց օր ըստ օրէ բաշխէ զօրաց իւրոց որիզ , միս , և ձուկն առ 'ի դարման ինքեանց և ընտանեաց նց . և թոյլ տուեալ է նց գործել և զարհեստ իւրեանց . վս զի ոչ են միշտ զբաղեալ 'ի գործ զինուորական , այլ միայն 'ի սահմանել աւուրս ինչ ժողովին . սոյն սովորութի է և յայլ թգրութիս , ուր գիւղականք գրեալք 'ի զինուորութե , միանգամ կմ երկիցս յեօթնեկի ժողովին առնել զզինուորականս կրթութիս . իսկ յայլ աւուրս պարապին 'ի գործս իւրեանց :

ԺԷ. Կրօն Չինաց :

Վն նախնի կրօնի կմ դենի չինաց մեծամեծս գրէ հայրն Լուդովիկոս քօնթի 'ի թուղթն , որ առ պուխլլօն կարդինալն : Զի հաստատէ նա անդ , թէ ազգն չինաց իբր 2000 ամօք յառաջ քն զգալուստ փրկչին մերոյ պահեաց մաքուր և անթերի զծանօթութի միոյ և ճշմարտին այ . և ը բովանդակ ժմկն ը այն այնպիսի իմն տարազու պաշտեաց զճշմարիտն այծ , որ կարէր լինել օրինակ և ուսումն քրիստոնէից : Եւ թէ հօսմթի երրդ ինքնակալ նց , որ սոյն 'ի վեր անդր նշա-

նա

նակեցաք, Թէպէտ 2697 ամօք յառաջ քան զՔրիստոս, կանգնեաց տաճար բազմօք յառաջ քան զտաճարն Սողոմոնեան ուր Չինք պաշտէին զճշմարիտն Աստուած զոհիւք և պատարագօք ։

Իսկ Քօվկենհէօ Թոռն Նորին Հօամ Թեայ հիմնադրեաց իւրնակաւ՝ տեսեալ Թէ մի միայն տեղի չէ բաւական 'ի պաշտօն գերագոյն արքայի տիեզերաց, կացոյց քահանայս 'ի գաւառս գաւառս վերակացու լինել զոհից, պատուէր տուեալ նոցա Աստուծոյ արթնութեամբ հսկել, զի զոհք և պատարագք անխափան մատուսցին նմա ըստ Աստուծոյ տեղիս. և պաշտօնն Այ կատարեսցի նմա խոնարհութեամբ պատկառանօք և երկիւղածութեամբ ։ Եւ Թէ յայն Այ ժամս գտան առ Չինս հաւատացեալք ճշմարիտ սրբութեան պերճացեալք, հոգւովն Այ լցեալք, և կարի խիստ զգուշութեամբ 'ի պահպանութեան կանոնաց մաքուր և սրբոյ. այնպէս՝ զի զբարութիւն նոցա և զսէր՝ հաստատեաց Ած և օրհնեաց ։ Եւ Թէ ոչ ումեք յազգաց այնպէս ճոխութեան աստուածեղինաց Ած զպարգևս բարերարութեց և շնորհաց, որպէս ազգին Չինաց ։

Ահա զայսոսիկ և զայլ սոցին նման բանս գրէ նա վասն նախնի Չինաց 'ի գիրս, որ կրկին անգամ տպագրեցաւ 'ի Փարէզ 'ի գաղղիական բարբառ, 'ի յամին 1696 և 1697 ամին մակագրութեամբ Նորոգ յիշատակագրութիւն յաղագս այժմու հանգամանաց Չինաց աշխարհին ։ Ուր գտանի ինչ ինչ ընդդէմ սուրբ գրոց և ընդդէմ ողջամիտ վարդապետութեան սրբոյ եկեղեցւոյ ։ Յայն սակս գերահամբաւ ուխտն գաղղիական եկեղեցւոյ յամի տեառն 1700 'ի հոկտ. 18 'ի Փարէզ արքայանիստ քաղաքի, 'ի ժողովն հարիւր վաթսուն աստուածաբան վարդապետաց գումարելոց 'ի հոյակապ Սորբոնեանն ճեմարանի, յետ երկամեայ քննութեան՝ հանդիսիւ հերքեալ դատապարտեաց զբազում նախադասութիւնս պարունակեալս յայն գիրս ։ Եւ 'ի վախճանի յայտ արար սրբազան համալսարանն, Թէ ոչ են նորա կամք հաստատել զայլ մնացեալս, որք պարունակին յայն գիրս ։ Եւ յաւելու․ վասն զի բաց 'ի Թղթոց անտի, յորս ճառէ զկրօնից նոցա, և յայլ Թուղթս նորա գտանին չափազանցութիւնք․ յորոց մին է և այն, յորում զօրութիւն Չինաց գեր 'ի վերոյ քան զհնարաւոր կարգ և պայման բնութեան ամբառնայ ։ *Ասէ ' տրուէք (ասէ) ընդ հնարաւոր ընթացից իւրաց Ձեզ անկեալ ' են ընդ տկարութեան տղայութեան․ Ծնեալ անկերպարան և ' անկատար, և որպէս մարդ զարգանան և կատարելին ' անցմամբ ժամանակի․ Իսկ Չին երբեք զերծ 'ի հնարաւոր օրէ' նաց բնութեան, և որպէս Թէ յոյ (անմիջապէս) հիմնեալ

«էր այն եղանակ կառավարութե̄ն նց̄ որ ճշդիւ նոյնպ̄
«կատարէին 'ի սկզբան անդ իւրում, քան թէ այժմ
«յետ փորձոյ և հաւաստեաց իբր չորեք հազար ա-
«մաց»:

Այլ թողեալ զայսպիսի անհիմն և ինքնաստեղծ զրոյցս, ասելի է թէ ազգն չինաց յռ̄ջ ք̄ զք̄ս կայր 'ի խաւարի կռապաշտութե̄ն ը̄ օրինակի այլոց համօրէն ազանց հեթանոսաց. զի ը̄ յայտնաբարբառ վկայութ̄ց ս̄ր գրոց հին և նոր կտակարանաց, բաց յազգէ եբրայեցւոց՝ ոչինչ այլ ազգ ողջոյն, կմ̄ ժողովուրդ միացեալ 'ի մի մարմին հասարակութե̄ն, առ որս ոչ առաքեցան մարգարէք, դաւանեցաւ զճշմարիտն ա̄ծ, և պաշտեաց զնա ս̄ր պաշտամամբ: Ասացաք ազգ ողջոյն և ժողովուրդ, առ որս ոչ առաքեցան մարգարէք. վս̄ զի յայտ է 'ի նոյն ս̄ր գրոց, թէ գտան մասնաւոր անձինք ոմանք, որք ծանեան զճշմարիտն ա̄ծ, և սրբութ̄ պաշտեցին զնա. որպիսի ոք մելքիսեդեկն էր, և յոբ եդովմայեցի. գուցէ և այլք ոմանք, զորս ոչ յիշատակեն ս̄ր գիրք: Նոյնպէս յայտ է թէ նինուէացիք հեթանոսք հաւատացին 'ի ճշմարիտն ա̄ծ քարոզութե̄ յովնանու մարգարէի, և ապաշխարեցին. և առ ժմ̄կ մի պաշտեցին զնա. ուսան և զճշմարիտ հաւատս 'ի գալոց մեսիայն: Իսկ առ չինացիս չեղև առաքումն մարգարէի. այսպա կացին մնացին 'ի նախկին կռապաշտութե̄ իւրեանց: Այլ թէ զի՞նչ պաշտէին, չէ յայտ. սակայն յօրինակէ այլոց ազանց հեթանոսաց՝ երևի թէ և նք̄ պաշտէին զարեգակն և զլուսին ը̄ ոլէսպէս անուամբ. ոպ̄ պարսիկք և արաբացիք և այլք: Իսկ յետոյ եղեն 'ի նս̄ զնզ̄ն աղանդք, որոց գլխաւորքն, որք կան մինչև ցայժմ, երեքն են:

Առաջինն է այն, զոր հնարեաց Լի լաօքին կմ̄ Լաօքուն իմաստասէր չինացի. որ ը̄ աւանդութե̄ չինաց եղև փոքր մի յռ̄ջ ք̄ զկոմփուսիոս: Սա գրեաց բմ̄ գիրս բարոյականս, յորս ուսուցանէ արհամարհել զփառս և զփարթամութի̄ն. հրաժարել յձ̄է. սիրել զառանձնութի̄ն, որ ամբառնայ զմիտս 'ի վերայ ջ̄ զերկրաւորս. և տայ թօթափել 'ի բաց զլուծ երկրաւորաց և նիւթական: Ուսոյց թէ մի միայն է էակ գերագոյն յաւիտենական կմ̄ ա̄ծ. որ թգ̄րէ 'ի վ̄ր այլոց ածոց՝ ոպ̄ թգ̄ր 'ի վ̄ր իւրոց ստրկաց. բայց նիւթեղէն և մարմնաւոր քարոզէր զնա: Կարծի իմն հետամուտ եղև քիմիական արուեստի. զորոյ զգիւտ ոմանք սմա ընծայեն. այլև 'ի խնդիր փիլիսոփայական քարի · և աւանդէր թէ գտանի հիւթ ինչ, որով մարթ է մարդոյ անմահանալ ։ Վ՟յ աշակերտք նր՟ 'ի խնդիր լեալ այնմ հիւթոյ, ետուն զանձինս 'ի մագուն · և այն աղանդ նր՟ 'ի սուղ ժմկի համասփիւռ ծաւալեցաւ 'ի բոլոր Տ՟ն չինու, մինչև կանանց անգամ զհետ լինել այնմ առ 'ի գտանել զայն դեղ անմահութեան ։ Զկնի ժմկաց այս իմաստասէր էանց 'ի թիւս ածոց չինաց, զոր մինչև ցայսօր պաշտեն ածային պաշտամամբ · որում կառուցանեն և տաճարս ։ Երկրորդ աղանդ նր՟ է այն, զոր ուսոյց Կոնփուցիոս գերահռչակ փիլիսոփայ չինաց, որ հիմնի 'ի բնական լոյս բանի, կամ է նոյն իսկ բնական օրէնք ։ Սա 'ի գիրս իւր հաստատէ զգոյութիւն միոյ ած՟յ · զոր ասէ լինել էակ գերագոյն, ամենակատար, և սկիզբն և աղբիւր ամի ։ Եւ ևս թէ բանն մեր է ածանցումն իմն կամ հաղորդութիւն ածուն · որոյ գերագոյն օրէնք է համաձայնութիւն բնութ՟ ը՟ բանի · և այն ամ՟ 'ի կեանս մարդկան՝ որ հկ՟կի այսոց երկուց սկզբանց կամ կանոնաց, ըս՟ բնութ՟ և լուսոյ բանի, ոչ գոյ յերկնից · երկինք ասելով իմանայ զած՟ · վն՟ զի 'ի բարբառ չինաց չիք բառ ինչ սեփական ած՟յ ։ Սա ոպ՟ պատմեն՝ ծնաւ 'ի քանթօն նհնգ՟ 'ի զարմէ հօտմթեայ ինքնակալին երբ 600 ամօք յռ՟ջ ք՟ զքս՟ · և 'ի մանկութ՟ ետ զանձն յուսումն փիլիսոփայութեան, հմուտ բարոյականի · գրեաց բզ՟մ գիրս բարոյականս · յորոց ոմանք կորեան, և ոմանք կան մինչև ցայժմ · և աշակերտեաց զբզ՟մս 'ի չինաց · բայց ոչ երբէք քարոզեաց զանձն մարգարէ կամ առաքեալ կամ նր՟ առ 'ի պաշտօն ը՟ունել 'ի ժողովրդենէ ։ Մեռաւ հգ՟ ամաց · ը՟ որ սուգ մեծ էառ համօրէն Տ՟ն չինաց · և 'ի յիշատակ նր՟ · ինքնակալք չինաց յամ՟ նհնգս կառուցին տաճարս, կամ ը՟ տանըոյ ոմանց տաճարս · ուր ամի ամի 'ի սահմանեալ աւուրս ինչ ժողովին դպրապետք և իմաստունք առնել զյիշատակ նր՟ և ընծայել նմա զպատիւ կամ զպաշտօն իմն · 'ի ճակատ այնր տաճարանց կամ տաճարի գրեալ կայ գլխագրովք այսպիսի մակագրութիւն ։

'Մեծի ուսուցչի, և նախապատիւ վ՟դպետի, առաքինւոյ և սր՟յ, այնմ՝ որ ուսոյց ինքնակալաց և

'Թագաւորաց ||։

Յայսմանէ պտճ՟ռս առեալ՝ ասացին ոմանք թէ չինք ածային պաշտօն ընծայեն կոնփուցիոսի · ուստի և ունին զնա իբր մի 'ի չածոց իւրեանց ։ Բայց այլք հաստատեն և ասեն՝ թէ այն շինուածք ոչ են տաճարք կամ աղօթատեղիք, այլ ճեմարանք իմաստասիրաց. և պատիժն և պաշտօնն զոր անդ ընծայեն կօնփուտիոսի՝ ոչ է ներգործութիւն կրօնի, այլ միայն քաղաքական իմն պաշտօն, զոր սովորութիւն է ընծայել մեծի ումեք, կամ երախտաւորի հայրենեաց. որպէս է կօնփուտիոս առ չինս. այլ կրօնն, զոր ուսոյց նա՝ այժմ իսպառ բարձեալ է, կամ առ սակաւս մնացեալ. վ՟ն զի այժմ համօրէն չինացիք կամ գլխովին անա՟ծ են, և կամ կռապաշտ:

Իսկ եր՟րդ աղանդն, որ է հնդկաց կրօն չինաց՝ է նոյն իսկ դենն գիմնեղայ 'ի ժ՟մ Մինկայ մուծեալ անդր, և հաստատապէս արմատացեալ: Սք՟ պաշտեն զՖօ կամ Ֆօէ չ՟ծն. որ ը՟ հօրն քօնթեայ է Լա չ՟ծն դիպեդաց և Թաթարաց: Բայց 'ի սմանէ ունին և այլ անհամար կուռս մեծամեծս և մանունս ոչ միայն 'ի մեհեանս, այլև 'ի տունս, 'ի նաւս, և յա՟մ անկիւնս փողոցաց: Յա՟մ կուռս չինաց երեք են գլխաւորք. Զառաջինն կոչեն Բագին անմահութե՟. որ է դրօշեալ մարդակերպ հսկայաձև և մեծափոր բազմեալ ծնկնածալ: Զեր՟կդն կոչեն Բագին հեշտութեանց. որ նոյնպէս հսկայաձև է. զի բարձրութի՟ նր՟ է քան տասնաչափ: Իսկ զեր՟րդն՝ զոր սովորաբար է՟ մէջ երկոցունց ա՟յ կանգնեն 'ի մեհեանս, կոչեն Լանկ արքայ. բարձրութի՟ նր՟ է երեսուն տասնաչափ. և 'ի գլուխն ունի պսակ ոսկի: Բայց 'ի մարդակերպ կռոց, ունին և ուրուականս դրօշել՟ս անասնոց. որ՟ կապկաց, փղաց, վիշապաց են, զորս պաշտեն ա՟ծային պաշտամամբ. զուցէ՝ ասէ հայրն քօնթի, է՟ պատրուակաւ, թ՟ Ֆօ չ՟ծն փոխակերպեալ իցէ յայն անասունս:

Բայց այնչափ է խելագարութի՟ նց՟ յայսմ մասին, զի զնոյն կուռս զոր երբեմն զա՟ծ պաշտեն, երբեմն 'ի յետին անարգութի՟ արկանեն: Քանզի պատմի թէ յորժամ խնդրեն ինչ 'ի ն՟ցէ, եթէ երկարեսցի կատարումն խնդրուածոց իւրեանց, այնուհետև փոխեն զպաշտօնն յանարգութի՟ և 'ի նախատինս, սկսանին հայհոյել և նզովել զկուռսն. * Ո՞վ դու ապերախտ « (ասեն՝) այսպէս հատուցանես ծ՟յութեանց մերոց. ահա « բնակեցուցաք զքեզ 'ի հոյակապ տաճարի, և զոր « հանապազ մատուցանեմք քեզ առատապէս առ« ձեռս կերակրոյ և խունկս. իսկ դու յետ այսր ա՟մ « անտես առնես զմեզ 'ի կարիս մեր ||: Եւ այսու ոչ շատացեալ, երբեմն պարան եւս արկեալ 'ի պարանոց կռոցն, ընկենուն 'ի վայր, և է՟ քարշ ածեալ է՟ փողոցս ձգձգեն 'ի տիղմս և յաղբեւս:

Իսկ եթէ դէպ լիցի յայնժամ ը՟ ըղձման իմն հասանել խնդրուածոց իւրեանց · վղ̃ղկի առնուլ զդրօշեալն լուանան և մաքրեն , և մեծաւ հանդիսիւ տարեալ անդրէն 'ի տաճարն , դնեն 'ի տեղի իւրեանց · և անկեալ առաջի նր̃ երկիրպագանեն , և պէսպէս պատճառանս կցկցելով , անբասիր առնեն զանձինս ։

• Գիտես՝ (ասեն ,) զի մեք մարդիկ եմք կարճամիտք ·
, առաւել ք̃ զոր պարտն էր շտապեցաք · այլ մ̃ղան
, 'ի քէն է · զի չէր պարտ և քեզ այսչափ ծանրա-
, լուր լինել , և տալ մեզ այսչափ ժամս աղաչել ըզ-
, քեզ ։ Ո՛չ լաւ էր քեզ վաղագոյն կ̃տրել զխնդր-
, ուածս մեր · որով զերծուցել̃ էիր զքեզ յայսչափ
, անարգանաց ։ Այլ եղելոյն չիք հնար · ահա խոս-
, տանամք վերստին ոսկեզօծել զքեզ · բայց ը̃ ա-
, վլին պայմանաւ , զի մոռասցես , զոր ինչ արարաք
, քեզ || ։

Երբեմն ևս աքսորեն 'ի Թիֆրուէ իւրեանց զոմանս 'ի կռոց անտի իբր անկարս և անպիտանս ։ Պատմէ նմին հայրն Քոնթի , թէ ումն չինացի յետ ը̃երկար ժամս մատուցանելոյ զսպաս և պ̃տրգս դրօշելոյ միոյ խնդրելով օգնութե̃ 'ի նմէ · և յետ բաշխելոյ քրմաց նր̃ առատ տուրս ողորմութե̃ , որք մեծացուցանէին զկարողութե̃ դրօշելոյն · և երաշխաւորէին ևս թէ անտարակոյս ունի նա կատարել զխնդրուածս նր̃ · իբրև ետես այրն զի խաբեցաւ 'ի յուսոյ , գնացեալ ամբաստան եղև առ դատաւոր տեղւոյն զդրօշելոյն և զքրմաց ։ Իսկ դատաւորն քննել̃ զիրս , զդրօշեալն դատապարտեաց 'ի մշտնջենաւոր աքսորանս իբր անպիտան ամենևին Թիֆրուէ իւրեանց · և զտաճար նր̃ ետ հիմնայատակ առնել · իսկ զքուրմս պատժեաց խստութբ̃ ։ Այսչափ է անմտութի̃ չինաց 'ի մասին կրօնի ը̃ պատմելոյ հօրն Քոնթեայ ։

Քուրմք՝ զորս չինացիք Պօնց կոչեն՝ բզ̃մ են յոյժ ը̃ ամ̃ տեղիս · ը̃ ասելոյ ոմանց մինչև 935000 · որք են վ̃դպք և ուսուցիչք ժողովրդեան · և անդադար քարոզեն և հաստատեն 'ի միտս նց̃ զանոտի զդիւական պաշտամունս կռոց · և զվ̃դպտունս մոլար աղանդոյն ։ Ընդունին զհանդերձել̃ հատուցումն բարւոյ և չարի · յայն սակս սաէպ քարոզեն ժողովրդեան , ասելով ։ Մատուցէք նուէրս հոգւոց նախնեաց ձերոց · և օգնեցէք նց̃ 'ի կարիս նց̃ · ապա թէ ոչ՝ զկնի մահուան ձերոյ խստիւ տանջեսջիք մշտնջենական իմն և անը̃հատ հոգեփոխութբ̃ յանարգ և 'ի զազրոտ մարմինս մտանելով · ք̃զի և առ չինս այս հոգեփոխութե̃ աղանդ հաստատել̃ կայ · Ոմանք ևս 'ի քրմաց ան-

անտի զգենուն զկերպարանս ապաշխարողի վ՟ն մեղաց ժողովրդեան. արկանեն մեծամեծ շղթայս 'ի պարանոցս. և այնպէս շրջելով ը՟ փողոցս, քարամբ կոծեն զգլուխս. ցեռեն զմարմինս, և զայլ սոցին նման դժնդակ գործս գործեն: Ս՟ք ը՟ մեծի մասին բնակին առ ընթեր մեհենաց, որք սովորաբար են 'ի բացի արտաքոյ շինից. ուր ունին վանս և նորընծայարանս, յորս ընկալեալ զնորեկ պատանիս, մարզեն զն՟ս 'ի ճգունս անտանելիս առ ժամ մի. ապա տարեալ առաջի սեղանոյ դրօշելոց, բ՟մ հանդիսիւ զգեցուցանեն նմա զզգեստ քրմի. և յաւարտել հանդիսին նորընծայն առնէ ճաշ համօրէն քրմաց, որք առաջիկայ գտանին 'ի հանդիսի անդ. և զի յոյժ ցուցցի յիմարութ՟ ն՟ց, 'ի վախճան ճաշոյն արբենան ամ՟էքին և մոլեգնին, և այնպէս վճարեն զհանդէս իւրեանց: Բաց յայսց երից գլխաւոր աղանդից են անդ և դիւապաշտք. որք երկրպագանեն չար ոգւոց, և մոլե՟լ են զհետ կախարդութեանց և հմայութեանց: Եւս մահմետականք, որք առաւել ք՟ 600 ամք են, զի կեան անդ խաղաղութ՟բ. գուցէ իցեն 'ի Թաթարաց. Այլ և հրեայք, զորոց ասի թէ իբր երկերիւր ամօք յա՟ռջ ք՟ զգալուստ փրկչին մերոյ գնացին անդր:

Բազմակնութիւն թոյլ տուեալ է առ չինս. բայց ք՟զի սովորութ՟ է անդ գնել զաղջիկն, նմին իրի աղքատք սովորաբար մի միայն կին առնուն. իսկ մեծատունք ը՟ հկ՟ա կն՝ առնուն զբազմութ՟ կանանց, այլ 'ի բազմութ՟է անտի մինն է միայն օրինաւոր կին. իսկ այլքն իբրև հարճք. սակայն որդիք ծնեալք 'ի ն՟ցէ՝ ճանաչեն զինքեանց մայր զօրինաւոր կին հօր իւրեանց. և մտանեն 'ի ժառանգութ՟ հօրն, ո՟պ զայլ օրինաւոր որդիս: Նոյնպէս և ինքնակալն ը՟ տանելոյ ոմանց՝ ունի մի միայն օրինաւոր կին, որ է թագուհի. և ը՟ այլոց՝ երկս. իսկ բազմութ՟ հարճից բաժանեալ են 'ի վեց դասս. և ամփոփեալ պահին յառանձին բնակարանս զորէն գերեաց 'ի մենանձնաւոր կալանս դատապարտելոց: Վ՟յ լաւագոյն է յոյժ վիճակ կանանց աղքատաց՝ ք՟ զմեծատանցն. զի ն՟ք ազատ են և կարեն երթալ ուր և կամին. իսկ մեծատանցն ոչ: Օրէնք չինաց ոչ տան թոյլ առնուլ հարճս, բայց միայն մանտարինաց. և այնոցիկ, որք մինչև 'ի քառասնամեան հասակ ոչ ունէին որդիս. այն զի պատիժք ես սահմանեալ կան յօրէնս ն՟ց, այնոցիկ՝ որք զանցանէին զայսու օրինօք. սակայն այժմ ոչ ևս պահին այն օրէնք, զի որք միանգամ կարող են՝ առնուն

հար.

հարձս որչափ և կամին ։ Չիք առ նմ մասնաւոր ինչ օրէնք 'ի վ͞ր մերձաւորութ͞ե արենակցութ͞ե մ͞նւնդ 'ի մօր կողմանէ · բայց 'ի մէջ առաջնոյ աստիճանի · այլև երկրորդի 'ի հօր կողմանէ ոչ երբէք առնեն ամուսնութ͞ի ։

'Ի մատաղատունկ հասակի ամուսնացուցանեն զդստերս իւրեանց, 'ի երկոտասան ամաց · իսկ զպատանիս իբր 'ի բ͞ժ մի քսան ամաց · երբեմն և յօրօրոցի · այլև յարգանդի իսկ մօրըն խօսին զն͞ս միմեանց · ենթադրել թէ մինն արու ծնցի և միւսն էգ · և զա͞մ բան հարսնախօսութ͞ե կատարեն ծնողք և ազգականք ։ Առ չինս՝ դստերք են իբր մասն ընչից վաճառելի իբաց ծնողաց իւրեանց · զի ոչ միայն ոչ տան նց օժիտս՝ բայց 'ի հանդերձից հարսանեաց · այլ ը͞նհկ͞ռկն՝ վաճառեն զնոսա · առեալ դրամս 'ի գին նց յաւելս և նուազ ը͞ որում սակ արկանեն ը͞ միմեանս երկոքին կողմանք ։ Մեծապէս խտրեն զաւուրս վ͞ն հարսանեաց · քննեն զամիս և զօր և զժամ ծննդեան փեսային և հարսին · հարցանեն միշտ ցքուրմս, որք ը͞ մեծի մասին մոգ են և հմայք · և ը͞ խորհրդոց նց ջանան առնել զա͞մ, զի մի չարեաց ինչ դիպեսցին ։ Կայ ամուսնութ͞ե առ նս ը͞ իւրեանց է անլուծանելի · բայց 'ի դիպուածս ինչ օրէնք նց թոյլ տան արձակել զկանայս · որոց գլխաւորքն են ։ Եթէ չհաւանի կինն, յայնժամ այրն կարող է և վաճառել զնա ում և իցէ · այլ այսպիսի դիպուած ուր ուրեմն հանդիպի · սակս մեծի զգուշութ͞ե, զոր ունին 'ի վ͞ր կանանց ։ Եթէ անհաշտ ատելութ͞ի ծագեսցի 'ի մէջ առն և կնոջ, մինչև այնուհետև անհնարին լինել խաղաղութ͞ե բնակել նց ը͞ միմեանս, բայց յայնժամ բաժանումն պարտի լինել հաւանութ͞ե երկոցունց ։ Եթէ ամուլ իցէ կինն յետ քանի մի ամաց զկնի ամուսնութ͞ե ։ Եթէ անհնազանդ իցէ սկեսրարն և սկեսրի իւրոյ, և լեզուադար և խռովարար, մինչև անհանդուրժելի լինել ընտանեաց ։ Եթէ գողանայ կմ͞ գաղտ վաճառէ զինչս տանն ։ Եթէ ախտասցի զախտ փոխադրական, կմ͞ զախտ ելեփանդական, այն է ֆռէնկ ույուզու կմ͞ բորոտն, որոյ բժշկութ͞ին անկարելի իցէ, կմ͞ յոյժ դժուարին ։ Իսկ եթէ կինն ինքնին թողցէ զայրն՝ և առանց հրամանի նր մեկնեսցի 'ի նմէ, անկանի ը͞ պատժով հարիւր հարուածոց գաւազանի · և յայնժամ կարող է այր նր վաճառել զնա ումեմն, որ առաւել գին տացէ նմ, կմ͞ զի ռամկօրէն ասացից՝ մեզաթով ծախել ։

Թոյլ տան ծնողաց 'ի բաց ընկենուլ զորդիս, կամ վաճառել 'ի գերութիւն · յորժամ բազում են, և առ աղքատութեան ոչ կարեն պահել զնոսա · բազում անգամ և հեղձուցանեն իսկ · ակնունելով թէ հոգիք նոցա փոխադրեսցին յայլ մարմին, թերևս բարեբաստագոյն վիճակի դիպեսցին · զի ոմանք 'ի վերոյ ասացաք՝ ունին զաղանդ հոգեփոխութեան · հաւատալով թէ հոգիք յետ մահու փոխին 'ի մարմնոյ 'ի մարմին : Այսչափ ինչ վասն սոցա · այլ ասասցուք ինչ և վասն խնամոց նոցա 'ի վերայ մեռելոց : Արգելեալ է առ չինս թաղել զմեռեալս 'ի մէջ շրջափակ պարսպաց քաղաքին, նոյնպէս և մուծանել 'ի քաղաք զդի մեռելոյ ուրուք արտաքոյ քաղաքի՝ թէպէտ և 'ի մեծատանց ոք իցէ : Վասն հասարակ ժողովրդեան են արտաքոյ քաղաքաց սահմանեալ տեղիք գերեզմանաց, ուր թաղեն անխտիր ամենքին · իսկ իշխանք և մեծատունք ունին առանձին գամբարանս նոյնպէս արտաքոյ քաղաքաց յանշէն և յամայի վայրս 'ի վերայ բնական կամ արուեստակերտ բլրոց · զի թէ ուրեք չիցէ բլուր, կուտեն հող բազում և առնեն բլրակ : Գամբարանք նոցա են մեծաշէն, որք բերեն զնմանութիւն տան, կամ փոքրիկ պալատի, և ունին երիս դրունս կամ կամարս · մի մեծ 'ի միջի, և երկու փոքրունս աստի և անտի : 'Ի ներքս 'ի գամբարանի անդ՝ է սեղան 'ի կճոյ կանգնեալ 'ի վերայ գերեզմանի մեռելոյն · յորոյ վերայ 'ի հանդիսի աւուրս ինչ տարւոյն որդիք և ազգականք և բարեկամք մեռելոյն եկեալ լուցանեն մոմեղէնս · և այրեն պէսպէս՝ ոսկեզօծ թղթեղէն պատկերս մարդոյ և անասնոց · և բազում անգամ անկեալ 'ի վերայ երեսաց երկիրպագանեն նոցա · և ապա առնեն անդ սեղան մեծահաց 'ի յիշատակ մեռելոյն, ուտեն և ըմպեն և հեղուն յերկիր գինի : Առ նովին սեղանով կանգնեն և մահարձան և 'ի վերայ նորա գրեն զերևելի երևելի գործս մեռելոյն : Ոմանք և 'ի տան իւրեանց կառուցանեն այնպիսի սեղան, և գրեն 'ի վերայ նորա զանուն հօր և հաւու իւրեանց · և անդ կատարեն զամենայն նախասացեալ պաշտամունս մեռելոց : Իսկ իշխանաւորք, որք ունին բաւական կարողութիւն, տաճարս ևս կանգնեն 'ի պատիւ և 'ի յիշատակ նախնեաց իւրեանց, որոց և զոհս մատուցանեն :

Այս սովորութիւն, որ ոմանց թուեցաւ իբր ազգ ինչ կռապաշտութեան, այնպէս արմատացեալ է առ նոսա, զի քարոզիչք աւետարանին թէպէտ բազմս աշխատեցան, սակայն ոչ կարացին զհաւատացեալսն 'ի Քրիստոս հրաժարեցուցանել անտի · վասն որոյ հարկեցան թոյլ տալ այնմ՝ իբր անիմաստ ինչ սովորութ̅, համարելով զայն իբր քաղաքական իմն պաշտօն և մեծարանս ընծայել նախնեաց իւրեանց:

Յորժամ ոք 'ի մեծատանց մեռանի, որդի նր̅ վաղվաղակի գրով աղդ առնէ ամ̅ ազգականաց և բարեկամաց զմահ հօր իւրոյ. և նց̅ ժողովեալ, լուանան զմեռեալն և ծխեն նմա խունկս անուշունս. և ապա զգեցուցեալ նմա զլաւագոյն հանդերձս նր̅, բազմեցուցանեն յաթոռ, և սկսանին կոծ առնուլ 'ի վ̅ր նր̅. նախ կանայք և հարճք նր̅ անկեալ 'ի վ̅ր երեսաց առաջի նր̅, բզ̅մ անգամ երկրպագանեն նմ̅, և աշխարեն աղիողորմ ձայնիւ. ապա որդիք և այլ ամ̅ ընտանիք նց̅. յետոյ ազգականք և բարեկամք: Յաւուր եր̅դի դնեն զդի մեռելոյն 'ի տապանի կաղմեղոյ 'ի մեծագին ինչ փայտէ. և ծեփեն զբոլոր տապանն թանձր կպրով. զի ժահահոտութի դիոյն մի ելցէ արտաքս. և տարեալ հանգուցանեն 'ի վ̅ր սեղանոյ, զոր նորոգ կառուցանեն 'ի միում 'ի մեծագոյն սենեկաց տանն, զորոյ զորմովն պատեն սպիտակ պաստառաւ. զի սպիտակ գոյնն առ նս̅ է նշանակ սգոյ: Եւ աւուրս չորս կմ̅ հինգ ազգականք և բարեկամք նր̅ 'ի սահմանեալ ժամս եկեալ՝ ունելով զգեցեալ հանդերձս սպիտակս, բզ̅մ անգամ ծունր կրկնեն նմ̅, և անկեալ 'ի վ̅ր երեսաց ողբս առնուն 'ի վ̅ր նր̅. զնոյն առնեն ը̅ նս̅ և ընտանիք մեռելոյն և 'ի վ̅ր սեղանոյն ծխեն պէսպէս խունկս, անուշունս, լուցանեն մոմեղէնս. այրեն ոսկեզօծ թուղթս և մետաքսեայ կերպասս, կարծելով թէ այն իրք պիտանի եղիցին մեռելոյն 'ի հանդերձեալ Ծի:

Յաւուրսն յայնոսիկ գան և քուրմք, և երգեն անդ ողբաձայն. և 'ի հասանել գիշերոյ բազմին ուտել և ըմպել առատապէս 'ի տան մեռելոյն. վ̅ զի յայն աւուրս միշտ պատրաստեալ կայ անդ սեղան մեծահաց: Ոմանք յորդւոց առ սաստկագոյն աղէտից և ցաւոյ, զոր ունին վ̅ մահու հօր իւրեանց, պահեն զդի նր̅ 'ի տան մինչև յերիս և չորս ամս ամփափակեալ 'ի տապանի, յորմէ ոչ բուրէ ժահահոտութ̅. զի ամ̅ առոցաք ծեփեալ է կպրով առհ̅րկ. և աւուրս հարիւր ոչ ննջեն 'ի սովորական մահիճս իւրեանց, այլ 'ի գետնի 'ի վ̅ր միոյ փսիաթի առ տապանաւ հօրն. և ընդ այն աւուրս հրաժարեն 'ի մսոյ և 'ի գինւոյ:

Իսկ յաւուր՝ յորում հանդերձեալ են թաղել զմեռեալն, դարձեալ ժողովին 'ի տուն նր̅ ազգականք և բարեկամք զգեցեալ հանդերձս սպիտակս . և ը՟ առաջնոյ օրինակի այրեն ոսկեզօծ թուղթս 'ի վ՟ր տապանի նր՟ . և մի առ մի անկեալ յերկիր , հարկանեն զճակատ 'ի գետին բ՟զմ անգամ . զնոյն առնեն ը՟ նն և որդի մեռելոյն մինչև վաստակաբեկ լինել յերկար և 'ի բազմապատիկ գետնատարածութեց : Իբրև կատարեն զա՟մ, զոր ինչ սովորութի՟ է առնել 'ի տան , սկսանի թափոր թաղման : Նախ երթան ընտանիք և ծառայք մեռելոյն ունելով 'ի ձեռս՝ ոմանք թղթեղէն պատկերս արանց և կանանց և գերեաց և ազգի ազգի գազանաց , այլ և բերդս և մարտկոցս նոյնպէս թղթեղէնս . կէսք վառեալ մոմեղէնս և խնկանոցս լի խնկօք , ոմանք ևս տանին սեղան բարեկլից . յորոյ վ՟ր եդեալ կան և ազգի ազգի խունկք անուշունք : Զկնի ա՟ց երթան քուրմք , որք հնչեցուցանեն պէսպէս նուագարանս , ո՟ր թմբուկ , որինկ են ողբաձայն՝ այլ անարժէսս ամենևին , և ոմանք 'ի նշէ տանին դրօշ բոժոժաւորս . այլ և սեղան զոհի չինեալ 'ի պատիւ մեռելոյն : Ապա գայ դի մեռելոյն բարձեալ յարանց բազմաց , և ծածկեալ սպիտակ ասղնագործ մետաքսեայ կերպասիւ . ունելով 'ի վ՟ր և հովանի : Զկնի գագաղացն երթան որդիք նր՟ և ազգականք տխուր և թախծագին դիմօք , և իբր լուծեալք և վհատեալք 'ի սաստկութե՟ ցաւոց յեցեալք 'ի գաւազանս . ապա կանայք և դստերք մեռելոյն և հարճք նր՟ նստեալ 'ի գահաւորակս ծածկեալս սպիտակ կերպասիւք . որք ողբս առեալ բարձրաձայն աշխարեն զմեռեալն՝ ունելով ը՟ ինքեանս և կանայս եղերականս :

Ժամանեալ 'ի տեղի գերեզմանին , նոյնժամայն կազմեն սեղան մեծահաց , և այր մի զգեցեալ սպիտակ հանդերձս , և եդեալ զմի ձեռն 'ի վ՟ր միոյ անկեան սեղանոյ ծամածռէ և խանդարէ զերեսս , թիւրէ և թեքթեքէ զա՟մ անդամս մարմնոյ . ծուռեցուցանէ լորձունս . բաղխէ զոտն ձեռամբ . առնէ և այլ այսպիսիս՝ զորէն դիւահար մոլեգնելոց . ապա յերկիր անկեալ մնայ անդ անշարժ առ վայր մի իբր 'ի հիացման . և յանկարծուստ իմն յարուցեալ , դրէ 'ի վ՟ր կարմիր թղթոյ բառս ինչ . զոր հանդիսիւ այրեն 'ի վ՟ր տապանին , ը՟ նմին և զվերոյգրեալ թղթեղէն պատկերս և բերդս . զի կարծեն թէ այն պատկերք այրեցեալք , 'ի հանդերձեալ Յին փոխին յերս , զորս յանդիման առնեն . ո՟ր պատկեր մարդոյ 'ի մարդ ճշմարիտ , ախուծուն յախուծ , բերդին 'ի բերդ : Ապա թաղեալ 'ի հող զմեռեալն , բարեկամք և ազգագակամնք նր̃ և քուրմք բազմին ուտել և ըմպել. և յարուցեալ̃ վերստին սկսանին զնախադրել̃ զետնատարածութիւս և ծնրադրութիւս, տալով զվերջին հրաժարական ողջոյն մեռելոյն. և դառնան 'ի տուն արբեալք և յափրացեալք:

Ժամանակ սգոյ չինաց ձգի ը̃ ամս երիս. և յիւրաքանչիւր ամսն այնպէս հանդերձս զգենուն. յառաջնումն 'ի խոշորանիւթ սպիտակ կտաւոյ, այլ հին և կարկատուն, ունելով առ ստեանս չուան գօտի. իսկ 'ի գլուխս սեաւ գլխարկ. յերկրորդումն նոյնպէս 'ի կտաւոյ, այլ փոքր մի նրբագոյն. իսկ յերրորդումն կարօղ են և մետաքսեայս զգենուլ, այլ սպիտակ, և ոչ յայլ գոյն: Եւ ը̃ այն երիս ամս իշխանք ոչ կարեն վարել զգործ իշխանութե. և պաշտաման իւրեանց. և ոչ 'ի հրապարակական խրախութիւս և 'ի խաղս երևել. նոյնպս և կանայք մեռելոյն ը̃ այն ամս ոչ կարեն անդրէն ամուսնանալ: Յա̃մ պարտական են երևեցուցանել զանձինս սգաւորս 'ի դէմս 'ի զգեստս 'ի խօսս. և մինչև ցահմանեալ̃ ինչ ժմկ ո՛չ կարեն ելանել 'ի հրապարակ. և զկնի այնորիկ եթէ հարկ իցէ ուրեք երթալ, գահաւորակօք գնան մինչև ցերիս ամս: Բայց սուգ առն վն̃ կնոջ ոչ է այսչափ երկար, այլ ամ̃ մի և եթ. նոյնչափ է վն̃ եղբօր: Այլ արհեստաւորք և մշակք ազատ են յայսպիսի օրինաց խիստ և երկարատև սգոյ:

Քրիստոնէական կրօնն եւս 'ի վաղնջուց ժմկաց եհաս յԾ̃ն չինաց. որպ̃ միաբան հաստատեն երևելի մատենագիրք յունաց լատինացւոց և ասորւոց. այլ թէ ե՞րբ, և յումմէ՞ զառաջինն քարոզեցաւ անդ, անյայտ է և անստոյգ: Ոմանք ասեն թէ նր̃ առաքեալն Թովմաս 'ի հնդկաց Ծէ կանց և 'ի չին. և անդ եւս քարոզեաց զաւետարանն քի̃. և զբզ̃մս 'ի բնակչաց նր̃ դարձոյց 'ի քս̃: Այլ այս կարծիք չունի հաստատուն ինչ հիմն. որպ̃ ը̃արձակ ցուցանէ ասսեմանն վկայութ̃ բազմաց մատենագրաց, 'ի մատենադր" արևել, հատ դ̃. մասն բ̃. Թղթահմ̃ 518. 'ի տպագր. հռովմայ: Այլ և բղ̃մք հաստատեն թէ կրօնն քրիստոնէական զառաջինն յասորւոց նեստորականաց մուծաւ առ չինս յամի տն̃ մերոյ 636 յաւուրս յեաուեարոսի դադաղացւոյ նեստորական պատրիարգի. զի յռ̃ջ ք̃ զայն չէք բնաւ ուրեք յիշատակութե ինչ վն̃ քրիստոնէութե չինաց:

Եւ զայս հաստատեն և այնու, զի 'ի 1625 մերձ 'ի սիուկան կմ̃ սիկանֆու գլխաւոր քղք չինաց նահանդէպ 'ի փորելն 'ի հիմն տան միոյ, գտաւ տախտակ մարմարինեայ. յորում բաց յայլոց բանից գրեալ կայր և այս, թէ 'ի 636 հասին 'ի չին քարոզք աւետարանին. վ̅ն այնր քարի ունիմք ը̅արձակագոյն խօսիլ 'ի ստորագրութե̅ սիւկան ք̅ղքի, ուր և գտաւ: Սակայն են ոմանք, որք հաստատեն թէ և յռ̅ջ ք̅ զյայտնիլ նեստորական աղանդոյ, գոյր քրիստոնէուե̅ 'ի չին: Յայսմանէ ոմանք հաւանական համարին, թէ 'ի հնդկաց հաւատացելոց 'ի ք̅ս քարոզութ̅ սբ̅յ առաքելոյն Թովմայի՝ զառաջինն մուծաւ քրիստոնէական կրօնն առ չինս. վ̅յ չէ ինչ անդէպ ասեն զսբ̅ն Թովմաս կոչել առաքեալ և վկայ հնդկաց և չինաց. զի հնդկաց անձամբ քարոզեաց զք̅ս, իսկ չինաց 'ի ձեռն աշակերտաց իւրոց:

Ապա 'ի 1245 'ի դ̅ Իննովկենտիոսէ առաքեցան 'ի Թաթարստան և 'ի չին քարոզիչք աւետարանին յերկուց կարգաց ց̅ սբ̅յն Փրանչիսկոսի և սբ̅յն Դոմինիկոսի. որք գտին 'ի Թաթարստան և 'ի չին նեստորականս բազումս, յորոց ոչ սակաւս դարձուցին յուղղափառ հաւատս, ոց̅ և զոմանս 'ի Թաթարաց և 'ի չինաց: Յետոյ դարձեալ պապն դ̅ Նիկողայոս 'ի 1278 առաքեաց քարոզիչս 'ի կարգէ սբ̅յն Փրանչիսկոսի առ քօպլայոս ինքնակալ Թաթարաց և չինաց: Նոյնպէս և Նիկողայոս դ̅ 'ի 1289 առաքեաց անդր այլեւս քարոզիչս. յորս երեւելի էր հայրն յովհաննէս 'ի կօրվինեան լեռնէ 'ի կարգէ սբ̅յն Փրանչիսկոսի, որ ը̅ս̅ որում յուցանէ 'ի թուղթս իւր, զոր գրեաց առ ը̅ն̅դ̅ն անձինս, բզ̅մ ը̅ունելութե̅ եգիտ առաջի ինքնակալին չինաց. և զբզ̅մս 'ի Թաթարաց և 'ի չինաց դարձոյց 'ի ք̅ս: Վ̅ա այնորիկ 'ի 1307 կղեմէս ե̅ առաքեաց եօթն եպ̅սունս ձեռնադրել զյովհաննէս արքեպ̅ս փէքինու. թէպէտ յեօթանց անտի երեք նեթ ողջանդամ հասին 'ի չին. որոց անուանք են գերարդոս, պերեգրինոս, և անդրէաս պերուտուսիացի. որք և 'ի 1308 ձեռնադրեցին զյովհաննէս. որոյ բզ̅մ իմաստութ̅ և սրբութ̅ հովուեալ զայն նորածաղիկ եկեղեցի ը̅ ամս 25, մեռաւ 'ի 1333. և 'ի տեղի նր̅ պապն յովհաննէս ի̅բ̅ կացոյց արքեպ̅ս փէքինու զնիկողայոս: Յաւուրս սր̅, յ̅ 'ի 1338 ինքնակալն Թաթարաց, որ տիրէր և չինաց Տի հրեշտակս առաքեաց առ բենեդիկտոս ժ̅բ̅, որ զայնու ժամու նստէր յաւենիոն. որ և մեծապէս պատուեալ զնս̅, և բզ̅մ պարգեւօք ճոխացուցեալ արձակեաց. ապա և ինքն 'ի դիմաց իւրոց առաքեաց առ ինքնակալն չորս միան֊

ձունս 'ի կարգէ սրբ՟յն Փրանչիսկոսի · այլ թէ զի՞նչ գործեցին նք՟ անդ, ոչ յիշատակի ուրեք:

Ցայսմ ա՟մէ, զոր ը՟ արձակ գրէ ասսեմանն 'ի մատենադր՟ արեւել, հատ՟ գ՟ · մասն բ՟, յայտնի երեւի, թէ ցորչափ ազ՟ չինաց էր ը՟ տրութ՟ ինքնակալաց թաթարաց, քրիստոնէութիւն ծաղկեցաւ ոչ միայն 'ի թաթարաստան, այլեւ 'ի չին · եւ քրիստոնեայք յայտնի եւ հրապարակաւ կատարէին զուղղափառան պաշտամունս իւրեանց, ունելով եկեղեցիս եւ եպ՟սունս · վս՟ զի բաց 'ի յովհաննու արքեպ՟սէ, որ նստէր 'ի փեքին, նաեւ այն երեք եպ՟սունք, որք զնա ձեռնադրեցին, վարեցին զեպ՟սական իշխանութ՟ միմեանց զկնի 'ի քանթօն ծովեզերեայ քղ՟քի · ուր ոպ՟ գրէ նա ինքն անդրէաս պերուճացի մի յերից եպ՟սաց անտի, տիկին մի մեծատուն յազգէս հայոց ծախիւք իւրովք ետ կառուցանել եկեղեցի մեծ եւ գեղեցիկ · զոր յովհաննէս արքեպ՟ս ը՟ կամաց նորին տիկնոջ՝ արար եպ՟սանիստ · ուր ուրեք նախայիշատակեալ եպ՟սունքն նստան զկնի միմեանց:

Այլ յամին 1369 զօրացեալ չինաց թօթափեցին ըզլուծ թաթարաց, վանեալ զնս՟ իսպառ յազ՟է իւրեանց · ը՟ նոսին եւ զեպ՟սունս եւ զքհ՟նյս եւրոպացիս եւ զայլ քրիստոնեայս հալածեցին անտի · նոյնպէս եւ նեստորականք, յորոց բղ՟մք գտանէին անդ յայնժամ, դժնդակ հալածանս կրեցին 'ի նոցէ · վ՟յ կմ՟ անդէն իսպառապուռ անհետացան, եւ կմ՟ հարկեցան մեկնել ե՟նք անտի: Եւ այնուհետեւ առ 'ի չգոյէ հովուաց առ սակաւ սակաւ իսպառ անհետ եղեւ քրիստոնէութիւն 'ի չինաց ազ՟է, զի ոպ՟ պատմէ ռենաւդոկիոս յամին 1517 յորժամ զառաջինն փորդուգալք հասին 'ի չին · (որոյ յիշատակն գլխովին բարձեալ էր յեւրոպիոյ,) եւ ոչ իսկ հետս ընաւ քրիստոնէութե՟ գտին անդ · այլ բովանդակ ազ՟ն կայր 'ի կռապաշտութե՟:

Ապա յամին 1552 ս՟բն Փրանչիսկոս քսաւերեան 'ի միաբանութ՟ յիս՟եանց վերստին սկսաւ քարոզել անդ զքս՟, որ եւ փոխեցաւ առ ած՟ 'ի սանչիամ կղզի 'ի քանթօն նէհնգի · յետոյ յամին 1688 մարմին նր՟ փոխադրեցաւ անտի 'ի կօա մայրաքղ՟ք գանարայ:

Ապա յամին 1600 մատթէոս րիկկիոս եւ այլք ոմանք առաքելաշնորհք 'ի նոյն յիս՟եան միաբանութ՟ գնացին անդր · որք 'ի ձեռն չափաբերական այն է՝ մաթէմաթիքական գիտութ՟ եւ մ՟նւնդ աստղաբաշխութե՟՝ ասպնջականութ՟ գտեալ առ ինքնակալն եւ առ մեծամեծս. սկսան պէսպէս հնարագիտութ՟ վերստին ծաւալե

սու նն զքրիստոնէական հաւատս . և զի մի խորշելի երևեսցին յաչս ժողովրդեան իւր օտարազգիքո մանք և նորակրօնք , 'ի սկզբան անդ զգենուին ը տարազու պօնցից կամ քրմաց նց . յոյր սակս և կոչեցան արևելեան պօնցք : Եւ ևս թոյլ տ այնն նորոց հաւատացելոց 'ի հանդիսական աւուրս ինչ տարւոյն ժողովիլ ը այլոց կռապաշտից 'ի տաճարս կամ յապարանս կանգնեալս գրեթէ յամ քղքս 'ի պատիւ կօնփուսիոսի , և առնել անդ զյիշատակ նր . առ որ հրաման ինքնակալին պարտաւորէր զամսին . և մատուցանել զսովորական նուէրս և զոհս տն երկնի և երկրի . (որով ասի թէ նք իմանային զճշմարիտն ած . զի ոչ տայցաք 'ի վեր անդր , չինք չուանին սեփական անուն այ .) առնել սեղանս 'ի վր գերեզմանաց մեռելոց իւրեանց . և նուէրել նց զինի հեղեալ յերկիր , ը հին հեթանոսական սովորութ իւրեանց . և այլ այսպիսիս . զորս հարք յիսեանք համբէին իբր լոկ քղքական պաշտամունս , և աւելորդապաշտուէս ռամկաց , և ոչ գործ կրօնի . նմին իրի 'ի
սկզբան անդ թոյլ տային նց առնել զայնս :

Եւ այսու' ը պատմելոյ նոցին յիսեանց 'ի սուղ ժմկ առաւել քան զ50000 ոգիս 'ի չինաց անտի աշակերտեցին 'ի նր հաւատն քսի . թող զայլս , զորս ծնօղք նց տեսեալ մերձ 'ի մահ դնէին 'ի փողոցս , և հարքն յիսեանք մկրտէին զնս : Ընկալան և հրաման յինքնակալէն շինել եկեղեցիս , և հրապարակաւ կատարել զպաշտամունս ը քրիստոնէական ծիսի . և ասեն թէ թիւ եկեղեցեաց և մատրանց ը համօրէն ան չինաց
էհաս ցերկերիւր :

Այլ յետոյ ժամանակէ անդր յեւրոպիոյ և այլոց քաղաքաց յայլմէ կարգէ , ոչ տային բնաւ հրաման նորոց հաւատացելոց առնել զնախասացեալ պաշտամունս . յորմէ երկպառակութի մեծ անկաւ 'ի մէջ հարց յիսեանց և նց . դատաստանն 'ի հռովմ ձգեցաւ. առաքեցան 'ի հռովմայ քննիչք . և յետ բզմ երթևեկութեց թղթոց և քննութեց , եկ վճիռ 'ի հռովմայ , որով արգելան այն ամ գործողութիք : Ընդ այն ժմկ և ինքնակալն չինաց եհան հրովարտակ , որով տարագիր առնէր զքհնյս եւրոպացիս յերկրէ իւրմէ , և արգել ը ծանր պատժով զի մի ևս լսելի լիցի երբեք ուսումն և անուն քրիստոնէութե 'ի չին , յորմէ և ծագեցաւ հալածումն սաստիկ . որով 'ի սուղ ժմկ վերստին ջնջեցաւ և անհետ եղև քրիստոնէութին յերկրէ չինաց : Ասի թէ 'ի վերջին հալածման անդ՝ մի կամ

եր

երկու ոմանք 'ի հարցմանց մտացն անդր եբր չափաբանք եւ աստեղաբաշխք թագաւորին . այլ սաստիկ պատուէր եղաւ նոցա մի երբէք խօսել ինչ ումեք վասն կրօնի ։ Սակայն լսեմք թէ այժմ գտանին անդ 'ի փէքին 'ի բուն արքայանիստ քաղաքի ուղղափառ քահանայք եւրոպացիք յայլ եւ այլ կարգաց . որք են արտաքին գիտութեանց , տարածեն անդ եւ զուսումն քրիստոնէական հաւատոյ . իսկ 'ի 1786 ամի թէ բացան եկեղեցիք 'ի փէքին , յորս կատարեն անխափան զպաշտամունս քրիստոնէութեան ։

ԺԵ . Բաժանումն Չինաց ։

Այս ընդարձակ աշխարհ առհասարակ 'ի ձեռն քեանձ գետոյն բաժանի յերկուս մասունս . մի 'ի Հիւսիսայինն , որ յառաջն Քաթայի կամ Քաթա անուանէր , ուստի 'ի մեր անդր նշանակեցաք . որ եւ սահմանակից էր Թաթարաց . եւ 'ի Հարաւայինն . որ անուանեալ կոչէր Մաջին եւ Մաչին . եւ երկոքին սոքա դարձեալ յայլ եւ յայլ նահանգս բաժանին ։ Հիւսիսայինն բաժանի 'ի վեց նահանգս . ոմանք եւ զՂեաոթոնկ նահանգն ըստ դնեն զորմէ մեք խօսեցաք 'ի ճառս ստորագրութեան Թաթարաց չինաց . զի տիրապետս անդ անկանի ։ Իսկ հարաւային մասն բաժանի յինն նահանգս . վասն եւ համօրէն աշխարհ չինաց ըստ թուոյ նահանգաց կամ աշխարհաց մեծին հայոց բաժանի 'ի ժե նահանգս . որք են հետագայքդ ։

Ա . Փէչէլի .
Բ . Չանսի .
Գ . Չէնսի .
Դ . Չանթօնկ .
Ե . Սուչէն .
Զ . Հօնան .
Է . Քիանկնան կամ Նանքին .
Ը . Հուքուան .
Թ . Քիանսի .
Ժ . Չէքիան .
ԺԱ . Ֆօքիէն .
ԺԲ . Քանթօն . կամ Քուանթօն .
ԺԳ . Քուանսի .
ԺԴ . Քուէյչէու .
ԺԵ . Իւնան ։

Զորս յառաջիկայդ միով միով յօդուածով ստորագրեսցուք համդերձ գլխաւոր քաղաքօք իւրեանց ըստ դուզնաքեայ ծանօթութեանց , զոր կալաք զնոցանէ ։

Յօդ ա. Փէչէլի :

Փէչէլի կամ Փէքէլի. և Պէչէլի: Է նահանգ ընդարձակ, որ յարևելից ունի իւր սահման զծոց մի ովկիանու, որ յանուն նորա կոչի ծոց Փէչէլեայ. բայց ոմանք ծոց Հօանհայ կամ Քանհայ կոչեն. 'ի հիւսիսոյ զմեծ պարիսպն, որով բաժանի 'ի Թաթարաց. յարևմտից զՇանսի. իսկ 'ի հարաւոյ զՀօնան: Ունի գետս բազումս և ջրմուղս և ծովակս, որք բերեն ձուկն առատ: Օդ նորա ցուրտ է, և ձմեռն երկարատև և սաստիկ. բազում գետք և ջրմուղք նորա սառին այնչափ, զի ոչ միայն մարդիկ և անասունք համարձակ գնան 'ի վերայ, այլև կառք բեռնաւորք: Ուր ուրեմն անձրևէ անդ. այլ փոխանակ անձրևոյ յամենայն առաւօտու իջանէ ցօղ յորդառատ: Երկիր նորա է բորակախառն, սակայն և այնպէս առ ժրաջան մշակութեամբ բնակչաց բերէ ցորեան, և որիզ և մորացորեան առատ. այլև ազգի ազգի պտուղս և բանջարս պատուականս. ունի և մետաքս, բայց ոչ այնպէս առատ որպէս Քանթօն նահանգն. այլ կարի նուաղուն է անդ փայտի 'ի պէտս շինուածոց և հրոյ. սակայն 'ի լերինս նորա ուրեք ուրեք գտանի ածուխ հանքային, զոր այրեն փոխանակ փայտի, որպէս յեւրոպիա անգղիացիք: Ասի թէ թիւ բնակչաց այսր գաւառի հասանէ ցհինգ միլիոն: Իսկ գլխաւոր տեղիք նորա են հետագայքդ,

ՓԷՔԻՆ, զոր մատենագիրք ԺԳ դարու Քամպալու կոչեն. որպէս է տեսանել առ Ասսեմանեայ. որ նշանակէ իջևան կամ բնակարան թագաւորի. որպէս և փէքինն թարգմանի Արքունիք հիւսիսոյ: Է գլխաւոր մայրաքաղաք համօրէն տէրութեան չինաց և աթոռ ինքնակալի նորա, մեծ և ընդարձակ յոյժ. ամուր և բազմամարդ և բազմավաճառ կառուցեալ 'ի դաշտավայրի, և բաժանեալ յերկու մասունս. մինն 'ի Քաղաք Թաթարաց, և 'ի Քաղաք Չինաց: Քաղաքն Թաթարաց կոչի և Հին քաղաք. զի է հին փէքին կամ քամպալու քաղաքն. զոր յորժամ առին Թաթարք, հանին անտի զչինիկ բնակիչս նորա միանգամայն զիշխանս և զմեծամեծս. և ինքեանք կալան զբնակութիւն նորա. իսկ զնոսա բնակեցուցին արտաքոյ պարսպաց քաղաքին. ուր 'ի սուղ ժամանակի շինեցին նոր քաղաք, և բնակեցան 'ի նմա. և յայն սակս անուանեցաւ

ցաւ քղ՟ք չինաց· կոչի և Նոր քաղաք· զի յանցե՟լ դարու չինեցաւ, ո՟պ ասացաք 'ի վեր անդր 'ի ներածութե՟ն: Հին քղ՟քն է կատարե՟լ քառակուսի, գեղեցկանիստ, և մեծաշէն ք՟ զնորն, ունի դրունս 9· իսկ նորն առաւե՟լ երկայն է ք՟ լայն· այլ ը՟ մեծութե՟ն հաւասար հնոյն, բայց ը՟ մեծագործութե՟ն չինուածոց 'ի վայր ք՟ զայն· եօթն դրունս ունի: Երկոքին ևս պարսպապատ են· և միացե՟լ կացուցանեն զմի քղ՟քս· որոյ շրջապատն է իբր 22 մղոն: Բարձրութի պարսպաց նր՟ են իբր 150 ոտնաչափ· իսկ թանձրութի՟ն այնչափ է, զի գիշերապահ զինուորք երիվարօք շրջին 'ի վ՟ր նր՟· և ուրեք ուրեք են 'ի նմա քառակուսի ամուր աշտարակք· և առ նովաւ խրամ լայն և խորայատակ, այլ անջուր· թէպ՟տ եթէ կամեսցին կարօղ են արձակել 'ի նմա ջուր:

Երկու են գլխաւոր դրունք նր՟· որք են երկու մեծամեծ և բարձր աշտարակք վրանաձևք առ միմեամբք· բայց անջատեալք յիրերաց· կողմունք նց՟ կապեալ և հաստատե՟լ բարձր և թանձր պարսպօք· և 'ի մէջ նց՟ հրապարակ մեծ ը՟ մէյդան բաւական 500 զօրաց կարգաւ դասաւորելոց 'ի ճակատ: Առաջին մեծ աշտարակն, որ բերէ զնմանութի՟ ամրոցի, և է 'ի դաշտակողմն կոյս 'ի գլուխ արքունի ճանապարհին՝ չունի մուտս· ք՟զի դուռն՝ որ հանէ 'ի հրապարակ անդր, է ը՟ մի կողմն նր՟ ը՟ պարիսպն: Իսկ 'ի յաջակողմն է երկր՟դ աշտարակն, որ հայի 'ի քղ՟քն· և է երկրորդ դուռն ը՟ մեծութե՟ն առաջնոյն: Անցք նր՟ խոր է յոյժ· ուստի և մթին· և կամարք երկոցունց ևս են համակ վիմատաշ· բայց մնացեալ որմունք աղիւսակերտք: Թիւ բնակչաց քղ՟քիս ը՟ գրելոյ հօրն Լուդովիկոսի քօնթեայ 'ի վախճան ժէ՟ դարու, յորժամ ինքն անդ էր աւելի էր ք՟ 2,500,000: Համօրէն քաղաքն բաժանե՟լ է 'ի թաղս թաղս· և իւրաքանչիւր թաղ 'ի բ՟մ փոքրիկ վիճակս· որք տասն տասն տունս պարագրեն· և իւրաքանչիւր վիճակ ունի իւր մասնաւոր վերակացու կմ՟ դէտ· որ զա՟մ անկարգութի՟ս, որք դիպին 'ի վիճակի իւրում պարտապան է ծանուցանել մանտարինի, որ իշխէ համօրէն թաղի: Զայսմանէ լիագոյն խօսեցաք 'ի վեր անդր 'ի ներածութե՟ն· 'ի ճառելն զհանգամանս քղ՟քաց չինաց:

'Ի լինել երեկոյի յա՟մ փողոցան ձգին շղթայք ընդ լայն· և ը՟ գիշերն ողջոյն բազմութե՟ն պահապանաց պահեն· կէս մի հետի շրջին ը՟ քղ՟քն· և կէս մի հեծե՟լ 'ի ձի 'ի վ՟ր պարսպաց քղ՟քին: Փողոցք նր՟ ու-

զեղ

ղիղ են, և ձգին ընդերկայն ոտանս մինչև ցերիս մղոնս. իսկ լայնութիւն գլխաւոր փողոցաց նոցա չէ ինչ աւելի քան 120 ոտնաչափ. այլ առհասարակ ուղիղ են և փոշելից, մանաւանդ յամարայնի՝ յորժամ տևէ ցամաքութիւն. զի յայնժամ փոշին իբր ծուխ թանձր ելանէ 'ի յաճախութենէ խառն բազմութեան երթևեկաց՝ յանհնարին վիշտ, որոց շրջին 'ի նմա. զի զաչս անգամ բանալ ոչ կարեն : Յերկուց կողմանց փողոցացն են կրպակք անհամարք լի հարստութեամբ, որք ունին երկու տախտակս առ դրամբ կախեալ աստ և անտի արտաքուստ. յորս ոսկի գրով նշանակեալ կան ամենայն տեսակք վաճառուաց, որք գտանին 'ի կրպակ անդր : Շինուածք տանց նոցա անշուք են. զի են միայարկ, և ըստ առաւել մասին փայտաշէնք՝ հիմնեալ 'ի վերայ մեծամեծ քարանց : Բայց գտանին անդ և մեծամեծ ապարանք, յորս նշանաւոր են արքունիք ինքնակալին կառուցեալ 'ի միջի հին քաղաքին. որ և է իբր փոքր քաղաք. շրջապատ նորա 3 կամ 4 մղոն, պատեալ երկքեկարգեան պարսպօք և խրամօք. և են անդ բազմապատիկ շինուածք մեծամեծք 'ի բնակութիւն իշխանաց և արքունի պաշտօնատարաց, և զանազան արհեստաւորաց. իսկ բուն պալատ ինքնակալին է 'ի ներքսակողմն. որոյ շինուածք մեծ են և հոյակապ, և շքեղութիւն և ճոխութիւն զարդուց նորա անչափ, այլ դիրք շինուածոցն անկարգ. և ձև նոցա անհամեմատ :

Եօթն հոյակապ տաճարք կամ մեհեանք են 'ի սմին քաղաքի. յորս երևելի են երկու տաճարք նուիրեալք երկնից և երկրի : Յառաջնումն են եօթն մեծամեծ և հոյակապ սրահք ոչինչ պակաս 'ի սրահից անտի, որք են յապարանս ինքնակալին : Յայս տաճար ամ ամի յաւուր ձմերային արևադարձի ինքնակալն մեծաւ հանդիսիւ զոհս և պատարագս մատուցանէ երկնից. այսինքն տեառն երկնից, որպէս ասեն. նոյնպէս և յաւուր ամառային արևադարձի. և յերկու գիշերահաւասարս, այսինքն գարնան և աշնան գրեթէ նոյնչափ հանդիսիւ առնէ ողջակէզս յայս տաճարս : Իսկ յերկրորդն, այսինքն 'ի տաճարին երկրի, թագադնեն ինքնակալք չինաց. որք յաւուր թագադրութեան իւրեանց զգեցեալ զզգեստ հովուէի կամ մշակի, և կալեալ զարծաթի մաճ, բազում հանդիսիւ զփոքրիկ մասն ինչ երկրի առ տաճարաւն արօրադրեն և սերմանեն : Եւ զայն առնեն մի՝ 'ի պատուել օրինակաւ իւրեանց զհողագործութիւն առ յորդորամիտս առնելոյ զժողովուրդն առ 'ի մատդիւր տալ զանձինս 'ի նոյն գործ արդիւնարար. և երկրորդ՝ առ 'ի ցուցանել, թէ վ՟ զի ամ՟ հասք և մուտք գան նմա 'ի քրմանց ժողովրդեան. վ՟ այնորիկ պարտական է քաջ խնամ՟ տանել ն՟ց. և որչափ հնար է թեթևացուցանել զբեռն ն՟ց: Պիշինկ ասէ թէ չիք 'ի փէքին գործածումն կառաց. այլ փոխկ այնր 'ի կիր առնուն գահաւորակս, այն է՝ թախտըռէվանս և երխվարս. բայց հայրն քոնթի ականատես՝ բաց 'ի գահաւորակաց յիշէ և կառս 'ի տորագրել ն՟ր զփէքին:

Չէմշանիւէն : Է տեղի սթափունց ինքնակալին իւրև լինն մղոնաւ հեռի 'ի փէքինայ:

Խոնֆինկ : Է քղ՟ք մեծ և բարեշէն ծովեզերեայ առ բարձրաբերձ և անտառախիտ լերամբք. մօտ առ այս քղ՟ք սկսանի մեծ պարիսպն:

Սուէնհա : Քաղաք մեծ և բազմամարդ և գեղեցիկ, մօտ առ մեծ պարիսպն. յորում են բ՟զմ՟ մեծաշէն կամարք յաղթութեն, կանգնեալք 'ի պատիւ ինքնակալաց ոմանց, և զօրապետաց, սակս մեծամեծ քաջագործութեց ն՟ց. որք և են մեծագոյն զարդք քաղաքին: 'Ի մերձակայ լերինս նորա գտանին քարահանք պատուական մարմարիոն քարանց. և ազգ մի գեղնամորթ մկանց. որոց մորթք 'ի յարգի են յոյժ առ չինս:

Փաօթին : Քաղաք մեծ և ամրապարիսպ 'ի գեղեցիկ և զուարճալի վայրի, ուր նստի փոխարքայն նահանգին փէքինու: 'Ի մէջ շրջապատ պարսպաց ն՟ր է լիճ կմ՟ ծովակ յորում լինին շուշան ծաղիկք:

Հօգիէն : Քղ՟ք մեծ բազմամարդ և գեղեցիկ և բարձրապարիսպ, կառուցեալ 'ի մէջ երկուց գետոց. շրջապատ ն՟ր է իբրև չորս մղոն:

Քինթին : Քաղաք բարեշէն և բարձրապարիսպ. որոյ շրջապատն է իբր չորս մղոն: 'Ի մերձակայ լերինս ն՟ր գտանին պէսպէս բոյսք բժշկականք:

Քունթէ : Քաղաք բազմամարդ, առ որով գործեն յախճապակեայ անօթ. բայց յախճապակի ն՟ր չէ 'ի լաւագունից անտի:

Թայմին կմ՟ **Թայմինկ** : Քաղաք բարեշէն յարգաւանդ և 'ի զուարճալի վայրի 'ի մէջ գետոց և լճից:

Թիէնծին : Քաղաք բազմամարդ և բազմավաճառ և փարթամ՟ կառուցեալ առ մեծ ջրմղաւ: Սա յառաջագոյն էր լոկ գիւղաքղ՟ք. այլ յամին 1710 անուանեցաւ քղ՟ք յերկր՟որդ կարգի քղ՟քաց. զի է մի յերևելի վաճառանեղեաց, որք են առ արքունի մեծ ջրմղաւ: Աստ նստի մաքսապետ աղից. և աստ բերեն նաւուք զփայտ 'ի պէտս հրոյ, և այլ զինչ իրս:

Փուչինչ. Թիլանչինչ. Չինլինչ : Են քաղաքք յայսմ նահանգի :

Յօդ Է. Ջանսի. կամ Շանսի.

Այս նհնգ ունի իւր սահման յարեւմտից զՇէնսի նհնգ. 'ի հիւսիսոյ՝ զմեծ պարիսպն, որով բաժանի 'ի Թաթարաստանէ. յարեւելից՝ զՓէչէլի. իսկ 'ի հարաւոյ՝ զՀօնան : Եւ թէպ՟տ փոքր է ը՟ տարածութ՟ն, և երկիր նր՟ լեռնային, այլ կարի բազմամարդ : Գլխաւոր բերք նորա են խաղող ազնիւ և քաղցրահամ, յորմէ ոչ առնեն գինի, այլ չամիչ պատրաստական. և տանին յայլ և այլ գ՟ւռս 'ի վաճառ : Են անդ և քարահանք մարմարիոն քարանց. և երկաթահանք. և յասպիս ակն գունագոյն. և այլ տեսակ մի քարի, որով ներկեն 'ի գոյն կապուտակ զյախճապակի անօթս. և տեսակ մի սեաւ հողոյ կմ՟ ածուխ հանքային. զոր 'ի կիր առնուն ոչ միայն 'ի պէտս հրոյ. այլ և լոսել և զանգել գործեն անօթ աղիւս վ՟ շինածոց : Գտանին անդ և աղի ջուրք, յորոց հանեն աղ. այլ և ջերմուկք եռացեալք. որք այնչափ ջերմ են՝ զի 'ի սուղ ժմկի եփեն զձու, և զայլ կերակուրս : Բայց որից և այլ արմտիք, և փայտ՝ սակաւ է անդ : Գլխաւոր տեղիք նր՟ են հետեւեալքդ :

Թայյէն : Գլխաւոր քղ՟ք այսր նահանգի. և մի 'ի վաղնջական քղ՟քացն չինու (ուր երբեմն նստան և ինքնակալք.) մեծ, բազմամարդ, և ամրապարիսպ, կառուցեալ առ ափունն գետոյ որ զնովաւ խառնի 'ի Հօհամ գետ : Շրջապատ նր՟ ը՟ ոմանց՝ է 6 մղոն. իսկ ը՟ աւելոյ այլոց՝ 9 : Ունի և բերդ, զոր պահեն Թաթար զօրք, որք են ը՟ հրամանատարութ՟ բնիկ չինացի փոխարքայի նահանգին : Են անդ և բ՟մ մեծաշէն դամբարանք մեծագործ երևելի արանց. զարդարեալ քանդակօք և պատկերօք առիւծուց, ձիոց և այլոց կենդանեաց : Յոջադոյն են 'ի նմին և բ՟մ հոյակապ ապարանք. այլ այժմ ը՟ առաւել մասին աւերակ են : 'Ի սմին քղ՟քի գործեն պատուական կերպասս մետաքսեայս. և ոսկեթել և արծաթաթել դիպակս գեղեցիկս. և գորգս, այն է՝ խալի ազնիւ :

Փինկեան : Քղ՟ք մեծ և հին բազմամարդ և ամրապարիսպ. յար և նման Թայվէն քղ՟քի. կառուցեալ յընդարձակ և յարգաւանդ դաշտի առ Ֆուէն գետով 'ի հիւսիսակողմն սին ք՟ղքի ։ Ոչինչ կարի հեռի աստի է լիճ մեծ աղի ․ յորմէ գործեն աղ բզ՟մ ։

Սին ։ Քաղաք բարեշէն 'ի հարաւակողմն նախընթաց քաղաքի ։

Ենկան ․ կ՟մ **Յէնկան** ։ Է ք՟ղք մերձ 'ի սահմանս Չէնսի նհ՟նգի, զոր ոմանք 'ի նմին նհ՟նգի դնեն ։

Լուէկան, կ՟մ **Լուխանկ**, և կ՟մ **Լունկան** ։ Քաղաք մեծ և պարսպապատ յարգաւանդ և 'ի բարեբեր վայրի ։

Ֆուէնչէ, կ՟մ **Ֆուէնդէ** ։ Քղ՟ք մեծ, բազմամարդ և բազմավաճառ կառուցել՟ առ Ֆուէն գետով, յորմէ էառ զանուն իւր ։ Շրջակայ վիճակ ն՟ր բերէ որիզ առատ և այլ սերմանիս ․ նմին իրի 'ի ք՟ղքի աստ հանեն յորիզոյ ազգ մի գինւոյ զօրեղ և պատուական ։ Գտանին անդ և բզ՟մ ինքնաբուղխ ջերմուկք առողջարարք ։

Յօդ Գ՟ ․ Չէնսի ․

Այս նհ՟նգ ձգի 'ի հիւսիսային արևմտեան եզերս Չինաստ՟ի առ սահմանօք Թաթարաց ․ և ունի իւր սահման յարևմտից զմեծ անապատն, զսիֆան և զգօգօնօր ․ յարևելից՝ զչանսի և մասամբ իմն զհօնան ․ 'ի հիւսիսոյ՝ զմեծ պարիսպն ․ իսկ 'ի հարաւոյ՝ զսուչվէն նահանգն ։ Եւ է մի յընդարձակագոյն նհ՟նգաց Չինաստ՟ի ։ Երկիր ն՟ր ը՟ մասին լեռնային է, և ը՟ մասին դաշտային ․ 'ի լերինս են պատուական արօտք անասնոց ․ և եղջերու, և այծեամն, և ցուլ վայրենի, արջ, և այլ գազան մի՝ որ նման է ընձու, որոյ մորթ 'ի պատուի է առ Չինս ։ Այլ և բովք ոսկւոյ, յորոց ուղխք յորդախաղացք բարձել՟ բերեն ոսկեփոշի խառն ը՟ հողոյ և ը՟ աւազոյ ։ Գտանի անդ և ածուխ հանքային ․ և ազգ մի կակուղ քարի դեղնագոյն, որ ունի սեաւ բիծս ․ յորմէ կազմեն ըմպանակս ․ և բժիշկք ն՟ց ասեն թէ գինի ըմպել՟ նովին բաժակաւ դեղթափ է ը՟դէմ թիւնից, և հրատապնաց տենդի ք՟ հիւմմայի են ։ Իսկ դաշտային տեղիք ն՟ր գոլով ոռոգել՟ բազմութ՟ գետոց և վտակաց, արդաւանդ են, և բերեն ցորեան, գարի, կորեակ և այլ սերմանիս առատ ․ այլ որիզ և պտուղս սակաւ ։ Ունի և մեղր, մոմ, խաշնդեղ այն է՝ ռէվէնտ ․ և

սամսանտալ փայտ աղնիւ . և պէսպէս բոյսս բժշկականս , և բանջարս 'ի կերակուր : Ունի և ընտանի անասունս բազումս , իբր այծ , ոչխարս դմակաւորս , և երիվարս են : Գտանի անդ և տեսակ մի չղջիկան , զոր ուտեն չինացիք . միս նորա առաւել ախորժահամ համարել է առ նոսա , քան առ մեզ միս կաքաւուց . յաճախ է անդ և Թռչունն գեղեցիկ՝ կոչեցեալ ոսկեհաւ , սակս ոսկեգոյն փետրոց նորա :

Յայս նահանգ , որպէս և յայլ նահանգս չինաց գտանին բազում մեծամեծ կամարք յաղթութեան կանգնեալք 'ի պատիւ երևելի երևելի արանց . այլև մեծամեծ և հրաշալի կամուրջք . յորս անուանի է կամուրջն Սուֆրանճ գետոյն , ձգեալ 'ի լեռանէ 'ի լեառն . երկայնութիւն նորա 400 կանգուն . բարձրութիւն 500 փոքր կանգուն . իսկ լայնութիւն 100 , բովանդակեալ 'ի մի միայն կամար . զոր օտարազգի ճանապարհորդք 'ի գիրս իւրեանց կամուրջ Թռչական կոչեն . իսկ չինք կամուրջ երկնահաս կամ ամպահաս . որ արդարև անհաւատալի իմն էր . թէ ոչ արք արժանահաւատք և ականատեսք վկայէին : Գտանի միւս ևս երևելի կամուրջ 'ի չինաց Ծի , բայց չգիտեմք ստուգիւ թէ 'ի սմին նահանգի իցէ , եթէ այլուր . որոյ երկայն" 660 ձողաչափ . իսկ լայն" մի և կէս . տափարակ և անկամար , հաստատեալ 'ի վերայ 300 խարսխաց կամ սեանց : Իսկ գլխաւոր տեղիք նորա են հետագայքդ :

Սիկան , կամ Սինկան , և Սիուկան . այլև Սիկանֆու : Քաղաք մեծ , բազմամարդ և բազմավաճառ կառուցեալ յընդարձակ և արգաւանդ դաշտի առ հուէյ կամ իւմէյ գետով , որ խառնի 'ի հօհամ գետ մեծ : Պարիսպ նորա է կատարեալ քառակուսի . շրջապատ նորա ըստ հօրն Քոնթեայ է 10 մղոն . իսկ ըստ այլոց 11 կամ 12 . և պարիսպքն բարձր և թանձր . ունելով շուրջանակի և խրամ խորայատակ . և ամրացուցեալ աշտարակօք , որք իբր մի մի քարընկէց հեռի են 'ի միմեանց : Կան անդ մինչև ցայժմ հոյակապ ապարանք , ուր յառաջագոյն բնակէին ինքնակալք չինաց : Բնակիչք այսր քաղաքի , որպէս և համօրէն նահանգին զօրաւոր են , կորովի , և բարձրահասակք և քաջ պատերազմականք . վասն որոյ և զօրք նոցա գեր 'ի վերոյ են քան զայլ ամենայն զօրս չինաց : Են անդ և բազմութիւն զօրաց թաթարաց , կարգեալ 'ի պահպանութիւն հիւսիսային սահմանաց Ծին . յորոց վերայ իշխէ մի ոմն սպարապետ ընիկ չինացի . և բնակութիւն նոցա պարսպաւ որոշեալ է 'ի քաղաքէն : Յայսմ վայրի 'ի դէպ համարիմ յիշատակել զհռչակաւոր գրուածն 'ի քարեղէն արձանի, որ յամի տն̃ 1625 գտաւ 'ի Սանփուաւէն աւանի, որ մօտ է առ այս Քղ̃ք 'ի պեղելն զերկիր արկանել հիմն̃ պարսպի միոյ․ զոր Քղ̃քապետն տեղւոյն ետ հաւատարմութ̃ օրինակել․ և դնել 'ի պահեստի 'ի սիկան Քղ̃քի :

Արդ՝ այն հռչակաւոր յիշատակարան, զորմէ ը̃արձակ գրեն աթանաս գիրքերիոս․ անդրէաս մուլլերոս․ եւսեբիոս հռենաւդոկիոս․ և այլք բզ̃մք որք իմաստունք, ը̃ որս և ասսեման 'ի մատենագր․ արևել․ հատ դ̃․ մասն ա̃․ թղթհմր 538 տպ՝ հռովմայ․ է քարեղէն արձան մեծ, յորում են գրուածք գրովք չինաց և ասորւոց․ որ յարանց գիտնականաց նախ 'ի բարբառ չինաց յայտնաբանեցաւ․ ապա թարգմանեցաւ 'ի լեզու փորդուքալաց․ յետոյ 'ի 1631 իտալերէն․ և 'ի 1636 լատիներէն տպագրութ̃ 'ի լոյս ընծայեցաւ :

'Ի գլուխ արձանին գոյ նշան սբ̃յ խաչի քանդակեալ: Վերնագիր չինաց գրուածոյն է երեք տող․ և յիւրաքանչիւր տողի են երեք երեք տառք: Իսկ բուն գրուածն է կէ̃ տող կմ̃ էջ թուեալ յաջմէ 'ի ձախակողմն․ կմ̃ 'ի ձախմէ յաջակողմն․ իսկ թուեալ 'ի վերուստ 'ի վայր ը̃ սովորութ̃ չինաց լինին իը̃ տողք կմ̃ էջք․ և ձմ̃ բառք պարունակեալք 'ի նս̃ա են իբր 1736․ բայց Քղի և 'ի լուսանցս գտանին քան և հինգ բառք․ վր̃յ ը̃ ամ̃ են 1761 : Եւ ճառի 'ի նմ̃ զմիութ̃ ա̃յ և զերրորդութ̃ անձանց․ որ զա̃մ արարածս յոչնչէ գոյացոյց, ը̃ նոսին և զմարդն առաջին, զոր սկզբնական արդարութ̃ ճոխացոյց, և տ̃ր ամ̃ի կացոյց : Ճառի և զմեղացն ազգամայ, և զայլեսպ̃ մոլորութեանց որդւոց նր̃․ որք փնկ արարչին զարարածս պաշտելով յերեք հարիւր վաթսուն և հինգ աղանդս ասին հերձեալ: Ճառի զմարդեղութէն քի̃, զծննդենէ, զթլփատութէ, զմահուանէ, զյարութէ և զհամբարձմանէ : Եւ ևս զգրոց հին և նոր կտակարանաց․ զմկրտութէ, զխաչէ, և զերկրպագութէ ը̃ արևելեան կողմն : Ճառի զքարոզութէ առաքելոց, և զսրբազան ծիսից քրիստոնէից, զզգեստուց նց̃, զպահոց, զաղօթից, ըզխորհրդական խոստովանութէ, և զայլոց սովորութեց :

Այս պատմի թէ օլոփուէն քարոզ աւետարանին 'ի թաչինայ թ̃ յասորւոց՝ եկած 'ի չին զօրէնս քրիստոնէից յամի փրկչին 636․ յորժամ 'ի չին թագաւորէր թայսում երկ̃դ, 'ի տոհմէ թամայ․ որ է երեքտասաներ̃րդ արքայազուն տոհմ չինու : Աւանդի և հրովարտակն, զոր յերկոտասաներ̃րդ ամի տրութ̃ իւրոյ, Թ յամի փրկչին 639 եհան, որով հաստատէ զքրիստոնէական կրօնն : Եւ պատմի թէ հրամայեաց մանտարինաց կանգնել եկեղեցի. և տալ նախայիշատակեալ օլօփուէնայ քան պաշտօնեայս. և ետ նկարել զպատկեր նորա և կախել յորմն եկեղեցւոյն : Ապա պատմին զանազան անցք, որք անցին ը քրիստոնէական կրօնն 'ի չին յաջողակք և ձախողակք մինչև ցամին 907 :

Իսկ գրուածն 'ի բարբառ ասորւոց յերկու մասունս բաժանի. 'ի միում մասին նշանակին անուանք եօթանասուն քարոզչաց աւետարանին քսի, որք սկսեալ յամի փրկչին 636 զքրիստոնէական հաւատս քարոզեցին 'ի չին. իսկ յերկրորդումն նշանակին նոքա, որք կանգնեցին զայն արձան զորոց ասի թէ էին ասորիք նեստորականք. և ժմկն՝ յորում կանգնեցաւ :

Սինգէա, կմ **Սիճհէա** : Է գլխաւոր մերձ 'ի մեծ պարիսպն. որ 'ի հնումն էր մայրաքղք տրուէն հեյայ կմ դանկութայ, որ տիրէր և 'ի վր մասին լինչ չէնաի նէնգին. և մնացեալ մասն թգրուէն խուրոյ ձգեալ տարածէր 'ի թաթարստան. և յամին 1226 քանդեցաւ 'ի Չինկիզխանէն :

Չօնկշան, կմ **Չօնթշէանկ** : Քղք մեծ և բազմամարդ յարգաւանդ վայրի. որ յայս անուն անուանեցաւ յառասպելական թռչնոյ միոյ. զորմէ ասեն չինացիք ունել պէսպէս ոսկեփայլ գոյնս զարմանազեղս : 'Ի քղքի աստ գտանին բզմ մեծամեծ շինուածք :

Քօնկփան : Է քղք մեծ և բազմամարդ առ վէյ գետով. ունելով շուրջանակի անմատոյց լերինս. որք են նմ փակ պարսպաց և ամրոցաց, և պահեն զնա յարշաւանաց թաթարաց : 'Ի քաղաքի աստ է հոյակապ և մեծաշէն դամբարան. զորմէ ասեն թէ իցէ գերեզման ֆօհեայ ինքնակալի հիմնարկուէի տրուէն չինաց :

Փինկլէանկ : Քղք մեծ և գեղեցիկ 'ի վր վէյ գետոյ 'ի զուարճալի և յարգաւանդ վայրի : 'Ի քղքի աստ են բզմ մեհեանք մեծաշէնք. այլև պալատ մի հոյակապ. որ է գլխաւոր զարդ քղքին :

Քօճին, կմ **Քանճին** : Ամրոց հզօր 'ի հիւսիսակողմն փինկլէանկայ :

Լանճին, կմ **Լինխայուն** : Քղք կմ բերդ ամուր առ հօհամխօ գետով մերձ յաւարտ մեծի պարսպին. ուր ոչ սակաւ տուրևառք լինին 'ի մէջ թաթարաց և չինաց. զի թաթարք բերեն անդ մորթս ազգի ազգի վայրի երէոց, և 'ի չինաց առնուն փոխարէն պաստառս :

Սև.

Տինէնք : Ամրոց յաւազուտ անապատի առ մեծի պարսպաւ մերձ 'ի սահմանս Թաթարաց գօղօնօրայ :

Տօհէգօվ : Է նոյնպէս ամրոց յաւարտ մեծի պարսպին յեզր սահմանաց չինաց Ծի :

Լին , կամ Լինկթաւ : Քաղաք մերձ 'ի յեաւնէ գետ ոչինչ կարի հեռի 'ի մեծ պարսպէ անտի , շրջապատեալ լերամբք . յորս գտանին պէսպէս վայրենի գազանք . որպէս ցուլք վայրենիք , և այլ տեսակ մի գազանի , որ եղջիւրս ունի . իսկ մորթ նորա նման է ընձու :

Գիտել պարտ է , զի 'ի հիւսիսակողմն փէչէլեայ չանսեայ և չէնսեայ գոյ ընդարձակ տարածութիւն երկրի շրջապատեալ 'ի մեծէ պարսպէն . ուր գտանին պատուական քաղաքք և բազմութիւն բնակչաց . գլխաւորքն 'ի քաղաքաց անտի են այս . Թաէնթօն կամ Թայէնթօնկ , Հուէվէն , Իւ . Տօ , Հուալէնհուա , Փանշան , և Իուգէն :

Յօդ Դ . Սուչուէն :

Սուչուէն կամ Սուտչուէն և կամ Սէչուէն : Է մի յընդարձակ և 'ի բեղմնաւոր նահանգացն չինաց Ծի . որ ունի իւր սահման յարևմտից զսիփան և զդիպէդ . յարևելից՝ զհուքվան . 'ի հիւսիսոյ՝ զչէնսի . իսկ 'ի հարաւոյ՝ զիւնան և զքվէյչէվ : Այս նահանգ քանդեցաւ 'ի ժամանակս պատերազմաց Թաթարաց . այլ այժմ անդրէն դարձ արար 'ի նախնական բարեշինութիւն իւր : Հօամ գետն և առաջք ինչ նորա անցեալ ընդ մէջ այսր նահանգի յարևմտից յարևելս , արգասաւոր գործէ զերկիր նորա . որ և յայն սակս բերէ ցորեան և այլ ազգի ազգի արմտիս առատ . և պտուղս բազմատեսակս . և եղէգն շաքարաբեր . և մետաքս ազնիւ և առատ . և խաշնդեղ . այն է՝ ռէվէնտ : Ունի և սնդիկ , և անագ , կապար . և մագնիս քար , և աղ բազում , զոր հանեն յաղի ջուրց ջրհորոց և լճից ինչ : Գտանի անդ և փոքրիկ թռչուն ինչ գեղեցիկ յոյժ . որոյ կտուցն կարմիր է . և փոխ փետրոց ունի 'ի վերայ աղուամազ քնքուշ երփն երփն փայլեալ . այլ կեանք նորա նուազ է . զի հազիւ ապրի ամիս վեց : Չինացիք առասպելեն զնմա թէ 'ի ծաղկէ միոյ ծնանի . զորոյ և զանունն կրէ . զի կոչի Թունղօնղունձ յանուն ծաղկին : Գլխաւոր տեղիք այսր նահանգի են հետագայքդ :

Ճինդու , կամ Քինկթաւ , և կամ Չինկթօ : Է գլխաւոր

քաղաք

Քղք այսր նհնգի մեծ ամուր բազմամարդ և բազմավաճառ . կառուցեալ առ մօտ յառաջից քեանձ գետոյն : 'Ի քղքի աստ է մեհեան մի մեծաշէն , և 'ի նմ դամբարան միոյ 'ի նախնի հռչակաւոր ինքնակալացն չինու :

Սուչեւ , կմ Սօչէու : Քղք մեծ և բազմամարդ և բազմավաճառ կառուցել 'ի վր մեծի ջրմղի կմ առուի , մօտ առ քեանձ գետն և առ լիճ մի : Շրջապատ քաղաքին է իբր 12 մղոն :

Մահօս : Քղք բարեշէն և բազմավաճառ առ քեանձ գետով :

Ունինփ · Եէնփին · Իունփու · Լինդաւ · Եաւ · Տօլան : Են քղքք և աւանք :

Քանփինկ : Քղք գեղեցիկ մեծ և բազմամարդ շինել ընդ լանջակողմն լերին 'ի մուտս քինքայ գետոյն 'ի քեանձ գետն մեծ · տունք նր և այլ շինուածք ըստ ձևոյ Թատրոնի գեղեցկագիր կարգաւ շինել կան զառ 'ի վայր լերին : 'Ի սմին քղքի շինեն տուփս գեղեցկանկարս :

Փաօնին , կմ Փաունին : Քաղաք մեծ և գեղեցկաշէն և բազմավաճառ կառուցել մերձ 'ի տեղին , ուր երկու առաջք քինքայ գետոյն խառնին 'ի միմեանս :

Լօնկան , կմ Լօնկնան : Քաղաք ամուր և բազմամարդ կառուցել իբր նախապարիսպ ըդէմ արշաւանացն Թաթարաց :

Հանդփանէ , Հանդէնփ · Չօնփ · և Փէյ : Են քղքք և բերդք 'ի սմին նհնգի :

Յօդ Է · Յօնան :

Այս նհնգ ունի իւր սահման յարևելից զլանթօնկ և զնանքին . յարևմտից՝ զչէնսի . 'ի հիւսիսոյ՝ զըղփէքին և զշանսի . իսկ 'ի հարաւոյ՝ զհուքվան և զըղքեանձսի : Օդ այսր նհնգի մաքուր է բարեխառն և առողջարար . և երկիրն ը առաւել մասին դաշտային , ջրարբի և քաջ մշակել . լի և արդաւանդ և բարեբեր , ամենայնի և ամենադիւտ 'ի շահս և 'ի դարմանս մարդկային պիտոյից , կենաց և վայելչութե և փափուկ . մինչև կոչել չինաց զայս նհնգ դրախտ ծի իւրեանց : Նմին իրի պատմեն նք , թէ Ֆօհի առաջին ինքնակալ իւրեանց, և այլ նախնի ինքնակալք հարեալ 'ի սէր այսր նահանգի անդ անցուցանէին զմեծ մասն կենաց իւրեանց : Իսկ գլխաւոր տեղիք նորա են հետագայքդ :

Կայֆօնկ : Է գլխաւոր քաղաք այսր նահանգի մեծ, բազմամարդ և փարթամ կառուցեալ 'ի դաշտավայրի իբր 4 մղոնաւ հեռի 'ի հօանգ գետոյն մեծէ . շրջապատ նր է իբր 9 մղոն : Յառաջին ժամս առաւել մեծ էր և հոյակապ և գեղեցիկ, ուր բնակէին բզմ իշխանազունք և աքքայորդիք Ինքնակալաց չինաց . այլ այժմ ոչ սակաւ անշքացեալ է : Վն զի պատմի թէ յամի փրկչին 1642 մինչդեռ մի ոմն յիշխանաց ապստամբեալ յԻնքնակալէն պաշարեալ էր զքղքս զայս բազմութ զօրաց, հրաման ետ Ինքնակալն յեղակարծ ժամու հատանել զթումբ հօանգ գետոյն . և յորձանք ջուրց նր անհնարին բռնութ դիմեալ ընդ զառ 'ի վայր . քանզի ծոց գետոյն առաւել բարձր է քն զշրջակայ դաշտն ուր քղքն է շինեալ . կործանեաց գրեթէ ըզբոլոր քղքն, և հեղեղեալ ծածկեաց զամ քղքն . յորում ջրահեղձոյց կորեան ոգիք աւելի քն 300000 : Յետ այնորիկ վերստին շինեցաւ մերձ 'ի տեղին ուր էր յառաջագոյն . բայց չէ ևս եհաս 'ի չափ առաջնոյն :

Հօայքին : Քղք մեծ յարևմտեան կողմն նախընթաց քղքին առ քեանչ գետով :

Նանեանկ : Քղք փոքր՝ այլ բարեշէն և բազմամարդ . շրջակայ վիճակ նր կարի արգաւանդ է և բերրի . վյ պարէնք կերակրոց առատ են անդ և դիւրագին . ուր մարթ է բիւրաւոր զօրաց կալ ամաւ ընդերկար առանց նեղութե ինչ բնակչաց :

Հօնան : Քղք մեծ և բազմամարդ կառուցեալ 'ի մէջ լերանց և գետոց . որ ունի զանուն 'ի նահանգէն, կմ նահանգն 'ի նմէ : Վն այսր քղքի ասեն չինացիք թէ է 'ի միջակէտն բոլորագունդ հողագնտոյս մերոյ . զի նք զԾ իւրեանց համարին լինել 'ի մէջն բոլոր հողագնտոյս . և զքղքս զայս կեդրոն նր :

Թէնֆօնկ հիէն : Քղք փոքր, այլ հռչակաւոր սակս բարձր աշտարակի կմ դիտանոցի միոյ, զոր ասեն կառուցեալ հազար ամօք յառաջ քն զքն Չէօքօնի երևելի աստեղաբաշխի չինացւոյ 'ի զննել անտի զաստեղս . ուր տեսանի մինչև ցայսօր գործի ինն 'ի գտանել նաւաւ զգիծն միջօրէական և զբարձրութի բևեռին : Չինք սմա ընծայեն զգիւտ կողմնացոյց սլաքին, զոր 'ի կիր առնուն նաւավարք :

Քուէյտէ : Քաղաք ոչ այնչափ ինչ մեծ, այլ գեղեցիկ կառուցեալ 'ի զուարճալի և յարգաւանդ դաշտի 'ի մէջ գետոյ. Նուռն և Նարինջն այսր քղ̃քի անուանի են առ չինս:

Ի-Նինկ, կամ Զու-Նինկ: Քղ̃ք բազմամարդ առ վէյ գետով յը̃արձակ և 'ի բեղմնաւոր դաշտավայրի:

Թունկին: Քղ̃ք մեծ և բազմամարդ առ սահմանօք չանսեայ և փէքինու 'ի վ̃ր մեծի գետոյ միոյ. ուր գտանի տեսակ մի ջրային կենդանւոյ, որ նման է կոկորդիլոսի, զորոյ զճարպն վառեն 'ի կանթեղս փխ̃կ ձիթոյ:

Յօդ. Է. Շանթօնկ կամ Քանթօնկ:

Այս նահանգ ունի իւր սահման յարևելից զծովն Նանքինու որ կոչի և ծով դեղին ը̃ մէջ քօրէայ և չինու. 'ի հիւսիսոյ՝ զծոցն փէչէլէայ և մասամբ իւիք զփէչէլի նհ̃նգն. յարևմտից՝ զհօնանն և ը̃ մասին զփէչէլի. իսկ 'ի հարաւոյ՝ զնանքին և զքեանձնի: Ընդ այս նհ̃նգ անցանէ մեծ ջրմուղն Թգ̃րական, ող̃ և ը̃ նհ̃նգն փէչէլէայ. այլ բաց յայնմանէ են անդ և գետք յոլովք մեծամեծք և փոքունք և լիճք, որք բերեն ձուկն առատ: Երկիր նր̃ պատուական է և արգաւանդահող. բերէ որիզ և այլ արմտիս առատ. և ազգի ազգի պտուղս: Յաճախ են անդ և ընտանի և վայրենի հաւք պատուականք 'ի կերակուր. ող̃ և որդն այն, զորմէ 'ի ներածուծ խօսեցաք, որ կազմէ մոմ սպիտակ 'ի վ̃ր ծառոց: Գտանի անդ և ազգ մի չէրամոյ, որ կազմէ մետաքս 'ի վերայ ծառոց և թփոց, զոր կոչեն մետաքս վայրենի. որ առաւել տևողական է ք̃ զընտանի մետաքս, բայց չունի զը̃նորայն պայծառութի և ազնուութի: Հռչակաւոր է նհ̃նգս այս առ չինս, սակս լինելոյ նր̃ հայրենիք մեծի օրէնսդրի նց̃ և վ̃պի կօնփուսիոսի: Իսկ գըլխաւոր տեղիք նր̃ են հետագայքդ:

Շինան, կամ Ջինան: Է գլխաւոր քղ̃ք այսր նհ̃նգի, մեծ գեղեցիկ բազմամբոխ և բազմավաճառ. կառուցեալ 'ի ջրարբի և յարգաւանդահող վայրի առ գետով միով: Գլխաւոր վաճառք նր̃ են մետաքս ազնիւ ընտանի և վայրենի. գործեն անդ և ապակի պայծառ և գեղեցիկ, բայց այնչափ դիւրաբեկ է, զի և 'ի դոյզն հողմոյ խորտակի:

Յանճիւն, կամ Լանճիւն: Քաղաք բարեշէն ծովեզերեայ կառուցեալ 'ի վ՟ր բլրոյ 'ի գեղեցիկ և 'ի զուարճալի վայրի ։

Թէնկֆու ։ Է նոյնպէս ք՟ղք ծովեզերեայ մեծ և բազմամարդ և բազմավաճառ ․ ունի նաւահանգիստ պատուական, և բերդ ամուր, զոր միշտ պահեն բազմութիք զինուորաց ․ ունի և քանի մի նաւս պ՟տզմի կարգեալս 'ի պահպանութ՟ն նաւահանգստի ն՟ր ։

Չէնֆու, կ՟մ Շինֆու ։ Ք՟ղք ծովեզերեայ, մեծ, բազմամարդ և բազմավաճառ և բարեշէն ։ 'Ի վիճակի այսր ք՟ղքի յորովայնս ումանց կովուց գոյանայ քար իբր ձուաչափ փոքր մի դեղնագոյն և դիւրաբեկ ․ զոր իբր գեղթափ ք՟ բանեցէին 'ի կիր առնուն ը՟դդէմ զանազան ախտից ։

Լէնֆու, կ՟մ Յէնֆու ։ Ք՟ղք մեծ և բարեշէն կառուցեալ յընդարձակ դաշտի առ գետով միով ։ 'Ի վիճակի այսր ք՟ղքի է Քիովֆէու քաղաք անուանի առ չինս, զի անդ ծնաւ կօնփուչիոս մեծ վ՟պտ նոցա ․ ուր և կառուցեալ կան բ՟զմ տաճարք և դամբարանք 'ի յիշատակ ն՟ր ։

Ուչին ։ Քաղաք մեծ և ամրապարիսպ կառուցեալ 'ի դաշտավայրի, զոր դնեն եր՟դ 'ի կարգս գլխաւոր ք՟ղքաց այսր նահանգի ։

Փին, և Քէն ։ Են երկու ք՟ղքք այսր նահանգի 'ի հիւսիսակողմ՟ն ն՟ր ։

Յօդ Է․ Նանքին ։

Նանքին որ և Քէանկնան ։ Է երկր՟դ 'ի կարգս նահանգացն չինու զկնի փէչէլեայ մեծ փարթամ և բազմամարդ ․ որ ունի իւր սահման յարևելից ըղմասն զայն ովկիանու, որ կոչի ծոց նանքինու ․ յարևմտից' զհօնան և զհուքվան ․ 'ի հիւսիսոյ' զշանթօնկ ․ իսկ 'ի հարաւոյ' զքէանձի ։ Ը՟նդ այս ն՟հնգ անցանէ քեանձ կ՟մ քեամ գետն երևելի, որ մեծ է և շատաջուր ք՟ զայլ ա՟մ գետս չինու, և գնայ անկանի 'ի ծովն ։ Նոյնպէս և հօամ երկ՟րդ երևելի գետ չինու ոռոգանէ զմասն ինչ սահմանաց ն՟ր, և մտանէ 'ի նոյն ծոց նանքինու ։ Բաց յերկուց մեծամեծ գետոց ատի' են անդ և այլ բ՟զմ գետք և վտակք, և լիճք մեծամեծք և մանունք, որք արգասաւորս գործեն զերկիր ն՟ր ․ ուստի և առատութ՟ն է անդ ա՟մ ․ զի ունի որիզ, ցորեան և արմաւս և ազգի ազգի պտուղս. և բամբակ, մետաքս, խէժ մասնաւոր՝ որ այն ինքն է հռչակաւոր վէռնիքն չինու. որով օծանեն զպէսպէս ձեռակերտս. որք 'ի յարգի են ը՟ ա՟մ տեղիս: Ծաղկե՟լ է յոյժ և վճռկանութիւն յայսմ Նէնգի. ուր անհամար գործարանք գտանին մետաքսեայ կերպասուց, բամբակի պաստառաց, Թղթոյ և մելանի, և այլ ազգի ազգի ձեռակերտաց. յայն սակս և հան, զոր ամի ամի տայ այս Նէնգ ինքնակալին, ասի Թէ հասանէ ց32 միլիոն ղ՟շս. Թող զմաքսն, զոր առնուն 'ի վաճ՟ռց. որ և այն չէ ինչ փոքր: Բնակիչք ն՟ր են ժրաջան 'ի գործս, ճարտարք, ուշիմամիտ և ուսումնասէր. յորոց ելանեն բ՟զմ երևելի երևելի գրագէտք և իմաստունք, որք վ՟ս իմաստուն՟ երևանց ամբառնան յայլ և այլ իշխանութիւնս: Գլխաւոր տեղիք այսր Նէնգի են հետագայքդ :

Նանքին: Էր գլխաւոր քաղաք այսր Նէնգի, և երկմայրաք՟ղք համօրէն տ՟րուե չինաց զկնի փէքինու. անուն ն՟ր Թարգմանի՝ Արքունիք հարաւոյ. վ՟ս զի 'ի հնումն աստ էր աթոռ ինքնակալաց. զոր յետոյ փոխադրեցին 'ի փէքին. Նեղե՟լք 'ի հարստահարուԹենէն Թաթարաց, որք ստէպ արշաւէին անդ 'ի ծովակողմանէ: Ընդ այն ժամս ք՟ղքս այս ը՟ կարծեաց չինաց գերազանցէր զայլ ա՟մ ք՟ղքօք համօրէն Ծի՝ մեծուե՟, գեղեցկուե՟ և հարստուե՟. և էր շրջապատե՟լ երեքկարգեան պարսպօք. և շրջապատ վերջնոյն էր 48 մղոն. ոպ՟ երևի մինչև ցայսօր յաւերակաց անտի. որ և էր մ՟ւնդ սահման գ՟ւռի ք՟ ք՟ղքի միոյ: Նոյնպէս և Նուհ՟նգիստ ն՟ր ը՟րձակ էր, խորայատակ և անքոյթ 'ի հողմոց, այլ այժմ 'ի շ՟տ տեղիս լցե՟լ է տղմով և աւազով, զոր քեանձ գետն անդադար ընդ 'ի նմ՟. վ՟յ և անբաւական մեծամեծ և ծանրաբեռն նաւուց: Ըստ նմին օրինակի և ք՟ղքն ոչ սակաւ անշքացե՟լ է յառաջնոյ վայելչուԹէ իւրմէ. սակայն և այնպէս գերագոյն է ք՟ զայլ ք՟ղքս չինու՝ բաց 'ի փէքինու. որ և է կառուցե՟լ 'ի վ՟ր քեանձ մեծի գետոյն մերձ 'ի բերան ն՟ր, ը՟ որ մտանէ 'ի ծովն, և գործէ անդ նուհ՟նգիստ. շրջապատ ն՟ր այժմ է իբր 36 մղոն. Թող զայնարձակ արուարձանս ն՟ր. և է քաջ պատսպարե՟լ պարսպօք, և պահպանե՟լ 40 հազար զինուորօք. իսկ զԹիւ բնակչաց ն՟ր համացանեն ցերկու միլիոն: Փողոցք ն՟ր են չափաւոր ը՟ լայնուԹն, այլ երկայն և քարայատակ. են 'ի նմ՟ 'ի տեղիս տեղիս և առուք կ՟մ խրամք հոսական ջրուց, է՟ որս մարթ է նաւել նաւակօք : Ունի և բազում պալատս գեղեցիկս իշխանաց և ազնուականաց, բայց տունք հ՟րկ ք՟ղքացւոց ցածունք են և անշուք : Իսկ կրպակք ն՟ց անհամար են և լի հարստութ՟բ : Արքունի ապարանք, ուր երբեմն բնակէին ինքնակալք չէր ինչ ը՟հատ մեծութ՟բ և շքեղութ՟բ յարքունեաց անտի Փէքինու. այլ 'ի 1642 հրկէզ եղև, յորում Ճմկի Թաթարք կալան զինքնակալութ՟ն չինու : Վ՟յ չիք այժմ նշանաւոր ինչ շինուած 'ի նմ՟, բաց 'ի դրանց ն՟ց, որք գեղեցիկ են և մեծաշէն. և բաց 'ի մեհենաց ոմանց :

Այլ ք՟ զա՟մ երևելի է հռչակաւոր աշտարակն արտաքոյ դրան ք՟ղքին. անուանեալ աշտարակ յախճապակեայ. զի արտաքուստ համակ պատեալ է բազմագունի յախճապակեաւ. վ՟յ 'ի հարկանել ճառագայթից արեգական 'ի վ՟ր ն՟ց, շողշողեալ փայլէ յա՟մ կողմանց : Որմունք ն՟ց են 'ի թրծեալ աղիւսոյ. որք այնպէս քաջ մածուցեալ են ընդ միմեանս, զի բոլոր շինուածն թուի միաստանի զանգուած. որ և է կառուցեալ 'ի վ՟ր հաստահիմն խարսխի. որ է բոլոնդակ յորձաքար վիմաց ժ՟բ աստիճանս բարձր 'ի գետնոյ. և շրջապատեալ քարեղէն սիւնակօք : Բարձրութ՟ն աշտարակին է 200 ոտնաչափ. և են 'ի նմ՟ 884 աստիճանք 'ի ստորոտէ մինչև 'ի գլուխն : Ձևն է ութանկիւնի. որոյ իւրաքանչիւր կողմն է հինգ ոտնաչափ. և բոլոր շրջապատն 40 : Բայց զայս չափ տարածութ՟ն պարտ է իմանալ վ՟ն ստորին կողման. ք՟զի 'ի վերին կողմանս առ սակաւ սակաւ անձկանայ : 'Ի գագաթան է գունտ մի, զոր չինք համակ ոսկի ասեն. բայց ը՟ ասելոյ այլոց է պղնձի ոսկիապատ : Այն աշտարակ է բաժանեալ յինն յարկս կամ դստիկոնս ը՟ զաթս 'ի վ՟ր միմեանց. յիւրաքանչիւր յարկի է մի մի սենեակ զարդարեալ պէսպէս ոսկեզօծ քանդակօք, գունագեղ նկարուք և դրոշելովք կռոց : Ստորին սենեակն բարձր է և մեծ ք՟ զայլս. որ յերից մեծամեծ դրանց ևեթ ը՟ունի զլոյս, զի չունի լուսամուտս. իսկ վերինքն յա՟մ կողմանս ունին մի մի լուսամուտ : Եւ ևս՝ առ իւրաքանչիւր յարկօք արտաքուստ են քիւք կամ թևք. այն է՝ սաչախ, լայն և վայելչազարդ. և յա՟մ անկիւնս ն՟ց կախեալ կան փոքրիկ զանգակք, որք 'ի շնչել հողմոյ հնչեցուցանեն ձայն գեղեցիկ ներդաշնակութ՟ : Արդ՝ թէպէտ իբր 400 ամք են զի շինեցաւ այս աշտարակ, սակայն կայ մնայ ամբողջ և անարատ : Այս ք՟ղք է գլխաւոր ոուսումնարան չինաց . անդ է և երևելի ճեմարանն բժշկաց նց . ուր և գտանին բզմ գրագէտք և վրդք անուանիք առ նս , և դպրատունք յոլովք . ուր և ուղղագոյն և ընտրելագոյն բարբառ չինաց է 'ի սմին քղքի : Են անդ և բազմութիւն իշխանաց և արքունի գործակալաց :

Թայփին, կամ Թայփինֆ : Քղք գեղեցիկ բազմամարդ և բազմավաճառ յարգաւանդ և 'ի զուարճալի վայրի առ քեանճ մեծ գետով :

Չիչէու : Քաղաք մեծ և բարեշէն առ նովին քեանճ գետով :

Չինկեանկ, կամ Քինկեանկ : Քղք փոքր, այլ բարեշէն ամրապարիսպ և հզօր կառուցեալ առ քեանճ գետով մերձ 'ի բերան նր, է որ մտանէ 'ի ծովն . ուստի և է սա իբր նախադուռն բոլոր տէրութեան չինաց 'ի ծովակողմանէ : 'Ի շրջակայ վիճակի նր գտանին բզմ մեհեանք ցրիւ աստ և անդ, և առ նոքօք բնակարանք քրմաց :

Նանքին, կամ Յանկին : Քաղաք մեծ, բազմամարդ և բազմավաճառ մօտ առ քեանճ գետ . բնակիչք նորա աւելի են քան 200000 . թող զթաթար զօրս որք կան անդ 'ի պահպանութեն քղքին . գլխաւոր վաճառք նր են աղ, նկարք կամ պատկերք չինաց , զի բազմութիւն նկարչաց գտանին անդ . և այլ պէսպէս ձեռակերտք :

Ֆօնկեանկ : Քղք մեծաշէն և ամուր կառուցեալ 'ի վր բլրոյ առ վէյ գետով, որ մտանէ 'ի հօնկ լիճն : Են 'ի նմին բզմ մեծամեծ չինուածք, ոպ աշտարակք, մեհեանք և գամբարանք զորս չինեաց հօնկֆու ինքնակալ չինաց . զորմէ ասի թէ 'ի մանկութեն իւրում էր ծառայ խոհարարի միոյ . կամ ըստ այլոց քուրմ անինչան . այլ սակս զգօնութեն իւրոյ և քաջագործութեն, որ արիաբար մարտուցեալ ընդդէմ թաթարաց վանեաց զնոսա յերկրէն չինաց, ամբարձաւ 'ի պատիւ ինքնակալութեն . և զայս քղք արար իւր աթոռանիստ առ ժմկ մի :

Լիւուչէն, կամ Լիւուֆէ : Քղք բարեշէն և բազմամարդ 'ի զուարճալի և յարգաւանդ վայրի կառուցեալ մերձ առ չաւ լիճն . ուր է կղզի մի երկայնաձիգ արգաւանդ և բազմամարդ :

Նկանքան, կամ Նկանքինկ : Քղք մեծ բազմավաճառ և փարթամ յարգաւանդ վայրի առ քեանճ գետով : Աս նստի փոխարքայն արևմտեան մասին նհնգին Նանքինու :

Հուինչէու : Քաղաք մեծ 'ի վր լերին 'ի հարաւակողմն

Նանքին քղքի 'ի մէջ երկուց գետոց, որք միացեալ
մտանեն 'ի քեանձ գետ :

Սուչեու, կմ Սուչէ : Քղք մեծ գեղեցիկ բազմավաճառ և փարթամ ոչինչ կարի բացագոյն 'ի ծովէ․ զորմէ ասեն թէ նման է վենետիկ քղքի ունելով 'ի ներքս ջրալից խրամս, Ճ որ մարթ է շրջիլ նաւակօք : Ոմն 'ի մատենագրաց չինաց դրախտ երկրաւոր կոչէ զնա սակս գեղեցկութե : Ունի բզմ գործարանս մետաքսեայ կերպասուց և ոսկեթել դիպակաց : Աստ նստի փոխարքայն արևելեան մասին նհնգին Նանքինու :

Վուհնան : Քղք մեծ և ամուր շրջապատեալ եռապատիկ պարսպօք․ 'ի գէճ և 'ի լճային տեղւոջ․ և զի դիրք տեղւոյ նր ցած է քան զծոց հոսման գետոյն․ յայն սակս միշտ 'ի վտանգի է ջրահեղձոյց լինելոյ 'ի ջուրց այնր գետոյ․ առ որով կառուցեալ կան թումբք հաստակառոյցք : Հինգ մղոնաւ հեռի 'ի քղքէ աստի է գիւղաքղք մի, որ և է նւհնգիստ հոսման գետոյն, անդ նստի իշխանն, որ վերակացու է գետոց և ջրմղաց :

Յօդ Է․ Հուքվան․

Հուքվան, կմ Հուքվանկ, և կմ Հօնօղանկ : Է մի 'ի մեծագոյն նահանգացն չինու գրեթէ 'ի միջակէտ անդր նր․ ունելով իւր սահմանակից 'ի հիւսիսոյ զհօնանն և զչէնսի․ յարևմտից՝ զսուչուէն և զքվէյիչէվ․ 'ի հարաւոյ՝ զքվանկսի և զքանթօն․ իսկ յարևելից՝ զքեանձսի : Բայց 'ի քեանձ գետոյն, որ անցանէ Ճ մէջ նր յարևմտից յարևելս հոսեալ, և բաժանէ զնա յերկու մասունս 'ի հիւսիսայինն և 'ի հարաւայինն, ունի և այլ բզմ գետս, որք ոռոգեալ զերկիր նորա, մտանեն 'ի նոյն քեանձ գետ : Յայն սակս կարի արգաւանդ է և բարեբեր․ ունելով ամենատեսակ արմտիս և պտուղս պատուականս առատապէս, և ձուկն 'ի գետոց և 'ի ծովակաց կմ լճից․ և պատուական քարահանքս, և բովս երկաթոյ, անագի և այլոց հրահալելեաց․ գտանի անդ յաւաղուտս և 'ի խիճս ոսկեփոշի բերեալ յուղխից և 'ի հեղեղաց․ այլև որդն այն փոքրիկ, որ 'ի ծառս կազմէ մոմ սպիտակ : Իսկ գլխաւոր տեղիք նր են հետագայքդ :

Վուչան, կմ Վուչանձ : Է գլխաւոր քղք այսր նհնգի մեծ, բազմամարդ և բազմավաճառ կառուցեալ առ քեանձ գետով 'ի հիւսիսակողմն նր̃ մերձ 'ի տեղին, ուր հան գետ խառնի 'ի քեանձ գետ անդր. իսկ արեւարձանեայք նր̃ անկանին յայնկոյս գետոյն 'ի հարաւակողմն նր̃ ։ 'Ի ք̃ղքի աստ է աթոռ փոխարքայի համօրէն նահանգին ։

Դուէկան, կամ Թուէկան ։ Քղ̃ք բարեշէն և մարդաշատ 'ի հիւսիսակողմն նախընթաց ք̃ղքի ։ 'Ի վիճակի սորին ք̃ղքի յաճախ է այն տեսակ փոքրիկ որդան որ կաղմէ մոմ սպիտակ. զորմէ այլուր խօսեցաք ։

Հանչանկ ։ Քղ̃ք մեծ բազմավաճառ և փարթամ հանդէպ վուջան ք̃ղքի ոչինչ կարի հեռի 'ի նմանէ առ հան գետով, յորմէ կալաւ և զանուն իւր ։ Գոյ 'ի սմին ք̃ղքի աշտարակ մի բարձր շինեալ 'ի վաղ ժամուց 'ի յիշատակ օրհորդի միոյ, որ 'ի դասս ած̃ոց կամ դից համարեալ է 'ի չինաց ։

Չանդայ, կամ Քանձիւ ։ Քղ̃ք մեծ շինեալ 'ի վր̃ մեծի հունին գետոյ ոչ յոյժ հեռի 'ի Թօնթին լճէն ։ Ասի թէ 'ի շրջակայս սահմանս այսր ք̃ղքի իջանէ երբեմն ցօղ քաղցրահամ. որ այն իսկն է գազպէ ։

Չինգտով, կամ Քինտէ ։ Քղ̃ք մեծ և բարեշէն առ գետով միով, որ խառնի 'ի հունին գետ մօտ առ այս ք̃ղք ։

Հինտէ ։ Քղ̃ք մեծ և բազմամարդ առ հէն գետով ։

Հանտէ ։ Քղ̃ք բարեշէն առ նովին հէն գետով 'ի հարաւակողմն նախընթաց ք̃ղքի ։

Փանհինկ ։ Քղ̃ք մեծ և բազմամարդ շինեալ 'ի վր̃ ին գետոյն 'ի բեղմնաւոր և 'ի զուարճալի վայրի ։

Թօնթին ։ Է լիճ մեծ կամ ծովակ 'ի մէջ այսր նահանգի է̃ 130 ասպարիզաւ երկայնութե̃. և է̃ 30 ասպարիզաւ լայնութե̃. շրջապատ նր̃ է իբր 250 մղոն. ուր մտանեն երեք կամ չորք գետք. և անտի ելանէ գետ մի մեծ, և գնայ խառնի 'ի քեանձ գետն ։

Յօդ Թ. Քեանձսի, կամ Քիանկսի.

Ունի իւր սահման յարեւելից՝ զչէքիան, և մասամբ իմն զնանքին. յարեւմտից՝ զհուքուան. 'ի հարաւոյ՝ զքանթօն. և զֆօքիէն. իսկ 'ի հիւսիսոյ՝ նոյնպէս զնանքին ։ Ունի գետս բազումս, որք գրեթէ առհ̃րկ մտանեն 'ի ծովակ մի մեծ կոչեցեալ փօյան կամ պաւքէ. որոյ շրջապատն է իբր 220 մղոն. և անտի ելանէ գետ մի, որ գնայ խառնի 'ի քեանձ ։ Յայս

ծո

ծովակ 'ի բզ̃մ տեղիս են յորձանուտք և պտոյտք ջուրց վտանգաւորք, յորս բզ̃մ անգամ ընկղմին նաւք: Եւ յառաւել վտանգաւոր տեղւոջ 'ի վերայ սեպացեալ բարձր ժայռի միոյ կայ կառուցեալ մեհեան, զոր 'ի տեսանելն նաւավարաց 'ի հեռուստ՝ սկսանին հարկանել թմբուկս, 'ի զարթուցանել զկուռսն որ 'ի նմ̃ յօգնութ̃ հասանիլ ինքեանց. լուցանեն և մոմեղէնս 'ի պատիւ նց̃. և ծխեն խունկս, և զենուն աքաղաղ մի. զի ասի թէ բնակիչք այսր նհ̃նգի բիրտ են և գլխովին ընկղմեալ յաւելորդապաշտութիս առաւել ք̃ զայլ չինացիս, որք և կարի աղտ և դծուծ կեանս վարեն, յայն սակս արհամարհեալ են յաչս այլոց չինաց: Իսկ գլխաւոր տեղիք նր̃ են հետագայքդ:

ՆԱՆՉԱՆ, կմ̃ **ՆԱՆՉԱՆԿ**: Է գլխաւոր ք̃ղք այսր նհ̃նգի մեծ, բազմամարդ և բազմավաճառ, և մի 'ի գեղեցկագոյն ք̃ղքացն չինու կառուցեալ առ քանչեանկ գետով, որ հոսի ընդ հիւսիս, և մտանէ 'ի նախայիշատակեալ փօյան ծովակն: Այս ք̃ղք անուանի է առ չինս. զի է մի 'ի գլխաւոր ուսումնարանաց նց̃, ուր են բազմութ̃ իմաստնոց և դրադէտ արանց:

ՈՒՉՈՒ, կմ̃ **ՅԷՈՒՆՉՈՒ**: Ք̃ղք փոքր, այլ բարեշէն և բազմամարդ 'ի հիւսիսակողմն նհ̃նգիս: 'Ի վիճակի սորին ք̃ղքի ելանէ հողն, յորմէ չինեն զապակի 'ի բովանդակ Տն̃ չինաց:

ՔՕԱՆՍԻՆԿ: Քաղաք մեծ և բազմամարդ առ գետով միով, որ մտանէ 'ի փօյան ծովակն 'ի հարաւոյ արևելից ը̃ հիւսիս ընթացեալ:

ՔԻԷՆՉԱՆՃ: Ք̃ղք մեծ և գեղեցիկ մերձ 'ի սահմանս ֆօքիէն նհ̃նգի առ գետով միով, որ մտանէ 'ի նոյն փօյան ծովակ: 'Ի ք̃ղքի աստ գտանին պալատք հոյակապք, և բզ̃մ մետաքսագործք, որք գործեն ոսկեթել դիպակս մեծագինս: Գործեն անդ և ըմպելի ինչ յորիզոյ, որ ունի զզօրութ̃ գինւոյ:

ՔԻՆՉԲՕՉԷՆՃ: Գիւղաք̃ղք մեծ և բազմամարդ և գըլխաւոր տեղի յախճապակեայ անօթոց. զի ասի թէ են անդ առաւել ք̃ 500 գործարանք յախճապակեայ անօթոց, յորս գործեն իբր միլիոն մի գործաւորք:

ՔԻՆՉԻԱՆՃ, կմ̃ **ՔԻԷՒՉԱՆՃ**: Ք̃ղք մեծ և բազմամարդ առ քեանձ գետով, ուր փօյան ծովակն կցի ը̃ նմին քեանձ գետոյ: Ծանուցեալ է յոյժ 'ի ք̃ղքի աստ վաճառականութ̃ն, զի է նաւահանգիստ նաւակաց, որք գան 'ի նանքին և 'ի հուքվան նահանգաց ը̃ քեանձ գետն, այլև ը̃ փօյան ծովակն: Եւ յոյժ հեռի 'ի քաղաքէ աստի 'ի քեանձ գետ անդր գտանին երբեմն և ծովային ձկունք. որպէս դլբին, սալամօն ձուկն, և այլ տեսակք ձկանց, բերենք 'ի ծովէ 'ի ժամս մակընթացութե ծովուն, որ այնչափ սաստիկ լինի անդ, զի յետս վանէ զընթացս գետոյն գրեթէ մինչև ցքաղաքն անդր. որ երկերիւր մղոնաւ և աւելի հեռի է 'ի ծովէ :

Քիէկան, կմ Քիէնան : Քղք առ ափն գետոյ միոյ. առ որով են լերինք, յորս գտանին ոսկեհանք և արծաթահանք. բայց լքեալ կան անգործ :

Քանդշէ, կմ Քանչէ : Քղք մեծ և բազմավաճառ 'ի հարաւային կողմն այսր նհնգի առ քանքիանձ գետով մերձ 'ի տեղին, ուր այլ գետ մի խառնի 'ի նմ. 'ի Քղքի աստ նաւի փոխադրքայ : Ասի թէ 'ի սահմանս այսր Քղքի, է ջրհոր մի որ կրէ զտեղատուութե և զմակընթացութե. զի 'ի 24 ժամու երկիցս ցամաքի և անդրէն լնանի :

Նանկան : Քղք մեծ և բազմամարդ մերձ 'ի սահմանս քանթօն նհնգի. ուր յաճախ են երթևեկք վաճառականաց. զի անդ հաւաքին վաճառք քանթօնի. վյ և է խոր շտեմարան կմ համբարանոց վճռց նր :

Յօդ Ժ. Չէքիան, կմ Չէքիանձ :

Ունի իւր սահման յարևելից զովկիանոս. յարևմտից՝ զքեանձսի. 'ի հիւսիսոյ՝ զնանքին. իսկ 'ի հարաւոյ՝ զՖօքիէն : Եւ է բազմամարդ և բազմավաճառ և արգաւանդ գեղեցիկ և զուարճալի, մինչև դրախտ անուանել զնա չինաց : Գլխաւոր վայելչութիւք նր են բազմապատիկ վտակք, և ջրմուղք կմ խրամք ջրալիցք ձգեալ ընդ ամ կողմանս նր : Անբաւ են անդ թթենիք, կմ լաւ ևս ասել անտառք թթենեաց. վյ ունի մետաքս բզմ յոյժ. յորմէ գործեն պէսպէս մետաքսեայ կերպասս անբաւս ընդ նհնգն ողջոյն, և մնւնդ 'ի հանդքս մայրաքղքս նր. և կերպասք նր ազնիւ են և անուանի 'ի բոլոր Չն չինաց : Ասեն թէ գործածութե մետաքսի զառաջինն 'ի սմին նհնգի գտաւ. յորմէ եանց 'ի հնդիկս, 'ի պարս և յայլ կողմանս աշխոյ. ապա 'ի յունաստան և յիտալիա. ուր ընդ ժմկս բզմս կշռով ոսկւոյ վաճառէին զմետաքս : Գլխաւոր տեղիք նր են հետագայքդ :

Հանդշէ, կմ Հանչէ. զոր ոմանք Համբլու գրեն : Է գլխաւոր քղք՟ այսր նհնգի՟ մեծ բազմամարդ և բազմավաճառ և ծովեզերեայ․ կառուցեալ ՚ի մուտս չէքութօն կմ՟ չիէն գետոյն ՚ի ծոց մի ովկիանոսի։ Շրջապատ նր՟ է իբր 12 մղոն․ և թիւ բնակչացն հասանէ ցմիլիոն մի։ Տունք նր՟ բովանդակ են միայարկ ոպ՟ և այլոց քղքաց՟ չինաց․ փողոցքն չեն այնչափ ինչ ը՟արձակք․ բայց ՚ի բզ՟մ տեղիս են ՚ի նմ՟ մեծաշէն կամարք յաղթութե՟ կանգնեալք ՚ի պատիւ զնդն՟ մեծագործ արանց․ և չորք մեծաշէն աշտարակք եօթնայարկեան․ և անհամար կրպակք բազմահարուստք լի ամենատեսակ վաճառօք։ Ունի և նւհնգխստ՟ մեծ և պատուական առ բերանով նախայիշատակեալ չէքութօն գետոյ, յորոյ ՚ի պաշտպանութե՟ կարգեալ կան 7000 թաթար զինուորք ը՟ հրամանատարութե՟ սպարապետի, որ է յազգէ նր՟․ և այլ ևս 3000 չինք։ Ոչինչ կարի հեռի ՚ի քղքէ՟ աստի է լիճ մեծ կմ՟ ծովակ Սիհու կոչեցեալ․ որոյ շրջապատն է իբր 6 մղոն․ և մասն ինչ նր՟ անկանի ՚ի նհնգն՟ Նանքինու․ ջուր նր՟ մաքուր է, ականակիտ և պատուական։ Ընդ մէջ ծովակիս են երկու փոքրիկ կղզիք․ և ՚ի միում ՚ի նցէ՟ է մեհեան մի կռոց և այլ շինուածք ինչ առ ՚ի պէտս սթափուե՟ց մեծամեծաց քղքիս՟։

Նինփօն, կմ՟ Նիմփօն, և կմ՟ Նինկփօ, զոր փորդուգալք կոչեն Լիամփօ։ Է ծովեզերեայ քղք՟ մեծ բազմամարդ և բազմավաճառ կառուցեալ յը՟արձակ դաշտավայրի մերձ ՚ի տեղին՝ ուր երկու գետք խառնին ը՟ միմեանս և մտանեն ՚ի ծով։ Շրջապատ քղքին՟ է իբր 20 մղոն․ և պարիսպ նր՟ քարաշէն ամրացուցեալ աշտարակօք։ Ունի նւհնգխստ՟ մեծ և պատուական, որ և է գլխաւոր յարևելեան ծովեզերեայս չինու․ և երևելի վաճառատեղի վաճառացն ճեաբօնայ, ուստի բարձեալ բերեն ոսկի, արծաթ և պղինձ․ և աստի տանին անդ մետաքս, շաքար, գինի և պէսպ՟ համեմս ըս՟ պահարս։

Թօուչէու, կմ՟ Թայչէու։ Քղք՟ բարեշէն ոչինչ կարի հեռի ՚ի ծովէն շինեալ առ գետով միով, և շրջապատեալ ՚ի լերանց։

Ւէնչէու, կմ՟ Ցէնչէու։ Քղք՟, որ թէպէտ ը՟ տարածութե՟ չէ այնչափ ինչ մեծ, բայց գեղեցիկ է և բազմամարդ կառուցեալ մօտ ՚ի ծոց մի ովկիանու ՚ի վր՟ գետոյ, որ գնայ անկանի ՚ի նոյն ծոց։

Քինհօա, կմ՟ Քինհուա։ Քղք՟ մեծ և բազմամարդ գրեթէ ը՟ մէջ կուսին առ գետով միով, որ գնայ խառնի ՚ի չէքութօն գետ։ Այս քղք՟ յառաջագոյն անուանի էր սակս գեղեցկութե՟ շինուածոց նր՟․ այլ յետոյ

Թաթարք այրեցին զմասն ինչ նր̄ · և քանդեցին զմ̄մ գեղեցիկ շինուածս․ վ̄յ այնուհետև անշքացաւ յոյժ : Բնակիչք նր̄ զօրաւոր են և քաջ պտ̄ղմօղք և նշանաւոր 'ի մէջ չինաց : Շրջակայ վիճակ այսր քղ̄քի արգաւանդ է, բերէ որիզ առատ և այլ արմտիս · յաճախ է անդ և ծառն ճարպոյ, զոր 'ի ներածութե̄ անդ ստորագրեցաք · այլև շլոր և այլ պտուղք :

ՔԻՆԻՆԳՀԱ, կմ ՔԱՈՒՆՀԱ : Քղ̄ք բարեշէն առ չիքուլոն գետով 'ի հարաւակողմն նր̄ : 'Ի շրջակայ լերինս նր̄ են անտառք մեծամեծ ծառոց · յորոց հատանեն փայտ բզ̄մ 'ի պէտս շինութե̄ նաւուց և այլոց շինուածոց :

ԽԻՆԻՆՀԱ : Քղ̄ք մեծ առ չիքուլոն գետով մերձ 'ի տեղին՝ ուր այլ գետ մի խառնի 'ի նոյն գետ :

Յօդ ժա̄ · Փօքիէն :

Այս նհ̄նգ ունի իւր սահման յարևելից՝ զովկիանոս · 'ի հիւսիսոյ՝ զչէքիան · յարևմտից՝ զքեանկսի · իսկ 'ի հարաւոյ՝ զքանթոն : Եւ թէպէտ փոքր է, այլ բազմամարդ · օդն մաքուր, և ցուրտն և տօթն բարեխառն · երկիրն լեռնային · բայց լերինք նորա չեն դատարկք · զի յոմանս են անտառք, յորոց հատանեն փայտ 'ի պէտս նաւուց և այլոց շինուածոց · և ոմանք են փորե̄լ և կակղե̄լ, և բաժանե̄լ յաստիճանս աստիճանս, որք բերեն պէսպէս արմտիս · և յոմանս են բովք հրահալելեաց ոք̄ կապարի, անագի, երկաթոյ և այլոց հանքաց : Ունի և այլ և այլ տեսակս պտղոց · յորս անուանի են նարինջ և կիտրոն քաղցրաճաշակ և անուշահոտ, յորմէ կազմեն քաղցրենիս : Բնակիչք նր̄ ճարտար են և ժրաջան և աշխատասէր և փոյթք 'ի վաճառականութե̄ · որք երթան 'ի ճէաբօն, 'ի փիլիպպեան կղզիս, 'ի չիամ և յայլ մերձակայ տեղիս շահավաճառութե̄ աղագաւ : իսկ գլխաւոր տեղիք այսր նհ̄նգի են հետագայքդ :

ՖՕՔՈՒ, կմ ՖՈՒՉԷՕՆ : Է գլխաւոր քղ̄ք այսր նհ̄նգի մեծ և բազմամարդ և բազմավաճառ և աթոռ փոխարքայի համօրէն նհ̄նգին կառուցե̄լ առ գետով միով ոչ այնչափ ինչ հեռի 'ի ծովէն : Ունի նաւահանգիստ պատշաճական, ուր յաճախեն նաւք ճէաբօնացւոց, հնդկաց, և եւրոպացւոց : Ունի և շինուածս մեծաշէնս · յորս երևելի է կամուրջ մի քարաշէն և մեծ յոյժ :

ՔԻՒԷՆ

Քինէնֆինկ, կամ Քինէնինկ ։ Քաղաք փոքր և անշուք կառուցեալ առ գետով միով. զոր առին Թաթարք և զբնակիչս նորա կոտորեցին. իսկ զքաղաքն հրկեզ արարին. և թէպէտ յետոյ վերստին շինեցաւ, այլ չևս եհաս յառաջին մեծութիւն իւր ։

Չանթու, կամ Չանթիու ։ Քաղաք 'ի հարաւակողմն Նէնգին առ գետով միով ։

Չէնթու ։ Քաղաք ծովեզերեայ մեծ և բազմամարդ և բազմավաճառ. ուր լինին երևելի տօնավաճառք. և յաճախեն վաճառականք յայլ և այլ տեղեաց ։

Ըմուլիօ, կամ Լհմուլիօ ։ Է անուանի բերդ և նաւահանգիստ պատուական 'ի կղզի մի համանուն, որոյ շրջապատն է իբր 50 մղոն. յաճախեն անդ նաւք վաճառականաց. վասն այնորիկ ինքնակալն չինաց պահէ անդ գունդ մի 9000 Թաթար զօրաց 'ի պաշտպանութիւն կղզւոյն և նաւահանգստի նորա ։

Յօդ ԺԷ. Քանթօն ։

Քանթօն կամ Քանթօնք և կամ Քուանթօնձ ։ Է մի 'ի մեծագոյն նահանգաց չինաց ծի 'ի հարաւային եզերս նորա. և ունի իւր սահման 'ի հիւսիսոյ զքեանձսի և զհուքվան և զֆօքիէն. 'ի հարաւոյ և յարևելից՝ զովկիանոս. իսկ յարևմտից՝ զքվանկսի ։ Աստ սկսանի մեծ ջրմուղն կամ խրամն չինաց, և ձգի մինչև ցփէքին. այլ բաց յայսմանէ են անդ և գետք և լիճք և հեղեղատք. վասն որոյ երկիր նորա ընդ ամենայն տեղիս է ջրարբի և արգաւանդ բերելով գրեթէ զամենայն տեսակս արմտեաց և պտղոց առատապէս ։ Ունի և ազգի ազգի հաւս ընտանիս և վայրենիս. այլև ջրքոտանիս. և ձուկն առատ 'ի ծովէ. և բովս ոսկւոյ. և հանքս ականց պատուականաց. և անուշահոտ փայտ, յորմէ գործեն պէսպէս ձեռակերտս. և մետաքս և մոմ վայրենի ։ Բնակիչք նորա ըզմ են. աշխատասէրք և ուժեղք. ճարտարամիտք և ուսումնասէրք և 'ի տուրևառս վաճառաց քաջավարժք և գլխովին անձնատուրք. յայն սակս բազմութիւն յոյժ մեծատանց գտանին յայսմ նահանգի ։ Իսկ գլխաւոր տեղիք նորա են հետագայքդ ։

Քանթօն, կամ Քանդօն, և կամ Քուանթօնձ. Է քաղաք մեծ մարդաշատ և բազմավաճառ, և փարթամ և անթու նախապատիւ փոխարքայի ինքնակալին չինաց , կառուցեալ առ դայ գետով՝ մերձ 'ի մուտս Նր̄ 'ի ծով անդր : Շրջապատ Նր̄ աւելի է ք̄ 12 մղոնս . իսկ թիւ բնակչացն համդերձ արուարձանեօք իբր միլիոն մի և կէս , եթէ չիցէ աւելի : Ունի նւհնգստ մեծ և պատուական ինն մղոնաւ հեռի , ուր յաճախեն նաւք ամ̄ ազգաց ասիացւոց և եւրոպացւոց : 'Ի ծովակողմն ունի իւր պատապարան պարիսպ բարձրաբերձ ամրացուցեալ աշտարակօք և երկու դղեակս , նոյնպէս և 'ի ցամաքակողմն ամրակուռ պարիսպս և ամրոցս : Բազում են 'ի նմին տաճարք կռոց , և պալատք , և այլ մեծաշէն շինուածք և պարտէզք . և կամարք յաղթուե̄ . զի 'ի դրանէ անտի ք̄ղքին , որ հանէ 'ի ծովն մինչև ցապարանս փոխարքայինեն երեսուն կամարք : Յռ̄ջագոյն առաւել գեղեցիկ էր և մեծաշէն այս քաղաք , և այլ թաթարք ոչ սակաւ քանդմունս գործեցին 'ի նմ̄ . վս̄ այնորիկ այժմ անշքացել̄ է յառաջին վայելչութէ̄ անտի իւրմէ :

Ֆօչան : Քաղաք իբր 10 մղոնաւ հեռի 'ի Քանթօնէ . որ ը̄ տարածութ̄ թէպ̄տ չէ այնչափ ինչ մեծ , այլ բազմամարդ է և փարթամ և գլխաւոր վաճառատեղի օտարաց . են 'ի նմա և բազմութ̄ ռամայնականաց :

Լօնչու , կմ̄ Լուանչու : Քաղաք բարեշէն մերձ 'ի սահմանս Հուքվանայ :

Ջաօչու , կմ̄ Գուաօչու : Քղ̄ք ծովեզերեայ մեծ և բազմամարդ յարևելեան կողմն առ մուտս գետոյ միոյ . ոչ կարի ինչ հեռի 'ի Ֆօքիէն նահանգէ : Գոյ 'ի նահանգի աստ միւս ևս ք̄ղք յայս անուն անուանեալ յարևմտեան կողմն ոչ ինչ կարի բացագոյն 'ի ծովէ :

Հէյչու , կմ̄ Վէյչու : Քաղաք բարեշէն . առ գետով միով , որ մօտ առ այս ք̄ղք մտանէ 'ի ծովակ մի : 'Ի վր̄ գետոյն գոյ կամուրջ երկայնաձիգ , որ ը̄ պատմելոյ ոմանց ունի 40 կամարս , և 'ի ծովակի անդ են երկու փոքրիկ կղզիք բազմամարդք միացել̄ք քարաշէն կամրջաւ :

Կաօչէուն : Քաղաք 'ի հարաւակողմն նահանգին առ գետով միով :

Լուիչու , կմ̄ Լէչի : Քղ̄ք յառուցեալ 'ի լեզու ինչ հողոյ 'ի հարաւակողմն նահանգին հանդէպ հայնան կղզւոյն , յորմէ բաժանի անձուկ նեղուցաւ :

Յօդ. ժգ. Կուանկսի ։

Կուանկսի, կամ Քուանսի և Քուանձի ։ Է մի 'ի մեծագոյն հարաւային նահանգացն Չինու, որ ունի իւր սահմանակից յարեւելից զքանթօն. 'ի հիւսիսոյ՝ զհուքուան և զքվէիչէվ. 'ի հարաւոյ արեւմտից զիւնան. իսկ 'ի հարաւոյ՝ զդունգին և զծոց նորա ։ Հիւսիսային մասն նորա լեռնային է, իսկ հարաւայինն դաշտային. որ և ոռոգանի 'ի բազում գետոց. վասնորոյ արգաւանդ է և բերրի. ունի օրիզ և այլ արմտիս առատ. և ազգի ազգի պտուղս. և մետաքս, մոմ վայրենի. դարիճնենիկ, այն է՝ տաւշին ասուեղ անուշահոտ և համեղ քան զսէյլանիայ, և բազում ոսկւոյ և արծաթոյ և պղնձոյ և այլոց հրահալելեաց, և ազգ մի ծառոյ, որ կոչի Սափաոլ, զոր 'ի կիր առնուն 'ի ներկս ։ Մասն ինչ այսր նահանգի որ ձգի առ սահմանօք դունգինայ Սէնմիա կոչեցեալ և բնակիչք նորա Սէնմիացիք, ոչ է ընդ իշխանութեամբ ինքնակալին Չինաց, այլ է ինքնագլուխ հասարակութիւն. վասնզի յորժամ Թաթարք կալան զինքնակալութիւն Չինաց, մեծ մասն բնակչաց այսր նահանգի, չեղեն անձնատուր նոցա. այլ միաբանեալ հաստատեցին 'ի մէջ իւրեանց առանձին տէրութիւն ազատ և անկախ. յորս յետոյ յարեցան և այլք 'ի Չինաց անտի, կէս մի ինքնակամ՝ և կէս մի տարագրեալք 'ի Թաթարաց, որք ոչ կամեցան մտանել ընդ հնազանդութեամբ նոցա. վասնորոյ այժմ այն մասն նահանգիս բազմամարդ է յոյժ. և բնակիչք նորա արք զօրաւորք և քաջամարտիկք. որոց մի նաւ կարող է զդէմ ունել չորից նաւուց այլոց Չինաց ։ Իսկ գլխաւոր տեղիք ինքնակալին Չինաց 'ի սմին նահանգի են հետագայքդ ։

Գուէյլինֆ, կամ Գուէյլինէ ։ Է գլխաւոր քաղաք այսր գաւառի առ քվէյ գետով, բազմամարդ և ամուր. շինեալ գրեթէ ըստ ձեւոյ նախնի ամրոցաց եւրոպիոյ. վասնորոյ չունի ամենեւին զնմանութիւն ինչ ընդ այլոց քաղաքաց Չինու ։ Անուանի է մելանն կամ Թանաքն, որ գործի 'ի քաղաքի աստ. զի լաւագոյն է քան զամենայն մելանս, որք գործին յայլ քաղաքս ։

Չինկան, կամ Քինեան ։ Քաղաք ամուր պարսպապատ 'ի վերայ գետոյ միոյ 'ի լեռնային վայրի առ սահմանօք դունգինայ. 'ի հնումն էր գեօղ փոքրիկ, այլ յետոյ

նաւ

Նախադրեն՟ սէնմիացիք կանգնեն՟ զնովաւ պարիսպս և ամրացուցեալ, արարին զնա գլխաւոր տեղի հաստատութեան իւրեանց: Շրջակայ վիճակ նր̄ ոչ է ը̄ բոլորին 'ի ձեռս սէնմիացւոց. այլ միայն ինչ նր̄ է ը̄ տրութ̄բ̄ թ̄գ̄րին գունգինայ:

Սէնջէն, կմ̄ **Սէնկէն**: Քղք̄ փոքր առ գետով միով, որ խառնի 'ի դայ գետ:

Սէնտէ, կմ̄ **Սէնչէ**: Քղք̄ բարեշէն և բազմամարդ 'ի մուտս գետոյ միոյ 'ի դայ գետ: Շրջակայ վիճակն նր̄ բերէ դարիճենիկ աղնիւ, և ազգ մի խոտոյ, յորմէ գործեն պաստառս, որք երբեմն առաւել մեծագին են ք̄ զմետաքսեայ կերպասս:

Նանքին: Քղք̄ մեծ 'ի վր̄ գետոյ միոյ, որ մտանէ 'ի դայ գետ յորդաւանդ վայրի. 'ի շրջակայ լերինս նր̄ գտանին վարազք մեծամեծք 'ի չափ երնջոց. և հերք քամակի նց̄ երկայն են և սրածայր իբրև զասեղս:

Գուէնք: Գիւղաքղք̄ 'ի հարաւակողմն Նէնգին առ գետով միով, որ իջէ 'ի լերանց, բարձեալ բերէ ոսկեփոշի խառն ը̄ աւազոյ:

Լինտօն: Քղք̄ բարեշէն ոչ այնչափ ինչ հեռի 'ի ծովէ. 'ի վիճակ սորին քաղաքի լինին պէսպէս բոյսք բժշկականք:

Թայչէնք: Քղք̄ մեծ և բազմամարդ 'ի հարաւակողմն Նէնգին, յերից կողմանց շրջապատեալ 'ի գետոյ միոյ, յորդաւանդ վայրի: Ունի ը̄ իւրև բզ̄մ գղեակս կառուցեալս առ սահմանօք գունգինայ 'ի սանձել զարշաւանս գունգինացւոց:

Ուժն: Քաղաք 'ի մուտս գետոյ միոյ 'ի դայ գետ առ սահմանօք քանթօնի:

Յօդ. Ժ̄Է. Կիվէնչէվ, կմ̄ Կէնթքև.

Նահանգս այս ունի իւր սահման յարևելից՝ ըղհուքվան. 'ի հիւսիսոյ՝ զուշվէն. յարևմտից՝ զհունան. իսկ 'ի հարաւոյ՝ զքվանկօ: Այս նհնգ̄ առ համեմատութ̄ այլոց նհնգաց փոքր է. և բնակիչք նր̄ սակաւ. և երկիրն լեռնոտեալն յոյժ, վ̄յ և բերք նր̄ սակաւ. այլ ունի պատուական արօտս և երիվարս ընտիրս, որք անուանի են առ չինս. և տնկաւ բազմութ̄ վայրենի թռչնոց: Չիք անդ մետաքս բնաւ. այլ փխկ նր̄ լինի անդ ազգ մի կանեփոյ, յորմէ գործեն պատաուս : Իսկ գլխաւոր տեղիք նորա են հետագայքդ :

Քօյչնեան, կամ Քիչյնան, և կամ Քուանչէֆանկ : Իսկ գլխաւոր քղք այսր նահանգի մեծ և բազմամարդ կառուցեալ առ գետով միով ընդ մէջ նհանգին 'ի դաշտային վայրի :

Փէնի-չէն . Թունկէն . Սէնան . Չուն . Թունյուան . Կուանչուն . Նանքէնկ . Սէբուէն : Են գլխաւոր տեղիք այսր նահանգի :

Յօդ ԺԵ . Խունան, կամ Հուքուան :

Այս նահանգ ունի իւր սահմանակից 'ի հիւսիսոյ՝ զուչվէն, յարևմտից և մասամբ իմն 'ի հիւսիսոյ՝ զցիխալէդ . 'ի հարաւոյ՝ զհաւաս, զքէկու, զլաօս, և զդուանկսին . իսկ յարևելից՝ զքվէնչէվ և զքվանկսի : Օդ նորա քաղցր է և բարեխառն . և երկիրն ընդ մասին լեռնային, և ընդ մասին դաշտային, դաշտք նորա ոռոգանին յանհամար գետոց և վտակաց . վասն որոյ բեղմնաւոր են յոյժ, բերեն առատապէս զհամ, որ ինչ կարևոր է մարդկային կենաց : Երիվարք նորա թէպէտ փոքր են, այլ ուժեղք աշխոյժք և արագընթացք : Գտանին անդ և պէսպէս տեսակք վայրի էրէոց . յորս է ազդ մի եղջերուէի, որ հազիւ ժամանէ 'ի չափ հնրկ շանց մերոց . Ունի և բուխս ոսկւոյ և արծաթոյ, և սնդիկոյ և անագի . և ականս պատուականս . և քարահանքս ազնիւ մարմարիոն քարանց : Իսկ բնակիչք նորա սնդանկազմ են մարմնով, քաջառողջ և կորովի, ընդմին և հեզ, քաղցրաբարոյ և ուսումնասէր : Պատմութիւնք չինաց յիշատակեն զազգ մի կամ ժողովուրդ Լօլօ անուանեալ, որք տիրէին այսմ նհանգի ինքնիշխան թրութ . և ընդ ժմկս բազմս պտրզմ մղէին ընդ չինս . այլ հաշտութ արարին ընդ նմա երկու պայմանօք . մի՝ զի գլխաւորք նոցա անուանեսցին մանդարինք, և զնոյն ունիցին պատիւ . բայց հպատակ կայցեն փոխարքայի նհնգին կացուցելոյ յինքնակալէն չինաց . և երկրորդ զի կառավարութի երկրի իւրեանց և դատաստանք լիցին 'ի ձեռս նց : Այն այս իշխանք լօլօյուոց կան մնան մինչև ցայսօր ընդ նովին պայմանօք . առանց փոփոխելոյ ինչ յայնցանէ . իշխանութի նց ժառանգութբ անցանէ որդւոց յորդիս .

դիս . և են ինքնագլուխ չունելով բնաւ կախումն ինչ 'ի ժողովրդենէ . որք արքայական պատիւ և հպատակութիւն ընծայեն նմա : Կրօն սմա և սովորութիւնք , ոճ և լեզու օտար է 'ի չինաց . և յաւէտ մերձաւոր կրօնից և սովորութեց բեկուացւոց և չիամացւոց : Իսկ գլխաւոր տեղիք նհնգիս են հետագայքդ :

Իւնան : Է գլխաւոր քղք այսր նհնգի , մեծ բազմամարդ և բազմավաճառ և փարթամ առ եղերբ փոքրիկ ծովակի միոյ 'ի հիւսիսակողմն նր . ունի բազում շինուածս գեղեցիկս , և պարտէզս վայելուչս : 'Ի քղքի աստ գործեն գորգս , այն է՝ խալի գեղեցիկս յոյժ : Աստ է աթոռ փոխարքային չինաց , որ իշխէ և քվէլիչէվ նահանգի :

Լիգիանկ , կմ Լիգիանգով : Քաղաք մեծ առ գետով միով մերձ 'ի սահմանս դիպէդայ կմ Թաթարաց :

Իւննինա , կմ Իւննինին : Քղք 'ի վերջին հիւսիսային սահմանս այսր նահանգի առ երի դանկուդայ կմ դիպէդայ :

Թալի : Քաղաք մեծ և բազմամարդ առ երկայնաձև լճիւ կմ ծովակաւ միով : 'Ի քղքի աստ շինեն սաղանս և այլ պէսպէս ձեռակերտս յազնիւ մարմարիոն քարանց . յորս 'ի բնէ են նմանութիւնք ծաղկանց , ծառոց , գետոց և լերանց . որք Թուէին նկարեալք արուեստիւ :

Սանթիա . Իւնչէ . Ցուէնդէհան . Քուանին . Քիւնուի . Լինկան . Նէնէն . Մունթին , կմ Մոնկլա : Են քղքք յայսմ նահանգի :

Յօդ ԺԷ . Կղզիք որք են առ երի Չինաց :

Յարևելեան և 'ի հարաւային կողմանս չինու բզմ կղզիք գտանին յովկիանոս անդր մեծամեծք և մանունք . յորոց ոմանք են ը տրութ չինաց . զգլխաւորս նց յառաջիկայդ նշանակեսցուք :

Չէվզան . որ կոչի և Կղզի Տուռանայ յանուն գլխաւոր քղքի իւրոյ : Է կղզի յարևելեան կողմն չէքիան նհնգի իբր 30 մղոնաւ հեռի 'ի բերանոյ Նիմփոս գետոյն : Լայնութ նր է 15 մղոն . և է արգաւանդ և բազմամարդ . ուր անգղիացիք յորժամ հաստատեցին զընկերութն վճռկանաց ոստանդայն հիմնեցին վաճառեղի .

որ յետոյ բարձաւ 'ի միջոյ ։ Ունի նաւահանգիստ պատուական յարևմտեան կողմն մերձ 'ի տեղին, ուր էր վաճառատեղի անգղիացւոց 'ի հովտի միում. ուր և այժմ գտանին իբր երկերիւր տունք 'ի պէտս վաճառականաց կղզւոյն, որք գան անդր առնել առևտուրս. այլ ընտանիք նոցա բնակին 'ի Քուսան քաղաք պարսպաւոր. որոյ շրջապատն է իբր 3 մղոն պաշտպանեալ երկաթի հրազինուք և իբր 3000 զինուորօք ։

Փօնխօ ։ Է կղզի փոքրիկ մերձ առաջնոյն. որ և է երևելի ուխտատեղի չինաց. ուր ասի թէ գտանին իբր 400 փոքրիկ մեհեանք, և քուրմք աւելի քան 4000 ։

Մաքաօվ, կամ Մաքաւ ։ Է կղզի մեծ հանդէպ Քանթօն նահանգի 'ի հարաւակողմն, ունի իւր համանուն մայրաքաղաք շինեալ 'ի փորթուգալաց, որ յառաջագոյն հռչակաւոր էր 'ի պատճառս ծաղկեալ վաճառականութեան իւրոյ. բայց այժմ ոչ նոյնպէս ։ Զայս կղզի ետ 'ի պարգև փորթուգալաց ինքնակալն չինաց փոխ մեծի քաջագործութեան, զոր գործեցին նոքա 'ի պաշտպանութիւն չինաց ընդդէմ Ջանկսիլաօ կոչեցեալ բռնակալին, որ բազմութեամբ հինից այնչափ զօրացաւ, մինչև պաշարել նոցա զՔանթօն քաղաք. և մերձ էին առնուլ զնա ։ Այլ փորթուգալք 'ի վերայ յարձակեալ, ազատեցին զքաղաքն. և զՋանկսիլաօ այնչափ 'ի նեղն հասուցին, զի բռնադատեցաւ խոյս տալ 'ի Մաքաօվ կղզի. ուր և ինքնին չոքաւ զիւրովի. իսկ փորթուգալք ընկալեալ զայս կղզի, շինեցին անդ քաղաք փոքրիկ, և կոչեցին զնա Մաքաօվ յանուն կղզւոյն. որ մինչև ցայսօր է 'ի ձեռս նոցա. բայց ընդ գերագոյն իշխանութեամբ ինքնակալին չինաց. որ առնու բաժս և մաքս յամ վաճառուց, որք մտանեն և ելանեն անտի ։ Առ սովին կղզեաւ են այլևս բազում փոքրիկ կղզիք, որք շուրջանակի գործեն 'ի մէջի նաւահանգիստ անվտանգ 'ի հողմոց ։

Սանչիան, կամ Սանշիան, և կամ Սափանս ըստ չինաց Չանչէկեան կամ Եէնկէն ։ Է փոքրիկ կղզի հանդէպ Քանթօն նահանգի 'ի հարաւային արևմտեան կողմն Մաքաօվայ. որ անուանի է առ եւրոպացիս, զի անդ փոխեցաւ առ տէր սուրբն Ֆրանչիսկոս Քսաւերեան այրն առաքելաշնորհ յամին 1552. յետոյ 'ի 1688 մարմին նորա փոխադրեցաւ 'ի Կօա 'ի ձեռն արանց քրիստոսիրաց ։

Հայնան ։ Է կղզի մեծ 'ի հարաւակողմն Քանթօն նահանգի հանդէպ երկայնաձիգ լեզուի հողոյ. ընդ որում թուի թէ միացեալ էր 'ի հնումն. ապա 'ի ձեռն գետնաշարժութեան, կամ բռնութեամբ ամեհի կոհակաց ծովու բաժանեցաւ ունելով անջրպետ 'ի մէջի զնեղուց

ան_

անձուկ : Շրջապատ այսր կղզւոյ է իբր 180 մղոն. և է լեռնային, այլ արգաւանդ և բազմամարդ. բնակիչք նորա կէս մի չինացիք են, որք բնակին 'ի ծովեզերեայ կողմանս կղզւոյն, և են ընդ տէրութեամբ փոխարքային Քանթօնի. և կէս մի ժողովուրդ վայրենի անկախ և ինքնագլուխ. որոց բնակութիւնն է 'ի խորին կողմանս կղզւոյն 'ի լերինս և յանտառս. ուր գտանին բովք ոսկւոյ և արծաթոյ. բայց թողեալ անգործ. շատացեալ նոցա ժողովել զմանրիկ ձոյլս ոսկւոյ յաւազոյ անտի, զոր գտեալ և ուղխք բարձեալ բերեն 'ի լերանց : 'Ի ներքին կողմանս չիք քաղաք կամ աւան. իսկ յեզերս նորա են այսոքիկ :

Քիոնչէ : Է գլխաւոր քաղաք կղզւոյն մեծ, բազմամարդ և բազմավաճառ կառուցեալ 'ի հիւսիսակողմն առ նեղուցաւն, որով բաժանի կղզին 'ի ցամաքէն : Ունի նաւահանգիստ մեծ և պատուական առ բերանով գետոյն մեծի, որ 'ի կղզւոյ անտի մտանէ 'ի ծով :

Գոանչէ . Վանչէ . Եայչէ : Են ծովեզերեայ քաղաքք այսր կղզւոյ :

Գեղեցիկ կղզի :

Գեղեցիկ կղզին յեւրոպացւոց Ֆօռմօզա անուանեալ. կոչի և Կղզի Թայօվանայ. յանուն մայրաքաղաքի նորա. և է մեծ և բազմամարդ հանդէպ Ֆօքիէն նահանգի չինաց իբր 65 մղոնաւ հեռի 'ի նմանէ ընդ արևադարձիւ խեցգետնի : Շրջապատ նորա է իբր 500 մղոն. և երկիրն 'ի միջին կողմանս լեռնային. իսկ յեզերս դիւր և արգաւանդ. ունի արմտիս առատ, և ազգի ազգի պտուղս. և ծխախոտ. և շաքար. և 'ի լերինս նորա գտանին բովք ոսկւոյ, և արծաթոյ և այլոց հրահալելեաց. այլ լքեալ անգործ : Չիք անդ վայրենի գազան, բայց 'ի կապկաց. այլ ընտանի անասունք բազում են : Այս կղզի 'ի ձեռն շղթայաշար լերանց բաժանի յերկու մասունս. այսինքն յարևելեան հիւսիս. և յարևմտեան հարաւ : Յարևելեան մասին են բուն բնակք կղզւոյն. որք են վայրենիք, կամ գէթ այնպէս համարեալք 'ի չինաց. ընդ որս անհաշտ թշնամութիւն են. արագընթացք իբր զայծեամն. և հմուտք յաղեղնաւորութեան. բայց միանգամայն են բարեբարոյք, միամիտք, խաղաղասէրք. ատեան զգողութիւն և զաւազակութիւն. վասն զի չիք առ նոսա գող : Զգեստ նոցա 'ի մորթոյ եղջերուի. և անկողին նոցա 'ի տերևոց : Արք և կանայք կրեն վարսս երկայնս . և գինդս յականջս . և մանեակս 'ի պարանոցս . և ապարանջանս 'ի բազուկս , և փունջ մի 'ի փետրոց թռչնոց 'ի գլուխս ։ Ներկեն զատամունս 'ի գոյն սեաւ . որ գեղեցկու՟թ համարել է առ ն՟ս . և ասղամբ կատեն զբազուկս և զայլ անդամս՝ նմանութիս ծաղկանց, թռչնոց, ձկանց և այլոց կենդանեաց ձևացուցանելով ։ Զմշակութի երկրի և զայլ տարժանաւոր աշխատութիս կանայք առնեն . իսկ արք վարին իբրև զազնուականս չինաց, յորսորդութիս և յայլ այսպիսի գործս ևեթ պարապել ։ Տունք ն՟ց են եղեգնակերտ միայարկ և աղքատին ։ Ունին և կռատունս և քուրմս , որք զոհս մատուցանեն կռոց ն՟ց . զի դենիւ կռապաշտ են . սակայն ասի թէ գտանին անդ քրիստոնեայք ։ Իսկ յարևմտեան մասին, ուր է Թայօվան մայրաքաղաք կղզւոյն չինք բնակին . բայց գտանին անդ բազմութի և 'ի բուն բնակչաց կղզւոյն ։

Յեւրոպացւոց զառաջինն փորտուգալք հասին յայս կղզի, և տիրեցին արևմտեան մասին ն՟ր . ապա եկել հոլանտացւոց՝ առին 'ի ձեռաց ն՟ց ։ 'Ի ժամին , յորում թաթարք կալան զինքնակալութի չինաց , աւելի ք՟ն հազարք 'ի չինաց անտի փախեան յայս կղզի հանդերձ տամբ և ա՟մ ընչիւք իւրեանց . և կացին մնացին ամս ինչ ը՟ տրութ՟բ հոլանտացւոց , կա՟մ գէթ խաղաղութ՟բ ը՟ ն՟ս ։ Այլ յետոյ մի ոմն չինացի գօգդինկա անուն որդի եկուարայ յաննշան զարմէ . որոյ գործ էր աւազակութի , փախուցել յ՟նէ չինաց առ ահի թաթարաց , եկն քանի մի փոքրիկ նաւուք յայս կղզի . և պաշարեաց զամրոցն հոլանտացւոց անուանել Նոր զելանտա . զոր զկնի ը՟երկար պատերազմի ստիպեցան հոլանտացիք տալ 'ի ձեռս ն՟ր յամին 1662 ։ Ապա 'ի 1683 ինքնակալն չինաց տիրեաց համօրէն կղզւոյն . և այնուհետև կայ մնայ ը՟ տրութ՟բ ն՟ր ։ Իսկ գլխաւոր տեղիք կղզւոյս են հետագայքդ ։

Թայօվան ։ Է գլխաւոր ք՟ղք կղզւոյս առ ափն ծովու յարևմտեան կողմն . մեծ , բազմամարդ , և բազմավաճառ և փարթամ ոչ ինչ ը՟հատ յայլոց արևելի քաղաքաց չինու ։ Ունի նաւահանգիստ բարեպատեհ . ուր յաճախեն նաւք այլևայլ ազգաց . և առ նովաւ ամրոց հզօր շինել 'ի հոլանտացւոց . զոր և կոչեցին ամրոց զելանտայի ։ Աստ նստի կուսակալ իշխան կարգել յինքնակալէն չինու . ունելով ը՟ իւրև 10 հազար զինուորս կարգել 'ի պահպանութի կղզւոյն ։

Ֆօնթան, կամ Ֆօնդան. և Չաբօ : Են երկու ծովեզերեայ քաղաքք յարևմտեան կողմն կղզւոյն :

Գուօլօման : Քաղաք բարեշէն ծովեզերեայ յարևելեան կողմն :

Թայչէէն. և Փաթէօն : Են երկու միջակեան կղզիք յարևելեան կողմն այսր կղզւոյ :

Փօնկհու : Է խումբ փոքրիկ կղզեաց հանդէպ Թայօվան քաղաքի :

Լէգէոնեան կղզիք :

Այս կղզիք ձգին ընդ արևելս և ընդ հիւսիս գեղեցիկ կամ Ֆօրմօզայ կղզւոյն. և ունին իւրեանց սեփական թագաւոր, բայց հարկատու Ինքնակալին Չինաց: Մանրակրկիտ գրէ զսոցանէ հայրն Կօպիլ 'ի միաբանութենէ յիսուսեանց 'ի թղթին իւր գրեալ 'ի 3 նոյեմբ. 'ի 1752 առ հայրն պէրթիէ. յորմէ ինչ ինչ 'ի գլխաւորացն նշանակեսցուք աստանօր. զհետ երթեալ համառօտութեան պիշինկայ :

Արդ՝ այս կղզիք սկսեալ 'ի գիւսիւ կղզւոյն, որ է մի 'ի հարաւային մեծամեծ կղզեացն Ճեապօնայ՝ շղթայաբար ձգին մինչև ցկղզին գեղեցիկ. և ընդ ամենայն են երեսուն և եօթն. թող զայնոսիկ, որք կախեալ կան զՃեապօնայ. և են իբր մասունք նորա : 'Ի հարաւակողմն գիւսիւ կղզւոյն են եօթն փոքրիկ կղզիք անուանեալք Գամասչիմա կամ գանաքսիմա և գանագուսիմա, յորս Ճեապօնացիք իշխեն : 'Ի հարաւոյ այսոց կղզեաց են այլևս ութն. որք են ընդ ձեռամբ թագաւորին լէգէոնեայ կղզւոյն. և կոչին Ովֆու չիմա. Ի կղզիք օվֆուայ, գլխաւորին 'ի նոցանէ 'ի բնակչաց երկրին կոչի Ովֆու. իսկ 'ի չինաց Գուադաօ, որ թարգմանի մեծ կղզի: Այս կղզիք արգաւանդ են և բազմամարդ. բայց 'ի գիգեայ անուանեալ կղզւոյն, որ լի է անտառօք. ուր գտանին բազմապատիկ մեծամեծ և գեղեցիկ մայր ծառք, որպէս և յովֆու :

'Ի հարաւոյ արևմտից այսոց կղզեաց է մեծ լէգէոն կղզին. յորմէ և այլք իբրև 'ի գլխաւորէ կալան զանուն. երկայնութիւն նորա 'ի հարաւոյ ընդ հիւսիս է իբր 186 մղոն. իսկ չափ լայնութեան նորա չէք որոշակի նշանակեալ. և է ընդ մէջ 25 աստիճանաց և 30 րոպէից և 28 աստիճանաց հիւսիսային լայնութեան. և ընդ 146 երկայնութեան : Թագաւոր նորա բնակի 'ի հարաւակողմն կղզւոյն յապարանս ինչ անուանեալ Չէվլէ, մերձ 'ի թագաւորական

քաք̃ղքն · որ կոչի՝ Քինդուէն, կամ Քեուլինկ ։ Յարեւմտեան կողմն կղզւոյն են այլեւս տասն կղզիք արգաւանդ և բազմամարդք · բաց 'ի միոյն, որ կոչի Լանկօլէկ թան · ք̃ կղզի ծծմբոյ, վ̃ն զի կարի ծծմբային է ։ Յարեւելեան կողմն գեղեցիկ կղզւոյն են այլեւս եօթնտասն կղզիք, որք են ը̃ իշխանութ̃ Թ̃գրին, լեգեօնեայ կղզւոյն · յորոց 'ի միում, որ մեծ է ք̃ զայլս, գտանին բ̃զմ գեօղք, գիւղաք̃ղք և ք̃ղքք · որ երբ 300 ամօք յռ̃ջ՝ յերկս ինքնագլուխ թ̃րութիս բաժանեալ էր, և յայն սակս ոմանք յԱ̃ագրաց կոչեցին զնա կղզի Երից Թ̃գրաց · որ և է բազմամարդ և բարեբեր · զի ունի զա̃մ, որք կարեւոր են 'ի պէտս և 'ի դիւրութ̃ կենաց մարդկան ։ Բնակիչք նր̃ քաղցրաբարոյ են և մարդասէր · դենիւ կռապաշտ · ունին քուրմս, զորս պօնզ կոչեն, որք ուսեալ և վարժեալ են 'ի Ճեաբօն ։ Սովորաբար վարին դրով Ճեաբօնացւոց, այլ դիրք դենի նր̃ և գիտութ̃ց դրովք Չինաց են գրեալ ։ Իսկ լեզու նր̃ տարբեր է 'ի բարբառոյ Չինաց և Ճեաբօնացւոց · թէպէտ յերկոցունց ևս ունի բազում բառս խառնեալ ։

Յօդ ԺԷ. Գօրէա ։

Այս ծ̃ է ը̃արձակ ցամաք կղզի, զոր բնակիչք նր̃ կոչեն Քաօլի, կամ Քօոէն · իսկ Ճեաբօնացիք և Եւրոպացիք Քօրէա ։ Եւ ունի իւր սահման յարեւելից զլայնարձակ ծոց մի ծովու, որ յանուն նր̃ կոչի ծով քօրէայ, այլև ծով Ճեաբօնայ · զի յարևմտից պատէ զնիփօն կղզին Ճեաբօնայ · յարեւելից՝ զՉէաթօնկ և զմեծ ծոցն ծովու, զոր կոչեն դեղին ծով · 'ի հիւսիսոյ՝ զնիւքայի Թաթարս · իսկ 'ի հարաւոյ՝ զովկիանոս ։ Լայնութ̃ նր̃ է իբր 300 մղոն · և է ը̃ մէջ 142 և 147 աստիճանաց երկայնութ̃ · և ը̃ մէջ 34 և 42 աստիճանաց լայնութ̃ ։ Ունի գետս բ̃զմս, որք գրեթէ առհասրակ 'ի ծովն անկանին ։ Գլխաւոր գետ նր̃ Յալօ կոչի, որ 'ի մերձենալ 'ի ծովն ը̃արձակե̃լ լայնանայ իբր 9 մղոնս · և գործէ անդ ծոց մեծ ։ Երկիր նր̃ արգաւանդ է · բերէ զա̃մ, որ ինչ հարկաւոր է մարդկային կենաց · բայց առաւելապ̃ս որիզ, և այլ ազգի ազգի արմտիս · և պէսպ̃ս խոտս բժշկականս ։ 'Ի լերինս իւր ունի և բովս ոսկւոյ և արծաթոյ, և մարգարիտ 'ի ծովն Ճեաբօնայ ։ Վ̃ս բնակչաց նր̃ ոմանք

ա_

ասեն, թէ 'ի չինաց անտի են. իսկ այլք թէ 'ի թաթարաց. այլ զիարդ և իցէ լեզու ն՟ց կարի մերձաւոր է լեզուին չինաց. ոճ և գիր ն՟ց, և եղանակ կառավարութե՟ն 'ի չինաց առե՟լ են: Յօժարե՟լ են 'ի նաւարկութիս. սիրեն և զուսումն և զդպրութի. իսկ դենիւ զհետ երթան թաթարաց, պաշտեն զՔաքաչածն կ՟մ որ նա ինքն է Ֆօ չած թաթարաց. և Լադիալեղացւոց: Քուրմք ն՟ց կ՟մ պօնցք յոյժ նման են և համամիտ քրմաց չինաց և ճապօնացւոց. ոչ թաղեն փութով զմեռեալս, այլ եդե՟լ 'ի տապանի ծեփեն կպրով. և պահեն զամս երիս 'ի տան 'ի խորշ մի ամրախից: Ունին իւրեանց սեփական թգ՟ր, զոր ա՟ծօրէն պատուեն. այլ կախե՟լ կայ նա զինքնակալէն չինաց, և հարկատու է նմ՟: 'Ի վախճան ժմ՟ն դարուն ճապօնացիք կալան զայս Ծ՟. և տիրեցին նմա առ փոքր ինչ ժմկ. յետոյ անդրէն դարձաւ ը՟ զերագոյն տրութե՟ չինաց. Այս ցամաք կղզի բաժանի յութն գաւառս. յորս են 360 քաղաքք մեծամեծք և փոքունք. թող զամրոցս. որոց գլխաւորքն են հետագայքդ:

ՔԻՆՔԻԴԱ, կ՟մ ՔԻ-ՔԻՏԱՕ: Է գլխաւոր քղք համօրէն տրութե՟ն գօրէայ մեծ, բազմամարդ, բազմավաճառ և արքայանիստ, կառուցեալ գրեթէ ը՟ մէջ գօրէայ Ծ՟ի առ մեծ գետով միով: Ըստ ոմանց Ծագրաց չինք զայս քղք յոլովագոյն ԲԻՆՉԵԱՆՃ կոչեն. իսկ ճապօնացիք ՍԷՕԼ կոչեն: Այլ գտանի 'ի գօրէա և այլ քաղաքք մի բինեանճ անուանե՟լ 'ի հիւսիսակողմն իբր երկու աստիճանօք հեռի 'ի քինքիդայ:

ԱՅՏԱՆ. ՖԱՆՕՀԱՆ, կ՟մ ՖԱՆՓԱՆ. ՄՕՀԱՆ. ՄՕՏԻՉԻ. ՍՕՐ: Են քղքք 'ի հիւսիսակողմն այսր Ծ՟ի:

ՓԻՆՆԵԱՆՃ. ՓՈՒՍ. ՓՕՆՍԷՆ. ՀԱՅՄԷՆ: Են քղքք յարեմտեան կողմն ոչինչ կարի հեռի 'ի գեղին ծովէն:

ԹԻՕՆՉԱՆ, կ՟մ ԹԻՕՆԳՉԱՆ. ԼԻՄԻՆԷՆ. ՀՕՆԽԱՉԷՆ. ԹԱՕՉԷՆ. ԹԷՅՉԷՆ: Են քաղաքք սորին տրութե՟ն յարևելեան կողմն ն՟ր:

ԲԻՆՉՀԱՅԻ, կ՟մ ՓԻՆՀԱՅ: Է ծովեզերեայ քղք և նաւահանգիստ յարևելեան կողմն այսր Ծ՟ի հանդէպ նիփօն մեծի կղզւոյն ճապօնացւոց:

ՉԻՕԴՕՆԻ, կ՟մ ՉՕՍԻՆ. և ՉԻԱՆՀՕԱ: Են երկու երևելի կղզիք յարևմտեան կողմն գօրէայ 'ի ծոցն անուանեալ դեղին ծով:

ԳՕՈՆԻՒԷԷՐՏ. ՉԻՒԻԳՕ. ԿԱՆՀԱՅԷ. ՖՕՆԿՕՍԱ. ԹԻԷԳԻՆ. ՆԱՆՏԱՕ: Են կղզիք 'ի հարաւակողմն գօրէայ ը՟ տրութե՟ թագաւորի ն՟ր:

ԱՇԽԱՐՀ. Թ.

ՃԵԱԲՕՆ. կմ ՅԱԲՕՆ:

ա. Անուն:

Այս անուն անծանօթ է բնակչացն. այլ նք յանուն գլխաւորի կղզեաց իւրեանց կոչեն Նիֆօն, և է ածանցեալ յաղաւաղելոյ փորդուքալաց զանունս Ճէ բուէն, կմ Ջէ պէնի, որով չինք կոչեն զկղզին նիփօն. 'ի հնումն ըստ ոմանց կոչէր Եաբադեան կղզի. և է հաւաքումն և կուտակութիւն բազմապատիկ կղզեաց. զոր յայն սակս մարթ էր կոչել մեծ բրիտանիա ասիոյ: Է թգրուն մեծ, հզօր, փարթամ և բազմաժողով. զորմէ բնաւ չունէին ծանօթութիւն ինչ եւրոպացիք մինչև ցամ տն 1542. յորում ամի հողմն ինչ սաստկավարեաց զնաւ մի փորդուքալաց յափն միոյ 'ի կղզեաց անտի. ուր բնակիչք կղզւոյն մարդասիրութբ ընկալան զնս. և ետուն նց զամ, որ ինչ հարկաւոր էր 'ի նորոգել զնաւ իւրեանց: Ապա դարձ արարեալ անտի 'ի կոա, ծանուցին հիւպատոսի տեղւոյն. և նա վզվզկի առաքեաց անդր այլևս նաւս 'ի զննել զերկիրն. այլև քարոզիչս 'ի քարոզել բնակչաց տեղւոյն զհաւատս քնի յնի. որք գնացեալ գտին անդ թգրուն մեծ և ժողովուրդ բզմ 'ի վաղ ժմկաց հիմնեալ և հաստատեալ:

բ. Տարածութիւն և Բազմամարդութիւն Ճեաբօնայ:

Կղզիք Ճեաբօնայ են ընդ մէջ 146. և 159 աստիճանաց երկայնութեան. և ըստ լայնութեան գծ 'ի հիւսիսոյ ըստ հարաւ 'ի մէջ 29. և 41. իսկ ըստ աշխարհագրաց 'ի մէջ 31. և 42. աստիճանաց, յարևելեան կողմն կօրեայ և չինաց Ծովի: Այլ զիսկական տարածութիւն նց չէ մարթ ճշտիւ նշանակել. վն զի ոչ է երկիր միատանի, այլ ըստ որում ասացաք՝ հաւաքումն բազում կղզեաց:

Եւ է բազմամարդ յոյժ. զի ասի թէ ունի 13 հզր քղքս. և 900 հազար գիւղաքղքս և գեօղս. վոյ չէ ինչ զարմանք, թէ մեծ մասն արքունի ճնպհացն Ճեաբօնայ միշտ լի լցեն երթևեկօք. ոչ ինչ ընդ հատ 'ի փողոցայ մեծամեծ և բազմամարդ քղքաց . զոր աչօք տեսեալ Կեմփեր հօլանտացի . չորեցս արարեալ զճնպհ թօգայտօվայ . Թէպէտ յայն ճնպհ առաւել յաճախեն երթևեկք . զի ուղիղ հանէ յեդով յարքայանիստ քղք Մեաքօնայ , և 'ի գլխաւորութե ճնպհորդաց ը՟ ամ՟ տեղիս գտանին մեծամեծ պանդոկք կազմ և պատրաստ ամ՟ իրօք . և ճնպհքն հարթեալ են և դիւրընթացք . և չափ մղոնաց 'ի նս՟ քարամբք նշանակեալ . որք ոչ սակաւ դիւրութի ընծայեն ճնպհորդաց :

Ժ. Գետք Ճեաբօնայ :

Ի կղզիս Ճեաբօնայ չիք երևելի գետ ինչ մեծ և շատաջուր . այլ ամ՟ գետք նց գրեթէ չեն այլ ինչ , բայց եթէ հեղեղատք և ուղխք սրընթացք . յորս չէ մարթ կամուրջս կանգնել . և ոչ նաւակօք նաւել սակս զահավէժ ընթացից նց . որոց գլխաւորքն են հետագայքդ :

Յուրանկաւա . որ և Օսօյն , կմ Օսինկաւա : Այ գետ երևելի ոչ ինչ կարի բացադոյն 'ի ծովէ , որ իջանէ 'ի գըլխոյ լերին միոյ . լայնութի նր 'ի մերձենալն 'ի ծով է իբր մղոն մի . իսկ ընթացքն այնչափ սաստիկ և զահավէժ , մինչև մեծամեծ վէմս ձգել ը՟ իւր . վն ոչ հեռի , և ոչ երկվարաւ հնար է անվտանգ անցանել ը՟ այն գետ . ևս և յայնպիսում ժմկի՝ յորում բարձրութի ջուրց նր հազիւ հասանէ ցերկու ոտնաչափ : Յայն սակս հարկ է առնուլ 'ի վարձու արս հինգ կմ վեց զօրաւորս և քաջ տեղեակս հանգամանաց յատակի գետոյն , զի կալեալ զերկվարն հանդերձ հեծելովն՝ ածցեն յայնկոյս : Եւ թէպէտ այսչափ վտանգաւոր է անցք գետոյս , սակայն հազիւ երբեք դիպի անդ վտանգ ինչ կենաց . քզի ըստ օրինաց երկրին , նք որք անցուցանեն ը՟ գետն ունին տուժել փոխ կենաց ճնպհորդացն , զորս անցուցանեն :

Օի . կմ Եօգօկաւա : Ն գետ , որ ելանէ 'ի համանուն գաւառէ . զորմէ աւանդեն Ճեաբօնացիք , թէ 'ի գիշերի միում յանկարծակի ելեալ սկսաւ բղխել իբր 2000 ամօք յառաջ : Այս գետ յարևելից ը՟ հարաւ հոսեալ , գնայ անկանի 'ի ծովն մերձ առ օզակքա քղք :

Դոսնկաւա , կմ Դօնէգաւա : Գետ երևելի , որ 'ի հիւսիսոյ արևմտից հոսի ը՟ արևելեան հարաւ . և անցեալ ը՟ մէջ յեդով մայրաքղքի Ճեաբօնացւոց , գնայ անկանի 'ի ծովն :

Աչօգաձառ : Այս գետ կմ հեղեղատ անդադար փոխէ ղդիրս ընթացից իւրոց : Գտանին 'ի Ճեաբօն և ծովակք կմ՟ լիճք մեծամեծք, յորս մարթ է և նաւարկել փոքրիկ նաւակօք, որպէս է ծովակն Օմիշայ կմ՟ օմեայ յօմի գաւառի. ուր որսան սաղմոն ձուկն բզ՟մ և պատուական :

Են անդ և ինքնաբուղխ ջերմուկք մանաւանդ յուսչէն և 'ի Ֆիկօ գաւառս. այլև բզ՟մ հրաբուղխ լերինք. որոց գլխաւորքն են հրաբուղխ լեառն Ֆիրանտօ կղզւոյն. որ 'ի բզ՟մ դարուց այրի. և ահագին բոմբիւնս և շառաչիւնս արձակէ. և լերինքն սաչումա և Ֆիկօ գաւառաց. այլ յաւէտ ք՟ զ՟մ նշանաւոր է հրաբուղխ լեառն չիքուսէն գաւառին. ուր յռ՟ջագոյն էր հանքածխոյ. այլ յետոյ յանկարծակի ի՟մն հրդեհեալ, անհնարինս բորբոքեցաւ. և վառի կարծեմ թէ մինչև ցայսօր : Գտանի միւսևս հրաբուղխ լեառն մերձ 'ի սիմապառա. որ թէպէտ բոց սակաւ արձակէ, այլ ծուխ թանձր և ժահահոտութ՟ն մահաբեր. և առ նովաւ դողայ երկիրն ը՟ ոտիւք բզ՟մ մղոնաւ տարածութ՟, իսկ յանձրևելն բոլոր այնր տարածութ՟ թուի եռալ, յայտ է թէ սակս ստորերկրեայ հրոյ : Յայս բազմապատիկ մշտավառ ստորերկրեայ հրայրեցուէ, և յինքնաբուղխ ջերմկաց՝ յայտնի երևի, թէ երկիրն Ճեաբօնայ լի է ծծմբով. յորմէ և պատճառին 'ի նմա ստէպ սասանութիւնք երկրի զարհուրելիք, մինչև կործանել զք՟ղքս. սակայն Ճեաբօնացիք ոչ ինչ զանգիտեն. զոր ռամիկ ժողովուրդն կարծէ պատճառել 'ի շարժմանէ կէտ ձկան մեծի. որ 'ի թիկունս իւր բարձեալ ունի զերկիր : Բաց 'ի հրաբուղխ լերանց աստի, ունի և այլ բզ՟մ բարձրաբերձ լերինս, յորս անուանի են լերինք սարունկայ գաւառին. որք թէպէտ 54 մղոնաւ են 'ի ներքս 'ի ցամաքն, սակայն իբրև 'ի 120 մղոնաւ հեռաւորութ՟է երևին 'ի ծովէ : Բարձրագոյնն 'ի ն՟ցէ բրգաձև աւարտի. և գլուխ ն՟ր միշտ ձիւնապատ է. իսկ այլք շուրջ զնովաւ իբր բլուրս երևին. թէպէտ և բարձր են յոյժ : Ասի թէ 'ի գագաթան ն՟ր է վիհ մեծ, յորմէ 'ի հնումն ծուխ թանձրամած ելանէր :

Գ. Օդ Ճեաբօնայ :

Օդ Ճեաբօնայ կղզեաց կարի բարեխառն է և առողջարար. որ յայտ անտի է, զի բնակիչք ն՟ր առողջ են, ուժեղ և երկայնակեացք, այլ անհաստատ է յոյժ և փոփոխական. 'ի ձմերայնի ցուրտ և ձիւնարէր . Իսկ յամարայնի սաստիկ տօթագին , մինչ 'ի տիրել չինիկ սաստեղ : Յաճախ են անդ անձրեւք՝ ը̄ ամ̄ ողջոյն . այլ առաւել յորդեն յամսեանն յունիսի եւ յուլիսի . զոր յայն ատիս Ճեափոնացիք կոչեն Սաջուքի . այ̄ս ամիսք ջուրց : Բայց անձրեւք նր̄ ոչ են կանոնաւոր ոպ̄ յարեւելեան հնդկային ջերմագին գաւառս : Նոյնպէս եւ որոտք եւ փայլատակունք յաճախեն անդ յոյժ . ոպ̄ եւ Թաւթառ , այն է՝ ամպի խոռթում ստէպ իջանէ 'ի շրջակայ ծովս նր̄ . զոր Ճեափոնացիք համարին ջրային վիշապ երկայնատուտ : Վն̄ այնորիկ վտանգաւոր է յոյժ նաւարկութիւն 'ի կողմանս կղզեաց Ճեափոնայ . մինչ զի լի են անդ 'ի ծովու եւ ժայռք մեծամեծք . ուր գտանին եւ վտանգաւոր յորձանուտք :

Ն . Երկիր Ճեափոնայ :

Աշխարհն Ճեափ[illegible]ցւոց գրեթէ ը̄ ամ̄ առողջակեա[illegible]նային է եւ անտառալից . ուստի եւ երկիր նր̄ ը̄ ինքեան անբեր է . բայց ժրաջան մշակութ̄ բազմամբոխ բնակչաց նր̄ , որք եւ ոչ թզաչափ մի տեղի թողուն անգործ՝ ոչ միայն 'ի դիւր երկրի եւ 'ի հովիտս , այլեւ յանբեր լերինս , արդասաւորս եւ բեղմնաւորս գործեն զնա : Այն զի՝ օրէնս ունին Ճեափոնացիք , զի թէ ոք ը̄ ամ̄ մի ողջոյն անգործ թողուցու զկալուածս իւր , կորուսանէ զի̄րւն նր̄ : Վ̄յ ունի ցորեան ը̄ բաւականին . որիզ առատ , կորեակ , գարի , բակլայ , Թէյ՝ այն է՝ չայ , կանեփ , բամբակ եւ ազգի ազգի ծառս , եւ ծաղիկս պէսպ̄ս ընտանիս եւ վայրենիս . եւ բոյսս սակաւագիւտս եւ նորանշանս . յորս առաւել նշանաւորք են նախ՝ ծառն Թզթաբեր . ը̄ Ճեափոնացւոց Գատսի անուանեալ . զի 'ի կեղեւոյ նր̄ գործեն թուղթս . այլեւ մանեն չուանս . եւ անկանեն ոստայնս . գործեն եւ պատրոյգս դիւրավառս , որ̄ հաստատելն 'ի հուր , նոյնժամայն վառի : Երկ̄դ՝ ծառն անուանեալ Արուսի . որ բերէ զհիւթ ինչ սպիտակագոյն , որ լինի վերնիզ ազնիւ . եւ նովաւ Ճեափոնացիք օծանեն զանօթս սեղանոյ իւրեանց . ոպ̄ եւ զանօթս Թէյի . զի նախապատիւ ունին զայնպիսի անօթս , քան̄ զարծաթիս : Երր̄դ՝ ծառն անուանեալ Գուս որ կոչի եւ ծառ քափուրայ . այն է քեաֆիրի . զի 'ի տերեւոց եւ յարմատոյ նր̄ լոկ եռացմամբ 'ի ջուր , գործեն ազգ մի քափուրայ . բայց ստորին է այն յոյժ . քան̄ զքափուրն պօրնէօ կղզւոյն : Չորր̄դ՝ ծառն կոչեցել Մանիսիօ · միջակաւն ը՟ մեծութ՟ և փշալից · կեղև նր՟ և փեճեկ պտղոյն են Ճեաբօնացւոց փոխ պղպեղի և կոճապղպեղի · ոպ՟ և տերևն է համեմիչ կերակրոց : Ունի և այնպիսի տեսակս դափնեաց, և թթենի բզմ՟ յոյժ · այլ պտուղ նր՟ անհամ և անպիտան 'ի կերակուր · բայց տերևն պատուական 'ի դարման շերամց · զի շերամ բզմ՟ դարմանեն : Ունի և ազգի ազգի պտուղս, ոպ՟ կիտրոն, նարինջ · այլև լեմոն՝ բայց սակաւ, և այն՝ միայն 'ի պարտէզս · դեղձ · ծիրան · շլոր երկաթեսակ · իսկ զկեռասենի դարմանեն լոկ վս՟ ծաղկին, որ 'ի գարնանային ժմկս գեղեցիկ երևի : Նոյնպէս և որթս խաղողոյ սակաւ տնկեն · զի ասի թէ խաղողն անդ ոչ ժամանէ 'ի կատարել՟ հասունու՟ : Ունի և այնպիսի ընկոյզս, յորս նշանաւոր է ընկոյզն, զոր Քայա կոչեն · որ յորժամ թարմ է անհամ է · այլ իբրև հնանայ, սա փոքր մի համեղանայ · իւղ նր՟ քաղցր է իբրև զիւղ նշոյ · որ և լուծողական է և առողջարար, որով համեմեն և զմիս : Եւ ևս զնոյն տեսակս վայրենի անպտուղ ծառոց, յորս առաւել յաճախեալ են եղևին ծառք · և նոճիք ոչ միայն յանտառս, այլև 'ի գ՟ղս և 'ի փողոցս · և բազմատեսակ բոյսս, որոց արմատք, տերևք, ծաղիկք և պտուղք ոչ միայն են 'ի կերակուր մարդկան, այլև 'ի պէտս ներկոյ · որպիսի է բոյսն անուանեալ Սէն, և բոյսն Տըսխու կոչեցեալ, յորմէ մզեն իւղ :

Ունի և բովս ոսկւոյ 'ի նոյն տեղիս · որք յռ՟ջագոյն բզմ՟ էին և առատաբեր · այլ յետոյ ոմանք ծածկեցան 'ի պէսպէս արկածից, ոպ՟ առատաբեր բովք ոսկւոյ 'ի Քէքունիկօ գ՟ւռի · որ լի է այժմ ջրով · վս՟յ և անհնարին է գործել անդ : Խորհուրդ կալան երբեմն բանալ անցս ջրոյն ը՟ ապառաժ վէմս, որ է հանդէպ մօտից նր՟ · այլ իբրև ձեռն 'ի գործ արկին, յանկարծակի իմն յարեաւ մրրիկ սաստիկ, մինչև թռչէր քանդել զերինս · յորմէ զարհուրեալ Ճեաբօնացւոց, եդին 'ի մտի, թէ տէրն տեղւոյն ոչ հաճի թէ բացցեն անդ բովք · վս՟յ կայ մնայ մինչև ցայսօր ջրալից : Նոյնպէս դիպաւ երբեմն և 'ի Յամագուսա կղզին · զի մինչդեռ սկսան պեղել զբովս ինչ ոսկւոյ, յանկարծուստ բղխեաց 'ի լեռնէ անտի ջուր յորդառատ սաստիկ բռնութ՟, և փախստական արար զգործավարս առհ՟րկ · վս՟յ թողու և այն տեղի անգործ մինչև ցայսօր :

Ունի և արծաթ ընտիր · որոյ նման ասի թէ չիք ուրեք, զոր երբեմն 'ի չին փոխանակէին ը՟ ոսկւոյ համաչափ կշռով : Եւ տեսակ մի մետաղի, որ է խառնեալ 'ի պղնձոյ յարծաթոյ և յոսկւոյ . զոր Ճաբօնացիք Սօվա կամ Սասովա կոչեն . և գործեն անտի պէսպէս ձեռակերտս . որք գունով, և փայլողութ̃բ ոչինչ իւիք զնզ̃նին յոսկւոյ : Ունի և անագ պատուական և երկաթ, բայց սակաւ . և առաւել ք̃ զա̃մ պղինձ բզ̃մ յոյժ . որ և է մի 'ի գլխաւոր վաճառաց ն̃ր : Ունի և զնզ̃ն տեսակս ակատ կոչեցեալ ական . և այլ ականս հն̃րականս . ոպ̃ և սատափ մարգարտաբեր 'ի ծովեզերս իւր . և ը̃ մարկոսի պօղոսի վենետիկեցւոյ՝ մարգարիտ կարմիր, որ այնչափ 'ի յարգի է, որչափ սպիտակն . և ազգի ազգի ծովային խեցիս պատուականս, և քարաբոյս բազմատեսակս բուսեալ 'ի ծովու . և գոճաղմ . և պէսպէս տեսակս ձկանց անծանօթս առ մեզ : Եւ 'ի գետ մի յեէտսինկօ գւ̃ռի գտանի իւղային գոյացութ̃ իմն կարմրագոյն, զոր իւղ քարի կոչեն, բայց ոչ ը̃ գետն բոլոր, այլ միայն 'ի տեղիս, յորս ջուրն իբր լճացեալ՝ կայ անշարժ . զոր հաւաքեալ 'ի կեր առնուն 'ի լապտերս փխ̃կ ձիթոյ : Իսկ զաղն գործեն 'ի ջուրց ծովու . զի չիք անդ աղահանք :

Ունի և ընտանի անասունս, ո̃պ կով գոմէշ ձի, շուն և կատու . այլ ոչ էշ ջորի ուղտ և փիղ : Փորդուգալք ածին անդ և ոչխարս և այծս . որք 'ի սկզբան անդ բազմացան յոյժ . բայց ք̃զի Ճաբօնացիք ոչ ուտեն զմիս ն̃ց, և ոչ գիտեն գործել զասր և զմորթ ն̃ց, նմին իրի զկնի տարադրութ̃ փորդուգալաց, թողին զն̃ս յանտառս վայրենանալ իբր անպիտանս իւրեանց : Նոյնպէս և զկովս և զցուլս սնուցանեն միայն վս̃ հերկագործութ̃ . և վս̃ լծելոյ զն̃ս 'ի սայլս . ք̃զի ոչ ուտեն զմիս ն̃ց . ոպ̃ և ոչ զկաթն, և ոչ կոգի 'ի պտ̃ճառս աղանդոյ հոգեփոխութ̃ . զի կարծեն թէ հոգիք իւրեանց զկնի մահուան 'ի ն̃ս փոխադրին : 'Ի Ֆիզէն գւ̃ռի սնուցանեն և խոզս, ոչ 'ի պէտս իւրեանց, զի ոչ ուտեն զխոզենի, այլ վս̃ վաճառելոյ չինաց . ք̃զի թէպէտ և չինք ը̃ունին զաղանդ հոգեփոխութ̃ . բայց չեն այնչափ երկիւղած 'ի պահպանութիւն սկզբանց ն̃ր, որչափ Ճաբօնացիք :

Այլ առաւել ք̃ զա̃մ տեսակս ընտանի անասնոց յաճախեն անդ շունք, որք առ ի̃րութ̃ չինացւոյս ինքնակալին Ճաբօնայ, որ թագ̃րէր 'ի Ֆամիւն, յորում անդ պատմէ կեմփեր հոլանտացի, այնչափ բազմացեալ էին, մինչև լինել զա̃մ փողոցս ք̃ղքաց և գիւղօրէից յանհնարին վիճա անցաւորաց ը̃ փողոցս : Քանզի նա ինքն ինքնակալն էր շնասէր յոյժ . և փոյթ մեծ ու-

ունէր յանձուածս և 'ի պահպանութեն նց՟ · երբ զի ծնեալ էր ը՟ համաստեղութը՟ շնիկ աստեղ : Եւ հրաման եհան զի իւրաքանչիւր թաղ այնչափ ինչ թուով շունս պահեսցէ և սնուսցէ · յայն սակս յոյժ փողոցս լինեալ կային մանր խրճիթք յոյլ և այլ տեղիս 'ի հանգիստ շանց · և 'ի հիւանդանալ նց՟ , պարտական էին բժշ՟ խնամով դարման տանել նց՟ : Ընդ ծանր պատժով արգելեալ էր հարկանել զշունս · իսկ սպանութեն շան էր յանցանք գլխապարտութեն : Յորժամ սատակէր շուն մի , պարտական էին տեարք կմ՟ խնամակալուք նց՟ բառնալ տանել զնա 'ի գլուխ լերանց , և անդ թաղել : Պատմի թէ մի ոմն մինչդեռ բարձեալ յուս իւր զշուն մի մեռեալ հանէր 'ի լեառն 'ի թաղել , վաստակեալ 'ի ծանրութե՟ բեռին , սկսաւ նզովել զօր ծննդեան թգ՟րին , և զյիմարական պատուէր նր՟ , որ այնչափ վնաս հասուցանէ բոլոր երկրին · իսկ ընկեր նր՟ , որ երթայր ը՟ նմ՟ , սաստեաց նմա ը՟ կատակս՝ լռել 'ի տրտնջելոյ · այլ մանաւանդ պարտ է քեզ փառս տալ դից , զի թգ՟ր մեր ոչ ծնաւ ը՟ համաստեղութը՟ ձիոյ · ապա թէ ոչ՝ տանել ծանր և դժուարակիր լինէր այսօր բեռն քո :

Իսկ վայրենի չորքոտանիք ճեապօնայ են արջ , այծեամն , աղուէս · զոր ռամիկ ժողովուրդն կարծէ սատանայ մարմին զգեցեալ սակս խաբուսիկ բարուց նր՟ · վայրենի շուն , վարազ , նապաստակ և կապիկ , այլ սակաւ , որք կարի դիւրաւ ընտելանան · իսկ առիւծ , ինձ , յովազ , և այլ ամեհի գազանս չիք տեսանել 'ի ճեապօն · ոպ՟ և օձք և այլ թունաւոր զեռունք ուր ուրեմն երևին անդ : Բայց գտանի տեսակ մի մրջման սպիտակ երբ զձիւն անհնարին վնասակար · զի մտեալ 'ի շտեմարանս ցորենոյ կմ՟ այլոց իրաց , 'ի սուղ ժմկի ապականեն զամ՟ ինչ · մի միայն հնարս գտին ճեապօնացիք մինչև ցայժմ 'ի զերծուցանել զիւրս իւրեանց յամենածախ ժանեաց նց՟ , ց՟ ցանել աղ 'ի վր՟ իրացն , զի խորշին նք՟ յաղէ : Անհաշտ թշնամի են այլոց հնորկ մրջմանց · վս՟յ ուր ուրեք այս սպիտակ մրջիւնք մտանեն , անկարելի է այլ տեսակ մրջման անդ մնալ գտանել :

Ունի և ընտանի հաւս · և ազգի ազգի վայրենի թռչունս · յորոց ոմանք այնչափ ընտել են , զի մարթ էր դասել զնս՟ 'ի թիւս ընտանի հաւուց · ոպ՟ կռունկք , որք մասնաւոր օրինօք պահին 'ի զոհարձութեն և 'ի ծնյութեն ինքնակալին · որք և բարեդուշակք համարեալ են առ նս՟ · ոպ՟ և կրիայն սակս երկարութե կե-

նաց՝ ըստ խելացնոր առասպելեաց Ճեաբօնացւոց. յայն սակս նկարել՟ կամ պատկերք նց՟ յորմունս արքունի ապարանից և մեհենաց: Գտանին երկու տեսակք վայրենի սագուց. մին սպիտակ իբրև զձիւն. և ծայրք թևոցն սևաւ. իսկ երկ՟դն մոխրագոյն, երկոքին ևս այնպ՟ս ընտանի են, զի մարդ է դիւրաւ մերձենալ 'ի նս՟ա. այլև ըմբռնել ձեռօք: Եւ թէպ՟տ վնաս բզ՟մ գործեն յարտորայս, սակայն ը՟ պատժով գլխապարտութ՟ արգելեալ է սպանանել: Վ՟ս այնորիկ գիւղականք բռնադատին վարժ արկանել շուրջ զարտորէիւք 'ի պահպանութ՟ հնձոց իւրեանց յապականագործ թռչնոց անտի: Են անդ և պէսպ՟ս վայրենի բադք. յորս է տեսակ մի, զոր Ճեաբօնացիք քիմոտուի կոչեն. որ այնչափ գեղեցիկ է. զի օտարականք, որք տեսանեն զպատկեր նր՟ նկարել՟, ոչ կարեն հաւատալ, թէ գտցի իրօք այնպիսի թռչուն. ամ՟ փետուրք նր՟ երփներփն շողշողին. միայն պարանոցն է միագոյն կարմրափայլ, իսկ 'ի գլուխն ունի գեղեցիկ ցցունս: Գոյ անդ և արագիլ ը՟ ամ՟ տեղիս յաճախել՟. և տեսակ մի վայրի աղաւնւոյ. և այլ
ազգի ազգի թռչունք:

'Ի շրջակայս ծովսեն կէտք մեծամեծք, որք կարի չահաբեր են Ճեաբօնացւոց. զի ոպ՟ ասէ տէլահարբէն՝ չիք 'ի նս՟ա ինչ անպիտան, բաց յողնաշար ոսկերաց. մորթ նց՟, որ սովորաբար է սևագոյն՝ նման է մորթոյ եզին. միսն կարմրագոյն և պատուական 'ի կերակուր. ոպ՟ և ողնքն և այլ ամ՟ ներքին անդամանք նց՟. ճարպն յիւղ լապտերաց և յայլ պէտս. իսկ 'ի ջլային մասանց գործեն լարս 'ի պէտս նուագարանաց, նոյնպէս և յոսկերաց ծնօտից, և թևոց շինեն պէսպ՟ս ձեռակերտս. ը՟ որս և կշռորդս գեղեցիկս: Գտանի անդ և ձի կմ՟ շուն ծովային. որ է նորատեսիլ ազգ ձկան. երկայն 'ի չափ հասակի տասնամեայ մանկան. գլուխն բերանն և պարանոցն մեծ. և որովայնն լայն իբրև զպարկ լցեալ. ատամունքն մանր՝ այլ սայրասուր ըս՟ ատամանց օձից. իսկ 'ի ներքոյ որովայնի ունի երկու ոտս լայնս և աճառայինս. և մատունս նման մատանց ձեռաց փոքրիկ մանկան, և ասեն թէ միս նր՟ պատուական է 'ի կերակուր:

Է. Վաճառք Ճեաբօնայ:

Գլխաւոր վաճառք, որք ելանեն 'ի Ճեաբօնայ են արծաթ ազնիւ յոյժ. զոր ոպ՟ 'ի վերոյ ասացաք՝

ցոյց՝ ը̄ ոսկւոյ փոխանակելին երբեմն 'ի չէն · արոյր ազնիւ · որ է բաղադրութիւն ինչ յոսկւոյ յարծաթոյ և 'ի պղնձոյ · ոսկի՝ թէպէտ ոմանք ասեն, թէ թագաւորական օրինօք արգելեալ է հանել ոսկի արտաքս յՃէ անտի · բայց այն արգելք գուցէ թէ լիցէ 'ի վ̄ր ձոյլ ոսկւոյ կամ ոսկի դրամոց · ք̃զի յայտ է թէ հոլանտացիք հանեն անտի ոսկեթել բ̃զմ : Քափուր, եղջիւր անասնոց · մորթ կէտ ձկանց · զոր Ճեաբօնացիք քաջ գիտեն գործել · գաւազան եղեգնեայ ազնիւ · որիզ պատուական · ազգի ազգի թէյ քաղցուենիք այն է՝ ուէչէլ 'ի զն̃զն պտղոց · վէրնիճ · այլև տեսակք ինչ հն̃րկ ականց : Պէսպէս ձեռակերտք, զ̃ր անօթք յախճապակեայք ընտիրք · հովահարք թ̃ր ենլփաղէ · տուփք և արկեղք ճարտարագործք նկարէնք և ոսկենիւ ծաղկեք յօբինեալք · անօթք բ̃զմ ճարտարութ̃բ հիւսեալ 'ի նրբաթել եղեգանց · և այլ ազգին նման զն̃զն արհեստակերտք : Այլ առաւել ք̃ զամ պղինձ մաքրեալ և անմաքուր, զոր բառնան անտի հոլանտացիք :

Մինչև ցամն 1637 կամ 1638 ամ ազգք կարող էին գնալ 'ի Ճեաբօն, և համարձակ տուրևառևկ լինել անդ · այլ յամին 1638 անլուծանելի օրինօք տարագրեցան անտի փորթուգալք յաւէժաբար · և առհասարակ ամ օտարազգիք մ̃ւնդ Եւրոպացիք · միայն հոլանտացիք 'ի ձեռն անարժան հնարից (զոր 'ի ճառելն ստորև զկրօնից Ճեաբօնացւոց ունիմք յիշատակել) զերծ կացուցին զազգ իւրեանց յօրինաց անտի · զի թոյլ ետուն ն̃ց, ոչ և չինաց առնել վաճառականութիւն անդէն : Բայց այնչափ արգելք և նախատական պայմանք եդան 'ի վ̄ր ն̃ց, մինչև յիրաւի զարմանալ, որոց ողջ իկ միտս ունին, թէ զիարդ հոլանտացիք ազգ ազնուական և երևելի կարծեցեալ յեւրոպիա, յանձն առնուն զայնչափ դժնդակ նախատինս 'ի բարբարոս յամբարտաւան ազգէ անտի, ուր և օգուտն զոր շահին չէ ինչ մեծ :

Քանզի ոչ ասէ կեմփեր հոլանտացի, տարագրեալ կան ն̃ք 'ի տէսիմա արհեստական կղզի փոքրիկ, որ է հանդէպ նւհնգստի նանկասակ ք̃ղքի, կամրջաւ կցեալ ը̄ ցամաք : Եւ անդ՝ զօրէն գերեաց շրջափակեալ պահին 'ի մէջ զօրաց և դահճաց Ճեաբօնացւոց · որք միանգամայն և լրտեսք են ն̃ց մ̃ւնդ 'ի հասանել նաւուց ն̃ց : Յորժամ հասանին անդր նաւք հոլանտացւոց, վաղվաղակի մերկացուցանեն զն̃ս յամ զինուց · հանեալ 'ի ցամաք զհրազէնս, զվառօթ · ը̄ որս և ըղղեկ նաւուն, և զառագաստս. և այնպէս իբրև 'ի բանտի արգելեալ պահեն զնո՟ : Նոյնպէս և զամ՟ վաճառս նց՟ ճէաբօնացիք հանեն 'ի ցամաք. բայց նախ ք՟ ըզմերձենալ առ նո՟, հանդիսիւ երդնուն չթողուլ զհոլանտացիս առնել զհաղորդութի՟ ինչ ը՟ ումեք 'ի ճէաբօնացւոց. և չտալ նց՟ բնաւ համարձակութի՟. և չառնել բարեկամութի՟ ինչ ը՟ նո՟. յորմէ յայտ է թէ վաթարագոյն համարին զնո՟, ք՟ զյետին ստրուկս : Եւ որ առաւել զարմացման է արժանի, եղկելի հոլանտացիք փոխանակ այսպիսի գանձ անարգանաց, զոր ընդունին 'ի նց՟է, պարտապան են և առատ թոշակս տալ նց՟ :

Ըստ ասելոյ կեմփերայ՝ անարգութի՟ մեծ համարեալ է առ ճէաբօնացիս գէթ սակաւ ինչ ընտանութի՟ և բարեկամութի՟ ցուցանել հոլանտացւոց. յայն սակս ամէն միշտ պտ՟ճաս խնդրեն 'ի նախատել և 'ի ապատոնակոխ առնել զնո՟ : Ոչ երբէք քաղցրութ՟ խօսին ը՟ նո՟. այլ միշտ իշխանաբար և արհամարհելով : 'ի վաճառել ինչ նց՟ չափազանց գինս պահանջեն վ՟ չնչին իրաց. զի ամ՟ իրօք գուն գործեն խափանել զօգուտ նց՟ : Գողութի՟ ը՟ սաստիկ պատժովք արգելեալ է առ ճէաբօնացիս. այլ յորժամ ոք գողանայ ինչ 'ի հոլանտացւոց, եթէ ըմբռնեսցի 'ի գործ գողութե՟, առնուն զգողօնն 'ի նմէ. և զինուորքն, որք պահեն զկղզի հոլանտացւոց՝ առ փոքր մի գանեն զնա, և արձակեն. իսկ եթէ ոք մեծ ինչ չարիս գործեսցէ նց՟, առ սուղ ինչ ժմ՟ աքսորեն զնա : Աւ վայ է հոլանտացւոց, եթէ թագուսցեն ինչ 'ի մաքսաւորաց. որոյ պատիժն է մահ անվրէպ գլխատմամբ կմ՟ 'ի խաչ հանելով 'ի նախատինս քրիստոնէութե՟ : Չեն կարող հոլանտացիք գիրս առաքել ուրեք, և ոչ ընդունիլ, առանց տեսանելոյ զայն կուսակալ իշխանին և նշանակելոյ 'ի մատենի : Յառաջագոյն յորժամ ոք 'ի հոլանտացւոց մեռանէր 'ի նանկասագ, 'ի ծով ընկենուին զմարմին նր՟ իբր անարժան հողոյ երկրին. այլ այժմ ստացան փոքր ինչ տեղի անպիտան 'ի լերին 'ի նասայ 'ի թաղել անդ զմեռեալս իւրեանց : Ահա զայսպիսի և զայլ սոցին նման նախատինս և անարգանս անբաւս կրեն անդ հոլանտացիք, զորս ը՟երկար գրէ կեմփեր. և յաւելու զկնի, գիտեմ ասէ, զի բ՟մք վ՟նկ եպերեն զմեր հոլանտացիս. այլ նց՟ չէ ինչ փոյթ. զի խոնարհ են. ուստի և ոչ խորշին յանարգանաց վ՟ն շահաստանութե՟. եթէ արդարև խոնարհութե՟ արժան իցէ ասել զայն, և ոչ յետին գծծութեան և ամարդութեան · որ է ծնունդ գարշելի ագահութեան : Սակայն զխարդ և լցէ, հոլանտացիք յանձն առնուն զայն, և շարունակեն ընդ ճէաբօնացւոց զառևտուրն իւրեանց · որ յառաջագոյն առաւել ծաղկեալ էր · զի ամի ամի եօթն նաւս առաքէին անդ · այլ յետոյ 'ի պատճառս պէսպէս արգելլուց, որք օր ըստ օրէ յաճախեցին, նուաղեցաւ յոյժ · վասն այժմ զերիս և եթ կամ չորս նաւս առաքեն · որք տանին անդ մետաքս անգործ 'ի չինաց ընդ 'ի դունգքինայ, 'ի պանկալայէ, և 'ի պարսից · և ազգի ազգի կերպաս մետաքսեայս և ասուեղէնս 'ի հնդկաց և յեւրոպիոյ · բայց առանց ոսկեթել ծաղկանց · շուխայ եւրոպիոյ · փայտ պրազիլու 'ի պէտս ներկարարաց · մորթս գոմշոյ և եղջերուէի և այլոց ընտանի և վայրենի չորքոտանեաց · 'դեղնագոյն ներկ՝ այն է՝ սաֆրան · պղպեղ · շաքար · մեխակ · ընկոյզ հնդկային այն է՝ հինտոստան ճէվիզի · սանտալ փայտ սպիտակ · քափուր 'ի պարսաէ, 'ի պօրնէան կղզեաց, և 'ի սումադրայէ, կինաքարիս, սնտիկ, քրքում 'ի պանկալայէ, բորակ, պաղլեղ, կապար, բուստ, այն է՝ մերճան · հայելի յեւրոպիոյ, ակնոց, դէտակն, խոշորացոյց ապակի, և պէսպէս ապակեղէն անօթս, և այլ արուեստակերտ և բնական իրս :

Բայց յայսմ ամէ՝ ըստ սահլոյ պախշինկայ, ոչ կարեն վաճառել աւելի քան 45454 վէնէտիկեան ոսկւոյ · որում փոխարէն առնուն անտի 11000 · և երբեմն մինչև 20000 տաղանդ պղինձ մաքրել · Թող զանմաքուրն · քափուր ճէաբօնայ · յախճապակեայ անօթս, և տուփս, և արկեղս նկարէնս, և հոմահարս եւն · թէպէտ այժմ այսպիսի ձեռակերտաց չունին այնչափ ինչ յարգ յեւրոպիա : Իսկ յայսմ ամէ՝ ըստ կեմփերայ շահին հոլանտացիք 60 'ի հարիւրոյ · այլ 'ի բաց հանել զնոյն ծախս, ոչ մնայ նոցա շահ աւելի, քան 40 կամ 45 · " օգուտ սակաւ, ասէ կեմփեր վասն այնպիսի ընկերութեան վաճառականաց, որ այնչափ ծախս առնէ յարեւելեան հնդիկս · վասն չէր արժան պահել զայս մասն առևտրոյն, եթէ վաճառք, զոր հանեմք 'ի ճէաբօնայ՝ մանաւանդ պղինձն մաքրել ոչ բերէին մեզ նոյնչափ շահս և աւելի · ուստի և բոլոր շահն կարէ համանիլ ց80 կամ 85 'ի հարիւրոյ · այն զի և ծախք ոչ են նոյնչափ յամ ամի || :

Չէ ինչ ըստ հաստ և առևտրութեան չինաց, զոր առնեն անդ · վասն զի և նոքա գրեթէ ըստ նոյնն պայմանօք և արգելմամբք անկել կան, ըստ որում հոլանտացիք · սակս տանելոյ նոցա երբեմն անդ և վաճառելոյ ոմանց վաճառականաց Ճեաբօնացւոց 'ի միասին ընդ գրոց Կոնփուսիոսի մեծի օրէնսդրի իւրեանց՝ և գիրս ինչ քրիստոնէից, յորդորեցան 'ի քարոզչաց եւրոպացւոց:

Է. Դպրութիւն Ճեաբօնայ :

Ճեաբօնացիք ընդհանրապէս խօսելով՝ սրամիտ են և ուսումնասէր. ունին բազում դպրոցս յամենայն քաղաքս. զի որպէս տեսանի 'ի գիրս ողջունելի սրբոյն Փրանկիսկոսի Քսաւերեան՝ լոկ 'ի Մէաքօ քաղաքի և 'ի շրջակայս նորա յիւրում ժամի էին չորք մեծամեծ դպրոցք. թող զդպրոցս այլոց գլխաւոր քաղաքաց. և յիւրաքանչիւրսն էին 3 կամ 4000 մանկունք: Իսկ այժմ առաւել յաճախեալ են. և մնան 'ի նոսա մանկունք ընդ դաստիարակութեամբ քրմաց, (զի նոքա խմաստնագոյնք համարեալ են առ Ճեաբօնացիս) մինչև 'ի ժամ հասակի. ապա հանեալ զնոսա անտի, տան 'ի ձեռս նոցա ըզսուր. և մարզեն 'ի զինուորութեան. վասն զի ըստ Տէլահարբեայ՝ մարթ է զՃեաբօնացիս կոչել զինուորս 'ի ծնէ: Ունին և առանձին դպրոցս 'ի ձև մենաստանաց՝ վասն աղջկանց. ուր ուսուցանեն նոցա ընթեռնուլ և գրել. և մարզեն զնոսա 'ի տաղաչափութիւն և յերաժշտութիւն: Սակայն ընդ այնչափ բազմութեան դպրոցաց, և յաճախութեան գրոց և գրատանց՝ զոր ասեն ունել նոցա, ուսմունք գիտութեանց չեն ինչ ծաղկեալ 'ի նոսա. զի այն բազմութեան գրեանց նոցա զայլոց իրաց ոչ ճառեն, բայց զբարոյական ուսմանց, զպատմութեանց, զբժշկութեան, զտաղաչափութեան, և զքանաստեղծութեան. որ առաւել քան զայլ մակացութիւնս ծաղկեալ է առ նոսա: Ունին և ըզդուզնաքեայ ինչ ծանօթութիւն զթուաբանութեան և զչափաբանութեան. այլ 'ի բնաբանական, և 'ի մետաֆիզիքական, և ևս առաւել յաստեղաբաշխական մակացութեանց գրեթէ ամենևին զուրկ են:

Ասի թէ չունին և գիրս իրաւանց. բայց միայն քանի մի համառօտ սահմանադրութիւնս. զոր ճշդիւ պահեն. թէպէտ չէ յայտ ստուգիւ, թէ նոցա է հաստատեալ զայն, եթէ յայլոց առեալ. որպէս և զվաթսունամեան շրջանս իւրեանց, որով չափեն զդարս, 'ի Չինաց առին: Եւ զայն առնեն համեմատելով զնշանագիրս երկոտասան համաստեղութեանց երկնից ընդ նշանագիրս տասն տարերաց. զի նշանագիրք համաստեղութեանց հինգ անգամ համեմատեալ ընդ նշանագրաց տասն տարերաց. կամ այն տասն տարերքն վեց անգամ համեմատեալ ընդ նշանաց համաստեղութե՟ց , արտագրեն վախթաւն նշանագիրս բաղադրեալս . յորոց իւրաքանչիւրն ծառայէ առ մի ամ . գրեթէ ո՟չ առ մեզ գիր տարւոյն : Եւ թէպ՟տ անուամբ՝ տասն տարերս թուեն , զի 'ի համեմատութե՟ ն՟ց ը՟ համաստեղութե՟ց՝ ելցէ շրջան ն՟ց . այլ իրաք հինգ և եթ դնեն . ց՟ճ զփայտ , զհուր , զհող , զմետաղ և զջուր : Իսկ անուանք համաստեղութե՟ց զոր ն՟ք Բէգդգա կոչեն , 'ի բարբառ ն՟ց են այսոքիկ . Նէ՝ մուկն . Ուս՝ ցուլ . Թօռա՝ վագր . Ով՝ նապաստակ . Դաջ՝ վիշապ . Մի՝ օձ . Ումա՝ ձի . Թխիդուռէ՝ խոյ . Եշէայր՝ կապիկ . Դօռի՝ աքաղաղ . Ին՝ շուն . Ի՝ խոզ : Սովին անուամբք և սովին կարգաւ թուեն զերկոտասան ժամս աւուր . և զերկոտասան մասունս , յորս բաժանեն զիւրաքանչիւր ժամ : Տիէ կոչեն զմիջոց ժմկի որ 'ի մէջ ծագման արեգական և մտից ն՟ր . զոր բաժանեն 'ի վեց ժամս կ՟մ մասունս հաւասարս . նոյնպէս և զգիշերն , որ է 'ի մէջ մտից և ծագման արեգականն՝ 'ի նոյնչափ ժամս բաժանեն : Վ՟ա ժամք ն՟ց յաւէտ և նուազ երկայն են ը՟ զն՟ն եղանակաց տարւոյն . ք՟զի յայտ է թէ 'ի ձմերայնի ժամք գիշերոյ երկարագոյն են ք՟ զժամս տուընջեան . ո՟չ և ը՟ հկ՟ռկն՝ յամարայնի ժամք տուընջեան երկարագոյն են ք՟ զգիշերոյ . զի տիւն ամարան համեմատի գիշերոյ ձմերան : Իսկ զամիս և զտարիս չափեն ը՟ ընթացից լուսնոյ . վ՟ա յիւրաքանչիւր երկու կ՟մ երիս ամս արեգական՝ մի տարի ն՟ց լինի երեքտասան ամիս . ուստի և նահանջ առնեն . իսկ զտարեգլուխն սկսանին 'ի ծննդեան լուսնի , որ անմիջապ՟ս յառաջէ կ՟մ զհետ գայ հինգե՟րդ աւուր փետրվարի : Այլ առ համեմատութ՟ այլոց գիտութե՟ց՝ առաւել ծաղկեալ է առ Ճէաբօնացիս բժշկական գիտութիւն . զոր յաւէտ 'ի պատուի ունին ք՟ զարհեստ վիրահատութե . վ՟ա թուի թէ չիք անդ վիրահատ առանձինն . զի որք գրեն զպատմութե՟ց Ճէաբօնացւոց ոչ յիշեն վիրահատս . այլ բժիշկք կատարեն և զգործ ն՟ց . որք և ուր և երթան՝ միշտ ունին ը՟ ինքեանս զծառայ , որ բարձեալ տանի զարկղ . յորում բ՟զմ տեսակք խոտոց գտանին յայլ և այլ պարկս ամփոփեալ . և 'ի խոտոց անտի , զոր համարին բժշկարար իւրաքանչիւր ախտի , տան առժամայն ախտացելոյն : Կարի քաջ ծանուցեն զզարկ բազկերակի . մինչև ը՟ ոմանց աւելոյ՝ կէս ժամ կալեալ մատամբ զզարկ բազկին , գտանեն զպատճառս և զարմատ ախտին : Զուտին սովորութե բնաւ 'ի հիւանդաց հանել արիւն . և ոչ երբեք տան նոցա եփեալ կերակուր, համարելով թէ ստամոքսն տկարացեալ ոչ կարէ մարսել ինչ, որ չիցէ յեփում բնական որպիսութեան: Զոր ինչ խնդրէ հիւանդն տան նմա համարձակ. զի ասեն թէ բնութիւն իմաստուն ըզգուշաւոր է. վասն այսորիկ թէպէտ և այլայլեալ իցեն հիւթք նորա, ոչ բաղձայ փաստակարաց. բայց յայսմ վրիպին նոքա ընդդէմ յայտնի փորձոյ: Գլխաւոր փոյթ բժշկացն Ճեաբօնացւոց է կանխել և ընդդէմ ունել հիւանդութեանց 'ի ձեռն ստէպ բաղանեաց:

Իսկ 'ի նկարս նման են չինաց. քաջավարժք 'ի նկարել ծաղիկս, թռչունս, ծառս են. այլ ոչ մարդկային կերպարանս: Նոյնպէս ներհունք գործել յախճապակեայ անօթս. հովահարս և այլ պէսպէս ձեռակերտս: Բայց 'ի քանդակս, և յարուեստ ոսկեզօծելոյ. և 'ի գործ ոսկեթել կերպասուց գերազանցեն քան զչինս:

Ը. Բարք և Սովորութիւնք Ճեաբօնացւոց:

Ճեաբօնացիք, ըստ գրելոյ ալիչինկայ` իբր 'ի բնէ միջահասակ են և վայելչագեղ մարմնով. իսկ ակլահարբէ ասէ թէ սովորաբար կարճ են հասակաւ. և կազմուածք մարմնոյ նոցա անհամեմատ և տգեղ, թխագէմ. փոքրակն, բայց խորանկեալ որպէս աչք չինաց թաւայօն կարճունչ և փոքր ինչ տափակաքիթք, այլ ծայրն արտաքս ցցուեալ. Ծնօտքն հարթ և ողորկ և սակաւամօրուս, բայց և զատկաւն զայն սափրեն կամ արմատաքի 'ի բաց խլեն, զի մի բնաւ բուսցին. և սըրունք ոտից նոցա ստուար անհամեմատ այլոց մասանց մարմնոյ: Այլ ըստ նորին ակլահարբեայ` այս ստորագրուեալ մարմնոյ կամ դիմագրուեալ ոչ անկանի 'ի վերայ համօրէն բնակչաց Ճեաբօնի. վասն զի ոչ ըստ ամենայն ազգիս նոյն օրինակ տգեղ են. այն զի մեծամեծք նոցա` առհասարակ 'ի դէմս իւրեանց ցուցանեն զազնուական և զիշխանական իմն խոժոռութիւն և ծանրութիւն բնական, որ վայելչութիւն իմն ընծայէ նոցա, և ծածկէ զբնական տգեղութիւն: Ուժեղ են և աշխատասէր, և ժրաջան և մեծագործ. յիշողութիւն նոցա սուր. երևակայութիւն անթափ աշխոյժ և զօրաւոր. և ընտրողութիւն աչալուրջ և արագ: Սիրեն զուսումն գիտութեանց և զարուեստս, յորս արտի մտօք պարապին: Սովորութիւնք նոցա և ախորժակք հեռի են մերոց սովորութեանց. նախապատիւ ունին զսեաւ ատամունս քան զսպիտակս. միշտ ջերմ ըմպեն. և ոչ կարեն տանել մերոց ըմպելեաց և հատոց. զի սովորական ըմպելին նց՟ փոխ գինւոյ է տեսակ մի պատուական գարեջրոյ, զոր գործեն յորիզոյ։ Սեաւ գոյնն առ նս՟ է նշանակ ուրախութե՟. իսկ սպիտակն սգոյ և տրտմութե՟։

Հ՟րկ ժողովուրդն կմ՟ քղքացիք, որք ը՟ առաւել մասին վաճառական են, և արհեստաւոր, և զինուոր, 'ի կերակուրս և յըմպելիս, ոպ՟ և 'ի զարդս հանդերձից չափաւոր են և խորշին յաւելորդաց։ Զգեստ նց՟ է պարեգօտ, որ հասանէ մինչև 'ի կէսն սրունից գրեթէ ը՟ սովորութե՟ պարսից. նոյնպս՟ և թեզանիք նց՟ կարճ, զի հազիւ հասանեն մինչև ցարմունկն. իսկ մնացեալ մասն բազկաց մերկ է. և ոտքն կրեն զէնս մաքրափայլս։ Տունք նց՟, ոպ՟ և ապարանք մեծամեծաց, և մեծ մասն այլոց շինուածոց փայտակերտ. որմունք նց՟ տախտակաշէն պատեալ թանձր փախաթիւ սակս սաէպ գետնաշարժութե՟. իսկ չափ բարձրութե՟ նց՟ ը՟ օրինաց երկրին է մինչև ցվեց ձող. ը՟ 36 ոտնաչափ, և ոչ աւելի. բայց սակաւք գտանին, որք ունիցին և զնոյն չափ բարձրութե՟. զի և արքունի պալատք միայարկ են. թէպէտ սուղ ինչ բարձր 'ի գետնոյ։ Չիք 'ի տունս նց՟ աւելորդ ինչ, այլ միայն հարկաւորք. որք առհ՟րկ ջինջ են և մաքրափայլ. քզի ճեապօնացիք մաքրասէր են յոյժ։ Չունին վառարան 'ի սենեակս, այլ 'ի ձմեռայնի թոնիր ը՟ սովորութե՟ արևելեայց։ Եւ գրեթէ ամ՟ տուն ունի մասնաւոր շինուած քարաշէն. ուր ամրափակեալ պահեն զպատուականս յընչից իւրեանց յերկեւղէ հրդեհից յաճախելոց անդէն սակս փայտակերտ շինուածոց նոցա։

Իսկ մեծամեծք և ազնուականք նց՟ ը՟ հկռկն՟ յամի՟ շքեղ են և փառաւոր. մինչև 'ի մեծագին զարդս զգեստուց և տանց, և 'ի բազմութե՟ պաշտօնէից զարքայականն բերեն զշուք։ Զգեստ նց՟ ազնուական և փառազարդ. պատմուճան ոձինաւոր մետաքսեայ ոսկեթել, լայն և երկայն թեզանեօք, զոր թողուն 'ի կախ. և 'ի վ՟ր՟ վերարկու մեծ նոյնպս՟ ոսկեթել։ 'Ի պարանոցս կրեն վարշամակ նրբանիւթ. և 'ի մէջս գօտի մետաքսեայ ոսկեթել. և դաշնակ՝ այն է՝ խանջէր 'ի գօտիս. որոյ դաստակ 'ի բազումս և պատուական է ականակուռ և մարգարտակուռ։ Հերք գլխոյ սափրեալք յառաջոյ կողմանէ գրեթէ մինչև ցկէս գլխոյն, և մնացեալ վարսք թողեալ 'ի կախ զծածրակաւ. և առվաւ՝ ոպ՟ և ձևով զգեստուց որոշին 'ի հ՟րկ քղքացւոց. որք 'ի յետուստ սափրեն զհերս։ Այս առ_ բաղ յօրինուածոյ հերաց վայելուչ համարել յոյժ առ նմ, գրեթէ միշտ բացագլուխ շրջին, 'ի ցուցանել. իսկ յորժամ ելանեն 'ի տնէն, դնեն գլխարկ ըստ սովորութե եւրոպացւոց, այն է՝ շափղայ մեծ հիւսել բազմօրինեալ ճարտարութբ 'ի յարդից կմ 'ի նրբաթել եղեգանց. զոր լայն ժապաւինաւ կապեն ը կզակաւ, զի մի 'ի բաց տարցին 'ի հողմոց: Տիկնայք նց առաւել գեղապանծ զգեննուն. զվարս զնչն օրինակաւ յօրինել ը աստիճանի մեծութե իւրեանց: Հերք կանանց ամ դէպք ժողովել են 'ի գագաթան գլխոյ, և անդ կապել ը ասեղն մեծ, որ է արծաթի կմ ոսկի: իսկ տիկնայք մեծուհիք յերկոյս կլթիկամբք արկել զգէսս և 'ի փունջս փունջս կապել. յականջս ունին ասեղն մեծ. զորմէ կախել կայ ակն պատուական կմ մարգարիտ. և առ իւրաքանչիւր ունկամբ կարգ մի մարգարտայ: Բզմ ըզգեստս զգեննուն 'ի վր միմեանց, երբեմն մինչև ցհարիւր. և 'ի վր ամցն առնուն վերարկու լայն և երկայն, որոյ ստորոտք իբրև չորս ոտնաչափ երկայնութբ քարշին զկնի 'ի գնալս. զի 'ի թուոյ զգեստուց ճանաչի աստիճան մեծութե նց. բայց այն բազմաւ զգեստուց ոչինչ ծանրութե բերեն նց, առ կարի իմն նրբութե և թեթևութե: Ունին և գօտի լայն ասղնագործ ծաղկօք յօրինել գեղեցիկ և մեծագին: Յորժամ ելանեն 'ի հրապարակ, միշտ ունին ը ինքեանս զբազմութե օրիորդաց 'ի զարդ գեղաշուք պճնելոց, և աղախնայս բզմս, յորոց ոմանք տանին հովահարս, այն է՝ կեղլփաղէ. իսկ այլք հովանոցս մեծագինս ոսկեզարդս, որք բերեն զնմանութի ամպհովանւոյ: Չէ օրէն նց երթալ յայցելութի ումեք, եթէ ոչ միանգամ 'ի տարւոջ. և յորժամ ընդունին զոք՝ եկեալ յայցելութի ինքեանց, արկանեն քօղ զգլխով, ը վաղնջական սովորութե երկրին, որպ և կանայք քրիստոնեայք, որք էին անդ յառաջագոյն՝ ոչ միայն մեծամեծք, այլև ռամկականք յորժամ երթային յեկեղեցի, ունէին քօղ զերեսօք երկայն մինչև ցոտս. յորմէ մարթ է 'ի միտ առնուլ զգեղեցիկ պարկեշտութի կանանց քրիստոնէից Ճեապօնացւոց: Ապարանք նց թէպէտ փայտակերտք, ուստի և արտաքուստ անշուք. այլ ըարձակ են, համեմատ և վայելչակերտ. և 'ի ներքս փառաւորգք. որք և յերկու մասունս բաժանել են. մի մասն է վս կանանց որք ոչ ումեք երևին. իսկ երկրդ մասն է վս արանց, որ միշտ բաց է ամցն: Ունին և պարտէզս գեղեցիկս, որք ը մա-

սին

ախն սալայատակ են գունագոյն բոլորաձև քարամբք և ըստ մասին խճիւ պատեալ ․ բայց առհասարակ ջինջ և մաքուր ։ 'Ի պարտէզս նոցա ընդ ամենայն տեղիս տեսանի արուեստական կամաւոր խառնափնդորութիւն իմն մեծապէս զուարճացուցիչ աչաց ․ որպէս փոքրիկ քարաժայռք արհեստաշէնք ընդ որս հոսին սահանք ջուրց ․ փոքրիկ անտառք ձեռատունկք ․ վտակք կարկաջահոսք ․ ձկնարանք լի ձկամբք ․ ծառք պտղաբերք ․ և պէսպէս բոյսք նորատեսակք ։

Ճաշք և խնճոյք նոցա մեծածախ են ․ կերակուրք համադամք ․ և սկահակք , որք մատուցանին 'ի սեղան պճնազարդեալք ․ որպէս և ձիրանք և կտուց թռչնոց , որք մատչին 'ի սեղան են ոսկեզօծեալ ։ 'Ի խնճոյս սովորութիւն ունին ածել և նուագածուս ․ զի 'ի ճաշակել բերանոյ զհամադամս , ընդ նմին և աչք և ականջք զմայլեսցին ։ Այլ առաւել զարմանալի այն է , զի 'ի մէջ այնչափ բազմութեան ծառայից և սպասաւորաց , որք են 'ի խոհանոցի ․ և որք 'ի սպասաւորութեան բազմականաց՝ ոչ լսի բարբառ բնաւ ։

Իսկ ըստ բարոյական մասին առաջին սկիզբն և արմատ առաքինութեանց և մոլութեանց համօրէն Ճեաբօնացւոց ․ և կանոն ամենայն ախորժակաց և գործոց նոցա՝ է փառքն ․ քանզի անհնարին փառասէր են և պատուամոլ ։ Ամենեքեան 'ի մեծամեծաց մինչև ցյետին բեռնակիրն նախանձախնդիր են յոյժ պատուոյ անձանց ․ գծուծ ռամիկն թէ լուիցէ բան , յորում ստուերք ինչ անգոսնութեանց երևեսցին՝ ոչ միայն 'ի հեռուրկցէ , այլև յիշխանաւորէ , խնդրէ հատուցումն պատուոյ իւրոյ հրապարակաւ ։ Վասն այսորիկ ամենեքին զգոյշ են 'ի բանս և յամենայն կենցաղակցութիւնս ․ զի պատիւն և յարգութիւն փոխադարձ է անդ յամենայնի յիշխանաւորս և 'ի ռամկականս ։ Անկեղծ են և ճշմարտախօս ․ և խորշին մեծապէս 'ի նենգութենէ և յերկդիմի բանից ․ և առաւել 'ի ստութենէ ․ զի ամենայն թեթև ստութիւն ոչ մնայ անպատիժ առ նոսա ։ Եւ ընդ հակառակն՝ անարգ են առ նոսա և ատելի մարդելոյզ շողոմարարք ․ սակս թէ ամենայն մեծամեծք և ազնուականք ունին մի մի ազդարարս 'ի ծանուցանել ինքեանց անկեղծութեամբ զամենայն վրիպակս և զպակասութիւնս , զոր գործեն 'ի բանս և 'ի գործս ։ Վեհանձն են և մեծախորհուրդ ․ խրոխտ և յանդուգն , զոր և 'ի դէմս և յամենայն շարժմունս ցուցանեն ․ և աներկիւղ են յոյժ ․ զի և մահն , որ մեծ է քան զամենայն չարս աստի կենաց , յաչս նոցա թուի թէ համարեալ իցէ իբր տղայական խաղալիկ ․ զոր սակս դուզնաքեայ փառաց ․

կմ ՚ի պաշտպանութ պատուոյ, և կմ վն այլոց որ և իցէ չնչին իրաց վեհանձնութ իմն. կմ լաւ ևս ասացից՝ գազանական մոլեգնութ անձին բերէն:

Եւ այս յայտ է ՚ի բզմ դիպուածոց, զորս յիշատակեն մատենագիրք. յորոց սակի է և այն, զոր պատմէ կեմփեր: Արք երկու ազնուականք պատահեն միմեանց յարքունի ապարանս ՚ի վր սանդխոց յելանել միոյն և յիջանել միւսոյն, սուրք նց զոր ունէին ածեն ՚ի մէջ, ընհարան միմեանց. ի որ նա՝ որ իջանէր զայրացաւ, անարգանս համարելով զայն անձին. իսկ միւսն կամեցեալ անբասիր տանել զանձն, դիպուած է ասէ. բայց և այնպէս չեղև ինչ վնաս, զի երկոքին սուսերքս չեն մի ք զմի առաւել: Եւ ասէ առաջինն. ոչ այդպէս, այլ ահա ես ցուցից քեզ թէ գոյ զինչ նութ ՚ի նմա. և հանեալ զսուր՝ իւրնին էհերձ զորովայն իւր. և անկաւ անդ ՚ի վերայ սանդխոցն: Իսկ երկրորդն աճապարեալ ընթացաւ ՚ի վեր, և եդեալ ՚ի վր սեղանոյ զսկուտեղն, զոր ունէր ՚ի ձեռին, դարձաւ վզվզկի. և այն ինչ շունչն ՚ի բերան էր առաջնոյն, ասէ ցնա՝ ես յառաջէի արդեօք ք զքեզ, եթէ չէի պարաւանդեալ ՚ի սպասաւորութ արքային. սակայն փութացայց վզվզկի գալ զհետ քո. զայս ասաց, և անդէն միխեաց զսուրն ՚ի սիրտ իւր. և անկաւ մերձ առաջնոյն. ուր և երկոքին չարամահ սատակեցան: Ահա այսպէս են ամ ընթացք Ճեապոնացւոց՝ չափազանցք. վսյ թէպէտ և երևեցին առաքինականք, սակայն չեն ճշմարիտ առաքինութ կմ արիութ, այլ մոլեգնութ և կատաղութ. զի առաքինութիւն միջասահման է ՚ի մէջ աւելորդին և նուազին:

Արհամարհօղ են շահաստացութ կմ լաւ ևս ասացից՝ չեն շահախնդիր և ընչաքաղց ըստ օրինակի չինաց. վսյ առուր և առևտ վաճառահութիւն իբր չնչին արուեստ համարեալ է առ նս. նմին իրի հնրկ ժողովուրդն գրեթէ առհսրկ աղքատ է. բայց միանգամայն և անկարօտ. և խորշի յաւելորդաց. զի ոնց վերագոյնդ ասացաք՝ չիք տեսանել ՚ի տունս նց աւելորդ ինչ: Իսկ մեծութ և գանձ երկրին բովանդակ հաւաքեալ կայ առ մեծամեծս և իշխանս, որք քաջ գիտեն վայելել նովաւ. զի ասի թէ չիք ուրեք տեսանել այնչափ շքեղութ, և փառք, և զարդուց և պաշտօնէից յաճախութ, ոնց առ Ճեապոնացիս: Այլ որ առաւել զարմացման է արժանի, ժողովուրդն տեսեալ զայնչափ ճոխութ նց և զշուք, ոչ ցանկան բնաւ նց և ոչ նախանձին: Եւ եթէ դէպ լիցի ումեք ՚ի մեծատանց անտի անանկանալ, ոչ ընկճի յանձն իւր, և ոչ նուաճատանի յաչս այլոց․ այլ կայ մնայ յիւրում պատուի, որ̄ յառաջն․ և մէհանձնութ̄ իւր անկարօտ ցուցանէ զինքն յամի․ ոչ ումեք չնթէ, ոչ զոք աղերսէ, և ոչ ցուցանէ ամենևին զցանկութ̄ ինչ գտանալոյ անդրէն յառաջին մեծութ̄ իւր ։

Հաստատուն են և հաւատարիմ 'ի բարեկամութ̄, զոր ոչինչ ը̄ հաստ համարին 'ի կապոյ ամուսնութ̄․ վ̄յ բզ̄մ անգամ անցանեն զչափն, զոր սահմանեն օրէնք բարեկամութ̄ ։ Ուր ուրեք դէպ լինի պաշտպանել կ̄մ ծառայել բարեկամի, անդ ոչ խորհին զվտանգ ընչից և կենաց ։ Ոչինչ տաժանք դժնդակ կարող է հանել 'ի բերանոյ յանցաւորի զանուն գործակցի իւրոյ 'ի չարիս ։ Նոյնպէս՝ յորժամ ոք թէպէտ և անծանօթ՝ զինէ 'ի պաշտպանութ̄ ուրուք, նա այնուհետև զնէ վ̄ն նր̄ ոչ միայն զինչս, այլ և եթէ հարկ լիցի՝ զկեանս ևս և զկին և զորդիս ։ Եւ ահա յայսմ՝ կամեցել ողորմիլ և բարերարել օտարի, ընտանիս իւրեանց անխրաւելին ։ Սիրեն զճշմարտութ̄ և զարդարութ̄․ վ̄յ կամակար հնազանդին օրինաց և վճռոյ, որ դատապարտէ զյանցանս․ զոր և ինքնեին խոստովան լինին ։ Հայրն համարձակ 'ի մահ դատապարտէ զորդի առանց ցուցանելոյ բնաւ զնշան բնական ողջուց և կարեկցութ̄․ Նոյնպէս և այրն զկին․ տէրն զծառայն․ ք̄զի ը̄ օրինաց Ճաբօնացւոց՝ սք̄ պարտապան են տալ համար վ̄ն յանցանաց որդւոց, կանանց և ծառայից իւրեանց․ յայն սակս ունին մահու չափ իշխանութ̄ 'ի վ̄ր նց̄ ։

Ծանր են և սակաւախօս, բայց մեծաբան և անապարծ ։ Կասկածոտ և ոխակալ և քինախնդիր յոյժ․ զի ոչ երբէք գիտեն մոռանալ զվնաս կրել յումեքէ․ այլ միշտ հետամուտ են գտանել ժամ դիպող 'ի հանել զվրէժ․ բայց ջանան ամ̄ իրօք պատրուակել զոխս, զոր կրեն 'ի սրտի․ հաշտ և անդորր ձևանան առաջի թշնամեացն․ քաղցրութ̄ խօսին ը̄ նմ̄․ և եթէ պէտք ինչ իցեն ծառայութիւնս ևս առնեն նց̄․ բայց միանգամայն և հնարս մեքենայեն վրիժուց հատուցման․ վ̄յ ասէ Կեմփեր, ո՛չ երբէք այնպէս երկնչելի է 'ի Ճաբօնացւոց, ո̄պ յորժամ հաշտ անդորր և խաղաղ երևեցուցանեն զանձինս ։ Եւ եթէ ոչ յաջողեսցի նց̄ ինքնին առնուլ զվրէժ, թողուն զայն կտակաւ որդւոց իւրեանց իբր պարտս 'ի հատուցանել ։ Զի բնութ̄ գազանաբարոյ են անգութ և անողորմ ոչ միայն առ օտարս, այլ և առ ընտանիս իւրեանց ․

եանց • խիստ և տմարդի առ օտարս և առ անաւագս • և արհամարհօղ օտար ազգաց • զի սակս ներտարրուցեալ ինքնահաճ ամբարտաւանութե, զամ̃ ազինս ծի առ անարգս նուաստս և արհամարհս ունին : Այսպիսի են բարք և սովորութիւնք Ճեաբօնացւոց, ը̃ գրելոյ Կեմփերայ • որ ը̃ ամս երկուս եկաց ՚ի Ճեաբօն • և երկիցս ը̃ դեսպանին հոլանտացւոց գնաց ՚ի յեդօվ արքայանիստ քղք Ճեաբօնայ՝ առ Թգ̃ր նց̃ :

Ը. Լեզու Ճեաբօնացւոց:

Կեմփեր հաստատէ, թէ լեզու Ճեաբօնացւոց է մայր լեզու • բայց այլք պնդեն թէ եղանէ ՚ի լեզուէն չինաց • եթէ զի կարի մօտաւոր է այնմ • ոճ և տառք սց̃ և տարազ գրելոյ ամենևին նման է նց̃ • զի և առ սոսա տառքն են նշանագիրք իրաց, զոր նշանակեն • վս̃յ անթիւ են տառք նց̃ ը̃ անհամար բազմութե իրաց : ՚Ի գրելն՝ վերուստ ՚ի վայր իջանեն ը̃ սովորութե չինաց • դասաւորելով զտառսն ոչ առ ժմեամբ, այլ ՚ի ներքոյ միմեանց • այս ինչ է միայն խտիր ը̃ գիրս չինաց և Ճեաբօնացւոց, զի Ճեաբօնացիք ունին մասնիկս, որք երբեմն նախադասին և երբեմն յետադասին բառից • զոր չունին չինացիք : Ըստ ասելոյ Կեմփերայ չունին զհնչումն Հ տառի • այլ փոխանակ նր̃ Ֆ, ասեն • և ամ̃ բառք նց̃ համառօտ են • կամ միավանկ կմ̃ երկավանկ, և սակաւք գտանին եռավանկք կմ̃ քառավանկք : Ասի թէ լեզու նց̃ մաքուր է, և յօդաւոր, և դիւրալուր օտարաց • այլ և ճոխ յոյժ ՚ի բառս մինչ վարել զայնոսիկ համեմատ ոչ միայն հասակի և իշխանութե խօսողաց և ունկնդրաց, այլ և առն և կնոջ : Նոյնպս̃ քաջայարմար է տաղաչափութեց և բանաստեղծութեց • վս̃յ ասեն թէ տաղաչափութիք նց̃ ունին զմանաւոր իմն վայելչութի և քաղցրութի • զոր առաւելապս̃ ՚ի թատերգութիւնս վարեն • քզ̃ի և Ճեաբօնացիք ունին սովորութի թատերգութեանս առնելոյ :

Բաց ՚ի հ̃րկ լեզուէ անտի, որով վարին ամ̃քն, ունին և այլ լեզու հին իբր գրաբառ • որ սրբազան համարեալ է առ նս̃ • զի ամ̃ աղօթք նց̃, և նախնի օրէնք՝ Ճունդ այնք, որք առ դեն նց̃ հային, ՚ի նոյն լեզու գրեալ են • զոր ոչ ոք ՚ի նց̃նէ իմանայ այժմ, և ոչ իսկ քուրմք • որք թարգմանս գիտ իւրեանց առեն զանձինս, և սուտ պարծին քաջ իմանալ զայն բարբառ վաղնջական :

Ժ. Ազնուք Ճեապօնացւոց ։

Առ սկզբնաւորութեան բնակչաց կղզեացն Ճեապօնայ՝ պէսպէս առասպելք աւանդին. զի ըստ տէլահարբեայ՝ արեւելեայք պատմեն թէ սկիզբն նոցա եղեւ 'ի Չինաց՝ զայս օրինակ ։ Մի ոմն յինքնակալաց անտի Չինաց ցանկացեալ գտանել դեղ անմահութեան կամ գէթ երկարելոյ զմարդկային կեանս, կացոյց արս իմաստունս եւ ներհունս 'ի բժշկութեան արհեստի 'ի խնդիր լինել այնմ անգիւտ դեղոյ ։ Յայնժամ մի ոմն 'ի գլխաւոր բժշկաց նորա, որ տաղտկացեալ էր յանողորմ բռնակալութենէ նորա, ամենայն պատճառաւ խորհեցաւ թափել զանձն 'ի լծոյ ծառայութեան նորա. վասն որոյ ասաց արքայի, թէ ինքն քաջ տեղեկացեալ ծանեաւ, եթէ դեղն զոր խնդրէր նա, գտանի 'ի մերձակայ կղզիս. որ եւ է բոյս ինչ այնչափ քնքուշ եւ փափուկ, զի առ 'ի պահել զնոյն զօրութիւն նորա եւ զազդուութիւն, հարկ է անմեղ եւ փափկաձեռն մանկանց քաղել զայն ։ Յայն սակս հրամանաւ նորին ինքնակալի ժողովեաց նա 300 տղայս եւ նոյնչափ աղջկունս, եւ էանց 'ի Նիփոն կղզի. որք մեծացեալ անդէն՝ լցին բնակչօք զկղզին ։ Զայս պատմութիւն կամ առասպել, ընդունին եւ Ճեապօնացիք. եւ ցուցանեն մինչեւ ցայսօր զՊուհէնգիամն, ուր հասին նոքա զառաջինն. եւ զտեղի բնակութեան նոցա. այլ եւ զմնացուածս ինչ աւերակաց տաճարի միոյ կառուցելոյ 'ի պատիւ եւ յանուն գլխաւորի նոցա. սակս մուծանելոյ նորա 'ի Ճեապօն զգիտութիւնս, զարհեստս եւ զքաղաքականութիւն Չինաց ։ Բայց ոչ ընդունին թէ սկզբնաւորութիւն իւրեանց եղեւ 'ի նոցանէ. քանզի 'ի ձեռն Ժամանակագրութեան ինքնակալաց իւրեանց՝ ցուցանեն, թէ ինքնակալն Չինաց, առ որով պատմի լեալ այն դիպուած, թագաւորեաց 453 ամօք զկնի Սինմու կամ Լինմու առաջնորդ ինքնակալին Ճեապօնայ. վասն որոյ եւ բազում դարուք յառաջ կղզիք իւրեանց լի էին բնակչօք ։ Քանզի եւ սոքա ըստ օրինակի Չինաց պնդեն լինել ինքեանց նախնագոյն քան զայլ ամենայն ազգս աշխարհի. ուստի եւ զժամանակագրութիւն իւրեանց ձգեն յառաջ քան հազարաւոր դարս, մինչեւ յառաջել եւ քան զարարչութիւն աշխարհի ։

Այլ որ առաւել հաւաստի երեւի 'ի պատմութիւնս նոցա, է այն, զոր ասեն թէ մի ոմն Սիննու կամ Սինմու անուն այր մեծազօր հիմնեաց զինքնակալութիւն նոցա 660 ամօք յառաջ քան զգալուստ Փրկչին մերոյ Յիսուսի. եւ զի անյայտ է տոհմն նորա, նմին իսկ Ճեապօնացիք [illegible] տուաւառասպելաւէր բարոյից իւրեանց՝ առեն մ՟ն նր՟ ծնել՟ 'ի կիսածոց կմ՟ գլոց, որք Ը՟ նախընթաց դարս յոլովս կառավարեցին զն՟ իւրեանց : Սոյն այս սիննու ոմ՟ և յաջորդք նր՟ կոչէին տայիր · յ՟ քհնյապետ · քղի Ը՟ Թգրական իշխանութե՟ ունէին և զքհնյապետական իշխանուն՟ որով Ըարձակ էր յոյժ իշխանութն՟ նց : Այլ զօրքն բովանդակ էին 'ի ձեռս միոյ գլխաւոր սպարապետի, զոր Գուպօ կոչէին · և քղի մեծ էր յոյժ իշխանութն՟ նր՟ · նմին իրի կարի զգուշաւորք էին տայիրք 'ի կացուցանել զոք յայն պաշտօն · և յառաւել ապահովութե՟ սովորաբար տային զայն երկ՟դ որդւոյ իւրեանց, յորժմ՟ բզմ՟ որդիք էին նց · զի զերեց որդի պահէին 'ի յաջորդուն՟ արքայական աթոռոյ : Ապա մի ոմն 'ի մեծ սպարապետաց անուն Ձերօզիմա անուն՝ 'ի յառնել խռովուն՟ իրիք և քաղաքական սրտմտ՟ 'ի ժողովրդեան, ժամ դիպօղ գըտեալ, Թօթափեաց զլուծ տայիրին · և յինքն գրաւել՟ զտրութն՟ գաւառաց ոմանց, արկ հիմն նոր ինքնակալութե՟ · և կոչեցաւ գուպօսամա · յ՟ ինքնակալ

տր՟ կմ՟ կայսր :

Իսկ 'ի ժԶ՟ դարուն զկնի ծննդեան փրկչին նս ինքն տայիրն առաւել նախանձայոյզ լեալ հոգևորական իշխանուե՟ իւրում, քն՟ քղքականին, որ ծանր էր և բազմավիշտ մինչդ 'ի սրտձեռս նոր ինքնակալին, ըզքղքական տնտեսուն՟ Ծին բաժանեաց 'ի բզմ՟ կուսակալութիւս · կացուցեալ նց կուսակալս զմեծամեծս տրուն՟ իւրոյ · յինքն պահելով զգերագոյն իշխանուն՟ 'ի վր՟ ամյն : Յայնմանէ ծագեցին մեծամեծ երկպառակտունք և ներքին պտզմունք և ապստամբութիք Ըդէմ տայիրին · զոր առ սակաւ սակաւ զլխովին մերկացուցին 'ի քղքական իշխանութէ · որով միապետական տրութն՟ Ճեաբօնայ փոխեցաւ 'ի բազմապետութե՟ · զի իւրաքանչիւր կուսակալ եղև ինքնիշ-

խան տր՟ յիւրում գւ՟ռի :

Յայսմ վիճակի էր Ճեաբօն յորժամ զառաջինն հասին անդր փորդուգալք · Ը՟ որս և սր՟ն Ֆրանչիսկոս քսաւերեան առաջին առաքեալ Ճեաբօնացւոց : Ապա 'ի ժԷ՟ դարուն եայիօսամա՝ մի 'ի նախասացեալ գուպօ սամա կոչեցեալ սպարապետաց բռնացեալ 'ի վր՟ այլոց կուսակալաց, յինքն կալաւ զքղքական տրուն՟ համօրէն Ճեաբօնայ, որով բազմապետութիւն վերստին փոխեցաւ 'ի միապետուն՟ · և քղքական և հոգեւոր իշխանութիք բաժանեցան յերկու ինքնակալս · տայիրին թողաւ լոկ հոգևորական իշխանութիւն · Ը՟

նմին տուեալ նմա և մեաքօ վաղնջական աթոռանիստ թագաւորք նորա հանդերձ շրջակայ վիճակաւ. իսկ գուպօ սամա հաստատեաց զաթոռ իւր 'ի յեդով քաղաք: Զայսու ժամու սկսան դժնդակ հալածմունք ընդդէմ նորածաղիկ քրիստոնէից Ճեաբօնայ. որ և ձգեցաւ դրեթէ ընդ ամս հարիւր. մինչև խափան սպառ բարձան 'ի Ճեաբօնայ հետք քրիստոնէութեան, որպէս ստորև 'ի ճառս կրօնի նորա ունիմք ասել:

Այլ յայսմ վայրի 'ի դէպ վարկանիմ համառօտիւ իմն ստորագրել զհանգամանս տայիրին: Արդ՝ սա պարծի զանձնէ սերեալ յաստուածոց կամ 'ի դից. վասնորոյ և գեր քան զմարդ համարեալ է 'ի ժողովրդենէ. և աստուածավայել պատուով պատուեալ 'ի նոցանէ: Անարժան համարի անձին, և պղծութիւն գերագոյն սրբութեան իւրոյ դնէ թէ ծագիւ ոտին հպիլ 'ի գետին կամ բացօթեայ շրջիլ ընդ արեգակամբ. այլ յորժամ երթայ ուրեք, բազմի 'ի գահաւորակ մեծաշուք, և սպասաւորք նորա յուսս բարձեալ տանին զնա: Ոչ երբեք ինքնին թոյլ տայ փոքրել զհերս և զմօրուս. և ոչ զեղնգունս հատանել. քանզի այնչափ 'ի պատուի ունի զմարմին իւր, մինչ նաև զայն աւելորդս իբր սրբազան նշխարս՝ չհամարի արժան 'ի բաց հատանել: Բայց քանզի նեղի բազում անգամ յայնցանէ, նմին իրի սովորութիւն եղև զի յորժամ ինքն ննջէ, սպասաւորք նորա հատանեն զեղնգունս. և փոքրեն զհերս և զմօրուս. վասն զի զոր ինչ առնեն նմա յայնժամ, այն ամենայն ակամայ համարեալ է և գողունի. թէպէտ նա բազում անգամ արթուն է, այլ կեղծէ 'ի քուն լինել:

Յամենայն օր 'ի նոր անօթս մատուցանեն նմա կերակուր. և զկնի ճաշոյն առ ժամայն խորտակեն զամենայն անօթս, որք միանգամ մատուցան 'ի սեղան նորա. որք և յայն սակս են 'ի հնրկ կաւոյ՝ վասնորոյ և դիւրագին այլ մաքուր. ապա թէ ոչ՝ անտանելի լինէին ծախքն. և ոչ ոք յՃաբոնաց իշխէ բնաւ ուտել կամ ըմպել յանօթոց անտի. զի ըստ մտաց աւելորդապաշտութեան իւրեանց՝ հաստատեալ ունին 'ի միտս, թէ նոյնժամայն ելունդք վնասակարք ելանեն 'ի բերան և 'ի կոկորդս: Նոյնպէս և զհանդերձս, որք են երկու մետաքսեայ պարեգօտք մի կարմիր, և միւս ևս սեաւ. և վերարկու մետաքսեայ նրբաթել. և գլխարկ ըստ սովորութեան եւրոպացւոց՝ յամենայն օր փոխէ. և միշտ նորս առնու. զոր ըստ նմին օրինակի՝ ոչ ոք առանց յայտնի հրամանի կամ թոյլտուութեան նորա համարձակի արկանել զանձամբ, երկուցեալ 'ի վաղահաս դիցն պատու_

հաս_

հասէ · ջրղի ոմն լինչ, որ միանգամ ամբարձեալ 'ի մարմին ն՟ր · որ և նուիրեալ համարեալ է:

Յառաջին ժ՟մկս սովորութիւն ունէր յոյժ առաւօտու երբոր ժամս չորս բազմիլ 'ի գահոյս իւր Թագ 'ի գլուխ անշարժ ամենևին: Զայն անշարժութիւն ունէին Ճեաբօնացիք երբ գուշակ անդորրութեան և խաղաղութեան տ՟րութեան իւրեանց · իսկ եթէ ը՟ բերման իմն շարժէր, կ՟մ դարձուցանէր զաչս 'ի կողմն իրուք միոյ, ահ պատէր զնմանին՝ սուր, և սով, և հրդեհ, և սասանութիւն երկրի և այլ մեծ ինչ պատուհաս կարծելով գուշակել: Այլ յետոյ հնարեցաք իմն զերծուցին տայիրք զանձինս 'ի գժուարընական սովորութենէ անտի · զի այժմ փոխ ինքեանց՝ դնեն 'ի վ՟ր գահոյից լոկ զԹագն · զի հաւանեցուցին ժողովրդեան, թէ անշարժութիւն թագին՝ որ առաւել ապահով է՝ անդ 'ի գահոյս ընդոյն ներգործէ, զոր ինչ անշարժութիւն տայիրին: Սոյն այս տայիր ը՟ սովորութեան նախորդաց իւրոց առնու երկոտասան կանայս · Թող զհարճս · և որդիք ծնեալք 'ի սոցանէ՝ յաջորդեն զաթոռ ն՟ր · զի 'ի մեռանիլ իւրում՝ իշխանք արքունեաց ն՟ր, որք առհասարակ եկեղեցական են, վճռեն նստուցանեն զնա, որում անկ է իրաւունք յաջորդութեան: Իսկ եթէ լիցեն ն՟ր բազում որդիք յայլևայլ կանանց, որք ունիցին իրաւունս յաջորդութեան, յայնժամ, զի մի խռովութիւն ինչ ծագեսցի 'ի պատճառս ն՟ց · ո՟պ ծագեցաւ երբեմն, որ և վրդովեաց զբոլոր տէրութիւն, զնմին նստուցանեն միմեանց զկնի երկար կ՟մ համառօտ ը՟ յաւէտ և նուազ իրաւանց, զոր ունին իւրաքանչիւրն: Եւ երբեմն նա ինքն տայիրն առ կենդանութեամբ իւրով սահմանէ զկարգ և զչափ ժմկի թգ՟րելոյ որդւոց իւրոց, 'ի հաճեցուցանել զմարս նոցին: Բայց այս փոփոխութիւնք ամենևին ծածուկ են 'ի ժողովրդենէ, մինչև կարգ յաջորդութեան հասցէ առ այն, որում անկ է հաստատութ՟բ տիրել:

Սովորութիւն է 'ի Ճեաբօն, զի ինքնակալն 'ի հինգ կ՟մ 'ի վեց ամս միանգամ բազմամբոխ արամբք և մեծաշուք հանդիսիւ երթայ յայցելութիւն տայիրին 'ի յեդովայ մինչև 'ի Մէակօ իբր 125 մղոն ճանապ՟հ · և ընծայէ նմ՟ զհպատակութիւն և զհնազանդութիւն, տայ և պարգևս մեծամեծս · նոյնպէս և տայիրն փոխարէն ընծայէ նմ՟ պարգևս արքայավայելս · այլև զանազան վաճառական անօթս ապակւոյ: Այլ այս հպատակութիւն է լոկ արտաքին և առ երևոյթ իմն յարգութեան · զի երբեք ոչ ինչ իշխանութիւն ունի տայիրն 'ի վ՟ր ինքնակալին. և ոչ 'ի վ̃ր այլ ք̃ղքական իրաց. զի այժմ յետ տիրելոյ աշխարհական ինքնակալի, բովանդակ իշխանութեն տայիրին ամփոփել̃ է 'ի հոգևորս ևեթ. ո̃ր դասակարգել զարս երևելիս 'ի կարգս դից, կմ̃ ա̃ծացուցանել. կացուցանել մեհենական պաշտօնեայս 'ի զարմէ տայիրից, որք բազմացել̃ են յոյժ. որք և ունին սեփական զգեստ, որով զնզ̃նին յաշխարհականաց. այլև շնորհել անուանս պատուոյ, տալ զհոգևոր դասս ևն̃:

ԺԹ. Կառավարութ̃ Ճեաբօնայ:

Քաղաքական կառավարութ̃ն Ճեաբօնայ է միապետական. ինքնակալ նր̃ է ամենևին անկախ և ինքնիշխան. զոր՝ ոմ̃ն տատյաք, կոչեն Գուպօ սամա. և ա̃ծավայել պատուով պաշտեն զնա: Յորժամ կուսակալք և այլ մեծամեծ իշխանք երկրին յանդիման լինին նմ̃, յափոիթերս մտանեն 'ի սրահ մի մեծ. ուր նա ինքն ինքնակալն բազմեալ նստի 'ի մթին վերնատան յետ կոյս վանդակապատ պատուհանի. և ոչ երբեք ինքնին անմիջապ̃ խօսի ինչ ը̃ նս̃, այլ միջնորդութ̃բ գլխաւոր իշխանի միոյ, զոր Մագին պինկօ կոչեն. որ է իբրև երկ̃դ արքայի. զի անվայել համարին, թէ բարբառ ինքնակալին հասցէ անմիջապէս 'ի լսելիս ստրկաց իւրոց. զոր իբր պատգամ ա̃ծային ունին: Նոյնպ̃ս յորժամ 'ի բաց ելանեն յերեսաց արքայի՝ քառոտանի, և զգէմս խոնարհեալ ունելով մինչ 'ի գետին՝ յետս յետս գնան զօրէն խեցգետնոյ՝ մինչև 'ի դուռն մեծի սրահին:

Այն օրինակ յանդիման լինին նմ̃ և դեսպանք հոլանտացւոց. ը̃ միում 'ի նց̃է դոաւ և կեմփեր. որ մանրամասն ստորագրէ զճնպ̃հորդութ̃ իւրեանց, զոր 'ի տեսիմայ կղզւոյն արարին մինչև 'ի յեդով արքայանիստ քղ̃ք. և զհանդէսն, որով մուծին զնս̃ առաջի ինքնակալին. և զողջայական հարցմունս, զոր արարին նց̃, զկնի աւարտելոյ բանից դեսպանութե̃. և զանարգանս, զոր ցուցին անդ նց̃: Քանզի պատմէ նա ինքն կեմփեր, թէ յետ աւարտելոյ բանից դեսպանութե̃. կամեցել̃ կատարել զկանացի բաղձանս կանանց և օրիորդաց ինքնակալին, որք ը̃ նմին ինքնակալի եկին 'ի զննին հոլանտացւոց, բազմեալ յետ կոյս վանդակաց. 'ի բաց առին զանաւ վերարկուս 'ի թիկանց հոլանտացւոց, զոր ունէին արկեալ զանձամբք ը̃ սովորութե̃ Ճեաբօնացւոց. ոմ̃ զի երևեացի ձև զգեստուց նց · և հրամայեցին նոցա յոտն կալ, զի յոտին 'ի գուշս էին · ձեռնել զկայ առնուլ · ողջունել զմիմեանս ըս սովորութեան եւրոպացւոց · ը ծամանուլ · ձևանալ զօրէն արբեցելոց · խօսել 'ի լեզու ճաբօնացւոց խծղծաբար թոթովելով · ընթեռնուլ 'ի բարբառ հոլանտացւոց · երգել, կաքաւել ևն · եւ ասէ կեմփեր 'ի կաքաւել խմում, երգէր ցուցս սիրոյ 'ի բարբառ գերմանացւոց · և այլ սոցին նման խեղկատակութիս հրամայեցին նց առնել 'ի զբօսանս և 'ի զուարճութն կանանց և օրիորդաց ինքնակալին, և այլոց իշխանաց, որք կային անդ · միայն դեսպան նց զերծ գտաւ յայսպիսի անարգալից միմոսական խենեշութեց · որ և ցուցանէր զանձն ահաձեռն և դժգմնել յայտ ը այնպիսի նախատինս և արհամարհանս, զոր առնէին իւրոց պաշտօնատարաց · այլ ճաբօնացիք առ ոչինչ դրէին զնորայն դժկամակութն և զտրտմութն : Զայս յայտ վայրի յիշատակեցաք 'ի ցուցանել զգնացս, որով զնան ճաբօնացիք ը հոլանտացիս · զորս՝ ոպ յայտ է, առ վատթարագոյնս ունին, ք զյետին ստրուկս իւրեանց : Եւ այս 'ի հատուցումն քաջագործութն իւրեանց · որով արարին մշտնջենական վճռով տարագիր լինել 'ի ճաբօնոյ այլոց ամ ազգաց քրիստոնէից : Այլ մեք անդրէն 'ի կարգ բանից մերոց մատիցուք:

Արդ՝ ինքնակալն ճաբօնայ է գերագոյն տր երկրին · և ունի ը իւրև զինն պաշտօնատարութիս · և ատեանս կմ ժողովս յարքունիս իւր · և նոքօք անմիջապէս կառավարէ զն տրութն իւրոյ : 'Ի մէջ արքունի պաշտօնատարաց առաջին է՝ նախայիշատակեալ մագինօ պինկօ կոչեցեալ իշխանն · որ է երկրդ զկնի ինքնակալին · ոպ եպարքոսն օսմանցւոց թգրութն · 'ի ձեռաց որ̃ անցանեն ամ գլխաւոր իրողութիք թագաւորութն : Երկրդն է մեծ իշխանն, որ կառավարէ զարտաքին իրողութիս : Եւ երրդն է փաստաբանն յեդով քղքի : Նոյնպս և 'ի ժողովս կմ յատեանս գըլխաւորքն են երեք · որք կոչին ժողով կմ ատեան գերագոյն · զոր կացուցանեն հինգ նախարարք · ժողով չորից ստորակարգեալ խորհրդականաց · և ժողով իշխանաց որ տեղեաց · որոց գործ է դատել և սահմանել զվէճս և զհկռկութիս, որք դիպին 'ի քղքական և 'ի մեհենական իրողութիս : Իսկ յիրս կրօնի գլխաւոր իշխան և իբր երկրդ ինքնակալ է տայիրն · այն է՝ քրմապետն, որ ունի ը իւրև զանհամար պաշ-

տօոճնատարս մեհենականս: Բայց 'ի սմ՟նէ յա՟մ գ՟ւս են առանձին կուսակալք. որոց իշխանութ՟ ժառանգութ՟ անցանէ յորդւոց որդիս: Նոյնպէս և 'ի վեց կայսերական ք՟ղքս են երկու երկու գլխաւոր քաղաքապետք զորս Գոնսամա կոչեն, բայց 'ի Նանկասաք ք՟ղքէն, ուր 'ի 1688 յաւելաւ և երր՟դ ք՟ղքապետ յաւաւելուլ զգուշութ՟ օտարականաց սակս վաճառականութ՟: Իսկ սք՟ փոփոխակի կառավարեն զք՟ղքս իւրեանց. և ունին ը՟ ձեռամբ բզ՟մ պաշտօնեայս ընտրելս և կայուցեալս յինքնակալէն յօգնութ՟ նց՟. միանգամայն և 'ի լրտեսել զա՟մ գնացս նց՟: Քանզի ինքնակալք Ճեաբօնայ միշտ 'ի կասկածանս գոլով ապստամբելոյ ժողովրդեան. զի և ինքեանք ապստամբութ՟ թգ՟րեցին, յափշտակելով 'ի ձեռաց տայիրին զք՟ղքական իշխանութիւն. վ՟յ ամենազգաստ արթնութ՟ հսկեն յարաժամ 'ի վ՟ր կուսակալաց, իշխանաց և մեծամեծաց. և բիւր հնարս գործեն 'ի չմեծանալ նց՟ ընչիւք և զօրանալ. միշտ պ՟տճառս տալով նց՟ առնել ծախս մեծամեծս: Զի ա՟մ գլխաւոր կուսակալք և ք՟ղքապետք պարտաւորեալ են ամի ամի երթալ 'ի յեդով արքայանիստ ք՟ղք անհամար պաշտօնէիւք և մեծահանդէս շքով և մնալ անդ ը՟ ամիս վեց. իսկ այլ իշխանք և մեծամեծք յերկուս կամ գէթ յերիս ամս միանգամ. յորում անբաւ գանձս վատնեն: Բայց նախ ք՟ զմտանել նց՟ 'ի սահմանս արքայանիստ ք՟ղքի, քննեն զա՟մ ինչս նց՟ արքունի սպասաւորք. որոց մեծապէս պատուիրեալ է չթողուլ զէնս բնաւ մուծանել 'ի ք՟ղք անդր: Կանայք և որդիք նց՟ սովորաբար 'ի յեդով բնակին մեծապ՟ պատուով և բզ՟մ շքով, զոր ոչ կարեն նուազեցուցանել: Բզ՟մ անգամ ինքնակալք ձեռն արկանեն 'ի մեծամեծ գործս բազմածախս 'ի պէտս հ՟նրկաց օգտի, և մեղմով իմն զծախսն 'ի վ՟ր իշխանաց արկանեն: Տան նց՟ կանայս յօրիորդաց անտի, որք յարքունիս են սա 'ի մեծագոյն ծախս արկանելոյ զն՟ս. ք՟ղի հարկաւորին վ՟ս նց՟ շինել մեծամեծ ապարանս. և տալ նոցա յընկերութ՟ օրիորդս բզ՟մս և աղախնայս 'ի սպասաւորութ՟: Իսկ երբեմն կամեցեալ ինքնակալին մեծարել զոք յիշխանաց իւրոց, երթայ 'ի ճաշ 'ի տուն նր՟: Արդարև մեծ է այս պատիւ. բայց նոյնչափ մեծ են և ծախք. մինչև սպառել զինչս եղկելի իշխանին. վ՟ս զի որ ինչ ազնուագոյն է և սակաւագիւտ և մեծագին՝ զայն հարկ է հանել 'ի սեղան մեծի արքային: Ա՟ս ահա պատմէ սովոն, թէ իշխան մի սիրելի արքայի դամնակօսայ առաքեաց նմ 'ի պարգեւ երկու եւեթ ձուկն , զոր Ճեռաբօնացիք Պուագ կոչեն . որ է տեսակ մի ազնիւ եւ սակաւագիւտ ձկան . զոր գնեաց ը՟ 12000 վէնէտկեան լիրէի : Յայսմանէ մարթ է 'ի միտ առնուլ , թէ որչափ իցեն ծախքն այնպիսի մեծի սեղանոյ : Սակայն եւ այնպ՟ յօժարամիտ առնեն զայնչափ ծախս սակս մեծի փառաց , որ լինի նոցա գալստեամբ արքային 'ի տունս իւրեանց :

Եւ ես պատմէ տեղանչարբէ , թէ յորժամ ոք 'ի մեծամեծ իշխանաց չինէ նոր ապարանս , երեք ամօք յառաջ հրաւիրէ զինքնակալն 'ի ճաշ . եւ յայն երիս ամս բովանդակ պատաղի 'ի պատրաստուն՟ ընդունելուն՟ ինքնակալին . որ եւ բաց 'ի սովորական մեծ գրանէ , չինէ եւ այլ մասնաւոր դուռն մեծ եւ հոյակապ քանդակազարդ եւ ոսկեզօծ . ը՟ որ միայն ինքնակալն մտանէ . եւ այնուհետեւ փակել՟ մնայ միշտ : Զայս եւ զայլ սոցին նման սովորութիւս ինքնակալք հնարեցին 'ի վատնումն ընչից իշխանաց եւ մեծամեծաց երկրին . զի մի գանձ բզմ՟ կուտել՟ յապստամբութ՟ մտաբերիցեն : Որ՟ վն՟ սորին պճռի՟ ը՟ պատմելոյ սաղմօնի՝ արս իբր հարիւր հազար փոփոխակի միշտ զբաղեցուցանէ 'ի չինել ապարանս , եւ այլ հնրկաց՟ չինուածս . յը՟լայնել եւ 'ի հորդել զհնրկաց՟ ճնպրհս՟ , եւ յայլ այսպիսի գործառնութիւս 'ի պէտս հնրկաց՟ չինութե՟ : Եւ ես ը՟ ամ՟ տեղիս ինքնակալք Ճեռաբօնայ ունէին լուեալ 'ի զննել զամ՟ գնացս իշխանաց եւ մեծամեծաց , եւ 'ի գիտել զխորհուրդս նց՟ : Եւ գուն գործեն ամ՟ հնարիւք քակել զնոսա 'ի միմեանց . եւ չտալ տեղի նց՟ միաբանուն՟ եւ դաշնադրութե՟ ինչ առնելոյ ը՟ միմեանս : Եւ զի միանգամայն առացից՝ ջանան միշտ նկուն եւ նուաճեալս ը՟ հնազանդութ՟ իւրեանց ունել զնս՟ : Զսոյն զգուշուն՟ ունին եւ 'ի վր՟ տայերին . առ որով կարգեալ են սուէար դունդ մի զօրաց ը՟ պատրուակաւ մեծարանաց եւ պահպանութե՟ անձին նր՟ . բայց իսկական վախճան նց՟ է նահանջ արկանել նց՟ , զի մի երբեք փորձեսցեն անդրէն 'ի ձեռս բերել զառաջին անկապար իշխանութե՟ իւրեանց : Այսչափ ինչ վն՟ ը՟հանրական կառավարուն՟ Ճեռաբօնայ . արդ՝ ասասցուք ինչ եւ վն՟ մասնաւոր կառավարուն՟ ջղքաց :

Որպ՟ 'ի վերոյ յիշատակեցաք՝ կայսերական ջղքք ունին երկու երկու գլխաւոր ջղքապետս . իսկ նանկասագ ունի զերիս . եւ ը՟ նս՟ այլ եւս բզմ՟ իշխանս եւ պաշտօնատարս մի ջ՟ զմի վերադոյն՝ կարգեալս 'ի պէտս

զնդն

զնզն խրողունց։ Նոյնպէս և այլ ամ քըրմք բաց 'ի գլխաւոր քըրմապետաց ունին և այլ զնզն վերակացուս կարգեալս 'ի վ՛ր մասնաւոր խրաց։ Զի իւրաքանչիւր Թաղ ունի իւր սեփական վերակացու որ կոչի օգդօնիա․ որ գործ է խնամ ունել, զի գիշերային սպահպանութիւնք կատարեսցին․ և ամ պատուէրք և կանոնադրութիւնք քըրմապետաց և գլխաւոր պաշտօնատարաց անվրէպ 'ի գլուխ տարցին։ Ունի զցուցակ անուանց բնակչաց իւրաքանչիւր տան Թաղի իւրոյ․ որպ և այնոցիկ, որք ծնանին և որք մեռանին․ որք ամուսնանան․ որք փոխեն զբնակութի իւրեանց յայլ Թաղ․ որք երթեալ են 'ի ճնպհ, հանդերձ ամ պարագայիւք աստիճանի արուեստի և կրօնի։ Եթէ ծագեսցի վէճ ինչ 'ի մէջ նց, կոչէ զնս առաջի իւր․ և առաջադրէ նց զեղանակ իմն միաբանութն և հաշտութն․ այլ ոչ կարէ բռնադատել զնս յանձն առնուլ զայն։ Պատժէ զթեթև յանցանս բանտարկութբ կմ այլ ինչ պատժօք․ բայց զերևելի յանցաւորս տայ ըմբռնել․ և զյանցանս նց հանէ յատեան վերագոյն դատաւորաց։ Եւ զի միանգամայն տուգից՝ պարտական է տալ համար ամի, որ ինչ վնաս գործի 'ի Թաղի իւրում։

Սա ունի երիս փոխանորդս կմ օգնականս։ Առաջինն է դպիր․ որոյ է հրատարակել զպատուէրս նր․ տալ վկայականս և գիրս հրամանի 'ի փոխել զբնակութի այլուր կմ երթալ 'ի ճնպհ․ առ սմա են մատեանք, յորս նշանակեալ կան անուանք բնակչաց այնր Թաղի և ամ ինչք նց։ Երկրորդն է գանձապետ, զոր Գոքուրա քաու կոչեն․ իմ պահապան ականց․ զի սա պահէ զհսրկաց դրամս այնր Թաղի։ Իսկ երրորդն կոչի Նիդսիեօսի․ իմ լրտես․ որոյ գործ է ծանուցանել օգդօնային թէ ոյք ծնանին և ոյք մեռանին․ ոյք փոխեն զբնակութի և զայլ ամ, որ ինչ պատկանի առ օգդօնայն։ 'Ի ձեռն սր անցանեն ամ մուրհակք աղերսանաց իմ արզուհալք, և վկայականք։ Սա հաւաքէ զդրամս, զոր Թաղն իւր պարտական է տալ քըրմապետաց և գլխաւոր պաշտօնատարաց։ Յամ գիշերի երկիցս շրջին պահապանք յիւրաքանչիւր Թաղս․ և ը գիշերն ողջոյն հարկանեն զերկուփայտս ը միմեանս․ որ է նշանակ մի կոչնակի՝ 'ի նշան արթնութն․ բայց շառաչիւն նր ոչ սակաւ անհանգիստ առնէ զբնակիչս։ Այլ փողոցք ունին դրունս․ զորս գիշերային փակեն, բայց անգամ և 'ի ցերեկի ասկս որ և է թեթև պտճառի․ որպ ահա 'ի Նանկասաք ջողք միշտ ամրափակեն զդրունս յելանել անտի օտարական նաւուց. զի մի ոք 'ի բնակչաց փախիցէ. և այնչափ խիստ է այս զգուշութիւն, զի մինչև անյայտ լիցի նաւն յաչաց տեսու̃է, յա̃մ թաղս առնեն զճիշտ քննութ̃. և նախայիշատակեալ լրտեսն յանուանէ կոչէ զիւրաքանչիւրս 'ի բնակչաց. որք պարտական են պ̃տխնել: Եթէ ոք յայնպիսում ժամի պէտս ունիցի վ̃ն կարևոր ինչ գործոյ երթալ յայլ թաղ, առնու վկայական գիր յօդդօնայէ. որ ը̃ վկայական գրոյն տայ նմ̃ և ուղեկից զմի 'ի պահապանաց թաղի իւրոյ, զի մի դաւ ինչ գործեսցէ: Եւ յորժամ ոք կամի փոխել զբնակութիւն յայլ թաղ, պարտ է նմ̃ նախ առնուլ 'ի բնակչաց թաղի իւրոյ զվկայական գիրս՝ զկենաց և զվարուց իւրոց և զընտանեաց. և զայլ գիր արձակման, և տալ զայնոսիկ օդդօնայի թաղին՝ ուր կամի երթալ հանդերձ մուրհակաւ աղերսանաց. ցուցանելով 'ի նմ̃ զպատճառս որոյ վ̃ն կամի փոխել զբնակութիւն իւր. ը̃ նմին մատուցանէ նմ̃ սակաւ ինչ ձուկն 'ի պարգև: Իսկ օդդօնայն ընկալեալ զհաւանութի̃ թաղի իւրոյ, (զոր երբեմն զլանան սակս մոլեկան և գայթակղեցուցիչ վարուց նր̃) ընդունի զնա ընդ պաշտպանութ̃ իւրով: Այս նա ինքն նոր բնակիչն պարտական է առնել ճաշ խմբին, որոյ եղև ինքն անդամ. զի իւրաքանչիւր թաղ բաժանեալ է 'ի զն̃զն խումբս: Եւ եթէ կամիցի վաճառել զառաջին տուն իւր, պարտ է նմ̃ նախ առնուլ զհաւանութի̃ ամ̃ շրջակայ դրացեաց տան իւրոյ. ք̃զի կարող են նք̃ արդելուլ զգնողն, զորմէ համբաւ չար հնչիցէ:

Յորժամ ոք հանդերձեալ է երթալ ուրեք 'ի ճնփ̃հ առնու 'ի գլխոյ խմբի իւրոյ կմ̃ 'ի տանուտ̃նէ, եթէ բնակի 'ի տան 'ի վարձու կալեալ՝ վկայական գիրս. յորում նշանակի անունն և մականունն և թաղն բնակութե̃ իւրոյ, և տեղին ուր երթայ, և գործն վ̃ որոյ երթայ, և չափ ժամու ճնփ̃հորդութե̃ իւրոյ. ուրում աստորագրեն բզ̃մք 'ի դատաւորաց քաղաքին: Յորժամ կռիւ ինչ ծագէ 'ի մէջ բնակչաց թաղի և-միք, դրացիքն պարտական են խաղաղացուցանել զնս̃. իսկ եթէ մարդասպանութի̃ դիպեսցի, յայնժամ ոչ միայն մարդասպանն 'ի մահ դատապարտի, թէպէտ և լոկ 'ի պաշտպանութի̃ անձին սպանեալ իցէ, այլև բնակիչք երից տանց առաւել մօտաւորաց տեղւոյն սպանութե̃, բանտարգել լինին 'ի տունս իւեանց ը̃ բզ̃մ ամիսս, ամրափակեալ զդրունս և զպատուհանս: Իսկ այլ բնակիչք այնր թաղի դատապարտէին 'ի գործ արքունի ծառայութեան երկար կամ համառօտ, ըստ յաւէտ և նուազ անհոգութեան 'ի խափանել զայն սպանութեն. և պետք կամ վերակացուք Թաղին խստագոյնս պատժին: Նոյնպէս ընդ պատժով գլխապարտութեան արգելեալ է անդ սուր հանել. վասնզի եթէ ոք 'ի կռուել ընդ ումեք՝ հանցէ սուր, թէպէտ և ոչ մերձեցուսցէ զսուրն 'ի թշնամին, սակայն և այնպէս մահապարտ է: Ունին և այլ զինուորք խիստ օրէնս և սովորութիւնս. որք վասն չնչին յանցանաց 'ի մահ դատապարտեն: Իսկ սովորական պատիժք մահու Ճէաբօնացւոց են հերձումն որովայնի, որ է պատիժ մեծամեծաց. խաչ՝ որ թուի լինել 'ի նախատինս քրիստոնէութեան. հուր. գլխատումն. և անդամ անդամ յօշել, կապել ընդ ձետ ձիոյ: Բայց վասն քրիստոնէից հնարեցին և այլ ազգի ազգի դժնդակ տանջանս առնել քան զնախնի գազանաբարոյ հալածիչս 'ի քրիստոս հաւատացելոց:

ԺԸ. Կնիք. Մուտք. և Զօրք Ճէաբօնացւոց:

Ըստ ասելոյ հոլանդացւոց, որք յաճախեն 'ի Ճէաբօն, կնիք ինքնակալի նոցա է վահան ձուաձև գեղին ոսկեփայլ. և 'ի վերայ նորա են վեց արծաթափայլ աստեղք ցրիւ. ունելով շուրջանակի առ 'ի զարդ ոսկի կեռս կամ ծիրս: Իսկ այլք ասեն թէ են երեք մարդկային գլուխք արծաթիք 'ի վերայ սեաւ ենթակայի: Տարեկան մուտք այսր ինքնակալութեան 'ի մաքսից, 'ի բաժից, 'ի հարկաց և յայլ ամենայն իրաց՝ մեծ է յոյժ, զի թէ արժան իցէ հաւատալ՝ հասանէ ց72,727,272 ոսկի. որ է եօթանասուն և երկու միլիոն եօթն հարիւր քսան և եօթն հազար երկու հարիւր եօթանասուն և երկու ոսկի. զոր ոմանք և ևս առաւելուն: Իսկ դրամք նոցա, զորս յերկս տեղիս ևեթ հատանեն. որ է 'ի Թէտօ. 'ի Մեաքօ, և 'ի սարվուկայ՝ պէսպէս են: Յոսկի դրամս՝ մեծագոյնն, զոր օպան կոչեն՝ է ձուաձև և ունի չորս կնիքս տայիրայ և Թագաւորաց. որ արժէ իբր ԺԷ վենետիկեան ոսկի: Իսկ յարծաթի դրամսն, գլխաւորն է գօպանկ կոչեցեալ դրամն. որոյ յարգ կամ արժէք է իբր հինգ դալեր կամ զարազուշ: Բայց 'ի դրամոց աստի վարեն և բակլայաձև և ձողաձև կտորակս արծաթոյ, որք ունին փոքրիկ կնիքս 'ի վերայ. զորս կշռով տան միմեանց: Ունին և պղնձի դրամս, զորս Սէննի կոչեն. որք ունելով քառակուսի ծակ 'ի մէջն, անցուցանեն զայնս ընդ թել:

Ըստ Ճախուն տարեկան մտից ինքնակալին Ճեաբօնաց՝ մեծ է և զինուորական զօրութիւն նորա. զի ասի թէ թիւ թոշակաւոր զօրացն նորա է հարիւր հազար հետևակաց, և քսան հազար հեծելոց: Այլ բաց 'ի սոցանէ կուսակալք և իշխանք տանն միանգամայն պարտապան են տալ ինքնակալին 30800 հետևակս. և 380800 հեծեալս: Սոքա առհասարակ բաժանեալ են յայլ և այլ խումբս և գունդս. որք 'ի հնգեակս, յերեսնաւորս, 'ի հարիւրաւորս, յերկերիւրս, 'ի հազարաւորս են. և ունին զանազան զօրապետս և զօրագլուխս մի քան զմի մեծ. և 'ի վերայ ամենայն է մի ոմն գերագոյն սպարապետ: Զէնք հետևակ զօրաց են սաղաւարտ, վահան, երկու թուր, մի սուին և ատրճան, այն է՝ թիւֆէնկ: Իսկ հեծելոց յոտից մինչև 'ի գլուխ զրահաւոր են, և ունին ատրճանակ. այն է՝ փիշտով, նետ, նիզակ և թուր: Ունին և թնդանօթս՝ այսինքն թօփս. զորս եւրոպացիք մուծին առ նոսա. որպէս և զայլ հրաշէնս: Այսչափ են սովորական զօրք ինքնակալին Ճեաբօնացւոց. սակայն եթէ հարկ ինչ լիցի, կարօղ է 'ի սուղ ժամկի հանել այլևս անհամար զօրս քաջամարտս, քանզի որպէս 'ի վերոյ նշանակեցաք, Ճեաբօնայցիք առհասարակ 'ի մանկութենէ վարժին 'ի զինուորութեան. զորս յայն սակս մարթ է կոչել զինուորս 'ի ծնէ, որք և այնչափ յօժարեալ են 'ի զէն, զի և 'ի գիշերի զսուր իւրեանց առ մահճօք դնեն. յոր առ դոյզն ինչ պատճառի վաղվաղակի ձեռն արկանեն. վասնորոյ եթէ չէր արգելեալ ընդ պատժովք գլխապարտութեան սուր հանել, անդամարդասպանութեանք լինէին 'ի Ճեաբօն:

ժդ. Կրօն Ճեաբօնացւոց:

Սոքա առհասարակ կռապաշտ են. որք ըստ նախնի յունաց և հռովմայեցւոց բաց 'ի բնիկ աստուծոց իւրեանց, պաշտեն և զայլ աստուածս կամ կուռս օտարոտիս ըստ հաճոյից և ըստ առանձնական շահու իւրեանց: Իսկ 'ի պատճառս այնց զանազան աստուծոյ՝ զանազան աղանդք ծագեցին առ նոսա. այն մինչև ցերկոտասան. զորս ըստ սովորութեան մարթ է բովանդակել յերիս գլխաւորս: Առաջինն կոչի Սինդօ կամ Քամիգօ. որ է գլխաւոր վաղնջական և անփական դէն Ճեաբօնացւոց. և որ է տիրապէս գլուխ մեծ Դայիրն կամ քրմապետն Ճեաբօնայ. թէպէտ ըստ որում է ընդհանուր քահանայապետ իշխէ և այլոց: Հետևողք այսր աղանդոյ Սինդօեանք կամ Ախօպուսեանք կոչին. իսկ քուրմք նոցա Քաննուսք: Այս աղանդ ըն-

ու

ունի զմի հակ գերագոյն, զոր ուսուցանէ բնակիլ 'ի բարձրագոյն երկինս. ը̃ նմին ը̃ունի և զայլ ստորին ածս. զորս կոչէ եօթն ոգիս երկնայինս, որք Թուէին լինել եօթն մոլորակ. և առասպելեն զնց̃է՝ թէ եղեն ը̃ արեգական բազմօք յա̃ջ ք̃ զերկինս և զերկիր և քան զմարդիկ. և թէ ը̃ միլիոնաւոր ամս բնակեցան 'ի Ճէաբօն. զի 'ի սկզբան անդ միայն Ճէաբօն գոյր յաշխ̃ի. իսկ այլ մասունք հողագնտոյս յետոյ հաստատեցան: Եւ թէ մի յեօթն ա̃ծոց անտի Իսանակի ծնաւ զայլ հինգ ածս ստորինս. զորս երկրաւոր ածս կոչեն. որոց առաջինն կոչի դեն սէօ տայի սին. զոր իբր պաշտպան Ճէաբօնայ ը̃ ամ̃ տեղիս տրունք Ճէաբօնացւոց 'ի յարգի ունին: Այլ ոչ նց̃, և ոչ այնմ՝ գերագոյն հակի զայլ ինչ պաշտօն մատուցանեն, բայց միայն յերդնուլ յանուն նց̃. զի հեռի են 'ի մէնջ ասեն, ոչ կարեն լսել զաղօթս մեր. և ոչ իսկ օգնել ինչ մեզ: Այլ բաց 'ի նց̃է ունի այս աշխարհ և այլ ածս անհամարս, զորս Քամ կմ̃ Սին կոչէ. որք են հոգիք ինքնակալաց Ճէաբօնայ, և այլոց երևելի արանց երախտաւորաց աշխ̃ի իւրեանց, զորս տայիրք նց̃ ա̃ծացուցին, և օր ը̃ օրէ ա̃ծացուցանեն ոչ միայն զինքնակալս, այլև զայլս ոմանս նշանաւոր անձինս. որք եթէ չունիցին ինչ գործ երևելի, սուտ սքանչելիս համբաւեն զնց̃է:

Զաստս պաշտեն հետևօղք այսր աղանդոյ, ք̃զի համարին ունել նց̃ մտաւոր իմաստ 'ի վ̃ր ժողովրդեան, յորոց միջի բնակեցան երբեմն. և յանուն նց̃ շինեն տաճարս, որք այնչափ բազմաթիւ են յամ̃ քաղաքս, մինչ գրեթէ հաւասարել թուոյ տանց. այլ ն̃րկ փայտակերտ անշուք և փոքր. ձև նց̃ է քառակուսի. բարձրութ̃ին իբրև երիս մարդաչափս, կմ̃ փոքր մի աւելի. իսկ լայնութ̃ին գիրկս երիս. և բարձր 'ի գետնոյ երիս կմ̃ չորս ոտնաչափս 'ի վ̃ր սոուճար և ամուր ցցից հաստատեալ̃. և լուսամուտք նց̃ վանդակապատ 'ի յղնիպս և 'ի ներքս անզարդ են գլխովին. զի չիք այլ ինչ 'ի նս̃, բայց միայն բոլորաձև կերպարանք ինչ Թղթեղէնք և 'ի միջի հայելիք, զի որք մտանեն տեսցեն զդէմս իւրեանց 'ի նս̃: Յոմանս գտանին և գրօշեալք կմ̃ նկարք փակեալք յարկեղս. այնպիսի տաճարք ֆօնկու կոչին, ըս̃ Ճշմարիտ տաճար, որք և առաւել 'ի պատուի են ք̃ զայլս. և առաւել յաճախեն 'ի նս̃. ուր 'ի մասնեալն երկիրպագանեն այնց արկեղաց. իսկ այլ տաճարք գրեթէ միշտ փակեալ կան. և ոչ ոք երթայ 'ի նս̃:

Գլխաւոր սկզբունք և կանոն վարուց այսր աղանդոյ են այսոքիկ . նախ՝ ներքին մաքրութ՟ի սրտի . զ՟ի առնել զոր ինչ թելադրէ խիղճ մտաց իբրև բարի , և հրաժարել յայնմանէ , զոր չար համարին : Յայսմ այնչափ զգուշաւոր են , զի թէ ունին ինչ խիղճ յանձինս , ոչ իշխեն մտանել 'ի մեհեանս : Բայց այս խիղճ նց՟ ըս՟ մեծի մասին է 'ի վ՟ր ծիծաղական սնոտիապաշտութ՟ց . իսկ զիսկական չարիս մեծամեծս գործեն համարձակ , և ինչ ոչ խղճեն : Եր՟կդ՝ հրաժարել յարտաքին պղծութ՟ենէ . զ՟ի ոչ ուտել զմիս այլոց չորքոտանեաց ոչ ընտանեաց և ոչ վայրենեաց՝ բաց յեզներուէ . նոյնպ՟ս և ոչ զմիս հաւուց ոչ ընտանեաց և ոչ վայրենեաց , բայց միայն կռնկան և ջրային հաւուց . և ոչ իսկ զենուլ . ապա թէ ոչ՝ պղծին . և աւուրս ինչ ոչ կարեն մտանել 'ի մեհեանս : Ոչ մերձենալ 'ի մարմին մեռել՟ , և ոչ կալ առընթեր 'ի մեռանիլ ուրուք , մինչ՟դ եթէ իցէ ազգական և ընտանի . զի յայնժամ առաւել մեծ համարի պղծութիւն : Ոչ շօշափել զմարմին արեամբ ներկանց կմ՟ օտարի . ապա թէ ոչ՝ աւուրս եօթն պիղծ համարին : Եւ եթէ զք՟ 'ի գործելն 'ի մեհենի ուրեք , թէպ՟տ և 'ի գլխաւոր մեհենի խախոյ , ըս՟ պատահման վէրս ինչ գործեսցէ 'ի մարմնի , պղծի մեհեանն այն , զոր հարկ է քակել և անդրէն նորոգ շինել : Եր՟դ՝ երթալ յուխտ 'ի մեհեանն խախոյ ամի ամի , կմ՟ գէթ միանգամ 'ի կեանս . զորմէ ստորև ը՟արձակագոյնս ունիմք խօսիլ : Չ՟րդ՝ ճնշել և խոշտանկել զմարմին : Եւ հինգ՟երդ բզմ՟ զգուշութ՟բ պահել զաւուրս տօնից : Այլ զայս նմ՟ խորանս բաց 'ի միանձանց նց՟ և ճգնաւորաց , սակաւք գտանին 'ի նս՟ , որք ճշտիւ պահեսցեն :

Տօնք նց՟ ունին սահմանեալ աւուրս . այ՟ս առաջին , միջին և վերջին աւուրք ամսոյ , և այլ խորհրդաւոր աւուրք ինչ . այ՟ս եր՟դ օր եր՟դ ամսոյ , հինգ՟երդ օր հինգ՟երդ ամսոյ . եօթներ՟դ եօթներ՟դին . և իններ՟դ իններ՟դին , բայց յոյժ տօնս գլխաւորն է առաջին օր տարւոյ : Այլ այս տօնք նց՟ են մինչ՟դ աւուրք ուրախութ՟ե և խրախճանութ՟ց քան թէ կրօնաւորութ՟ե . Ք՟զի յաւուրսն յայնոսիկ ամ՟քն ըս՟ իւրաքանչիւր կարի զարդարին որչափ կարեն . և երթան 'ի մեհեանս . ուր միանգամ կմ՟ երկիցս հայեցեալ ը՟ վանդակապատ պատուհանս . և արկեալ տուրս ողորմութ՟ե 'ի գանձանակն նր՟ աղքատաց . և փոքր մի հնչեցուցեալ զփոքրիկ զանգակս 'ի զուարճութ՟ի ա՟ծոյն՝ որ 'ի մեհենի անդ պաշտի , ելանեն 'ի բաց . և զայն օր ողջոյն 'ի խրախութիս անցուցանեն . իսկ 'ի սկիզբն տարւոյն զամիս մի ողջոյն , բայց առաւելապէս զառաջին երիս աւուրս բոլոր 'ի խաղս 'ի խրախճանութիս և 'ի զինչ'ն զեղխութիս վատնեն . ընդ այն աւուրս երթան և յայցելութ միմեանց և տան պարգևս իրերաց : Բաց 'ի տօնից աստի՝ ունին և այլ տօնս ինչ հանրակաց , զոր կատարեն ընդ բոլոր Ճեաբօն . այսինքն է տօնն դենսէօ տայջի սին չոժոյն . և այլ ևս տօնս ինչ մասնաւորս . որք կատարին միայն 'ի գաւառս ոմանս կամ քաղաքս . որպէս տօնն սուվա չոժոյն կատարի միայն 'ի Նանկասագ քաղաքի : Այս աղանդ ունի և պէսպէս խումբս միանձանց արանց և կանանց . յորս երկու են երևելի . այսինքն կարգն կամ ընկերութին եամմապօսաց , և կուրաց : Եամմապօսք , որ ըստ սալմոնի՝ Թարգմանի քաջնյք . իսկ ըստ տեղաշարբեայ՝ զինուորք լեռնականք , են կարգեալք 'ի պաշտօն և 'ի ծառայութ քրմաց , խիստ և դժնդակ կեանս վարեն . միշտ 'ի լերինս և յանտառս և յամայի անբնակ վայրս Թափառեալք . և ամի ամի ելանեն 'ի գլուխ բարձր ժայռաւոր և սեպացեալ լերին յուխտ գերեզմանի հիմնադրի ընկերութեան իւրեանց . և 'ի դառնալն անտի ողջամբ , առաջնորդ նոցա տայ նոցա իշխանութ զգենուլ լաւ ևս զգեստս : Եօթն անգամ յաւուրն լուանան 'ի ջուր ցուրտ՝ ևս և 'ի սաստիկ ձմերայնի , և եօթնհարիւր և ութսուն ծունր կրկնեն յիւրաքանչիւր ծնրադրութ երկրպագութեք ձեռօք կոծելով զգլուխս : Այսպիսի և այլ սոցին նման ձգնութք հաւատացուցին ժողովրդեան եթէ մեծ է զօրութ իւրեանց . և թէ աստուածքն լսեն ամ խնդրուածոց իւրեանց . հմայելով՝ բազում անգամ փարատեն զցաւս . մեկնեն զերազս , գտանեն զկորուսեալս . և զայլ այսպիսիս բազում առնեն . զի առհասարակ կախարդ են և դիւաց արբանեակք :

Իսկ կարգ կուրաց երկու են . երկոքին ևս երևելիք առ Ճեաբօնացիս . որք կոչին Պուսէց սատօ . այսինքն պուսեցեան կոյրք . և Ֆէքի սատօ . այն է՝ Ֆէքեան կոյրք : Առաջինն հաստատեցաւ 'ի յիշատակ երևելի իշխանի միոյ . որոյ առ սաստիկ ցաւոց և անհնարին արտասուաց ընդ մահ համանւոյ իւրոյ՝ կուրացան երկոքին աչք : Այս միաբանութ չէ այնչափ ինչ տարածեալ , զի միայն քուրմք մտանեն 'ի նմա , բայց և 'ի նոցանէ նք և եթ , որք կամ 'ի բնէ կոյր ծնանին , և կամ 'ի սաստիկ կրից ինչ 'ի սիրոյ կուրանան : Իսկ երկրորդ միաբանութին կուրաց ասի թէ սկիզբն կալաւ 'ի քաջ և 'ի հաւատարիմ զօրապետէ միոյ , որ կոչէր Ֆէքի :

Սա 'ի դժնդակ երկպառակութե̄, յորում մեծ սպարապետն զօրաց Ճեաքօնացւոց Ճէրդիմոս կմ̃ յերօսիմոս անուն ապստամբեցաւ յինքնակալէն տայիրոյ, ունէր զկողմն նորին տայիրայ, և յերկարել պ̄տզմի, մեռաւ ինքնակալն. և ինքն Փէքի ձեռակալ եղև 'ի Ճէրօդիմոսէ. և ք̃զի հռչակեալ էր անպարտելի քաջութե̄ն նր̄ և հաւատարմութե̄, Ճէրօդիմոս բ̃զ̃մ մեծարանօք պահէր զնա 'ի կալանս. և ամ̃ զօրութե̄ գուն գործէր յինքն յանկուցանել զնա, և սպարապետ 'ի վ̄ր զօրաց իւրոց կացուցանել: Այլ նա ը̄ իւրում մեծահանձնութե̄ ետ պ̄խնի Ճէրօդիմոսի. «Եղէ ես աւէ ծառայ հաւատարիմ Տ̄ն բարերարի. այլ այժմ զկնի մեռանելոյ նորա, մի՛ ոք ակնկալցի ունել զիս իւր բարեկամ հաւատարիմ: Խոստովանիմ թէ բազմօք պարտապան եմ քեզ. և ըզկեանս իմ գլխովին 'ի քէն ճանաչեմ. բայց սակայն այնչափ է թշնամութի̄ իմ, զի ոչ կարեմ դարձուցանել 'ի քեզ զաչս իմ, և չփրդուիլ առնուլ զգլուխ քո փոխ արեան տն̄ իմոյ: Վ̄ղ̄ այս փոխանակեցից մեծի երախտեաց քոց որ առ՝ զայսոսիկ դժնէհայեաց աչս իմ ||. զայս ասացեալ՝ եհան զերկոսին աչս իւր, և մատոյց նմ̄ 'ի պարգև:

Ընդ այս գործ զարհուրեալ միանգամայն և ապշեալ Ճէրօդիմոսի, արձակեաց զնա յաղատութի̄. իսկ նր̄ գնացեալ 'ի Ֆիուկա ք̄ղ̄ք, ուսաւ հնչեցուցանել նըւագարանս. և կացոյց զմիաբանութի̄ կուրաց. որ յանուն նր̄ կոչի միաբանութի̄ Փէքեան կուրաց. որ և ը̄արձակ է յոյժ և ծաւալեալ ը̄ համօրէն Ծն Ճեաքօնայ, զի ամ̃ կոյրք յինչ կարգի և իցեն մեծատունք և աղքատք՝ մտանեն 'ի միաբանութի̄ն յայն. իսկ գլխաւոր նց̄, որ կոչի Օսիօքֆնասի 'ի մէաքօ յապարանս տայիրայ. որում տայիրն ամի ամի տայ 4300 ղ̄ր̄շ 'ի պարէն: Ունին և ք̄ղքապետս յամ̃ ք̄ղքս, զորս Քօնկիօ կոչեն. և իւրաքանչիւր գաւառապետ ունի իւր խորհրդականս, որք կոչին Քօթօ: Սք̄ սափրեն ըզգլուխս ողջոյն ը̄ սովորութե̄ նախայիշատակել̄ պուսեցեան կուրաց, բայց ինքեանք աշխարհիկ են. ուստի և զգենուն ը̄ սովորութե̄ Ծախանաց: Ոչ մուրանան, այլ որք աղքատ են հայթհայթեն զդարման կենաց երգելով և նուագածութե̄ յապարանս մեծամեծաց, 'ի տօնս, 'ի թափօրս, 'ի խրախճանս, 'ի հարսանիս և յայլ այսպիսի հորկաց խրախութիս: Վ̄ղ̄ ոչ ունիք ծանրանան: Այսչափ ինչ վ̄ս առաջնոյ ազգոյ Ճեաքօնացւոց:

Եր.

Երկդ՝ աղանդն Պուտտօ ․ որ Թարգմանի Կանոն ստարականաց ․ ք̃զի հետևողք ն̃ր կոչեցեալք պուտտօյեանք՝ բաց 'ի կռոցն Ճէաբօնայ պաշտեն և զկուռս ստարօտս , մնւ̃նդ զելնոցն և զխամացւոց ․ և առավաւ միայն զանազանեն յառաջնոյ աղանդոյ ․ զի նա միայն զբնիկ ա̃ծս Ճէաբօնայ պաշտէ ։ Գլխաւոր չ̃ծ ն̃ց Ամիտա կոչի ․ զոր համարին գերագոյն հրամանատար և անօրինիչ երկնային տեղեաց , և փրկիչ հոգւոց մարդկան ․ զի ն̃ր միջնորդութ̃ե եւեթ հնար է ամեն լինել երջանիկ 'ի հանդերձե̃լ կեանս ․ վ̃ոյ և ունին զնա իբրև միջնորդ ը̃ ա̃ծ և ընդ մարդիկ ։ Պատմեն , թէ բ̃զմ ժմկաւ յառաջ դրոշե̃լ ն̃ր դաւ 'ի Փագուկա գ̃ուռի , ուր արձակէր ճառագայթս լուսափայլս ․ յայն սակս չինեցին անդէն տաճար յանուն ն̃ր ։ Պաշտեն և զՉագա կ̃մ Սագա չ̃ծն չինաց բ̃զմ պաշտօնատիրութ̃ե սակս խոստանալոյ ն̃ր զանմահութ̃ի յերանագոյն կեանս 'ի վարձ առաքինի գործոց մնւ̃նդ անձնապահութ̃ե ։

Վ̃ոյ գրէ տէլահարբէ , թէ կարի յաճախ է տեսանել անդ կամաւոր անձնասպանութիւն ․ բ̃զմք յայսպիսի խելացնոր յիմարաց առ վաղագոյն ժամանելոյ 'ի խոստացե̃լ երանութիւն , մտե̃լ 'ի ծով նաւակօք , քարինս մեծամեծս լնուն 'ի նաւակն կ̃մ ծակեն ․ և առ սակաւ սակաւ սուզանին 'ի խորս ծովու երգելով զերգս օրհնութ̃ե առ չ̃ծն իւրեանց ։ Իսկ բազմութ̃ի մարդկան կացե̃լ առ ափն ծովու 'ի զննին այնմ դժոխային տեսարանի , մեծաբարբառ գովեն զքաջութ̃ի ն̃ց ․ և խնդրեն օրհնութ̃ի 'ի ն̃ցէ մինչև իցեն խորասուզե̃լ ։ Ոմանք տան հիւսել զանձինս յորմս , թողեալ փոքրիկ ծերպ 'ի պէտս տուրեւառութ̃ե ինչոյ ․ և անդ սովալլուկ սատակին ։ Այլք դահավէժ լինին կամաւորապէս 'ի վառե̃լ բովս ծծմբոյ ։ Կէսք անկանին 'ի ներքոյ անւոց կառաց , յորս բարձե̃լ տանին զկուռս ․ և խորտակե̃լ ոսկերաց՝ չարամահ սատակին ․ Իսկ այլք սրովք զնո̃ն օրինակօք զրաւեն զանձինս 'ի կենաց ։ Ահա այսչափ է մոլեգնութ̃ի որոց զուրկ են 'ի ծանօթութ̃ե ճշմարիտ ա̃ծպաշտութ̃ե ։ Պաշտեն և զկօնփուտիոս հռչակաւոր օրէնսդիրն չինաց ․ որում ինքնակալն Ճէաբօնայ յանցե̃լ դարու կանգնեաց տաճար հոյակապ 'ի յեդօ արքայանիստ ք̃ղք ։ Ունին և այլ անհամար փոքրիկ ա̃ծս ․ և եւս իւրաքանչիւր տուն ունի իւր սեփական կուռս զնո̃ն ․ յորս գլխաւորքն երկու են , որք յա̃մ տունս գտանին ․ մին է եղնադըրուխ , որ ը̃ մոլար կարծեաց ն̃ց պահէ զբնակիչս տան յախտից և 'ի հիւանդութեանց մանաւանդ 'ի ծաղկէ· Իսկ երկրորդն է գրօշէլ դժոխատիպ դիւանման · զոր Լոս կոչեն · և համարին, թէ սարսափելի տեսլեամբ իւրով 'ի բաց հեռացուցանէ 'ի տանց նոցա զամենայն չար արկածս :

Տաճարք կամ մեհեանք այսր աղանդոյ ոչ են անշուք և անզարդ ըստ մեհենաց առաջնոյ աղանդոյն, այլ մեծաշէն և գեղազարդք, յորս են անթիւ կուռք օտարակերպք մեծամեծք և մանունք · զերկուս 'ի կռոց անտի ստորագրէ սալմօն, որք կոչին Տայպոտ և Գուանվէն : Տայպոտն ասէ մեծ է յոյժ · զի լայնութիւն թիկանց նորա է հինգ գրկաչափ · ականջքն երկայն · հերքն թաւ և գանգուր · 'ի գլուխն ունի պսակ · և է բովանդակ ոսկեզօծ՝ բաց 'ի ճակատոյ՝ և զգեստաւորեալ · միայն լանջքն մերկ : Նստեալ է 'ի վերայ ծաղկի ոտն զոտամբ եդեալ · և զաջ բազուկն վերանաձև ունի 'ի վեր ամբարձեալ · իսկ զձախն 'ի վերայ կրծոց · և շուրջ զնովաւ են այլ անհամար կուռք այլանդակք նստեալք նոյնպէս 'ի վերայ ծաղկանց : Իսկ գուանվէն, որ նոյնպէս մեծ է յոյժ, ունի եօթն ձեռս, և թագ 'ի գլուխ հանդերձ շրջասփիւռ ոսկի ճառագայթիւք · և շուրջ զնովաւ վեշտասան հսկայաձև արձանք դիւցազանց · և այլ ևս անհամար գրօշէլք մեծամեծք և մանունք յամենայն կողմանս մեհենին · որք ըստ ասելոյ ոմանց են 33333 · յորոց ոմանք քսան ձեռս ունին : Այլք սովորութիւն ունին 'ի վերայ սեղանոյ զոհից վառել մոմեղէնս, և երբեմն ընդ բովանդակ տաճարն · և 'ի սեղանի անդ 'ի վերայ փոքրիկ տախտակաց գրեալ կան անուանք ինքնակալաց, որք եղեն յաղանդոյ աստի · զորս քուրմք նոցա 'ի մատուցանել զոհս կռոց, միշտ յիշատակեն յաղօթս :

Գլխաւոր սկզբունք և կանոնք վարուց նոցա են այսոքիկ : Ոչ գողանալ, ոչ շնալ, ոչ սպանել, ոչ ըմպել գինի կամ զայլ արբեցուցիչ ըմպելի, և պահել զայլ ևս պէսպէս խտրական կանոնս · և առնել ազգի ազգի ճգնութիւնս և խոշտանկանս մարմնոյ · զի այս աղանդաւորել խիստ է քան զառաջինն · յայն սակս և քուրմք նոցա հանապազ քարոզեն ժողովրդեան զապաշխարութիւն 'ի քաւութիւն սնոտի մեղաց ինչ գործելոց 'ի սնոտիապաշտութեան իւրեանց · թողեալ զիսկական չարիս մեծամեծս, զորս բնաւ իսկ մեղս ոչ համարին : Վարդապետք 'ի հետեւողաց այսր աղանդոյ զգլխով և զբոլոր մարմնով 'ի խորին ձմերայնի տան լնուլ ջուր ցուրտ մինչև ցերկերիւր դոյլս · և բնաւ սարսափումն ինչ ոչ ցուցանեն ։ Այլք ուխտեն յաւուրն հազարաւոր անգամ կարդալ զգիրս իւրեանց տարածեալ 'ի գետնի. և յիւրաքանչիւր նուագս հարկանեն զճակատ ընդ գետնին, մինչև պատառոտիլ մորթոյ ճակատու ։ Այլ առաւել սարսափելի ճգնութիւն նոցա՝ է երկար և դժընդակ ուխտագնացութիւն, զոր ամի ամի առնեն պաշտօնասէրք զաքայ կռոց ։

Զի ըստ գրելոյ տէլահարբեայ՝ ժողովին ամի ամի 'ի Նարա քաղաք, որ 24 մղոնաւ հեռի է 'ի Միաքօայ իբր 200 ուխտաւորք. և անտի ելանեն 'ի ճանապարհ 'ի տօթագին աւուրս ամարան բացագլուխ և բոկոտն ճանապարհորդեալ ընդ անշէն անապատս, ընդ անտառս, և ընդ ապառաժուտ լերինս. յորս 'ի սայրասուր քարանց պատառոտին ներբանք ոտից նոցա. երկայնութիւն այսր դժոխային ճանապարհի է իբրև 215 մղոն. իւրաքանչիւր 'ի նոցանէ ինքնին բարձեալ տանելով զպաշար իւր, որ է որիզ խարակեալ. յորմէ երկիցս յաւուրն ֆ յառաւօտու և յերեկոյի առնուն մի մի բուռն չափ. և ըմպեն երիս բաժակս ջրոյ։ 'Ի սկզբան անդ բառնան ընդ ինքեանս և ջուր. զի յառաջին ութ աւուրս ընդ անջրդի վայրս ճանապարհորդեն. ուր չիք գտանել և ոչ կաթիլ մի ջրոյ։ Բայց դէպ լինի երբեմն, զի սպառի ջուր նոցա կամ նեխեալ ապականի. վասն որոյ բազումք հիւանդանան. յորոց եթէ ոք առ սաստիկ ծարաւոյ ակարացեալ՝ ոչ ևս զօրեսցէ գնալ ընդ այլոց, թողուն զնա յանշէն անապատի անդ անխնամ 'ի կերակուր գազանաց։ Իբրև քսան և չորս մղոնաւ հեռի 'ի Նարա քաղաքէ, սկսանին ճանապարհորդել ընդ ապառաժուտ լերինս. և անդ ուղեկցին նոցա քուրմք ոմանք իբրև հոգևոր առաջնորդք՝ որք դիւամոլք գազանաբարոյք. որոց լոկ տեսիլ դժոխատիպ դիմաց՝ զարհուրեցուցանէ։ Եւ առ ժամայն սկսանին պատուիրել ուխտաւորաց խիստ պահս, և լռութիւն սաստիկ, և այլ պէսպէս դժնդակ ճգնութիւնս։ Եւ այնչափ խիստ է դժնէութիւն նոցա, զի սակս ոմն թեթև յանցանաց կալեալ զյանցաւորն՝ կախեն զբազկաց 'ի վերայ ծառոյ, զոր նախ գտանեն 'ի ճանապարհի. և թողուն զեղկելին յայն անտանելի տանջանս, մինչև 'ի պակասիլ զօրութեան բազկաց, և անկանիլ 'ի վայր ընդ զառ'ի վայր լերին, ընդ որ գահավէժ թաւալեալ 'ի ժայռէ 'ի ժայռ, քանդի իսպառ մարմին նորա. և այնպէս չարամահ կորնչի։ Այլ որ առաւել դժնդակ է՝ ոչ ոք 'ի բազմութենէ անտի ուխտաւորաց, որ տեսանէ զայն աղէտ դառնութեան, իշխէ բնաւ նշան ինչ ցաւոյ և կարեկցութեան ցուցանել. թէ-

պէտ

պէս և մերձաւոր ազգակից , կամ հայր կամ որդի իւր իցէ դատապարտեալն · ապա թէ ոչ՝ անդէն վճռի և զնա 'ի նոյն օրինակ տանջանս մատնեն անօրէն քուրմք · որք թուէին դեւք մարմնացեալք , քան թէ մարդիկ հողեղէնք :

'Ի կէսն ճանապարհորդութեան հասանեն 'ի դաշտ մի , ուր քուրմք հրամայեն ամենայն նստել 'ի գետնի՝ խաչաձև ամփոփեալ զբազուկս առ լանջօք , և զգերանս եդեալ 'ի վերայ ծնգաց · որ է սովորական դիրք մարմնոյ ձևաբռնացուոց յաղօթելն , և մնան այնպէս կծկեալ ընդ ժամս 24 լուռ , անսասան և անշարժ ամենևին · զի թէ ոք դէթ առ փոքր մի շարժեսցի , չարաչար հարուածի 'ի քրմաց անտի , որք շրջին զնոքօք · և այնպէս առնեն զքննութիւն խղճի մտաց , պատրաստելով զանձինս 'ի խոստովանութիւն մեղաց , զոր զկնի վերջին ուխտագնացութեան գործեալ են : Յետ այնորիկ վերստին ելանեն 'ի ճանապարհ , և անցեալ զլեառն լեռնային , հասանեն 'ի լեառն կամ 'ի ժայռ մի մեծ և բարձր , որ թուէր յամպս հասանել : 'Ի գլուխ այնր ապառաժուտ լերին , ուր է բուն ուխտատեղի նոցա , գոյ երկաթի ձող երկայն , զորմէ կախեալ կայ երկաթաթ կշիռ մեծ · 'ի մի կողմն նորա դնեն զուխտաւորս մի առ մի · իսկ 'ի միւսն հաւասարակշիռ ծանրութիւն , և երկայնեալ զձողն հանդերձ կշռորդաւ , ձգեն արտաքս · և մնայ տատանեալ ուխտաւորն կախեալ 'ի վերայ անդնդախոր վհի · որոյ տեսութիւն ևեթ ահաբեկ և մտաթափ առնէ · և անտի բարձր ձայնիւ մի առ մի խոստովան լինի ըզմեղս · և իբրև աւարտէ հանեն զնա , և զայլ ոք դնեն 'ի տեղի նորա կարգաւ մինչև 'ի վերջինն : Բայց 'ի պատմելն զմեղս քուրմք արեան նոցա ծարաւիք՝ ամենայն զգուշութեամբ ուշադիր լինին · և եթէ տեսցեն զոք , զի ոչ յայտնի սպառ , այլ ջանայ ծածկել , կամ նուաղեցուցանել , ցնցեն զձողն , և ընկենուն զեղկելին 'ի վիհ անդր 'ի կորուստ :

Իբրև ամենքն անցանեն ընդ այս վտանգ մահաբեր , յայնժամ քուրմք առեալ զնոսա , որք միայն կենդանի , ածեն 'ի տաճար Զաքայ չաստուծոյն · ուր կայ ոսկեձոյլ արձան նորա հսկայաձև , և շուրջ զնովաւ այլ բազմապատիկ կուռք մեծամեծք և մանունք · և անդ մատուցանեն նմա զերկրպագութիւն : Եւ կացեալ 'ի լերին անդ աւուրս 25 , շրջին յայլ և այլ ուխտատեղիս · ապա առեալ հրաման 'ի քրմաց , տալով նոցա առատ պարգևս , ամենքն 'ի միասին երթան յայլ տաճար մի · և անդ են կատարեալ զուխտ իւրեանց՝ առնեն խրախութիւն մեծ ·

և մեկնել՟ 'ի միմեանց , այր իւրաքանչիւր դառնայ 'ի տուն իւր ը՟ ճնպհ՟ ը՟ որ կամի . և ոչ ը՟ այն դժոխային ճնպհ՟ ը՟ որ ածաւ 'ի քրմաց :

Իսկ եր՟դ աղանդ Ճեաբօնացւոց զհետ երթայ վարդապետութե՟ կօնփուտիոսի հռչակաւոր օրէնսդրի չինաց : Հետևօղք նր՟ Սինտօսեանք կոչին . և պահեն զկանոնս փիլիսոփայից , զորս տեսեն հիմնեալ 'ի բնական օրէնս : Չունին կուռս , ոչ մեհեանս , և ը՟ ատելոյ ումանց՝ և ոչ կրօնս բնաւ . այլ գլխովին անկրօն են և անա՟ծ . Թէպ՟տ սաղմօն ոչ հաւանին այսմ . ա՟յ և ոչ կօնփուտիոսի լինել անա՟ծ . զի չէ մարթ ասէ միաբանիլ անածութե՟ ը՟ այնց գերազանց օրինաց , զորս նա գրեաց . և զի ս՟ք ևս զնորայն ունին օրէնս . վ՟յ ոչ ընծայեմ ասէ զհաւանութե՟ նց՟ , որք անա՟ծս ասեն զոսսա , եթէ սուտպատրոյն պալացուցիւ ոչ հաւատեսցեն : Սակայն վ՟պատութե՟ ս՟ք չէ հեռի յանածութենէ . ք՟զի զԾս դնեն 'ի յաւիտենից . և զմարդ և զանասուն գործ բնութե՟՝ արտադրել յերկնից և յերկրէ . յորոց մին արարող է , իսկ միւսն կրող . և թէպէտ դնեն զէակ մի անմարմին և մտաւոր , զոր և ասեն կառավար Ծի , այլ ոչ արարիչ նր՟ . յորմէ երևի թէ եղական համարին զնա և սահմանաւոր՝ . վ՟յ և ոչ ա՟ծ , ուստի և ոչ իսկ պաշտեն զնա . այլ զա՟մ բարիս յոր վայելեն՝ երկնից , ը՟ ազդեցութե՟ երկնային լուսաւորաց և երկրի ընծայեն : Զգերագոյն կատարելութի՟ և զլրումն ա՟մ բարեաց և երջանկութե՟՝ դնեն 'ի հաճութե՟ և 'ի բերկրութե՟ , զոր ունի հոգին 'ի վարել առաքինի վարս . և ուսուցանեն , թէ մարդ բանաւոր գոլով , պարտական է գործել զառաքինութի՟ , և բանիւ վարելով՝ տարորոշել զանձն յանբանից : Իսկ կանոնք վարուց նց՟ են այսոքիկ : Ունել զարդարութի՟ և զիրաւունս ա՟մյն : Սիրով և իմաստութ՟բ կառավարել զհպատակս , վայելչապէս և շնորհալի քաղաքավարել . ազատ խիղճ մտաց ունել . ը՟ առ ոչինչ օրէնս կա՟մ կրօն կա՟մ պաշտօն կարծել . (որ է իսկական անածութի՟) և սիրտ անկեղծ : Ս՟ք վայելուչ և գերազանց գործ համարին զխրովլի երթալ առ ազատելոյ զանձն ի վատթարուն մահուանէ կա՟մ 'ի ձեռաց յաղթական թշնամւոյ :

Այս աղանդ 'ի նախնումն ը՟արձակել էր յոյժ որ և փոյթ մեծ ունէր ծաւալեցուցանել զարհեստս և զգիտութիւնս 'ի Ճեաբօն , վ՟յ բզ՟մք 'ի ժողովրդենէ զհետ երթային նմ՟ : Այլ զկնի հալածմանց , որ յարուցաւ ը՟դէմ քրիստոնէից՝ կարի նուաղեցաւ և խանգարեցաւ :

ցաւ : Քանզի որովհետև հետևողք նր̃ ոչ պաշտեն կուռս, կարծիս ունին զնչէ լինել 'ի ծածուկ քրիստոնեայ կա՛մ հակամէտ 'ի քրիստոնէութիւն . վ̃յ հրաման սաստիկ ել 'ի վր̃նց ունել կուռս 'ի տունս իւրեանց, և ցուցանել զն̃ն դրացեաց, որք պարտական են վկայել առաջի դատաւորաց վ̃ն նց̃ . այլև սեղանս 'ի մատուցանել 'ի վր̃ նց̃ խունկս կռոց : Պատմի թէ յանցեալ դարու իշխանն սխեննայ և ինապայ այր իմաստասէր՝ ձեռն էարկ զայս աղանդ անդրէն յառաջին պայծառութն դարձուցանել : Նմին իրի հիմնեաց դպրոց մեծ, զոր և ճոխացոյց բզ̃մ ազատութ̃ք . և կացոյց 'ի նմա սրս իմաստունս . կամեցեալ խելամուտ առնել ժողովրդեան թէ զիարդ ծիծաղական է և առասպելական դենն կռապաշտութ̃ն . կա՛մ յայտնի ասացից՝ կամէր իսպառ անկրօնս և անածս առնել զն̃ն . այլ ոչ կարաց կատարել՝ զոր կամէր . քանզի քուրմք երկրին ամբաստան եղեն զնմէ առ իշխակալն, զոր և այնչափ զայրացուցին ը̃դ̃էմ նր̃, զի թէ չէր աճապարեալ հրաժարել յիշխանութէ իւրմէ, թողեալ զայն որդւոյ իւրում, չարախստաւառ մահու կորնչէր : Սակայն տակաւին գտանին անդ բզ̃մք 'ի սոյն աղանդոյ, մ̃ւնդ 'ի մէջ մեծամեծաց . բայց առերևոյթս պաշտեն զկուռս :

'Ի վեշտասաներ̃դ դարուն ծագեցաւ լոյս աւետարանին քի̃ 'ի Ճափոն . և 'ի սուղ ժմկի ոչ սակաւ տարածեցաւ : Քանզի յամի փրկչին 1540 երիտասարդ մի Ճափոնացի հասեալ 'ի կօա քղ̃ք հնդկաց՝ ընկալաւ անդ զքրիստոնէական հաւատս 'ի ձեռն փորդուքալացի հարց յի̃սեանց . և ը̃ իւրում հայրենասէր բարուց ցանկանալով և զհայրենիս իւր բաժանորդ առնել այնմ մեծի շնորհի . յորդորեաց ըզփորդուքալս առաքել 'ի Ճափոն նաւ մի իբրև 'ի պէտս վաճառականութ̃ . յոր եմուտ և ինքն և ոմանք 'ի հարց յի̃սեան կարգի : Սոքա 'ի ձեռն ժրաջան և անխոնջ աշխատասիրութ̃ 'ի սուղ ժմկի զբզ̃մս 'ի Ճափոնացւոց անուանի աշակերտեցին 'ի քս̃ : Այլ առաւել բազմացաւ անդ թիւ հաւատացելոց յամի 1549 'ի հասանել անդր սր̃բյն Ֆրանկիսկոսի Քսաւերեան առաքելաշնորհ առն . որոյ վաստակք շնորհօք ա̃յ արդիւնաբեր եղեն, զի երեք կուսակալք ը̃ պունկօվայ, արիմայ և մուրայ հաւատացեալ 'ի քս̃, հրեշտակս արձակեցին առ պապն հռովմայ գրիգոր ժգ̃ մատուցանել նմ̃ զհնազանդութ̃ 'ի դիմաց իւրեանց : Այլ բանսարկուն չարանախանձ թշնամի ամ̃ բարեաց բեաց, փութով արկ ընդդէմ արգելս գեղեցիկ յառաջադիմութեան քրիստոնէական հաւատոյ. յարուցանէր հալածանս ՚ի վերայ քրիստոնէից. որում ըստ պատմելոյ հոլանտացւոց՝ փորդուգալք տուին պատճառս : Զի ասեն, թէ իբրեւ օր ըստ օրէ բազմանայր թիւ հաւատացելոց, փորդուգալացի քարոզիչք սկսան քարոզել, թէ եկեղեցականք ոչ են ընդ տէրութեամբ տեղական իշխանաց. յոր կեմփեր հոլանտացի յաւելու եւ զամբարտաւանութիւն եւ զագահութիւն փորդուգալաց. եւ զօշաքաղութիւն ոմանց քարոզչաց. յորմէ կարծիս էառ ինքնակալն, թէ փորդուգալք այսու հնարիւն անդրէն նորոգել զառաջին մարմնաւոր իշխանութիւն տայիրին, զոր նորոգ կորուսեալ էր. յափշտակելով ՚ի ձեռաց իւրոց զթագաւորական իշխանութիւն : Բայց փորդուգալք այլազգ պատմեն. եւ ասեն՝ թէ զայսպիսի սուտ կարծիս զինքեանց՝ հոլանտացիք սերմանեցին ՚ի միտս իշխանացն Ճէափօնայ. զի ատելի արասցեն զնոսա յաչս նոցա, ինքեանք միայն կալցեն զվաճառականութիւն Ճէափօնայ. այլեւ առ ժանտ ատելութեան, զոր կրէին ընդդէմ հռովմայ աթոռոյն, տեսեալ զՃէափօնացի քրիստոնեայս խոնարհիլ ՚ի հնազանդութիւն նորա : Այլ զիարդ եւ իցէ. յամին 1586 ել հրաման սաստիկ ՚ի դայիքօ ինքնակալէն Ճէափօնայ զի մի ընաւ քարոզեսցի յամենայն սահմանս տէրութեան իւրոյ քրիստոնէական հաւատք. եւ համօրէն քարոզիչք խսպառ տարագիր լիցին անտի. եւ մի եւս իշխեսցեն փորդուգալք եւ սպանիացիք ածել անդ քահանայս. միանգամայն սաստիկ պատուէր ետ առ ամենայն նախարարաց եւ քաղաքապետաց քաղցրութեամբ եւ բռնութեամբ դարձուցանել զժողովուրդ իւրեանց անդրէն յառաջին օրէնս կռապաշտութեան. եւ յայսմանէ սկսաւ հալածումն եւ խոշտանգանք քրիստոնէից :

Յետ ամաց ինչ պատահեցան եւ այլ դիպուածք, որք եւս առաւել բորբոքեցին զհրդեհ հալածանաց : Զի պատմի թէ եկեալ ոմն փորդուգալացի ՚ի 1596 պատահէր ՚ի Տնիցհի՝ միում ՚ի կուսակալաց Ճէափօնայ, որ մեծահանդէս շքով երթայր յարքունիս, ոչ կացոյց զկառս իւր ՚ի մատուցանել նմա մեծարանս, ըստ սովորութեան երկրին. թէպէտ եւ ազդ արարին նմա. այլ էանց առ նովաւ եւ գնաց զճանապարհ իւր, ոչինչ նշան յարգութեան ցուցեալ նմա. ընդ որ անհնարինս սրտմտեալ իշխանին՝ հասոյց յականջս ինքնակալին, արհամարհութեան համարելով զայն ինքեան : Նոյն եւս ընդ այն ժամս ձեռն արկին քրիստոնեայք շինել եկեղեցի ՚ի Մեաքօ աթոռանիստ քաղաքի տայիրին, ոչ անսացեալ խորհրդոյ ոմանց խոհական հարց քարողչաց, որք խրատէին զնա 'ի բաց թողուլ զայն չինուած յայնմիասուլ զառն Ճմկի, յորում հալածումն տառապէր 'ի վ՟ր կայր քրիստոնէից։ Հասին 'ի նմին Ճմկի և այլ քարոզիչք ոմանք սպանիացիք 'ի Փրանկիսկեան կարգէ առաքեալք իբրև դեսպան յիշխանէն մանիլայի սպանիացւոյ. և ը՟դէմ յայտնի հրամանի ինքնակալին հրապարակաւ քարոզէին զքրիստոնէութ՟ 'ի փողոցս մէաքօսյ։ Եւ ահա այս ամ դիպուածք խապառտարակտուր արարին զքրիստոնէութիւն 'ի Ճեաբօնայ. զի այնուհետև ը՟ ամ ամեղիս ևս ք՟ զևս վառեցաւ բորբոքեցաւ հրդեհ հալածանաց. և ծովացաւ երկերն Ճեաբօնայ անձեզ արեամբ քրիստոնէից. զորս ազգի ազգի դժնդակ խոշտանկանօք և գառն տանջանօք անողորմ կոտորէին. յորում անցուցին զվաղանութ՟ հռովմէական կայսերաց։

'Ի նոյն հալածանս ը՟ բնիկ Ճեաբօնացիս՝ կոտորեցին և զամ փորդուքալացի և սպանիացի ք՟նյս, զորս գտին. բայց Մականաց փորդուքալաց խնայեցին, առ 'ի հնդզորդել ը՟ նմ զառևտուրս մանձատաց. զի ոչ կամէին զրկել 'ի զնոյն իրաց անտի, զորս փորդուքալք տանէին անդր։ Նմին իրի 'ի 1635 շինեցին վաճառատեղի 'ի տեսիմայ կղզին հանդէպ Նանկասագ ք՟ղքի, և ետուն զայն 'ի բնակութ՟ փորդուքալաց. արգելեալ նց չմտանել 'ի Նանկասագ ք՟ղք։ Այլ յետ սակաւուց և անտի տարագրեցան խպառ 'ի ձեռն մատնութ՟, զոր արարին հոլանտացիք։

Զի մերձ 'ի սարն բարեյուսոյ կալան նք զնաւ մի փորդուքալաց և գտին 'ի նմ թուղթ առաքեալ առ թ՟րն փորդուքալաց 'ի գլխաւոր գործակալէ նց որ 'ի Ճեաբօն. որ ազգաւ Ճեաբօնացի էր, այլ կրօնիւ քրիստոնեայ։ Ասէ Կեմփեր թէ 'ի նմին թղթի յայտնի գրեալ կայր ծածուկ միաբանութ՟ և դաշնադրութ՟ Ճեաբօնացի քրիստոնէից ը՟ փորդուքալս առ 'ի բառնալ զինքնակալն. և թ՟րեցուցանել զոք 'ի քրիստոնեայ իշխանաց անտի Ճեաբօնացւոց. գրեալ էր ևս թէ դեռ ոչ հասին նաւք և զօրք խոստացեալք 'ի փորդուքալայ. յիշէր յանուանէ և զիշխանս միաբանեալս յայն դաշնադրութ՟։ Զայն գիր հոլանտացիք իբր մի միայն միջնորդ 'ի գլուխ տանելոյ զվաղամաժմկեայ մախանս, զոր կրէին ը՟դէմ փորդուքալաց, վաղվաղակի հասուցին 'ի ձեռս իշխանին Նանկասագ ք՟ղքի։ Ասի թէ ը՟ այն ժամու կալան Ճեաբօնացիք և զայլ գիր մի, զոր նա ինքն գործակալն առաքէր առ փորդուքալս որք էին 'ի մետաքս քօղէր: Վ՟յ վղվղկի հրամանեա իշխանն նանկասաքեայ 'ի բանտ արկանել զգործակալսն. և Թէպ՟տ նա համարձակ և աղատադէմ պնդէր և ուրանայր Թէ չէ իւր գրել. ոչ և փորդուքալք ուրանային. սակայն ասի Թէ 'ի կնքոյն և 'ի տարազու գրոյն ստուգեցին նորայն լինել. ուստի և դժընդակ տանջանօք սպանին զգործակալն. և անդանալի վճռով յաւէժաբար տարագրեցին անտի զփորդուքալս և զայլ ամ՟ ազգս քրիստոնէից, բաց 'ի հօլանտացւոց:

Եւ այնուհետև դարձեալ բորբոքեցաւ հրդեհ հալածանաց, դարձեալ սկսան յաճախել նորանոր տանջանարանք, և անխնայ կոտորած քրիստոնէից. որոց տեսեալ եթէ զուր տարապարտուց մեռանէին, քաջալերեալ զանձինս, միաբանեցան ամ՟ք, զէն առին, գունդ կազմեցին, եղեն 'ի ճակատ ը՟դդէմ զօրաց ինքնակալին. յառաջնումն անդ զգունդ մի ստուար կռապաշտից խորտակեցին. այլ յերկրորդում պտզմի, որ ըս սալմոնի՝ երկարեցաւ աւուրս երիս, յորում էր և ինքնակալն անձամբ, 'ի պարտութ՟ մատնեցան քրիստոնեայք. իսկ ապրեալքն 'ի նշէ դիմել ամրացան 'ի բերդն սիմամպարայ. ուր անպարտելի քաջութ՟ պաշտպանէին անձանց, մինչև բռնադատեցաւ ինքնակալն խնդրել օգնութ՟ 'ի գուքեպեքերայ վերակացուէ վաճառականութ՟ հօլանտացւոց 'ի Ֆիրանտօ. և նա վղվղկի հասեալ անդր միով արքունի նաւաւ (զի յայնժամ՝ մի միայն նաւ հօլանտացի գտանէր անդ) սկսաւ չարագոյն ևս ք՟ զբուն կռապաշտ ճապօնացիս մարտնչել ը՟դդէմ քրիստոնէից, աւուրս հնգետասան անխոնջ ռմբաձիգ լեալ 'ի բերդ անդր, մինչև քանդեալ կործանեաց. և զքրիստոնեայս ամրացեալս 'ի նմա իսպառ սրով կոտորեաց: Եւ այնու բարձաւ և իսպառ անհետ եղև 'ի ճապօնաց երկրպագելի անունն յի՟սի 'ի մշտնջենաւոր նախատինս հօլանտացւոց. որք 'ի վարձ այսպիսի արդագալուր հնազանդութ՟ խնդրոյ ինքնակալին՝ ակնունէին միանգամայն ժառանգել զամ՟ ազատութ՟ս և զարտօնութ՟ս և զճոխութ՟ս. յորոց՝ 'ի ձեռն մատնութ՟ իւրեանց, կողոպտեցան փորդուքալք:

Այլ վրիպեցան 'ի յուսոյ. զի Թէպ՟տ Թոյլ տուաւ նց առնել անդ վաճառականութ՟ս, բայց առ ժամայն ետուն քանդել 'ի հիմանց զվաճառնոց նց, զոր նորոգ շինեալ էին 'ի Ֆիրանտօ 'ի կոփածոյ քարանց. վս զի թուականն փրկչին մերոյ քանդակեալ կայր 'ի վը՟. և փո-

փոխադրեցին զնոսա 'ի Տէսիմայ փոքրիկ կղզի , որ շինեալ էր Փորդուգալաց : Եւ փոխանակ ընդարձակ ազատութեանց , որոց ակնունէին , զնին կապանք եդան 'ի վերայ նոցա հանդերձ անարգալից պայմանօք . զորս ահա 'ի վեր անդր 'ի ճառս վաճառային Ճեապոնիայ յիշատակեցաք . յորոց ըստ հասարակաց համբաւոյ՝ մին էր այս . զի ուրացին զՔրիստոս . և առ ոտս կոխեցին զնշան խաչին : Բայց Կեմփեր հոլանտացի յորժամ գտաւ 'ի Ճեապոն , ամենայն խնամով փոյթ կալաւ ստուգել զայս յայլ և այլ գրուածոց և 'ի ծերոց Ճեապոնիայ . այլ ոչ ինչ կարաց գտանել . բայց միայն զայս . թէ հոլանտացիք ասէին թէ չեմք քրիստոնեայք , այլ հոլանտեցիք , կամ չեմք քրիստոնեայք որպէս զՓորդուգալս և զՍպանիացիս : Եւ նա խոստովանի թէ իսպառ անհետ առնէին , որպէս և այժմ 'ի հասանել անդ , անհետ առնեն զամենայն արտաքին նշանս քրիստոնէութեան . որպէս առնուլ 'ի բերան զանուն Յիսուսի Քրիստոսի . առնել աղօթս ըստ սովորութեան քրիստոնէից . պահել զօր կիւրակէի . ընդդէմ գտանել կամ գէթ անհաճութիւն ցուցանել 'ի լսել զհայհոյութիւն ընդդէմ Տեառն մերոյ ևն . և զի միանգամայն ասացից՝ ամենայն իրօք ցուցանել զանձինս ոչ քրիստոնեայս , կամ յայտնի անհաւատս ձեւանալ . որ ոչ ինչ ընդհատ է 'ի յայտնի ուրացութենէ . կամ առ ոտս կոխելոյ զնշան խաչին : Այլ մեք դարձցուք անդրէն 'ի կարգ բանից մերոց : Յետ այսց վերջին հարուածոց քրիստոնէից , կամեցեալ Ճեապոնացւոց անպարտելի արգելս դնել ընդդէմ քրիստոնէութեան 'ի չծաւալիլ միւսանգամ յերկիր իւրեանց , դիւաշունչ խորհրդով դժոխային օրէնս հաստատեցին : Քանզի ամի ամի 'ի վերջին ամսեան տարւոյ վերակացուք ամենայն թաղից հանդէս առնեն բնակչաց թաղի իւրեանց . գրելով 'ի ցուցակի զանուն , զհասակ , զտեղի և զօր ծննդեան , զարուեստ և զաղանդ բնակչաց իւրաքանչիւր տան , և ապա յերկրորդում աւուր նոր տարւոյ շրջին տանէ 'ի տուն . ունելով ընդ ինքեանս և երկու դահիճս . որք բարձեալ տանին զերկրպագելի պատկեր խաչելութեան փրկչին մերոյ . և զԱստուածամօր կուսին , և ըստ ցուցակին մի առ մի յանուանէ կոչելով զամենայն բնակիչս տան , հրամայեն նոցա առ ոտս կոխել զայն սուրբ պատկերս , մինչև ցնորածին մանկունս , զորս մարք նոցա կալեալ 'ի գիրկս դնեն զոտս նոցա 'ի վերայ սուրբ պատկերացն . Ով դժոխային ամբարշտութեան . ապա տանուտէր տանն զկնիք իւր դըրոշմէ 'ի վերայ ցուցակին 'ի հաստատութիւն վկայութեան , թէ այն հրաման կատարեցաւ 'ի տան իւրում : Զայս ավորութն դիւահնար Ճէաբօնացիք եէֆումի կմ Ճէֆումի կոչեն . որ թարգմանի պատկերակոխութն . որ և է հանդիսական ուրացութն քրիստոնէական հաւատոյ . և ապա զցուցակն զայն հանդերձ կնքով համօրէն տանուտեարց տանին առ ջիղքապետն : Սալմօն ասէ թէ զայս հանդիսական գործ ուրացութե ոչ առնեն ը̃ բմ տեղիս Ճէաբօնիայ , այլ միայն 'ի Նանկասագ քղքի և 'ի գւղս օմուրայ և պունկայ , ուր առաւելապէս ծաղկեցաւ քրիստոնէական կրօնն : Սակայն թուի թէ 'ի սկզբան անդ ը̃հանուր էր սակս դիւական ատելութեն , զոր ունէին ը̃դէմ քրիստոնէութն , և վս առաւել ապահովութե , առ 'ի չիմալոյ յանկեան ուրեք հետք քրիստոնէից :

Այս հրդեհ հալածանաց , որ երկարեցաւ ը̃ ամս իբր հարիւր և առաւել , 'ի սկզբան անդ սաստիկ էր յոյժ . զի որք միանգամ հրաժարէին 'ի կոխելոյ զնր պատկերս զայնոսիկ , կմ զայլ ինչ նշան քրիստոնէութե ցուցանէին , վղվղկի 'ի տանջանս մահու մատնէին . և եթէ 'ի տան ուրուք ըմբռնէին զոք 'ի քրիստոնեայ քհնյից , զքհնյն և զընտանիս տանն դառն տանջանօք սպանանէին . միանգամայն և զդրացիս դժնդակ պատժօք պատուհասէին , սակս ոչ մատնելոյ զլինել քրիստոնեայ քհնյի 'ի տան դրացւոյ իւրեանց : Այլ զկնի ժմկաց 'ի փոփոխել ինքնակալաց Ճէաբօնիայ , առ փոքր փոքր մեղմացաւ խստութն հալածանաց . և այնուհետև զորոց կարծիս քրիստոնէութե առնուին , 'ի մշտնջենաւոր բանտս արկանէին 'ի Նանկասագ քղքի . զայն բանտ Ճէաբօնացիք կօքույա կոչեն . այս է՝ դժոխք . զի որ միանգամ անդ արկանի . չունի այնուհետև յոյս ազատութե երբէք : Կեմֆեր , թէ յիւրում ժմկի , որ չէր իսկ հեռի 'ի վերջին հալածանաց սաստի , էին ը̃ մբ 'ի Ճէաբօնացւոց 'ի բանտի անդ ը̃ այլ չարագործս , սակս քրիստոնէութե . որ ը̃ այն ժմկս էր յանցանք քրէական մեծ քան զայլ ամ եղեռնական ոճիրս : Իսկ այժմ լուաք թէ առաւել ևս զիջեալ մեղմացաւ այն խստութն հալածանաց ը̃դէմ քրիստոնէից , մինչև մտանել անդ և քհնյից , բայց 'ի ծածուկ ամենևին . վսյ թուի թէ այժմ գտանին անդ քրիստոնեայք : Այսչափ ինչ վս կրօնից Ճէաբօնիայ և վս այլոց ը̃հանուր հանդամանաց նր . արդ նշանակեսցուք յառաջիկայդ ըզբաժանումն գւռաց նր :

ԺԴ. Բաժանումն Ճէաբօնայ :

Տէրութիւն Ճեաբօնայ 'ի բազմապատիկ կղզիս բաժանի. որք պարփակին յերիս մեծամեծ կղզիս. որք են ՙՆիփօն, որ մեծ է քան զայլս, յորմէ բոլոր տէրութիւնն առնու զանուն. Գիւսիւ կամ Գիմուսիւ. և Սիգօգ կամ Սայգօֆ և ՙԳօսմա : Առ սոքիմբք երիւք մեծամեծ կղզեօք կան սփռեալ և այլ բազմապատիկ մանր կղզիք. յորոց ոմանք ապառաժուտ են և անբեր. այլք արգաւանդք բարեբերք և բազմամարդք : Միխաուն կամ մանսուն ինքնակալն Ճեաբօնացւոց բաժանեաց զտէրութիւն յեօթն մեծամեծ նահանգս. ը̃ 'ի հինգ նահանգս Նիփօնոյ, որք են Թօգայտօ. Թօսանտօ. Ֆօգուռ, կամ Խօգուռօգուղ. Սանինտօ. Սանիօտօղ. և յերիս կղզիս. որք են Գինայի. Սիքօք, և Ասափի. բայց երկու յետինքդ զմի նահանգ կացուցանեն : Այլ յետոյ 'ի 681 Դէնմու ինքնակալն բաժանեաց զհամօրէն տէրութիւն 'ի 66 նահանգս կամ գաւառս իւրաքանչիւրոց մի մի փոխարքայս կամ կուսակալս կարգեալ. յորս յաւել և զերկու կղզիս զՕքի, կամ Իգի. և զՉուսիմա, կամ Իփուսմա. զորս երկերիւր ամօք յառաջ առին Ճեաբօնացիք 'ի Գօրէացւոց : Վերջոյ համօրէն տէրութիւն Ճեաբօնացւոց բովանդակի 'ի 68 կուսակալութիւնս. որք յետոյ զկնի տիրելոյ Ճեաբօնացւոց և այլոց տեղեաց՝ բաժանեցան 'ի 104 փոքրիկ գաւառս : Արդ՝ կամեցեալ յայսմ վայրի ստորագրել զայս տէրութիւն, 'ի նախակարգեալ բաժանմանց կալցուք զվաթսունեան բաժանումն :

ՙՆիփօն կղզի :

Այս կղզի որ է գլխաւոր 'ի կղզեաց Ճեաբօնայ. և մեծ քան զամենայն կղզիս նա բաժանի 'ի հինգ նահանգս, որք վերագոյնդ նշանակեցաք. զորս յառաջիկայդ ստորագրեսցուք :

Յօդ Ա. Թօգայտօ :

Թօգայտօ նշանակէ երկիր հարաւոյ. և պարունակէ հնգետասան գաւառս 'ի 68, կուսակալութեանց անտի Ճեաբօնայ. որք են :

Իկա, կմ Իսիու : Որ է երկիր ջերմագին, այլ ոչ այնչափ բերրի. զի բաց 'ի խոտոց ինչ, որք են 'ի պէտս դեղօրէից, և պտղաբեր, և անպտուղ ծառոց, այլ ինչ նշանաւոր բերս ոչ ունի. որ և բաժանի 'ի չորս փոքրիկ վիճակս :

Իսէ, կմ Սէիսիու : Այս գաւառ գրեթէ ըստ բոլորին պատեալ է 'ի ծովու. երկայնութն նր է իբրև երից աւուրց ճնպհ արգաւանդ է և բարեբեր, և զուարճալի 'ի պատճառս բազմապատիկ գեղեցիկ բլրոց :

Սիմա, կմ Սիսիու : Է փոքրիկ տարածութիւն երկրի իբրև կէս աւուր ճնպհ. չոր և անբեր, այլ 'ի ծովեզերեայ կողմանս ունի ձուկն, և ազգի ազգի ծովային խխունջս առատ :

Օվարի, կմ Պիսիու : Զգի 'ի ներքսակողմն կղզւոյն. և է մի յառաւել արգաւանդ և 'ի բազմամարդ գաւառային ճնպհայ. երկայնութն նր է իբրև երից աւուրց ճնպհ. և բաժանի 'ի 9 փոքրիկ վիճակս :

Միկավա, կմ Միկէն : Այս գաւառ անբեր է և աղքատ. լի են 'ի նմ հեղեղատք, փոքրիկ գետք, և լճացեալ ջուրք. երկայնութն նր է իբրև միոյ աւուր ճնպհ. և է բաժանեալ 'ի 8 փոքրիկ վիճակս :

Եոտօմի, կմ Ենսու : Կարի արգաւանդ է, փարթամ և զուարճալի. ունի բազում գեղեցիկ բլուրս, և գետս կարկաջահոսս, և սահանակիսս. և հովիտս, և դաշտս արգաւանդս. գեղեցիկ քաղաքս, և գեօղս. երկայնութն նր է ճնպհ երկուց աւուրց և կիսոյ. և բաժանի 'ի 18 վիճակս :

Սուրունկա, կմ Սինսիա, արգաւանդ է, և զուարճալի. ունի բլուրս գեղեցիկս, և դաշտս արգասաւորս, և ջրկքս [illegible], և գեօղս. մեծութն նր գրեթէ է ըստ չափոյ նախընթաց գաւառին. և բաժանի 'ի 7 փոքրիկ վիճակս :

Գայիսիուն, կմ Քայսիօսա. դաշտային է. բերէ որիզ առատ. և խոտս բժշկականս, և ծառս. ունի արօտս խոտաւէտս. և անասունս բազումս, մանաւանդ երիվարս. երկայնութն նր իբրև երկուց աւուրց ճնպհ. և բաժանի 'ի 4 վիճակս :

Իդզուսօ, կմ Թօսիուն : Է երկայն ցամաքակղզի ոչ այնչափ ինչ բերրի. զի լեռնային է, սակայն ուրեք ուրեք ունի դաշտավայրս. որք բերեն որիզ. ունի և աղ առատ. և ձուկն : Երիս վիճակս ունի 'ի ցամաքին, այլև երկուս 'ի կղզիս մօտաւորս :

Սագամի, կմ Սօսիուն, դաշտային է, բայց չէ այնչափ ինչ արգասաւոր : Ունի ձուկն առատ, և կրիայ. և խեցգետին. այլև փայտ բազում՝ ՚ի պէտս շինուածոց. և բաժանի ՚ի 8 վիճակս:

Մ––––է, կամ Պէնօյն: Այս գաւառ մեծ է քան զամ Նախընթաց գաւառս. զի երկայնութիւն նր է հնգօրեայ ճնպհ. դաշտային է. և արգաւանդ. այլ չունի անտառս փայտի: Եւ բաժանի ՚ի 12 վիճակս: Անդ է յեգով արքայանիստ մայրաքաղաքն համօրէն ճեռաբօնայ:

Աշլա, կամ Փօօսխա: Է գաւառ անշուք և ամայի. զի բնակիչք նր սակաւ են. ունի լերինս և բլուրս, և դաշտս բազմս. ուրեք ուրեք և դաշտային տեղիս, որք բերեն որիզ, և զայլ արմտիս, և ձուկն բազում. զոր որսան ՚ի մերձակայ ծովէն: Երկայնութիւն նր է միոյ աւուր ճնպհ. և բաժանի ՚ի 4 վիճակս:

Քափառնաս, կամ Քօսխա. լեռնային է և ապառաժուտ, ստատ և անբեր: Մեծագոյն մասն բնակչաց նր կտաւագործ են. որք գործեն կտաւս ՚ի կանեփոյ, և նաւաւ դարմանեն զկեանս. և բաժանի ՚ի 11 վիճակս:

Փիլիաչ, կամ Սէյօլ: Այս գաւառ մեծ է, և քառակուսի, երկայն եռօրեայ ճնպհ, նոյնչափ է և լայնութիւն: Չէ այնչափ ինչ արգաւանդ. բայց մետաքս բազմ բերէ. յորմէ բնակիչք նր գործեն պէսպէս կերպասս և բաժանի ՚ի 11 վիճակս. յորոց ոմանք կղզիք են:

Սէօսա, կամ Սէնօսա. լեռնային է, ունի անտառս բազմս. և ազգի ազգի թռչունս. Երկայնութիւն նր է եռօրեայ ճնպհ. և բաժանի ՚ի 15 վիճակս:

Այս ամ գաւառք միանգամայն՝ ամի ամի պտղաբերեն. իբրև 3 միլիոն. երկու հարիւր չորեքտասան հազար քոռ ցորենոյ:

Յօդ Է. Թրօսանտօ:

Թրօսանտօ. նշանակէ լեռնային երկիր արեւելեան. և պարագրէ ութն գաւառս, որք են:

Դօօմ: Է գաւառ արգաւանդ. ունի լերինս, և բլուրս, և դաշտս, այլև դաշտս պարարտս և բերրիս, որք բերեն ցորեան, որիզ, և այլ արմտիս առատ յոյժ, որ Ը ամից ճեռաբօնայցոց Է միոյ բերեն հազար: Երկայնութիւն նր է եռօրեայ ճնպհ և կէսոյ. և բաժանի ՚ի 13 վիճակս:

Մինօ, կամ Քրօսխու, գրեթէ չէ ինչ ընդհատ յառաջնոյն, զեղեցկութ դրիւն, և արգասաւորութ երկրին.

րին · Երկայնութն՟ նր՟ է եռօրեայ ճնպհ՟ · և բաժանի 'ի 18 վիճակս :

Սինանօղ, կմ՟ Սինասիւ : Այս գւռ՟ ցրտային է, որ հեռի գոլով 'ի ծովէն, ձուկն և աղ սակաւ ունի · նոյնպէս և անասունք նր՟ սակաւ են, 'ի պատճառս նուաղութե՟ արօտոյ : Սակայն բերէ թթենի և մետաքս բզ՟մ · նոյնպս՟ և կանեփ, և վուշ · յորոց պէսպէս ձեռագործս առնեն բնակիչք նր՟ : Երկայնութն՟ նր՟ է հնգօրեայ ճնպհ՟ · և բաժանի 'ի 11 վիճակս :

Քօցուքէ, կմ՟ Ճեօսիւ : Այս գւռ՟ ջերմ է · և գլխաւոր բերք նր՟ են թթենիք · բայց մետաքս նր՟ չէ այնչափ լաւ · վսյ՟ և կերպասն, զոր գործեն անդ ոչ է 'ի համարի : Երկայնութե՟ նր՟ է չորեքօրեայ ճնպհ՟ · և բաժանի 'ի 14 վիճակս :

Սիմօցքէ, կմ՟ Եասիւ : Այս գւռ՟ դաշտային է, և արգաւանդահող · բերէ ցորեան, ոլոռ, և այլ ազգի ազգի սերմանիս առատ · ունի և արօտս անասնոց խոտաւէտս : Երկայնութե՟ նր՟ է երից աւուրց և կիսոյ ճնպհ՟ և բաժանի 'ի 9 վիճակս :

Մուցին, կմ՟ Ոշիւն : Այս գւռ՟ մեծ է քն՟ զամ՟ գւռս՟ ճէապօնայ · զի երկայնութն՟ նր՟ է վեշտասան աւուրց ճնպհ՟ · և արգաւանդ · Եւ այլոց ունի զամ՟, որ ինչ կարևոր է 'ի պէտս քղ՟քական կենաց : Յռ՟աջագոյն 'ի միասին ը՟ հետագայ տէվա գւռ՟իդ՝ ունէր իւր սեփական հրամանատար իշխան, այլ այժմ բաժանել՟ է 'ի 54 կմ՟ 55 վիճակս :

Տէվա, կմ՟ Ուսիւ : Է գւռ՟ մեծ · երկայն հնգօրեայ ճնպհ՟ · ունի արօտս բզ՟մս · և անասունս բազմածաւս · և ազգի ազգի պատուականս բոյսս : Ասեն թէ գարունն սկսանի անդէն 15 աւուրբք յռ՟աջ քն՟ յայլ տեղիս : և բաժանի 'ի 12 վիճակս :

Ըստ հին ցուցակաց, կմ՟ հաշուէից բերք այսց ութ գւռ՟ացս հասանէին 93 միլիոն վեց հարիւր երեսուն և երկու հազար քոռ ցորենոյ · այլ այժմ ասեն թէ առաւելել՟ է յոյժ :

Յօդ Զ · Փօգու, կմ՟ Ռօգուտօվ :

Անուն Փօգօս · Ռօգուտօվ · նշանակէ երկիր հիւսիսային · և պարունակէ զեօթն հետագայ գւռս :

Վաքասա, կմ՟ Սիագուքիւ : Է գւռ՟ փոքրիկ՝ կիսայ ոււուր ճանապարհաց ընդ երկայնութիւն առ ափն ծովու 'ի հիւսիսակողմն. ուստի և ունի ձուկն բազում, և խեցգետին, և կրիայ. և այլ խեցեմորթս. այլ և բովս երկաթոյ. և բաժանի 'ի 3 վիճակս :

Եէտչիզէն, կամ Իւէշիու. Հարաւային կողմն նորա լեռնային է. իսկ հիւսիսայինն դաշտային, և արգաւանդ. ունի արօտս խոտաւէտս. և անասունս բազումս. բերէ կանեփ առատ, և մետաքս, և օրիզ: Երկայնութիւն նորա է եռօրեայ ճանապարհ. և բաժանի 'ի 12 վիճակս :

Գանկա, կամ Գասիու : Է երկիր բարի, և արգաւանդ. բերէ օրիզ առատ յոյժ. գործեն անդ քացախ պատուական, զոր Սագէ, և Եօյա կոչեն, որով և բազում տուրևառութիւնս առնեն. ունի և գործարանս կերպասուց. երկայնութիւն նորա է երկուց աւուրց և կիսոյ ճանապարհ. և բաժանի 'ի 4 վիճակս :

Նօտօ, կամ Սէսիու : Է ցամաքակղզի, որ ունի բովս երկաթոյ, և ձուկն առատ. այլ երկիր նորա անբեր է. ցորեանն, և այլ արմտիք անագան ուրեմն ժամանեն անդ 'ի հունձս, քան յայլ տեղիս : Երկայնութիւն նորա է երկուց աւուրց և կիսոյ ճանապարհ. և բաժանի 'ի 4 վիճակս :

Եէտչիու, կամ Քոյշիու : Այս գաւառ կարի արգաւանդ է. բերէ ցորեան. և այլ արմտիս առատ յոյժ. անդ շինեն խեցեղէն անօթս 'ի մասնաւոր լեռին կաւոյ, որք ընդ ամենայն տեղիս 'ի յարգի են. ունի և փայտս 'ի պէտս շինուածոց. Երկայնութիւն նորա է եռօրեայ ճանապարհ. և բաժանի 'ի 4 վիճակս :

Եէտչինկօ, կամ Դէսիու : Այս գաւառ լեռնային է. մանաւանդ 'ի հարաւային կողմանս իւր, բայց արգասաւոր է. բերէ մետաքս. և կանեփ. Երկայնութիւն նորա է վեցօրեայ ճանապարհ. և բաժանի 'ի 7 վիճակս :

Համօրէն այս գաւառք, հանդերձ Սատօ կղզեաւ, որ է մի 'ի գաւառաց սորին նահանգի, զոր ստորև ունիմք ստորագրել, ամի ամի բերեն իբրև միլիոն մի և հինգ հարիւր երեսուն և վեց հազար քոռ ցորենոյ :

Յօդ Է. Սաննինտօ :

Սաննինտօ. Նշանակէ լեռնային երկիր հիւսիսոյ. պարունակէ զութն հետագայ գաւառս :

Դոմպա, կամ Դամպա, կամ Դանշիու : Այս գաւառ թէպէտ չէ կարի արգաւանդ. բայց և ոչ այնչափ անբեր.

բեր · դլխաւոր բերքն նր̄ են ցորեան, որիզ, լուպլեայն է՝ ֆասուլեայ · և այլ արմտիք · այլև փայտ 'ի պէտս հրոյ: Երկայնութիւն նր̄ է երկուց աւուրց և կիսոյ ճ̄նպհ · և բաժանի 'ի 6 վիճակս ։

Գաւխօ: Այս գ̄ւռ բերէ մետաքս · և կանեփ բ̄զմ · ունի և ձուկն առատ՝ գոլով ծովեզերեայ: Երկայնութ̄ն նր̄ է միոյ աւուր և կիսոյ ճ̄նպհ · և բաժանի 'ի 5 վիճակս ։

Դաւխմա · գրեթէ յա̄մի նման է նախընթաց գ̄ւռիդ, բայց միայն ը̄ տարածութ̄ն փոքր մի մեծ է ք̄ զնա · զի երկայնութ̄ն նր̄ է երկօրեայ ճ̄նպհ · և բաժանի 'ի 8 վիճակս ։

Իմաղա, կամ Ինոխա: Այս գ̄ւռ հաւասար է դաւխմա գ̄ւռին մեծութ̄բ, և արգասաւորութ̄բ · գործեն անդ բ̄զմ մետաքսեայ կերպասս, այլ խոշորս · և բաժանի 'ի 7 վիճակս:

Ֆօգէ, կամ Ֆօգումէն: Այս գ̄ւռ թէպտ չէ այնչափ ինչ արգասաւոր · սակայն բերէ չափաւոր ցորեան · մետաքս · և կանեփ · ունի և գործարանս պէսպէս ձեռակերտաց: Երկայնութ̄ն նր̄ է երկուց աւուրց և կիսոյ ճ̄նպհ · և բաժանի 'ի 6 վիճակս ։

Գառառանօ, կամ Ոնոխա: Է խիստ ցամաքակղզի, ունելով շուրջանակի զծովն գօրկայ · և է արգաւանդ յոյժ, բերէ ազգս ազգս արմտեաց առատ, և ծառս, և խոտս 'ի պէտս դեղօրէից · ունի և արօտս անասնոց: Անդ գործեն պէսպէս խոշորանիւթ կերպասս: Երկայնութ̄ն նր̄ է երկուց աւուրց և կիսոյ ճ̄նպհ · և բաժանի 'ի 10 վիճակս ։

Իաջաֆ, կամ Սէփէնոէ: Այս գ̄ւռ չէ այնչափ ինչ արգասաւոր · դլխաւոր բերքն նր̄ է կանեփ · ունի և աղ · այլ սակաւ: Բնակիչք նր̄ կրկնապատիկ հարկս տան իշխանի նր̄: Երկայնութ̄ն նր̄ է երկօրեայ ճ̄նպհ · և բաժանի 'ի 5 վիճակս:

Տարեկան բերք հանդերձ օդի կղզեաւ, որ է մի 'ի գ̄ւռաց նր̄, բերէ յամին եօթանասուն և ինն հազար քոռ ցորենոյ ։

Յօդ Է · Սամիտուլ ·

Սամիտուլ · որ նշանակէ լեռնային, կամ ջերմ երկիր հարաւային · և բովանդակի յութ̄ն հեռադաց գաւառս ։

Ֆարիմայ, կմ Պանսիւ: Այս գաւառ արգաւանդ է. ունի առատապէս զձուկ, որ ինչ կարեւոր է կենաց մարդկան. այլեւ գործարանս ազնիւ ձեռագործաց. որպէս կերպասուց, Թղթոյ, եւ չուխայի: Երկայնութիւն նր է երից աւուրց եւ կիսոյ ճանապարհ. եւ բաժանի 'ի 14 վիճակս:

Միմասագա, կմ Սագուսիւ. Թէպէտ չէ այնչափ ինչ արգասաւոր, սակայն ունի չափաւորապէս, որչափ ինչ հարկաւոր է 'ի պէտս բնակչաց իւրոց. պտուղ բազում բերէ. որպէս եւ ազգի ազգի խոտս 'ի պէտս դեղօրէից: Այս գաւառ 'ի մէջ ամ գաւառացն ճապօնայ յաւէտ պատսպարեալ է 'ի հողմոց: Երկայնութիւն նր է եռօրեայ ճնպհ. եւ բաժանի 'ի 8 վիճակս:

Պիզէն, կմ Պիսիւ. Ջերմ է, եւ չափաւորապէս արգասաւոր. մետաքս բազում բերէ. պտուղք պարտիզաց նր վաղագոյն հասանեն, քան այլոց միջակայ գաւառաց: Երկայնուն նր է եօթն աւուրց ճնպհ. եւ բաժանի 'ի 11 վիճակս:

Պիտչիւ, կմ Ֆիչիւ: Է գաւառ փոքրիկ, այլ պատուական եւ բարեբեր յոյժ. ցորեան, եւ կանեփ կարի դիւրագին են անդէն: Երկայնուն նր է կիսոյ աւուր ճնպհ. եւ բաժանի 'ի 9 վիճակս:

Պինգօ, կմ Ֆինսիւ. Թէպէտ չէ այնչափ առատաբեր. որպէս նախընթաց գաւառն. բայց բերէ առ բաւականին ցորեան, եւ որիզ: Երկայնուն նր է երկուց աւուրց ճնպհ. եւ փոքր մի աւելի. եւ բաժանի 'ի 14 վիճակս:

Աքի, կմ Կէսիւ: Այս գաւառ լեռնային է, եւ չոր. գլխաւոր բերք նր են փայտ 'ի պէտս շինուածոց. զի ունի անտառս յոլովս. եւ ազգի ազգի սունկս. որ է մանրթար. բերէ եւ աղ. եւ ցորեան, եւ որիզ. եւ այլ արմտիս. այլ սակաւ: Երկայնուն նր է երկօրեայ ճնպհ. եւ բաժանի 'ի 8 վիճակս:

Սուօ: Ունի պատուական արօտս անասնոց. եւ բանջարս 'ի կերակուր մարդկան. եւ 'ի ծովեզերեայ կողմանս նր ազգի ազգի ձկունս, եւ պէսպէս ծովային խեցեմորթս: Երկայնուն նր է եռօրեայ ճնպհ. եւ բաժանի 'ի 8 վիճակս:

Նագատօ, կմ Դօսիւ: Է արգասաւոր յոյժ. զի բերէ կրկնապատիկ առաւել, քան որչափ ինչ բաւական է 'ի պէտս բնակչաց նր: Երկայնուն նր է երկուց աւուրց եւ կիսոյ ճնպհ. եւ բաժանի 'ի 6 վիճակս:

Տարեկան մուտք այսր նահանգի է իբրեւ միլիոն մի եւ եօթն հարիւր երեսուն եւ հինգ հզր քոռ ցորենոյ:

Յօդ Է. Գիւսիւ :

Այս կղզի է մի յեօթն Տաց, կամ նահանգացն Ճէաբօնայ, որ կոչի և Սայգայտօ. և նշանակէ ընդարձակ տարածութիւն արևմտեան ծովեզերեայց. բաժանեալ յինն գաւառս :

ՉԻԳՈՒԶԷՆ : Այս գաւառ չափաւորապէս արգաւանդ է, բերէ ցորեան, որիզ, և այլ արմտիս : Ունի գործարանս, ուր գործեն անբաւ անօթս պատուականս յախճապակեայս : Եւ բաժանի 'ի 24 վիճակս :

ՉԻԳՈՒԿՕ : Է գաւառ մեծ, և արգաւանդ, բերէ ցորեան և որիզ. և զայլ արմտիս առատ : 'Ի ծովեզերեայ կողմանս իւր ունի և ձուկն առատ, և խեցգետին, որ այն ինքն է ըստախող, և այլ ծովային խեցեմորթս : Բզմ̄ քաղցրաւենիքն՝ որ է ըռւէչէլ, գործեն անդ, և առաքեն յայլ գաւառս 'ի վաճառ : Երկայնութիւն նր̄ է հնգօրեայ ճնպ̄հ. և բաժանի 'ի 10 վիճակս :

ՊՈՒԶԷՆ : Այս գաւառ անուանի է վս̄ ազգի ազգի բժշկական խոտոց իւրոց : Անդ գործեն պէսպէս մետաքսեայ պատուական կերպասս. յորոց յոլովք գնան յարքունիս իբրև մաքս : Երկայնութիւն նր̄ է չորեքօրեայ ճնպ̄հ. և բաժանի 'ի 8 վիճակս :

ՊՈՒՆԿՕ : Ոչ է այնչափ ինչ արգասաւոր, բերէ թթենիս. և կանեփ. և խոտս բժշկականս. ունի և գործարանս չուխայի : Երկայնութիւն նր̄ է եռօրեայ ճանապարհ. և բաժանի 'ի 8 վիճակս :

ՖԻԶԷՆ : Այս գաւառ թէպէտ չէ այնչափ ինչ բերրի. այլ ունի ձուկն առատ. և թռչունս վայրենիս. այլև բզմ̄ գործարանս չուխայի : Բոլոր շրջապատ նր̄ է իբրև հնգօրեայ ճնպ̄հ. և բաժանի 'ի 11 վիճակս :

ՖԻԿՕ : Փայտ բազում ունի 'ի պէտս շինուածոց, և հրոյ. ունի և ցորեան. և այլ արմտիս, և ձուկն. որչափ ինչ բաւական է բնակչաց : Շրջապատ նր̄ է եռօրեայ ճնպ̄հ. և բաժանի 'ի 14 վիճակս :

ԴԻՒՈՒԿՕ, կամ ՆԻՍԻՈՒ : Այս գաւառ այնչափ բերս բերէ, որ հազիւ բաւական է կարևոր պիտոյից բնակչաց, զի զմեծ մասն նր̄ գրաւեն ապառաժուտ և անբեր լերինք : Երկայնութիւն նր̄ է եռօրեայ ճնպ̄հ. և բաժանի 'ի 5 վիճակս :

ՕՍՈՒՄԻ, կամ ԿՈՒՍԻՒ. Թէպէտ փոքր է, սակայն արգաւանդ, և լիացեալ ամ̄ կարևոր պիտոյիւք. մանաւանդ

Ծոծայնոց: Անդ գործեն Թուղթ բամբ. և մետաքսեայ կերպասս:

Սալուամ, կամ Սոդոնէ. չէ այնչափ ինչ արգասաւոր. գլխաւոր բերք նր են Թթենիք, և կանեփ. գործեն և անդ չուխայ սակաւ, բայց ազնիւ, և բաժանի 'ի 14 վիճակս:

Մուտք համօրէն իննն գաւառացս այսոցիկ յամին հասանեն յերկու միլիոն հարիւր և տասն հազար քուա ցորենոյ:

Յօդ Է. Միքօք. և Աւատսի, կամ Աւատսի կղզիք:

Այս երկու երևելի կղզիք կացուցանեն զԵօթներորդ Ըն, կամ Նահանգն Ճեառօնայ. որք միանգամայն կոչին և Կանգայտօ. որ նշանակէ երկիր հարաւային. Ի որս է և մեծ գաւառն անուանեալ Գինօգուամ. որ է հարաւային գլուխն Ճեառօնայ. և բաժանին 'ի 6 հետագայ գաւառս:

Գինօգուամ, կամ Գինիւ: Այս գաւառ թէպէտ դաշտային է, բայց անբեր, չունի ոչ պտուղս, և ոչ սերմանիս. յերից կողմանց պատեալ 'ի ծովու: Բոլոր շըրջապատ նր է իբրև չորեքօրեայ և կիսոյ ճնպհ. և բաժանի 'ի 7 վիճակս:

Ալաւաթ, կամ Ալաւաք: Այս կղզի անբեր է. Թէպէտ ունի ձուկն, և աղ, այլ այնչափ ինչ, որ հազիւ բաւական է բնակչաց իւրոց. գործեն անդ և չուխայ խոշոր: Երկայնութիւն նր է իբրև միոյ աւուր ճնպհ. և բաժանի 'ի 2 փոքրիկ վիճակս. Ի նոքա են և երկու կղզիքն անուանեալք Մոնոխմա. և Տէնոխմա:

Ալաւա, կամ Ալաւի: Այս գաւառ դրեթէ Ի բոլորովին լեռնային է. ուստի և ոչ այնչափ արգասաւոր. բայց ունի արօտս և անտառս. և ազնիւ ազգի Թռչունս: Երկայնութիւն նր է իբր երկօրեայ ճնպհ. և բաժանի 'ի 9 վիճակս:

Սանտուլէ, կամ Սանտուխ. Ունի բազմ հերկելիս, լեռինս, և դաշտս արգասաւորս, որք բերեն ցորեան, որիզ և զայլ սերմանիս առատ: Անուանի է գաւառս այս առ Ճեառօնացիս վն երևելի աղբերանց, որք Ի ժամս ժամս ելլեն անտի: Երկայնութիւն նր է երեքօրեայ ճանապարհ. և բաժանի 'ի 11 վիճակս:

Իէօ, կամ Գօսխու: Այս կղզի ըստ մասին աւազուտ է, և ըստ մասին արգաւանդ. և բերէ որիզ, կանեփ, Թթենիս 'ի պէտս շերամոյ. և պէսպէս բոյս բժշկականս: Երկայնութիւն նորա է երկօրեայ ճանապարհ. և բաժանի 'ի 14 վիճակս:

Գւօստ, կամ Գւճնսա: Արգաւանդ է յոյժ, բերէ ազգի ազգի արմտիս առատ. ունի և պտուղս, և փայտ 'ի պէտս հրոյ և շինուածոյ, և զայլ ևս ինչ, որք հարկաւոր են մարդկային կենաց: Երկայնութիւն նորա է ըստ չափու նախընթաց կղզւոյդ. այլ լայնութիւն է իբրև 'ի կէս նորա:

Տարեկան բերք այսց վեց կղզեաց ժամանէ ցիննսուն հազար քոռ ցորենոյ:

Յօդ Ը. Գլխաւոր քաղաքք Ճեաբօնայ.

Թէպէտ բազմապատիկ քաղաքս ունի Ճեաբօն, որոց 'ի վեր անդր նշանակեցաք. այլ քաղաքն Ծադիրք՝ զորս ունէաք 'ի ձեռս բաց 'ի գլխաւոր քաղաքաց ինչ նորա, զորս հարևանցի իմն յիշատակեմ՝ զայլոց ինչ ոչ խօսիմ, կամ զի չունիմ զծանօթութիւն ինչ զնոցանէ, և կամ զի չկայր ինչ 'ի նոսա յիշատակաց արժանի: Վասնորոյ և մեք զնոցայն յիշատակեցուք ևեթ յայսմ վայրի առաջի դիցուք համառօտիւ. յորս գլխաւորքն են վեց. զորս Ճեաբօնացիք վասն փարթամութեան, մեծութեան և բազմամարդութեան արքայականս կոչեն:

ՅԵԴՈՎ, կամ Եէտօ: Է այժմ գլխաւոր և առաջին մայրաքաղաք համօրէն տէրութեան Ճեաբօնայ, աթոռ ինքնակալի նորա և բազմաթիւ իշխանաց և մեծամեծաց. մեծ և բազմամարդ և բազմավաճառ. և շտեմարան արուեստից և անհամար արուեստաւորաց. կառուցեալ իբր ընդ 35 աստիճանաւ և 30 բոպէիւ հիւսիսային լայնութեան առ դունկուս կամ դօնքաւ գետով. որ անցեալ ընդ մէջ քաղաքին, դնայ անկանի 'ի ծովն ընդ հինգ առաջս. ուր և ձևացուցանէ նաւահանգիստ մեծ և պատուական: 'Ի վերայ այսր գետոյ են բազմապատիկ կամուրջք մեծաշէնք, յորոց մին, որոյ երկայնութիւն է իբր 42 կանգուն՝ երևելի է. զի է միջակէտ հանրկաց, յորմէ չափին ճանապարհք և հեռաւորութիւնք տեղեաց համօրէն տէրութեան Ճեաբօնայ: Երկայնութիւն քաղաքիս է իբր 35 մղոն կամ ըստ այլոց՝ միոյ աւուր ճանապարհ.

պարհ · լայնութիւն իբրև 25 · իսկ բոլոր շրջապատն 100։ Եւ է անպարիսպ · այլ փխկ պարսպաց ունի բզմ խրամս խորայատակս · և առ նոքօք հողակերտ թումբս մեծամեծս ամրականոյս և ծառազլեցս ։ Իսկ թիւ բնակչաց բզմ յոյժ, որ ոմանց առաւել քան զերկու միլիոնս · այլ ձև քղքին անկարգ · զի առ սակաւ սակաւ շինեցաւ · և շինուածք սոցա նց անշուք դեռնայարկ ցածունք, և որ մեծի մասին փայտակերտք սակս սաէպ գետնաշարժութե · արտաքուստ ծեփեալ կաւով · և 'ի ներքուստ պատեալ ծաղկենկար թղթովք · և ներքին անջրպետք սենեկաց բոլորովին թղթեղէնք · իսկ յարկք նց մանր տախտակօք կմ ․ երախւք ծածկեալ ։ Եւ զի յաճախ պատահէ անդ հրդեհ, սակս փայտակերտ շինուածոց նց · վն այնորիկ իւմ տուն պարտական է ունել միշտ պատրաստական յառաստաղ անդր տանն տակառ մի մեծ լի ջրով · և զամ գործիս կարևորս 'ի շիջուցանել զհուր ։ Այս պատրաստութիւն այն բաւական է շիջուցանել զհուր միոյ միանակոր տան, այլ 'ի սաստկանալ հրդեհին՝ այնուհետև ոչինչ օգտէ, վզի յայնպիսի ժամս չունին զայլ հնար դադարեցուցանել զծաւալ հրոյն, բայց եթէ կործանելով զմերձակայ տունս · զի մի՛ հրոյն գտեալ ճարակ ևս քան զևս տարածեսցի ։ Յայն սակս պահապանք հրդեհից մաշկահանդերձ և բազմաթիւ զցայգ և զցերեկ շրջին ընդ փողոցս քղքին, ունելով երկաթի գործիս 'ի քանդել զմերձակայ շինուածս ուր պատահեն հրդեհք ։ Այս հրկիզութիւնք թէպէտ վնաս բզմ բերեն բնակչաց, բայց միանգամայն և նորոգեն և վայելչացուցանեն զքղքն, և կանոնաւորեն զփողոցս նց, զի փխկ առաջնոց թիւրաթեկ և անկարգ փողոցաց · շինեն փողոցս ուղիղս և կանոնաւորս · որք գրեթէ ուղղանկիւն հատանեն զմիմեանս ։

Յամ թաղս նց լի են մեհեանք կռոց մեծամեծք և մանունք · և մենաստանք քրմաց և միանձնից գիւաց ։ Այլև բզմ մեծամեծ ապարանք իշխանաց և մեծատանց՝ որոշեալք 'ի հնրկ տանց շրջափակ պարսպօք և մեծաշէն դրամբք, որք ունին առաջի աստիճանս կանոնաւորս և վայելուչս · այլ բովանդակ միայարկ են, թէպէտ առ փոքր մի բարձր 'ի գետնոյ · և 'ի ներքուստ բաժանեալք 'ի բզմ բնակարանս զարդարեալս մեծագին զարդու ։ Բայց գլուխ ամ շինուածոց քաղաքիս են արքունիք ինքնակալին կառուցեալ գրեթէ ընդ մէջ քղքին · ձևն որ է բոլորակ՝ այլ անկանոն · և շրջապատն իբրև 15 մղոն · բովանդակեալ յերիս մե-

ծա

ծամեծ դղեակս, որք շրջապատեն զմիմեամբք. և պարսպօք և խրամօք որոշին 'ի միմեանց. առ դուրս իւրաքանչիւրոց կարգեալ կան բազմութիւն պահապանաց: Առաջին դղեակն ընդարձակ է յոյժ, որ շրջապատէ զերկրորդն՝ և զմասն ինչ երրորդին, որ և այնչափ ճ մղոնս ունի և խրամս ջրալիս և անջուրս, զի Կեմփեր ոչ կարացին ըմբռնել զդիրս նորա, առ ճշգրտիւ գծագրելոյ 'ի թղթի: Յայսմ մասին բնակին ստորին կարգի իշխանք և պաշտօնեայք Ինքնակալին՝ հանգերձ իւրեանց ընտանեօք: Երկրորդն փոքր է քան զառաջինն. և է յանդիման երրորդին, բաժանեալ յերկուցունց ևս բարձր պարսպօք և խրամօք և շարժական կամրջօք: Ունի բազում հոյակապ և չքնաղազարդ ապարանս 'ի բնակութիւն գլխաւոր իշխանաց տէրութեան, արքունի խորհրդականաց, և նախապատիւ պաշտօնէից, և այլ մեծամեծաց. որոց պաշտօնն այն է միշտ առընթեր Ինքնակալին գտանիլ: Իսկ երրորդն, զոր տերապէս արժան է կոչել արքունի ապարանք. զի անդ է բնակութիւն Ինքնակալին և կանանց և որդւոց նորա՝ է 'ի բարձրագոյն վայրի քան զառաջինն. շըրջապատեալ քարաշէն ամրակուռ պարսպօք. ուստի և բովանդակ շինուած ապարանից է 'ի մեծամեծ որձաքար կոփածոյ վիմաց շարայարելոց առանց մածուցիկ կրոյ, և առանց խիղբս երկաթիս ագուցանելոյ 'ի միջի առ 'ի հաստատութիւն. զի 'ի լինել սասանութեան երկրի, տեղի տայցեն միմեանց քարինքն:

Յերկուց կողմանց ունի երկու փոքրիկ դղեակս ամրակուռս, որք են բնակարանք որդւոց արքային. և ընդ մէջ ապարանից աշտարակ քառակուսի՝ բարձր քան զայլ շինուածս 'ի բազում յարկս բաժանեալ. և այնպէս զարդարուն, զի 'ի հեռուստ զբոլոր շինուածն շքեղ և հոյակապ երևեցուցանէ: Իսկ 'ի ներքս անդ են բնակարանք, դահլիճք և սրահք մեծամեծք. և անհամար սենեակք մեծաշուք զարդարեալք. առաստաղք գերանք և սիւնք առհասարակ են 'ի սակաւագիւտ մեծագին և անփուտ փայտից. որոց երանգք բնատիպ ձևացուցանեն ծաղիկս, և այլ զանազան նորաձև պատկերս և նմանութիւնս. իսկ 'ի յատակս սենեկաց և սրահից սփռեալ կան ճարտարահիւս սպիտակ փսիաթք ոսկեհիւս վերջաւորօք զարդարեալք: Անդ է և գանձատուն արքունի գանձուց. որոյ դրունք պղնձի են. և առաստաղն երկաթի 'ի պաշտպանութիւն յերեսաց հրոյ: Պատմեն, թէ յարքունիս անդ է շինուած ինչ գետնափոր, յորոյ վերայ ջուր անցանէ. անդ՝ յորոտայն երկնից՝ խոյս տուեալ թաքչի ինքնակալն. Ք՟ղի Ճաբօնացիք համարին թէ ը՟ այնչափ թանձրութ՟ն որմոց չէ հնար թափանցել շանթից երկնից. յորմէ երկնչին յոյժ :

Ոչինչ կարի հեռի 'ի ք՟ղքէ աստի 'ի տեղի մի կոչեցեալ Եօկէյ, ուր կարգեալ կայ խումբ զօրաց 'ի պահպանութ՟ն, կեմփեր՝ յերթալն իւրում ը՟ դեսպանին հոլանտացւոյ 'ի յեդօմ ետես անդ հինգ մատուռս. և յիւրաքանչիւրում մի մի քուրմն, որք զարհուրելի ձայնիւ գոչէին. միանգամայն և հնչեցուցանէին փոքրիկ զանգակս. և ամ՟քն՝ որք ը՟ այն անցանէին՝ արկանէին դրամս 'ի մատուռս, և առնուին 'ի քրմաց անտի թուղթս. զոր կապեալ ը՟ քար, ընկենուին 'ի մերձակայ լիճ անդր Եակքօնա կոչեցեալ: Եհարց կեմփեր զպատճառ այնր օտարոտի գործոյ. և ասացաւ նմ՟, թէ 'ի լճի անդ 'ի մասնաւոր ինչ տեղւոջ, զոր Ճաբօնացիք Սայնօք քաւարա կոչեն, է քաւարան մանկանց, որք մեռանին մինչչև են հասեալ յեօթներորդ ամ՟ հասակի. և տանջին անդ, մինչև 'ի ձեռն աղօթուց ծնողհորդաց ազատեսցին : Իսկ 'ի թուղթսն, զոր ընկենուին 'ի լիճն, գրեալ կային անուանք ա՟ծոց և դից ն՟ց. և ասացաւ նմ՟ թէ յորժամ սկսանին ջնջիլ այն անուանք, թեթևանան 'ի տանջանաց հոգիք մանկանց. իսկ յորժամ բոլորովին անհետ լինին գրուածքն, յայնժամ և մանկունք ազատին 'ի պատժոյ :

Մէաքօ, կ՟մ Միաքօ. զոր Ճաբօնացիք առասական անուամբ առ 'ի պատիւ՝ կոչեն Քէօ, որ թարգմանի Ք՟ղք. իբր զի գոլով աթոռ տայիրին կ՟մ մեծի քահանայապետի իւրեանց, համարեալ է մայրաք՟ղք համօրէն տ՟րութ՟ե Ճաբօնայ. ուր և էր յառաջագոյն՝ յորժ՟մ տայիրն ը՟ հոգևոր իշխանութ՟ե, ունէր և զինքնակալութ՟ն աշխարհական : Է ք՟ղք մեծ բազմամարդ և բազմավաճառ յոյժ մինչև համարիլ իբրև հ՟րկաց շտեմարան վաճառուցն Ճաբօնայ. կառուցեալ յեամէթթօ կ՟մ եամաթսիրօ գ՟ւռի յը՟արձակ դաշտավայրի, որ շրջապատեալ է գալարագեղ բլրովք և լերամբք. և ոռոգեալ ականակիտ վտակօք ջուրց : Երկայնութ՟ն ք՟ղքին է իբր 3 մղոն. և լայնութ՟ն 2. 'ի սկիզբն անցեալ դարու ունէր տունս առաւել քան 100000. իսկ թիւ բնակչաց ն՟ր ը՟ հաշուէին, որ արարաւ նոյնպէս 'ի սկիզբն անցեալ դարու, զոր յիշատակէ տէլահարբէ, էր առաւել ք՟ 600000. թող զպաշտօնեայս տայիրին, որք բազ՟մ են յոյժ. և զտարականս, որք յաճախեն անդ յամ՟ կողմանց Ճաբօնայ.

նայ . վասն զի միշտ իբր միլիոն մի մարդկան գտանին անդ : Փողոցք նորա ըստ մեծի մասին նեղ են , այլ կանոնաւոր և երկայնաձիգ . իսկ շինուածք տանցն ցածուն և փայտակերտ . որոնցն ծեփեալ կաւով ըստ սովորութեան տանց յԵւրոպայ . որք և ըստ յԵւրոպացւոց՝ ունին միշտ պատրաստական ջուր և գործիս կարեւորս 'ի շիջուցանել զհրդեհ : Են անդ և բազում հոյակապ և ընդարձակ ապարանք մեծամեծաց , և անհամար մեհեանք կռոց . և մենաստանք դիւանոնէր միանձանց : Այլ յամենայն շինուածս երեւելի են ապարանք Տայիրին , կառուցեալ 'ի հիւսիսային կողմն քաղաքին . որ է մեծ և ընդարձակ յոյժ . զի պարփակէ զԹաղ մի ողջոյն . և ունի 'ի ներքս բազում շինուածս մեծամեծս , յորս բնակին իշխանք և պաշտօնեայք նորա . և երկոտասան կամ երեքտասան պողոտայս պարսպօք և խրամօք որոշեալս յայլոց մասանց քաղաքին : Իսկ յարեւմտեան կողմն քաղաքին է դղեակ մեծաշէն բովանդակ 'ի կոփածոյ քարանց , ուր իջեւանի ինքնակալն , յորժամ գայ յայցելութիւն Տայիրին : Յայս քաղաք մեծապէս ծաղկեալ են արհեստք . ուր գործեն ազգի ազգի ոսկեթել դիպակս . պէսպէս արուեստաշէն ձեռակերտս ոսկիս և արծաթիս և յայլոց հրահանգելեաց՝ մանաւանդ պողովատեայս . և Թիթեղն ընտիր . և ամենայն տեսակս զինուց . և այլ զանազան ձեռակերտս :

Օսաքա : Է քաղաք մեծ բազմամարդ և բազմավաճառ 'ի հարաւոյ արեւմտից Մէաքօնի 'ի գետեզերս դաշտավայրի՝ մերձ 'ի ծովն առ. օմի կամ Եոտօկաւա կոչեցեալ գետով . որոյ մի մասն խառնեալ ընդ այլոց երկուց գետոց , մտանէ 'ի քաղաքն . և անդ բաժանի 'ի բազում առաջս դրեթէ ընդ քաղաքն ողջոյն . 'ի մեծ դիւրութիւն բնակչաց նորա . ուր և 'ի բազում տեղիս կառուցեալ կան կամուրջք պատուականք : Բազմամարդ է յոյժ . զի թէ Ճշմարիտ է այն՝ զոր ասեն Ճէաբօնացիք , կարող է լոկ 'ի բնակչաց իւրոց հանել 80000 զօրս պատերազմականս , յայտ է թէ թիւ բնակչաց նորա բազում է յոյժ : Դիրք այսր քաղաքի կարի յարմարաւոր է վաճառականութեան ընդ ջուր և ընդ ցամաք . վասն զի են 'ի նմա մեծամեծ վաճառականք , արհեստաւորք և գործաւորք . և ամենայն ինչ դիւրագին է անդ՝ ոչ միայն հարկաւորքն , այլև որք 'ի դիւրութեան են 'ի զուարճութեան և 'ի փափկութեան . յայնսակս Ճէաբօնացիք կոչեն զնա տեսարան զուարճութեանց . ուր խուռն ընթանան մեծամեծք Ճէաբօնայ յամենայն կողմանց 'ի վայելել 'ի զուարճութիւնս :

Նանկասագ : Է քաղաք մեծ բազմամարդ և բազմավաճառ.

ճառ և մի 'ի հնդից ծովեզերեայ վաճառատեղեաց տէրութ՟ն Ճեապօնայ . կառուցեալ 'ի գլուխ կմ՟ սայգօգ կղզի 'ի Ֆիտսէ գ՟ւռի առ ափն ծովու յանբեր վայրի 'ի մէջ սեպացեալ ժայռից և բարձրաբերձ լերանց ը՟ 32 աստիճանաւ և 36 րոպէիւ լայնութ՟ն : Չունի շուրջանակի պարիսպս, ոպ՟ և մեծ մասն այլոց քաղաքաց Ճեապօնայ . և ոչ բերդ և ոչ այլ ինչ ամրութի՟ : Բնակիչք նր՟ ը՟ առաւել մասին են արհեստաւորք և բեռնակիրք խառն ը՟ այլոց խառնաղանձ անուպայ ժողովրդոց . իսկ վճ՟ռկանք մեծատունք սակաւք գտանին անդ : Ունի նաւահանգիստ մեծ և պատուական, ուր խարիսխ արկանեն և օտարազգիք ք՟ հոլանտացիք և չինացիք ևեթ . զի նոցա միայն թոյլ տուեալ է առնել վճ՟ռկանութի 'ի Ճեապօն . բայց ը՟ բազմապատիկ ծանր ծանր պայմանօք . յորոց մի է և այս . զի յայս նաւահանգիստ ևեթ կարող լինին մտանել . և եթէ նաւ ինչ նր՟ վարեալ 'ի մրրկաց կմ՟ յայլ ինչ գիպուածոց անկցի յայլ տեղի Ճեապօնայ, մի՟ իշխեսցէ ոք բնաւ 'ի նաւէ անտի ելանել 'ի ցամաք . այլ 'ի դադարել վտանգին, նոյնժամայն ելեալ գնասցէ 'ի Նանկասագ առաջնորդութ՟ ծովեզերեայ պահապանաց Ճեապօնացւոց . և 'ի ժամանել անդր, նաւապետն ցուցցէ զպտ՟ճռ ք՟ղքապետին, յորս սակս հարկեցաւ երթալ յայլ տեղի : Ընդ մէջ այսր ք՟ղքի է բանտ հնրկաց, զոր Ճեապօնացիք կոքուեա կոչեն . ք՟ դժոխք, ոպ՟ 'ի վեր անդր ասացաք . զի որք միանգամ անդ արկանին, չունին այնուհետև յոյս ազատու՟ . զի անդ արկանեն զմեծամեծ չարագործս, ը՟ որս և զմն՟, զորոց գուցէ կարծիք քրիստոնէութ՟ : Յամին 1690 կմ՟ 91 . յորժմ՟ անդ գտաւ Կեմփեր, էին 'ի բանտի անդ քրիստոնեայք ոմանք, որք յօժարութ՟ ընտրէին մնալ անդ զամ՟ աւուրս կենաց իւրեանց, ք՟ ուրացութ՟ հաւատոյ՝ զերծանիլ 'ի դառն տառապանաց անտի . այն զի՝ չէին ևս այնչափ մարզեալ 'ի մասունս քրիստոնէական հաւատոյ . այլ զք՟ս միայն գիտէին, և զմայր նր՟ զամենօրհնեալ ս՟բ կոյս ա՟ծածինն :

Առ սովին ք՟ղքաւ է տեսանելի փոքրիկ կղզի կամրջակցեալ ը՟ ք՟ղքին . որ է վաճառատեղի և բնակարան հոլանտացւոց, պահեալ 'ի զինուորաց Ճեապօնացւոց . իսկ չինացիք և այլ արևելեայք համօրէնք Ճեապօնացւոց, բնակին յարևելեան կողմն ք՟ղքին 'ի շրջափակ տեղւոջ . ուր ունին զերիս մեհեանս մեծամեծս և քուրմս ը՟ մս :

Փա

Ֆունայի, կմ Ֆուքէօ : Է գլխաւոր քաղաք գիւսիւ կղզւոյն յարեւելեան կողմն նր 'ի պունկօ գւռի · որոյ կուսակալն եղեւ մի 'ի նցէ, որք հրեշտակս առաքեցին առ ժն գրիգոր պապն հռովմայ հնազանդութն եւ հպատակութն խոստանալով նմ, զկնի ընդունելոյ նորոյ հանդերձ բազմութբ ժողովրդեան նորոյ զքրիստոնէական ուղղափառ հաւտս :

Դոսա, կմ Դոսնա : Է մի յերեւելի քղքաց Ճափոնայ 'ի Սիքօք կղզի, եւ գլխաւոր տեղի համանուն գւռի · զգեստք բնակչաց նր այլաձեւ են 'ի զգեստուց այլոց Ճափոնացւոց :

Բայց 'ի վերջ մայրաքղքաց տամք յիշատակին եւ այլ քանի մի քաղաքք 'ի Նիփոն կղզի, զորոց զանուանս եւեթ գիտեմք · որ Նանգայ · Սաքայ · Կէօքիմա : Որք են ծովեզերեայ քղքք Նիփոնայ 'ի հիւսիսային արեւելեան կողմն նորա :

Նաքինա · Նէադա · Օյմա · Նայնա · Չքամա · Են քղքք 'ի մէջն Նիփոնայ 'ի հիւսիսոյ ը հարաւ ձգեալ :

Ֆիրօյա · Սաքաբօ · Դիբանէս · Օնիպոս : Են ծովեզերեայ տեղիք յարեւմտեան կողմն նր :

Յօդ Թ · Կղզիք, որք են ընդ տէրութբ Ճափոնայ :

Բաց 'ի նախայիշատակելոց կղզեաց, են եւ այլ փոքր կղզիք ինչ, յորս տիրէ ինքնակալն Ճափոնացւոց, յորոց զոմանս յառաջիկայդ նշանակեսցուք :

Սադօ, կմ Սայինաս : Է կղզի 'ի հիւսիսային արեւմտեան կողմն Նիփոնայ հանդէպ Եէչիսինկօ, կմ գեսիւ գաւառին : Շրջապատ նր է իբրեւ եռօրեայ ճնպհ · եւ է մի 'ի գւռաց ֆօքու նհնգին · բերէ ցորեան եւ որիզ առատ · ունի եւ անտառս եւ արօտս խոտաւէտս · եւ անասունս բզմ · եւ բաժանի 'ի 4 վիճակս :

Օքէ, կմ Ինուբի : Կղզի 'ի ծովն գօրէայ · է մի 'ի գաւառացն սանինտօ նհնգին Ճափոնայ : Երկայնութն նր է իբրեւ երկօրեայ ճնպհ · իսկ երկիրն անջրդի, եւ անբեր · եւ բաժանի 'ի 25 վիճակս :

Ֆիրանտօրա, եւ Կօտօեան կղզիք : Են փոքրիկ կղզիք յարեւմտեան կողմն գիւսիւ կղզւոյն Ճափոնայ :

Ամէօ : Կղզի փոքր 'ի հարաւակողմն գիւսիւ կղզւոյն :

Կօռիմա : Կղզի փոքր յարեւելեան կողմն Նիփոնայ :

Թաղ

Թադախոլ. կ՛մ Կղզի երկայն 18 ժողաչափ. զոր 'ի 1675 գտին Ճեաբօնացիք 'ի ձեռն փոքրիկ նաւակի միոյ, որ ը՟ բերման վարեցաւ անդ 'ի բռնութէ հողմոց. Թէպէտ փոքր է, բայց կարի ամրացուցեալ 'ի բնութէ, առ որ դժուարին է մերձենալ. որ և է տեղի ապաստարանաց մեծամեծացն Ճեաբօնայ, որք անկանին յաչաց Թագաւորին:

Իգէ սուսուսիմա, կ՛մ Իգէ. և Սուսուսիմա, կ՛մ Դուսուսիմա: Են երկու կղզիք. որք յռ՟ջագոյն էին ը՟ տ՟րութ՟ իշխանին տաաաուսմոյ, զոր առին Ճեաբօնացիք 'ի Գօրեացւոց 'ի վերջին պ՟տրզմի: Իշխան ն՟ց է յազգէ անոի բուն բնակչաց տեղւոյն, այլ հնազանդեալ Թագաւորին Ճեաբօնայ: Երկայնութիւն Իգի, կ՛մ Իսկու կղզւոյն է իբրև երկուց աւուրց ճ՟նպհ. և բաժանի յերկու գ՟ւռս: Իսկ եր՟կդն առ փոքր մի մեծագոյն է. և բաժանի ը՟ս առաջնոյն: Թէպէտ չէին այնչափ արգասաւորք. բայց անուանի են առ Ճեաբօնացիս վ՟ն այլէայ՞ս նորանշան իրաց, որ գտանին անդ, և վ՟ն բազմութ՟ կռոցն, զորս պաշտեն բնակիչք ն՟ց:

Եսօզ. կ՛մ Եզօ. Չաունսիմա. կ՛մ Կղզի Եսովա: Այս կղզի ձգի 'ի հիւսիսային արևելեան կողմն գօրեայ ծովուն. և է մեծ, և մարգաշատ. ունի և գեղեցիկ դաշտավայրս, որք լքեալ կան անգործ. զի բնակիչք նորա վայրենի են, որք զարմանեն զկեանս ձկամբք, և որսովք. Թէպէտ ունին և ընտանի անասունս: Բնակութիւն ն՟ց է 'ի խրճիթս փայտակերտս: Հարաւային կողմն սորին կղզւոյ, կախեալ կայ յիշխանէն Մադսումայեայ, որ ունի անդ ամրոցս:

Մադսուսմայի, կ՛մ Մադսիմագի. 'ի ռուսաց Մադսմանսկա, անուանեալ: Է կղզի որ առնու զանուն իւր 'ի գլխաւոր քղաքէ որ մերձ է Եսով կ՛մ Եսսօ կղզւոյն 'ի հարաւային կուսէ: Այս կղզի է 'ի Նեղուցն Սանկարայ. և է ը՟ տ՟րութ՟ Ճեաբօնացւոց, ո՟չ միայն հաստատեն նոր պատմագիրք, այլ և Ծագոյցք Ճեաբօնայ: Իշխանն սորին կղզւոյ պարտաւոր է ամի ամի գնալ 'ի Ճեաբօն, և յանդիման առնել ինքնակալին զհարկս իւր, որք են մորթք վայրի երէոց, փետուրք սակաւագիւտք թռչնոց, և արծաթ:

Սախալիէն, կ՛մ Սախալեա: Է կղզի մեծ 'ի ծովն Ղամչադգայ հանդէպ դրանց Ամուր գետոյ: Յամին 1728 ռուսք կ՛մ մոսկովք հասին անդր. և կալան զանուանաւոր իմն տեղի 'ի ծովու մարգարտաբեր. որոց ը՟դէմ կացին չինք, պնդելով, թէ այն կղզի չի՛ու Թագաւորաց պատկանի. այլ մոսկովք բռնադոյն գրաւե

'ի

'ի ծովու․ ոպ̅ և 'ի ցամաքի ք̅ գոլով, ը̅ իշխանութ̅ իւրեանց ունին զտեղին զայն մինչև ցայսօր․ ուստի և մարգարիտ բզ̅մ հանեն : Են և այլ բզ̅մ կղզեք հանդէպ Ճեաբօնայ յարևելեան կողմն, որոց զանուանս ևեթ գիտեմք, ոպ̅ Նօգիրիմա․ որ և կղզի վաճառաց․ Ֆաթնիսինիօ, որ և Տօրաքաշիմա : Երէքտօնէնէ․ զի են երեք կղզեք առ ընթեր միմեանց, ը̅ մէջ 29, և 30 աստիճանաց հիւսիսային լայնութ̅ե̅ :

Բէգա Փէ Զիմա : Է ը̅ մէջ 31 և 32 աստիճանաց հիւսիսային լայնութ̅ե̅ :

Հէրմօսօ․ Մաղապըիկա․ Տէատօնօյնթա․ Փաքաս : Են ը̅ մէջ 24, և 26 աստիճանաց հիւսիսային լայնութ̅ե̅ :

Կղզեք հարաւային մասին ասիոյ :

Յայսմ վայրի ունիմք ստորագրել զա̅մ երևելի կղզիս, որք 'ի վերջին դարս գտան 'ի հարաւային կողմանս ասիոյ :

Յօդ. ա̅․ Մարիաննեան, կմ̅ աւազակաց կղզեք :

Այս կղզեք, որք են 'ի հարաւոյ արևելից Ճեաբօնայ․ զառաջինն կոչեցան կղզեք աւազակաց, կմ̅ գողոց 'ի Մաճէլանոսէ, որ եգիտ զնս̅ յամին 1520․ վ̅ս զի բնակիչք նց̅ գողացան զերկաթեղէն գործիս ինչ նր̅ : Այլ 'ի սպանիացւոց անտի կոչեցան Մարիաննեան յանուն դշխոյի իւրեանց Մարիամու Աննայի աւստրիացւոյ․ որ 'ի 1660 առաքեաց անդր քարոզիչս : Օդ նց̅ մաքուր է և առողջ․ և սակայն չէ այնչափ ինչ սաստիկ, թէպտ̅ և են ը̅ այրեցած գօտեաւ : Բնակիչք նց̅ ը̅ բարւոյ կարի նման են Ճեաբօնացւոց, յորոց թուին ունել զծագումն : Անբարտաւանք են ըստ նց̅, և փառամոլ, ժանտք, և նախանձք, և անհնարին վրէժխնդիրք․ և անհաստատք 'ի բանս և 'ի խորհուրդս․ սաստիկ սիրեն զխաղալ, և զկաքաւել, և ընթանալ յասպարիզի : Առողջ են, և պարարտք․ թէպէտ կերակուր նց̅ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազգի ազգի արմատք, և պտուղ, և իբր 'ի բժշ̃կս երկայնակեացք : Լեզու նց̃ նոյն է . որ ինչ բնակչացն փիլիպպեան կղզեաց : Մեծագոյն պակասութ̃ կղզեացս այն է, զի չունին յարմարաւոր նւ̃հնգիստ : Շրջակայ ծովն կոչի արշիպեղագոս սբ̃յն ղազարու . և է մասն հարաւային ովկիանոսի :

Այս կղզիք փոքր են և աննշան, սակայն յառաջին ժամս բազմամարդ էին, թէպտ̃ այժմ ոչ ևս նոյնպս̃, զի մեծ մասն նց̃ գրեթէ անապատ է . բայց 'ի ռօդա անուանեալ՝ է կղզւոյն . ուր սպանիացիք՝ ե̃ որոց տէրութ̃ են մինչև ցայսօր, բնակեցուցին իբրև 300 հնդիկս 'ի մշակել որեղ :

Իսկ այլ կղզիք բերեն ազգի ազգի պատուական պըտուղս առատ յոյժ . ունին և եզինս . և վարազս, որ է վայրի խոզ, և թռչունս յոլովս : Գտանին 'ի նս̃ և բազմապատիկ զեռունք, որք վիշտ մեծ են բնակչաց նոցա :

Բաժանին 'ի հիւսիսային, և 'ի հարաւային . որք կոչին, Թէին, կմ̃ Թինեա . կոչեցի̃ն և կղզի սբ̃յն լաւրենտիոսի : Կղ̃ Վերափոխման : Ագրիգեան կմ̃ Կղ̃ սբ̃յն Փրանկիսկոսի քսաւերեան : Բագօ, կմ̃ Կղ̃ . սբ̃յն Իգնատիոսի : Ալամագան, կմ̃ Կղ̃ յղութե̃ : Կուկուան, կմ̃ Կղ̃ սբ̃յն Փիլիպպոսի : Սարիգեան, կմ̃ Կղ̃ սբ̃յն Կարոլոսի : Անաթան, կմ̃ Անաթայեան, և կմ̃ Կղ̃ սբ̃յն յովակիմայ : Զէյփան, կմ̃ Կղ̃ սբ̃յն յովսեփայ : Թինեան, կմ̃ Պօնաւիսդա : Ագիգեան, կմ̃ Կղ̃ սբ̃ հրեշտակի : Սերբանա, կմ̃ Ռօտա . որ և Կղ̃ սբ̃յն աննայ : Կուամ, կմ̃ Կուահան . որ և Կղ̃ սբ̃յն յովհաննու : և է գլխաւոր և մեծագոյն 'ի մէջ ամենայն, որոյ շրջապատն ը̃ս սպանիացւոց ասելոյ՝ է իբրև 90 մղոն . և ունի իբրև 4000 բնակիչս . յորոց վր̃ իշխէ մի ոմն հիւպատոս սպանիացի, և ունի իբր 150 զինուորս :

Գլխաւոր քաղաք նր̃ կոչի Սբ̃ Իգնատիոս ագանայ . որ է քաղաք գեղեցիկ, շինուածք տանց նր̃ քարաշէն . և 'ի պատուական փայտից . զոր ուր ուրեմն է տեսանել 'ի կողմանս յայնոսիկ : Ունի երկու փոքրիկ մարտկոցս վառելոյ զինու : Նաւք մանիլայի . որք դառնան 'ի Մեքսիքոնէ անդ առնուն զհանգիստ : Բնակիչք նր̃ ը̃ս մեծի մասին հնդիկք են, ք̃ սպանիացիք . որք ը̃ս արտաքին տեսլեան երևին լինել ճարտարամիտք և քաջասիրտք :

Յօդ ը̅. Փիլիպպեան կղզիք, կամ մանիլեան կղզիք:

Զայսոսիկ կղզիս յեւրոպացւոց անտի զառաջինն եգիտ մաճելլանոս յետ անցանելոյ 'ի հիւսիսային ովկիանոսէ 'ի հարաւայինն ը̅ նեղուցն, զոր յիւր անուն կոչեաց նեղուց մաճելլանեան: Սոյն այս գերահռչակ նաւապետ ձախողակի լինի կրել 'ի հայրենիս իւր յ̃ն փորթուքալաց, էանց 'ի ծառայութե̃ արքային սպանիոյ, որ առ նովին ժամանակօք էր կարոլոս Ե̃. աւստրիացի. եւ յամին 1521 գտեալ նր̃ զկղզիս զայսոսիկ, կոչեաց զնս̃ մանիլայք. որք կոչեցան եւ կարոլոսեանք, յանուն նորին Ե̃ կարոլոսի: Յետոյ 'ի 1564. փիլիպպոս Բ̃ արքայն սպանիոյ, ձեռն էարկ տիրել 'նց̃. զորս կարոլոս Ե̃ չեւ եւս էր արկեալ զլխովին ը̅ տէրութ̃ իւրով. վն̃ զի արքայն փորթուքալաց ետ նմ̃ 392727 ոսկի. զի 'ի բաց թողցէ զնս̃. Քզ̃ի վնասակար լինի համարէր մերձ ունել զսպանիացիս կղզեաց իւրոց, յորոց առնոյր ինքն համեմս: Արդ՝ միքայէլ լօփէզ եգասպեան գլուխ կարգեալ նաւուց փիլիպպոսի Բ̃, էառ յաջողութ̃ զկղզիսն, եւ կոչեաց զնս̃ փիլիպպեան կղզիս. յանուն նորին երկ̃դ փիլիպպոսի սպանիացւոց արքային, եւ 'ի զեպու կղզին, ուր մաճելլանոս յառաջագոյն խողխողեցաւ, բնակեցոյց հաստատած մի ժողովրդեան. իսկ ինքն հաստատեաց զբնակութի̃ իւր 'ի լուսօն կղզի, որ մեծ է քան զայլ կղզիս:

'Ի ժամանել սպանիացւոց, գտին անդ երիս ազգս, կմ̃ ժղվ̃դս զնիգ̃րս ը̅՝ մալեցիս. որք առէին զանձանց լինել 'ի սօրնեան կղզեաց. եւ 'ի մալաքայէ, եւ բնակէին 'ի ծովեզերեայս. յորոց սերեալ են տեկաղացիք, կմ̃ բուն բնակք մանիլայի. բիւսացիս, որք եւ բինտադօսք կոչին. յորոց բ̃մք գտանին 'ի Սամար, 'ի փանայի 'ի լէյթէ եւ յայլ բ̃մ կղզիս. որք թուէին գնացեալ անդր 'ի մակասարայ, կմ̃ 'ի չելեպէս կղզեաց: Եւ սեւաւս, որոց բնակութի̃ է 'ի լերինս, եւ 'ի քարանձաւս ը̅ վայրենի անասնոց, որք եւ կարծին լինել առաջին բնակիչք սոցին կղզեաց: Չունին բնաւ զնմանութե̃ ինչ ը̅ այլոց բնակչաց տեղւոյս, այլ վայրենի են, անգութք, եւ գազանաբարոյք, եւ անհաւատ.

հաշտ թշնամի սպանիացւոց ։ Թիւ կղզեացս, ը̅ ոմանց ժամանեն ց1200․ երկիր նց̅ արգաւանդ․ ունին և բովս ոսկւոյ, և արծաթոյ․ այլև մարգարիտ 'ի շրջակայ եզերս ծովուն ։ 'Ի նմին ծովու գտանի և ազգ մի խառնակերպ ձկան, մերձաւոր տեսլեամբ առասպելական յուշկապարկին նախնի քանաստեղծից․ որ ը̅ իրաց ինչ բերէ զնմանութիւն կնոջ 'ի գլուխն․ և 'ի լանջս որ և յայն սակս կնաձուկն կոչի ։ Գտանին անդ և ստորերկրեայ հրայրեայք, և նորին աղագաւ յաճախեն անդ երկրաշարժութիւնք, և հրաբուղխք պատառոտածք երկրի ։ Թիւ բուն բնակչաց նց̅ յամին 1752 էր միլիոն մի, և 360000 և առաւել, իսկ բուն սպանիացիք իբրև 3000 ևեթ․ և բաց 'ի նց̅է այլևս 9000 ծնեալք 'ի խառն սերնդոց, ց̅ 'ի հօրէ սպանիացւոյ․ որք իբրև սպանիացիք համարին․ և ահա այս 12 հզ̅ր ոգիք ևեթ, նուաճեալ պահէին իբրև զմիլիոն մի և կէս բնակիչս ։ Որք յռ̅ջագոյն բազմօք առաւել էին․ ոռ̅ պատմութիւնք սոյին կղզեաց ցուցանեն, որք զթիւ բնակչաց նց̅ 'ի բզ̅մ միլիոնս հասուցանեն, զորս կորոյս անգթութիւն եւրոպացւոց ։ Օգուտն, զոր սպանիացիք հանեն 'ի բազմամարդ կղզեաց աստի, չէ այնչափ ինչ, որչափ կարծի․ և յայն սակս, հարկ թէ առեալ էին զնո̅, և ահա խորհէին 'ի բաց թողուլ, իբրև զվնասակար տրու̅ն իւրեանց․ բայց փիլիպպոս ե̅, ոռ̅ և յաջորդքն նր̅ միշտ 'ի բաց մերժեցին զայն առաջադրութիւն․ ակնունելով թէ առ յապայն առաւել ևս պտղաբերեսցէ․ և յիրաւի պտղաբերէր, եթէ ը̅ արժանեաց լինէր կառավարութիւն նց̅ ։

Մեք յայսմ վայրի միայն զգլխաւորն յայնց կղզեաց ունիմք ստորագրել, աւելորդ իմն համարելով մնդ̅ թէ գուցէ անկարելի զանուանս ևս յիշատակել․ յորս չեք ինչ նշանաւոր յիշատակաց արժանի ։

Մանիլյայ, կմ̅ Լուսոն, կմ̅ Լուգոն կղզի ։

Այս կղզի մեծ է ք̅ն զայլ ամ̅ փիլիպպեան կղզիս, և է արգաւանդ․ բերէ որիզ, ցորեան և պտուղ, և այլ ազգս ազգս արմտեաց․ ունի ընտանի անասունս բզ̅մ, ոչ̅ կովս, եզինս, և երիվարս ։ Օդ նր̅ բարի է և առողջարար, և ջուրն պատուական ։ Կայ է անդ ազգ մի դժնդակ ախտի, զոր մարթէ կոչել կարկամութիւն․ իբր զի թէ ոք ը̅ քրտնեալ պաղել, ցրտացի, առժամայն ամ՛ անդամք մարմնոյն կարկամեալ կաշկանդին, մինչև լինել իբր կոճղ անշարժ գլխավին. և եթէ ոչ աճապարեն փութով դարմանեսցի, յանցանել 24 ժամուց մեռանի: Այլ ոմն սխան դժնդակ է, նոյնպէս և դարման նր դժնդակագոյն. յոր պատուունք տեղւոյն քաջավարժ են. որք բեկորաւ նուրբ ասղակէոյ, կմ՛ կարկամ ասղանեաւ ժդնակի շփեն զամ՛ անդամս մարմնոյն մինչև հոսիլ արեան ը̄ մորթն. այսպիսի անտանելի ցաւով բժշկեն զախտացեալն: Սնի և ծոց մեծ յարևմտեան կողմն ձգեալ 'ի ներքս ը̄ ցամաքն. որոյ տրամագիծ է իբրև 30 մղոն: Գլխաւոր տեղիք նր են:

Մանիլա: Մայրաքաղաք համօրէն կղզւոյն, որ թէպէտ չէ այնչափ ինչ մեծ. այլ բազմամարդ է, և է արքեպիսկոպոսանիստ, և աթոռ հիւպատոսի, կմ՛ փոխարքայի սպանիացւոց. անդ է և գերագոյն ատեան հաստատեալ վն համօրէն սպանիացւոց եղելոց 'ի կղզիսն յայնոսիկ: Սնի և նւհնգիստ պատուական կոչեցեալ կաւիլդէ, կմ՛ կավլիդէ. 6 մղոնաւ հեռի 'ի քղքէ անտի 'ի հարաւակողմն. ուր կայ և գործարան նաւուց, ուր գործեն նաւս պճղմի վն եւրոպիոյ: Յաճախեն անդ նաւք, թէպէտ մուտ նր դժուարին է սակս բազմապատիկ ժայռից, որք սփռեալ գտանին առ նովաւ, բայց ո՛չ ոք յազգաց, ո՛չ յեւրոպացւոց, և ո՛չ յասիացւոց կարող է անդ վճռկնութի առնել, բայց 'ի չինաց, 'ի հնդկաց, և 'ի հայոց. վնյ ոմանք յօտար ազգաց կամիցեն առևտրութիւ առնել անդանօր, յանուն հայոց առնեն, կմ՛ 'ի հայոց առաքին առնել վճռկանութիւ անդ վն ինքեանց: Իսկ վաճառքն, յորս յածի առևտրուն սորին քղքի, գլխաւորաբար են այնք, որք կարևոր են բերուոյ, և մեքսիկոնի ից համեմք. այն է՝ պահար. մետաքս 'ի չինու. մետաքսեայ սռնապանք, և կերպասք, բեհեզք, և կտաւք նկարէնք, այն է՝ չիթ. և այլ պէսպէս իրք յՃէն հընդկաց: Զայս ամ՛ վաճառս 'ի մի, և երբեմն ևս յերկու նաւս բարձեալ տանին ամի ամի յագափուլկ քղք մեքսիկոնի. որոց ամ՛ ծախք յարքունուստ ելանեն, և շահ վճռկանութեն այնորիկ կարգեալ է 'ի դարման մենաստանացն մանիլայի: Եւ յետոյ դառնան նաւքն այնուքիկ բարձեալ վաճառս եւրոպացւոց. ից արծաթ, շաքարեղէնս, և որդան կարմիր: Անդ գործեն և զգլխարկս, զոր ռամկօրէն աճմու գտակ կոչեն, որք են երկայնաձև և 'ի վերուստ ճղճղէն: Զայս քղք շինեաց լոփեց լեգասպեան. զոր 'ի 1590 շուրջ պատեաց մեծոյ պարսպով գօտեց փերեզ, որ կառոյց և զամրոցն սբ̃յն յակովբայ:

Նոր Սէգովիա: Է եպ̃սարան, և նւհ̃նգիստ 'ի հիւսիսակողմն կղզւոյն առ բերանով կայեան գետոյն:

Նոր Կաչէրէս: Է եպ̃սարան, և նաւահանգիստ յարևելեան կողմն մանիլայի:

Մինտանաօ:

Այս կղզի է յաւէտ 'ի հարաւ ք̃ զայլ ամ̃ փիլիպպեան կղզիս, որ թէպէտ լեռնային է. այլ ունի հովիտս արգաւանդս ոռոգեալս բազմապատիկ ականակիտ և բարեհամ̃ վտակօք. ուստի և առհ̃րկ խօսելով բերրի և արգասաւոր. բերէ մեղրապտուղ ընտիրս, և սօսս, և պատուական լեմոնս, կիտրոնս, նարինջս ևն̃, այլև հնդկային ընկոյզ, և մեխակ. և այլ ազգի ազգի սակաւագիւտ պտուղս: 'Ի լերինս նր̃ գտանի և ոսկի բզմ̃: Պէսպէս ազգք բնակեն 'ի նմ̃, յորոց ոմանք ազատ են, և ոմանք յանտառս և 'ի լերինս բնակեալք: Իսկ այլք են ը̃ հ̃րու̃ սուլտանի միոյ, որոյ բնակութ̃ին է 'ի մինտանաօ քաղաք: Սոյն այս իշխան, ոպ̃ և համօրէն ժողովուրդ նր̃ առհ̃րկ մահմետական են: Յայս կղզի յռ̃ջագոյն և սպանիացիք ունէին կալուածս. այլ երբև եղեալ անօգնային յօգնութ̃ մանիլայ կղզւոյն, սուլտանն մինտանաօյ ժամ̃ դիպօղ գտե̃լ, քանդեաց զամ̃ ամրոցս նց̃: և այնուհետև բնաւ արգելաւ նց̃ կոխել անդէն: Գլխաւոր տեղի նր̃ է:

Մինտանաօ, կմ̃ Պապուկ: Է քաղաք ամուր յեզերս կղզւոյն 'ի հարաւակողմն: Տունք նր̃ ցածուն են, և անշուք, շինեալք 'ի վր̃ ցցից, ոպ̃ 'ի հնդիկս որ յայնկոյս գանգէսի. նաև նոյն իսկ ապարանք սուլտանին, կմ̃ թգ̃րի կղզւոյն նոյնպէս է շինեալ: Ունի նաւհ̃նգիստ պատուական, ուր կարի յաճախեն նաւք. վսյ̃ և է մի 'ի բազմավաճառ քղքացն փիլիպպեան կղզեաց: Գլխաւոր վաճառք նր̃ են ոսկի, և այլ բերք երկրին, զոր օտար ազգաց վաճառեն. յորոց փոխարէն և ինքեանք առնուն պէսպէս իրս առ 'ի պէտս իւրեանց:

Զէպու:

Զէպու, կամ Սէպու: Է կղզի փոքր. այլ բաղմամարդ, և հզօր. բազում ամրոցովք պատսպարեալ:
Գլխաւոր տեղի նոյն է:

Անուն Յիսուսի: Է քաղաք ամուր, և նաւահանգիստ. որոյ եպիսկոպոսն է ընդ արքեպիսկոպոսաւ Մանիլայի, ուր և եպիսկոպոսն գաչերեզայ, և նոր սեգովիայ. 'ի սմին կղզւոջ է և մենաստան մի օգոստինեան կրօնաւորաց:

Սամար, կամ Դէնդայէ:

Այս կղզի է, ուր զառաջինն եհաս Մաժելլանոս. 'ի հիւսիսակողմն Մինտանաոյ, գեղեցիկ է, և զուարճալի, քան զամենայն փիլիպպեան կղզիս: Գլխաւոր քաղաք նոյն է Կաուբլան:

Կղզիք Սրբոյն Յովհաննու. Բարախօայ, և Նոր Փիլիպպեանք:

Կղզին Սրբոյն Յովհաննու: Է յարևելեան կողմն Մինտանաոյ. ունի իւր սեփական թագաւոր ինքնիշխան, և անկախ 'ի սպանիացւոց:

Բարախօ: Է յարևմտեան կողմն փիլիպպեան կղզեաց անբեր, և բնակիչք նոյն սակաւ, որք աղքատ են, ընդ ոչ ուրուք իշխանութեամբ անկեալ:

Նոր Փիլիպպեան կղզիք. որք կոչին և Փալաօս, կամ Փալաօս: Են յարևելեան կողմն փիլիպպեան կղզեաց. որք ծանուցան յաւուրս նախընթաց դարու, որք թէպէտ բազում են թուով, այլ ինչ ոչ գրեն զնոցանէ Աշխարհագիրք. զի սակաւ ծանօթութիւն ունին զնոցանէ, և ասեն թէ չեն ինչ երևելիք:

Բաց 'ի սոցանէ են այլևս քանի մի երևելի կղզիք 'ի մէջ փիլիպպեան կղզեաց. զորոց զանուանս եւեթ գիտեմք, և են սոքա: Տոոմարան. Նէկրէ, կամ Նէկրօս. Մինտօրօ. Պաքօ. Լէյթէ. Փանայէ. Գուիմարաս. Կագայանս. Պուսուանգա. Գալամիանէ. Լինգայէա. Ռոմպլօն են:

Յօդ Գ. Մոլուղեան կղզիք.

Մոլուղեան կղզիք են բազմութիւն կղզեաց 'ի հարաւակողմն փիլիպպեան կղզեաց։ Ձէ յայտ թէ երբ եղև սկիզբն բնակութեան մարդկան 'ի նմ՟ և ածնլուէն․ բայց հաւաստի է 'ի պատմութեանց, թէ 'ի սկիզբն Ժ՟ գարուն բնակիչք նր՟ վայրենիք էին․ և թէպէտ գլխաւորք նց՟ ունէին զանուն թագի, այլ իշխանութիւն նց՟ նուաղ էր յոյժ, զոր ըս՟ հաճոյից տային նց՟ ժողովուրդք իւրեանց։ Փոքր մի յոչ ունէին ինչ ինչ 'ի մահմետական աղանդոյն խառնեալ ընդ կռապաշտութեան։ Դարմանէին զկեանս որսորդութ՟ վայրենի երէոց, և ձկնորսութ՟, ոչ գիտելով բնաւ թէ զի՟նչ իցէ երկրագործութիւն։ Բայց ունէին և ծառս ինչ, որք բ՟զմ նպաստէին նց՟, որպ՟ Գօզօ անուանեալ ծառն շահաբեր, և յաճախ 'ի մեծագոյն մասին ասիոյ։ Արմատ նր՟ երբեմն 20 ոտնաչափ խորի 'ի խորս երկրի․ իսկ բունն երբեմն 30 կամ 40 ոտնաչափ 'ի վեր բարձրանայ․ փայտ նր՟ սպնգային է, ուստի և անպիտան 'ի շինուած, իսկ 'ի գագաթան ունի փունջ մի 10 կամ 12 մեծամեծ տերևոց, որք լինին 'ի պէտս ծածկութի տանց․ զոր յամին երիցս հատանեն, և նոյնչափ անգամ բողբոջեն 'ի նմանէ ընձիւղք ստուարք, որք բերեն տասն, կամ երկոտասան պտուղս երբեմն կէս ոտնաչափ մեծութ՟, որք կոչին գօզօ։ Յառաջին կեղևոյ կամ պատենից այնր պտղոյ գործեն հնրկ կտաւս և առագաստս 'ի պէտս նաւուց։ Յերկրորդէն, որ կարծր է յոյժ, առնեն փոքրիկ անօթս 'ի պէտս տան։ Ներքին կողմն կեղևոյն ծածկեալ է սպիտակ և խիտ մասնաւ, զոր ճմլեալ, մզեն անուշ իւղ, որ կարի յաճախեալ է առ հնդիկս։ Իսկ նիւթն, որ մնայ զկնի մզելոյն, լինի 'ի կերակուր հաւուց, և անասնոց, և 'ի ժամս սովու նաև մարդկան։ Իսկ 'ի մէջն նորին պտղոյ է ջուր քաղցր յոյժ և ցուրտ, որ է կարի զովացուցիչ և առողջարար ըմպելի․ բայց քաղցրութիւն նր՟ սաստկացուցիչ է։ 'Ի հատանելն զնախասաց ընձիւղս, հոսի հիւթ սպիտակ, զոր ժողովեն յանօթս, և ցորչափ թարմ է, ունի զհամ անոյշ գինւոյ։

Սակու։ Է նոյնատեսակ ծառ ինչ, որպ՟ և նախագրեալն զոր հատեալ և 'ի մասունս կտրեալ, հանեն զմէջ նր՟

որ է աւերանումն, և խառնեն ջրով, և ապա մղեն ը̅ մաղ. յոր մնան թանձրագոյն մասունքն. իսկ զհիւթն անցել̅ ը̅ մաղ՝ արկանեն 'ի փուռն, ուր թանձրացել̅ խստանայ, և լինի զանգուած կարծր, որ ը̅ ամս բզ̅մս պահի, զոր ապա թացել̅ 'ի ջուր եփեն և ուտեն : Այս կղզիք բերեն և մեխակ տուստ և պատուական, և հնդկային ընկոյզ: Ծառն մեխակաբեր ըստ կեղեւոյն նման է ձիթենւոյ, և է բազմաձիւղ. բերէ ծաղիկս բզ̅մ յոյժ. իսկ ծաղիկք նր̅ զառաջինն սպիտակ են. ապա կանաչագոյն. հուսկ յետոյ 'ի գոյն կարմիր փոխին, և կարծրանան, և յայնժամ են տիրանգս մեխակ, այն է խարէմֆիլ. որք չորացել̅ լինին մթագոյն դեղին. զոր սկսանին քաղել̅ յամսեանն հոկտեմբերի մինչև ցփետրվար : Ծառ նր̅ բուսանի 'ի մեխակացանոտի, որք չորացել̅ 'ի վր̅ ծառոյն, և լել̅ ստուար 'ի չափ բոյթ մատին, անկանին յերկիր. բայց ոչ տան պտուղ, եթէ ոչ զկնի ինն ամաց : Իսկ ծառն հնդկային ընկուզոյ աճէ ըստ բարձրութե̅ մերումս տանձենւոյ. փայտ նր̅ ուղղալից է, կեղեւն մոխրագոյն, ոստքն մորչ և դիւրակոր. իսկ տերեւքն դալուզ և անուշահոտ. որք երկու երկու բուսանին 'ի վր̅ միոյ կանթի. զկնի ծաղկանց յաջորդէ պտուղն ձուաձեւ մեծութբ̅, գունով նմանել̅ ծիրանւոյ : Կեղեւ նր̅ խիստ է յոյժ և պինդ, գրեթէ ըստ կեղեւոյ մերումս ընկուզոյ ցորչափ է 'ի վր̅ ծառոյն : Յորժամ հասանէ պտուղն, ինքնին բացել̅ լինի. և երեւի ընկոյզն պատել̅ մաշկաւ. և յայնժամ պարտ է քաղել զայն, մինչև իցէ մաշկն, կմ̅ ծաղկին չորացել̅, և ընկուզոյ կորուսեալ զիւղն, յորում է գլխաւոր ազնուութն̅ նր̅ :

Չինք երբ 'ի միջին դարուն զառաջինն ծանուցին յաւխս զազնուուն համեմիցս, ծաւալելով զայն 'ի հնդիկս, յորոց եանց 'ի պարսս, և յարաբիս, և ապա յեւրոպիս. ուր յառաջ ը̅ զայն անծանօթ էին ամենեւին : Արաբացիք, որք ը̅ այն ժմկս տիրէին վաճառականութեց գրեթէ բոլոր Ծի, երբ կալան զծանօթութն̅ այնց բարեբեր կղզեաց, իսկ և իսկ ը̅ կարմիր ծովին նաւարկել̅ հասին անդր, և տիրեցին նց̅ : Ապա յամին 1520 գնացին անդր փորթուգալք, որք 'ի սուղ ժմկի տիրեցին նց̅. և ը̅ բզ̅մ ժմկս ը̅ ձեռս̅ իւրեանց կալան, զոր յետոյ բաժանեցին ը̅ սպանիացիս, յորժամ փորթուգալ միացել̅ էր ը̅ սպանիոյ : Ապա հալածեալ անդր և հոլանտացւոց, և միացեալ ը̅ բուն բնակչաց երկրին, հանին վտարեցին անտի խոյազփորդուգալս, և զսպանիացիս. և ինքեանք կալան զհամօրէն վաճառականութիւն համեմից, բռնադատելով զթ՟գրս դէյրնատեայ, և դիտորոյ իսպառ ջնջել յՃէմրուն իւրեանց զամ զծառսն նխաայցեն համեմից, որոյ փոխարէն սահմանեցին ամի ամի տալ առաջնոյն 5863 ոսկի դահեկան. իսկ եր՟կդին 12 հազար. և առ 'ի անվրէպ 'ի գործ դնել զայս դաշնադրութն, միշտ պահեն անդ հոլանտացիք գունդ մի 700 զօրաց եւրոպացւոց յահ և յերկիւղ բնակչաց տեղւոյն: Եւ այսպէս ո՟պ զկլինամոնն՝ նոյնպէս և զմեխակ և զընկոյզ հնդկային առհ՟րկ ը՟ ձեռամբ իւրեանց ունին դըրաւեալ հոլանտացիք. որք և միշտ յառաջագոյն ամբարեալ պահեն զպաշար 10՝ 12, և մինչև 16 ամաց, զի ոչ երբէք կամին 'ի վաճառ հանել առ մերձակայ ազգս զպտուղս նորոյ ամին. այլ միշտ զառաւել հինն, ո՟ր 'ի 1760 վաճառեցին զարդիւնս քաղել՟ 'ի 1744 ամին, եթէ հուսկ յետոյ յաւելանոյ ամբարեալըն, կ՟մ 'ի ծով ընկենուն ո՟պ աւելն, և կ՟մ այրեն 'ի հուր. առ 'ի չանկանել 'ի ձեռս այլոց, ո՟ր պատմէ ականատեսն պօմար, որ 'ի 1760 'ի 10 յունիսի ետես յամսդրտամ այրել զաւելորդս այնչափ համեմից՝ որոց գին ըս՟ վաճառական համարե՟լ լինէր 8 միլիոն արծաթոյ գաղիացւոց, նոյնչափ ևս ունէին այրել վաղորդեան աւուր, և յայնմ պահու ոչ ումեք թողուին մերձենալ առնուլ ինչ անտի: Սակայն 'ի վ՟ր այս ա՟մ զգուշութե՟ նց՟, երբեմն երբեմն նաւաստեք նց՟ հանեին արտաքս. յորժամ 'ի նաւարկելն յանդունդս ովկիանոսի վաճառեցին ինչ ինչ նաւուց այլոց ազգաց. և զմնացեալն թացին ջրով. առ 'ի հաւասարաչափ գըտանել զկշիռ բեռին, յորժամ հասցեն 'ի նաւահանգիստ իւրեանց:

Վաճառականութի՟ մոլուքեան կղզեացս այժմ տկար է յոյժ սակս նուազութե՟ դրամոց. զի այլուստ ոչ մտանէն դրամք 'ի կղզիսն յայնոսիկ, բայց միայն 'ի պատճառս վարձուց, զոր հոլանտացիք տան սեղակալ իշխանաց իւրեանց և 'ի թոշակ զօրաց. որոյ գումարն յամին հասանէ 912727 ոսկի, բայց այն ևս փոխարինի նց՟ 'ի ծառոց անտի մեխակի, և ընկուզայ, զորս ունին ինքեանց սեփական յամենայն 'ի կղզեաց անտի. ո՟պ յեւրում տեղւոջ նշանակեցաք: Մոլուքեան կղզիք բաժանին 'ի մեծամեծս, և 'ի փոքունս. մեծագոյնքն են հետագայքն:

Զէլէնդէնս, կամ Սառնտիպ ։

Այս կղզի մեծագոյն է ք՟ զա՟մ մոլուղեան կղզիս. տրամագիծ ն՟ր է իբրև 240 մղոն. որ թէպէտ ը՟ այրեցած գօտեաւ անկանի, սակայն և այնպէս բազմամարդ է, գոլով օդոյ ն՟ր բարեխառն 'ի պատճառս յաճախ անձրևաց, և ցրտաշունչ հիւսիսային հողմոց ։ Բնակիչք ն՟ր զօրաւոր են և քաջասիրտ գրեթէ ք՟ զայլ ա՟մ բնակիչս հարաւային ասիոյ ։ Սոքա յառաջագոյն կռապաշտ էին, և պաշտէին զարեգակն, և զլուսին. այլ յետոյ 'ի մտանել անդ արաբացւոց ընկալան զդենն մահմետական ։ Յեւրոպացւոց զառաջինն փորթուգալք հասին անդր. բայց 'ի 1660 հոլանտացիք հանին զն՟ս անտի ։ Եւ թէպէտ սոքա անուանեալք չէին տեարք համօրէն կղզւոյն, այլ միայն նաւահանգստին, և գլխաւոր ամրոցին, որ շատ է ն՟ց առ 'ի նահանջել անտի զայլ ա՟մ ազգս եւրոպացւոց. սակայն իրք բոլոր կղզւոյն տիրեն ։ Վ՟ս զի զբուն ազգային իշխանս, որք մասն մասն տիրեն կղզւոյն, գրեթէ բոլորովին ը՟ ձեռամբ նուաճել ունին. զորս պատրուակաւ բարւոյ ն՟ց, և խաղաղական միաբանութե՟, մերկացուցին յա՟մ զինուց. ուստի և են այժմ հոլանտացիք իբրև ինքնատեարք կղզւոյն ։

Յարտաքնոց ազգաց միայն չինացիք վաճառականութիւն ունեն յայս կղզի, որք բարձեալ տանին անդր ծըխախոտ, ոսկեթել, որ է սըրմայ, անօթս յախճապակեայս, մետաքս անգործ. իսկ հոլանտացիք վաճառեն անդր ափիոն. որ է աֆիոն. հնդանիւթս, խէժս, պաստառս նրբաթելս, և սառճարս. և առնուն փոխարէն փոքր մի ոսկի, և որիզ բ՟զմ, և մոմ, և գերիս. այլև թրիփամ. որ է ազգ մի պատուական ննկոյ ։ 'Ի մաքսից տեղւոյն առնու ընկերութիւն հոլանտացւոց իբրև 7272 ոսկի. զոր ծախէ 'ի պէտս ժողովրդեան իւրեանց բնակելոց 'ի կողմանս յանաիկ, որք են իբրև 150000 ։

Այս կղզի բերէ ազգի ազգի պտուղս պատուականս, և փայտս սակաւագիւտս. ո՟պ զսանտալ անուանեալ փայտն, և զբալամպօք ։ Ունի և արջառս բ՟զմս, և երիվարս, և գոմէշս և եղջերուս և այլ վայրենի անասունս. ո՟պ և կապիկս մեծամեծս և կատաղիս, որք կարի վնասակար են և վտանգաւոր. բայց ոչ կարեն այնչափ բազմանալ. վ՟ս զի գտանի անդ ազգ մի օձի անհնարին թշնամի նոցա յարաժամ հետամուտ 'ի սատակել զնոսա : Այս կղզի բաժանեալ է 'ի բազում վիճակս, յորս գլխաւորն է վիճակն, կամ նահանգն մակասարայ, որ զկէսն նորա գրեթէ գրաւէ :

Մակասար : Է գլխաւոր քաղաք սորին կղզւոյ, որ ունի նաւահանգիստ պատշաճական . առ որով հոլանտացիք կառուցին ամրոց հզօր 'ի պաշտպանութիւն նորա, և առ յապահովս առնելոյ զվաճառականութիւն իւրեանց :

Եօմփանդան : Է նաւահանգիստ 'ի հարաւակողմն մակասարայ ընդ իշխանութեամբ հոլանտացւոց, առ որով ունին ամրոց, որ և է վաճառատեղի շահեկան յոյժ, և օգտակար առևտրութեան ընդ մերձակայ տեղեաց :

Ամբոյնա, կամ Ամբոյնէ :

Ի կղզի փոքր յարևելեան կողմն մակասար, կամ չելեպեան կղզւոյն . արգասաւոր յոյժ, և փարթամ գրեթէ քան զայլ ամենայն մոլուքեան կղզիս . վասն որոյ ընկերութիւն վաճառականաց հոլանտացւոց սմա ևեթ սահմանեաց մշակել զմեխակս, որ և 4000 սահմանափակ չափս գետնոյ բաժանեաց 'ի մէջ բնակչաց երկրին, յորոց իւրաքանչիւրն ըստ վճռոյ, զոր արարին 'ի 1720 . պարտի ունիլ գէթ 125 ծառս մեխակաբերս . և այնպէս բովանդակ ծառքն լինէին հինգ հարիւր հազար . յորոց իւրաքանչիւրն սովորաբար բերէ մի օխայ մեխակ, և ուրեք ևս . ուստի և բոլոր բերքն միանգամայն ընդ կղզւոյն, առաւել է քան զկէս միլիոն օխայ : Երկու միլիոն օխայ մեխակ միշտ ամբարեալ պահի յեւրոպիա, և մի միլիոն 'ի հնդիկս . որպէս զի եթէ յամս ինչ ոչ պտղաբերեսցեն ծառքն, կամ այլ ինչ պատահար դիպեսցի, ունիցին միշտ պատրաստական : Վասն հինգ օխայ մեխակի վճարեն մշակողաց իբրև 2 մարչիլ, և 8 փողս . երբեմն ևս փոխան դրամոյ, տան կապուտակ կտաւս գօրօմանտելայ : Յեզերս սորին կղզւոյ գտանի 'ի ծովու և բուստ պատուական . հոլանտացիք կառուցին անդէն ամրոց հզօր, և վաճառատեղի, որ զկնի ամրոցին պադավիոյ լաւագոյն է քան զայլ ամենայն ամրոցս, զոր ունին 'ի կղզիս հնդկաց :

Պանտէան կղզիք :

Այս կղզիք իբրև 60 մղոնաւ հեռի են 'ի հակընթաց ամպոյնա կղզւոյ , որք հինգ են թուով . յորոց երկուքն անգործ են , և իբր անբնակ , իսկ երեքն անուանի են վ՟ն բերելոյ ընկոյզ հնդկային : Այս կղզիք են միայն յամ՟ կղզիս արևելեան հնդկաց , յորս բոլորովին հոլանտացիք տիրեն , և բնակիչք ն՟ց գրեթէ բոլոր օտարազգիք են . վ՟ն զի իբրև հասին անդր հոլանտացիք , գտին զի բուն բնակիչք ն՟ց վայրենիք էին , անգութք , դաւաճանաբարոյք , և անհաւատարիմք , յայն սակս հրամայեաց ընկերութիւն հոլանտացւոց , առհ՟րկ սպանել զն՟ս . և փ՟խ ն՟ց էած անդր ստրուկս , յորս և բաժանեաց զերկիրն . որք իբր 'ի բաղումն անհնագարաւէն բարուք , և ծոյլք 'ի գործս , ուստի և 'ի մերձակայ կղզեաց տանին անդ գերիս 'ի մշակել զերկիր :

'ի Լոօնթէն անուանեալ փոքրիկ կղզին գտանին յոլովք դատաստանաւ աքսորեալք 'ի պատիժ յանցանաց . նաև երիտասարդք ոմանք խեռաբարոյք և սամբակք անդ տարադրին , որ՟պ զի յուղղութի՟ եկեսցեն : Յայն սակս պանտեան կղզիքն կոչեցան և Կղզիք պատժապարտաց : Օդ սորին կղզւոյ յոռի է յոյժ , և վնասակար կենաց , վ՟յ և կարճին կեանք եկելեացն այնոցիկ :

Տիմօր :

Այս կղզի ը՟ երկայնութե՟ է իբրև 180 մղո՟ն . իսկ ը՟ լայնութե՟ ուրեք 45 և ուրեք 54 : Զառաջինն փորդուքալք տիրին անդ . սակայն 'ի 1613 'ի վ՟ր եկեալ հոլանտացւոց , հանին զն՟ս անտի . բայց և ն՟ք փութով լքանէին զայս կղզի 'ի սակս անարգասաւորութե՟ ն՟ր , թէ ո՛չ երկնչէին , թէ որ 'ի զօրաւոր թշնամեաց անտի ն՟ց գնացեալ տիրեսցէ ն՟մ , և յարաժամ խոչ՟ընդոտ լինիցի ինքեանց : Սակայն և այժմ փորդուքալք 'ի հիւսիսակողմն կղզւոյն ունին երկու կալուածս , որք կոչին Լիֆաօ . և Սէօխալ :

Կուպան : Է ամրոց անզօր , շինեալ 'ի հոլանտացւոց , յորոյ 'ի պահպանութի՟ կարգեալ կան իբրև 50 ևեթ զինուորք :

Իսկ այլ կղզիք, որք գտանին շուրջ զմոլուքեան կղզեօք ը արեւմուտս, և ը արեւելս, չեն ինչ երեւելի. և վս զի եւրոպացիք չունին 'ի նս կալուածս, յայն սակս և Ծագիրք նց բաց յանուանց այլ ինչ ոչ յիշատակեն զնցէ. յորոց գլխաւորքն են Էնդէ, կմ Փլորէս. Ռօթթէ, կմ Ռօդէօ. Սօլոր. Լարէնդուգա, որք են վաճառատեղիք հոլանտացւոց: Գուամմանալա. Սօւ. Սէմաօ. Ապանարէ. Լամպալա. Օմպա. Ռօմա. Մօա. Լէտիր. Դամնէ. Գոնտօրլանդ. Վէտտէլ. Գուբէրնար. Գիէփօր. Մօտիր. Մաքիան. Կայէ Բաչանոյ. Սէն Մաթթէոս. Ոնդի. Մօրօտայի. Արու:

Ճէրամ:

Է կղզի մեծ, և բազմամարդ 'ի հարաւային կողմն նոր կուինեայի, և 'ի հարաւոյ արեւելից փոքր անուանեալն Նեգրուցին. որ է անջրպետս ը մէջ Ճէրամայ, և Ճիլոլօ մեծի կղզւոյն: Շրջակայ եզերք նր ը մասին անտառալից են, և ը մասին մշակեալ, իսկ ներքին կողմանք լեռնայինք. յորս են զարհուրելի բարձրաբերձ լերինք սեպացեալք: Բնակիչք նր զօրաւոր են, և քաջ պատերազմականք. և անհաշտ թշնամիք հոլանտացւոց 'ի պատճառս անագորոյն բռնակալութե նց. իբր զի երբեմն հասին նք 'ի կղզի անդր, ը անյագ ագահութե իւրեանց, սկսան բուռն տանել բնակչաց կղզւոյն խլել 'ի բաց զնոսա բոյսս համեմից 'ի կալուածոց նց, կամելով ը իշխանութբ իւրեանց գրաւել զամ բերս կղզւոյն. և զբնակիչս նց ստրուկս և գործավարս իւրեանց առնել. ոպ արարին և 'ի մոլուքեան կղզիս: Այլ սք քաջ գտեալ, իսպառ հանին վանեցին անտի զնս. սակայն տակաւին մինչ յերկիւղի են, զի մի միւսանգամ ը լծով բռնակալութե հոլանտացւոց նուաճեսցին. վս այսր ասի թէ բզմ անձկանօք ակնկալեալ սպասեն, թէ ոք յազգաց ասիացւոց, կմ եւրոպացւոց հասցէ նց յօգնութիւն. որով ապահովասցին յերկիւղէ անտի հոլանտացւոց: Յամին 1769 երբ հասին անդր գաղղիացիք, կարծելով թէ հոլանտացիք ունիցին անդ կալուածս, հրազէնս արձակեալ ողջունեցին զնս, և դրօշ հոլանտացւոց կանգնեցին: Բայց յետոյ ծանեան, թէ այն նշան զարհուրեցոյց զբնակիչս. որք փոխ գալոյ 'ի ծովեզերն, և մատակարարելոյ նց զպէտս, որոց կարօտ էին յոյժ, առհասարակ բզմ խուճապով խոյս ետուն

յե.

յեղերաց անտի կղզւոյն. մինչ ոչ եւս տեսանել գաղղիացւոց զոք 'ի նց՟է ։

Պուրօ, կմ՟ Պօէրօ ։

Է կղզի յարեւմտեան կողմն Քէրամայ, ոչ ինչ կարի հեռի 'ի նմանէ. այլ փոքր ք՟ զնա ։ Ունի երկու մեծամեծ գետս, որք կոչին Սանէււ. եւ Հաղօ ։ Երկիր նր՟ լեռնային է. ուստի եւ չէ այնչափ ինչ արգաւանդ. գլխաւոր բերք նր՟ են ոպնիազ փայտ սեաւ եւ սպիտակ, եւ այլ տեսակք պատուական փայտից. եւ ազգի ազգի պտուղք. իբր գօգօ, անանաս, պանան. որք անծանօթ են առ մեզ. եւ լեմոն, կիտրոն, նարինջ, եւ այլ այսպիսի պտուղք, բայց ոչ այնչափ առատ, եւ որիզ պատուական. չէ յայտ թէ արդեօք 'ի նախնումն գտանէին 'ի կղզի աստ համեմք. բայց այժմ յայտ է թէ ոչ գտանի ։ Ունի յանտառսն իւր եւ պէսպէս թռչունս երփներանգս, եւ գեղեցկափետուրս, եւ ընտանի անասունս. եւ եղջերուս բզ՟մ, զոր հոլանտացիք զառաջինն տարան անդր, ուր 'ի սուղ ժմկի աճեցին բազմացան ։ Գտանի անդ եւ այն տեսակ վայրենի կատուի, որ կրէ զկորիւնս իւր 'ի պարկի կախելոյ զորովայնէ. եւ տեսակ մի մեծ չղջիկան, որ ունի թեւս փշալիցս. եւ առ եզերբք ապօ գետոյն յանտառսն գտանին մեծամեծ կոկորդիլոսք, որք գիշերայն ելեալ յանտառաց անտի յափշտակեն եւ պատառեն զմարդ, եւ զանասունս զոր միանգամ գտանեն. ուս՟ բզ՟մ անգամ դիպաւ, զի յափշտակեցին զմարդիկ 'ի նաւսկաց, որք նաւէին ը՟ գետն, եւ պատառեցին ։ Բնակիչք նր՟ յերկու ցեղս բաժանին, որք կոչին սեաւք, եւ ալֆուրայք ։ Սեաւքն 'ի միասին բնակեն 'ի շրջակայ վայրս կալուածոց հոլանտացւոց, որք դենիւ մահմետական են. կերակուր նց՟ է Սակով պտուղ, ձուկն, եւ սակաւ որիզ. զոր 'ի հոլանտացւոց գնեն. եւ ը՟ բարուց բիրտ են, ծոյլ 'ի գործս, եւ վատասիրտ, որք եւ միշտ յերկիւղի են 'ի պատրաստ անտի բնակչաց նոր կուինէայի, որք երբեք երբեք արշաւեն 'ի վր՟ նց՟ կողոպտել զն՟, եւ գերել ։ Ս՟ք 'ի բզ՟մ խումբս բաժանեալ են եւ իւրաքանչիւրն ունի իւր սեփական գլուխ, կմ՟ իշխան. զոր Օրէնքա կոչեն. եւ բնակեն մօտ 'ի տեղի բնակութ՟ հիւպատոսին հոլանտացւոց. որ նոքօք զօդէ զմզէզն. յայն սակս զգուշութ՟ դնայ ը՟ նս՟. եւ ուս՟ զի զծամն զննն ը ընծով խուրձանց պերէն ունիցին , պէտս խորամանկ հնարիւք սերմանեցին երկպառակութի և բաժանումն ՚ի նմ , որով առաջին և յայլ կղզիս արևելեան հնդկաց : Սակայն եթէ ոք յիշխանաց անտի ապստամբութի խորհեսցի , այլ ոք առ ժամայն մատնէ զնա · զոր հոլանտացիք խեղդոյն տան սպանանել :

Իսկ ալֆուրեանք նց իրօք ազատ են · և չունին ինչ թշնամութի ը հոլանտացիս , այլ և ցրիւ բնակին յանմատոյց լերինս : Կերակուր նց է Սակոյ պտուղ , և որս վայրենի · իսկ զկրօնից նց ինչ ոչ գրեն ճշգրիւ · բայց երևի թէ ոչ են մահմետական · վն զի ունին զխոզենի :

Իշխանք նց մերթ ը մերթ գնան յայցելութի հիւպատոսին հոլանտացւոց , չունելով ինչ երկիւղ ՚ի նմէ · Այս կղզի յառաջագոյն էր ը տէրութբ Թէքրին գերմանէ կղզւոյն , և հարկատու նմա , այլ այժմ ոչ ևս : Գլխաւոր տեղի նր կոչի Գոյէնէն , որ է գիւղ , կմ աւան անշուք առ համանուն ծոցով ընդարձակ և ՚ի ճախճախուտ դաշտի ը մէջ տաւլոյ , և առալօ գետոց : Բնակիչք նր են սեաւքն , որք յառաջագոյն ցրիւ բնակէին ՚ի ժտ գետոց · անդ է և գլխաւոր վաճառատեղին հոլանտացւոց · որք յառաջագոյն ունէին անդ և ամրոց քարաշէն · բայց ՚ի 1680 դիպուածով իմն ՚ի հիմանց տապալեցաւ · ուստի այժմ չունին ամրոց · այլ միայն սահմանափակ իմն տեղի շրջապատեալ ցցովք · յորոյ ՚ի պահպանութի կարգեալ կան արք 25 , և վեց հրաձիգք · այն է՝ թօփ : Յամին 1770 յորժամ գնացին անդր գաղղիացիք · ունէին հոլանտացիք անդ երիս նաւս պատերազմի · յորս էին արք 50 եւրոպացիք , որք և ասպատակէին ՚ի ծովն մոլուքեան կղզեաց ընդդէմ պապուասաց , և քերամայեցւոց :

Սաւու , կամ Սէպու :

Այս կղզի կարի անծանօթ է · զոր ոչ գտաք նշանակեալ յԱցոյցս , զորս ունէաք ՚ի ձեռին · զի թէպէտ ոմանք զՍաւ կղզին , զոր և շփոթեն ը Սանտէլ պօսք անուանեն կղզւոյն՝ նոյն համարին ը այսմ · բայց ըս պէշլինկայ , սա այլ է ՚ի նմէ , որպէս և ՚ի Տիմորայ · և ՚ի րօդէսայ , և յայլ նմ կղզեաց հնդկային ծովու : Որ չէ այնչափ ինչ մեծ · զի երկայնութի նր է իբրև 24 մղոն · իսկ լայնութին անծանօթ է , զի հիւսիսային եզերք նր չևևս են զննեալ · բայց բազմամարդ է , և արգաւանդ · բերէ աղցի աղցի պտու-

ղէս

ուական պտուղս․ որ արմաւ, գօգօ, Թամրհինտ, լէմոն, կիտրոն և այլ այսպիսի պտուղս; բերէ և ցորեան, և որիզ, և մսրացորեան, կորեակ, և պէսպէս պատուական բանջարս 'ի կերակուր մարդկան․ և մեղրապոպ, և սեխ, և դդում; և եղէգն շաքարաբեր, բայց սակաւ․ այլև ծխախոտ, և բամպակ․ գտանի անդ և սակաւ ինչ կինամոն․ անկեալ 'ի սակս փափկութե և վր վճռկանութե․ այլ դուցէ թէ չիցէ այն ճշմարիտ կինամոն․ վն զի հոլանտացիք ջանան 'ի սպառսպուռ ջնջել զբոյսս համեմից 'ի կղզեաց հնդկաց, որոց համեմք ոչ անցանեն 'ի ձեռս նց։ Բայց 'ի պտղոց ատոխեն անդ և այլ մասնաւոր պտուղք, յորս է ազգ մի պտղոյ, զոր Պլիմպի կոչեն երկայն իբրև 3 կմ 4 մատնաչափ, 'ի մէջն ստուար իբրև մատնաչափ մի աւարտեալ յերկու սրածայր ծագս․ պատեան նր է մինչև բաց կանաչագոյն․ և ունի 'ի մէջն սերմանս կարգեալս 'ի ձև աստեղ։ Համ նր թթու, և կծու, այլ ախորժական․ զոր եփեալ ուտեն։ Ունի և ընտանի անասունս, որ կով, խոզ, էշ, երիվար, շուն, կատու, և գոմէշ․ բայց գոմէշք նր այլազան են 'ի գոմշոց մերոց․ զի ականջք նց մեծ, և մորթն անթաւ, և գրեթէ լերկ գլխովին․ եղջիւրքն երկայն և կոր․ և մարմնով վտիտ, մնւնդ յամարայնի․ ուստի և միս նց սակաւ է, բայց համեղ։ Երիվարքն փոքր են․ զի բարձրութի նց չէ ինչ աւելի քն 6, կմ 7 թզաչափ․ այլ թեթև են յոյժ, և արագընթաց․ յորս սովորաբար նստին առանց թամբի։ Նոյնպս և խոյք նր բազմօք զանազանին 'ի մերոց․ զի փխկ գզաթու՝ ունին զաւ ըստ օրինակի ուղտուց․ ականջք նց մեծ են և երկայն կախեալ 'ի ներքոյ եղջերաց․ իսկ դէմքն նման այծու․ և մարմինն վտիտ․ և միս նց անհամ, և յոռի։ Եւ ըն հկռկն խոզքն պարարտ են յոյժ, և միս նց փափուկ, և համեղ։ Ունի և ընտանի հաւս պարարտս․ այլ ձու նց փոքր է յոյժ գրեթէ ըստ ձուոյ աղաւնեաց․ և աղաւնիս, և այլ ազգս ազգս թռչնոց։ Իսկ բնակիչք նր կարճ են հասակաւ, և թխագոյն․ մեծամեծաց և ռամկաց հերքն սեաւ և երկայն։ Զգեստ արանց և կանանց է 'ի բամպակի կտաւոյ խայտաճամուկ, զոր բուն բնակիչք նր գործեն․ իսկ կերակուրն խոզենի և միս ձկոյ և գոմշոյ և ընտանի հաւք, զորս սովորաբար խարշեալ ուտեն․ և քզի նուաղուն է անդ փայտի, յայն սակս առ 'ի սակաւ հրով հասուցանել զկերակուրս իւրեանց, բրեն ըստ հողով ծերպ, կմ լաւէս առեալ ակօս իբրև երկու կանգնաչափ Ճ երկայն ըստ նմանութեան ակօսի խլրդաց· յորում բանան երիս ծերպս կամ ծակս երկու յեր-կուսին ծայրս· յորոց մին մեծ է, ուր դնեն զհուր· և միւսն փոքր 'ի միւս ծայրն 'ի շնչահան· իսկ երրորդն է 'ի մէջն բոլորաձև· ուր դնեն զպղյատն կերակրոյ· որ 'ի մէջն լայն է, և 'ի վերուստ սրածայր· ուստի և բոց հրոյն դրեթէ յամ կողմանց պատէ զնովաւ, որով սակաւ հրով հասուցանեն զկերակուր իւրեանց: Արք և կանայք առհասարակ ծամեն զծխախոտ, և զայլ ազգողական տերևս բուսոց· որք փութով ապականեն զատամունս· և սևացուցանեն իբրև զածուխ: Այս երկիր 'ի հինգ իշխանութիւնս բաժանի, ըստ հնգից գաւառաց իւրոց· որք են Լահոր· Սէրդա· Բէճիլու· Դիճօ, և Մառառըա· որոց իւրաքանչիւրն ունի իւր սեփական իշխան· զոր Ռաջա· կամ Ռաձա կոչեն· որք խաղաղութեամբ և սիրով են ընդ միմեանս, թէպէտ և ժողովուրդք նոցա պատերազմական են: Եւ սոքա հնգեքեան իշխանք միանգամայն ունին 7300 զինուորս, որոց զէնք են հրազէն, աղեղ, նետ, և վահան: Բայց յայսցանէ իւրաքանչիւր զինուոր ունի ազգ մի սրոյ, նման ընդ մանգաղի, բայց միայն զի ծանր է քան զհասարակ մանգաղս, և բերանն նեղ: Կրօն նոցա է ազգ մի թանձր, և բիրտ կռապաշտութեան, զի այր իւրաքանչիւր ըստ հաճոյից զոր ինչ կամի պաշտէ· քանզի չունին զգլխաւոր ինչ կուռս· որում ամենքին պարտաւոր լիցին պաշտօն տանել:

Փորդուգալք երբեմն հասին 'ի մոլուղեան կղզիս· աստ և կալան զկալուած մի· այլ փութով հանին զնոսա անտի հոլանտացիք· սակայն և նոքեանք ոչ կարացին միւս գտանել անդր, մինչև ցմերձակայ ժամանակս· յորում ընկերութիւն վաճառականաց նոցին հոլանտացւոց այսպիսի դաշն եդ ընդ Ռաձայից, կամ իշխանաց կղզւոյն· եթէ զի նոքեանք հոլանտացիք պարտաւոր լիցին տալ սակաւ ինչ վարձս իշխանաց կղզւոյն: իսկ իշխանքն պարտաւորեսցին զանձինս չտալ թոյլ ժողովրդեան իւրեանց առևտրութիւնս առնել ընդ այլոց ազգաց, բաց 'ի հոլանտացւոց առանց հրամանի նոցա· և ընդունիլ առ իւրեանս զմի ոմն 'ի հոլանտացւոցն, իբրև հիւպատոս և դէտ, որ փոյթ կալցի պահպանութեան, և գործադրութեան դաշինն, այլև տալ նոցա ամի ամի որիզ մ· բացորեան, և զայլ բերս երկրին: Բայց հոլանտացիք ըստ բնածին բարուց որք յամի հնարին տարածել զիշխանութիւն իւրեանց, ոչ մի, այլ երկուս հիւպատոսս կարգեցին անդ, յերեսին նաւահանգիստս նոցա, յամենայն կողմանց կաշկանդելով զնոսա, զի մի կարասցեն գործել ինչ ընդդէմ դաշինն. որք և ճարձակ իշխանութիւն վարեն անդէն ։

Գլխաւոր ծովք, կամ նաւահանգիստք սորին կղզւոյ են Սոսդո. և Դոխմօ.

Սոնդեան կղզիք ։

Այս կղզիք 'ի սոյն անուն կոչեցան 'ի նեղուցէ անտի սունդայ, կամ 'ի պքանտալինէ, որ է ընդ մէջ սումադրա, և ճեաւայ կղզեաց, որք ընդ մերում քերթողահօր 'ի նախնումն կոչեցան Տապրոբանիա ։ Եւ են կղզիք մեծամեծք քան զայլ կղզիս ասիոյ, ընդ այրեցած գօտւոյ. բայց օդ նոցա բարեխառն է սակս յաճախ հողմոց և անձրևաց, այլ վնասակար օտարականաց. յորոց մեծագոյնքն են հետագայքդ ։

Պօրնէօ ։

Այս կղզի որ մեծ համարեալ լինէր քան զամենայն կղզիս ծինաւ քան զկատարեալ գիւտ նորոյ հոլանտայի 'ի դուգայ ։ Բուն բնակիչք նորա սևաւ են, և բնակեն 'ի միջին կողմանս կղզւոյն. իսկ 'ի ծովեզերեայս են մակասարեցիք, ճեաւացիք, մալեցիք, և արաբացիք, որք 'ի վերայ այլոց յոռի հանգամանաց բարուց իւրեանց, յաւելեալ ունին և զգազանաբարոյութիւն դժնդակ ։ Գլխաւոր, և առաւել շահաւէտ բերք նորա է քափուր. այն է՝ քեաֆիւրի, իւղ կամ խէժ ցնդական և թափանցօղ. զոր այսպիսի իմն օրինակաւ հանեն. զի զծառն քափուրաբեր հատանեն 'ի մանր չերտս, և եռացուցանեն 'ի ջուր յանօթ ինչ 'ի ձև խալաբջոյ, ուր քափուրն 'ի վեր ցնդեալ մածանի 'ի կափարիչ անդր անօթոյն. գտանի և բնածին հասեալ 'ի ծառոյն իբրև զխէժ ։ Յեւրոպիա միայն հոլանտացիք գիտեն զարհեստ պարզելոյ զքափուր, յորմէ բժշկ. յոյժ շահին ։ Պատմի թէ 'ի կղզի աստ գտանի կենդանի ինչ, զոր անգղիացիք անտառային մարդ կոչեն. իբր զի կարի նման է մարդոյ, և զօրաւոր յոյժ, և արագընթաց. զոր ոմանք համարին մասնաւոր իմն տեսակ կապկի ։

Յամին 1526 ձեռնարկին փորտուգալք մուտ գտանել 'ի պօրնէօ կղզի, բայց տեսեալ եթէ կարի տկար է զօրաւոր խուրեանց առ 'ի զինուք ահ արկանել բնակչաց նր̃, ջանացին 'ի ձեռն պարգեւաց ճ̃նպ̃հ բանալ ինքեանց, մատուցանելով միում 'ի գլխաւորաց անտի կղզւոյն գորգս եւ կերպասս ազնիւս. այլ նա ոչ ընկալաւ, երկուցեալ թէ գուցէ մարդկային կերպարանքն գործեալք 'ի նմ̃ գիշերայն սպանանիցեն զնա. սակայն թոյլ ետ նց̃ վճռկանացն առնել անդէն. այլ յետոյ բնակիչք տեղւոյն առհ̃ս̃րկ կոտորեցին զն̃ս: Նոյն անցք անցին եւ ը̃ անգղիացիս, որք զկնի ամաց ինչ մտին անդր: Նոյնպէս եւ հոլանտացիք չարիս կրեալ 'ի բնակչաց անտի, յամին 1748 ածին անդր գունդ մի զօրաց, թէպէտ կարի տկար առ համեմատութ̃ բազմութ̃ բնակչաց կղզւոյն, սակայն այնպս նուաճեցին զիշխանն, ը̃ որոյ իշխանութ̃ էր բոլոր պղպեղ երկրին, մինչեւ զիջանել նց̃, զի բոլոր վաճռկանութն պղպեղի միշտ լիցի 'ի ձեռս հոլանտացւոց եւեթ, այսչափ ինչ եւեթ 'ներեցին նմ̃ հոլանտացիք զի կարող լիցէ 250000 օխայ պղպեղ տալ չինաց, որք 'ի վաղ ժմկաց յաճախեն 'ի նաւհնգիստս նր̃: Յետ այսր դաշնադրութ̃ ընկերութն հոլանտացւոց առաքէ 'ի բէնէարմասէն, որ է մի 'ի գլխաւոր քղքաց սորին կղզւոյ, ափիոն, որ է՝ աֆիոն, աղ եւ հն̃դկ կտաւս ինչ. եւ առնու անտի ականս պատուականս, եւ իբր վեցհարիւր հզ̃ր կշիռ պղպեղ. որոց կշիռն հարիւրն առնէ իբրեւ 31 օխայ. սակայն 'ի վր̃ այսր ամի սակաւս շահի անտի, զոր եւ բովանդակ ծախէ 'ի պէտս մարդկան, եւ կալուածոց իւրոց, որ անդ. թէպէտ եւ բոլոր ծախք նր̃ հազիւ ժամանեն 92909 վենետակեան ոսկի:

Այս կղզի 'ի բզմ̃ թրութ̃ս բաժանի. յորոց զերիս եւեթ դասք նշանակել յաշխրգրաց, որք են Պօրնէօ. Սուքադանա. եւ Պէնճէրմասէն. զի միւսն կողմանք նր̃ անծանօթ են: Իսկ գլխաւոր տեղիք նր̃ են:

Պօրնէօ: Է մայրաքղք համանուն թրութ̃ 'ի հիւսիսակողմն կղզւոյն, մեծ եւ բազմամարդ, ունի նաւհնգիստ պատուական, ուր կարի յաճախեն նաւք: Տունք նց̃ ցած են, եւ փայտակերտք 'ի վր̃ ցցից շինեալք:

Սամպաս: Քղք̃ առ փոքրիկ գետով 'ի հարաւոյ արեմտից պօրնէօյի, որ եւ կոչի Նոր սամպաս, 'ի պտ̃ճառս հնոյն սամպասայ, որ է մերձ առ բերան նմին գետոյ 'ի հարաւոյ նոր սամպասայ: Մօտ յայս քղք գտանի հանք անդամանդ ական:

Լաւէ: Քաղաք 'ի հարաւակողմն սամպասայ, մերձ յակն Լաւէ գետոյն:

Սուքատանա: Քաղաք ծովեզերեայ յարեւմտեան կողմն կղզւոյն, և 'ի հարաւոյ նախայիշատակեալ քաղաքացդ:

Պէնճէրմասին: Է մայրաքաղաք համանուն թագաւորութեան, և աթոռ խորուն թագաւորի, 'ի հարաւային եզերս կղզւոյն, ուր մահմետականք բնակեն. առ բերան համանուն գետոյն, որ է մեծագոյն գետ այսր կղզւոյ ելեալ 'ի միջին կողմանց նորա յերկուց ականց 'ի ժայռաւոր սեպացեալ լերանց. որ երբև ժամանէ 'ի ծովն, գործէ անդ ծոց քաջայարմար, ուր կարեն խարիսխ արկանել և նաւք մեծամեծք:

Արևելեան կողմն պօռնէօի կոչի կողմն ամայի. վասն զի չիք անդ բնակութի, և ոչ նաւահանգիստ:

Շուրջ զայսու կղզեաւ են բազում մանր կղզիք, որք Լաուտ, կամ Լաւտ. որ է նաւահանգիստ պատուական: Պապա. Կղզի ոէյն օփոռթինոսի. Սէյն յովհաննու. Երէեզբորէ. Պռանէօնք. Սառաան. Սէ մարէոմ. Պոնգան. Պոէկաօն. Սամէկուէմ. Գոմապօռ. Պաւլէնս գրէնտէլ. Պօռնէօնք. Պօռէօն. Լայէոք. Սուրօնթօն. Մանգօփ. և այլք անուանիք:

Հէրմաթա: Է փոքրիկ թագաւորութիւն յարեւմտեան ծայրն պօռնէօի:

Սումատրա:

Այս կղզի անկանի առ ցամաք կղզեաւն մալաղայի զանջրպետ 'ի մէջ ունելով զնեղուցն մալաղայի և սինկափուրայ: Եւ է մի 'ի մեծամեծ կղզեացն ասիոյ. լայն իբրև 900 մղոն. իսկ երկայն իբրև 210: Օդն նորա ծանր է և վնասակար մանաւանդ օտարաց առ հրատապ տօթոյն, զի ուղղակի ընդ այրեցեալ գօտեաւ անկանի, և առ յաճախումն յորդահոս անձրևաց. այլ երկիրն արգաւանդ է յոյժ. բերէ պէսպէս բոյսս 'ի պէտս օգտակարութեան դեղոց, և համեմս. այլ և ոսկի, և այլ ազգի ազգի արմտիս: Պղպեղ նորա ընտրի պղպեղին քօչինու, որ 'ի մալապար լաւագոյն է քան այլոց տեղեաց ասիոյ: Գտանին անդ և բովք ոսկւոյ արծաթոյ այլև անագի, և այլոց հրահալելեաց: Ունի և ազգ մի նորատեսակ ծառոյ, որ կոչի ծառ խառնեալ, որ 'ի մտանել արեգական ծաղկի, և ծաղիկք անուշահոտ, և 'ի ծագել նորա թօթափին:

'Ի հիւսիսային կողմանս ունի արօտս անասնոց խոտաւէտս և յուռթիս, և գոմէշս բազումս, և եզինս, և երիվարս մանունս, այլև անասունս վայրենիս. [illegible] եղջերու և այծեամն, որք մեծութ̃ զանցանեն զմերովք : Ցանտաւս նո̃ և 'ի լերինս գտանին և փիղք, և ռնգեղջիւրք և կապիկք և օձք : Գետք նո̃ փոքր են, այլ ձկնալից. առ որովք բազմութի̃ կոկորդիլոսաց ոլջանեան, որք նոքօք կերակրին : Ունի և ընտանի հաւս բզ̃մս և պէսպէսս, ոմ̃ և վայրի Թռչունս : Բնակիչք նո̃ մահմետական են, որք համարեալ են ազգ ժանտ, ննդաւորք անհաւատարիմք չարաչարք անգութք դաւաճանամիտք ամբարտաւանք արհամարհօղք օտարաց, զինքեանս միայն գերագոյն ք̃ զայլս ունելով : Այս կղզի բաժանի 'ի բզ̃մ փոքրիկ Թգ̃րութս . մեծագոյնն է Թգ̃րութն աշեմայ, որ աւելի ք̃ զկէսն կղզւոյն գրաւէ . հոլանտացիք ունէին անդ չորս, կմ̃ հինգ ամրոցս . որոց իշխանութն տուեալ էր անդ, ք̃ զբուն Թագաւորայ, կմ̃ լաւ ևս ասել իշխանաց տեղւոյն :

Այս բաժանումն կղզւոյն 'ի բզ̃մ Թր̃ութս Թէպէտ գոյր և յոլ̃ջ ք̃ զհատանել անդր եւրոպացւոց, սակայն բոլոր վճռ̃կանութ կղզւոյն յաւէտ գումարէր, ուստի և 'ի նւհ̃նգիստ նո̃ յաճախէին յոյժ նաւք բզ̃մ ազգաց ասիոյ, ոմ̃ և յետոյ նաւք փորդուգալաց, և այլոց ազգաց եւրոպացւոց, որք զօրացան 'ի կողմանս յայնոսիկ 'ի տկարանալ ասիացւոց : Անդ լինէին տուրևառք, փոխանակելով զարևելեան վաճառս ը̃ ոսկւոյ, և ը̃ պղպեղի, և այլոց վաճառաց այսր բարեկլից և փարթամ ծի : Բայց խռովութիքն, որք յետոյ վեր 'ի վայր արարին զայս գերահռչակ վաճառատեղի, նուաճեցուցին անտի զերթևեկս նաւուց : Իբրև նուաճեցաւ անդէն յաճախութն վճռ̃կանութ, խորհեցան հոլանտացիք յայլ անդորրագոյն տեղիս սորին կղզւոյ հիմնել իւրեանց վաճառատեղի . բայց և այնք ոչ յետ բզ̃մ ժմկաց մեծամբս նուաճեցան . ք̃զի այն՝ զոր Թոյլատուութ Թգ̃րի տեղւոյն հիմնեցին յինատափուր, գրեթէ խափան եղեալ զկնի հիմնելոյ և անգղիացւոց վաճառատեղի 'ի ծովեզերեայս յայնոսիկ : Նոյնպս և վաճառատեղին եամպեայ, օգտա գրեթէ և ոչ մի ինչ բերէր նց̃, զի շրջակայ Թգ̃րքն խափանս մերկացուցին զիշխանն տեղւոյն 'ի կալուածոց իւրոց : Ուստի հոլանտացիք հնարէին զհամագրեա̃լ վնասս լնուլ 'ի պալեմպան ք̃ղքի . ուր էր ամրոց նց̃ . որոյ 80 զինուորք կարգեալ կային 'ի պահպանութն . և ամի ամի հանէին անտի երկու միլիոն կշիռ պղպեղ . վս̃ հարիւր կշռոյն իբրև 2 ոսկի վճարելով . և միլիոն մի և կէս գալին . ը̃ հարիւր կշռոյն

իբ

կերև 5 ոսկի վճարելով ։ Այս գին Թէպէտ չափաւոր, մինչդ Թէ սակաւ երևի, սակայն տակաւին միշտ շահաւոր էր Թգրի տեղւոյն. զի ինքն նուազև գնով առնոյր 'ի ժողովրդենէ իւրմէ ։ Ուստի 'ի վաճառաց աստի, այլև յոսկւոյ, զոր հաւաքեն 'ի գետոց անտի նր՟, կուտեալ է ասեն գանձ անբաւ ։

Գլխաւոր անդրեքսորին կղզւոյն են. Աչէն, կմ՟ Աշէն ։ Է մայրաքղք համանուն Թգրութե 'ի հիւսիսային ծագ կղզւոյն, Թգրանիստ և բազմամարդ. որ յառաջին կարի բազմավաճառ էր, բայց և այժմ առնեն անդ դայլն ինչ վաճառականութիւն անգղիացիք. հոլանտացիք, դանիք, փորդուգալք, և չինք ։ Տանին անդ որիզ. որ է սովորական կերակուր բնակչաց. և փոխարէն առնուն ոսկի, որ յերկրէ անտի ելանէ ։ Շինուածք քղքիս փայտակերտ են 'ի վ֊ր ցցից. իսկ բուն բնակիչքն առհասարակ մահմետականք, հանդերձ Թգրաւ իւրեանց. որոյ ապարանքն է ի մէջ քղքին. քաջ ամրացուցեալ ի աւանելոյ տեղւոյն ։

Անփաճիր, կմ՟ Անդրագիր ։ Է մայրաքղք համանուն Թգրութե ի մէջ կղզւոյն ։ Ցետոյ կանգ 'ի ձեռս հոլանտացւոց, որք ունին անդ ամրոց առ 'ի յապահովս առնել զԹ֊րութեն իւրեանց ։

Ինփաճուր. և Մանինդալ ։ Են երկու մայրաքղքք երկուց փոքրիկ Թգրութեց, որք 'ի մայրաքաղաքաց աստի իւրեանց առնուն զանուն յարևմտեան կողմն կղզւոյն, Եաճպի ։ Մայրաքղք համանուն Թգրութե 'ի հարաւոյ արևելից անտառաճերայ. քղք մեծ և բազմավաճառ, ունի նաւահանգիստ պատուական ։ Գտանին և անդ հոլանտացիք, որք և ունին անդ սեպհական վաճառանոց ։

Պալէմպան ։ Է մայրաքղք համանուն Թգրութե ամուր, և բազմավաճառ ։ Անդ է գլխաւոր վաճառանոցն հոլանտացւոց, և է յարևելեան կողմն կղզւոյն 'ի կղզի ինչ՝ ի մասին 'ի ծովու, և մասամբ իմն 'ի փոքրիկ գետոյ ձևացուցեալ ։

Պանքա ։ Է կղզի մեծ, որ ունի իւր համանուն գիւղաքաղաք ընդարձակ ։

Պիլլիդօն ։ Է միւս ևս կղզի երևելի յարևելեան կողմն նախընԹաց կղզւոյն ։ Են այլև բզմ՟ կղզիք ցրիւ շուրջ զսումադրայիւ կէս մի յարևելեան կողմն, և կէս մի ի արևմուտս ։ Արևելեանքն են Լաւանէֆարա. Կղզի Ճեֆաձեծ ծառոց. Դոտրայս. Եօթն կղզէք. Իննկան, և այլք անանունք ։ Իսկ արևմտեանքն. Փօլօնանա. Իսաքէ-քոյ. Փէնանկ. Դուլէնաքէ. Նասսաու. Պէրլ. Պէրբէլա.

Մէ

Մեծաբաղտ · Մէնտաւէ · Պիտօսա · Նէկաս · Պանէար · Կէլւէ խուլէց:

Ճէաւա, կմ՟ Յաւա:

Այս կղզի ձգի առ երի սումատրայ կղզւոյն 'ի հարաւոյ արևելից, ունելով անջրպետ 'ի մէջն ըղսունտեան նեղուցն: Եւ է մի յերևելի կղզեացն ասիոյ · երկայն երբև 600 մղոն · իսկ լայն երբև 120 · որ և արգաւանդ է և բարեբեր · բերէ որիզ և այլ սերմանիս և շաքար, պղպեղ ազնիւ յոյժ, կոճապղպեղ որ է զէնճէֆիլ · և այլ ազգի ազգի համեմս, և պտղոճական պտուղս: Գտանին անդ և բովք ոսկւոյ և արծաթոյ և պղնձոյ, այլ և հանք կարմիր յակնթի և անգամանդ ական և ընտիր զմրխտոյ: Նշանաւոր է 'ի կղզի աստ տեսակ մի օձի տարապայման երկայն և ստուար · յորս գտան 20 ոտնաչափ երկայնութ՟ · և ստուար, ը՟ս ստուարութ՟ պարարտացեալ խոզից: Գոյ անդէն և լեառն հրաբուղխ, որ անհնարին բըղխումն բոցս 'ի վեր արձակէ: Միջագոյն մասն բնակչաց նր՟ մահմէտականեն, զոր քարոզեաց նց՟ միոմն արաբացի զորոյ զգերեզմանն 'ի յարգի ունին · բայց 'ի խորին կողմանս գտանին և կռապաշտք: Այս կղզի բաժանի 'ի բզ՟մ փոքրիկ թգ՟րութիս, կմ՟ յիշխանութիս, որոց իշխանք, բաց 'ի միոյ, կմ՟ յերկուց առհասարակ ը՟ հրամանատարութ՟ հոլանտացւոց նուաճեալ կան, որք զայս օրինակ սկսան տիրել անդէն:

Յամին 1680 երբև հասին անդր հոլանտացիք, և սկսան հիմնել անդ վաճառատեղի, յօգնութ՟ կոչեցան 'ի միոջէ յիշխանաց կմ՟ 'ի թգ՟րաց տեղւոյն, գոլով յիւրում արքայանիստ քղ՟քի պաշարեալ 'ի թշնամեաց իւրոց, որք կամէին հանել զնա 'ի թգ՟րութէ, և վերստին նստուցանել զհայր նր՟, որ իւրովի հրաժարեալ էր· իսկ հոլանտացիք գնացեալ յաղթեցին թշնամեաց նր՟, և հաստատեցին զնա յաթոռ թգ՟րութե իւրոյ · և 'ի հատուցումն այսր ընկալան 'ի նմանէ զընդարձակ ազատութիս, որով զբովանդակ վճռկանութին 'ի սահմանս տրութ՟ նր՟ յինքեանս գրաւեցին · զոր սակածախուք պահեն · զի 368 ոգիս ևեթ ունին, բաժանեալ յերկու անզօր ամրոցս · յորոց մին է բնակարան իշխանին հոլանտացւոց · իսկ միւսն գերեալ թագաւորի տեղւոյն · յորս յամին ծախեն 9545 ոսկի դահեկան · զոր հանեն ըսկ 'ի վաճառացն, որք վաճառ-

ունին

ւնին անդէն. նաև բոլոր շահ իւրեանց է 'ի պղպեղէն. զի ամի ամի ժողովեն 'ի գ̃ւռէ անտի միլիոն մի և կէս օխայ պղպեղ. վն̃ յիւրեանց օխային, թ̃ սակարկեն զնոյն, վճարելով իւրև 3 ղուռուշ։ Բայց այս շահ սակաւ է առ համեմատութ̃ այնր, զոր շահին 'ի Ջերիպօն, որ է այլ իմն փոքրիկ տ̃րութ̃ 'ի նոյն կղզի, այլ բարեբեր յոյժ։ Որոյ սուլտանն ապաստանեալ 'ի պաշտպանութ̃ նոցին, ը̃ օրինակի վերոգրեալ Թ̃ք̃րին, շնորհեաց նց̃ զընդարձակ իշխանութ̃ վաճառականութ̃ յիւրում՝ տ̃րութ̃. որ և պտղատու որ է ամի ամի վաճառել նց̃ 1000 չափ, զոր նք̃ լաշդ կոչեն՝ որիզ. մի լաշդն կշռէ 1650 օխայ. և վն̃ միոյ լաշդին վճարեն իւրև 7 ոսկի. Եւ բաց յայսմանէ պտղատու որ է առ կէս միլիոն օխայ շաքար ընտիր. որում՝ վն̃ 50 օխային վճարեն իւրև 4 դ̃ռշ։ Եւ ևս կէս միլիոն, և հարիւր հազար օխա խահվէ. մի օխային 16 փողոյ. և 15000 օխայ բամպակ. որոյ հատուցումն վաճառոյ նց̃ իւրև կէս դ̃ռշի։ Թող զայլ բերս երկրին. որք չեն այնչափ ինչ երևելի։ Եւ թէպէտ այսպիսի անողորմութբ̃ ճնշին բնակիչք տեղւոյս 'ի հոլանտացւոց, սակայն չէ ինչ նց̃ փոյթ. և ոչ իսկ երբէք խորհին 'ի բաց թօթափել զծանրակիր լուծ նց̃, քանզի տկարեն. և ասի թէ 'ի մէջ համօրէն ժողովրդոյն Ճեաւայ կղզւոյն, ժողովուրդ սորին գ̃ւռի է յաւէտ հըլու, քաղցրաբարոյ, և ք̃ղքական, զորս բաւական են 100 ևեթ եւրոպացիք զսպել։ Ամ̃ ծախք, զոր առնեն հոլանտացիք 'ի պահպանութ̃ իշխանութ̃ իւրեանց 'ի սմին գ̃ւռի հազիւ հասանեն 93727 ոսկի. զոր 'ի կառուոյն ևեթ հանեն, զոր անդ տանին։ Նոյնպէս և 'ի տրութենէն Մատարամայ ոչինչ ը̃հաս յառաջնոց անտի շահին հոլանտացիք։ Այս տրութ̃ որ յառաջագոյն ձգէր 'ի համօրէն կղզին, այժմ և այժմ զմեծագոյն մասն նր̃ գրաւէ, առ ժմկ̃ մի ը̃դէմ եկաց հոլանտացւոց. է զի՝ յաղթեաց նց̃, և է զի՝ յաղթեցաւ 'ի նց̃է, սակայն միշտ քաջութ̃ պաշտպանեաց զազատութ̃, և զանկախութ̃ իւր մինչև ցամն 1704, յորում ամի 'ի մեռանել Թ̃ք̃րի տեղւոյն յարեաւ հակառակութ̃ 'ի մէջ որդւոյ, և եղբօր մեռեալ Թ̃ք̃րին. վն̃ յաջորդելոյ 'ի տեղի նր̃։ Որով և ժողովուրդն յերկուս պառակտեցաւ, մեծ մասն նց̃ զկողմն որդւոյն կալեալ։ Յայնժամ հոլանտացիք ժամ դիպող գտեալ, և զայն տրութ̃ ը̃ ձեռամբ իւրեանց նուաճել, կալան զկողմն եղբօր Թ̃ք̃րին, զոր և քաջութ̃ Թ̃ք̃րեցուցին։ Այսպէս օրէնս եդին և սմա, պահանջելով 'ի նմէ, ամի

ամի վաճառել ինքեանց հինգ հազար լաշդ աղ · յիսուն հազար օխայ պղպեղ · և զբոլոր լեղակն , և զղաւուխկն · այն է՝ ղունկս , որ ելանէ 'ի նմին տէրութենէ · բամպակ մանեն , և զայլ պէտս իւր կարի չնչին և անարգ գնով : Մի միայն Պալամպան անուանեալ տէրութիւն , կամ գաւառն զերծ մնաց 'ի յափշտակիչ մագլացն հոլանտացւոց սակս անպտղութեան իւրոյ և աղքատութեան : Յայս ժամ յիշատակեալ տեղիս , թէպէտ ունին հոլանտացիք կալուածս , բայց կատարեալ տէրութիւն նոցա է միայն յԵաքադրա գաւառի · որոյ և երկիրն բովանդակ է ընդ իշխանութեամբ եւրոպացւոց · և չինաց , որք են ընդ հնազանդութեամբ եւրոպացւոց , և ասի թէ կան 'ի սմին գաւառի իբրև 150 հազար գերիք , կառավարեալք 'ի սակաւ ոմանց ազատաց :

Այս գաւառ ամի ամի բաց յանձանց բերէ երկու միլիոն կշիռ խահֆէ · 75 հազար օխայ պղպեղ · 13 հազար օխայ բամպակ · 5 հազար լեղակ · 5 միլիոն օխայ շաքար · և այս ամենայն հաւաքեալ կուտի 'ի Պադավիա · և անտի փոխի յայլ և այլ կողմանս Եւրոպիոյ :

Պադավիա : Է քաղաք շինեալ 'ի հոլանտացւոց յամին 1619 'ի վերայ աւերակաց նախնի Եաքադրայ քաղաքին յարևմտեան կողմն կղզւոյն 'ի խորին ծոց , լցեալ բազմութեամբ կղզեաց , որք պատսպարան են քաղաքին , խորտակելով զբռնութիւն ալեաց · ուստի և ապահով է ծոցն այն յամենայն հողմոց · բայց միայն զի 'ի պղտորել ժամս ոչ սակաւ դժուարութիւնս կրեն գնալ 'ի նաւս · որք պարտաւորեալ են հեռի 'ի քաղաքէ անտի խարիսխ արկանել · ուր հանէ երկայնաձիգ ծոց մի , որ է ընդ մէջ կղզեացն այնոցիկ , գործեալ 'ի միոյ 'ի գլխաւոր գետոցն սորին կղզւոյ · որ արբուցեալ զդաշտս , և անցեալ ընդ Պադավիա քաղաք , ընդ այն ծոց գնայ մտանէ 'ի ծովն · յառաջագոյն խոր էր իբրև 12 ոտնաչափ · այլ այժմ հազիւ 6 ոտնաչափ : Եւ է քաղաք մեծ բազմամարդ , և ամուր · ունի շուրջանակի խրամ լայն և խորայատակ և ամրոց հզօր և գրեթէ անառիկ , և չորս դրունս · ունի մեծամեծ և ընդարձակ փողոցս · ընդ նմին անկելանոցս , և շուկայս կամ վաճառանոցս , և համբարանոցս կարասեաց նաւուց · և բնակիչս իբրև հարիւր հազար , յորս են և բազմութիւն յոյժ չինաց : Կարի յաճախեն անդ նաւք գրեթէ յամենայն կողմանց Եւրոպիոյ : Չինացիք ամի ամի 12 նաւս առաքեն , որք բարձեալ բերեն քափուր յախճապակեայ անօթս մետաքս թէյ և բամպակ · որոց բոլորեցուն գինն հասանէ 9272727 վէնէտկեան ոսկի : Իսկ յեւրոպացւոց առաւելագոյն յաճախեն անդ սպանիացիք, և անգղիացիք • բայց հոլանտացիք ձախողակի իմն գնան ը̅ ն̅ս, և ոչ ընդունին զն̅ս իբրև վճ̅ռկանս, բայց 'ի սպանիացւոց, որք գնան անդր 'ի մանիլայէ, տանելով ոսկի և արծաթի դրամս և որդան կարմիր • և փոխարէն առնուն կտաւս, և կինամոնս : Այլ տեսէք հոլանտացւոց, զի գաղղիացիք, և անգղիացիք յաճախէին 'ի փիլիպեան կղզիս բառնալ անտի կինամոնս, յամին 1759 կամեցեալ նահանգն արկանել նց̅, սահմանեցին վաճառել սպանիացւոց զկինամոնն նովին գնով, որով յեւրոպիա վաճառի : Այս գործ նց̅ մեծապէս նուազեցոյց զառևտրութ̅ին և զերթևեկ նաւուց սպանիացւոց • նոյնպս̅ և 'ի վր̅ անգղիացւոց, որք առաւելապս̅ յաճախեն անդ, բղ̅մ կապանս եդին :

Ընկերութ̅ին նց̅ յամ՝ վաճառաց, զոր թողու հանել և մուծանել 'ի քղ̅ք անդր, ը̅ հարիւրոյ հինգ պահանջէ • որոյ բոլոր գումարն ամի ամի հա̅նէ 9166181 ոսկի : Բայց այս բովանդակ գումար չէ բաւական 'ի ծախս նց̅, զոր առնեն անդ • որ հասանէ 9545454 ոսկի : Սոյն այս ընկերութ̅ հոլանտացւոց ամի ամի առաքէ անդ 20 նաւս լցեալս բեռամբ, և առնու անտի ոսկի արծաթ ակունս պատուականս, մարգարիտ, պղինձ, թէյ, յախճապակեայ անօթս, համեմս, մետաքս, և բամպակ : 'Ի քղ̅քի աստ է գլխաւոր ատեան հոլանտացւոց հնդկաց ծ̅ի • զոր կացուցանեն 6 խորհրդականք, և այլ ևս ոմանք արտաքոյ կարգի • և մի ոմն սպարապետ, որ վարէ զիշխանութ̅ի փոխարքայի, և է նախագահ ժողովոյն • զորմէ կախեալ կան վեց հիւպատոսք, կմ̅ կառավարք հոլանտացւոց • որք 'ի հնդիկս են, ըս̅ հիւպատոսին բալեակադայ որ 'ի գորոմանտէլ • ամպոյնայն • պանտանայն • տէրնատեայ • մօլուքեայ • մալաքայի • և սէյլանայ :

Օնրուստ : Է մի 'ի բազմութէ անտի կղզեաց նախայիշատակեալ ծոցոյն, իբրև 6 մղոնաւ հեռի 'ի պատավիա քղ̅քէ • զոր մարթ է կոչել գործարան, և համբարանոց կարասեաց նաւուց • զի ամ̅ նաւք անդ գտանեն զամ̅ պիտոյս, ուր և միշտ՝ գտանին երեք, կմ̅ չորս հարիւր փայտահատք եւրոպացիք :

Բանտամ, կմ̅ Պանդամ : Է ամուր վաճառատեղի և պատուական նաւահանգիստ • և մայրաքղ̅ք գեղեցիկ և բազմավաճառ համանուն փոքրիկ թգ̅րութե յարեւմտեան կողմն պատավիոյ : Ունի իւր սեփական թագաւոր մահմէտական ը̅ իշխանութ̅ հոլանտացւոց, որք գրեթէ բացարձակ տր̅ են քղ̅քին, և համօրէն այնր Թգւրութե․ որոյ և գլխաւոր վաճռկանութիւն է 'ի ձեռս նց:

Մադէրան: Մայրաքղք համանուն Թգւրութե 'ի հարաւային եզերս կղզւոյն․ մեծ և բազմամարդ և ամրացուցեալ լերամբք, որք շուրջ պատեն զնովաւ: Անդ է բնակութե Թգւրի տեղւոյն յըարձակ, և 'ի մեծաշէն ապարանս․ զորմէ ասեն թէ ունի իւր Թիկնապահս գունդ մի տասն հազար կանանց զինուորելոց․ որոց սակաւ զօրք հոլանտացւոց, զորս անդէն ունին, հեշտեաւ իմն արգելոք կարէին ըդէմ ելանել․ և գուցէ ելցեն ը անյագութե իւրեանց առ 'ի տիրել:

Սէփամէր: Է քաղաք և տրուն 'ի հարաւակողմն կղզւոյն, 'ի ծագն արևմտեան:

Պաչալան: Է այլ իմն տրուն ը մէջ մադարանայ, և սեփամերայ:

Պալամպաան: Է գլխաւոր քղք համանուն փոքրիկ, և աղքատ տրութե յարևելեան կողմն կղզւոյն, առ պալեայ նեղուցաւն:

Պալէ: Է կղզի, որ ունի իւր համանուն գլխաւոր քղք:

Լօմպօկ: Է այլ իմն կղզի ը մէջ պալէի, և սօմպարա կղզեաց, որ չև ևս է ը բոլորին ծանուցեալ:

Մադուրա: Է կղզի, որ անջատի 'ի Ճաւայ կղզւոյն 'ի ձեռն անձուկ նեղուցի․ հոլանտացիք ունին անդ 15 զինուորս կարգեալս առ 'ի բռնադատել զբնակիչս կղզւոյն ինքեանց վաճառել զորինչ իւրեանց անարգ և չնչին գնով․ և ոչ այսչափ միայն, այլև զչափն ևս խարդախեն, և այնպէս կրկնապատիկ յափշտակեն 'ի տառապելոց անտի, չարաչար կեղեքելով զնս:

Նաբուրա, կմ **Նաբարա**: Է աւան 'ի լեզու ինչ հողոյ, որ ձևացուցանէ զնւհնգիստ 'ի հիւսիսային կողմն Ճաւայ կղզւոյն, անուանեալ Նաւահանգիստ Մանդալէայ․ առ որով է միւս ևս աւան Ռամպօկ կոչեցեալ:

Ջէբէրպօն: Է մայրաքղք համանուն տրութե ը իշխանութե հոլանտացւոց, յորմէ ոմ վերագոյն նշանակեցաք, բզմ յոյժ շահին:

Են այլևս կղզիք 'ի սուննտեան նեղուցի, որք անկանին ը Ճաւայ կղզեաւ․ որոց գլխաւորքն են Թան-Ճեանիկ․ Սամօսապօ․ Լօմպօկ, կմ Լաուպէթ․ Գաարամօն․ Նա-սաօ․ Նաթօա պօւրօն․ Կղզի Էղխանաջան․ և Կղզի Միլճան:

ԱՇԽԱՐՀ. Ժ:

ՑԱՄԱՔՔ ՆՈՐԱԳԻՒՏՔ ՚Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՍ ԱՍԻՈՅ:

Ի վաղուց ժմկաց մեծափափաք ցանկային աշխարհագիրք, զի որք ՚ի մեծազօր Թգ՟րացն եւրոպիոյ առաքեցան ՚ի քննել զայն մասն վերին կիսագնտոյս մերոյ, որ է ընդ մէջ սարին բարեյուսոյ, հարաւային ծայրի ափրիկոյ, և հօռն անուանեալ սարի, որ է ՚ի հարաւային ծագ ամերիկոյ: Յամին 1616 յորժամ գտաւ Ենդրաքդ անուանեալ երկիրն, որ է ՚ի հարաւային ովկիանոս անդր յարեւմտեան կողմն սարին բարեյուսոյ, և ՚ի հարաւոյ Ճեաւայ կղզւոյն մեծի, անշուշտ առաւելցաւ կարծիք Ծագրաց որք հաստատէին եթէ գտանի անծանօթ երկիր ՚ի կողմանս աւստրական բեւեռին. և առժամայն սկսան եւրոպացիք ը՟ կողմանսն ը՟ այնոսիկ Ճանապարհս առնել: Ապա զկնի երկուց ամաց. յ՟ 1618 գտաւ Տիէմէն անուանեալ երկիրն 18 աստիճանօք յաւէտ ը՟ արեւելս. և իբրև 10 աստիճանօք առաւել ՚ի հիւսիսակողմն ք՟ զԵնդրաքդ: Յամին 1619 յովհաննէս եաւելս եհաս յայլ կողմն ինչ այնր երկրի առաւել հարաւային գրեթէ ը՟ նովին երկայնութ՟, ը՟ որով է երկիրն ենդրաքդեայ: Յետոյ յամին 1622 գտաւ և երկիրն Լիօնի, որով երեւելի մասն արեւլեան ծովեզերեայ կողմանց այսր նորոյ երկրի եկն ՚ի ծանօթութ՟. որ և միշտ կոչեցաւ երկիր հարաւային: Ապա զկնի երից, կամ չորից ամաց. յ՟ յամին 1627 պետրոս նիւց, անցեալ զԼիօնիւ. և Ճնպ՟հորդել՟ առ ծովեզերբք նր՟ ը՟ արեւելս, եգիտ զերեւելի մասն ինչ հարաւային ծովեզերեայց այնր երկրի. Եւ յամին 1628 նաւապետ ոմն վիթ անուն եգիտ զայլ գլուխ այնր երկրի ՚ի հիւսիսակողմն երկրին ենդրաքդեայ. զոր և յիւր անուն կոչեաց: ՚Ի նմին ամի գտաւ Գարբենդարիա, և Առնհայմ երկիրն: Եւ հուսկ ուրեմն ՚ի 1642 Թասման անուանեալ նաւապետն եհաս ՚ի գլուխն առաւել հարաւային այնր երկրի. զոր յայնվայր համարէին մասն հարաւային ցամաքի: Իսկ վախճան ամ՟ յայս եմ՟ նաւարկութեա էր ստանալ կողուածս 'ի կողմանս յայնոսիկ ։ Այլ 'ի ձեռն բազմապատիկ երթևեկութ՟ն նաւուց, տեսե՟լ իշխանութ՟ց եւրոպիոյ, եթէ չէր ինչ ն՟ց շահաւոր երկիր ստանալ անդ, սակս հեռաւորութ՟ն տեղեացն, յայն սակս ոչ եւս յօժարեցան նաւս առաքել 'ի կողմանս յայնոսիկ 'ի գիւտ նորոյ Ծի․ և այսպէս այնուհետև առ ժամս մի չեկին 'ի յայտ այլ եւս նոր Ծք ։ Ապա վերջին արքայն անգղիացւոց շարժեալ 'ի գիւտ և այնր անծանօթ մասին հողագնտոյս մերոյ, առաքեաց չորս երևելի նաւապետս զկնի միմեանց, որք էին պիրօն․ վալլիս․ գարդրէք․ իսկ չորրորդն եղև յակոբոս գուգ․ այրն մեծահամբաւ, որոյ առե՟լ ը՟ն իւր քաջ Ծագիրս, և երկրաչափս, և երկու նկարիչս, զմին 'ի գծագրել զդիրս, և զձեւս Ծաց․ իսկ զմիւսն 'ի նկարել զնորանշան իրս, զպատկանեալս 'ի բնական փիլիսոփայութ՟ն, ելին 'ի Ճնպ՟հ 'ի նաւահանգստէն փլիմութայ յամսեանն օգոստոսի 'ի 1768․ և Ճնպ՟հորդե՟լ ը՟ն հարաւ 'ի կողմն սուզական բևեռին, գտին նորանոր տեղիս․ յորս լոկ նոր հոլանտայն մեծ է գրեթէ ք՟ զհամօրէն եւրոպիա․ զի 'ի 11 աստիճանէ ձգի մինչև 'ի 39 աստիճան հարաւային լայնութ՟ն ։ Վ՟յ մարթ էր արժանապէս հինգերորդ մասն Ծի անուանել զայսոսիկ նորագիւտ երկիրս, որք անկանին անդր ք՟ զհասարակածն․ զորս յայսմ վայրի սկիզբն արասցուք ստորագրել ը՟ս նոր տեղեկութ՟ցն ։

Նոր ուէլլէս հարաւային, որ 'ի Նոր հոլանտա ։

Այս աշխարհ, զոր նախագրե՟լ մեծանունն յակոբոս գուգ Նոր ուէլլէս հարաւային կոչեաց․ և զոր ոմանք յայժմեան Ծագրաց Հարաւային ասիա անուանեն, գրաւէ զարևելեան կողմն մեծի կղզւոյն անուանելոյ Նոր հոլանտա ։ Եւ ունի իւր սահմանակից 'ի հարաւոյ զովկէանն․ յարևմտից ը՟ս մասին զմիջերկրական անծանօթ ց՟ուս, և ը՟ս մասին զգարբենդարիա․ իսկ 'ի հիւսիսոյ, և յարևելից զհարաւային ովկիանոս ։ Երկայնութ՟ն ն՟ր 'ի հիւսիսոյ ը՟ն հարաւ ը՟ 'ի սարէն եօրքայ, մինչև ցսարն հովէ է 1680 Ծագրական մղոն ։

Երկիր ն՟ր 'ի հարաւային կողմանս ը՟ն 33․ և 34 աստիճանօք ցած է և տափարակ, բայց գնալով ը՟ն հիւսիս առ փոքր մի բարձրանայ, ուր տեսին անգղիացիք և բլուրս, այլ լեառն և ոչ մի, և 'ի խորագոյն կողմանս գտին և լիճս և ճահիճս մեծամեծս, յորս բուսեալ կային կնիւն. և այլ ջրային բոյսք թանձրախիտք ջովացեալք յոյժ, այլև ինքնաբուղխ աղբիւրս և վտակս անհամարս, յորմէ յայտ է թէ ջրարբի է երկիրն դէթ 'ի կողմանսն յորս հասին անգղիացիք. զի թէ յայնպիսում ցամաքային ժմկի այնչափ ջուրք գտան 'ի նմ՟, քաջայայտ է թէ յանձրևային եղանակս առաւել յորդէն : Բայց երկիրն ը՟ առաւել մասին աւազուտ է. սակայն ուրեք ուրեք տեսին և հովիտս դալարազգեստս պարարտագոյնս, այլև մայրիս 'ի վ՟ փոքրիկ բլրոց և ժայռից, այլ ծառք նց՟ ցանցառք և մանուկք, զորս առաւել թուփս արժան է ասել, ք՟ ծառս : Երկու ևեթ տեսակս մեծամեծ ծառոց տեսին անդէն, որք 'ի դէպ լինէին 'ի պէտս շինուածոց, բայց և այնք սակաւ ուրեք գտանէին. և ուր գտանէինն ցանցառ էին իբրև 40 ոտնաչափ տարակայ 'ի միմեանց : Մին յերկուց տեսակաց անտի, սփռեալ յամ կողմանս երկրին՝ խիժաբեր է, տերևք նր՟ երկայն էն և նեղ ը՟ նմանութե՟ տերևոց ուռենւոյ, իսկ խէժն զոր բերէ մթին կարմրագոյն, նմանեալ արեան վիշապի, որ է տեսակ իմն խէժի, և լինի յափրիկէ պիտանի 'ի դեղորայս, զոր յիշատակէ տամբեր 'ի գիրս ճնպ՟հորդութե՟ իւրոյ. գուցէ նման իցէ այնմ, զոր թասման եգիտ 'ի տիէմէն : Իսկ եր՟կդն ը՟ իրաց ինչ նման է փատղէնւոյ : Իսկ փայտ երկոցունց ևս կարծր և ծանր յոյժ : Բաց 'ի սոցանէ գըտանին անդ և երեք ազգք արմաւենեաց : Առաջինն որ իբր 'ի բազումս առատապէս բուսանի 'ի հարաւային կողմանս, ունի տերևս բազմածալս ը՟ նմանութե՟ հովահարի. պտուղ նր՟ մանր է, այլ քաղցր յոյժ և համեղ. և կորիզն պարարտացուցիչ կերակուր խոզից : Եր՟կդն առաւել նմանի. բուն արմաւենւոյ ամերիկեան կղզեաց. տերևք նր՟ մանր են, և ցաւատեալ. և պտուղն նոյնպէս քաղցր, այլ մեծ ք՟ զառաջնոյն : Իսկ եր՟դ տեսակն միայն 'ի հիւսիսային կողմանս լինի, ո՛չ և եր՟կդն. և բարձրութ՟ի նր՟ հազիւ ժամանէ ցտասն ոտնաչափ, և տերև նորա մանր է և ցաւատեալ ը՟ նմանութե՟ տերևոյ վայրենի կաղնեաց. սա ո՛չ բերէ պտուղս ողկուզաւորս, այլ ընկոյզս բոլորաձևս 'ի չափ շագանակի. որ ո՛չ է բարի 'ի կերակուր, այլ դեղ է լուծողական. զորոյ ըղփորձն առին անգղիացիք, զի անփորձ գոլով այնմ, կերին անտի, և պատահեաց 'ի նս՟ զորովայնալուծութի սաստիկ. և խոզք նց՟, որք կերան աւուրս

ութ հիւանդացան. և ոմանք ևս սատակեցան : Բայց 'ի ծառոց աստի, գտանին անդ և այլ ազգի ազգի մանր ծառք, անծանօթք առ մեզ. այլև պէսպէս բոյսք բժշկականք, յորս գտանի բոյս մի փոքրիկ, որ ունի տերևս նեղս, երկայնս, և ջրալիս, յորմէ հատի խեժ իմն գեղնագոյն, որ բուրէ հոտ անոյշ. այլ ոչ նէրեաց ժմկն լինել քննել զյատկութս այնր բուսոյ: Գտանին և ազգի ազգի արմատք, յորոց ոմանք են 'ի կերակուր, և այլք 'ի դեղ. և տեսակ մի բակլայի.
և այլևս ինչ ինչ արմտիք :

'Ի չորքոտանիս նորոյն կալլէնտի նշանաւոր է տեսակ մի շան; զոր բնակիչք նր գանկուռ կոչեն, սառէար գրեթէ հաւասար նոխազի. գլուխն և պարանոցն փոքր առ համեմատութի այլոց մասանց մարմնոյն. իսկ ձետն երկայն իբր 'ի չափ մարմնոյն, որ առ սակաւ սակաւ նրբացեալ' սրածայր աւարտի. և ոտունքն նուրբք. յորոց երկու առաջինքն կարճ են իբրև ութն բթաչափ ևեթ. իսկ յետինքն եռապատիկ երկայն քն զառաջինսն : Սա իբր 'ի բազումս ոստոստելով քայլէ, և յայնժամ 'ի վեր ունի զգլուխն, առնու քայլս մեծամեծս, զառաջինն ոտս սովորաբար ամփոփէ 'ի կուրծս, որք թուին թէ ոչ առ այլ ինչ են պիտանացու նմա, եթէ ոչ 'ի պեղել զհող : Գոյն մարթոյ նր 'ի մթին մոխրագոյն հարկանէ բայց 'ի գլխոյն, որ ըստ իրաց ինչ նման է գլխոյ նապաստակի : Միս նր ըստ պատմելոյ անգղիացւոց, որք կերան անտի համեղ է : Գտանին անդ և այլևս նորատեսիլ կենդանիք, այլև գայլ. զոր աչօք իսկ տեսին Անգղիացիք. և ազգի ազգի թռչունք երկակենցաղք. և ցամաքայինք. որպէս թութակք երփներանգք, սարեակք, և աղաւնիք, որք երամովքն թռչին գեղեցիկք յոյժ
ունին 'ի գլուխս ցցունս մեծամեծս :

Տեսան և օձք մեծամեծք, և մանունք թիւնաւորք և անթոյնք, ոմ և ազգի ազգի մրջիւնք. յորոց ոմանք կանաչագոյն են, որք 'ի վր ծառոց շինեն զբոյն իւեանց սքանչելի ճարտարութբ, զոր անգղիացիք մանրակրկիտ գիտողութբ զննեալ, պատմեն թէ անհամար բազմութի մրջմանց միաբանեալ' ժողովեն 'ի միասին մեծամեծ տերևս իբրև թզաչափս, և զծայրս տերևոցն մածուցանեն առ միմեանս 'ի ձեռն մածուցիկ հիւթոյ ծորեալ 'ի մարմնոց իւրեանց, ապա զծայրս մածուցեալ տերևոցն ամփոփել ժողովեն և շինեն քառակուսաձև ողարկ, 'ի չափ փոքրիկ գլխոյ մանկան, զոր կախեն զծառոց. և մտեալ բնակեն 'ի նմա. իսկ անգղիացիք, որք կային 'ի ջնջնին 'ի գործել նց՟, ցրուեալ զնս՟ 'ի գործոյ անտի, տեսին զի տերեւքն ինքնին բացան լուրեանց առաձգական զօրութբ՟. յայնժամ մրջիւնքն թողեալ զգործ իւրեանց, յարձակեցան 'ի վր՟ նց՟, եւ խայթէին զնս՟ չարաչար, բայց խայթոց նց՟, թէպտ՟ սուր էր, իբրեւ զխայթոց մեղուէ, այլ ոչ էր թունաւոր, զի ցաւ նց՟ հազիւ առ վայրկեան մի տեւէր ։ Գտանի անդ եւ այլ տեսակ մի մրջմանց, որք բոլորովին սեաւ են, սոցա բնակութ՟ է 'ի մէջ ոստոց մասնաւոր իմն ծառոյ, զորս ինքեանք խոռոչեն, 'ի բաց հանեալ զմէջ նց՟. սակայն տակաւին ծառն արձակէ ծաղիկս եւ բերէ պտուղս ։

Եւ եթէ ոք խորտակեսցէ զմի յոստոց անտի խուռն բազմութ՟ մրջմանց յարձակին 'ի վր՟, եւ խայթեն անհընարին ։ Են անդ եւ այլատակ մրջիւնք, որք ճմ՟ իրօք նման են այնոցիկ, որք գտանին յարեւելեան հնդիկս ։ Սք՟ երկու բոյնս շինեն, մի՝ 'ի վր՟ ծառոց կախեալ զոստոց նց՟, որոց բոյնն գրեթէ եռապատիկ մեծ է ք՟ զգլուխ մարդոյ. շինեալ 'ի մանր խռոճոց մածուցիկ իմն հիւթով պնդապէս ը՟ միմեանս մածուցելոց. զոր խորտակեալ անգղիացւոց տեսին 'ի նմա անհամար խորշս, որք առհսրկ՟ հաղորդութ՟ ունէին ը՟ միմեանս. եւ բզմ՟ ծամածուռ շաւիղս, որք հանեն յայլ մրջմնարանս 'ի վր՟ նորին ծառոյ ։ Բաց յայսցանէ ունին եւ այլ ճնպհ՟ մի ծածկեալ կնիւնիւ, որ հասանէ մինչեւ ցգետին, ընդ որ 'ի ձմերայնի, եւ յանձրեւային ժմկս իջանեն յերկդ՟ բոյնն, որ է 'ի գետնի բրգաձեւ ցհինգ, կմ՟ ցվեց ոտնաչափ բարձրութ՟. արտաքին կողմանք նր՟ կաւապատ են իբրեւ երկու մատնաչափ թանձրութ՟. եւ 'ի ներքս են խորշք յոլովք, բայց չունին բնաւ անցս առ արտաքս, այլ մի միայն ստորերկրեայ ճնպհ՟, ընդ որ իջանեն 'ի խորս ցարմատն ծառոյն. եւ անտի ը՟ բուռն գողուղի ճնպհաւ ելանեն 'ի ծառ անդր 'ի բոյնս կախեալս զոստոց ծառոց՝ որք են իբրեւ ամարանոց նց՟ ։ Նոյնպս՟ եւ 'ի շրջակայ ծովս նր՟ գտանին պէսպէս տեսակք ձկանց, որք գլխովին անծանօթ են յծ՟ի մերում. եւ յաւազուտս անդ, եւ 'ի ծովեզերեայ ժայռս կանաչագոյն սատափ պատուճական, եւ ազգի ազգի ծովային խեցիք, այլեւ խեցգետին բզմ՟ յոյժ, եւ կոկորդիլոսք 'ի գետս, եւ յաղի լիճս ։

Բնակիչք այսր ծ՟ի երեւի թէ կարի սակաւ են առ համեմատութբ՟ լայնարձակ տարածութեան իւրոյ. վս՟ զի միանգամ եւեթ տեսին անդ անգղիացիք 30 ոգիս արս և կանայս 'ի միասին, առ պօտանեան ծոցով, որք ժողովեալ 'ի գլուխ ժայռի միոյ, ելին 'ի զննել նաւու անգղիացւոց եկեալ 'ի նորատեսիլ իմն, զի մինչև ցայնժամ չև էր նց̃ տեսեալ նաւս. և յորժամ կամեցան տալ պ̃զմ ը̃դէմ անգղիացւոց, հազիւ կարացին չորեքտասան, կմ̃ հնգետասան պատերազմական 'ի միասին ժողովել. և 'ի բովանդակ ծովեզերեայսն ն̃ց, ոչ տեսին զեօղս, ո̃պ և ոչ երկիր մշակեալ. ուստի թուէր թէ ամենևին անծանօթ է առ նս̃ երկրագործութիւն: Եւ թէպէտ անգղիացիք ոչ մտին 'ի ներքին կողմանս Ցին, սակայն իբր հաւաստի իմն է, թէ և անդ չի̃ք բնաւ երկրագործութիւն. զի թէ գոյր, հարկաւորապէս և 'ի ծովեզերեայսն ն̃ց ուրեք ուրեք երևէր. որում յայտնապէ̃ս զհետ գայ, թէ և բնակիչքն սակաւ են, զի առանց երկրագործութեան դժուարին իմն է բազմութեան մարդկան դարման գտանել: Այլ թէ առ ի՞նչ ոչ բազմանան անդէն մարդիկ, չէ ինչ հաւաստի, կմ̃ զի երկիրն ինքնին անզուարճալի է, և կմ̃ զի յարաժամ մարտ ը̃ միմեանս մղելով, կոտորեն զիրեարս, որով և սպառին.

Սոքա առ հ̃րկ բիրտ են և վայրենիք զկերպարանս ևեթ ունելով մարդոյ, իսկ բարուք գրեթէ ոչինչ ը̃հատ են 'ի վայրենի անասնոց. կին մարդ բաց 'ի սակաւուց ոմանց, և այն ևս 'ի հեռուստ, բնաւ ոչ տեսին անդ. իսկ արքն, զորս տեսին, ը̃ որոց և վարեցան փոքր մի իբր, 'ի բազումս միջահասակ են մարմնով, և կերպադրութիւն դիմաց նց̃ չէ այնչափ ինչ տգեղ. զի չէին ձառագէմ, թանձրաշուրթն, և տափակունչ, ը̃ եթովպացւոց. այլ հ̃րկ ըստ ազանց այլոց Ցաց. ձայն նց̃ քաղցր է, և կանացական. այլ իսկական գոյն մարմնոյ նց̃ անծանօթ է. զի յոտից մինչև ցգլուխս ծածկեալ են տղմով և աղտեղութ̃. և թէպէտ բզ̃մս աշխատ եղեն անգղիացիք քերելով և լուանալով զտիղմն և զաղտեղութիւնս դէթ 'ի մասնէ ինչ մարմնոյ նց̃ 'ի տեսանել զբուն գոյն նց̃, այլ ոչ կարացին. այսչափ ինչ ասեն, թէ սաստիկ սևութին այն, որ երևի 'ի նս̃, թուէր լինել յաղտեղութ̃ց անտի զնոքօք մածելոյ. իսկ բուն գոյն նց̃ թուէր դեղնախառն թուխ: Հերք գլխոյ նոցա ո̃պ և մօրուացն սեաւ են, թաւ և երկայն իւղային, և աղտեղի, և թէպէտ ոչ օծանեն ոչ իւղով և ոչ ճարպով, սակայն 'ի վ̃ր այսր ամ̃ի չիք ոջիլ 'ի նս̃. և սակաւ փոքրեն զհերս. ոչ եթէ հատանելով, զի չիք առ նս̃ մկրատ, այլ այրելով: Բոլորովին մերկ շրջին. այլ աղտեղութիւն և տիղմն

թանձ

Թանձրամած իբրեւ պատեան իմն մածեալ զմարմնով, է ն՟ց փեկ հանդերձից, որով և երեւին իբրեւ խեցեմորթ կենդանի. զոր 'ի պէսպէս երանգս ներկեն. զթիկունս, և զլանջս 'ի մթագոյն կարմիր, բացագոյն կարմիր նիշս 'ի վ՟ր արկեալ. իսկ զբազուկս, և զսրունս, և զայլ անդամս 'ի գոյն սպիտակ գունագոյն շերտս 'ի վ՟ր նկարեալ:

Գլխաւոր զարդ ն՟ց է ոսկր ինչ անցուցեալ խաչաձեւ ը՟ միջին աճառ ըռընգաց, որ անջրպետէ զռունգս 'ի միմեանց, երկայն իբրեւ 6 կամ 7 մատնաչափ. և ըստ օճար, ը՟ ստուարութ՟ մատին. որով դէմք ն՟ց ծիծաղական իմն երեւի: Բաց 'ի բարբարոսական զարդուստի, կրեն 'ի պարանոցս երկկարգեան, կամ երեքկարգեան մանեակս 'ի ծովային խեցեաց. ո՟չ և 'ի բազուկս ապարանջանս 'ի նոյն խեցեաց. և առ ընտանեօք պարան հիւսեալ 'ի վարսից մարդոյ: Եւ զայս զարդ խուրեանց այնչափ մեծ համարին, զոր ը՟ ոչինչ իրաց փոխանակեն: Լեզու ն՟ց օտար է գլխովին 'ի լեզուաց մերուման Ծի, բայց հն՟րկ 'ի կողմանս յայնոսիկ, որ խժդժական իմն է, կոկորդալիր, և անախորժ լսելեաց. յորում առաւել են ձայնաւոր հնչմունք, ք՟ զբաղաձայնս. անգղիացիք բ՟զմ բառս 'ի լեզուէ ն՟ց գրեալ բերին յեւրոպիա, իբրեւ զնոր ինչ, և նշանաւոր:

Չիք ամենեւին առ ն՟ս ծանօթութի՟ կրօնականութ՟, կամ առեւտրութ՟. և թէպէտ բ՟զմս ջանահնար եղեն անգղիացիք առեւտրութիւնս ինչ առնել ը՟ ն՟ս, այլ ոչ կարացին 'ի գլուխ տանել. զի զորինչ առաջի առնէին ն՟ց, առնուին համարձակ, այլ ինքեանք ոչ տային ինչ ն՟ց փոխարէն. այն զի՝ ամ՟ վաճառք, կամ ձեռակերտք եւրոպացւոց առ ոչինչ են համարեալ յաչս ն՟ց. զի առ բրտութ՟ ոչ իմանան զյարգ ն՟ց. և պարգեւքն, զորս ետուն ն՟ց անգղիացիք, գտան ընկեցեալ յանտառս, իբր առ ոչինչ պիտանացու:

Սք՟ չունին բնաւ աւանս, կամ գեօղս հաստատունս, այլ թափառին ը՟ համատարած Ծ՟ խարեանց. և եթէ դէպ լինի ուրեք առ փոքր մի երկար զետեղի առնուսակս լառուէ տեղւոյն, շինեն չնչին մանր խրճիթս յոստոց ծառոց, զորս ծածկեն տերեւովք արմաւենեաց և կեղեւօք ծառոց. և ննջեն 'ի նս՟ 'ի գիշերի ը՟ օրինակի շանց կծկելով յիւրաքանչիւր խրճիթս. հազիւ երեք, կամ չորս անձինք կարեն զայս օրինակ ննջել: Եւ եթէ ուրեք գտնիցի մի, կամ երկուս ունիցին միայ, ոչ լինին խրճիթս, այլ ը՟ ծառովք, կամ 'ի մէջ խոտոց ննջեն:

նոցին : Այլ կարասիք տանց նոցա, է կուժ մի 'ի կեղեւոյ ծառոց . և պարկ հիւսեալ ընդ օրինակի ուռկանաց մերոց, զոր բարձեալ կրեն յուս իւրեանց . յորս են կտորակք ինչ խեժոյ 'ի պէտս ներկելոյ զմարմին իւրեանց . և կարթ, կամ ծովային խեցի յորմէ շինեն կարթս մեծամեծս և մանուանս յոյժ սքանչելի ճարտարութեամբ, այլև սուսերս կամ գլուխս նիզակաց . այս են որպէս փարթամութիւնք, գանձք և զէնք նոցա :

Կերակուր նոցա է ձուկն, զոր որսան խեցեղէն կարթիւ կամ ձեռօք ըմբռնեն 'ի մէջ քարանց, կամ 'ի ծովափնեայ աւազուտս, զի չունին ուռկանս . և կրիայ, որ կարի ախորժական է նոցա . ուստի տեսեալ նոցա 'ի նաւս անգղիացւոց կրիայս մեծամեծս, խնդրեցին 'ի նոցանէ, և 'ի չտալն կամեցան բռնի առնուլ : Յայս նուագ եթէ ցուցին նոքա զարութիւն իւրեանց և զքաջութիւն ընդ բովանդակ ժամն, յորս եղեն առ նոսա անգղիացիք : Ուտեն և վայրի պտուղս, զի ոչ դարմանեն ընտանի ծառս պտղաբերս . երբեմն ևս քարամբք, կամ նիզակաւ որսան և թռչունս, և չորքոտանիս, որպէս և զգանկուռ անուանեալ շունն, զորս խորովեալ 'ի վերայ կայծականց, կամ 'ի մէջ ջեռուցեալ քարանց՝ ուտեն . զի հում միս ոչ ուտեն ըստ այլոց ոմանց գազանաբարոյ ազգաց : Սոքա արտադրեն զհուր, ոչ որպէս մեք 'ի ձեռն գայլախազ քարի, և հրահան երկաթոյ . այլ առեալ ցուպ փոքրիկ, և զմի ծայր նորա պնդապէս յեցուցեալ 'ի վերայ չոր տափարակ փայտի, արագ արագ պտտեցանեն երկոքումբք ձեռօք, և ահա զկնի միոյ, կամ երկուց րոպէից սկսանի ծխել փայտն, և վառիլ : Տեսին երբեմն անգղիացիք, զի մի ոմն 'ի նոցանէ ընթանայր առ ափն ծովու, և ուրեք ուրեք երբեմն 50, կամ 100 . գրկաչափ հեռաւորութեամբ առ վայր մի զկայ առնոյր, և ապա վերստին շարունակէր զընթացսն . և ահա առժամայն սկսանէր 'ի տեղւոջէ անտի, ուր զկայ առնոյր՝ ծուխ ելանել և հուր բորբոքիլ 'ի չորացեալ խոտս : Այլ թէ զիարդ արտադրէր նա զայն հուր, ոչ կարացին հասու լինել, զի ոչ տեսին ինչ 'ի ձեռս նորա :

Իսկ զէնք նոցա են նիզակք այլ և այլ ձեւով . 'ի հարաւային կողմանս վարեն նիզակս գործելոյ յոսկերաց քառաժանիս սրածայրս, զորս և օծանեն խեժիւ, որպէս զի առաւել ողորկ լիցին, և լաւ ևս մխեսցին ընդ մարմին : Իսկ 'ի հիւսիսային կողմանս են միաժանի սրածայր : Փայտ նորա, կամ մակոյկ, է ազգ մի եղեգան, և բուն բուսոց ինչ . որք նման են կնիւնոյ . հաստապինդ հիւսեալ ընդ միմեանս . երկայն ոտն, և մինչցչորեքտասան ոտնաչափ. և 'ի մեղեխս անդր մխեն և սայրասուր սլաքս 'ի կարծրակուռ փայտէ, կամ յոսկերաց ձկանց. և կամ բեկորս խեցեաց. և զբոլոր մեղեխն օծանեն խեժիւ. որ և լինի իբրև քուք, կամ մահաբեր փշալից. որոյ խոցուածք գրեթէ անբուժելի են. զի պատառատէ զմարմինն, և թողու 'ի վէրսն բեկորս խեցեաց, կամ ոսկերաց: Զայս ազգ նիզակաց տան, կամ քսան գրկաչափ հեռի միով ձեռամբ ընկենուն. իսկ եթէ կամիցին հեռագոյն ուրեք ընկենուլ, որպէս 'ի հարկանել զմարդ, կամ զորս, բաղխար 'ի գործ ածեն, որով արագագոյն, և ուղղագոյն հասուցանեն զայն 'ի յառաջագիր նպատակ անդր, քան առ մեզ զգնտակս հրազինաց: Բայց 'ի զինուց աստի ունին և վահան ձեռաձև 'ի կարծրակուռ կեղևոյ ծառոց, զորս վարեն 'ի պաշտպանութեան անձանց: Նոյնպէս և նաւակք նոցա են կրկնատեսակ. 'ի հարաւային կողմանս լինին 'ի կեղևոյ ծառոց իբրև 12 ոտնաչափ երկայն. զորոյ զերկուսին ծայրսն կապեն. և 'ի մէջն հաստատեն փայտեայ փոքրիկ շրջանակս. այն է՝ չէմպէր, առ 'ի լայնաբաց մնալ միջին մասին նաւակին. որ հազիւ տանի զերիս անձինս: Իսկ նաւակք բնակչաց հիւսիսային կողմանց են 'ի կոճղաց ծառոց գըլխովին անհարթ, և անձև. փորեալ և խոռոչացեալ. որպէս թուի 'ի ձեռն հրոյ: Բայց զարմանք մեծ այս են, թէ զիարդ հատանեն նոքա զծառս, քանզի չունին ոչ տապարս, և ոչ այլ ինչ երկաթեղէն գործիս. այլ միայն տապարաձև, և սղոցաձև գործիս ինչ 'ի քարէ և 'ի ծովային խեցեաց. և սակայն 'ի ձեռն աշխատութեան և անսահման երկայնմտութեան գործեն զայնպիսի ինչ, որում անհնարին երևի լինել առանց երկաթի գործեաց:

Չիք յայսմ Ծի, որպէս և վերագոյնդ նշանակեցաք քաղաք, կամ աւան, և կամ այլ ինչ նշանաւոր տեղի, բայց միայն բարձրաւանդակ գլուխք ինչ, և ծոցք, յորոց զոմանս յայսմ վայրի նշանակեսցուք:

Հէնր: Այս գլուխ 'ի հարաւային ծայր անդր Նոր Կալլէսի. յայս անուն անուանեալ 'ի դուդայ նաւապետէն անգղիացւոց յանուն փոխանորդի իւրոյ, որ կոչէր Հէնրի. զի նա զառաջինն ետես զայս տեղի: 'Ի հարաւակողմն Նոր Կալլէսի անդր քան զայս գլուխ ոչ երևեցաւ այլ ցամաք. թէպէտ պարզ էր օդն:

Բոմնէյապ, կամ Գլուխ Խոյոյ: Այս գլուխ, կամ ծայր 'ի հիւսիսակողմն. յայս անուն կոչեցեալ, վասն զի է գմբեթաձև.

թաձև · և նման է բամպէատայ · որ է առ մուտս նաւահանգստին փլխմութայ :

Գուլուխ հոչէայ : Է բարձրաւանդակ 'ի հարաւոյ արեւելից նախընթաց գլխոյն, առ որով կայ փոքրիկ կղզի · և 'ի յետ կուսէ կղզւոյն երեւին բոլորաձև բըլուրք ինչ, 'ի մէջ որոց որոշակի երեւի գլուխն :

Տրօնթատօրէան լեառն : Է լեառն բարձր յոյժ որ ձգի մինչև ցծովն, ուր ձևացուցանէ զգլուխ, որ աւարտի 'ի ժայռ սրածայր :

Փէնկէնհասօ, կմ Փօլօմպէէր : Է լեառն սեպացեալ մերձ 'ի գլուխն Լիփիլիկոայ 'ի հիւսիսակողմն · գագաթն նր տափարակ · շրջապատեալ ապառաժ ժայռիւք, և առ ստորոտովն ծառք մեծամեծք շուրջանակի :

Գուլուխ Գէորգէայ : Է գլուխ, զոր յայս անուն կոչեաց նա ինքն նաւապետն գուք, երբ զի յաւուր տօնի սրբոյն գէորգեայ եհաս անդր : 'Ի հիւսիսայինն կողմն սորին գլխոյ է ծոց մի, զոր անգղիացիք կոչեն Լօնկ նօզէ · այ Երկայնունչ : Եւթն մղոնաւ հեռի 'ի տեղւոջէ աստի է միւս ևս գլուխ կոչեցեալ Ռօզ ֆոյնթ · այ՝ Կարմիր ծայր, կմ գլուխ · առ որով է լեառն, որ բերէ զնմանութիւն արտախուրակի Ֆռանկաց, այն է շափքայի

Պօզանեան ծոց : Է ծոց ընդարձակ, և յաջողակ ընդ 34 աստիճանաւ հարաւային լայնութեան, առ որով են անտառք մեծամեծ ծառոց · որք ոչինչ ընդհատ են 'ի մերոց կաղնեաց · յորոց հոսի խէժ կարմրաժեռ նման խէժին, որ կոչի արիւն վիշապի : Փայտ սոցին ծառոց ծանր են կարծր և սևագոյն : Է անդ միւս ևս տեսակ ծառոյ, որ նման է կաղնեայն ամերիկոյ · և յանտառսն անդ լի են ազգի ազգի գեղեցիկ թըռչունք, մանաւանդ թութակք : 'Ի վր միոյ 'ի մեծագոյն ծառոց անտի փորագրեալ գրեցին անգղիացիք զանուն նաւուն իւրեանց, որ կոչէր էնտէվօր · և ըզթուականն և զօրն յորում հասին 'ի ծոց անդր :

Ծոց ուօզարփայ, կմ պօսօթարփայ : Է նեղանձուկ պատռուակաւն, որ գնայ աւարտի 'ի լիճ մեծ, որ հաղորդութի ունի ընդ ծովու միջնորդութբ փոքրիկ նեղուցի : Շրջակայ երկիր սորին ծոցոյ, չոր է և աւազուտ ուստի և անբեր · բայց 'ի բլուրս նր բուսանին ծառք ցրիւ, որք ոչ գործեն անտառս : Գտանին անդ և ծառք, որք բերեն խէժս, են որք՝ կարմրագոյն, և են՝ որք դեղնագոյն, բայց սակաւ : Եւ ծոցն բերէ ձուկն առատ · և ազգի ազգի խեցեմորթս · ոստրէ և սատափ մարգարտաբեր, բայց սակաւ և մանր :

Գուլուխ

Գլուխ Տաունշէնտայ : Է բարձրաւանդակ ցամաք ընդ 22 աստիճանաւ, և 15 րոպէիւ լայնութեան · որ ունի պատշաճական ծոցս և նաւահանգիստս : Մերձ յայս գըլուխ գտանին կղզիք ինչ 'ի ծովու 'ի դիրս և 'ի բարձրութ աննման միմեանց · զորս անգղիացիք կոչեցին Նօրթըմպէրլանտ · որք և անտառաւալից են, այլ ջուր քաղցր չիք 'ի նմ : Ասեն 'ի նմ պիծակք, Թիթռունք, և իշամեղուք մեծամեծք :

Ընտէվըր : Նաւահանգիստ և գլխաւոր գետ Նոր կալլէսի, ուր Գուգ նաւապետն նորոգեաց զնաւ իւր · որ ժամս իբրև 23 նստաւ 'ի ցամաքի 'ի ծով անդր, ուր բուսեալ կային բուսք · այն է՝ մարջան : Շըրջակայ երկիր նր գեղեցիկ է, և զուարճալի, ունելով բլուրս և հովիտս դալարագեղս և անտառս և խոտս · Թէպէտ դաշտք նր ուրեք ուրեք կաւուտ են և աւազուտ : Գլխաւոր բերք նր, զոր տեսին անգղիացիք են ազգի ազգի Թռչունք, և գանգուռու, կմ օպօսօն անուանեալ կենդանին, որ նման է շան կմ գայլոյ · զոր և վերագոյնդ յիշատակեցաք · և ազգ մի կաղամբոյ, և խէժ · ևն :

Գլուխ Եօրքայ : Է 'ի հիւսիսային ծայր Նոր կալլէսի ի 10 աստ՟ · և 37 րոպ՟ · հարաւային լայնութ : Երկիրն որ առ նովաւ յարևելեան, և 'ի հարաւային կողմանս ցած է, դաշտային և անբեր : Իսկ 'ի հիւսիսայինս լեռնային, և ձորքն անտառաւալից : Մերձ յարևելեան ծայր սորին գլխոյ են երեք փոքրիկ կղզիք : Միւս ևս փոքրիկ կղզի կայ 'ի հիւսիսային կողմն : Ընդ մէջ այսց կղզեաց, և Եօրկայ գլխոյն է նեղուց, կոչեցեալ Ընտէվըր · որ երկայնեալ ձգի և 'ի մէջ ցամաքին և կղզեաց իշխանին կալլէսի, մինչև ցՎալլիս փոքրիկ կղզին :

Գտանին անդ և այլ գլուխք, ծոցք, և կղզիք, որք կոչին Նաւահանգիստ Ճաքսոնայ · Ծոց Բօթանըքայ · Սթէֆաննոս · Գլուխ Հաւքէայ · Գլուխ Սմօքէայ · Մօռըթօն · Լուքաութ · Ծոց Հըրվէայ Հըղղայ · Գլուխ այծեղջեր · Գէփփէլ · Հիլլսպօռօի · Գլուխ Գրէֆթօնայ · Գլուխ Թրիպիւլէռայ · Գրէնվիլլէնտ · Կղզի Լիզարտի · Կղզի արծուոյ · ևն :

Երկիր Տիէմէնայ :

Երկիրն անուանեալ տիէմէն, կմ ըն գաղղիացի Ծագրաց Տէկէ · է 'ի հարաւակողմն Նորոյ Ծին հարաւային ասիոյ · ուր յեւրոպացւոց՝ զառաջինն եհաս Աբէլ Թասման 'ի 1642 · և կոչեաց զնա տիէմէն 'ի պատիւ անտոնի տիէմէն սպարապետի ընկերութե հոլանտացւոց վաճառականաց յարևելեան հնդիկս · Թէպէտ ոմանք ասեն թէ 'ի նոյն իսկ անտոնէ գըտաւ, և 'ի նմանէ կոչեցաւ տիէմէն: Այլ զիարդ և իցէ, այս յայտնի է, զի աբէլ յանունն Թասման գերահռչակ նաւաստի որ եգիտ զհիւսիսային գլուխն նոր զէլանտայի, որ և մինչև ցայսօր յանուն նր կոչի, եգիտ և զհարաւային կողմն այսր Ծի 'ի 1642 'ի նոյեմբերի 24: Որ ըստ գրելոյ նր, է ընդ 42 աստիճանաւ, և 25 բոպէիւ լայնութե: Յառաջնում աւուր դեկտեմբերի եմուտ 'ի ծոց մի, զոր և անուանեաց Փրետէրիկ Հէնրիկ: Եւ ետես անդ 'ի ծովեզերեայ կողմանս ծառս մեծամեծս և ստուարս յոյժ · յորոց ոմանց տրամագիծն էր երկու կանգուն և կէս · և բուն նց մինչև ցտեղին ուր ճղանին ոստքն՝ 60, կմ 65 ոտնաչափ բարձրութե · յորս և հատեալ կային աստիճանք առ 'ի դիւրաւ ելանել 'ի նս: Նա ոչ ետես 'ի ծովեզերեայս անդ բնակիչս, ոչ և ոչ անասունս · բայց 'ի բզմ նշանաց, զորս ետես անդ, համարի թէ եղեն անդ բնակիչք, գուցէ և այժմ գտանիցին 'ի խորին կողմանս: Այլ ինչ բերս ոչ ետես անդէն, բայց միայն ծառս ինչ, որք բերին խէժս կարմրաժեռս, զոր նա ինքն Թասման կոչեաց խէժ կարմրաժեռ · ըստ խոսալացւոց կոմմա լաքքա:

Երկիր Նիւցայ:

Երկիրն անուանեալ Նիւց ձգի 'ի հարաւային ծովեզերեայս նոր հոլանտայի, կմ նոր Ծին հարաւային ափոյ: Զայս Ծ եգիտ պետրոս Նիւց յամսեանն դեկտեմբերի, և յունվարի 'ի 1627 · զոր և յիւր անուն անուանեաց · զորմէ կարի սակաւ ծանօթութի ունին Ծագիրք · բայց ընդարձակ տարածի · և գրեթէ զկեդրոնն, կմ զմէջն գրաւեալ ունի այսր նորոյ Ծի · ընդ մէջ տիէմէնայ յարևելից, և լէօնէ յարևմտից:

Յարևմտեան ծովեզերեայս այսր նորոյ Ծի են այլ և երկիրք գտեալք յայլ և յայլ ժամս, յայլ և յայլ նաւորդաց 'ի զանազան ազգաց · և են այք:

Լէօն · Էտէլս · Էնտրախտ · և Վիթ: Լէօն է 'ի հարաւային ծայրն այսր Ծի յարևմտեան կողմն · զոր գըտին 'ի 1622 · որ և ժամանակակից է էտէլայ, որ գըտաւ 'ի 1619 'ի յովհաննու Էտէլայ, զոր և յիւր անուն կոչեաց ։ Ընդարձակ է յարեւմտեան ծագ այսր աշխարհի, սահմանակից Վիթայ 'ի հիւսիսոյ, որ գըտաւ 'ի 1628 ։

Նոյնպէս և 'ի հիւսիսային ծովեզերեայս գտան երեք այս աշխարհք . զի՝ Գարբենդարիա . Տիեմէն . և Առնհայմ . Գարբէնդարիա, 'ի հոլանտացւոց Գարբէնդէր լանտ անուանեալ, զի՝ երկիր գարբենդերայ, գրաւեալ ունի զհիւսիսային կողմն Նոր Հոլանտայի, կամ աշխարհին հարաւային Ասիոյ ։ Յայս անուն կոչեցաւ 'ի գարբենդերայ նաւապետէ հոլանտացւոց, որ եգիտ զնա . որ և ունի բազում մանր գետս . յորոց գլխաւորքն են Կոյէն . Նասաու . Գարօն . Տիէմէն . և Միթուլդ ։ Եւ ունի եւս սահմանակից յարեւելից զՆոր Վալլէս հարաւային . իսկ յարեւմտից զԱռնհայմ . և զՏիեմէն, որք գտան 'ի 1618 ։ Երկու յետինքս ձգեն տարածին ընդ հիւսիս ։

Նոր Գուինէա ։

Թէպէտ բազում ժամանակք են յորմէհետէ գտին եւրոպացիք զՆոր Գուինէայն . սակայն մարթ է իրաւամբք դասել և զսա 'ի կարգ նորագիւտ աշխարհաց . վասն զի յոչընչ գրեթէ բաց յանուանէ նորա այլ ինչ ոչ գիտէին զնմանէ ։ Զի ոչ ցուցանին նախնիք պատմութիւնք, չէր ինչ յայտնի թէ Նոր Գուինէայն արդեօք կղզի է, եթէ կցեալ ընդ ցամաք հարաւային երկրի . և ընդ մէջ 2 . և 9 աստիճանաց հարաւային լայնութեան ։ Ոմանք յաշխարհագրաց անխտիր կոչէին զնա և երկիր պապուաց, յանուն բնակչաց նորա ։ Եւ համարէին թէ ընդ հիւսիսակողմն առ սակաւ սակաւ անձկանայ . և յարեւելեան հարաւակողմն տարածեալ ընդլայնի ։ Այլ մի ոմն 'ի քաջավարժ Նոր աշխարհագրաց յայտնապէս բաժանէ զերկիրն պապուաց, 'ի Նոր Գուինէայէ . և առնէ զնոսա երկու այլ և այլ աշխարհս ։ Ըստ նորա Նոր Գուինէայն գտաւ 'ի 1527 յալվարոսէ սաւէդրայ, որ և կոչեաց զնա Նոր Գուինէա, կարծելով թէ ուղղակի անկանի հանդէպ Գուինէայի Ափրիկոյ . բայց յոյժ մեծապէս վրիպեցաւ ։ Եւ այլ ոմն նաւապետ անուանեալ անտոն օրդանեկեան ծանեաւ զայս աշխարհ 'ի 1528 . բայց հարևանցի եւեթ քերելով առ նովաւ, որպէս և նախադրեալ սաւեդրայն ։ Զկնի որոյ բազում անգամ 'ի բազում տեղիս այսր աշխարհի հասին հոլանտացիք .

բայց ինչ ոչ գրեցին վն նր . յօգուտ Ծասքրուն, վն զի առ անյագ շահախնդրութեան և նախանձու, որով պահպանեն զկալուածս իւրեանց, որք մերձ են յարևելեան Հնդիկս, յորոց եղանեն մեծագին և սպառական համեմք, ջանան ամ հնարիւք ծածկել յայլոց ազգաց, զայն ամ որ կարէր զարթուցանել զնս, և յորդորել 'ի յաճախել 'ի կողմանս յայնոսիկ. ուստի և մինչև ց1769 եկաց մնաց Ծս այս անծանօթ, յորում ամի եհաս անդր գերահռչակն Գուք անգղիացի. բայց և նա սակաւ ծանօթութիւն կալաւ զնմանէ, զոր որպէս և իցէ կարևոր համարիմք յայսմ վայրի նշանակել:

Արդ՝ սա 'ի Նոր Հարաւային Կալլեսէ ճնպրհորդէր ըդ հիւսիս, ուղղեաց զընթացս իւր 'ի Նոր Կուինէայն. և 'ի ճնպհին ետես զկղզին սբյն Բարթուղիմէոսի, որ և կոչի Վըլհէրմօյսէն. որ փոքր է և ցած իբրև 3 մղոնաւ հեռի 'ի մէջերկրէն. և է ընդ 8 աստիճանաւ և 13 րոպէիւ հարաւային լայնութե: Ապա շարունակեաց զընթացս իւր ըդ հիւսիս, և հասեալ 'ի տեղի ինչ, ուստի հազիւ կարէր նշմարել զցամաքն Նոր Կուինէայի, եթող անդէն զնաւն, զի ոչ կարէր նաւու մերձենալ 'ի ցամաք անդր սակս նուաղութե ջուրցն. և ինքն Գուք հանդերձ մետասան արամբք քաջ զինու վառելովք մտեալ 'ի կուր նաւուն, ելին 'ի ցամաք. և տեսին յաւազուտս անդ յափն ծովուն նոր հետս մարդկան. յորմէ գուշակեցին, թէ յանտառն անդ, որք իբրև 50 քայլ հեռի էին 'ի ծովեզրէ, իցեն վայրենի մարդիկ. և փոքր մի յառաջ գնացեալ, հասին 'ի փոքրիկ անտառ որոյ ծառք գրեթէ առհրկ պտղաբեր էին, և տեսին անդ աղբիւր, յորմէ ջուր աղի բղխէր. և մերձ առ նովաւ խրճիթ տերևովք ծառոց ծածկեալ, և առ նովաւ բզմ կեղևս պտղոց, յորոց ոմանք թուէին նորոգ կորզեալ 'ի ծառոց: Ապա և եւս յառջ գնացեալ, տեսին 'ի բացուստ, զի եկին յանտառէ անտի արք երեք վայրենիք, որք ձայն բարձեալ գոչէին ուժգին. և դիմեալ գային 'ի վր նց. և մին 'ի նցէ, որ յառջագոյնն էր, ընկեց յանդիմանս զինեթ ինչ, որոյ անկեալ յերկիր, վառէր իբրև վառօդ. այլ շառաչիւն ինչ ոչ արձակեաց. իսկ երկուքն ընկենուին նիզակս փայտակերտս երկժանիս: Իսկ անգղիացիքն առ 'ի նահանջել զյանդգնութն դիմեցուին նց, արձակեցին 'ի վր նց միանգամ հրացանս գնդակաւորս. յորմէ երկուցեալ նք, առ վայր մի զկայ առին. սակայն վերստին սկսան դիմել 'ի վր ուստի և անգղիացիք միւսանգամ արձակեցին հրացանս ․ զոր տեսեալ վայրենեացն, խոյս ետուն յանտառսն ։ Իսկ անգղիացիք որոց չէին կամք տիրել երկրին ․ միանգամայն երկուցեալ թէ գուցէ բազմուի վայրենիք մարդկան հասեալ 'ի վ՟ր, չարիս ինչ հասուսցեն նց՟, դարձան անդէն 'ի նաւակ իւրեանց ․ և զկնի սակաւուց ահա հասին մերձ 'ի ծովեզրն անդ արք իբրև 60 ․ որք թուէր թէ կամէին տալ պտ՟զմ ընդդէմ անգղիացւոց ․ իսկ անգղիացիք մեղմով իմն վարէին զկուր իւրեանց առ ցամաքաւ առ 'ի քաջ զննել զնս՟ ․ առ ոչինչ համարելով զդաղանակն գոչիւն նց՟ և զհուրն, զոր ընկենուին 'ի վ՟ր ․ ապա իբրև ըստ բաւականին զննեցին զնս՟, արձակեցին 'ի վ՟ր նց՟ հրացանս գնտակալիցս, յորոց երկուցեալ, դարձան անդրէն յանտառս իւրեանց ։

Արդ՝ ըստ պատմելոյ անգղիացւոց, սք՟ կարի նմանեն բնակչաց Նոր Հարաւային կաղէտնի ․ միջահասակ են մարմնով, գրեթէ ոչ՟ զնս՟ ․ հերք նց՟ կարճ ․ բոլորովին մերկ շրջին ․ բայց գոյն մարմնոյ նց՟ չէ այնչափ ինչ սեաւ ․ գուցէ զի չեն սք՟ այնպէս աղտեղի ։ Իսկ զէնք նց՟, զոր ընկեցին 'ի վ՟ր անգղիացւոց էր դիւրավառ նիւթ ինչ, զոր վերագոյնդ յիշատակեցաք, և նետք փայտաշէնք ։ Իսկ վայրն, ուր զկայեաց նաւն անգղիացւոց, և եղին 'ի ցամաք, է ըստ 6 աստիճանաւ, և 15 րոպէիւ հարաւային լայնութ ․ իբրև 195 մղոնաւ հեռի 'ի Նուէնգուսէն սբյն Օգոստինոսէ, կմ՟ գլխոյն փոլքեայ, որ մերձ է յայն աշխի ․ որ յ[illegible] կոչի Գլուխ [illegible] Սէյն Բօնավէնտուրայի ։

Արդ՝ այժմ ճշգրտեալ ստուգեցաւ, եթէ Նոր կուինեայն է կատարեալ կղզի, որ ձգի ըստ երկայն յարևելից յարևմուտս իբրև 700 մղոնս ․ իսկ ըստ լայնութե 150 մղոն ։ Յարևմտից բաժանի 'ի Գիլոլօ կղզւոյն փոքր նեղուցաւ ․ իսկ 'ի հարաւոյ անջատի 'ի Նոր Հոլլանտէ 'ի ձեռն նեղուցին, զոր 'ի վերջին Յակս եգիտ մեծն Դամպ ․ որ և կոչի [illegible], լայն իբրև 150 մղոն ։ Բայց լի են 'ի նմա մանր կղզիք ․ ուստի և կարի դըժուարին է նաւել ըստ այն ։

Արևելեան ծովեզերեայ կողմանք Նոր Կուինեայի չևևս են լիով ծանուցեալ, բայց այս հաւաստի է, թէ յայնմ կողման ունի ևս սահման զարշելագեղագոյն լռվիստոյ, զոր 'ի 1700 եգիտ պուկէնվիլլ ․ որ և յայս անուն կոչեաց զնա ։ Իսկ Նոր Բրիտանիայն անջատի 'ի Մեծ կղզւոյ աստի 'ի ձեռն նեղուցին, որ կոչի Անոյտ Դամփիէրայ : Այս կղզի է ի մէջ 12 աստիճանի հարաւային լայնութե, և հնրկածին, ուստի և է ի մէջ այրեցած գօտւոյ : Ոմանք յԱշխարհագրաց համարին թէ բաղմամարդ լիցի · և երկիր նորա արգաւանդ, բայց այս չէ ինչ ստոյգ : Գտանի անդ բերանք քանի մի գետոց, յորոց գլխաւորքն են բերանքն անուանեալք կասսանայ · և սբյն օգոստինոսի : Նւհնգիստք · և ծոցք նր̃, որք ծանուցեալ են Աշխարհագրաց, են սոքա · Աւգուստա · Սբ յակոբ · Սբ անդրէաս · Սբ հերոնիմոս · Սբ նիկողայոս · և Ֆրուանտ տրինէն մէրոյ : Ունի և քանի մի գլուխս · յորս նշանաւորքն են Սաւէտա · և Վալէ :

Նոր Բրիտանիա ·

Նոր բրիտանիայն է մի յԱշխարհաց անտի զորս Նորոգ գտին անգղիացի նաւաստիք, որ թէպէտ յառաջ ևս ծանուցեալ էր, բ՝ 'ի 1700 'ի տամփիերայ · այլ կարծի ի աղօտ, ուր ցուցանէին այնր ժմկի Աշխարհացոյցք, որք երբեմ մի միայն կղզի սուտերագրէին զնոր բրիտանիայն · որ է յայտնի վրիպակ · զի ոչ է սա մի միայն կղզի, այլ բա̃մ կղզիք մօտաւորք միմեանց : Նոյնպէս և այլ ծանօթութիւնք, զոր 'ի տամփիերայ առեալ գրեցին վս̃ նոր բրիտանիոյ, ոչ համաձայնեն վերջին ստուգագոյն ծանօթութեանց գարդերեգայ, որ լաւ ևս զննեաց զերկիրն :

Քանզի գարդերեգ երբեմն նաւապետ անգղիացի, ճնպհ արարեալ ի ծովն հարաւային, և հանդիպեալ անդ բա̃մ կղզեաց, ի որս և կղզեացն գլխոյ քարլօթթա կոչեցելոյ, 'ի հողմոց և յընթացից ջուրց վարեցաւ 'ի ծոց մի խորին, զոր տամփիեր կոչեաց Ծոց սէյն գէորգէայ · որ է ի մէջ գլխոյն սէյն գէորգէայ, և գլխոյն օրփորտայ : Եւ քզի անհնարին էր նմա ի մի, կմ̃ ի միւս գլուխն ելանել, ստիպեցաւ ուղղել զընթացս իւր ի արևելեան կողմն այնր ծոցոյ, ընդ հետ գնալով ընթացից ջուրցն : Եւ ետես զի այն նեղուց բաժանեալ էր յերկուս՝ 'ի ձեռն մեծ ինչ կղզւոյ, զոր և կոչեաց Դուքս Եօրքայ · և այլոց փոքր կղզեաց որք շուրջ զնովաւ · բայց զանուանդ նոր բրիտանիա զոր տամփիեր եդ այսմ երկրի, ոչ փոխեաց · այլ փոյթ կալաւ լաւ ևս քան զնա զննել զհանգամանս երկրին :

Արդ՝ սա ստուգեաց, եթէ նոր բրիտանիայն, ոչ է մի միայն կղզի, այլ բա̃մ կղզիք մօտաւորք միմեանց ·

բաղ

բազմամարդք և արգաւանդք . որք և անկանին ընդ մէջ եօթներորդ աստիճանի հարաւային լայնութեան և հասարակածին :

՚Ի հիւսիսակողմն չիք այլ ևս կղզի մերձաւոր ոք , դէթ որչափ ինչ ծանուցեալ է այժմ : Յարևմտեան կողմն գտանին մանր կղզիք ինչ հուպ Նոր կուինէայի . իսկ ՚ի հարաւակողմն հազիւ անջատին ՚ի Նոր կուինէայէ ունելով ՚ի միջի զանձուկ հունն , կմ̃ զնեղուցն տամբիերայ :

՚Ի հարաւային եզերս մեծագոյն կղզւոյն՝ յերկուց կղզեաց անտի , որք անջրպետեալ ՚ի միջի ունին զնեղուցն , գտանի երկիր բարձրաւանդակ , և երեք մեծամեծ լերինք հպաւորք միմեանց . յորոց զբարձրագոյնն անգղիացիք կոչեցին Մայր . և զերկուսն Դօթըրս . յայնկոյս մեծագոյն լերին տեսին , զի ելանէր ծուխ սպիտակ ամբարձեալ , յորմէ գուշակեցին թէ գտանի անդ տեղի հրաբուղխ : Մայր անուանեալ լեառն անկանի գրեթէ յարևմտեան կողմն կղզւոյն դքսին եօրքայ :

Յարևելեան կողմն սորին լերանց կայ գլուխ , կոչեցեալ Գլուխ Ֆուլլըթոնէրայ , և միւս ևս յարևմտեան կողմն՝ անուանեալ Գլուխ Ստէֆաննոսի , որ է ՚ի ծագ նոր բրիտանիոյ ՚ի հիւսիսակողմն . առ որով է կղզի մի կոչեցեալ Կղզի Ճանէրայ : Այս երկու գլուխք են գրեթէ հանդէպ միմեանց . մին յարևմտեան հիւսիս , իսկ երկրորդն յարևելեան հարաւ . և ը̄ մէջ նց̃ է ծոց ընդարձակ : Իսկ մերձակայ ցամաքն ՚ի ծովեզերեայ կողմանս ցած է և տափարակ . որ գնալով ՚ի կողմն նախայիշատակեալ լերանց , առ սակաւ սակաւ բարձրանայ ՚ի մեծամեծ լերինս . յորս են ծառք մեծամեծք ցրիւ հեռի ՚ի միմեանց . իսկ դաշտաւրկ միջոցքն թուեցան մշակեալ : Յայս կողմն երկրին ՚ի գիշերային ժամս տեսին հուր ՚ի բզ̃մ տեղիս , յորմէ գուշակեցին գտանիլ անդ բազմութիւն բնակչաց : Իսկ Գարտէրէդ իբրև ստուգեաց , թէ ծոցն այն էր նեղուց , կոչեաց զնա Նեղուց Սէյնթ Գէորգէայ . և հիւսիսային կղզւոյն ետ անուն Նոր Հիպէռնիա , կմ̃ Նոր Իռլանտա . առ որով վարեցաւ յանկարծական սաստիկ իմն հողմով . և նաւեալ առ նովաւ ը̄ արևմուտս իբրև 16 մղոնաւ հեռի ՚ի ցամաքէն , եգիտ զսանտովիչ կղզին . ապա զգլուխն Պիրոնայ , զարևմտեան ծագն Նոր Իռլանտայի :

Եւ մինչդեռ էին անգղիացիք ՚ի սանտովիչ կղզին , լուան զանը̄հատ իմն թնդիւն իբրև զձայն թմբկի .

և 'ի խաղաղիկ օդոյն, առժամ հասին անդ տասն փոքրիկ նաւակք. յորս էին արք 170. որք այնչափ մերձեցան առ նաւն անգղիացւոց, մինչև կարօղ լինել անգղիացւոց կարկառել նոցա պարգևս կապեալ 'ի ծայր ձողոյ. և թուէր թէ նախամեծար ընտրէին զերկաթ քան զայլ իրս, թէպէտ երկաթն զոր ետուն էր լոկ երկաթ անգործ, բայց 'ի սակաւ բևեռաց: Նաւակք նոցա նեղ էին և երկայն 'ի միատասանի փայտէ. յորոց մին էր իբրև 90 ոտնաչափ գրեթէ ընդ երկայնութեան նաւուն անգղիացւոց. յորում էին և քանդակք ինչ յերկոսին կողմանս. զոր և վարէին արք 30. բայց առագաստ բնաւ ոչ ունէին:

Բնակիչք սորին կղզւոյ. որպէս նոր Հոլանտայի, թխաեն և վայրենիք, և առհնորկ սևաւ. բայց չեն տափակունչք. և ոչ թանձրաշուրթնք ըստ եթովպացւոց. զսոսա անգղիացիք նոյնպէս համարեցան ընդ բնակչաց կղզւոյն քարլօթեայ դշխոյին, և եկմօնդայ. զորս յառաջ տեսին: Քանզի և սոքա բոլորովին մերկ շրջին որպէս և նոքա. բայց միայն զի 'ի բազուկս և 'ի սրունս կրեն ապարանջանս 'ի ծովային խեցեաց, առ 'ի զարդ. հերք նոցա նման են գզաթու ոչխարաց. այլ զարմանալին այն է՝ զի 'ի վ[երայ] հերաց գլխոյն, և մօրուացն ալիւր, կամ այլ ինչ սպիտակ փոշի արկանեն ըստ սովորութեան եւրոպացւոց. և զարդարեն զգլուխս փետրովք թռչնոց: Յայսմանէ գուշակեն, թէ սովորութիւն եւրոպացւոց սպիտակ փոշի արկանելոյ 'ի վ[երայ] հերաց գլխոյն հին է, և վաղնջական, և ոչ որպէս ոմանք կարծեն նորամուտ:

Բայց 'ի գարդերեդայ անգղիացւոյ 'ի մերձակայ ժամանակս հասին և գաղղիացիք 'ի նոր բրիտանիա առաջնորդ ունելով զպուկէնվիլ զերևելի նաւապետն գաղղիացի. որք խարիսխ արկին 'ի նաւահանգիստն, զոր նա ինքն պուկէնվիլ կոչեաց Նաւահանգիստ Բրասլինայ. և եկեալ անդ 'ի ցամաք, գտին չորս փոքրիկ վտակս. և ամենայն տեսակս փայտի բազում յոյժ մերձ 'ի ծովն պատշաճականս 'ի հուր և 'ի շինուած. այլ բնակիչս ոչ տեսին, թէպէտ և բազմօք յուզեցին զվայրսն: Բայց առ փոքրիկ վտակաւն միով գտին խրճիթս, և մնացորդս հրոյ, և ծովային խեցիս այրեցեալս, և գանկս գլխոյ անասնոց, զորս համարեցան գլուխս վարազուց. յորմէ գուշակեցին, թէ նորոգ մեկնեալ են անտի մարդիկ. նաև թուեցաւ նոցա լսել զձայն մարդոյ. բայց ապա ծանեան, թէ էր ձայն կապուտակ թռչնոց. որք 'ի մոլուքեան կղզիս կոչին թռչունք

պաս

պատկաւորք ։ Եւ 'ի յուղելն զաւաղս տեղւոյն, գըտին անդ կապարի թիթեղն կիսաթալ · յորոց վ՟ր մնացին կային բառք ինչ անգղիականք · Երեւէին 'ի նշմ և տեղիք բնակացն, որովք բնակեալ էին ուրեք յանգղիացւոց, զոր թերեւս վայրենիք բնակիչք տեղւոյն 'ի բաց կործեալ, կտրատեցին, և ընկեցին յաւազուտս անդ ։

Յայսմանէ առաւել ևս դրդուեցան զաղղիացիք 'ի հետազօտութիւն, վ՟յ յ՟ռջ գնացին իբրև մղոնս 5 · գըտին ծոց մի գեղեցիկ, յոր մտանէր գետ փոքր · և առ նովաւ ծառս հատեալս տապարաւ · յորմէ ծանեան թէ յայն ծոց խարիսխ արկին անգղիացիք · և ապա յուղեցին զտեղին, զոին և զծառն · յորոյ վերայ բնակեալ էին կապարի թիթեղն, ուր կային դեռևս բեւեռքն ։ Երկիրն շուրջ զովին ծոցովն առհասարակ լեռնային է, և ապառաժուտ · և հող սակաւ, որ հազիւ ծածկէ զժայռս · սակայն տակաւին բուսանին անդ ծառք մեծամեծք · կայ անդ և պեդդէլ անուն ծառն, և արեգա · և եղէգն շաքարաբեր · և ծառք պղպեղի · բայց չունէին ոչ ծաղիկս, և ոչ պտուղս · վ՟ն զի չև էր հասեալ ժամն ծաղկելն, կամ պտղոյն, այլ հետս և նշմարանս ինչ բնակութեան մարդկան ոչ տեսին ։ Տեսին անդ և խաւարումն արեգական · պէսպէս աստղաբաշխական գործեօք հնարիւ զննելով զսկզբնաւորութիւն, զչափ և զտեւողութիւն նր · որ տեւեաց ժամս իբրև երկու · և 'ի տեղւոջ անդ զննութե՟ թողեցին գրուածս ինչ ։ Զայս զննութի՟ համեմատեալ ը՟ այնմ, զոր 'ի նմին ժամու արարին 'ի բերդու, որ յամերիկա, մարթ է անվրէպ չափել զերկայնական տարածութեան խաղաղական ովկիանոսի, որ յանցեալ ժմս ամենևին անծանօթ էր ։

Յայս տեղի յաճախ են պէսպէս զեռունք · յորս են, որք երկայն են իբրև մատնաչափ · և ունէին վեց ճիրանս · և սլաքս սայրասուրս ը՟ բազմադակ մարմինն · և տուտ երկայն ։ Գտանի անդ և այլ ինչ տեսակ նշանաւոր զեռնոյ · երկայն իբրև երիս բոյթս, և բոլորգակ մարմնն իբրև հիւսուած ինչ 'ի տերևոց · որք և 'ի մէջ, ամենևին իբրև տերևս երևին · թևք նր են կէս տերևոյ · որք առ միմեամբք եդեալ ձևացուցանեն տերև մի ամբողջ · Ներքին կողմն մարմնոյն է մի միայն տերև աղօտագոյն ը՟ զվերին կողմն ։ Երկու սլաքաձև ոտս ունի, և վեց ճիրանս · որոց վերին ծայրքն են միասունք տերևոց · Կոմմերսոն մի յընկերոյ պուկէնվիլեայ գեղեցիկ ստորագրէ զայս նշա-

նաւ

նաւոր կենդանի · յորոց կաշեօք զմի պահեստացուցին, զոր պուկէնվիլ եդ 'ի կարգս այլոց նորանշան իրաց թղթերին : Եւ 'ի ծովու գտանին մասնաւոր իմն օձք ջրայինք թունաւորք յոյժ · որոց հարուածք կարի վտանգաւոր են : Այն այս պուկէնվիլ եկեալ 'ի նաւահանգստէն պրասլենայ, և նաւեալ ը̄ հիւսիս, ծանեաւ և զհիւսիսային ծովեզրս Նոր բրիտանիոյ · և մերձեցեալ ուրեք 'ի ցամաք, եկին 'ի վ̄ր ն̄ց 'ի բնակչաց երկրին փոքրիկ նաւակօք · յիւրաքանչիւր նաւակս արք հինգ, կամ վեց սեաւք բարձրահասակք յաղթանդամք և ուժեղք և մերկանդամ, բայց զամօթոյս ծածկեալ ունէին տերեւօք ծառոց · հերք գլխոյ ն̄ց գանգուր նման գզաթու ոչխարաց · յորս ոմանք արկեալ էին փոշի սպիտակ · մօրուքն երկայն, և 'ի բազուկս և 'ի սրունս ունէին սպիտակ զարդս · քանի մի անգամ գրոհ տուեալ 'ի վ̄ր գաղղիացւոց, պատերազմել ը̄ ն̄ս · այլ յարձակեալ միանգամ 'ի վ̄ր ն̄ց գաղղիացւոց հրազինս, առ ահին առհասարակ ցանեալ ցրուեցան :

Հուսկ յետոյ եհաս պուկէնվիլ յերկու կղզիս, որք թուեցան նմ̄, թէ էին այն կղզիք, զորս տամբիէր կոչեաց նոր հաննովերեայ, և Յորքեայ : Առաջինն բարձր է, և լեռնային · և ձգի յարեւմտեան հիւսիս, իբրեւ 24 մղոնաչափ երկայնութ̄ · իսկ երկրորդն փոքր է յոյժ : Այսչափ ինչ յաղագս գիւտի Նոր բրիտանիոյ · արդ մատիցուք 'ի ստորագրութ̄ն կղզեացն :

Նոր Բրիտանեա առանձնակի :

Է կղզի մեծ ք̄ զայլ մերձաւոր կղզիս, և առաւել 'ի հարաւակողմն ք̄ զն̄ս, 'ի հիւսիսոյ արեւելից ձգեալ ը̄ արեւմտեան հարաւակողմն : Երկիր ն̄ր արգաւանդ · ունի լերինս, և հովիտս, և բլուրս գեղեցիկս, և դաշտս դալարագեղս · և բնակիչս բ̄զմ առ համեմատութ̄ այլոց մերձակայ կղզեաց : Ոչ տեսան 'ի նմ̄ ք̄ղքք, կամ աւանք · այլ գլխաւոր տեղիք ն̄ր, որք նշանակին և յիշատակին, են քանի մի բարձրաւանդակ գլուխք, ո̄պ գլուխ օրփորտեայ, որ է յարեւելեան ծայր կղզւոյն, որ և ը̄ գլխոյն ս̄բյն գէորգեայ, որ է 'ի նոր իռլանտա, ձեւացուցանէ զնեղուցն որ որոշէ 'ի միմեանց զերկու զայսոսիկ կղզիս : Գլուխ ս̄բ աննայի · և Գլուխ կօլէսիներայ · որք են 'ի ծայրն կղզւոյն, հանդէպ գլխոյն գուլխէլմեայ · որ

է

է 'ի Նոր Կուինէա . և ը̅ նմ̅ ձևացուցանեն զնեղուցն , կմ̅ զհունն Տամբիերայ : Գլուխ Պուուէրայ . է առաջին գլուխն , որ ը̅ առաջ լինի 'ի ծովեզերեայս Նոր Բրիտանիոյ , 'ի մտանելն սրբոյն Գէորգեայ : Գլուխ Քուլէսէրայ . յայս անուն անուանեցաւ 'ի Տամբիերայ 'ի պատիւ Բալլիսէրայ երկգական ծովակալ իշխանին անգղիացւոց : Այս գլուխ ուղիղ հայի 'ի ման կղզին , որ է ը̅ մէջ նեղուցին : Գլուխ Ստեփաննոսի . յայս անուն կոչեցաւ 'ի Տամբիերայ 'ի պատիւ Լօրտ Ստեփաննոսի միոյ 'ի գլխաւորաց անտի նաւաստեաց անգղիացւոց : Այս գլուխ է 'ի ծագ հիւսիսակողման Նոր Բրիտանիոյ :

Նոր Իռլանտա :

Այս կղզի սակաւ , կմ̅ ոչինչ փոքր է ք̃ զՆոր Բրիտանիայն . բայց միայն , զի ձև նորա բոլորովին այլազան է . զի ը̅ս երկայնութ̃ տարածի ը̅ չորս աստիճանս , և առաւել ևս . ք̃ , եթէ 240 մղոնս . իսկ լայնութ̃ն նր̃ հազիւ ժամանէ 350 մղոն : Գլխաւոր տեղիք նր̃ , որք նշանակին և յծացոյցս են այք̃ :

Գլուխ սրբոյն Գէորգեայ : Որ է 'ի հարաւային ծագ Նոր Իռլանտայի . առ որով ձգի նեղուցն . որ յանուն նր̃ կոչի Նեղուց սրբոյն Գէորգեայ :

Ծոց Իրօնտէլեայ : Է 'ի հարաւային կողմն կղզւոյն . ուր 'ի 1700 եհաս Տամբիեր : Արևմտեան ծայր սորին կղզւոյ աւարտի 'ի նեղուց ինչ , որով Նոր Իռլանտայն անջատի 'ի Նոր Հաննովերայ :

Նոր Հաննովեր :

Ին կղզի նշանաւոր անջատեալ 'ի Նոր Իռլանտայէ 'ի ձեռն նախադրեալ նեղուցի , յորում գտանին բազմ̃ մանր կղզիք . յորոց 'ի միումն է ժայռ մի բարձր , անուանեալ Կղզի Սանտուիչայ . յորոյ անուն կոչի և նեղուցն : Երկիր Նոր Հաննովերայ բարձր է , և անտառային , ուստի և տեսիլ նր̃ գեղեցիկ և զուարճալի : Գարդերէդ զհարաւային ծայր այսր կղզւոյ , որ է ժայռ լեռնաձև բարձրացեալ՝ կոչեաց Հրուանդան Քուինեայ Շարլօթէն , 'ի պատիւ անգղիացւոց դշխոյին : Մերձ առ այս կղզի գտանին այլեւս 6 կմ̅ 7 մանր կղզիք , որք Թուէին անբերք , և անբնակ , 24 մղոնաւ հեռի ՚ի Հանովերայ · զորս Քարդերէդ որ եգիտ զնս կոչեաց Կղզիք Բօրթըլանտայ, կամ Կղզիք Տուքի Բօրթըլանտայ:

Կղզիք Նաւարկութեան ·

Այս կղզիք են թուով իբրեւ 30 · որոց իւրաքանչիւրն այնչափ մեծ է, զի մին բաւական էր կացուցանել զթագաւորութիւն: Անգղիացիք, որք զառաջինն հասին անդր, չգտին դիւրութիւն իջանել ՚ի ցամաք ՚ի զննել զերկիրն, և առեւտուր առնել ընդ բնակչաց նոցա, զի չունէին վաճառս: Բայց տեսին զերկիրն առհասարակ դալարադեղ և զուարճալի յոյժ · ուր կային բազում մեծամեծ անտառք · և ուրեք ուրեք ընդ մէջ անտառաց տեսան անդաստանս մշակեալս, և ծառս պտղաբերս: Եւ քերելով առ եզերբք մեծագոյն կղզւոյ ՚ի կղզեաց անտի, տեսին զի երկայնութիւն նորա յարեւելից յարեւմուտս էր իբրեւ 54 մղոն · այլ ՚ի հիւսիսակողմն չէր յայտ թէ ցորչափ տարածիցի · սակայն ՚ի յայտնի նշանաց երեւի թէ ընդ երկար ձգի: Կարի հաւանելի է, թէ այս կղզիք բերեն բազում պատուական բերս, մանաւանդ համեմս, գոլով ՚ի նոյն լայնութեան ընդ մոլուքեան կղզեաց:

՚Ի հասանել անդ Անգղիացւոց յաւուր միում ընդ առաւօտն, յարձակեցան ՚ի վերայ նոցա մանր նաւակօք բազմութիւնք ՚ի բնակչաց անտի կղզեացն, և մին այնչափ մերձեցաւ, զի կարող էին խօսակցել ընդ միմեանս · և սկսան ոմանք նշանօք խօսել ընդ Անգղիացիս, զոր Անգղիացիք ոչ իմանալով, համարէին նշան սիրոյ և բարեկամութեան · բայց իբրեւ և ևս մերձեցան ՚ի նաւն, սկսան նետաձիգ լինել յԱնգղիացիս: Յայնժամ և նոքա հրացանս արձակեցին ՚ի վերայ նոցա · յորմէ մեռաւ մի ոմն ՚ի նոցանէ · իսկ այլքն մեղմով իմն խոյս տուեալ փախեան: Եւ ահա զկնի սակաւուց հասին ՚ի վերայ նոցա չորեքտասան նաւակք, յորոց վերայ մի միայն հրացան արձակել Անգղիացւոց, առհասարակ ահաբեկեալ ՚ի փախուստ դարձան · և առ չափ տագնապի թողին անդ զնաւակ մի ՚ի նաւակաց անտի իւրեանց · որ էր ՚ի միասնանի փայտէ երկայն յոյժ · և գտան ՚ի նմա վեց պատուական ձկունք · և կոխայ մի · և պարկ մի և ՚ի նմա խնձոր անուանեալ պտուղ քաղցրահամ, զոր մարթ էր ուտել և հում, բայց եփեալ, կամ խորովեալ առաւել համեղ էին · Գտան անդ և երկու խեցեղէն անօթք լայնաբերանք, և բազում փոխանք, զոր ՚ի կեր-

առն

տանուլին 'ի պէտս առագաստի : Բնակիչք սոցին կղզեաց դրեթէ ամ̃ իրօք նման են բնակչաց Նոր Կալետոնայի . գոյն նց̃ է սեաւ դեղնախառն, կմ̃ մթին պղնձագոյն . հերքն նման գզաթու ոչխարաց սակաւակ փուշեաւ ցանեալ, ոտք և մօրուսն : Բոլորովին մերկ շրջին . բայց միայն 'ի բազուկս և 'ի սրունս կրեն ապարանջանս 'ի ծովային խեցեաց, և յերեսս նկարեն ալխտակ նիշս երկայնաձեւս :

Կղզիք Սանդվիչեայ .

Ի 'ի նեղուցն սբ̃յն գէորգեայ, զոր յայս անուն կոչեաց քարդերեդ Նաւապետն յանուն սանտվիչ կոմսին անգղիացւոց . և է մի 'ի նշանաւոր կղզեաց կողմանցն այնոցիկ . տեսիլ նր̃ գեղեցիկ է յոյժ . և երկիրն թուի լինել արդաւանդ, և բազմամարդ : Յայս կղզի գտանին երկու քարաժայռք բրգաձեւ բարձրացեալք ամենեքին նման միմեանց յերկու հակակայ ծայրս կղզւոյն . մին 'ի հիւսիս, և միւսն 'ի հարաւ, ուղղակի հանդէպ միմեանց իբրև 15 մղոնաւ հեռի յերերաց :

Սան Կղզի .

Սոյն և Կղզին Դուքին Եօրքայ է Է 4 աստիճանաւ հարաւային լայնութ̃ 'ի մէջ գլխոյն բալլիսերայ, և սանփոննոսի 'ի նեղուցն սբ̃յն գէորգեայ, զոր յերկուս բաժանէ : Երկիր նր̃ դաշտային է և զուարճալի, և 'ի խորսին կողմանս անտառաւէտ : Իսկ բնակութիւնք մարդկան առաւելապէս են 'ի ծովեզերեայս . մօտ միմեանց 'ի փոքրիկ անտառս նարկիլ գօգօ ծառոց . վն̃յ ծովեզերք նորա կարի իմն գեղեցկատեսիլ երևին :

Ծոց Լուիզիատայ .

Զայս ծոց զառաջինն յեւրոպացւոց եգիտ պուկէնվիլլ, և յայս անուն անուանեաց . որ հայեցեալ 'ի ստորագրութիւն պուկէնվիլլեայ, և այլոց նաւարկուաց, որք ստորագրեն զգիրս մերձակայ տեղեաց, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մասն հարաւային ծովեզերեայց Նոր կուինեայի :

Երկիրն , որ ձևացուցանէ զծոցս զայս , ցորվայր տեսանէ 'ի գաղղիացւոց՝ ձգեալ տարածի ընդ 4 աստիճանս և կէս երկայնութեան , 'ի գլխոյն որ կոչի Գլուխ ազատութեան , մինչև ցծոցն , զոր պուկէնվիլ կոչեաց Գիւ տը սագ տը լօրանժրի . 'ի ծովեզերեայ կողմանս ցած է և դաշտային , և ուրեք ուրեք անտառախիտ . այլ 'ի ներքս կոյս սա սակաւ սակաւ բարձրանայ , և աւարտի 'ի բարձրաբերձ լերինս , որոց գլուխք ցամպս հասանեն . որք և են երեք կարգ մի քան զմի բարձր . բարձրագոյնն ըստ համեմատական կարծեաց պուկէնվիլեայ լինի 65 մղոնաւ էր 'ի ներքս 'ի ցամաքն , և 'ի հիւսիսային և յարևելեան կողմանս ձգի մինչև 'ի ծովն . յայն սակս անմատչելի է տեղին 'ի կողմանց անտի : Լի են 'ի նմա անտառք մեծամեծք . և ուրեք ուրեք առ փոքրիկ ծոցովք տեսին փոքրիկ խրճիթս տարակաց 'ի միմեանց . որք էին բնակարան բնակչաց կղզւոյն . այլ բազմութիւն նոցա թուէր թէ 'ի լերինս բնակի , որք բազում փոքրիկ նաւակօք եկին 'ի մօտ գաղղիացւոց . բայց ոչ իշխեցին մերձենալ առ նոսա . 'ի մեծագոյնն 'ի նաւակաց էին արք 22 . իսկ 'ի փոքրագոյնն 3 . ամենայն նաւակք բոլորք կազմեալ էին . որոց առաջք բարձր էին յոյժ : Արքս առհասարակ սևաւ են ըստ բնակչաց կափրաստանի , և հերք նոցա գանգուր , այլ երկայնք . կրեն ապարանջանս 'ի բազուկս . և ապարօշս 'ի ճակատս . իսկ զէնք նոցա են աղեղն , և աշտ մի նիզակի :

Իսկ գլխաւոր տեղիք այսր ծոցոյն այսոքիկ :

Ովէսանտ : Է կղզի փոքրիկ , զոր յայս անուն կոչեաց պուկէնվիլ , իբր զի ըստ իւրոց բերէ զնմանութիւն ովէսանտ կղզւոյն որ է 'ի գաղղիա . և է ընդ մէջ ժայռից յեզերս ծոցոյն լուիզիատայ լինի ընդ 10 աստիճանաւ և 45 րոպէիւ հարաւային լայնութեան :

Գլուխ ազատութեան . ըստ գաղղ' Տէլիվրանս : Է հրուանդան յարևելեան ծագ սորին ծոցոյ , որ անտարակոյս՝ է արևելեան գլուխն նոր կուինէայի : Յայս անուն կոչեցաւ 'ի պուկէնվիլեայ , սակս մեծամեծ վտանգս կրելոյ նորա 'ի նաւելն յայն ծով . ուր բազում անգամ եհաս 'ի վերջին վտանգ կորստեան :

Ծոց շուազելեայ : Է կղզի մեծ յարևելեան կողմն նոր կուինէայի , և մօտ առ նա . լեռնային , այլ բերրի և բազմամարդ : Բնակիչք նորա սևաւ են , հերք նոցա գանգուր , զոր ներկեն սպիտակ դեղին և կարմիր . մերկ շրջին , բայց միայն փոքրիկ փախաթս ունին զմիջով . յանդգունք են և քաջասիրտ և յաջողակ 'ի վարել ըզզէնս , որք և առ նուաղս ինչ յարձակեցան 'ի վերայ գաղղիացւոց : Վահանն նց է ձուաձեւ հիւսեալ 'ի կնիւնոյ բզմ ճարտարութ, որք անտեղի տալի են նետից :

Դուքի Աներփէայ : Է միւս եւս հրուանդան 'ի շրջակայ ցամաքն Նոր կուինէայի 'ի հիւսիսակողմն : Երկիր նր գլխովին լեռնային է, սակայն դաշտնին եւ անդ բնակիչք • որք են համացեղ ը̄ բնակչաց համացեղ կղզւոյն :

Պուգա : Է կղզի 'ի հիւսիսային արեւելեան կողմն սարին Աւարտեայ, յայն անուն անուանեալ 'ի Պուկէնվիլեայ, որ եղեւ առաջին գտիչ նր : Երկիր նր արգաւանդ է, եւ բզմ ուրեք մշակեալ • ունի եւ ազգի ազգի ծառս պտղաբերս • ը̄ որս եւ գօգօ բզմ յոյժ, եւ է բազմամարդ : Բնակիչք նր մերկ են • հերք նց գըռուղ եւ կարճ, եւ ականջքն ծակ, եւ երկայն • բզմք ներկեն զհերս 'ի կարմիր • իսկ զմարմինս ողջոյն խայտաբղէտ • անդադար ծամեն զխէժ իմն, վս եւ ատամունք նց կարմիր են : Քաջասիրտ են եւ պտզմական • կրեն մեծամեծ աղեղունս իբրեւ վեց ոտնաչափ երկայնութ • եւ նետս 'ի կարծր, եւ 'ի ծանր փայտէ • նաւակք նց այլազան են 'ի նաւակաց շուրջակայ ծոցոյն, ունելով զխել եւ զառաջս ցածունս :

Կղզիք որք յարշիպեղագոսն Նաւորդաց :

Այս կղզիք են չորք • յորս 'ի 1769 հասեալ Պուկէնվիլեայ յայս յանուն անուանեաց : Մեծագոյնն է իբրեւ 9 մղոն երկայն 'ի հիւսիսոյ ը̄ հարաւ • եւ 6 յարեւելից յարեւմուտս : Եզերք նր առհնրկ պատեալ են սեպացեալ եւ անտառալից լերամբք • ը̄ որս անհնարին շառաչմամբ ընդհարկանին ալիք ծովու • վս եւ կարի դժուարին է մատչիլ նաւուց յափն կղզւոյն : Յորժամ հասին անդ գաղղիացիք, տեսին ուրեք ուրեք հուր, եւ խրճիթս, եւ արս իբրեւ 30 • որք ընթանային առ ափն ծովու : Իսկ մնացեալ երեք կղզիքն փոքր են իբրեւ 2 կմ 3 մղոնաւ հեռի 'ի միմեանց : Գաղղիացիք ոչ ելին 'ի ցամաք 'ի կղզիս յայսոսիկ • այլ 'ի նաւէ անտի փոքր ինչ առեւտուրս արարին ը̄ բնակչացն փոխանակութ, որք նաւակօք եկին առ նս • առեալ 'ի նցէ ընկոյզս գօգօ, ջրային թռչունս գեղեցիկս յոյժ, եւ կտորակս ինչ կարծր եւ խարտոցաւոր մորթոյ ձկանց, եւ այլ պէսպէս իրս • տեսին 'ի ձեռս միոյ 'ի կղզեցւոց աղաւնի եւ աքաղաղ մի, զոր ը̄ ոչինչ իրաց կամեցաւ փոխանակել • իսկ ինքեանք փոխարէն այլ ինչ ոչ առին 'ի գաղղիացւոց , բայց միայն կապերտս կարմիր չուխայի . ոչ բեհեզս , ոչ դանակս , ոչ երկաթ , և ոչ այլ ինչ այսպիսի , որք սովորաբար կարի հաճոյական են վայրենաբնակ ազգաց : Սք միջահասակ են և գոյն մարմնոյ նց թուխ , այլ ոչ սեաւ . և ամքն ունին 'ի մարմնի կապուտակ նիշս անջնջելիս . 'ի մէջ նց տեսին զմն , որ սպիտակ էր ք զայլս . հերք նց սեաւ են , զոր հաւաքեալ կապեն 'ի գագաթան գլխոյ . զմօրուս խլեն 'ի բաց , կմ քերծեն . զի յամենին մի ոմն միայն ունէր սակաւ ինչ մօրուս : Զօրաւոր են մարմնով աշխոյժ և արագաշարժ : Նաւակք նց ճարտարագործ . յորս 'ի կիր առնուն առագաստս , և թիակս . և միշտ սրաթուիչ ընթանան : 'Ի չորից կղզեաց աստի՝ երկուց ևեթ եդին անուանս գաղղիացիք . զմին կոչեցին Կլէնաաւրտոյ . իսկ զերկրորդն Անֆան փէրտիւ . որ թարգմանի Մանուկ կորուսեալ : Տեսին անդ գաղղիացիք միւս ևս կղզի մեծ , այլ չգտեալ ուրեք ծոց , կմ նաւահանգիստ ոչ ելին 'ի ցամաք :

Կղզիք՝ որք յարշիպեղագոսն մեծ կիկլադաց :

Է խումբ բզմ կղզեաց յարևմտեան կիսագունդն . ը 11 և 15 աստիճանաց լայնութե . և 166 և 170 աստիճանաց երկայնութե , ուր 'ի 1769 եհաս պուկէնվիլլ . որ համարի , թէ երկիրք , զոր յռջ ք զնա ետես ռօկկէվլին ը 11 զուգահեռական գծիւ , որք կոչին Կրօնինկա . և Թիէննհովլն , էին հիւսիսային եզերք այսր արշիպեղագոսի : Նոյնպէս համարեցաւ թէ լիցէ երկիրն հարաւային կոչեցեալ Երկիր հոգւոյն սբյ . վս զի երևոյթք տեղւոյն ամենևին համաձայն թուէին ծանօթութեանցն , զոր տայ զայնմանէ գուիրոս երևելի նաւապետ սպանիացի . բայց զարմացաւ 'ի գտանելն զտեղին 'ի նոյն լայնութե , և երկայնութե , ուր նա ինքն գուիրոս դնէ զիւր մեծ ծոցն սբյն յակոբայ , և սբյն փիլիպպոսի . և ոչ կարաց որոշել , թէ արդեօք նա ինքն գուիրոս վրիպեցաւ , թէ կամեցաւ ծածկել զնոր գիւտ իւր . վս զի Յագիրք առհսրկ զերկիրն հոգւոյն սբյ դնէին միացեալ ը Նոր կուինէայի : Բայց յետոյ ծանեաւ զերկոսին ևս մեծապէս սխալեալ :

Յայսմ արշիպեղագոսի են քանի մի կղզիք . յորոց ոմանք անծանօթ են , և ոմանք ծանուցեալք . յորոց

ԴԼԼ

գլխաւորքն կղզին Պէնտէկոստէ, երկայն իբրև 34 մղոն · Աւրօրայ · որ է իբրև 30 մղոն ը̄ երկայնութ̄ · և Բուրեպ, որ գրեթէ նոյնչափ է ը̄ առաջնոյն · երկիր նը̄ լեռնային է, և անտառալից ։ Յայս կղզի եկին գաղղիացիք · զորս իբրև տեսին բնակիչք տեղւոյն, սպառնային նը̄ մարտիւ ը̄դէմ ելանել · այլ իբրև տեսին, զի գաղղիացիք առ ոչ ինչ գրեցին զսպառնալիս նը̄, կեղծաւորել̄ 'ի վերին երեսս, զթշնամութին 'ի բարեկամութ̄ փոխեցին, և սկսան սիրով գնալ ը̄ նո̄, այլ 'ի ծածուկ խորհէին հնարս 'ի վնասել զնո̄ անտի · բայց մինչև էր նը̄ լինել պատրաստել̄, գաղղիացիք առել̄ 'ի կղզւոյ անտի փայտ, և զայլ պէտս իւրեանց, մտին անդէն 'ի նաւ · յայնժամ բնակիչք տեղւոյն քարինս, և նետս սկսան արձակել զկնի նը̄ ։

Բնակիչք սոցին կղզեաց ոմանք սեաւ են, և ոմանք ձիթագոյն, շրթունք նը̄ թանձր, հերքն սեաւ գանգուր և կարճ, և ոմանց դեղին, նմանել̄ գզաթու ոչխարաց · կարճահասակ են տգեղ և անհեթեթ · և գրեթէ ամքին հարել̄ բորոտութ̄ · անմօրուս են, և մերկ շրջին, միայն փոքրիկ կապերտ ինչ փսիաթի պատել̄ ունին զմիջով · կրեն ապարանջանս 'ի ծովային խեցեաց · և մանեակս 'ի պարանոցի 'ի պատենից կրիայի · ծակեն զռունգս, և մխեն 'ի նմ̄ զարդս անհեթեթս · կանայք նը̄ զմանկունս իւրեանց բարձեալ կրեն 'ի վր̄ թիկանց 'ի կողովս ճարտարահիւսս և ներկեալս 'ի գոյն կարմիր ։ Զէնք նը̄ են աղեղն և նետ, և բիր փայտի, երկաթի, և 'ի քարէ · նետքն եղեգնեայ, ունելով 'ի ծայրս ոսկր սլաքաձև ։

Կղզիք Քառլօթեայ Թագուհւոյն ։

Զայսոսիկ կղզիս եգիտ Կարդերէդ անգղիացի · յորժամ յածէր 'ի խնդիր հռչակաւոր կղզեացն Սողոմոնի · բայց ոչ եգիտ զնո̄ ։ Յելանել նը̄ 'ի ցամաք 'ի մի 'ի կղզեաց, ստիպեցաւ մարտ մղել ը̄ բնակչս նը̄, որք ը̄դէմ ելին նմ̄ · և սպան զոմանս 'ի նոցանէ ։ Այս կղզիք, զորս Գարդերէդ կոչեաց Քառլօթեայ Թգհւոյ, բազում են թուով · յորոց գլխաւորքն են այսոքիկ ։

Կղզի Էկմօնտայ ։ Է գլխաւոր կղզի 'ի մէջ սոցին կղզեաց, արգաւանդ, և բազմամարդ · ունի ամրոցս պարսպապատս · որ նոր ինչ է 'ի կողմանս յայնոսիկ · և բնակիչք նը̄ զօրաւոր են, և քաջ պատերազմականք ։

Ոմաք : Զայս կղզի նոյն համարին ընդ կղզւոյն ս̃բ Խաչի սպանիացւոց, կմ̃ Կվատալքանալայ, որ է մի 'ի կղզեացն Սողոմոնի, ոպ̃ գիրք ն̃ր, և այլ հանգամանք ցուցանեն :

Առ սովին կղզեաւ գտանին այլեւս երկու փոքրիկ կղզիք, որք կոչին **Թրէժլոնիօ**. և **Փօրթլանտ** :

Լօրտ հով. **Վոււլքանօս**. որ բրգաձև բարձրացեալ կայ 'ի ծովու. **Գնէթթէլ**. **Էկմօնտ**. **Ոււրէ**. **Կոււէր**. **Սիմփսոն**. **Գարտէրէտ** : Են փոքրիկ կղզիք 'ի կողմանս յայսոսիկ :

Ոնտօն Ճաւա : Են լինն կղզիք, ընդ 36 աստիճանաւ հարաւային լայնութ. զորս զառաջինն եգիտ Թասման. ապա Գարտերէտ. մին 'ի նոցանէ մեծ է և բազմամարդ. իսկ մնացեալ ութեքին փոքր են յոյժ :

Քարլէս Հարտի : Է կղզի մեծ բազմածառ, և դալարաւէտ, զոր եգիտ Գարտերէտ, և ետ նմ̃ անուն. ոչ ետես 'ի նմ̃ բնակիչս, այլ հուր բզ̃մ ուրեք. յորմէ գուշակեաց բազմամարդ լինել :

Վինչէլսէա : Է կղզի երբեւ 30 մղոնաւ հեռի 'ի նախընթաց կղզւոյն. եզերք նորա բարձր է. և տեսիլն գեղեցիկ : 'Ի հիւսիսակողմն սորին կղզւոյ ետես Գարտերէտ 'ի հեռաւոտ միւս ևս կղզի մեծ. որ գուցէ իցէ կղզին այն յովհաննու գտեալ 'ի պքուդամեայ, որ և է մի 'ի վերջին կղզեաց արևմտեան կիսալճմայ :

Կղզիք գտեալք 'ի Վալլիսայ :

Քաջ նաւապետն Վալլիս անգղիացի զկնի գտանելոյ յառաջ ք̃ զայլս յեւրոպացւոց զկղզին զանուանեալն 'ի գաղղիացւոց Տաիտի կմ̃ Օտաիտի, զոր ինքն կոչեաց Գէորգ, շարունակեալ զընթացս ընդ արևմուտս, եգիտ յաջորդաբար միմեանց զկնի զայլ ևս կղզիս, որք 'ի նմանէ կալան զանուն, և են հետագայքդ :

Սէն Թարլէս Ոսնպէր : Է կղզի ընդ 17 աստ" և 28 րոպ" հարաւային լայնութ. բնակիչք ն̃ր սակաւ են :

Լօրտ հով : Կղզի ընդ 16 աստիճանաւ և 48 րոպէիւ հարաւային լայնութ. երկայնութ ն̃ր է 10 մղոն. իսկ լայնութիւն 4 :

Շիլլի : Այս կղզի ցած է. գրեթէ հաւասար ջրոյ ծովուն. և է ընդ 15 աստիճանաւ և 28 րոպէիւ հարաւային լայնութ :

Պօսգավէն : Կղզի բոլորաձև արգաւանդ, և բազմամարդ.

մարդ • բնակիչք նր̃ քաջ պատերազմօղք են բարեչափ , և նման գայիդեցւոց :

Գէօրգէ : Կղզի փոքրիկ մերձ առ նախընթաց կղզին , և զոյգ է̃ նմ̃ է̃ 15 աստիճանաւ հարաւային լայնութե̃ , որք 20 աստիճանաւ երկայնութե̃ հեռի են 'ի չիլլի կղզւոյն :

Վօլլէս : Կղզի է̃ 13 աստիճանաւ և 18 բոպէիւ հարաւային լայնութե̃ արգաւանդ , և բազմամարդ :

Կղզիք գտեալք 'ի Գօմօտօրայ Պիրօնայ :

Գոմօտօր պիրօն անգղիացի անցեա̃լ ընդ դոյեդի կղզին , և չարունակեա̃լ զգնացս է̃ արևմուտս 'ի գինխան , եգիտ զուաշինկայ կղզիս :

Իշխան Կօլլէօն : Կղզի ցած և նեղ և գրեթէ ծածկեա̃լ 'ի ջրոց ծովու է̃ 15 աստիճանաւ հարաւային լայնութե̃ • և արևմտեան ծայր նր̃ անկանի է̃ 225 աստիճանաւ և կէս երկայնութե̃ :

Վտանգաւոր կղզիք , կմ̃ Տանիէր : Այս կղզիք երբե̃ 600 մղոնաւ հեռի են 'ի նախընթաց կղզւոյն , որք ե̃ անուան իւրեանց կարի վտանգաւոր են 'ի պատճառս բազմապատիկ ժայռից , որք զատմին զնոքօք :

Կղզի դուքսն եօրքայ : Է կղզի ցած արգաւանդ , այլ գրեթէ անբնակ • գոմոտոր 'ի հասանել անդր , զառաջինն համարեցաւ թէ իցէ մայլիտա կղզին • այլ յետոյ տեսեալ եթէ ոչ է այն • եդ նմա անուն կղզի դքսին եօրքայ :

Պիրօն : Է կղզի է̃ 1 աստիճանաւ և 18 բոպէիւ հարաւային լայնութե̃ • և է̃ 203 աստիճանաւ երկայնութե̃ , ցած , բայց արգաւանդ , և բազմամարդ : Բնակիչք նր̃ թուխ են , կմ̃ 'ի գոյն մթին պղնձոյ • որք մերկ շրջին • և ունին ապարանջանս 'ի բազուկս , և մանեակս 'ի պարանոցս 'ի ծովային խեցեաց : Հօրկ զէնք նց̃ է ազգ մի լայնաբերան նիզակաց :

Նոր Զէլանտիա :

Այս կղզի զառաջինն գտաւ յաբէլէ Թասմանայ Հօլանտացւոյ 'ի 1642 'ի դեկտեմբերի 13 • բայց ոչ եղ անդ 'ի ցամաք • զի երբե̃ կամէր խարիսխ արկանել 'ի ծոցն՝ անուանեալ ծոց մարդասպանից • բնակիչք տեղւոյն 'ի վր̃ յարձակեա̃լ, դիմակաց եղեն նմ̃ :

Ոմանք յաշխարհագրաց համարէին, թէ Նոր զելանդիայն իցէ մասն ցամաքին հարաւայնոյ. այլ Մեծն Գուգ, որ ՚ի վերջին Ճամբս եհաս անդր, և քաջ զննեաց զերկիրն, ասէ թէ են նոքա երկու կղզիք անջատեալք ՚ի միմեանց ՚ի ձեռն նեղուցի միոյ, որոյ լայնութիւնն է իբրև 5 մղոն, և կոչի Նեղուց Գուգայ:

Այս կղզիք են ՚ի մէջ 34 և 48 աստիճանաց հարաւային լայնութեան և ՚ի մէջ 183 և 196 աստիճանաց երկայնութեան, տարածութիւն նոցա ՚ի երկայն է 6 կամ 700 մղոն. բայց առ համեմատութեան երկայնութեան նեղ են. հիւսիսակողմանն ՚ի բարբառ բնակչաց երկրին՝ կոչի Էհահէյնոմաւէ, իսկ հարաւակողմանն Թաւէյ Փոյէնամօ: Յետինս այս առհասարակ լեռնային է և ապառաժուտ, և տեսիլ նորա խաժառ և տրտմագին. և թուի թէ չիք ՚ի նմա մշակեալ երկիր. ոչ և ոչ բազմութիւն բնակչաց: Իսկ առաջինն ՚ի հակառակն՝ ունի տեսիլ գեղեցիկ և զուարճալի, և երկիր նորա անհաւասար, և լեռնային, այլ ՚ի մէջ բլրոց ունի հովիտս գեղեցիկս և դալարագեղս ոռոգեալս բազում ականակիտ վտակօք. Իսկ գլուխք լերանց և բլրոց, ծածկեալ են անտառօք: Օդ նորա բարեխառն է, և ձմեռն չէ այնչափ ինչ սաստիկ, զի տեսան անդէն բոյսք ինչ, որք ոչ տոկան սաստիկ ցրտութեան:

՚Ի չորքոտանի կենդանեաց այլ ինչ ոչ տեսին անդէն, բայց միայն շունս և մկունս. զշունս դարմանեն ՚ի կերակուր, զի ուտեն զմիս նոցա: Նոյնպէս և թռչունք սակաւ գտանին անդէն, որք գրեթէ ոչինչ իւիք զանազանին ՚ի թռչնոց մերոց: Այլ կարի առատութիւն է անդ ձկանց, և ծովային խեցեաց, որք և լնուն զպակասութիւն չորքոտանեաց, և թռչնոց: Ունի և անտառս մեծամեծս, բայց ծառ պտղաբեր ոչ տեսին անդէն անգղիացիք. Նոյնպէս և ազգի ազգի բոյսս. յորս բաց ՚ի դդմենւոյ, զոր բազում խնամով դարմանեն. զի անտի կազմեն զամենայն կահս խոհարանի իւրեանց, սակաւք գտանին պիտանիք ՚ի կերակուր: Գտանի անդ և թթենի չինաց. բայց սակաւ յոյժ. յորմէ գործեն կերպաս սակաւ, զոր հատեալ ՚ի մանր կապերտս, կախեն զականջաց իբրև զգինդս: Այլ ՚ի մէջ ամենայն բուսոց այսր կղզւոյ առաւել շահաւորեր և պիտանի է ազգ մի բուսոյ, զոր ՚ի նոյն գործ ՚ի կիր արկանեն, յոր մեք զկանեփ և զվուշ. զի ՚ի տերևոց նորա սակաւ պատրաստութեամբ, մանեն առասանս, և անկանեն ոստայնս: Եւ այլ ևս եղանակաւ գործեալ զտերևսն հանեն ՚ի նոցանէ թելս երկայնս և հաստատունս,

տունս , սպիտակս իբրև զձիւն . և շողշողենս իբրև զմետաքս , յորմէ մարթ է գործել պատուական կերպաս : Այս բոյս բազմարդիւն անդարման 'ի մարդկանէ բուսանի ը̃ ամ՟ տեղիս 'ի լերինս , և 'ի դաշտս , յանջրդիս , և 'ի գիճին վայրս . բայց երևի թէ առաւել սիրէ զխոնաւն , ք̃ զչորն : 'Ի ծովեզերեայս նր̃ բզ̃մ ուրեք բայց մինչդ 'ի ծոցն մերգուրխոսի գտանին մանրորք երկաթոյ խաւն ը̃ աւազս , որ է նշան լինելոյ անդ բովուց երկաթոյ :

Բնակիչք նոր զելանդիոյ չեն այնչափ ինչ բզ̃մ, առհամեմատութ̃ ընդարձակ տարածութ̃ երկրին , որք իբր 'ի բզ̃մն բարեչափ են մարմնով առողջք և ուժեղք ո՛չ կարի յղփ , և ո՛չ յոյժ վտիտ , այլ միջակաւ . արք և կանայք զուարթամիտ են և քաղցրակենցաղ , աշխատասէր աշխոյժ և արագաձեռն յամ գործս . 'ի գնալն ուրեք նաւակաւ , միշտ սրաթռիչ ընթանան . յորս որչափ և բազմուն իցեն , այնպես համաձայն և միանգամայն վարեն զթիակս , ոպ̃ թէ 'ի միոյ հոգւոյ շարժեին : Այլ ոպ̃ 'ի գործս , նոյնպէս և 'ի բարկութն̃ կարի արագաշարժ են , և անհաշտ ատելութ̃ ընբերն առ թշնամիս . զոր թէ զբռամբ ածիցեն , անխնայաբար խողխողեն , առ 'ի ուտել զմիս նր̃ . քանզի մարդակեր են : Գոյն նր̃ առհասարակ խօսելով` թուխ է , բայց ո՛չ յոյժ միանգամայն . ատամունքն մանր , հաւասար և սպիտակ ը̃ փղոսկր . հերքն սեաւ . զոր որք հաւաքեն կապեն 'ի գագաթան , իբրև փունջ , և զարդարեն փետրովք թռչնոց . իսկ կանայք զմասն ինչ 'ի վարսից հատանեն , և զմասն ինչ թողուն արձակ կախեալ զթիկամբք , զոր և օծանեն իւղով . մր̃ այնորիկ գարշահոտ են յոյժ . մինչդ հնրիկ կանայք . իսկ կանայք մեծամեծաց ո՛չ այնչափ . զի թարմ իւղով օծանեն , և ստէպ նորոգեն զօծումն :

Արք և կանայք առղամբ կապեն զայլ և այլ անդամս մարմնոյ . նիշս անջնջելիս տպաւորելով 'ի նս̃ . բայց կանայք միայն զշրթունս . իսկ արք գրեթէ զմարմինն ամբողջ . և կապուտագոյն ներկս արկանեն 'ի վր̃ . և ուրեք ուրեք հերձոտեն զմորթ մարմնոյ , մեծամեծ պատուաստածս գործելով , և արկանեն 'ի նոսա սևագոյն ներկ , որով զարհուրելի իմն երևին : Բաց յայսմանէ , զմարմինս ամբողջն ներկեն 'ի գոյն կարմիր , կարմրագոյն ինչ հողով , զոր ոմանք ստրզ 'ի կիր արկանեն , իսկ այլք իւղով զանգեն և նովաւ մեծամեծ նիշս նկարեն 'ի մարմինս , որք միշտ խոնաւ մնան : Զանգերն նր̃ խոշոր են , հերձեալ 'ի ստորեաց մասան ւոր իմն ծառոյ ․ զորոյ զտերևսն հատանեն յերիս մասունս ը̅ երկայն ․ և հիւսեն անտի կապերտս միջականս 'ի մէջ ցփուոց , և փոխանթի , յորմէ կապերտս մի արկանեն զթիկամբք , լարիւ կապեալ , որ ձգի մինչև ցծունկս ․ և միւս ևս պատեն առ սռնամբք , որ հասանէ գրեթէ մինչև 'ի գետին ․ արք զսեռելնս զայս 'ի կիր արկանեն ․ իսկ կանայք զերկոսին ևս ․ Բայց այս զգեստ ռամկաց է ․ իսկ մեծամեծք նց̅ զգենուն կտաւի հանգերձս , զի բաց 'ի նախասացեալ փոխանթէ , գործեն անդ և այլ երկու ազգս կտաւոց ․ մի ծակոտկէն ուռկանակերպ , և միւս ևս խոշոր կտաւ ․ որ նման է մերումս եէլքէն ալէգի կոչեցեալ կտաւոյ ․ և 'ի վր̅ նր̅ ուրեք ուրեք կարեն չերամ երկայնաձիգս 'ի մորթոյ շանց , որ կարի 'ի յարգի է առ նս̅ ․ և 'ի լրումն ամ̅ զարդուց , նաև փետրովք թռչնոց , մանաւանդ կարմիր թութակաց զարդարեն զհանդերձս ։

Նոր իմն է տեսանել յայս կղզի ․ զի արք նց̅ առաւել պճնապաճոյճ լինին , ք̅ զկանայս ։ Արք և կանայք ծակեն զականջս , և առ սակաւ սակաւ այնչափ ը̅արձակեն զծակն ․ մինչ մարթ է համարձակ մտել զձեռն 'ի նմ̅ ․ զորմէ կախեն կոտորակս կապերտից , ոսկերս մեծամեծ թռչնոց , և հնդկ ակունս , յորս փորագրեալ կան անձև կերպարանք ․ մինչ նաև զբևեռս , զորս ընկալան յանգղիացւոց , կախէին զականջաց ։ Իսկ կանայք մխեն ը̅ ծակ ունկանն և բուսմբ չափ սալտակ փարոս մանանաւոր իմն ծառոյ , կէս մի յառաջոյ , և կէս մի 'ի յետուստ կախեալ ըս̅ օրինակի հերաց ․ և ոմանք ծակեն և զունչս , և ցցեն 'ի նմ̅ փետուրս թռչնոց ․ որով ծիծաղական իմն երևին ։ Կրեն և մանեակս 'ի պարանոցս , և ապարանջանս 'ի բազուկս յոսկերաց թռչնոց , 'ի ծովային խեցեաց , և 'ի քարանց ինչ , յորս քանդակեալ կան ուրուական ինչ մարդկային կերպարանք ։

Բնակարանք նց̅ են աղքատիկ խրճիթք փայտակերտք , և դրունք նց̅ են փոքրիկ ծերպք , ը̅ որս սողոսկելով մտանեն և ելանեն ․ առ որով ունին և փոքրիկ լուսամուտ , որ միանգամայն է և ծխնելոյզ ։ Մեծամեծքն ունին երկու , կմ̅ երիս այսպիսի խրճիթս 'ի միում տեղւոջ շրջապատեալ ցցովք , որոց բարձրութիւն է իբրև 10 կմ̅ 12 ոտնաչափ ․ և միջոցքն որ 'ի մէջ ցցեց՝ լցեալ խոտով ։ Իսկ կարասիք տանց նց̅ են քանի մի սապատք , յորս պահեն զհամբարս կերակրոց իւրեանց , և դդումք 'ի պէտս ջրոյ ․ և արկղ մի պահել 'ի նմ̅ զզարդս , և զզէնս ։ Այս է նց̅ ամ̅ փար_

Թա

թամութն : Կերակուր նց՟ է հում, կմ՟ խորովել 'ի ստորերկրեայ փուռն, կմ՟ 'ի թոնրի. զի չունին բնաւ ամնօթս խեցեղէնս, կմ՟ երկաթիս առ 'ի եռացուցանել 'ի նմ՟ ինչ կերակուր. իսկ ըմպելին է լոկ ջուր. և ոչ գիտեն բնաւ թէ զի՞նչ իցէ գինի, կմ՟ այլ ինչ արբեցուցիչ ըմպելի. և սակայն առողջ են և երկայնակեաց, և ուժեղ մինչև ցխորին ծերութի :

Երկրագործութն , և այլևս խոշոր արհեստք առաւելպս ծանուցեալ են 'ի հարաւային կողմանս Նոր զելանդիոյ, ք՟ 'ի հիւսիսայինս, ուր հազիւ հետք այսոցիկ արհեստից երևին, բայց յարհեստս պտղմի, որ նոյն է ը՟ ամ՟ տեղիս : Եւ զարմանք են, զի սք՟ գոլով քաղցր, և համեստ բարուք, և չունելով ևս երևելի ինչ պատճառ մարտի, սակայն և այնպս հանապազորդեան թշնամութի և մարտ է 'ի նմ՟, ցեղ ը՟ ցեղի պտղմելով. գուցէ որպ՟ կարծեն ոմանք, Նուազութն կերակրոյ իցէ մի 'ի գլխաւոր պտճառաց մարտի նց՟, որպ՟ և սովորութն ուտելոյ զմիս մարդոյ. զի բաց 'ի սակաւ շանց, զոր դարմանեն 'ի պէտս կերակրոյ, և բաց յարմատոց ինչ, չիք յայն կղզի այլ ինչ տեսակ քառոտանի կենդանեաց, որպ՟ և ոչ արմըտիք և բանջարք 'ի կերակուր մարդկան. թէպտ՟ ծովեզերեայ բնակիչք ունին և ձուկն 'ի ծովէ, բայց և այն ոչ յամ՟ եղանակս տարւոյն գտանի առատ. իսկ բնակիչք ներքին կողմանց և ոչ զայն ունին. վսն՟ և յորժամ այնք պակասին նց՟, յայնժամ 'ի յետին յուսահատութն հասեալ, հարկ է նց՟ կմ՟ յաղթել, և յագել մարմնով սպանելոց, և կմ՟ լինել կերակուր այլոց : Գլխաւոր զէնք նց՟ են տէգ փայտաշէն, երկայն իբրև 14 կմ՟ 15 ոտնաչափ. և յերկոսին ծայրս ագուցեալ կան սրածայր ոսկերք. և նետ. և բիր, զոր սովորաբար կրեն 'ի գօտիս իբր զարդ զինուորական. որ է սլաքն առ Եւրոպացիս : Ունին և դանակ, և կացին 'ի սեաւ, կմ՟ 'ի կանաչագոյն քարէ, որ կարծր է յոյժ. իսկ մկրատ նց՟ է յոսկերաց մարդկան, կմ՟ 'ի մանր կտորոց յասպիս քարի, և զայս ամ՟ գործիս սրեն քարամբ, հանդերձ մանրամաղ փոշեաւ յաւղիս սկան. զի չիք բնաւ առ նմ՟ երկաթեղէն ինչ գործի. ուստի և խոփ նց՟, և բրիչ փայտեղէն են. և ք՟զի երկիրն աւազախառն է, վն՟ այնորիկ և փայտեղէն գործեօք դիւրաւ կարեն բրել և կակղել : Յորժամ անգղիացիք հասին յայս կղզի, բնակիչք նր՟ համարելով բազմութբ՟ յաղթել նց՟, բզմ՟ նաւակօք եկին 'ի պտղմ՟ ը՟դէմ նց՟. և 'ի հեռուստ եռեա մեծն գուգ, զի մին 'ի գլխաւորաց նց արկեալ զիւրեաւ մուշտակ 'ի մորթոյ շանց, և ունելով 'ի ձեռին գաւազան, կարդէր զպաշտօնականսն : Եւ յորժամ մերձեցան առ անգղիացիս իբրև քարընկէց մի, սկսան աղաղակել 'ի բարբառ իւրեանց Հաւրօնայի, հաւրօնայի, եառոէ ուգա, ա ճաճօ, ճաճօ ամէ. ըն՝ Մերձեցարուք մերձեցարուք զի բոլոք սպանցուք զամենեսին : Զայս աւռացեալ առ սակաւ սակաւ մերձենային 'ի նաւն անգղիացւոց, և մերթ ը մերթ պատասխանէին հարցմանց, զոր օդալգացի ոմն օմայի կոչեցեալ որ էր թարգման առ անգղիացիս՝ հարցանէր նց : Եւ տեսեալ, զի անգղիացիք չառնէին ինչ պատրաստութի պատերազմի, համարեցան թէ երկնչին. վն համարձակեալ մօտ գնացին առ նաւ նց :

Յայնժամ սկսան երգել զերգ պատրաստութե պատերազմի. գոչէին իբրև զեղինս. և մին առեալ կաքաւէին, ձգէին զլեզուս արտաքս իբրև զշունս. կրճտէին զատամունս, շարժէին զգլուխս, և զմարմինս ոլորոյն զօրէն մոլեգնելոյ. միանգամայն և ձեռամբ շարժէին զսուրս. և յերգելն, զիւրաքանչիւր տուն աւարտէին 'ի հմեհ, ուժգին ճչելով : Բայց իբրև տեսին զի անգղիացիք ոչ առ ահի չառնուին զէն ըդէմ նց, քզի բայց յայլոց զինուց, ունէին և հրացէնս, այն է՝ թօփ, յորմէ անհնարինս երկնչին վայրենի ազինք. այլ զի ոչ կամէին նց չարիս հասուցանել, փոխեցին զմիտս, և սկսան բարեկամութբ գնալ, և մտերմութի ցուցանել առ նս, բայց 'ի վերին երեսս եւեթ. քզի տակաւին կասկած 'ի մտի ունէին, թէ անգղիացիք եկեալ են հարկատուս ինքեանց կացուցանել զնս. և յայն սակս զամ հնարս 'ի կիր արկանէին 'ի խաբել զնս : Երբեմն առևտուրս առնէին ը նս. և իբրև առնուին զգինս վաճառացն, ը նմին և զվաճառս անդրէն յինքեանս կորզէին. յայս սկզբն հաստատեալ, թէ չէ պարտ նպաստ ինչ մատուցանել թշնամւոյն : Այլ յետոյ իբրև ստուգութբ ծանեան զմարդասէր, և զբարերար բարս անգղիացւոց, այնուհետև ամ արդարութբ և սիրով վարէին ընդ նոսա :

Վն եղանակի քաղաքական կառավարութե նոր զելանդիոյ, չէ մարթ որոշակի ինչ նշանակել աստանօր. վն զի սակաւ ժամս կացին անդէն անգղիացիք. վն ոչ կարացին լիով տեղեկանալ եղանակի կառավարութե նց : Այսչափ ինչ գրէ մեծն գուգ, թէ սք̃ ունին զմի ոմն գլխաւոր հրամանատար, զոր կոչեն Թե-

բռնու . և էն նովաւ են բզմ գլուխք ցեղից միմեանց սորակարգեալք , բայց իշխանութի նց ընդարձակ է յոյժ . այլ թէ արդեօք մշտնջենաւո՞ր է , և ժառանգութ անցանէ յորդւոյ յորդիս . եթէ փոփոխական ,
այս չէ յայտ :

Իսկ վս կրօնի նոր զելանդացւոց այսչափ ինչ և եթ կարացին գիտել , թէ ճանաչեն նք աներևոյթ էակս . յորոց միջի մին է գերագոյն . իսկ այլք սորակարգեալք նմ : Աւանդութի նց 'ի վր սկզբնաւորութեան , և ստեղծագործութե մարդոյ գրեթէ չէ ինչ ընդհատ յաւանդութէ դայիտեցւոց : Ո՛չ տեսին անդ տեղի ինչ նուիրեալ 'ի պաշտօն հանդիսական , բայց միայն մերձ 'ի ծառաստս ինչ` տեսին ցանկապատ տեղի փոքրիկ քառակուսի , և 'ի մէջ նր ցցեալ էր գաւազն քանի մի ցիցս բահաձևս , որով սովոր են նք բրել զերկիր , զորոց կախեալ կային սաղարթալի արմատովք : Եւ ասացաւ նց , թէ այն էր նուէր ընծայեալ 'ի տեարց աներևոյթ էակաց , առ 'ի ընդունիլ 'ի նցէ զառատ բերս : Վս թաղման մեռելոց այլ ինչ ո՛չ գրեցին անգղիացիք , բայց միայն , թէ տեսին 'ի հարաւային կողմանս այսր կղզւոյ , զի զգլխս մեռելոց 'ի ծովս ընկենուին վէմ մի մեծ կապեալ զպարանոցէ : Իսկ յայլ
կողմանս , թուի թէ 'ի հող թաղեն :

Բայց այս հաւաստի է , զի զելանդացիք միշտ ջանացին թագուցանել յօտարականաց զհանգամանս թաղման մեռելոց իւրեանց , գուցէ վս աւելորդապաշտութեց ինչ : Այլ յաւէտ զարմանալին այս է , զի տեսին անդ 'ի ծոցն անուանեալ դշխոյ քարլօթթա խաչ մի կանգնեալ , և զարդարեալ փետրովք , և հարցեալ ցբնակիչս զպատճառ կանգնելոյ զայն խաչ . ասացին թէ է 'ի նշան տռն միում մեռելոյ . և յասելն անգղիացւոց , թէ այդ ո՛չ երբէք ճշմարիտ , զի դուք զմեռեալս ձեր 'ի ծովս ընկենուք . նքա պատասխանեցին , և այլ ինչ ո՛չ ասացին : Ամենք համարին , թէ այն խաչ կանգնեցաւ յընկերաց Թասմանայ երբեմն նաւապետին , որ յառաջ քն զգունդ եհաս 'ի նոր զելանդիա , և 'ի ծոցն աւազակաց , որ թուի թէ մի է ընդ նախայիշատակեալ ծոցոյն քարլօթթա դշխոյին , զի լ գուգայ իբրև 15 մղոնաւ ևեթ հեռի էին 'ի միմեանց . ուր բնակիչք տեղւոյն եղին ընդդէմ Թասմանայ , մինչդեռ հանդերձեալ էր խարիսխ ընկենուլ 'ի ծոց անդր . և թէպէտ ասի 'ի գիրս ճնպհորդութե նորին Թասմանայ , թէ ո՛չ կոխեաց նա 'ի կղզի անդ , բայց կարելի է թէ և առ սուղ ինչ ժմկ 'ի թաղել զմեռեալս իւր որք մեռան 'ի պտ͞զմին, զոր մղեալ էր դէմ բնակչաց կղզւոյն, և գուցէ մնացե͞լ ընկերք ն͞ր կանգնեցին զխաչն զայն 'ի նմին տեղւոջ. զոր բնակիչք կղզւոյն կ͞մ սակս աւելորդապաշտութե͞, և կ͞մ առ ահի զարդարեցին փետրովք 'ի հասանել անդր անգղիացւոց: Եթէ այս ճշմարիտ իցէ, յայտնի է պտ͞ճռն չպատասխանելոյ նոց զելանդացւոց, 'ի հարցանել անգղիացւոց զպտ͞ճռ խաչին այնորիկ. իբր զի երկեան, թէ գուցէ ս͞ք եկին 'ի խնդրել զվրէժ համազգեաց իւրեանց. ո͞ր և սակս նոյն պատճառի միշտ ժխտեցին, թէ տեսեալ իցեն երբէք նաւ ինչ եւրոպիոյ հասե͞լ անդր. որ յայտնի սուտ էր, զի ո՛չ շատ ինչ յ͞ռջ եհաս անդր Թասման. որ և գրեաց իսկ վ͞ն ն͞ր, նշանակելով զգիրս, և զայլ հանգամանս ն͞ր, թէպէտ ո՛չ այնպ͞ս ճշգրիտ, ո͞ր մեծն Գուգ:

Լեզու բնակչաց կղզւոյս նոյն է գրեթէ ա͞մ իրօք ը͞ն լեզուին օտահիտացւոց, արտաքսանօք և եթ զանազանե͞լ. թէպէտ իբրև հազար մղոնաւ հեռի են 'ի միմեանց. ուստի թուի թէ երկոցունց ս͞ց ծագումն նոյն է. զորս ոմանք համարին եկեալ յամերիկոյ, որ անկանի յարևելեան կողմն Նոր զելանդայի. բայց ը͞ս գուգայ չեն ս͞ք ամերիկացիք. զի ն͞ք անմօրուս են. իսկ ս͞ք մօրուսաւոր. և եթէ չի՛ք 'ի հարաւակողմն ը͞արձակ ցամաք, ո͞ր փորձիւ ապացուցանի 'ի ճ͞նպ͞հորդութեն գուգայ, զի այն ա͞մ, զոր Թասման. Ֆէրնանտէզ. Լէհրմիդ. Գիւտէլիրօս. և Բօկկէվլին համարէին մասն հարաւային ցամաքի, ո՛չ այլ ինչ են, եթէ ոչ մանր կղզիք ցրիւ 'ի համատարած խաղաղական ովկիանոս անդր. վ͞ս ստուգագոյն թըւի, թէ բնակիչք Նոր զելանդայի յարևմտից գնացին անդր: Նոր զելանդայն բաժանի յերկու մեծամեծ կղզիս, ունելով 'ի միջի նեղուց 5 մղոնաչափ լայնութե͞. որպէս 'ի վերոյ նշանակեցաք, յորոց մին ձգի ը͞ն հարաւ. իսկ միւսն ը͞ն հիւսիս: Հարաւայինն 'ի լեզու բնակչաց ն͞ր կոչի Տովէյ, կ͞մ Թավէյ Փոյէնամօ. այլ չէ յայտ թէ սովին անուամբ զբոլոր կղզին իմանան, թէ զմասն ինչ և եթ ն͞ր: Իսկ հիւսիսայինն Եահէյնօմաւէ. զորս գեղեցիկ ստորագրեցին անգղիացիք յՑացոյցս, թէպէտ ոչ ճշտիւ զա͞մ կողմանս, զի կողմանք ինչ ն͞ց տակաւին չեն ծանուցեալ ճշգրտիւ:

Թաւայի Փոյենամօ :

Այս կղզի է ը̄ մէջ 41 և 48 աստիճանաց հարաւային լայնութե̄. և դիրք նր̄ 'ի հարաւոյ արևմտից ձգի ը̄ արևելեան հիւսիս : Երկայնութի̄ նր̄ է իբրև 500 մղոն. իսկ լայնութի̄ն 120 : Բոլորովին դրեթէ լեռնային, և ը̄ արտաքին տեսլեամբն թուի անբեր : Անգղիացիք յերկս ևեթ տեղիս տեսին անդ բնակութի̄ մարդկան. յ̄՝ մերձ 'ի նեղուցն Քարլօթթայ դշխոյին. առ ձիւնապատ լերամբք. և յարևմտեան կողմն Սուանփէրս սարին : Գլխաւոր տեղիք նր̄ են հետագայքդ :

Գլուխ հարաւոյ : Է գլուխ 'ի ծագ հարաւային կողման կղզւոյն. առ որով են փոքրիկ կղզիք Թրափքս կոչեցեալք :

Սօլանտէր : Է կղզի, կա̄ լաւ ևս ասել ժայռ անբեր, որոյ շրջապատն է իբրև մղոն մի. ուր իբրև 15 մղոն հեռի 'ի ծովէն, հանդէպ այսր ժայռի կան բարձրաբերձ սեպացեալ լերինք, որոց գլուխք 'ի բազում տեղիս տեսան զի ծածկեալ կային ձեամբք. սակայն չէն բոլորովին անբեր, վս̄ զի գտանին 'ի նս̄ ծառք գեղեցիկք. այլ հետք ինչ բնակութե̄ մարդկան ոչ երևեցան 'ի նմ̄ :

Գլուխ արևմտեան : Է հրուանդան ինչ մերձ 'ի ծոցն անուանեալ Ծոց Դուսքի, կա̄ Տգեղ ծոց. լայնութի̄ մուտից նր̄ է 3 կա̄ 4 մղոն. և են 'ի նմ̄ փոքրիկ կղզիք. հիւսիսային ծագ նր̄ կոչեցաւ յանգղիացւոց Փոյնթ Ֆայվ Ֆինկէրս. յ̄՝ ծագ, կա̄ չէշտ հնգմատնեան. իբր զի են անդ հինգ ժայռք բրգաձև բարձրացեալք. որք բերեն զնմանութի̄ հնգից մատանց ձեռին մարդոյ : Երկիր նր̄ ը̄ մեծի մասին ապառաժուտ է և անբեր, բայց ուրեք ուրեք երևին 'ի նմա ծառք վայրենիք :

Նեղուց Քարլօթթայ դշխոյին : Է ծոց ը̄արձակ, ուր եկին անգղիացիք 'ի ցամաք 'ի զննել զբերս, զբնակիչս, և զհանգամանս երկրի կղզւոյս : Եւ է սա մերձ 'ի մուտս նեղուցին, որ անջրպետէ 'ի միմեանց զերկու մեծամեծ կղզիս զայսոսիկ :

Պանքս : Է կղզի առ 43 աստիճանաւ և կիսով հարաւային լայնութե̄ յարևելեան կողմն մեծի կղզւոյն. դիրք նր̄ է բոլորաձև, և շրջապատն իբրև 72 մղոն. երկիրն անբեր. սակայն և այնպէս անգղիացիք տեսլին անդէն բնակիչս ցրիւ աստ և անդ առ ափն ծովուն :

Եահէյէ նօմաւէ :

Այս կղզի լաւ ևս է քան զնախընթացն, զի թէպէտ լեռնային է բայց լերինք նորա չեն այնպէս ապառաժուտք, որք գրեթէ առհասարակ ծածկեալ են մեծամեծ անտառովք. ունի և հովիտս ոռոգեալս ականակիտ վտակօք. և հող նորա թէպէտ թոճի աղաղուն, բայց ըստ կարծեաց պանքսայ, և սօլանտերայ, որք քաջ զննեցին զայն, բերէր առատապէս զամենայն ազգս արմտեաց բուսոց և պտղոց, որք գտանին յերկրի մեր, եթէ մշակեալ լինէր ոմ արժան է : Տարածութիւն այսր կղզւոյ չէ ինչ ընդհատ 'ի տարածութենէ նախընթացն հարաւային կղզւոյ. բայց միայն ձևով տարբերի 'ի նմէ. զի ձև սորա է սրածայր եռանկիւնի, որոյ գլխաւոր տեղիք են սոքա :

Այր Բասմանայ Երիզ Բոգասուրայ, կամ Գուլֆ հիւսիսային : Է երևելի հրուանդան ուր զառաջինն եհաս աբէլ Թասման 'ի 1642. ապա լաւ ևս ծանեան զայն Նաւաստիք անգղիացւոց :

Թէմզ, կամ Թամեզիզ, և Թամրիֆ : Է գետ նշանաւոր, որ մեծութեամբ և առատութեամբ ջուրց գրեթէ ոչ ինչ ընդհատ է 'ի Թէմիզ գետոյն անգղիոյ. որ 'ի հարաւոյ հոսեալ ընդ հիւսիս մտանէ 'ի ծովն, ուր գործէ ծոց պատուական և ապահով յամենայն հողմոց :

Են 'ի կղզին յայն և երկու հրուանդանք նշանաւորք. յորոց մին կոչի Հրուանդան արևելեան, զի է յարևելեան կողմն կղզւոյն. իսկ միւսն Հրուանդան Գամբէլլայ. որ է 'ի հարաւային կողմն :

Կղզիք ընկերութեան :

Այսպէս կոչեցան յանգղիացւոց. իսկ գաղղիացիք կոչեն կղզիս արշիպեղագոսի պուգէնվիլի. Են խումբք բազմութեան կղզեաց ընդ մէջ հասարակածին և արևադարձին այծեղջերի. վասնորոյ վայելեն յօդ բարեխառն և քաղցրաշունչ. Երկիր նորա լեռնային է, բայց ոչ ուրեք ամուլ և անբեր. գալով ոռոգեալ 'ի զովարար գե-

տաւ

տակաց և ակնանկիւն աղբերաց · բերեն զա՟մ ազգս բուսոց ծառոց մրգաց և արմատոց յանկաւորաց օդոյ դրից և կլիմայի իւրեանց , ոչ և զնիշն տեսակս թռչնոց և չորքոտանեաց : Գլխաւորքն 'ի կղզիս ընկերութե , են այսոքիկ · Դահիդի · Ուլիէդէա · Հուահէյնէ · Օդահա · Պօլապօլա · Մաուրուա · և Դուպայի · որք ը՟ պայմանի իւրեանց բազմամարդ են :

Դահիդի , կ՟մ Օդահիդի :

Այս կղզի մեծ է ք՟ զայլ ա՟մ կղզիս արևադարձին հարաւային ովկիանոսի գոլով երկայն 'ի հարաւոյ արևելից ը՟ արևմտեան հիւսիս 30 մղոն · զոր մարթ է առնել իբր գլուխ համօրէն կղզեաց արշիպեղագոսին պաւաւպօնի , կ՟մ կղզեաց ընկերութե , անկեալ ը՟ 149 աստիճանաւ երկայնութե և ը՟ 17 աստիճանաւ հարաւային լայնութե , որ բովանդակի յերկուց կղզեաց ցամաք կրճիւ միացելոց · շրջապատեալ ծովաբոյս ժայռիւք , որք ձևացուցանեն շուրջ զնովաւ բ՟զմ քաջադէպ նաւահանգիստս , և ծոցս և գոգս ը՟ արձակս շատաջուրս անքոյթս 'ի հողմոց և բաւականս բազմութե նաւուց · յորս նշանաւոր է նաւահանգիստն կոչեցեալ Աղբերանն , իսկ 'ի բնակչաց Մադաւի , շրջապատեալ գեղեցիկ աւազակոյտ պատուարաւ · որ և ճանաչի 'ի հեռուստ 'ի ձեռն բարձրաւոր լերին ամբարձելոյ 'ի մէջն կղզւոյն 'ի հարաւակողմն կէտին Վէնէրայ · հոսի առ նովաւ գետ մեծ , ուր մարթ էր ողջոյն նաւագնդի առնուլ ջուր առանց խափանելոյ կ՟մ անհանգիստ առնելոյ զմիմեանս : Երկիրն բաց 'ի ծովեզերեայ կողմանց՝ լեռնային է , ունելով 'ի մէջ բարձրաբերձ լերինս և բլուրս , որք մեղմով իմն զիջեն հարթանման յա՟մ կողմանս կղզւոյն առ ծովեզերբք , և գործեն շուրջանակի տափարակ դաշտս ուրեք ուրեք իբր 2 մղոնաչափ լայնութե , և ուրեք ուրեք սակաւ ը՟ յաւէտ և նուազ ձգելոյ լեռնոտանց 'ի ծովակողմանս : Չիք 'ի նմա անտառ վայրենի անպտուղ ծառոց 'ի պէտս հրոյ կ՟մ շինուածոյ , այլ փոխ այնց՝ բազմատեսակ ծառք մրգաբերք ը՟ ա՟մ տեղիս անտառաձևք , և առաւելապէս 'ի դաշտագետինս և 'ի հովիտս լերանց · նոյնպէս և ազգի ազգի բոյսք մրգաբերք և ծաղիկք անուշահոտք և բանջարք և արմատք կերակրաբոյսք անդարման 'ի մարդկանէ : Այլ գլխաւոր և յաւէտ պիտանի բերք կղզւոյս են ծառն հացի, զի 'ի պտղոյ նր̄ կազմեն պէսպէս կերակուրս, ոպ̄ ստորև ունիմք նշանակել. Ընկոյզ գօգօի կմ̄ նարկիլէ. Պանանէ 13 տեսակ, որք ը̄ պատմելոյ գուգայ և այլոց անգղիացւոց, բաւագոյն էին ք̄ զորս ցայնվայր ճաշակեալ էին յայլ տեղիս. Բլադանի որ է ազգ ինչ պտղոյ նման խնձորոյ համեղ յորժամ կատարեալ հասունանայ. Բադադէ. Նամպու պտուղ ազնիւ առ օդաիդացիս. Գադաւղ, և եղէգն շաքարաբեր: Գտանի անդ և ազգ մի լեղակի, և մասնաւոր ներկ ինչ դեղնագոյն, ոպ̄ և գոյն ծիրանի գեղեցիկ յոյժ, զոր կազմեն խառնելով ընդ հիւթս մասնաւոր իմն թզոյ ը̄ տերևս բուսոյն, զոր եւրոպացիք կոչեն Քօրդիա սէպէսդէնա օրիէնդալիս: Իսկ ցորեան և այլ արմտիք և պտուղք և բանջարք մերոց Ծաց. չիք անդ բնաւ: Նմանապ̄ս 'ի չորքոտանեաց միայն խոզ, շուն, և մուկն: Կան անդ և ընտանի հաւք նման մերոց հաւուց. և վայրենի բադք, և թութակ կանաչագոյն, և տատրակ և այլ փոքրիկ թռչունք գեղեցկափետուրք անծանօթք առ մեզ: Նոյնպէս և որս զնզ̄ն պատուական ձկանց առատ է յոյժ, որ և է մի 'ի գլխաւոր պարենից օդաիդացւոց: Բնակիչք կղզւոյս բազմաթիւ են առաւել ք̄ զոր մարթ էր կարծել զմտաւ ածեալ զհանգամանս վայրենի անգործ կենաց. զի ը̄ պատմելոյ մեծին գուգայ, որ իբր հաւաստեաւ տեղեկացաւ 'ի բնակչաց, կարեն հանել 97 հազար մարտիկս որք կարող իցեն զէն առնուլ. յորմէ մարթ է 'ի միտ առնուլ զբազմամարդութիւն նց̄, որք սովորաբար բնակեն 'ի ծովեզերեայ շրջակայ դաշտավայրս և 'ի հովիտս լերանց. չունելով բնաւ աւան կմ̄ գեօղ 'ի մի վայր հաւաքեալ, զի տունք նց̄ ցրուեալ են աստ և անդ չափաւոր հեռաւորութբ̄ 'ի միմեանց. և իւրաքանչիւր տուն ունի շուրջանակի ծառատունկս պաղաբեր ծառոց, մանաւանդ հացաբեր ծառս: Աք̄ ը̄ գրելոյ ոմանց հասակաւ մարմնոյ և գունով կարի այլազան են 'ի միմեանց, մինչև մարթ էր համարել զնս̄ յայլ և այլ սերնդոց. զի ոմանք կարճահասակ են. իսկ այլք առհն̄րկ բարձր իբր 6 ոտնաչափ: Այլ այս տարազանութ̄ն երևի պատահական և ոչ 'ի սերնդենէ. ք̄զի գուգ և այլք յանգղիացւոց որք ը̄ հարուստ մի ժմկ կացին անդ՝ ոչ ինչ յիշատակեն վս̄ այսր. այլ այսչափ միայն ասեն, թէ 'ի կանայս գտանին ոմանք փոքրահասակք, զոր ընծայեն ոչ սերնդեան, այլ կարի մանկահասակ ամուսնանալոյ նց̄:

Այլ օդանդայլք սովորաբար բարձրեն աւուրք քաջալանջ գեղեցկադէր և բարեձօդ մարմնով. գոյն մարմնոյ նց՟ լրթադոյն արևակէզ և հողմահար. որք կրեն վարսս սեաւս և ձաղկս, և մօրուս, բայց զընչացս փոքրեն կմ՟ 'ի բաց խլեն, ոչ՟ և զվերին մասն մօրուաց զծնօտիւք, թողեալ միայն զկզակօք, զոր օծանեն իւղով գօգօի, ոչ՟ և զհերս, որ սովորաբար գալով հեն, ժահահոտ է. իսկ կանայք ը՟դէմ հ՟րկ սովորուէ, փոքրեն զվարսս շուրջ զականջօք ։ Յայտնանէ մարթ է 'ի մեռ առնուլ թէ բնակիչք կղզեաց խաղաղական ովկիանոսի չեն 'ի նոյն սերնդոյ ը՟ բնիկ ամերիկացիս, զի նք՟ ամենեքին լերկ են, բաց 'ի բաղդակոծնացւոց, որք ունին ընչացս ևեթ դրեթէ ը՟ չինաց ։ Եւ են գլուխք նց՟ ոջլօք, որք թուին պատշաճել ոչ այնչափ յաղտեղուէ, ոչ՟ ոմանք համարեցան. ք՟զի մաքրասէր են սոքա, որք և յաւուրն երկիցս և երիցս լուանան 'ի գետս, այլ 'ի ջերմուէ օդոյ, և 'ի չունելոյ սանր 'ի մաքրել զգլուխս. որ յայտ անտի է, զի որք ստացան յանգղիացւոց սանր, սաէպ սանրելով, զերծան 'ի զազրաթորմիջոց, զորս այլք և մանաւանդ մանկունք և դաեհիկք, որք հանապազ ըղձեռս 'ի գլուխս ունին, կալեալ արկանեն 'ի բերան ։

Արք և կանայք 'ի ձեռն սայրասուր խեցեաց կտրեալ տպաւորեն պէսպէս նիշս անջնջելիս յամ՟ յանդամս մարմնոյ, 'ի յօդուածս մատանց ձեռաց և ոտից տպաւորեն զայս ձև Z. յերեսս աստղանիշս, թէպէտ ոչ ամե՟քն. իսկ յայլ մասունս մարմնոյ որ՟ 'ի սրունս և 'ի բազուկս են, զանազան ձևս քառակուսի, բոլորաձիր, կիսալուսին, և այլ ասրուձական անարուեստ կերպարանս մարդոյ, թռչնոց, շանց, սողնոց են ։ Հանդերձք նց՟ են միապատանի անձև կապերտք կմ՟ փըսիաթք գործեալ 'ի նոցունց. զոր ձգեալ 'ի միջի, անցուցանեն ը՟ պարանոցս, գլխաւորքն 'ի նց՟է երկուս կմ՟ չորս կրեն 'ի վ՟ր միմեանց, իսկ ռամիկք մի միայն, որք հասանեն ցծունկս, և առ սեռամբք պատեն երկայն երիզօք. իսկ յերկուց կողմանց բազուկք և այլ մասունք մարմնոյ մերկ են ։

Զպարէնս որով կերակրին ս՟ք մարթ է բովանդակել յերկու. 'ի բոյսս, որք են պտուղք արմատք և պէս՟պս բանջարք ինքնաբոյսք, յորս գլխաւորն և առաւել շահաւէտ է պտուղն հացի, զոր ուտեն, կմ՟ խորովեալ 'ի թոնրի, և յայնժամ ունի քաղցրուէ ինչ անախորժ քմաց օտարաց իբրև զեփեալ բաղադէ. և կմ՟ առնեն անտի զանգուած, զոր կոչեն Մալեիէ, որ յետ երկիցս խմորելոյ, քացախի, և պահի անապական ը̄ ամիսս վեց և աւելի. այս է գլխաւոր պարէն նց̄ ը̄ զահրէ, զոր խորովեն 'ի թոնիր, և ուտեն ջերմ կամ ցուրտ. վ̄ս այնորիկ իւրաքանչիւր ոք ջանայ տնկել շուրջ զբնակութ̄ իւրով 'ի ծառոց աստի, որք չունին պէտս այլ աշխատանաց կամ գործանոյ, բայց միանգամ ևեթ տնկել. և եթէ ոք ունիցի զոնէ տասն 'ի ծառոց աստի, կարէ ասել թէ ունի կերակուր ը̄ բոլոր ժամս կենաց իւրոց։ Երկրորդ պարէն նց̄ են խոզք, շունք, և ընտանի հաւք, զի որպ̄ 'ի վերոյ ասացաք, բաց 'ի սց̄է՝ այլ տեսակք չորքոտանեաց ոչ գտանին 'ի կղզի անդ. այլ խոզենին՝ միայն մեծամեծաց է և գլխաւորաց. իսկ զշունս և զհաւս ուտէ և խառնիճաղանճն. անգղիացիք հաստատեն թէ միս շանց կղզւոյս բարի է 'ի կերակուր գրեթէ ոչ ինչ ը̄ համ յոչխարաց մերոց։ Իսկ երրորդ գլուխ պարենից նց̄ մ̄նդ ստորին ժողովրդեան են բազմատեսակ ծովային խեցեմորթք և ձուկն առատ և պատուական. զխեցեմորթս ոմ̄ և զմանր ձկունս հում ուտեն, իսկ զմեծամեծս խորովեալ։ Ըմպելի նց̄ է ջուր, իսկ գլխաւորք նց̄ ըմպեն երբեմն և գինի գոգօի։ Ասեն թէ կարի շատակեր են. յորոյ ապացոյց պատմէ մեծն Գուկ թէ առաջի իւր մի ոմն եկեր երկու կամ երիս մեծամեծ ձկունս. երիս պտուղս հացի իւրաքանչիւրն 'ի չափ երկուց բռանց. և 14 կամ 15 պանանէ. 6 կամ 7 բոյթ երկայն, և ստուար ը̄ համեմատութ̄ երկայնութ̄ն, և այլ ևս ըն̄դ̄ն մրգս մանունս։

Իսկ ը̄ բարուց և բնական խառնուածոյ բերեն յանձինս զվեհանձնութ̄ իմն, ծանր են 'ի գնալս, քաղցր և համբոյր 'ի կենցաղակցութ̄ս ը̄ միմեանս և ը̄ օտարս. անկեղծ և անխարդախ մինչև չտալ պատճառս կասկածանաց զբարեմտութ̄ նց̄, յորս՝ ասէ Գուկ, զնոյն վստահութ̄ ունել, զոր ունիմք ը̄ մտերմագոյն բարեկամս մեր. պանչ և այլք յանգղիացւոց բզ̄մ անգամ հրաւիրեալք 'ի նց̄է, գնացին միայն անընկեր և անզէն և ննջեցին 'ի տունս նց̄ յանտառի անկասկած հաւատալով զանձինս նց̄։ Գորովասիրտ են և մեղկալէտ, որք յոչ̄ փոքր վիշտս նոյնժամայն յարտասուս լուծանին ը̄ տկարամիտ կանանց և մանկանց. երևին չունել բնաւ բերումն 'ի գազանական անգթութ̄ ը̄ այլոց վայրենի ազանց։ Բայց ը̄ բարեկրութ̄ս այսորիկ ունին և յոռութ̄ս, զի գող են սոհնրկ մեծ և փոքր, որ իբր բնածին ախտակրութ̄ է նց̄, նց , զորոց զփորձ առեալ անգղիացիք , թէպէտ ամ աջալրջութբ զգուշանային . զեղծք են եւ անառակք գլխովին ընկղմեալք 'ի պղծալից ցանկութս մարմնոյ . ծոյլք եւ դատարկասլորաք , որք զօրն ողջոյն կմ յորսայս անկեալ անցուցանեն , կմ 'ի խաղս եւ 'ի կաքաւս , առ որ մոլեալ են , եւ կամ 'ի մրցմունս եւ 'ի վարժս նետաձգութե եւ ոտնգընկեցութե : Նուագարանք նց են սրինգ եւ թմբուկ երկոքին եւս անարուեստք , ը որս զուգակցեալ եւ զձայնս իւրեանց հնչեցուցանեն զներդաշնակութն իմն ախորժական լսելեաց իւրեանց , բայց ոչ օտարաց :

Չեն զուրկ եւ յարուեստից , թէպէտ եւ չունիցին յարմարաւոր գործիս , զի գիտեն գործել ստայնս եւ պաստառս եւ նրբահիւս փսիաթս , եւ ներկել 'ի զանազան գոյնս . զնիւթն յորոց գործեն զայսոսիկ , հանեն յեռատեսակ ծառոց , որք են թթենի չինաց , ծառն հացի , եւ թզենի վայրի արեւմտեան հնդկաց : Զպաստառս եւ զնրբագոյն ստայնս զոր օտահիտացիք կոչեն Աուդա , գործեն 'ի կեղեւանց թթենւոյ չինաց , յորմէ չինք գործեն զթուղթ . զայս ազգ ըստայնից միայն գլխաւորք նց զգենուն ներկեալ 'ի գոյն ծիրանի : Զերկրորդ տեսակն , որ չէ այնչափ ինչ նուրբ , եւ ոչ այնպէս սպիտակ որպ առաջինն , զոր կոչեն Օրաօ , ստայնանկեն 'ի կեղեւոյ հացաբեր ծառոյ , զոր զգենու հսրկ ժղվդն : Իսկ երրդ տեսակն գործի 'ի կեղեւոյ վայրենի թզենւոյ , որ թանձրագոյն է եւ խոշոր . այլ 'ի յարգի առ նս , զի տոկայ 'ի ջուր եւ անթափանց է յանձրեւաց : 'Ի գոյնս նց յաւէտ գեղեցիկ եւ ազնիւ է կարմիր գոյնն , որ գերազանցէ գեղեցկութբ զամենայն որդան կարմիր . գուք մանրամասն գրէ զեղանակ կազմութե այնր պատուական գունոյ , մի առ մի ստորագրելով զբաղադրիչ նիւթս նց :

Գտանի առ նս եւ ուրուական իմն արուեստ նաւաշինութե , զոր աննահանջելի հարկն ուսոյց նց : Նաւք կմ լաւ եւս ասել նաւակք կղզեացս ըհանրապս խօսելով երկատեսակ են , զորս կոչեն Իվահաս եւ Բահիէս : Իվահայքն նոյնաձեւ են առհսրկ , բայց մեծութբ այլ եւ այլ . չրթունք նց ուղիղ են , յատակն տափարակ , երկայնութն 'ի 10 ոտնաչափէ մինչեւ ց60 կմ 62 ոտնաչափ , բայց առ համեմատութբ երկայնութեն կարի նեղ են . զի տասնոտեան երկայնութբ իվահան հազիւ ունի մի ոտնաչափ լայնութն . որպ եւ վաթսնոտեանն երկու ոտնաչափ եւ եթ , ուստի են իբր խողովակք կմ ջրարբք անասնոց : Այլ երկբ տեսակք տակք են, ոմանք վ՟ն պ՟տղմի, այլք 'ի պէտս ձկնորսութ՟, և կէսք վ՟ն ճանապարհորդելոյ 'ի կղզիս: Պատերազմականն երկայն է ՟ք զայլս, և խելք կ՟մ յետին կողմն ն՟ր բարձր է յոյժ ց՟17 կ՟մ 18 ոտնաչափ իբր կիսաշրջանակ կորացեալ 'ի վեր, թէպէտ խորութ՟ն բուն նաւուն չիցէ աւելի ՟ք 3 ոտնաչափ, իսկ առաջք ն՟ր ցած. և ունի 'ի վ՟ր տաշտի տախտակ ցըցուցեալ արտաքս իբր 4 ոտնաչափ երկայն ընթանկիւն աւարտեալ: 'Ի ժամս պ՟տղմի յառաջս նաւուն չինեն տախտակամած 10 կ՟մ 12 ոտնաչափ երկայն և փոքր մի լայն ՟ք զնաւն, հաստատեալ 'ի վ՟ր ձողոյ 6 ոտնաչափ բարձր իբր մարտկոց, յորոյ վ՟ր կացեալ մարտկաց նետաձիգ լինին 'ի թշնամիս: Խլահասք ձկնորսութ՟ մեծագոյնքն են 40 ոտնաչափ, իսկ փոքրագոյնք 10 կ՟մ 12. իսկ խլահասք ճ՟նպհորդութ՟ զայս ինչ ունին սեպհական, զի խելք ն՟ց միշտ կրկնապատկեալ են, և ունին կամարաձև վրան լայն 5 կ՟մ 6 ոտնաչափ, և երկայն 6 կ՟մ 7. պատրաստեալ վ՟ն ճ՟նպհորդութ՟ գլխաւոր անձանց որք նստին 'ի ներքոյ: Երկ՟դ տեսակ նաւուց կոչեցեալ Բանկէս, գրեթէ նոյնաձև են ը՟ խլահասից, բաց 'ի կողմանց որք ոչ ձգին միակերպ ուղղագիծ, այլ առ փոքր մի ուղիղ գնան, և ապա 'ի մէջն միանգամայն ը՟լայնին իբր փոր, և սրանկիւն աւարտին. յայսպիսի նաւուց մի միայն ետես գուգ. 'ի գախգի կղզւոջ եկեալ յայլ կղզւոյ. յորմէ երևի թէ բնակիչք կղզւոյս միայն խլահաս 'ի կիր արկան են:

Այս երկատեսակ նաւք յորժամ երկայնութ՟ ն՟ց անցանէ զ25 ոտիւք, կրեն և կայմ և առագաստ, ոմանք մի, և ոմանք երկու. բարձրութ՟ կայմին չափի ը՟ երկայնութ՟ նաւուն. զի թէ նաւն իցէ 30 ոտնաչափ, կայմն է իբր 25. որ և հաստատեալ կայ 'ի վ՟ր ձողոց պնդելոց ը՟ միմեանս, որոց ծայրք 'ի միոյ կողմանէ ձգին 'ի ծովն, և 'ի միւս կողմանէ կապեալ են այլ երկու ձողք, մին ձգի ը՟ երկայն, իսկ երկրորդն խոտորնակի 'ի վ՟ր նաւուն: Այս կաղմած ամենևին հարկաւոր է 'ի լինել հակաքարշ նաւուն, յորժամ առ փոքր մի սաստկանայ հողմն: 'Ի վ՟ր կայմին պարզեն առագաստ փսիաթի հիւսեալ 'ի ջղայլն տերևոց 'ի վերուստ սրածայր իբր եռ՟դ մասամբ 'ի վեր ՟ք զկայմն. իսկ ստորին եզերոք ուղղագիծ քառակուսի, և յերկուց կողմանց գոգաձև հաստատեալ 'ի վ՟ր փայտի շրջանակի. ք՟ չերչխմեկի. վ՟ն չէ հնար փոփոխել ըղդիրս ն՟ր ը՟ ընթացս հողմոց, կ՟մ ամփոփել. այլ հարկ

է

է հատանել, յորժամ յառնէ հողմն սաստիկ. որ հողմն երբէք դիպի 'ի խաղաղական ովկիանոսի. ուր եղանակք օդոց սովորաբար միօրինակ են ։ Թիակք նց են ձողք երկայնաձիգք 'ի ստորին ծայրս տափարակք բոլորաձև, գրեթէ 'ի նմանութե̃ թիոց հացագործաց. զորս նստելով վարեն սաստիկ արագութբ̃, որով ընթանան զնաւն ջրով. մ̃յ հարկ է միում 'ի նցէ անդադար դատարկել զջուրն ։

Իսկ գործիքք նց, որով կազմեն նաւս, շինեն տունս, կտրեն զհաստաբուն ծառս, հերձուն և հատանեն անտի տախտակս. և յղկեն, ոչ այլ ինչ են, բայց միայն տապար քարեղէն, 'ի մասնաւոր ինչ սևագոյն, կմ̃ մոխրագոյն քարէ. որ թէպէտ չէ այնչափ ինչ կարծր, այլ ոչ փշրի. և թուր յոսկերէ մարդոյ. զոր սովորաբար շինեն 'ի սրունից ոտից. և խարտոց 'ի կուռ բստոյ. և ազգ մի կարծր և տաշնաւոր մորթոյ, որ է̃ ուռայոյ, ծառայէ նց 'ի տեղի յեսանաքարի. բայց ունին և յեսանաքար, որով շինեն զբերան տապարի և այլոց գործեաց ։ Սակս այսպիսի անդէպ գործեաց առնել տաժանին ա̃ք շինել անհարթ և անձև նաւակ մի, ք̃ առ մեզ զմեծագոյն նաւ պատերազմի ։

Լեզու բնակչաց կղզւոյս, յորում հազիւ լսի հնչումն բաղաձայն տառից, զի գրեթէ գլխովին 'ի ձայնաւորաց բաղկացե̃լ է, որպ̃ և լեզուք այլոց համօրէն բընակչաց ը̃ արևադարձիւք՝ քաղցր է, հեշտալուր ներդաշնակաւոր և դիւրահնչիւն. այլ երևի թէ կարի աղքատ և անկատար է. չունելով անուանց և բայից նց զսովորական խոնարհմունս. զի հազիւ գտանին առ նս̃ անուանք ինչ, որք բաց յուղղականէն, ունիցին և այլ հոլովս. որպ̃ և բայք բաց 'ի ներկայէն զայլ ժմկս ։ Բզմ̃ դժուարութիւն կրեն ա̃ք 'ի հնչել անվթար զխօսս օտար ազգաց. մ̃նւնդ յորս յաճախե̃ն են բաղաձայնք, որպ̃ 'ի բարբառ անգղիացւոց, զոր բնաւ ոչ կարացին անվրէպ արտասանել. թէպէտ բզ̃մս աշխատ եղեն անգղիացիք ուսուցանել նց ։ Այլ զխօսս սպանիացւոց և իտալացւոց, որք 'ի ձայնաւոր աւարտէին՝ հեշտեաւ հնչէին. յորմէ յայտնի երևի, թէ դժուարութիւն այն ծագէր 'ի բազմութե̃ բաղաձայնից, առ որ չէին սովորեալ լեզուք նց. զոր տեսանեմք և յեւրոպացիս, որք չունելով 'ի բարբառ իւրեանց զթաւ հնչումն ինչ արևելեայց, դժուարին են նց այն հնչմունք ։

'Ի թուական անուանս սկսեալ 'ի միոյ զնան մինչև 'ի տասն.

տասն • իւրաքանչիւր Թուոց ունելով սեպհական անուն • և յորժամ կամին և ևս յառաջանալ 'ի Թիւս, յաւելուն զբառս Աւելի • այ՟ տասն , և մի աւելի • տասն , և երկու աւելի • այ՟ մետասան , երկոտասան են , մինչև 'ի քսանն • որում նոյնպ՟ս ունին յաւելուկ բառ • որ պրեթէ նոյն է , որ ինչ առ մեզ քսանաւորն • և յորժամ Թուէին տասն քսանաւորս , ունին զայլ անուն , որ նշանակէ երկերիւր : Ասեն անգղիացիք , թէ ոչ կարացին հաւաստեաւ ստուգել թէ բաց յայսց սակաւ Թուական անուանց ունիցի՞ն և այլ անուանս նշանակելոյ բազմագոյն Թուոց • սակայն երևի թէ չունին պէտս առաւելագոյն Թուոց • Ք՟զի երկերիւրն կրկնեալ տասն անգամ , առնէ երկու հազար Թիւ , որ առ նո՟ մեծ է յոյժ և անըմբռնելի 'ի մտաց նո՟ց • Ք՟զի չունելով գիրս , ոչ Թուանշանս , ոչ մատեանս հաշուէից , և ոչ գործածութե՟ դրամոց , որք և թէ զինչ իցէ ոսկի , կա՟մ արծաթ ոչ գիտեն , ոչ երբէք դէպ լինին այնչափ Թիւք 'ի հաշիւս նո՟ց • այլ զա՟մ հաշիւ իւրեանց մտամբք վճարեն , այ՟ և զտուրևառս ը՟ միմեանս , և ը՟ օտարս փոխանակութ՟ իրաց :

Երևի առ նո՟ և անկատար ինչ եղանակ ք՟ղքկան կառավարութե՟ • և կարգ նախապատուու՟ և ստրկութե՟ • զի ը՟ նշանակելոյ անգղիացւոց , մարթ է զհամօրէն բնակիչս երկուց ցամաք կղզեացս 'ի չորս դասս որոշել • այ՟ 'ի Թգ՟ր • 'ի պարոն , 'ի ստրուկ , և 'ի գառհիկ , կա՟մ գերի : Թգ՟րն՝ ը՟ նո՟ց Երարախուգահիէ ասացեալ է նախապատիւ գլուխ և գերագոյն իշխան 'ի վ՟ր ա՟մն • զոր իշխանք և սոսկականք առհ՟րկ մեծապատիւ յարգանօք պաշտեն • արտաքին հանդէս նո՟ր և փառք մեծ է և չքեղ • այլ տիրապետական հրամանատարութե՟ նո՟ր երևի թէ սակաւ է ք՟ զայն , զոր իւրաքանչիւր պարոն ունի յիւրում վիճակի : Երկու են Թգ՟ւք օգաւիգայեցւոց ը՟ երկուց ցամաք կղզեաց , և իւրաքանչիւրն ունի առանձին ժողով , և առանձին կառավարութի • իշխանութի՟ նո՟ց յաջորդական ժառանգութե՟ անցանէ 'ի հարց յորդիս • բայց նորալուր ինչ պայմանաւ • Ք՟զի ը՟ ծնանել անդրանիկ որդւոյ , նոյն ժամայն անուանի Երարախուգահիէ այ՟ Թգ՟ր • իսկ հայրն այնուհետև ոչ ևս կոչի Թգ՟ր , այլ միայն մատակարար Թգ՟րութե՟ մինչև յարբունս հասանել որդւոյ • և յայնժամ ինքն առնու զմատակարարութի Թագաւորութեն , 'ի բաց հանեալ զհայրն :

Պարոնք , ը՟ նո՟ց Երարիէ են տեարք մասնաւոր վիճակաց կա՟մ գաւառաց միոյ կա՟մ բազմաց • այսպիսի վի_

ճակք

ճակքեն 100 · զի գրեթէ 'ի նոյնչափ վիճակս բաժանեալ են այս կղզիք : Իշխանութիւն նոցա 'ի վերայ ստրկաց իւրեանց մեծ է · և արտաքին շուքն փառահեղ · ունելով միշտ զինքեամբք բազմութիւն սպասաւորաց , որոց մեծ մասն են ազնուական պատանիք երկրորդածինք 'ի սերնդոց իւրեանց : Ոմանք 'ի նոցանէ սպասաւորեն 'ի տան · այլք են իբր սուրհանդակք կամ պաշտօնեայք կարգեալք հասուցանել ուրեք զպատգամս պարոնին և յայտնել զկամս նորա :

Այս իշխանութիւն և ժառանգութիւն անցանէ 'ի հարց յորդիս նոյնն պայմանաւ , որով ասացաք զթագաւորաց : Դուցէ և այս եղև սատար անագորոյն սովորութեան բազմաց 'ի մեծամեծաց նոցա անդէն 'ի ծնելն հեղձուցանել զզաւակս իւրեանց , զի մի 'ի պատճառս նոցա փութով անկցին յիշխանութենէ :

Ստրուկք · ըստ նոցա Մանահունի՝ են հպատակք պարոնաց բնակեալք 'ի վիճակս նոցա · ունելով իւրաքանչիւր տանուտէրն ընդ ձեռամբ իւրով ագարակ մի , կամ կալուածս 'ի վիճակս պարոնաց , որք առաւել քան զթագաւորական իշխանութիւն վարեն 'ի վերայ նոցա : Սոքա ունին 'ի ծառայութեան իւրեանց զզաւեհիկս կամ զգեղջուկս · որք են անարգագոյնք 'ի նոսա , 'ի բարբառ նոցա Դուտու անուանեալք , զոր ծառայեցուցանեն 'ի տաժանագոյն գործս իբր մշակ , փայտակոտոր , ջրկիր , խոհարար , ձկնորս են · վասն որոյ կեանք նոցա եղկելի է :

'ի Ժամանակս պատերազմի յորժամ թշնամի յարձակի 'ի վերայ նոցա , իւրաքանչիւր վիճակ պարտաւոր է տալ սահմանեալ թիւ մարդկաց ըստ զօրավարութեան պարոնի վիճակին , իսկ թիւ մարդկաց նոցա , ըստ հաւաստելոյ բնակչացն սովորաբար է 6680 · և յայն ժամանակս թագաւորն ինքնին կառավարէ զնոսա իբրև զերագոյն սպարապետ : Զէնք նոցա են աղեղն , նետ և տեգ սրածայր ատամնաւոր · յորս քաջավարժ են ձգել 'ի բացեայ , զի առ այն ևեթ վարժին · այլ ոչ 'ի յառաջադիր նպատակն · վասն որոյ ըստ պատահման դէպ լինի նոցա հարկանել զթշնամիս · ունին և բիր 'ի կարծրագոյն փայտէ · այսպիսի անզօր զինուք արիաբար պատերազմին , և ընդերկար տոկան 'ի մարտի :

Դէն Օտաիտացւոց , որպէս և այլոց բազմաց վայրենի ազանց է խառնուրդ իմն գաղտնեաց ըստ զինչն օտարոտի միմեանց հակառակ առասպելս և աւելորդապաշտութիւնս · որում Գուգ և ընկերք նորա չէին կարող լիով խելամուտ լինել · Թէպէտ բազմիցս աշխատ եղեն 'ի հետաղօտել · քանզի բաց յայլոց գաղտնութեանց նաև լեզու դենի առ նմ՟, ո՞չ և առ չինս այլազան է 'ի հ՟րկ սովորական բարբառոյ նց՟ : Սակայն հաւաստի է թէ մարդ բանաւոր քանի թանձրամիտ և ապէտ իցէ , յայտնապէս տեսանէ թէ անկցերք , և զնոյն մասունք բաղկացուցիչ նորուն զորս ճանաչէ , են գործ արարողի ուրուք յանսահմանս կարողութեան ք՟ զինքն . և զի ոչ տեսանէ ակներև յերկրի այնպիսի իմն էակ , հարկաւորապէս ենթադրէ թէ իցէ նա հեռագոյն ուրեք 'ի տիեզերաց , կմ՟ ընդունէ՞ անտեսանելի աչաց : Իսկ արտադրութ՟ն յաճախ , զոր արարչագործութ՟ն անեմք՝ գոլով գծուծարահաս ոչ միայն ազգաց , այլև որպէս իմաստնոց , զի չիք յերկրի գէթ ուրուական իմն օրինակ այսգունակ արտադրութե՟ , համարին և զգոյութ՟ տիեզերաց հանդերձ ամ՟ մասամբք լեալ ը՟ յաջորդական արտադրութե՟ բնական իրաց 'ի միաւորութ՟ երկուց ինքնագոյն էակաց : Յայն սակս օտաիտացիք դնեն երկու առաջին ինքնագոյ սկզբունս ծի իբրու արու և էգ . զմին կոչեն Տաարօատահի Հեգօմօօ . այն է՝ գերագոյն Ածութ՟ կմ՟ Ա՟Ծ ածոց սասանեցուցիչ երկրի . իսկ զե՟րկդն Տեպապա , զոր համարին քարաժայռ : Յառաջնոյ զուգաւորութե՟ նց՟ ծնաւ դուստր անուանեալ Տեդդում մադագայօ . ճ՟ տարի . սա 'ի զուգաւորութե՟ ը՟ հօր իւրում , ծնաւ զամիս . իսկ ամիսք ծնան զաւուրս : Նաև մեծամեծ լուսաւորք երկնից ծնան յառաջնոյ զուգաւորութե՟ անտի գերագոյն ածոց . և 'ի նց՟նէ արտադրեցան այլ փոքրագոյն աստեղք , որք երևին 'ի հաստատութե՟ երկնից : 'Ի նոյն միտս են և 'ի վ՟ր այլևայլ տեսակաց ծառոց և բուսոց . այլ բաց 'ի դէդդում մադագայօ դստերէն , առն նց՟ և որդի մի Տանէ անուն , զոր թէպէտ ստորին համարին ք՟ զՏաարօատահի Հեգօմօօ , սակայն զանդրանածս իւրեանց առ նա ուղղեն . զի սա ասեն առաւել մտադիր է 'ի խնամս մարդկային ազգի : Եւ ևս 'ի մէջ այլոց ծննդոց երկուց նախնեաց էակաց դնեն և այլ ստորին սերունդս բազմութե՟ ածոց արուաց և իգաց , զորս Էադուաս կոչեն . և ասեն , թէ զոյգ մի 'ի նց՟նէ ը՟ ժմկս յորում բնակեցան յերկրի , և ծնան զառաջին մարդն զիւրեանց հ՟րկաց նախահայր . որ 'ի ծնանիլն իւրում էր անկերպարան իբր բոլորաձև գնտակ . ապա մայր նր՟ բազմաջան աշխատութ՟ ձևացոյց զա՟մ անդամս նր՟ , կերպարանել զնա 'ի պատկեր կատարեալ մարդոյ որպէս եմք այժմ . և յայնժամ ապա կոչեաց զնա Եսթէ . այս՟ մարդ . որ առ նմ՟ նշա-

նա

նակէ լրացեալ · երբ զի ետես զնա ընդ մասամբք մարմնոյ կատարեալ : Սա զուգաւորեալ ընդ դստեր իւրում, ծնաւ դուստր մի, յորմէ յետոյ ծնաւ այլեւս դստերս բազումս ընդերկար ժամս, մինչեւ հուսկ ուրեմն եղեւ նմա և որդի · յորմէ սերեալ աճեցաւ ազգ մարդկան և ելից զերկիր :

Արք պաշտեն զարու աստուածս, իսկ կանայք զէգս · որք և ունին սեպհական տաճարս, զոր Մ՝օրացիս կոչեն որոշեալս վասն երկուց սերից · զի այլ է տաճար արու աստուածոց, ուր արք եւեթ երթան, և այլ իգաց վասն կանանց · սակայն են և այլ տաճարք ինչ, ուր արք և կանայք անխտիր ժողովին : Նոյնպէս և քուրմք նոցա որոշեալ են ոմանք վասն արանց, այլք վասն կանանց · և թէպէտ ամենեքին արք են, այլ ոչ կարեն 'ի մեհենական գործողութիւնս միմեանց անձնամուխ լինել : Քահանայութիւն կամ քրմութիւն նոցա, զոր Դ՝ահովա կոչեն, կապեալ է 'ի մասնաւոր ցեղս յատուկ աստիճանէ մարդկան, յորս յաջորդական ժառանգութեամբ անցանէ 'ի հարց յորդիս : Իսկ քրմապետ նոցա սովորաբար լինի երկրորդածին որդի յերեւելի ցեղէ ուրուք · զոր 'ի պատուի ունին յոյժ գրեթէ ոչինչ ընդհատ 'ի թագաւորէն : Սեփական գործ քրմաց է կոտել պէսպէս նիշս և ուրուական ձեւս 'ի մարմինս ժողովրդեան, որպէս 'ի վերոյ նշանակեցաք · և թլփատել զարուս նոցա · բայց զայս ոչ առնեն իբր գործ պատուիրեալ 'ի դենէ, այլ միայն 'ի պատիւ և 'ի վայելչութիւն, զի կարի անարգ և արհամարհեալ է առ նոսա, որ ոք ոչ ունիցի զայսպիսի երկատեսակ դրոշմ 'ի մարմնի : Վասն այսոց գործոց թէպէտ չեք առ նոսա սահմանեալ տուրք ինչ · սակայն լիաձեռն վճարեն քրմին իւրաքանչիւր ըստ իւրում աստիճանի և կարողութեան :

Չունին բնաւ կուռս ոչ ձեռագործս, և ոչ այլ ինչ երեւելի 'ի բնական իրաց կենդանի կամ անկենդան · մնյ ոչ զոհս, և ոչ այլ ինչ հեթանոսական խորանս · (թէպէտ ունին և սոքա, որպէս և բնակիչք այլոց շրջակայ կղզեաց իւրաքանչիւր մի մի տեսակ թռչնոյ, զոր բազում խնամով դարմանեն, իբր ոչ եթէ 'ի պաշտաման սակս, այլ զի աւելորդապաշտութեամբ իմն համարին զնոսա բարի կամ չար բախտից գուշակս), այլ պաշտեն զնախագրեալ աներեւոյթ աստուածութիւնն · յորմէ թէպէտ չունին ակնկալութիւն ինչ վարձուց, կամ երկիւղ պատժոց, սակայն միշտ այնպիսի պարկեշտութեամբ երկիւղածութեամբ և խորին խոնարհութեամբ մատչին 'ի տաճարս մատուցանել զպաշտօն երկրպագութեան, մինչեւ զար-

մա

մացուցանել . Թէպէտ ոչ հաւատան թէ 'ի տաճարն անդ լիցէ ինչ սրբազան կմ ածային . այլ միայն՝ թէ է տեղի աղօթից . և առ մեծագոյն խոնարհութիւն ցուցանելոյ , մերկանան մինչև 'ի գօտիս : Տաճարք նոցա միանգամայն են գերեզմանատեղիք , ուր թաղէին զոսկերս մեռելոց . յայսմ մասին նշանաւոր են օգաինդացիք 'ի մէջ համօրէն վայրենի ազանց . առ որս չիք ուրեք տեսանել զայս սովորութիւն 'ի միում սահմանափակ տեղւոջ թաղել զմեռեալս :

Սք հաւատան զանմահութիւն բանական հոգւոց , որոց վս դնեն 'ի հանդերձեալն երկուս տեղիս . զմին կոչեն Պաւլիրուսէուայ . իսկ զմիւսն Պիխահօպօօ . զորս ոչ համարին տեղի հատուցման վարձուց , կմ պատժոց ըն գործոց , զոր գործել իցէ իւրաքանչիւրոք յաշխարհս , այլ միայն իբր տեղի հանգստեան յաւէտ և նուաղ երջանիկ , սահմանեալ վս զնզն կարգի և աստիճանաց մարդկան որք գտանին 'ի նմա : Երջանկագոյն տեղիք՝ վս թգրի , իշխանաց , և գլխաւորաց . իսկ նուաղ երջանիկն վս ստորին խառնաղանճ ժողովրդեան . Քզի ոչ դնեն նք թէ գործք իւրեանց գործեալ յաստի կեանս 'ի մարմնի , ունիցի կապակցութիւն ինչ ըն այնմ վիճակի . և իցեն իւիք իրք ծանուցել ածոյն իւրեանց , այլ մեռան յայսմ ծի և եղծանին ըն մարմնոց , չունելով և ոչ մթին իմն ստուեր վս յարութե մարմնոց : Յայսմանէ յայտ է թէ խառնախորթ դեն նց ոչինչ ազդէ 'ի վարս և 'ի գործս խորշել 'ի չարէ , և զհետ երթալ բարւոյ . ուստի և պաշտօն յարգութե զոր բանիւ և արտաքին ձևով մարմնոյ մատուցանեն աներևոյթ ածոց , յետ գայ 'ի լոկ ըմբռնմանէ իւրեանց նուաստութե , և նոցայն գերագոյն կատարելութեանց :

Բզմ խնամս ցուցանեն առ մեռեալս , զի յորժամ ոք մեռանի , նոյնժամայն ժողովին 'ի տուն նր ամ ազգականք և մերձաւորք մեռելոյն , և կոծ մեծ առնեն 'ի վր նր . ոմանք եղերական ձայնիւ ողբան . այլք առ 'ի ցուցանել սաստկագոյն մորմոք՝ մեծակական աղաղակեն . իսկ ընտանիք մեռելոյն և առաւել մօտաւոր ազգականք ծանրաթախիծ սգով պաշարեալ , նստին լռին և անբարբառ : Բաց 'ի սոցանէ ժողովին անդ և այլ բազմութիւնք որք ըն ժամս ժամս յոգւոց ելանեն ցաւագին հառաչմամբ ըն տիւն ողջոյն և ըն գիշերն : Այսպէս 'ի վաղիւ անդր պատեն զդի մեռելոյն , և եդեալ 'ի սնդուկի , բազմութ մարդկան ունելով ըն իւրեանս և քուրմս , տանին 'ի ծովեզրն , ուր

եդ.

եդեալ 'ի գետոյն զմեռեալն, առնու քուրմն առ մի ջուր 'ի ծովէ, սրսկէ զտապանաւ, պաղատելով ինչ ինչ 'ի ձև աղօթից. ապա բարձեալ զմեռեալն հեռացուցանեն իբր 40, կամ 50 գրկաչափ. և նոյն հետայն անդրէն դարձուցանեն 'ի ծովափն. և քուրմն վերստին զնոյն առնէ. զայս երթևեկ կրկնեն բ՟զմ անգամ: Մինչդեռ ս՟ք յայսոսիկ պատաղին, այլք փոքր մի բացագոյն շինեն խորանաձև յարկ, կամ խրճիթ և ցանկապատեն եղէգամբք, զոր Դուբարով կոչեն. և 'ի միջի անդ վարսեն քանի մի ցիցս, և եդեալ 'ի վ՟ր զտապանն, թողուն անդ նեխել դիականն մինչև թօթափել մսոյ յոսկերաց: Եւ ժառանգք մեռելոյն, կամ մերձաւոր ազգակիցք ն՟ր ընծայս մատուցանեն նմ՟ իւրաքանչիւր ը՟ իւրում կարի, և ը՟ առաւելութ՟ն գործակալն դեթոյ սա նա, բազմապատիկ կտորակս կապերտից արկեալ 'ի վ՟ր տապանի ն՟ր, մինչև երբեմն և զբովանդակ խրճիթն ծածկել արտաքուստ պատուական պաստառաւ. մատուցանեն և պսակս յոսկոյ արմաւենեաց և 'ի տերևոց դօգօլի. զոր հիւսէ քուրմն խառնեալ 'ի նմ՟ և տեսակ մի բուսոյ կոչեցեալ 'ի ն՟ց Էթէէ նոմորան, որ նուիրեալ է 'ի հանդէս յուղարկաւորութ՟ մեռելոյ. դնեն անդ և կերակուր, և ջուր անօթով. ոչ իբր համարելով թէ մեռեալն ուտիցէ, այլ 'ի նուէր ոգւոց իւրեանց: Հանդէպ այնր տեղւոյ շինեն երկու խրճիթս. մի վ՟ն մերձաւորաց մեռելոյն, ուր նստին նոքա մինչև ցկատարել աւուրց ոգւոյ. և միւս ևս վ՟ն հանդիսադրի յուղարկաւորութ՟ն :

Իբրև աւարտին այս գործողութիւնք, վերստին նորոգին ողբք և կոծք լալականաց. կանայք խուռն կողմեալ, երթան 'ի դուռն խրճթին, ուր նստին 'ի սուգ ազգակիցք մեռելոյն. յայնժամ լծակից ն՟ր, կամ այլ ոք 'ի մերձաւոր ազգականաց սրածայր խեցեաւ խոցոտէ զգագաթ գլխոյ իւրոյ, յորմէ հոսի արիւն յորդառատ. զոր հաւաքեն զգուշութ՟բ 'ի կապերտս. զնոյն առնեն և այլ կանայք զհետ երթեալ օրինակի ն՟ր. որք նոյնպէս հաւաքեն զարիւն իւրեանց. ապ՟ և զարտասուս հեղեալ սակս մեռելոյն. ը՟ որս ոմանք 'ի մանկագոյն կանանց խառնեն և զվարսս հատեալ 'ի գլխոց իւրեանց: Զայս հանդէս առնեն աւուրս երկուս կամ երիս :

Ապա զկնի աւուրցն այնոցիկ յորժամ կանայք դադարին 'ի կոծոց, արք սկսանին զհանդէս ագոյ խելաժետ իմն օրինակաւ: Մերկացեալ զամօթալական ձորձս, և պատեն զմիջով հատուած մի կապերտի, ջրախառն ածխով շաղախեն զբոլոր մարմինն, և այնպէս 'ի դիւատեսակ կերպարանս այլափոխեն, շրջին խմբովին. ունելով զմի ոմն 'ի գլխաւորաց առաջնորդ իւր հանդիսադիր յուղարկաւորութեան. զոր Խմադադա կոչեն. որ զգեցեն այլանդակ իմն տարազ, և ունելով 'ի ձեռին բիր հաստաբուն զինեն ատամամբ ձկան, երթայ առաջի թոթովելով, և այսպէս խելացնոր շարժմունս առնելով զօրէն մոլեգնելոց իբր 'ի սաստկութենէ ցաւոց կսկծանաց 'ի վր՟ մեռելոյն: Եւ յայնժամ եթէ ոք ը՟ բերման ը՟ առաջ լիցի նց՟, կմ՟ ուրեք 'ի զննէն կայցէ, սա մոլեգնաբար 'ի վր՟ դիմեալ անագորոյն կատաղութբ՟ զան հարկանէ շարաչար, մինչև երբեմն մահացու վէրս դնել 'ի վր՟: Այսմ մոլեգին սովորութեն տեղեակ գոլով բնակչաց, յորժամ 'ի հեռուստ տեսանեն զայն սևագունդ խումբ սգաւորաց, փախչին և թաքչին, նաև 'ի տանց ևս իւրեանց անհետ լինին յորժամ ը՟ այն անցանեն: Այդ յաւարտիլ դիւամոլ թափօրին, որ տևէ իբր կէս ժամ կմ՟ փոքր մի աւելի, երթան ամ՟քն լուանան 'ի գետն. և զգենուն զձորձս իւրեանց: Յայսպիսի խումբ սգաւորաց եմուտ միանգամ և պանչ անգղիացի ընկեր Գուգայ ներկեն ածխով զմարմին իւր. սակս անգղիական անձոյժ հետաքննին բարուց առ լուսագոյն տեղեկանալոյ սովորութե՟ նց՟: Զայս յիմարական հանդէս առնեն ը՟ ամիս հինգ. 'ի սկզբան յաճախ, այլ յետոյ առ սակաւ սակաւ նուազեցուցանեն ը՟ նուազելոյ աւուրց սգոյ. ապա 'ի կատարել հինգ լուսնական ամսոց, հանեն զորորեալ դի մեռելոյն, մաքրեն զոսկերս 'ի մնացորդնեխեալ մսոյ, և քաջ լուացեն, թաղեն 'ի տաճարի իւրեանց, զոր ը՟ որում 'ի վերայ տապաք. Մօրաի կոչեն. որ է տեղի ցանկապատ. որ և միանգամայն է գերեզմանատեղի նց՟: Եթէ մեռեալն իցէ 'ի գլխաւորաց կղզւոյն, զգանկ նր՟ ոչ թաղեն, այլ պատեն 'ի պաստառս, և ամբափակեն 'ի փոքրիկ արկեղ, դնեն 'ի տաճարի անդ. և կոչեն զայն Եվհառէ նօ դէօրօմէդուա, այ՟ տուն իմաստնոյ կմ՟ տն՟. և այսու աւարտի սուգն: Այսպիսի և այսչափ գորովական խնամածութի՟, սէր և պատիւ ցուցանեն նք՟ առ մեռեալս, քանզի համարին թէ հոգիք նց՟ անջատեն 'ի մարմնոյ, ցայնչափ ժմկս մնան առ մարմնով իւրեանց դեգերին, և տեսանեն զամ՟ զոր առնեն վր՟ նոցա, յոյր սակս խնդան և բերկրին: Յայսմ վայրի յառաւղին ք՟ զմերս սովորական ընթացս ձգեցաք․ այլ ոչ վայրապար․ ք՟զի զոր ինչ նշանակեցաք աստէն զհանգամանս կղզւոյս, և բնակչաց նր՟, նոյն 'ի դէպ է և այլոց համօրէն կղզեաց ընկերութ՟ն, և այլոց հարաւային կղզեաց․ նմին իրի աստէն միանգամայն վճարեցաք առ չկրկնելոյ 'ի ստորագրութիւնս իւրաքանչիւր կղզւոյ․ յորոց զոմանս յառաջիկայդ նշանակեսցուք ։

Ուլիէտէա․ Ը՟ օգախնդացւոց Օտայիտէա ։ Կղզի 'ի հիւսիսոյ արևմտից դաւիդի կղզւոյն, փոքր ք՟ զնա, շըրջապատեալ մեծամեծ ժայռիւք․ բայց ունի նաւահանգիստս քաջադէպս և անքոյթս 'ի հողմոց․ դաշտավայրք նր՟ լայն են, և բլուրքն բարձունք ։ 'Ի հարաւակողմն ունի իւր կից այլ ևս փոքրագոյն կղզի, կոչեցեալ Օտահա ։

Հուահէյնէ ։ Կղզի յարևելեան կողմն նախընթացին, բաժանեալ յերկուս 'ի ձեռն խորայատակ նեղուցի, և յայլ կողմն միացեալ միջնորդութ՟ ցամաք կրծի․ որ ցածուն գոլով, միշտ ծածկի 'ի ջուրց 'ի մակընթանալն ծովու ։ Նիստ նր՟ բերէ զնմանութ՟ն դաւիդի կղզւոյն, այլ փոքր է յոյժ ք՟ զնա․ զի շրջապատ նր՟ է 21, կամ 23 միղոն․ բլուրք և լերինք նր՟ ցած են ք՟ զբլուրս դաւիդի կղզւոյն․ այլ արտաքին տեսիլ նր՟ գուշակէ ունել յընդերս իւրեանց հուր գաղտնեալ․ գլուխ միոյն 'ի բլրոց անուն էր ծակոտկէն, և 'ի լանջակողմն նորա տեսաւ ժայռ սևագոյն ստնդուանման իբրև կեղեւանս երկաթոյ․ հովիտք և տափարակ տեղիք նր՟ սակաւ են և անձուկ, գոլով ը՟ կամ՟ տեղիս լեռնային ։

Պօլապօլա․ Մաուրա․ Պուպաի․ Պուէնաուրա ։ Են այլք 'ի կղզեաց ընկերութ՟ն ։

Կղզիք Բարեկամաց ։

Այսպէս կոչեցան 'ի Գուգայ անգղիացւոյ, երբ զի 'ի հասանել նր՟ անդր 'ի 1773․ բազում մարդասիրութ՟ն և սքանչականութ՟ն եգիտ 'ի բնակչաց ։ Են բազմութ՟ն կղզեաց 'ի խաղաղական ովկիանոսի ը՟ մէջ 20 և 23 հարաւային լայնութ՟․ և ը՟ մէջ 202 և 204․ երկայնութ՟, որք գտեալ են յոյժ յանգղիացւոց ։ Օդ նր՟ քաղցր է բարեխառն և առողջարար․ երկիրն արգաւանդ վայելուչ ելևէջիւք բլրոց վայելչացեալ․ և բլուրք նր՟, ոմն և դաշտավայրեալք ազգի ազգի անուժն շահոտ ծաղկօք, և գեղազուարճ փոքրիկ մայրւք ծաղկալից և մրգաբեր ծառոց վայելուչ իմն տեսարան ընծայեցուցեն, զայս ամենայն յինքեանս դարձուցանեն. միանգամայն և քաղցրահոտ բուրմամբ մաքրեալ զմուսն զօդն, որոց բուրումն անուշահոտութեն ցհեռաւոր վայրս սփռեալ տարածի. վս այնորիկ 'ի հասանել անդր անգղիացւոց, երանելի համարէին զանձինս, իբր մեծի յաջողութե դիպէին:

Բնակիչք նց բարեձեւ են մարմնով. քաջառողջ, ուժեղ, թեթեւաշարժ, աշալուրջ, և ըս բնաւորս բարուց՝ բարեհամբոյր խաղաղամիտ, մարդասէր և հիւրընկալ. բայց միանգամայն և 'ի գողութե հակամէտ 'ի խառնաղանճից մինչև ցգլխաւորս կմ ցիշխանս նց. Քզի գողութիւն ոչ է համարեալ առ նս յանցանք. այլ իբր ցոյց իմն ճարտարութե և աշալրջութե. Վզի յորժամ ըմբռնեն 'ի գողութե, ոչ շառագունին. այլ ծիծաղին. ոպ յորժամ առ մեզ առնեն ոմանք այսպիսի ինչ ըս կատակս պարզամտաց: Հսրկ ժողովուրդն գրեթէ մերկ շրջի. այլ կանայք, ոպ և գլխաւորք նց արկանեն զանձամբք կապերտս ինչ: Գլխաւոր զարդ նց է ապարանջան 'ի ծովային գունագեղ խեցեաց. և սփածանելիք ճամկաւոր վերջաւորօք յերիւրեն. և փոքրիկ վերարկու հիւսեն յերփն երփն փետրոց թռչնոց զարմանալի իմն արուեստիւ. զոր ըս աւելոյ գուգայ և տիկնայք անգղիոյ ոչ արդեօք անդէպ համարէին կրել. այլ զայս գլխաւորք եւեթ զգենուն, զի թանկագին է:

Երևի թէ և արհեստք ըս իրաց ինչ զարգացեալ են առ նս, զի բաց 'ի վերարկուէ անտի, և բաց յայլոց զարդուց իւրեանց, քաջավարժ ցուցանեն 'ի գործ հիւսնութե, զի այնպիսի ճարտարութե յղկեն և ողորկեն զփայտեղէնս, մինչ գրեթէ հաւասարել մերոց ճարտար հիւսանց. Թիակք նաւակաց նց, որպէս և բիրք և նիզակք և նետք, որք են զէնք պատերազմի, թուին գործք ճախարակեայք. զնաւակս զարդարեն ըսելուզեն յառաջս և 'ի խելս նց աստասփս պէսպէս ձևով. շինեն և սանտր, և տեղ յակերպաց. և զնոյն տեսակս տաղանեաց խոշոր և նուրբ. և պարկս խիտ հիւսեալ 'ի տերևոյ եղեգան անթափանց 'ի ջրոյ. կարթս և ուռկանս 'ի պէտս ձկնորսութե, որք չեն ինչ ըս հաս 'ի մերոցն:

Կերակուր նց են խոզենի, և ընտանի հաւք. և ազգի ազգի բանջարք պտուղք, և արմատք ինքնաբոյսք. զոր երկիր նց ինքնին բերէ անդարման 'ի մարդկանէ.

նէ, այլև ձուկն առատ 'ի ծովէ. կրիայ և այլ պէսպէս ծովային խեցեմորթք : Իսկ ըմպելին ջուր. ունին և տեսակ մի գինւոյ, զոր մզեն 'ի պտղոյ. բայց զզուելի քմաց օտարաց : Յորչափ եղեն անդ անգղիացիք, միշտ 'ի խրախճանութիւս, յերաժշտական նուագս և 'ի կաքաւս պարուց անցուցին զաւուրս իւրեանց ընդ բնակչաց. զի գլխաւորք նց ստէպ հրաւիրէին զսոսա 'ի ճաշ, նոյնպէս և սք զնն :

Չունին սք քղք կմ գեօղ. այլ ցրիւ բնակին 'ի հիւղակերս աղքատակերպ տունս ընդ օդախրդացուց. որոց նման են և քղքական կառավարութ. զի և առ սոսա դոյ կարգ ինն քղքական. ոմանք են հրամանատարք, որոց իշխանութիւն յաջորդութ անցանէ 'ի հարց յորդիս. իսկ այլք հնազանդեալք և իբր ըստրուկք : Նոյնպս և զէնիւ Թուրին նման նց. չունելով և ոչ կուռս և զոհս, կմ այլ ինչ արտաքին պաշտամունս. այլ դաւանին զաներեւոյթ էակ մի գերագոյն, և 'ի ներքոյ նր այլ բզմ դիս աստղենս. բայց ոչինչ արտաքին պաշտօն մատուցանեն նց : Այսչափ ինչ վն հանգամանաց կղզեաց բարեկամաց, և բնակչաց նց. արդ նշանակեսցուք զկղզիս, որք ծանօթ են :

Միտտէլպուրկ. զոր բնակիչք նր կոչեն Էաուէ : Կղզի որոյ շրջապատն է իբր 30 միղոն. եզերք նր 'ի ծովեզերեայս սատափարան է. իսկ 'ի միջին կողմանս բզմ դալարագեղ և ծառազարդ բլուրք ընհատեն. բարձր է յոյժ քն զմակերեւոյթ ծովու. վն իբրև 12 միղոնաւ 'ի հեռուստ երեւի :

Աննամօքօ, կմ Աննամօքա. զոր հոլանտացիք, որք զառաջինն հասին անդր, կոչեցին Ռոտտէրտամ : Է կղզի արգաւանդ և բազմամարդ, ուր եգիտ Գուք զմեծագոյն ասպնջականութիւն 'ի բնակչաց :

Քալաֆօէ, կմ Քալօֆօէ : Կղզի իբր 120 միղոնաւ հեռի 'ի Նամոխընեթայ կղզւոյն. 'ի կողմանս յայսմիկ տեսին անգղիացիք աւելի քն 60. կղզիս շրջապատեալս ժայռիւք. նորին աղագաւ ոչ մերձեցան 'ի նն. երկուցեն 'ի ժայռից անտի :

Դոնկաթաբու. զոր հոլանտացիք, որք գտին զնա, կոչեցին Ամստէրտամ : Է կղզի բարեբեր և բազմամարդ :

Օվայհէ, կմ Օվհէյէ :

Է մի 'ի 17 կղզեաց, որք միանգամայն կոչին Կղզիք Սանտվիճեայ 'ի ներքոյ արևադարձին խեցգետնի ընդ 200 աստիճանաւ երկայնութ. արգաւանդ և բազժամարգ: Բերք նր̃ նոյն են, որ ինչ օգաւիգի կղզւոյն. ամ̃ և բարք, և սովորութիւնք և եղանակ կենաց բնակչաց նր̃ է̃ օգաւիգացւոց. զի և ոչ̃ երևելին բարեբարոյք խաղաղամիտք և հիւրասէրք. բայց դենիւ թոճի լծէ զանազանին. զի տեսան առ սոսա դրօշէ̃ք կմ̃ կուռք 'ի կերպարանս հսկայաձևաւն. զոր կոչեն Եաբուած Նուէհ. ըթ̃ Հզօր ա̃ծ պտ̃րզմի. վ̃յ յորժամ թ̃ր կղզւոյս երթայ ուրեք 'ի մարտ, է̃ իւր տանի զնա պսակազարդ: Բաց 'ի սմանէ ունին և այլ փոքրագոյն կուռս, զորս Եաբուած կոչեն. բայց զոհագործութ̃, կմ̃ այլ ինչ արտաքին պաշտամունք ոչ տեսաւ առ նս̃:

Յայս կղզի եհաս գուգ 'ի 1779, 'ի յունվարի 17. 'ի շրջապատել իւրում երդ̃ անգամ զհողագնտով երկրի յետ բազմապատիկ ահարկու ալէկոծութեն կրելոյ. և ընդ անթիւ մահառիթ վտանգս անցանելոյ: Իբրև մերձեցան նաւք անգղիացւոց 'ի կղզի անդր, նոյնժամայն բնակիչք տեղւոյն խռնեցան 'ի ծովափն 2 կմ̃ 3 հզ̃րք. որք հիացմամբ կային 'ի զննելն նաւուց: Եհաս անդր և որդի թ̃րի կղզւոյն. զոր նք̃ Օրօնօ կոչեն. (զի թ̃ր հայր նր̃ երթեալ էր 'ի Մաւվէհէ մօտակայ կղզի 'ի պտ̃ղմ) եկել 'ի նաւն գուգայ է̃ առ իւր. զոր գուգ բզ̃մ պատուասիրութբ̃ ընկալեալ, առաջի արար նմ̃ զկարօտութ̃ իւրեանց, որոց պէտս ունէին ինքեանք և նաւք իւրեանց. խնդրեաց 'ի նմէ տեղի մերձ 'ի ծովն կանգնել զվրանս, և հանել 'ի ցամաք զզէնս զպարէնս և զայլ ամ̃ կահս առ 'ի նորոգել անդ զնաւս իւրեանց, որք կարի խաթարեալ էին: Իսկ արքայորդին յօժարութբ̃ շնորհեաց գուգայ զամ̃ զոր ինչ և խնդրեաց, թողեալ 'ի կամս նր̃ ընտրել տեղի է̃ որ հաճեսցի. ուր և հրամայեաց ժողովրդեան իւրում հատանել սահման, և ցանկապատել ոստովք ծառոց. արգելեալ եդեալ նց̃ է̃ սաստիկ պատժով բնաւ չանցանել զայն կողմ, կմ̃ իւիք իրօք անհանգիստ առնել զանգղիացիս: Իսկ գլխաւորք կղզւոյն ետուն նց̃ և տունս ինչ մօտ յայն տեղի, ուր կանգնեցին զվրանս, 'ի հանգիստ հիւանդաց նց̃: Եւ սկսան այնուհետև բերել նց̃ խոզս, ընտանի հաւս, և զամ̃ ազգս պտղոց երկրի իւրեանց. այլև փայտ 'ի պէտս հրոյ, և 'ի նորոգութ̃ նաւուց: Բզ̃մ միամտութբ̃ և խաղաղասէր կամօք գնային է̃ նմ̃ [illegible] գլխաւորք կղզւոյն. որք յորժամ իրազեկ լինէին, զի ոք 'ի խաժամուժ ժողովրդենէ իւրեանց գողանայր ինչ յանգղիացւոց, կմ̃ նեղութ̃ ինչ հասուցանկէր նց՟, վաղվաղակի կալե՟լ մատնէին զնա 'ի ձեռս նց՟ պատժել ը՟ կամի :

Յետ տասն աւուրց զկնի հասանելոյ անգղիացւոց 'ի կղզի անդր, դարձ արարե՟լ Թգ՟րն 'ի պատերազմէն յաղթանակաւ, եկն բազմու՟թ՟ արանց յայցելութ՟ անգղիացւոց, բերե՟լ 'ի պարգև յոմ՟ բարեաց երկրի իւրոյ. զոր բազմահարկի մեծարանօք ընկալե՟լ գուգայ, անդրէն մատոյց և ինքն նմ՟ 'ի պարգև փոքրիկ հայելիս, ապակի բաժակ մի մեծ. բևեռս երկաթիս, ուլունս, և այլ այսպիսի չնչին տղայական խաղալիկս, որք կարի մեծարգի թուէին յաչս թագաւորին, զի չէր բնաւ տեսե՟լ զայնպիսի ինչ. մանրբևեռքն, առ որ չգիտեմ յինչ պատճառս մոլե՟լ էին համօրէն բնակիչք հարաւային ովկիանոսի. յայն սակս և նա առ ժամայն առաքեաց զմի ոմն 'ի գլխաւոր արանց իւրոց, որ դարձաւ անդրէն բզ՟մ՟ բարեօք, զոր մատոյց անգղիացւոց 'ի վր՟ առաջնոյն.

'Ի վաղիւ անդր գուգ և քլարք նաւապետք երկուց նաւուց հդ՟ձ զօրապետօք իւրեանց չոգան 'ի յարգութ՟ն Թգ՟րին 'ի փոխարինել զայցելութ՟ նր՟. զորս Թագաւորն մեծաւ պատուով և փառօք ընկալե՟լ. զայն օր կալաւ զնս՟ 'ի ճաշ առ իւր. զկնի ճաշուն Թգ՟րն ինքնին էարկ 'ի վր՟ գուգայ և քլարքայ մի մի վերարկու, նման այնմ, զոր զգեցուցանէին գլխաւորք կնոց իւրեանց. և այնպէս ընկերակցութ՟ գլխաւորաց կղզւոյն, և այլոց բազմամբոխ ժողովրդեան՝ էած զնս՟ 'ի Մօրայի. ք՟ 'ի տաճար մի. և անդ ձեռամբ իւրով եդե՟լ 'ի գլուխ գուգայ պսակ հիւսե՟լ 'ի տերևոց պանանէի, և նստուցե՟լ 'ի բեմբի, քուրմ տաճարին այլակերպ իմն խայտաճամուկ տարազ զգեցեալ, խօսեցաւ առ նա ճառս երկայնս, յաւարտի ճառին, սկսաւ մեծաձայն երգել ձայնակցութ՟ համօրէն բազմու՟թ՟. ապա Թգ՟րն ասաց ցգուգ. Այս Մօրայի քեզ նուիրե՟լ է. և 'ի ժամէ աստի յայսմանէ և անդր եղիցիս մեր Եաթուա՛ նուէն, ք՟ մեծ ա՟ծ մեր. վ՟յ անգղիացիք զայն մօրայի կոչեցին Սեղան գուգայ, ուր այնուհետև մերթ ընդ մերթ երթային գուգ և ընկերք նր՟ :

'Ի նոյն աւուրս մեռաւ գուլիելմոս վաղամահ մի 'ի զօրապետաց նաւուն գուգայ. որ ը՟ խնդրոյ իւրոյ թաղեցաւ 'ի մօրայի անդր գուգայ. ը՟ որում կղզեցիք թաղեցին և երկու խորովե՟լ խոզս. և ազգի ազգի պտուղս 'ի պաշար ճնպ՟հի. կամէին դնել և այլ բզ՟մ՟ ինչ, այլ գուգ արգել զնս՟. և ետ կանգնել անդկոթող, յորում գրեցաւ անուն մեռելոյն, ազգին, և օր մահու նր̅․ և զնաւահանգիստ կղզւոյն ուր մեռաւ վադման, գուգ կոչեաց յանուն նորա Նաւահանգիստ Վադմանոյ: 'Ի վաղուց անդր կուտէին կղզեցւոց քարինս բզ̅մս, ձևացուցին 'ի վ̅ր գերեզմանին սեղան․ և յաւելին դնել 'ի վ̅ր այլևս երկու խաչս, և սպանանէ, և գօգօ, և պտուղ հացի են: Աստ վրէպ մեծ գործեաց գուգ հանդիսիւ թաղել զվադման, զի զայթոյց ստուար զմիտս կղզեցւոց ոչ ևս անմահս համարել զանգղիացիս․ վ̅ղ նոյն կղզեցիք, որք աւուրբք ինչ յառաջ 'ի կարգս անմահ դիցն իւրեանց դասեցին զնա հանդիսիւ, յետոյ չարաչար սպանին․ ո̅պ ունիմք նշանակել ստորև:

Յետ այսորիկ միշտ 'ի խրախճանութիւ խնջոյից, և 'ի սթափուելս այլևայլս խաղուց զուարճանային անգղիացիք ը̅ թգ̅րին և ը̅ գլխաւորս նց̅․ փոփոխ հրաւիրելով զմիմեանս 'ի ճաշկերոյթս և 'ի հանդէս խաղուց․ բայց միանգամայն 'ի բնածին ախտէ իւրեանց գողութե̅ ոչ կասէին․ զորս գուգ ըս̅ իւրում արդարակորով անողոքելի բարոյից ոչ հանդուրժէր թողուլ անպատիժ․ յայսմանէ սկսան կղզեցիք առ սակաւ սակաւ օտարանալ յանգղիացւոց, և ը̅ ակամբ հայիլ 'ի նս̅: Յաւուր միում տեսեալ քլարք զի բազմունք 'ի նց̅է կուտէին քարինս 'ի գլուխ բլրոյ, որ մօտ էր 'ի նաւահանգիստ անդր, ուր էին նաւք անգղիացւոց, և կարծիս էառ թէ թշնամութի̅ ինչ խորհին նք̅․ վ̅ղ հրամայեաց ուղղել զհրացանս գնտակաւորս առ նս̅․ բայց տեսեալ զի յերեկոյանալ աւուր ցրուեցան: Իսկ յայգուցն անդրէն երևեցան 'ի նմին տեղւոջ, և թաւալէին քարինս ը̅ զառ 'ի վայր բլրոյն․ զոր քլարք համարելով թէ 'ի վ̅ր նաւուց իւրեանց արձակեն, հրամայեաց հրացանս արձակել 'ի վ̅ր նց̅․ իսկ նք̅ 'ի քթթել ական աներևոյթ եղեն անտի: Ապա զմիջաւուրբք մատեաւ թգ̅ր նց̅ 'ի նաւն գուգայ, և մեղադիր լինէր վ̅ն զուր տարապարտուց սպանանելոյ զերկուս յարանց իւրոց 'ի բլուր անդ․ ասելով թէ նց̅ չէին կամք քարաձիգ լինել 'ի նաւս, այլ զբօսնուլ անդ ըս̅ իւրեանց սովորութե̅:

Այնուհետև գնացք կղզեցւոց գլխովին ը̅ հկռ̅ն առաջնոյ մարդասիրութե̅ փոխեցան 'ի թշնամութի̅․ զօր ամ̅ յածէին ը̅ ցամաք և ը̅ ծով շուրջ զանգղիացւովք, և զամ̅ զոր տեսանէին գողանային․ և որք յառաջին առ մեծի սիրոյ և բարեկամութե̅ կալէին տային՝ զքողն 'ի ձեռս անգղիացւոց, յետ այնորիկ ամ̅ն կենօք չափ պաշտպան լինէին նց․ մինչեւ 'ի վերջոյ գողացան գիշերայն եւ զմակոյկն նաւուն գուգայ ։ Յայնմանէ կասկած կալան անգղիացիք, թէ նք չարիս խորհին զինքեանց․ մնդ զի 'ի նախընթաց աւուր տեսեալ էին բազմութիւն յոյժ համախմբմամբ, որք ողորմ ձայնիւ գոչէին, եւ երբեք երբեք թմբուկս հարկանէին․ այլ եւ կանայք ոմանք տեսեալ էին ցնաւավարս, թէ ապաւեն նք դիպող ժամու յարձակել 'ի վր անգղիացւոց ։

Խորհուրդ կալան անգղիացիք, թէ զիարդ մարթասցին 'ի ձեռս բերել զմակոյկն․ եւ 'ի խորհրդեան անդ վճռեցաւ ունել զթգրն 'ի կալանս 'ի նաւի իւրեանց, մինչեւ դարձուսցի մակոյկն․ վճիռ մահահասութ կենացն գուգայ ։ Վաղվաղակի հրամայեաց գուգ պատրաստել զզէնս նաւուց․ եւ ինքն 'ի վաղիւն ըն այգն առեալ ըն իւր 20 զօրականս զինեալս, չոգաւ 'ի պալատ թագաւորին, որ չէր իսկ հեռի 'ի ծովէ․ ուր եգիտ զնա բազմեալ 'ի դիւանի ըն 12 գլխաւորս կմ խորհրդականս իւր․ որք 'ի մտանելն գուգայ ամենքն յոտն կացին ։ Խոստացաւ գուգ քաղցրութբ առ թգրն վն գողութե մակուկի իւրոյ, խնդրելով 'ի նմէ զի հրաման տայցէ վղվղկի դարձուցանել․ այլ մինչեւ 'ի յայտ գայցէ, պարտ է քեզ աստ (առ թգրն) գալ ըն իս 'ի նաւն իմ, եւ մնալ անդ մինչեւ գայցէ մակոյկն ։ Թգրն վկայեաց հաստատելով, թէ բնաւ ինչ ոչ գիտէ վն այնր գողութե․ այլ ձեռնտու եղէց ատէ գտանել զգալն․ զոր եւ պատժեսջիք ըս կամաց ձերոց․ իսկ տալ զանձն 'ի ձեռս նց երկնչէր՝ յուշ առեալ զանգթութս, զոր արարին նք ժողովրդեան իւրում ։ Գուգ յետ բզմ յուսադիր բանից քաջալերելոյ զնա չունել բնաւ կասկած ինչ չարեաց 'ի միտ՝ ասէ հարկ է քեզ տալ զանձն մեզ պատանդ վն խաղաղութե եւ անդորրութե համօրէն ժողովրդեանդ, կալով ըն մեզ 'ի նաւի մերում․ ուր եղիցիս յապահով յամ վնասուց, ոչ 'ի սեպհական տան քում․ զի այս է մի միայն զօրաւոր հնարք խափանելոյ զստահակութե եւ զհանապազորդեան գողութե ժողովրդեանդ․ որք յար դեգերին առ վրանօք, եւ առ նաւուք մերովք, եւ զամ որ ինչ անկանի ըն տեսութբ նց գողանան աներկիւղ ։ Թգրն ակամայ կամօք եցոյց զանձն հաւան ըն բանս գուգայ․ եւ պատրաստէր երթալ ըն նմ, գլխաւորք տեղւոյն որք էին առ նմա, պաշարեալ երկիւղի, սկսան մի առ մի խօսել․ այլ զինուորք անգղիացւոց արգելուին զնս ։ Այս խօսակցութիւնք կմ վէճք յերկարեցան իբր կէս ժամ։ Եւ յայնմ պահու անթիւ բազմութե՟ ժողովրդեան խումբ կազմէր, խռնեցեալ զճ՟նպ՟հայն, որք քրթմնջելով ը՟ միմեանս՝ ասէին թէ դուգ տանի զթ՟գ՟ր իւրեանց 'ի նաւ խողխողել զնա․ վ՟ն այնորիկ դիմակայ լինէին զինուորաց։ Զայն տեսեալ դուգայ հրամայեաց հրացանիւք և աշտէիւք, որք ագուցեալ կային 'ի ծայրս հրացանից՝ բանալ ճ՟նպ՟րհ․ և ինքն կալեալ զբազուկ թ՟գ՟րին յառաջ վարէր զնա․ յայնժամ Ֆիլիպս զօրավարն անգղիացւոց սպան չորս ոգիս 'ի խառնաղանճից․ յորս յաւել դուգ զհինգե՟րդն, զի ունէր 'ի ձեռին երկեզեղեան հրացան․ և մինչ կամէր արձակել և զե՟րկդն, ահա մի ոմն 'ի խուժանէն 'ի յետուստ եհար զնա ուժգին մահակաւ, և ընկեց 'ի գետին․ և զաշտէաձև սըլաք, զոր 'ի նախընթաց աւուր ետ դուգ շինել իւրոյ դարբնոյ ը՟ս խնդրոյ թ՟գ՟րին, մխեաց ը՟ սնակուշտ նորին մինչև ը՟ կուրծս ելանել ծայրի սլաքին, և անդէն սպան զնա։ Յայնժամ գրգռեցաւ անգ յայտնի ա՟ղմ անուանէր, յորում մեռան բ՟մ՟ք 'ի խուժանէն․ սակայն մնացորդքն անպարտելի քաջութ՟ դիմադրու եղեն անգղիացւոց մինչև վանել զնոսա 'ի նաւ իւրեանց․ և ապա բ՟մ՟ ցնծու՟ յաղթանակաւ տարան զմարմին դուգայ յայլ կողմն կղզւոյն, և յօշատեալ 'ի մասունս, բաժանեցին, և կերան ախորժանօք․ յայնմ մարտի որ երկարեաց ժամս իբր երիս, բաց 'ի դուգայ՝ անկան յանգղիացւոց զօրավար մի, և երկու 'ի ռամկական զինուորաց։

Յաւուր երկ՟դի տեսին անգղիացիք զկողոպուտս դուգայ և այլոց երից 'ի ձեռս կղզեցւոց․ ոմն ունէր 'ի ձեռին զսուսեր դուգայ, և եկեալ 'ի ծովեզրն ցուցանէր յանդիման ն՟ց․ ոմն զհրացան նորա, ոմն զբաճկոն ն՟ր, և ոմանք ունէին զգեցեալ զշապիկ ն՟ր, զռունապանս, զկօշիկս եւն, և ցնծու՟ ցուցանէին զայնոսիկ իբր մրցանակս յաղթութե՟։ Իսկ անգղիացիք թէպէտ ջեռնուին 'ի խնդիր վրիժուց արեանն դուգայ, այլ ք՟զի վրանք ն՟ց, ո՟պ և կայմ և այլ կարասիք նաւուց դեռ 'ի ցամաք անդր էին․ և ինքեանք ունէին պէտս և ևս առնուլ համբարս կերակրոյ 'ի կղզւոյ անտի, վ՟ն այնորիկ զսպէին զբուռն յարձակումն ցասմանն․ մնալով այլում դիպողագոյն ժամու։ Ապա ը՟ երեկս այնր աւուր տեսին զի մերձենայր առ նաւս իւրեանց քանոթ մի, յորում էին ութն կ՟մ իննն ոգիք․ և մի 'ի ն՟ց՟է ունելով զփնջազարդ գըլխարկ դուգայ խաղայր նովաւ․ զոր քըլարք համարելով թէ 'ի նախատինս իւրեանց առնէ, հրամայեաց արձակել հրացան մի 'ի վ՟ր ն՟ր, որով վիրաւորեցաւ մի 'ի սոցունց ն՟ր ։ Այլ նոքա տակաւին յառաջ վարէին զքանօթն, և մերձեցին 'ի նաւն, սկսան գոչել մեծաձայն Դուգդէ՛ Դուգդէ՛ (զի այսպէս կոչէին զՔլարք) յորմէ ծանեան, թէ նոքա ոչ գան թշնամութեամբ, այլ թերևս ունէին ինչ յայտնել ն՟ց • վ՟յ Քլարք հրամայեաց առնուլ զն՟ս 'ի նաւն • և վիրաւորեալն մատոյց Քլարքայ զմի 'ի կողից Գուգայ հանդերձ մսովն պատեալ զգուշութեամբ 'ի պաստառս, որ անկեալ էր նմ՟ բաժին 'ի մարմնոյ ն՟ր • և պատմեաց թէ զիարդ համազգիք իւր կտորեալ զայն բաժանեցին և կերան • նմ՟ և զմարմինս այլոց երից, որք անկան յայնմ աւուր ։ Ապա զկնի երից կմ՟ չորից աւուրց երեք 'ի գլխաւորաց կղզւոյն բերին զմասն ինչ 'ի գլխոյն, և քանի մի ոսկերս մսազերծ, և զթաթ աջոյ ձեռին • զոր վաղվաղակի ծանեան 'ի պակասութենէ բոյթ մատին, զոր յառաջագոյն կորուսեալ էր, և այլևս կտորակս ինչ անկերպարան անդամոց • զորս ասէին թէ դժուարաւ մարթացան 'ի ձեռս բերել յիւրեանց ազգականաց ։ Իսկ Քլարք զայն ամ՟ եդեալ 'ի փոքրիկ արկեղ և կնքեալ, ընկէց 'ի ծով, արձակելով թնդանօթս ըս՟ սովորութեան անգղիացւոց 'ի պատիւ թաղման մեծին Գուգայ • և տուեալ ն՟ց պարգևս արձակեաց զն՟ս խաղաղութեամբ ։

Ահա զայս օրինակ վճարեաց զաւուրս կենաց իւրոց գերագոյնն 'ի նաւաստիս անգղիացւոց, մինչդեռ թէ ամ՟ Ծի, յետ երիցս յաջողաբար պատելոյ զբոլոր հողագնտով երկրի ։ Յայսմ վայրի ոչ ինչ անդէպ համարիմք համառօտել զվարս առն մեծի 'ի լրումն այսր Նորագիւտ մասին Դի, զոր նա հանդիսացոյց ։

Վարք Յակոբայ Գուգայ երևելի նաւապետին Անգղիացւոց •

Յակոբ Գուգ ծնաւ յամի տն՟ 1728 • յԱնգղիա 'ի կոմսութեան Եօրքշայ • որդի առն շինականի • 'ի տղայութեան անդ ուսաւ միայն ընթեռնուլ և գրել 'ի դպրոց գեղջն • այլ իբրև եղև երեքտասանամեայ եկաց զամս եօթն առ ումեմն նաւապետի որ 'ի Նիւքասլեայ բերէր զածուխս հանքային 'ի Լոնտրա ։ Առա գնաց յարեցաւ յայլումն ածխաբեր նաւատեղ, և եղև նր խոշանկեր՝ յարմար ստուգաբանութե իւրում մականուան · զի անգղիացիք Պուգ կոչեն ըզխոշանկերն : Յետ սակաւուց եմուտ յայլ նաւ, և եղև 'ի նմ երկր. առագաստապետ · թ̃ի կէլինձի եկելքենձի · ցուցեալ ա̃մ տեսողաց զընտատուր յաջողութիւն, զոր ունէր յարուեստ նաւավարութե · բայց տեսեալ թէ առանց մաթեմաթիքական և նաւավարական ուսմանց անհնար է նմ երևելի հանդիսանալ յայնմ, ետ զանձն 'ի պարապումն այնոցիկ՝ ծախեալ յայնս զա̃մ զոր առնոյր 'ի հօրէն, և զոր ինքնին ճշտելով յաւելոյր · և 'ի բաց թողեալ զածխաբերութին՝ երիցս նաւարկեաց 'ի ծանուցեալ ծովս · նախ՝ 'ի ծոցն հնդկաց · երկր. 'ի պետրոսպուրկ և 'ի վլիսպուրկ · և հուսկ յետոյ 'ի նորվէկիա : Ապա 'ի պատերազմին դաղղիացւոց ը̃ անգղիացիս գոլով երկր. առագաստապետ, վաստակեցաւ բզ̃մ յառումն Լուիզպուրկայ, և հրամանգանին Պրեդգոնի · իսկ յամին 1759 եղև առագաստապետ · թ̃ի եկելքենձի · և 'ի մատչել նաւուն յՕրլէանս կղզի, մողապուր ճազապրեալ 'ի գետոյն յառումն մայրաքղքին քանատայի գտաւ և ինքն քաջանուն :

Յետ խաղաղուէ թ̃ւրն անգղիոյ առաքեաց զնա յամին 1764 'ի ճիշդ զննութի կղզւոյն անուանեալ Նիւ Ֆէնէր · յարմար 'ի ձկնորսուէ · ուր ամս չորս ծախեալ յայնմ, գծեաց զնշ̃ն տախտակս այնր կղզւոյ : Բայց ք̃զի 'ի վայրենաբնակ կղզւոյն պարապէր երբեմն յորս հաւուց և երէոց, ը̃ զի նմն վրիպեալ հրացանին, վիրաւորեաց զձեռնն, և զբութն կորոյս · վ̃յ հարկ եղև նմ յետոյ 'ի գրութէ սովորեցուցանել զանձն ունել զգրիչն ը̃ մէջ ցուցամատին և միջամատին : Եւ վ̃ կորստեան բութ մատինն կարգեցաւ նմ յարքունուստ յամին իբր 24 տուգաթ անգղիոյ · թող զսովորականն թոշակն, և զերիս տուգաթս զոր առնոյր օր̃ըօրէ · բայց գծուծ չքնականութին յոր ունեալ էր 'ի տղայուէ՝ ոչ ներէր նմ վայելել յառատուէ թոշակացն · այլ ճշդէր յամի, զանայր անձին և զհարկաւորսն · զ̃ր յըմպելն զթէյ՝ ոչ 'ի կիր առնոյր զսպիտակ շաքարն տուեալ նմ 'ի թոշակ, այլ զանարգն և զկարմիրն · և ոչ լուցանէր զճրագն տուեալ նմ, այլ զգարշահոտ իւղ ծովային ձկան :

'Ի յաճախել ընչիցն ստացաւ տուն փոքրիկ և պարտէզ մերձ 'ի լոնտրա, ուր զձմեռն ողջոյն անցուցանէր հանգերձ կնաւն : Ապա յամին 1769 'ի խնդրոյ արքունի ընկերութեան գիտնոց՝ առաքեաց թագաւորն նաւ 'ի կղզին Օտախիտի վասն աստղաբաշխական գիտողութեանց, և հրամանատար նաւուս կարգեցաւ Գուք. որով և ծախեցաւ լիր 20000 ատուգաթ անգղիոյ: Յայսմ առաջին ճանապարհորդութեան նորա յանծանօթ ծովս՝ պատեցաւ ամբողջ զերկրաւ. և արհամարհեաց զամենայն զվտանգ՝ բազում ինչ 'ի լոյս ընծայեաց յաշխարհագրական ծանօթութիւնս և զգուշաւոր նաւացոյցս: Յետոյ դարձ արարեալ 'ի հայրենիսն բարձրացաւ 'ի պաշտօնակալութեան. և միւսանգամ երկոքումբք նաւուք առաքեցաւ 'ի թագաւորէն յամին 1772 խաղալ 'ի հարաւային ովկիանոս 'ի գիւտ կղզեաց և ցամաքի. և զճանապարհայն խօթացեալ ծանր՝ չէառ յանձն կեալ փափկագոյնս քան զիւր նաւաստիս. և յառողջանալն վերստին դարձ արար 'ի հայրենիս, կատարեալ զյանձնարարութիւն. ուր և եւս առաւելաւ պատիւ նորա: Այս յամին 1776. երրորդ անգամ ճանապարհ արար Գուք երկոքումբք նաւուք 'ի հիւսիսային ովկիանոս. և զտեղի առեալ 'ի կղզւոջն Օվայհի, պատուեցաւ 'ի բնակչացն մեծապէս, որպէս տեսաք 'ի վերոյ. այլ անխորհուրդ համարձակութեան նորա գրգռեաց զսիրտ վայրենեացն սպանանել զնա յամին 1779. 'ի փետր 14. և զմարմին նորա յօշատեալ կերան գոլով նորա անցեալ զխնամենիւք:

Այս մեծանուն նաւապետ, էր մարմնով վտիտ և նուրբ. յաղթանդամ և երկայն հասակաւ լիր 6 ոտնաչափ. բայց կորաքամակ վասն ստորերլոյն կարակոր ընթանալ 'ի խորշս նաւուն. 'ի քայլելն մանաւանդ 'ի վազելն ցուցանէր գնացս գեղջկական և անհեթեթս: Յօնք նորա էին թաւ և երկայն. նոյնպէս և քիթն երկայն և մեծ. աչք շագանակագոյնք և մանունք, այլ ոչ արծարծունք. դէմքն դաժան և խիստ և հարեալ 'ի դեղին. վերին շուրթն ցցուեալ 'ի դուրս: Յորժամ գնացս իւր ցուցանէր զանձն այր գործունեայ և աշխատասէր. 'ի հրամանատարութեան նաւաստեաց՝ ահրնկեց և բարձրագոյն սպառնացօղ. 'ի կենցաղակցութեան ընդ այլս չէր զուարճալի և հաճելի բարուք. 'ի բանս սակաւախօս, և գրեթէ լռիկ. բայց պահ ընդ պահ զուարթանայր յանձին, և զուարթացուցանէր զընկերս: 'Ի պահանջել զպահպանութիւն օրինաց նաւարկութեան՝ էր անաչառ յոյժ և անողոքելի. և սաստկապահանջ նախանձայոյզ 'ի գործադրութեան հրամանաց իւրոց և իշխանութեան: 'Ի հաւատոյն չէր ինչ նորա փոյթ. և զի 'ի մանկութեան չէր մարզեալ կարգաւորապէս 'ի գիտութիւնս. վասն այն և պախարակէր զամենայն բաց 'ի մաթէմաթիքական ուսմանց․ սակայն ճարտար էր 'ի գիւտս հնարից ։ 'Ի վճռելն ինչ խրատուտնս 'ի նաւին, ունէր յաւէտ զկողմն նուաստից, ք՟ աւագաց․ և երբեմն առաւել ընտանութ՟ կենակցէր ը՟դ նս՟, ք՟ ը՟դ սոսա ։ Սեղան նր՟ անպաճոյճ, և ամենևին հաւասարաբաշխ առ կրսերս և առ աւագս․ ատեցող հեշտութե՟, և անհաշտ թշնամի դատարկութե՟, զոր համարէր ժամանակս առողջութե՟․ մինչև երբեմն առ 'ի չգոյէ աշխատանաց, զի մի անգործ կայցեն իւրքն, տայր քակել ինչ, առ 'ի շինել զայն նորոգ և լաւ ևս․ այս էր մին 'ի գլխաւոր պատճառաց որով նաւաստիք իւր մնացին առողջ յայնչափ երկար և 'ի բազմավտանգ նաւարկութե՟ ։

Բայց գլխաւոր ձիրք բնութե՟ առնս, որք հռչակեցին զնա, էին աներկիւղ քաջասրտութի՟ 'ի կատարումն ձեռնարկել՟ գործոյն․ և անմեկնելի համբերութի՟ և արհամարհութի՟ վշտաց․ մինչ զի առագաստալիր հողմովք 'ի միգամած գիշերս ընթանայր ը՟դ ծովս անծանօթս, լցեալս ժայռիւք քարանց, և արմատովք բուսոց, և անխորտակելի հատորովք սառուցից․ որով և բռնադատեցաւ զամիսս երիս կապարեայ գունտ 'ի ձեռին՝ զննել և չափել զյատակ խորութե՟ ծովուն իբր 880 մղոնաչափ երկայնութ՟բ, 'ի զերծուցանել զնաւն 'ի խորտակմանէ։ Երբեմն ննջէր քաղցր 'ի քուն, ուր այլք տագնապէին կասկածանօք․ ը՟ հկ՟ռկն բզ՟մ անգամ 'ի կարծել այլոց զանձինս յապահովի, նա 'ի վեր ելանէր, փոփոխէր ըզկարգադրութիւնս, և անվրէպ գուշակէր զվտանգն՝ մերձակայ ցամաքաց ։ Ո՛չ երբէք երևէր նա այնքան անվեհեր, զուարթագին և աշխոյժ, որ՟ 'ի մեծամեծ վտանգս․ յորս և միտք նր՟ մնայր անշփոթ և անդորր, և ոչ երբէք լսելի լինէր 'ի նաւի նր՟ գոյժ և ճիչ նաւորդաց, այլ ամէնքն 'ի նա աչուցել՟ 'ի ձեռաց նր՟ ակնունէին փրկութե՟ ։

Ի վարիլ ը՟դ վայրենի ազգս էր ամին յաջողակ և սիրայորդոր․ իմանայր զլեզուս բզ՟մ կղզեաց․ և գիտէր յինքն յանկուցանել զսիրտ նց՟․ յորոց և էր պատուել՟ ա՟ծանման, մինչև կանգնել նմ՟ արձան, և կոչել յիրեանց բարբառ Օռունոս նո գէ դուդի, յթ՟ Գուք ա՟ծ ։ Բայց այս քաջասրտութի՟ նր՟ երբեմն չէր անմասն 'ի յանդգնութ՟է․ որ և առթեաց զմահ նր՟ 'ի ազգ ա՟մ գիւանոց, որք սպասէին յոլովագոյն և անզեկութ՟ց՝ յերկար կենաց քաջի նաւապետին․ որքաց 'ի բզ՟մ կղզեաց զորս եգիտ, երևցաւ պատեցաւ

զերկ

զերկրաւ․ եբարձ զտարակոյս 'ի մտաց Ծագրաց, ցուցեալ թէ չիք ցամաք 'ի հարաւակողման, զննեաց ճշգրտագոյնս զծովն՝ խաղաղականս զհարաւային և զհիւսիսային․ եցոյց ևս թէ չիք անցք 'ի հիւսիսային ծովէ 'ի հարաւային․ կմ եթէ կայցէ ևս, է անգործածելի․ յայտնեաց ևս զնեղուցն որ է̄ մէջ Նորոյն Հոլանտիոյ, և Նորոյն Կուինեայի․ և զնեղուցն որ է̄ մէջ զելանտիոյ․ և ճ՛նպ̄հորդեաց ընդ լայնութ̄ի, զոր բնաւզննինք մինչև ցայնժամ կարծէին անբնակելի ։

Արքունի ընկերութիւն Լոնտրայի 'ի պատիւ Գուգայ տպեաց արծաթի դրամս 'ի բաշխել նաւորդաց նր̄․ և վեց ոսկի դրամս․ զորոց զերկուս մատոյց թագաւորին և թագուհւոյն անգղիոյ․ զերիս թագուհւոյն մոսկովաց․ և թագաւորին գաղղիացւոց․ և դքսին գրոնայ․ և զվեցերորդն այրւոյն Գուգայ ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ։

Ըստ յաջողելոյ Տ՟ն յանկ ելե՟լ աւարտեցաւ տպագրութ՟ի վերջին հատորոյ Ը՟հանուր Աշխարհագրու՟ն ,յամի Տ՟ն 1806 . արդեամբք և ծախիւք բարեպաշտօն առն և ականաւոր վճ՟ռկանի Թոխաթեցի ղըլըճեանց աղայ Մելգոնի որդւոյ պաղտասարի սաղելեան ,'ի մանկութ՟է հետեւ պանդխտելոյ յունգարաց Աշխարհին , և 'ի Թրանսիլվանիա . որ հայրենասէր փութով կամեցաւ նպաստել և յայսմ մասին իւրոց ազգայնոց տպագրութե՟ գրոցս , Աշխարհագրական հմտութ՟է պատճառս տալով ընթերցանելեաց , միանգամայն և յիշատակ բարի թողել ծնողաց իւրոց և համօրէն քաջատոհմիկ տան իւրոյ . Արդ՝ որք միանգամ հանդիպիք այսմ գրոց , և վերծանութե՟ նորին զուարճանայք , յիշեսջիք զվերոյգրեալ այրս բարեպաշտօն և զծնօղսն ն՟ր յաղօթս ձեր , ո՞վ զի որ առատն է յամ՟ի Տ՟ծ՝ շնորհեսցէ զպարգևս կրկին կենաց ն՟մ և ձեզ ա՟մէն ։

ՑՈՒՑԱԿ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՍԻԱ։

ԱՇԽԱՐՀ. Է։

Հնդկաստան։

Հին Տէրութիւն Մողոլաց։

ա. Անուն. 3.
բ. Դիրք Մողոլաց. 4.
գ. Տարածութիւն, և Բնակիչք Մողոլաց. 4.
դ. Գետք Մողոլաց. 5.
ե. Օդ Մողոլաց. 5.
զ. Բերք Մողոլաց. 7.
է. Վաճառք Մողոլաց. 13.
ը. Բարք Մողոլաց. 16.
թ. Լեզու Մողոլաց. 19.
ժ. Կառավարութիւն Մողոլաց. 19.
ժա. Մուտք Մողոլաց. 25.
ժբ. Կրօն, կմ՟ Դենք Մողոլաց. 28.
ժգ. Բաժանումն Մողոլաց. 42.

Գլուխ ա. Հիւսիսային Մասն Մողոլաց։

Յօդ. ա. Տելլի, կմ՟ Տէհլի. 46.
Յօդ. բ. Լահօր, կմ՟ Բէնճապ. 47.
Յօդ. գ. Քէշմիր. 49.
Յօդ. դ. Քապօլ. Քապուլ, կմ՟ Քապուլիստան. 50.
Յօդ. ե. Հայագան. 51.
Յօդ. զ. Մուլթան, կմ՟ Մուլթան. 52.
Յօդ. է. Սընտ, կմ՟ Դատա. 53.
Յօդ. ը. Աճմէր. 54.
Յօդ. թ. Աճէմապատ, կմ՟ Աճէր. 54.
Յօդ. ժ. Աճէնոր, կմ՟ Սէղ. 56.
Յօդ. ժա. Պնարէս, Իլլահապատ, կմ՟ Հէլապատ. 57.

Յօդ.

Յօդ. ԺԲ. Մալուա, կամ Մալուէ. 58.
Յօդ. ԺԳ. Պէրաէճ, կամ Պէրար. 59.
Յօդ. ԺԴ. Քանտէշ. 61.

Գլուխ Բ. Արեւելեան Մասն Մողոլաց։

Յօդ. Ա. Պանկալա. 69.
Յօդ. Բ. Փատնա, կամ Պահար. 77.
Յօդ. Գ. Օրիսսա. 79.

Գլուխ Գ. Հարաւային Մասն Մողոլաց։

Յօդ. Ա. Գուճրաթ. 82.
Յօդ. Բ. Պակլանա. 89.
Յօդ. Գ. Պալակատ, կամ Տէօվլէթապատ, 89.
Յօդ. Դ. Վիզապուր. 90.
Յօդ. Ե. Հէյտարապատ. Հէյտէրապատ, կամ Կօլգօնտա. 91.
Յօդ. Զ. Գոնգան. 93.
Յօդ. Է. Գանարա. 97.
Յօդ. Ը. Գառնատիք, Գառնատ, կամ Բիսնաքար. 99.
Յօդ. Թ. Մալապար. 101.
Ա. Թագաւորութիւն Գանանորայ. 101.
Բ. Թագաւորութիւն Գալիգութայ։ 102.
Գ. Թագաւորութիւն Գոչինայ. 103.
Դ. Թագաւորութիւն Դրաւանգորայ. 105.
Յօդ. Ժ. Մայսուր. 106.
Յօդ. ԺԱ. Գորոմանտէլ. 107.
Ա. Թագաւորութիւն Մատուրայ. 110.
Բ. Երկիր Մարավայ. 112.
Գ. Թագաւորութիւն Դանճաւուրայ. 112.
Դ. Այլ քաղաքք 'ի ծովեզերեայս Գորոմանտէլայ. 115.
Յօդ. ԺԲ. Կղզիք առ դրան աշխարհաս, կամ առ ցամաքակղզեան, որ յայսկոյս Գանգէսի. 125.
Տէրութիւն Գանտէայ. 131.
Տէրութիւն Հոլանտացւոց. 131,
Մալտիվեան, Լագատիվեան, Կանարեան, և Սալսէտէ կղզիք. 135.

Յա

Յօդ. ա. Թագաւորութիւն աշամայ, կամ ասամայ. և դիփրայ. 138.
Յօդ. բ. Թագաւորութիւն արագանայ, 140.
Յօդ. գ. Թագաւորութիւն հաւայի, կամ պըրմայ, բէկուա, և միէնայ. 146.
Յօդ. դ. Թագաւորութիւն շիամայ. 155.
Հիւսիսային կողմն շիամայ. 161.
Հարաւային կողմն շիամայ, կամ Ցամաք կղզին մալաքա. 162.
Յօդ. ե. Թագաւորութիւն քամպոտիայ, կամ քամպօջայ. 165.
Յօդ. զ. Թագաւորութիւն լաօսայ. 167.
Յօդ. է. Թագաւորութիւն քօշինշինայ ։ 168.
Յօդ. ը. Թագաւորութիւն տունգինայ. 171.
Յօդ. թ. Կղզիք առ ցամաք կղզեաւն որ յայնկոյս գանգէսի. 175.

ԱՇԽԱՐՀ. Բ.

Չին, կամ Չինումաչին ։

ա. Անուն. 180.
բ. Դիրք Չինաց. 181.
գ. Տարածութիւն և բազմամարդութիւն Չինաց. 182.
դ. Գետք Չինաց. 184.
ե. Օդ Չինաց. 188.
զ. Բերք Չինաց. 189.
է. Վաճառք Չինաց. 198.
ը. Բարք և Սովորութիւնք Չինաց. 203.
թ. Լեզու Չինաց. 213.
ժ. Դպրութիւն Չինաց. 216.
ժա. Աղանդք և պաշտմունք Չինաց. 220.
ժբ. Կառավարութիւն Չինաց. 226.
ժգ. Նշան կամ կնիք. Վերքառութիւն. Մաքսք և Զօրք Չինաց. 235.
ժդ. Կրօն Չինաց. 238.
ժե. Բաժանումն Չինաց. 253.
Յօդ. ա. Փէքինէ. 254.
Յօդ. բ. Չանսի, կամ Քանսի. 258.
Յօդ. գ. Չէնսի. 259.
Յօդ. դ. Սուչէն. 263.
Յօդ. ե. Հօնան. 264.

Յօդ

Յօդ Զ. Չանթօնկ, կամ Քանթօնկ. 266.
Յօդ Է. Նանքին. 267.
Յօդ Ը. Հուքուան. 271.
Յօդ Թ. Քէանսի, կամ Քիանկսի. 272.
Յօդ Ժ. Չէքիան, կամ Չէքիանգ. 274.
Յօդ ԺԱ. Ֆօքիէն. 276.
Յօդ ԺԲ. Քանթօն. 277.
Յօդ ԺԳ. Քուանսի. 279.
Յօդ ԺԴ. Քուէյչէու, կամ Քուէյթչու. 280.
Յօդ ԺԵ. Իւնան, կամ Եունան. 281.
Յօդ ԺԶ. Կղզիք որք են առ եզր Չինաց. 282.
Գեղեցիկ կղզի. 284.
Լէգէանեան կղզիք. 286.
Յօդ ԺԷ. Կօրէա. 287.

ԱՇԽԱՐՀ. Թ:

Ճէապօն, կամ Յապօն:

Ա. Անուն. 289.
Բ. Տարածութիւն և Բազմամարդութիւն Ճէապօնայ. 289.
Գ. Գետք Ճէապօնայ. 290.
Դ. Օդք Ճէապօնայ. 291.
Ե. Բերք Ճէապօնայ. 292.
Զ. Վաճառք Ճէապօնայ. 296.
Է. Դպրութիւն Ճէապօնայ. 300.
Ը. Բարք և Սովորութիւնք Ճէապօնացւոց. 302.
Թ. Լեզու Ճէապօնացւոց. 308.
Ժ. Անձինք Ճէապօնացւոց. 309.
ԺԱ. Կառավարութիւն Ճէապօնայ. 313.
ԺԲ. Կռիւք. Մուտք. և Զօրք Ճէապօնացւոց. 319.
ԺԳ. Կրօն Ճէապօնացւոց. 320.
ԺԴ. Բաժանումն Ճէապօնայ. 336.

Նիփօն Կղզի:

Յօդ Ա. Թօքայտօ. 336.
Յօդ Բ. Թօսանտօ. 338.
Յօդ Գ. Փօգուռ, կամ Ռօգուռատուլ. 339.
Յօդ Դ. Սանինտօ. 340.
Յօդ Ե. Սանյօտուլ: 341.
Յօդ Զ. Կինայի. 343.
Յօդ Է. Սիքօք. և Աւաճի, կամ Աւաճօսաոյ կղզիք. 344.

Յօդ

Յօդ Ը. Գլխաւոր քաղաքք Ճափօնայ. 345.
Յօդ Թ. Կղզիք, որք են ընդ տէրութեամբ Ճափօնայ. 351.

Կղզիք հարաւային մասին ասիոյ: 353.

Յօդ Ժ. Մարեաննեան, կամ աւազակաց կղզիք. 353.
Յօդ ԺԱ. Փիլիպպեան կղզիք, կամ Մանիլեան կղզիք. 355.
Մանիլայ, կամ Լուսոն, կամ Լուզոն կղզի. 356.
Մինտանաօ. 358.
Զէպու. 359.
Սամօր, կամ Պուենայէ. 359.
Կղզիք սրբոյն յովհաննու, Բարսակայ, և նոր Փիլիպպեանք. 359.
Յօդ ԺԲ. Մոլուքեան կղզիք. 360.
Ջէլէպէս, կամ Մակասար. 363.
Ճմաղայեա, կամ Ճմաղայնէ. 364.
Պանտեան կղզիք. 365.
Տիմոր. 365.
Ջերամ. 366.
Պուրօ, կամ Պուէրօ. 367.
Սուլու, կամ Սէպու. 368.
Սունտեան կղզիք. 371.
Պորնէօ. 371.
Սումատրա. 373.
Ճաւա, կամ Յաւա. 376.

ԱՇԽԱՐՀ. Ժ:

Ցամաք նորագիւտք 'ի հարաւային կողմանս ասիոյ: 381.

Նոր Հոլլանտա հարաւային, որ 'ի նոր Հոլանտա. 382.
Երկիր Տիէմէնայ. 391.
Երկիր Նուիցայ. 392.
Նոր Կուինէա. 393.
Նոր Բրիտանիա. 396.
Նոր Բրիտանիա առանձին. 400.
Նոր Իռլանտա. 401.
Նոր Հաննովէր. 402.

Կղզ-

Կղզիք Նաւարկութեց. 402.
Կղզի Սանտվիչեայ. 403.
Մաւն կղզի. 403.
Ծոց Լոմնիստափայ. 403.
Կղզիք որք յարեւելեղագոյն Նաւարգդաց. 405.
Կղզիք՝ որք յարեւելեղատոյն Գծ Հեռլուփայ։ 406.
Կղզիք Շառլոթթայ Դշխոյին. 407.
Կղզիք գտեալք ՚ի Վալլեսայ, 408.
Կղզիք գտեալք ՚ի Գօմօտօրայ Պիրընայ. 409.
Նոր Զելանտիա. 409.
Թաւայի Փոյենամօ. 417.
Եահեյի Նօմաւէ. 418.

Կղզիք Ընկերութեան։ 418.

Դահիտի, կամ Օտահիտի. 419.
Կղզիք Բարեկամաց. 433.
Օհայիհի, կամ Օվհէյէ. 435.

Վարք Յակոբայ Դուգայ երեւելի նաւապետին Անգղիացւոյ։ 441.